



**«Միտք» վերլուծական կենտրոն**

**Հայոց հյուսիսային դարպասները.  
ԶԱՎԱԽՔ  
ԼՈՌԻ  
(հողվածների ժողովածու)**

**4**

Երևան  
«Միտք» վերլուծական կենտրոն  
2009

ՀՏԳ- 941 (479.25):327  
ԳՄԳ- 63.3 (2Հ) + 66.4  
Հ 282

***Խմբագիր՝ պատմական գիտությունների թեկնածու  
Էդուարդ Աիրամյան  
Մատենաշարի հիմնադիր-հրատարակիչ՝  
«Միտք» վերլուծական կենտրոն***

Հ 282 Հայոց հյուսիսային դարպասները. ՋԱՎԱԽՔ, ԼՈՌԻ:  
Հոդվածների ժողովածու - Եր.: «Միտք» վերլուծական  
կենտրոն, 2009.- 284 էջ:

*Ներկայացվող հոդվածների ժողովածուն իր մեջ ամփոփում է Հայաստանի հյուսիսային ծայրագավառների մասին փարաբնույթ տեղեկություններ: Այդ գավառներն այսօր ամբողջովին կամ մեծամասամբ իրերի քերտումով ներառված են ներկա Վրաստանի կազմում: Վերջիններիս պատմական անցյալի և քաղաքական ներկայի մասին ճշգրիտ և միջազգային իրավական նորմերի լույսի ներքո լուսաբանումը ուղղորդում է Վրաստանի հետ ներկայում և ապագայում հարաբերությունների կառուցման գործընթացում և փայլի շար հարցերի պարասխաններ:*

*Ջավախք և Լոռի պատմաշխարհագրական տեղանուններն այստեղ ստացել են քաղաքական բովանդակություն և համապարասխանաբար փարածվել Հայաստանի հյուսիսային մի շարք գավառների վրա:*

*«Հայոց հյուսիսային դարպասները. ՋԱՎԱԽՔ, ԼՈՌԻ» հրատարակությունը, իր մեջ ներառելով համապարասխան թեմաներով աշխարհանքներ, լինելու է շարունակական:*

ՀՏԳ- 941 (479.25):327  
ԳՄԳ- 63.3 (2Հ) + 66.4

ISBN 978-99941-2-323-0

© «Միտք» վերլուծական կենտրոն, 2009 թ.

## ԻՆԳԻԼՈՅՆԵՐԸ. ՎՐԱՑԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԸ ԱԴԻԲԵՋԱՆՈՒՄ



**Էդուարդ ԱՓՐԱՄՅԱՆ**  
*պատմական գիտությունների թեկնածու*

Ինգիլոյները Ադրբեջանի քաղաքականապես ակտիվ էթնիկ փոքրամասնություններից են: Իր թիկունքում ունենալով վրացական հասարակության և Վրաստանի ղեկավարության աջակցությունը՝ քաղաքական և մշակութային տեսանկյունից ինգիլոյական էթնիկ տարրը Ադրբեջանի Հանրապետության էթնիկ-կրոնական մյուս փոքրամասնությունների համեմատությամբ ավելի շահավետ վիճակում է գտնվում:

Գոյություն ունի պատմամարդաբանական ուսումնասիրությունների վրա հիմնված գիտական կարծիք, որ ինգիլոյները հելլերի սերունդներն են: Հելլերը այն 26 ցեղերից միակն էր, որը մտնում էր Կովկասյան Ալբանիա պետության կազմի մեջ, որը ձևավորվել էր ցեղային միությունների հիման վրա մ. թ. I դարում: Հելլերը բնակվում էին Քուր գետի ձախ (հյուսիսային) ափին, որտեղ նրանց հարևանությամբ հյուսիսից ապրում էին լեզերը՝ այժմյան լեզգիալեզու ազգությունների, մասնավորապես լեզգիների և ծախուրների նախնիները: Ծախուրները այսօրվա էթնոքաղաքական քարտեզի վրա գտնվում են ինգիլոյների հարևանությամբ: Հելլերի բնակութ-

յան արեալը իր մեջ ներառում էր Ադրբեջանի Կախիի և Շեկի շրջանների հարավային մասը և հասնում էր մինչև Կասպից ծովի ափերը:

Կովկասի ակտիվ քրիստոնեացման ժամանակաշրջանում՝ IV-V դարերում, հեղինակը նույնպես ընդունեցին մոնոֆիզիտական ուղղվածության քրիստոնեությունը: Մոնոֆիզիտական ուղղվածության քրիստոնեության հենքի՝ հայկական պետականության թուլացման սկզբից, այսինքն՝ VII-VIII դարերից, տարածաշրջանում կրոնական-մշակութային տեսանկյունից ակտիվ դեր սկսեցին խաղալ քարթվելական թագավորությունները, որոնք սկսեցին տարածել իրենց ազդեցությունը Հյուսիսային և Արևելյան Կովկասում:

Արդեն IX դարում վրացական եկեղեցին մեծ ազդեցություն ուներ ոչ միայն նախկին ալբանական պետության որոշ ժողովուրդների վրա, այլև՝ Հյուսիսային Կովկասի և Հայաստանի վրա: Ուղղափառությունը ընդունելուց հետո հեղինակը, ինչպես նաև տարածաշրջանի մի շարք այլ ժողովուրդներ, ընդունեցին նաև վրացական գիրը, և սկսվեց արևելյան ալբանացիների աստիճանական ծուլման գործընթացը: «Քարտլիս Տխովրեբա» վրացական մատենագրության համաձայն՝ երեթի շրջանը (Ջաբաթալա-Շեկի գոտի, այսօր՝ Ադրբեջանի հյուսիս) մկրտված էր Սուրբ Նինոյի կողմից, իսկ այդ շրջանում գտնվող Կախի քաղաքը վրացական իշխանության կարճատև ժամանակահատվածում դիտվում է որպես եկեղեցական կենտրոն<sup>1</sup>:

Արաբական նվաճումների հետ միաժամանակ սկսվեց Կովկասի ցեղերի և ժողովուրդների ակտիվ և բռնի իսլամացումը: Արդյունքում տարածաշրջանում ձևավորվեց մոտ տասն մուսուլմանական պետական միավոր: Առաջին հերթին իսլամացվեցին պետականությունը կորցրած ժողովուրդները: Այդ պատճառով վրացականացված հեղինակի ճնշող մեծամասնությունը ընդունեց իսլամը: Արաբական նվաճողները, իսկ հետո՝ նաև պարսիկները, տարածաշրջանում ակտիվորեն տարածում էին իսլամը: Պարսիկները, ինչպես նաև Հարավային Կովկաս տեղափոխված թյուրքական ցեղերը տեղի բնակիչներին սկսեցին անվանել «ենի գելտի», այսինքն՝ «նոր հեղինակ»<sup>2</sup>: Այստեղից էլ, ինչպես ենթադրվում է, գալիս է վրացալեզու, բայց պատմամարդաբանական տեսանկյունից լեռնաալբանական ազգության այսօրվա անվանումը՝ «ինգիլոյներե» Արևելյան ալբանական ազգությունների լրիվ իսլամացման գործընթացն ավարտվեց XVII դարի սկզբում՝ պարսկական շահ Աբաս I-ի Կովկաս

<sup>1</sup> <http://www.pravoslavie.ru/guest/040608105128>

<sup>2</sup> [http://atlas.musigi-dunya.az/atlas/ru/et\\_ilisu\\_.html](http://atlas.musigi-dunya.az/atlas/ru/et_ilisu_.html)

կատարած արշավանքների ժամանակ, երբ վերջին քրիստոնեական համայնքները կամ գաղթեցին, կամ ընդունեցին իսլամ:

Պարսկական շահի արշավների ժամանակ էթնոմշակութային տեսանկյունից տարածաշրջանը ենթարկվեց արմատական փոփոխությունների՝ Կախիից մինչև Շիրվանի լեռնային ժողովուրդները կամ ոչնչացվեցին, կամ էլ գաղթեցին: Նրանց բնակության նախկին տեղերում շահ Աբաս I-ը բնակեցրեց թյուրքական ցեղեր՝ լեռնեցիների հարձակումներից իր լեռնային սահմանները պաշտպանելու համար: Շահը մասամբ ոչնչացրեց նաև Վերին Ալազանի ավարական բնակավայրերը, որոնց հողերի վրա հետագայում բնակվեցին քարթվելական ցեղերը:

Պարսկական արշավանքներից անմիջապես հետո տարածաշրջանում ձևավորվեց Կակի իշխանությունը (մուրավությունը), որը իրենից ներկայացնում էր ինքնավար (ինքնուրույն) միավորում, որտեղ գերակշռում էին ծախուրները և իլիսունները, որոնք լեզգիալեզու ժողովուրդներ են: Կակի իշխանությունը տարածվում էր Ադրբեջանի այսօրվա Կախիի և Ջաբաթալայի շրջանների վրա: Ինգիլոյական բնակավայրերը նույնպես ներառված էին այդ պետական միավորման կազմի մեջ: Թալա բնակավայրի մոտ 1716 թ. տեղի ունեցած ճակատամարտում Կակի իշխանության պարտությունից հետո ձևավորվեց նոր պետական միավորում՝ Ջարո-Քելոկանական սուլթանություն անվամբ կամ Ջարի ջամահատություն, որտեղ գերիշխող դեր սկսեց խաղալ ավարական էթնոսը:

Երկու դար շարունակ տարածաշրջանում տեղի էր ունենում մի կողմից՝ ավարական, մյուս կողմից՝ ծախուրա-իլիսունական էթնիկ տարրերի էթնոկոոնական աստիճանական ինտեգրացիան: Իշխան Ցիցինովի գլխավորությամբ 1803 թ. ռուսական զորքերի՝ տարածաշրջան մտնելուց հետո կրոնական ընդհանրության հիման վրա ինտեգրման գործընթացն ուժեղացավ, բայց XIX դարի կեսերից նորից սկսվեց էթնիկ ինքնագիտակցության մասնակի աճ ավարների և ծախուրների մոտ:

Վրացական իշխանությունները, Ռուսական կայսրությանը միանալուց հետո, վերսկսեցին Վրացական ուղղափառ եկեղեցու կրոնական ընդլայնումը դեպի Ալազանի գետահովիտ: Սակայն ինգիլոյների քրիստոնեացման երկրորդ փուլն սկսվեց Շամիլի ապստամբությունից հետո, երբ տարածաշրջանի ռուսական ղեկավարությունը խոստացավ վրացալեզու ճորտերին, քրիստոնեական հավատքին վերադառնալու դեպքում, այլ արտոնություններ տրամադրելու հետ մեկտեղ ազատել ճորտատիրական ենթակայությունից: Այսպիսով՝ տեղի ռուսական ղեկավարության աջակցությամբ 1850-1857 թթ. քրիստոնեություն ընդունեց Ջաբաթալայի մարզի

Իլիսուի շրջանի գյուղերի ինգիլոյները, Կախի, Ալիբեգլու, Կարա-գան և Սեշաբաշ, ինչպես նաև Շոտավար և Կոտուկլու գյուղերի լեզգիալեզու բնակչության մի մասը: 1858 թ. քրիստոնեություն էր ընդունել Տասմալը, Ջազյան, Լալա-Փաշա, Միրսայա և Ենգիան<sup>3</sup> գյուղերի բնակչությունը: Պետք է նշել, որ բնակչության ոչինգիլոյական մասը որոշ ժամանակ անց վերադարձավ իսլամին՝ վրացական կողմից լեզգիալեզու բնակչության կենցաղ վրացական գիրն ու լեզուն ներդնելու փորձերի պատճառով: Այլ խոսքով՝ վրացական կողմը կազմակերպում էր քարոզչական գործունեություն լեզգիների և ավարների բնակավայրերում, սակայն, չստանալով սպասվող արդյունքները, կենտրոնացավ ինգիլոյների տարածաշրջանի ամբողջական վրացականացման վրա:

1918 թ. Անդրկովկասի հանրապետությունների անկախության հռչակումից հետո վրացական զինված միավորումները բազմիցս ներխուժել են Ջաքաթալայի մարզ՝ ծախուրներից և ավարներից վրաց բնակչությանը պաշտպանելու պատրվակով: Նրանք ունեցել են բազմաթիվ զինված բախումներ տեղի ավարական բնակչության հետ, որը դարեր շարունակ գերիշխում էր Ջաքաթալայի (Ջարի) շրջանում: Ինգիլոյները, որոնց թիվը XX դարի սկզբում կազմում էր 3000 մարդ, 1918 թվականից հետո ցանկացան մտնել Վրաստանի կազմի մեջ՝ ծախուրիների և ավարների մշտական հարձակումների պատճառով: Իսկ դադստանցի ժողովուրդները, Յյուսիսային Կովկասի քաղաքական քարտեզում Լեռնային Հանրապետության հայտնվելուց հետո, միացան դրան՝ միաժամանակ հրաժարվելով ինչպես վրացական, այնպես էլ ադրբեջանական ենթակայությունից:

1920 թ. տարածաշրջանը Խորհրդային Ադրբեջանի կազմի մեջ մտցնելուց հետո ավարական և ծախուրական բնակչության բողոքը ադրբեջանական ենթակայության դեմ զգալի նվազեց: Ինգիլոյները Ադրբեջանական ԽՍՀ-ում ավելի շահավետ վիճակում էին, քան այլ ազգային փոքրամասնությունները: Սակայն վրացական դպրոցների փակումը տարածաշրջանում հանգեցրեց Ջաքաթալայի շրջանի իսլամի հետևորդ երկու խոշոր ինգիլոյական բնակավայրերի մասնակի ձուլման և թյուրքացման: Բացի դրանից՝ 1920-1930-ական թվականներին Ջաքաթալայի և Կախիի շրջաններում վրացական դպրոցների կարգավիճակը ադրբեջանական իշխանությունների որոշմամբ մի քանի անգամ փոխվեց՝ վրացականից

---

<sup>3</sup> Տրանսկովկասյան տարածաշրջանի ժողովուրդների էթնոգրաֆիա և պատմություն, «Բաստիոն» հեռանկարային հետազոտությունների հասարակական հիմնադրամ, Մոսկվա, 1999 թ., էջ 30, <http://www.bastion.ru/files/trans.doc>

ադրբեջանականի և հակառակը<sup>4</sup>: Վրացական ԽՍՀ քաղաքական ղեկավարությունը փորձում էր պահպանել ինգիլյոյների վրացական ինքնագիտակցությունը՝ նրանց տրամադրելով երկրի բուհերում արտոնյալ տեղեր և պարբերաբար անցկացնելով էթնոմշակութային միջոցառումներ, որոնց մասնակցում էր ակտիվ և հեռանկարային ինգիլյական երիտասարդությունը:

ԽՍՀՄ-ի փլուզումից հետո իրավիճակը սկսեց լարվել, և արդեն 1991-1992 թթ., երբ Վրաստանում իշխանության եկավ Չվիադ Գամսախուրդիան, ադրբեջանական կողմը, գտնվելով Լեռնային Ղարաբաղի հայերի հետ ընդհարման մեջ, ադրբեջանական պետության փլուզման վտանգից ելնելով, միջոցներ ձեռնարկեց երկրի էթնիկ փոքրամասնությունների նկատմամբ: Այն բանից հետո, երբ Ալիաբադում, Մոսուլում և Կախ-Ինգիլյում մեկ տարվա ընթացքում մոտ հարյուր ինգիլյոյներ վրացական կողմի ակտիվ քարոզչության հետևանքով ընդունեցին քրիստոնցություն, և Լեռնային Ղարաբաղի Յանրապետության ղեկավարության հետ զինադադարի պայմանագիր ստորագրվեց, Բաքում սկսեց հատուկ ուշադրություն ցուցաբերել ինգիլյական շրջանակների կրոնական հարցերին:

Այսօրվա դրությամբ ինգիլյոյները բաժանված են երկու խմբի՝ մահմեդական ինգիլյոյներ (սուննիներ) և քրիստոնյա ինգիլյոյներ (ուղղափառներ), բացի դրանից՝ կա նաև բապտիստ ինգիլյոյների մի քանի ընտանիք: Չնայած տարբեր դավանանքներին՝ քրիստոնյա և մահմեդական ինգիլյոյների կենցաղի և մշակույթի շատ տարրեր նման են միմյանց: 1999 թ. մարդահամարի համաձայն՝ «վրացիների» թիվը (ներառյալ ինգիլյոյները) Ադրբեջանում կազմում է մոտավորապես 14900 մարդ, սակայն ինգիլյոյների իրական քանակը, ըստ երևույթին, երեք անգամ ավել է: Բանն այն է, որ ԽՍՀՄ-ի փլուզումից հետո վրացական միսիոներների ակտիվացման հետ մեկտեղ բարձրացավ քրիստոնյա ինգիլյոյների վրացական ինքնագիտակցությունը, մինչդեռ մահմեդական ինգիլյոյների հիմնական մասը այսօր էլ իրեն համարում է ադրբեջանցի: Այդ պատճառով 1999 թ. բնակչության մարդահամարի ժամանակ Ադրբեջանում որպես վրացի ներկայացան միայն քրիստոնյա ինգիլյոյները: Դրա հետ մեկտեղ հատկանշական է, որ վերջին շրջանում վրաց լեզուն ոչ միայն պահպանվում է քրիստոնյաների կողմից, այլ նաև տարածում և հանրաճանաչություն է ստանում ինգիլյոյների մուսուլմանական գյուղերում:

Կախիի շրջանում քրիստոնյա ինգիլյոյների թիվը մոտ 9000 է, Ջաքաթալայի շրջանում՝ ավելի քան 2500, Բելոկանի շրջանում՝

---

<sup>4</sup> Բուրջան Ս., Իսաև Ա., Ալիբեգով Բ., Վրացի-ինգիլյոյների ողբերգությունը, Թբիլիսի, 2005 թ., էջ 3:

մոտ 500: Մոտ 2000 քրիստոնյա ինգիլոյներ ապրում են Բաքվում, Գանձակում (Գյանջա), Շեկիում և Մինգեչաուրում: Բելլկանի շրջանում քրիստոնյա ինգիլոյները մահմեդական մեծամասնության հետ միասին ապրում են Իֆիթալա գյուղում, որը գտնվում է շրջանի դաշտավայրային մասում՝ Կատեխ գյուղի մոտ: Ջաքաթալայի շրջանում քրիստոնյաները մուսուլմանների հետ ապրում են քաղաքային տիպի Ալիաբադ գյուղում, միևնույն ժամանակ Ալիաբադի հարևանությամբ գտնվում են Մոսուլ և Ենգիյան մեծ գյուղերը, որոնք բնակեցված են մահմեդական ինգիլոյներով: Այդ բոլոր բնակավայրերը գտնվում են շրջանի դաշտավայրային մասում՝ Ալազան գետի ձախ ափին, իսկ դրանց հարևանությամբ ցրված են ավարական և ծախուրական գյուղերը: Կախիի շրջանում ինգիլոյները (հիմնականում՝ քրիստոնյա) բնակվում են Տորագան, Շոտավար, Ինգիլո-Քեթյուքյու, Կախ-Ինգիլոյ և Ալիբեյլի գյուղերում, ինչպես նաև Ալիբեյլիից հյուսիս գտնվող Իբախլի գյուղում և Բեյուկ-Ալաթեմիր փոքր առևտրում:

1995 թ. սկսած թուրքական և սաուդյան կրոնական գործակալների ակտիվացման պատճառով ինգիլոյական գյուղերում սկսեցին տարածվել տարբեր իսլամական հոսանքներ, ինչը բավականին մեծ խնդիրներ ստեղծեց վրացական և ադրբեջանական կողմերի համար: Ադրբեջանական մուսուլմանների ղեկավար շեյխ-ուլ-իսլամ Ալլահշուբյուր Փաշազադեի և Ադրբեջանի նախագահի խորհրդական Իդայաթ Օրուջևի 1996 թ. ապրիլին Ալիաբադ կատարած ակցից հետո գյուղում սկսեցին կառուցել փոքր մզկիթ: Հետաքրքիր է, որ նույն հանդիպման ժամանակ Փաշազադեն առաջարկեց տարածաշրջանից վտարել կամ ոչնչացնել քրիստոնյա ինգիլոյներին<sup>5</sup>: Դրանից հետո երկու տարվա ընթացքում Կախիում և Ջաքաթալայում սկսեցին ակտիվորեն գործել թուրքական քարոզիչները՝ տարածելով արմատական իսլամական գրականություն և անհարդու-ժողականություն ինգիլոյների քրիստոնեական մասի նկատմամբ (հեղինակին այդ մասին հայտնել են ականատեսները):

1990-ական թթ. կեսերին ադրբեջանական ղեկավարությունը արգելեց Վրաստանից վրացերեն լեզվի ուսուցիչների ժամանումը, ինչպես նաև կրճատեց դպրոցներում մայրենի լեզվով դասավանդման ժամերը մինչև շաբաթական 4 ժամ: Ինչպես Սամցխե-Ջավախք-Ցալկայի հայ ուսուցիչները, Կախիի շրջանի ինգիլոյական ուսուցիչները դժվարությամբ են դասավանդում երեխաներին Վրաստանի պատմությունը և աշխարհագրությունը՝ անկախ այն բանից՝ մտնում է դա ծրագրի մեջ, թե ոչ: Ինչպես և Ջավախքում,

---

<sup>5</sup> Նույն տեղում:

ինգիլոյական դպրոցներում Վրաստանից բերված դասագրքերով դասավանդումը փաստորեն արգելված է: Բացի այդ՝ ԽՍՀՄ-ի փլուզումից անմիջապես հետո վերացվեցին այն որոշ արտոնությունները, որոնք գոյություն ունեին Ադրբեջանի բուհեր ընդունվող փոքրաթիվ ժողովրդների ներկայացուցիչների համար<sup>6</sup>: Այսպիսով՝ միջնակարգ դպրոցներում կրթության ցածր մակարդակի պատճառով հանրապետության հյուսիսային և հյուսիս-արևելյան շրջանների բնիկները (ավարներ և լեզգիներ) հաճախ բարձրագույն կրթություն ստանալու համար ստիպված էին գնալ Դաղստան կամ էլ Վրաստան, ինչպես դա անում են ինգիլոյները: Նման քաղաքականությունը, անշուշտ, ինգիլոյական բնակչության զանգվածային դժգոհության պատճառ դարձավ: Բնակչությունը պահանջում էր վերականգնել բուհ ընդունվող ինգիլոյների համար հատուկ արտոնություններ և դպրոցներում վրացերեն ու ադրբեջաներեն լեզուների դասավանդման բարելավում: Սակայն որոշ ժամանակ անց ինգիլոյական բնակչության պահանջները կտրականապես փոխվեցին: Այժմ վրացալեզու բնակչությունը պահանջում է դպրոցներում ուժեղացնել վրացական թեքումը՝ Վրաստանի տարբեր բուհեր ինգիլոյական երիտասարդության հետագա ընդունման համար, միաժամանակ Վրաստանի ղեկավարությունը մշտապես բանակցություններ է վարում դպրոցները վրացական դասագրքերով ապահովվելու հարցի շուրջ:

Վրաց-ադրբեջանական կապերի հետևանքով, որը պայմանավորված է ընդհանուր էներգակոմունիկացիոն նախագծերում մասնակցությամբ, ինգիլոյական փոքրամասնության վիճակը վերջին տարիներին բարելավվեց: 2004-2006 թթ. բարելավվեց վրացական լեզվի դասավանդումը ինգիլոյական դպրոցներում, սկսվեցին ինչպես ադրբեջանական ղեկավարության ներկայացուցիչների, այնպես էլ Վրաստանի քաղաքական և հոգևոր առաաջնորդների ակտիվ այցերը տարածաշրջան: Բացվում են վրացական դպրոցներ, հիմնվում է Վրաց ուղղափառ եկեղեցու Գերեթի թեմը Ադրբեջանի Կախիի շրջանի շրջկենտրոնում:

1997 թ. վրաց պատրիարք Իլիա II-ի՝ Կախիի շրջան առաջին այցելությունից հետո Կախ-Ինգիլոյ գյուղի կիսավեր եկեղեցին, որ XIX դարում կառուցել էին հայերը, վերավառուցվեց Վրաստանի պատրիարքության միջոցներով և 2002 թ. օծվեց Սուրբ Գեորգիի անվամբ: Եկեղեցուն սպասավորում է քահանա Իոանը (Աբասաշվիլին): Պարբերաբար եկեղեցուն անցկացվում են պատարագներ: Հայր Իոանի խոսքերով Սուրբ Գեորգի եկեղեցին մեծ ազդեցություն ունի նաև Ջա-

<sup>6</sup> <http://zerkalo.az/rubric.php?id=14473&dd=24&mo=2&yr=2007>

քաթալայի շրջանի մահմեդական ինգիլոյների վրա, որոնք Սուրբ Գեորգիի օրը միշտ գալիս են Կախ-Ինգիլոյ<sup>7</sup>: Այսօրվա դրությամբ հանրապետության Չաքաթալայի և Կախիի շրջաններում ընդհանուր առմամբ գործում է երեք վրացական ուղղափառ եկեղեցի:

Ադրբեջանում մյուս քրիստոնեական սրբավայրը ալբանական Գյուրմյուք քիլեսի եկեղեցին է, որը մասամբ վերակառուցվել է, ավելի ճիշտ՝ ձևափոխվել է և բացվել 2005 թ.: Սակայն հայտնի սկանդալից հետո, երբ եկեղեցու պատերի վրայի հայկական գրությունները ամբողջությամբ ջնջվել էին, վերականգնման նախագիծը ֆինանսավորող նորվեգական հիմնադրամը դադարեցրեց աշխատանքները: Որոշ ժամանակ անց ադրբեջանական մասնագետները սեփական ուժերով ավարտեցին սկսած գործը:

Կյուրմյուք քիլեսի եկեղեցին գտնվում է Կյուրմյուքի (վրացերեն՝ Կուրմուխի) կիրճում՝ Նիջ գյուղի մոտակայքում, որտեղ համախումբ բնակվում են ուղիները: Վերականգնողական աշխատանքների ավարտից հետո ադրբեջանական ղեկավարությունը նախատեսում էր եկեղեցին վերածել ալբանական ճարտարապետության թանգարանի: Սակայն 2005 թ. վերջին՝ ինգիլոյների բողոքի ալիքից հետո և վրացական պատրիարք Իլիա II-ի անձնական խնդրանքով Կյուրմյուք քիլեսի գմբեթին դրվեց խաչ և ինգիլոյական համայնքին թույլատրվեց պարբերաբար պատարագներ և եկեղեցական թափորների այցեր կազմակերպել Կախիից Կյուրմյուքի կիրճ: Արդեն մի քանի տարի է, ինչ մարտ ամսվա սկզբին տեղի բնակչությունը ակտիվորեն նշում է Կուրմախոբա տոնը, որն իրենից ներկայացնում է զանգվածային ուխտագնացություն ղեպի Կյուրմյուքի եկեղեցի: Պետք է նշել, որ տոնին հավաքվում են ոչ միայն քրիստոնյա ինգիլոյներ, այլ նաև մահմեդական ինգիլոյներ, ինչպես նաև՝ ադրբեջանցիներ: Ամեն տարի տոնին մասնակցելու համար ուխտավորներ են ժամանում Թբիլիսիից, իրականացվում է նաև բազմաթիվ ուսանողական արշավներ Թբիլիսիից Կախի:

Տարօրինակն այն է, որ ադրբեջանական կրոնական և քաղաքական առաջնորդները ոչ մի կերպ չեն արձագանքել ինգիլոյական կրոնական և հասարակական առաջնորդների՝ 2006 թ. արված բազմաթիվ հայտարարություններին՝ մոտ ապագայում վրացական Գիշ-Կուրմուխի թեմի ստեղծման (կամ վերականգնման) վերաբերյալ<sup>8</sup>: Սրանից ելնելով՝ կարելի է եզրակացնել, որ ադրբեջանական ղեկավարությունը չի խոչընդոտում երկրում վրացական ուղղափառ եկեղեցու ազդեցության տարածմանը և նույնիսկ նպաստում է ուղիների վերակողմնորոշմանը՝ Հայկական առաքելական եկեղե-

<sup>7</sup> <http://www.pravoslavie.ru/guest/040608105128>

<sup>8</sup> Նույն տեղում:

ցուց ուղղափառության<sup>9</sup>: Այնուամենայնիվ, այն բանից հետո, երբ 2005 թ. Կյուրմյուքի եկեղեցին վերանվանվեց Սուրբ Գեորգի, սկսեցին ակտիվորեն այնտեղ այցելել տուրիստական և կրոնական խմբեր Վրաստանից: Բացի այդ՝ ադրբեջանական «Ձերկալո» թերթում «Հանդուրժողականության ավելացում» վերնագրով լույս տեսած հոդվածում հեղինակը քննադատության է ենթարկում ինգիլոյական փոքրամասնությանը և անուղղակի կերպով՝ նաև երկրի ղեկավարությանը և նշում, որ Ջաքաթալա-Շեկի գոտում բոլոր անրոցները և մշակույթի ու ճարտարապետության քրիստոնեական հուշարձանները ոչ միայն տեղական ղեկավարությունը, այլ նաև բնակչությունը անվանում է վրացական:

Վրացական ուղղափառության տարածումը շարունակվեց նաև 2005 թ. վերջին, երբ վերանորոգվեց Կախ-Ինգիլոյի փոքր եկեղեցին, որը XVI դարում կառուցել էին վրացիները: 2006 թ. ապրիլին տարածաշրջան ժամանած Իլհամ Ալիևն ընտանիքի հետ այցելեց այդ եկեղեցի:

Մյուս եկեղեցին, որը պատկանում է Գերետի ուղղափառ թեմին, գտնվում է ինգիլոյական Գում գյուղում, որը գտնվում է մարզկենտրոն Կախի մոտակայքում: Որոշ տվյալներով դա V դարում կառուցված ալբանական եկեղեցի է: 2006 թ. Ադրբեջանում ԱՄՆ-ի նախկին դեսպան Ռինո Խարնիշի անձնական միջոցներով դրա վերակառուցումից հետո պատմական և ճարտարապետական այդ հուշարձանը հանդիսավոր բացվեց, իսկ մի քանի ամիս անց հանձնվեց Գերետի թեմի խնամքին:

Ժամանակ առ ժամանակ Վրացական պատրիարքությունն այստեղ անցկացնում է պատարագներ և տարածում քրիստոնեական գրականություն: Նշենք, որ Գում գյուղը բազմազգ է: Այստեղ ապրում են ինչպես ինգիլոյներ, այնպես էլ ադրբեջանցիներ և ծախուրներ:

Կախի շրջանի ինգիլոյական բնակչության մեջ շրջանառվում է լուր, որի համաձայն Վրաց ուղղափառ եկեղեցին մտադիր է վերականգնել Ալիբեյլի ինգիլոյական գյուղի մոտակայքում գտնվող կիսավեր մատուռը: Վրաստանի եկեղեցական քաղաքականության հիմունքներից ելնելով՝ վրաց-ադրբեջանական հարաբերությունների բարելավման լույսի ներքո, ըստ երևութին, վրացական կողմի նման մտադրությունը իրապես ողջունվում է: Գյուղ պարբերաբար այցելող վրացական հոգևորականները այդ հարցը բարձրացրել են նաև Թբիլիսիում: Բանն այն է, որ հոգևորականները Ալիբեյլի են գալիս հարևան Կախեթիից, ինչը դժվարություններ է ստեղծում ինչ-

---

<sup>9</sup> [http://mitq.org/udin07\\_11.html](http://mitq.org/udin07_11.html)

պես նրանց երկարատև կեցության, այնպես էլ տեղի բնակչության և հարևան գյուղերի քրիստոնյաների հետ մշտական շփման տեսակետից:

Սակայն ինգիլոյների վրացականացման գործընթացում էլ ամեն ինչ սահուն չի ընթանում: Դեռևս 1990-ականների կեսերին Վրաստանից Մոսուլ և Ալիաբադ բնակավայրեր էր թափանցել բապտիստական կրոնական շարժումը, որը նյութական-ֆինանսական աջակցության միջոցով արդեն 1999-2000 թթ. տիրել էր ինգիլոյական բնակավայրերի անապահով ընտանիքների մտքերին: Հետաքրքիրն այն է, որ բապտիզմ ընդունում էին ինչպես ուղղափառները, այնպես էլ մահմեդականները: Տեղի բապտիստական համայնքը ղեկավարում է ոմն Ջաուր Բալաևը: Նա ֆինանսավորվում է արտասահմանից, մասնավորապես Մոլդովայից, որտեղ 2005-2006 թթ. բապտիստական դպրոցում սովորել են երկու երիտասարդ ինգիլոյ Ալիաբադից<sup>10</sup>: Սակայն մեր տվյալներով այժմ բապտիստների թիվը կրճատվել է մինչև 300 մարդ, ինչը, հավանաբար, Վրաց ուղղափառ եկեղեցու և ադրբեջանական իշխանությունների համատեղ գործողությունների արդյունքն է: Պետք է նշել, որ Ջաբաբալայի շրջանի ինգիլոյների հոգևոր և հասարակական կյանքում ակտիվ դեր է սկսել խաղալ երիտասարդությունը, որի ներկայացուցիչները, ավարտելով Վրաստանի տարբեր բուհեր, ընդունեցին քրիստոնեություն և վերադարձան հայրենի գյուղեր<sup>11</sup>:

Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել Ադրբեջանի վարած ժամանակակից կրթական քաղաքականությանը երկրի վրացալեզու բնակչության նկատմամբ: Ինչպես արդեն նշվեց, խորհրդային ժամանակաշրջանում և երկրի անկախության առաջին տարիներին իրականացվում էին բոլոր ուսումնական հաստատությունների ադրբեջանացման հին սցենարները: Միաժամանակ իջեցվում էր վրացական ուսուցիչների աշխատավարձը, և վերացվել էին երկրի էթնիկ փոքրամասնությունների համար նախատեսված տարբեր կրթական արտոնությունները: Ադրբեջանի քաղաքականության փոփոխումից հետո սկսեցին վերանորոգվել և բացվել վրաց-ադրբեջանական դպրոցները, որոնցում նախապատվությունը տրվում էր ոչ թե ադրբեջաներեն, այլ հենց վրացերեն լեզվին:

Խոշոր ինգիլոյական բնակավայրում՝ Ալիաբադում, այժմ գործում է չորս հանրակրթական դպրոց՝ մոտ 2000 աշակերտով: Դրանցից երեքը վրաց-ադրբեջանական են, իսկ մեկը՝ ռուս-ադրբեջանական: Մոսուլ գյուղի երկու դպրոցներում նույնպես ուսուցանում են վրացերեն և մասամբ՝ ադրբեջաներեն լեզուները: Ենգիյան գյու-

<sup>10</sup> <http://www.day.az/print/news/politics/27002.html>

<sup>11</sup> <http://zerkalo.az/rubric.php?id=14473&dd=24&mo=2&yr=2007>

ղում ուսումը վարվում է հիմնականում ադրբեջաներեն լեզվով՝ վրացալեզու դասագրքերի բացակայության պատճառով: Վրացական կողմը տարին երկու անգամ անցկացնում է մրցույթներ Վրաստանի պատմությունից, բացի այդ՝ ինգիլոյ երեխաների համար պարբերաբար կազմակերպվում են էքսկուրսիաներ դեպի Վրաստան: Վերջին անգամ նման միջոցառում իրականացվել է 2006 թ. վերջին, երբ Բելոկանի և Ջաքաթալայի շրջանների՝ մասնակի ձուլման ենթարկված մուսուլմանական գյուղերի մի քանի տասնյակ ինգիլոյ երեխաներ մեկնել էին Թբիլիսի: Մարգամշակութային միջոցառումներից և քաղաքում էքսկուրսիաներից հետո երեխաները հանդիպեցին երկրի նախագահի հետ, որը պատմեց երկրի մասին և այն մասին, որ նրանք ապրում են հին վրացական հողում՝ Սայինգիլոյում: Այնուհետև կազմակերպվեց հանդիպում հոգևորականների հետ և էքսկուրսիա՝ դեպի երկրի տարբեր եկեղեցիներ: Էքսկուրսիայի ավարտից հետո երեխաներին նվիրեցին փոքր խաչեր, և հայտարարվեց, որ նրանք պետք է սիրեն իրենց հայրենիքը: Այս ամենը ցուցադրվեց Վրաստանի կենտրոնական հեռուստատեսությամբ՝ Ռուսթավի-2 հեռուստաալիքով: Բացի այդ՝ 2007 թ. մարտին հայտնի դարձավ, որ L-TV հեռուստաընկերությունը Լազոդեխիում (վրացական քաղաք, որը ամենամոտ է Ջաքաթալայի շրջանին) նախատեսում է հզորացնել իր հաղորդակը, որպեսզի հեռարձակի իր հաղորդումներն արդեն նաև Ադրբեջանի տարածքում: Նշենք նաև, որ L-TV ալիքը արդեն վրացերեն լեզվի և պատմության ուսուցանման փորձնական հաղորդումներ է հեռարձակել Ադրբեջանում, ինչը և դարձավ հեռարձակման ընդլայնման նախանշանը: Բացի այդ՝ ինչպես հայտարարեց ընկերության ղեկավար Լալի Խուբուլավան, «Սայինգիլոյում ապրող վրացական բնակչությունը շփվում է սահմանամերձ Լազոդեխի շրջանի հետ և, բնական է, որ նրան կիստաքրքրեն լրատվական հաղորդումները»<sup>12</sup>: Ադրբեջանական կողմը դեռևս չի մեկնաբանել այդ մտադրությունը, սակայն պետք է նշել, որ 2006 թ. Ադրբեջանում ավարական հեռուստաալիքները զրկվեցին արտոնագրերից այն բանի համար, որ Հեռուստառադիոհաղորդումների ազգային խորհրդի որոշումից հետո նրանք չանցան ամբողջությամբ ադրբեջաներեն լեզվով հեռարձակման: Բացի այդ՝ ադրբեջանական կողմը արգելել է ռուսական և դադստանյան ալիքների հեռարձակումը երկրի տարածքում:

Այսօրվա դրությամբ, չնայած այն բանին, որ ադրբեջանական բնակչության վիճակը Քվեմո Քարթլի վրացական շրջանում մնում է ծանր, ինգիլոյների հարցում պաշտոնական Բաքում ցուցաբերում է

---

<sup>12</sup> [http://www.khabal.info/news.php?subaction=showfull&id=1173004352&archive=&start\\_from=&ucat=6&](http://www.khabal.info/news.php?subaction=showfull&id=1173004352&archive=&start_from=&ucat=6&)

պասիվություն և գրեթե չի խոչընդոտում Կախիի և Ջաքաթալայի շրջաններում վրացական ազդեցության ուժեղացմանը: Միաժամանակ վրացական ղեկավարությունը, հաճախ կազմակերպելով ինգիլյոյների բողոքի կեղծ ակցիաներ կարևոր միջպետական հանդիպումների նախօրեին ինչպես Վրաստանում, այնպես էլ Ադրբեջանում, էթնոքաղաքական առումով փորձում է ստանալ առավելագույն օգուտը, ինչպես դա տեղի ունեցավ 2004 թ. հուլիսին Իլհամ Ալիևի՝ Վրաստան կատարած այցի ժամանակ<sup>13</sup>:

Վերջին շրջանում նախանշվում են հետաքրքիր գործընթացներ, որոնց համաձայն հնարավոր է, որ մոտ ապագայում սկսվի վրացական գյուղական բնակչության աննշան, բայց ինտենսիվ վերաբնակեցում Ալազանիի աջ ափից Կախիի և Ջաքաթալայի շրջաններ: Վերոնշվածի ապացույց կարելի է համարել Լազոդեխի շրջանի Սամտացկարո սահմանամերձ վրացական գյուղի բնակչության ուղերձը Ադրբեջանի նախագահին: Ավագանին խնդրում է գյուղի բնակիչներին հող հատկացնել Կախիի շրջանում, որտեղ բնակվում են նրանց հարազատները, ինչպես նաև նրանց տրամադրել Ադրբեջանի քաղաքացիություն<sup>14</sup>: Խնդրանքները պայմանավորվում են նրանով, որ սահմանն անցնելը հաճախ անհնարին է դառնում ձմեռվա տեղումների և կամուրջի փլուզման պատճառով: 2007 թ. հունվարից արդեն մոտ 100 հայտ է ներկայացվել՝ Ադրբեջանի քաղաքացիություն ստանալու համար, բացի այդ՝ 2007 թ. փետրվարից Ջաքաթալայ քաղաքում ինգիլյոյները սկսել են բնակարաններ և տներ ձեռք բերել, ինչը նույնպես կարող է իր ազդեցությունը տարածաշրջանում ուժեղացնելու Վրաստանի քաղաքականության մաս լինել:

2006 թ. վերջից հաճախակի են դարձել ինգիլյոյների դիմումները Թբիլիսիին՝ իրենց ազգանունների ադրբեջանական վերջավորությունները վրացականի փոխելու խնդրանքով: Բանն այն է, որ խորհրդային տարիներին վրացական անուն-ազգանուն ունենալու արգելքի պատճառով ինգիլյոյական բնակչության հիմնական մասի անուն-ազգանունները մուսուլմանական են: Այդ շրջանում ինգիլյոյական բնակչության ճնշող մեծամասնությունը գտնվում էր լրիվ ադրբեջանացման փուլում: Իսկ այսօր մկրտության ժամանակ երեխան ստանում է վրացական անուն, որը ոչ մի ձևով չի արձանագրվում ադրբեջանական իշխանությունների կողմից: Ստացվում է այնպես, որ ինգիլյոյներից շատերն ունենում են երկու տարբեր անուն-ազգանուն:

---

<sup>13</sup> [http://www.echo-az.com/archive/2004\\_06/851/politica02.shtml](http://www.echo-az.com/archive/2004_06/851/politica02.shtml)

<sup>14</sup> <http://trend.smart.az/cgi-bin/readnews2.pl?newsId=884877□=RU>

Վրաստանի՝ մարդու իրավունքների նախկին պաշտպան Սոզար Սուբարին երկու անգամ բարձրացրել է այդ հարցը իր ադրբեջանցի գործընկերոջ հետ հանդիպումների ժամանակ: Բացի այդ՝ 2005 թվականից նրա փաստացի հովանավորությամբ Թբիլիսիում Ադրբեջանի դեսպանատան առջև կազմակերպվել են ինգիլյոյների ցույցեր՝ տարբեր պահանջերով: Հնարավոր է, որ այդ ակցիաները ինգիլյոյների խնդիրների արդիականությունը «մակարդակի վրա պահելու» նպատակ ունեին: Հենց այդ պատճառով 2007 թ. ամռանը կազմակերպվել էր վրացական կառավարական պատվիրակության պաշտոնական այցը Ջաքաթալա, Բելոկանի և Կախի: Պատվիրակության կազմի մեջ էին կրթության նախարար Ալեքսանդր Լոբայան, Քրիստոնեա-դեմոկրատական շարժման առաջնորդ Թարգամաձեն և մի շարք պատգամավորներ: Ինգիլյոյների իրավունքների զանգվածային խախտումների մասին վրացական կողմի կտրուկ հայտարարությունից անմիջապես հետո սկսեց հասունանալ միջպետական սկանդալ, որի պատճառով ադրբեջանական կողմը, ի զարմանս շատերի, զիջեց վրացական կողմին՝ դասագրքերի և ադրբեջանա-վրացական սահմանն հաղելը դյուրացնելու հարցերում:

2007 թ. մարտի 18-ին տարածաշրջան այցելեց Վրաստանի նախագահի մայրը՝ Գիուլի Ալասանիան: Նա շնորհավորեց Ջաքաթալայի և Կախիի մահմեդական-ինգիլյոյներին զալիք Նովրուզ տոնի կապակցությամբ և կոչ արեց հիշել իրենց վրացական ակունքները և դառնալ վրացական հանրության մասը:

Վրաց պատմաբանները տարածաշրջանում վրացական էթնիկ տարրի դերի բարձրացման համար իրենց հրապարակումներում եզրակացնում են, որ ինգիլյոյների բնակության արեալում (Սաինգիլո) իբրև թե ապրում են ավելի քան 100,000 ադրբեջանականացված վրացիներ, որոնց մեջ մտնում են նաև էլիտական լեզգիները, որոնք իրականում վրացիների հետ որևէ կապ չեն ունեցել և չունեն, ինչպես նաև ադրբեջանականացված ծախուրներ, որոնք վրացական կողմից ներկայացվում են որպես թյուրքալեզու վրացիներ: Հիմնվելով նման կարծիքների վրա՝ վրաց պատվիրակներն արդեն այցելել են Կախիի շրջանի Իլիսու գյուղը, որի բնակչությունը, հավանաբար, դիմավորել է նրանց ծաղրանքով, բայց հյուրընկալ, ինչպես դա ընդունված է լեզգիների մոտ:

Ադրբեջանում վրացական գործոնի ստեղծումը և ամրապնդումը ձեռնատու է ոչ միայն մշտական տարածքային հավակնություններ ունեցող երկրին, ինչպիսին Վրաստանն է, այլ նաև, առաջին հերթին, պաշտոնական Բաքվին, որը Ջաքաթալայի և Բելոկանի շրջաններում բնակվող ավարների վիճակի շուրջ որոշ լարվածությամբ

յունից հետո՝ 2001 թ.<sup>15</sup>, սկսեց ուշադիր վերաբերվել տարածաշրջանի էթնիկ իրավիճակին:

Այդ կապակցությամբ հատկանշական է Կախիի շրջանային վարչությունից կազմից էթնիկ ծախուրներին պաշտոններից հեռացնելը: Այսօրվա դրությամբ, ինչպես խոստովանում են որոշ ադրբեջանցի լրագրողներ, Կախիում 13 բարձր և միջին դեկավար պաշտոն, սկսած շրջանային վարչությունից՝ վերջացրած ոստիկանությամբ, զբաղեցնում են էթնիկ ինգիլոյները: Ջաքաթալայում 9 ինգիլոյներ զբաղեցնում են պատասխանատու պաշտոններ: Եվ, վերջապես, ինգիլոյների քաղաքական խրախուսման փաստերից մեկն էլ 2006 թ. Շեկի-Ջաքաթալայի շրջան Իլիան Ալիևի ապրիլյան այցն է: Հետաքրքիրն այն է, որ Կախիի շրջան այցելության ժամանակ Ալիևը ոչ միայն այցելեց երկու վրացական եկեղեցի, այլ նաև հանդիպեց տարածաշրջանի վրացալեզու բնակչության հետ: Ելույթ ունենալով հավաքվածների առջև՝ նա հայտարարեց, որ կշարունակի երկրի ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության և կրոնական հանդուրժողականության քաղաքականությունը: Անդրադառնալով վրաց-ադրբեջանական հարաբերություններին՝ նախագահը նշեց, որ դրանք բարձր մակարդակի վրա են, և համատեղ նախագծերը կնպաստեն երկու ժողովուրդների ավելի սերտ հարաբերություններին: Այնուհետև Ալիևը հետաքրքրվեց ինգիլոյների խնդիրներով, որից հետո խոստացավ Վրաստանի նախագահի հետ այցելել տարածաշրջան:

Ամփոփելով՝ կարելի է արձանագրել, որ ինգիլոյների վիճակը Ադրբեջանում փոխվում է դեպի լավը, և մոտ ապագայում այդ ժողովուրդը կկարողանա կարևոր դեր խաղալ վրաց-ադրբեջանական հարաբերություններում: Ինչ վերաբերում է տարածաշրջանում ինգիլոյների ապրելուն, ապա, ինչպես տեսնում ենք, պաշտոնական Բաքուն շահագրգռված է այստեղ նրանց ազդեցության աճի մեջ, ինչը չի կարող իր ազդեցությունը չունենալ Հյուսիսային Ադրբեջանի դադստանյան ժողովուրդների իրավիճակի վրա:

---

<sup>15</sup> 2001 թ. օգոստոսին ադրբեջանական պաշտոնական աղբյուրները հայտարարել են Ջաքաթալայի շրջանում Հաջի Մագոմեդովի (ենթադրաբար Ադրբեջանի Միլլի Մեջլիսի պատգամավորի)՝ տարածաշրջանի ավարների առաջնորդ Ալի Անցուխկու (սպանված 1996 թ.) նախկին վարորդի գլխավորած ծայրահեղականների ավազակախմբի ոչնչացման մասին: Այն մասին, թե ինչ էր իսկապես տեղի ունեցել այն ժամանակ Ջաքաթալայի շրջանում, տարբեր աղբյուրներ տալիս են շատ տարբեր տվյալներ:

## ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴԻ ՓՈՒԼԸ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ



**Հրանտ ՄԵԼԻՔ-ՇԱՅՆԱԶԱՐՅԱՆ**  
*քաղաքագետ*

Հայաստանի և Թուրքիայի միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու և երկկողմանի հարաբերությունները կարգավորելու մասին երկու երկրների արտաքին գործերի նախարարությունների տարածած հայտարարությունը կարծես թե ստվերեց հայ-վրացական հարաբերություններում օրեցօր սրվող իրավիճակը: Մինչդեռ վերջին շրջանում Հայաստանի հանդեպ Վրաստանի վարած ագրեսիվ քաղաքականությունը երկու երկրներին կանգնեցրել է լուրջ հակամարտության վտանգի առաջ:

Օգոստոսի 26-ին հայկական մամուլը տեղեկատվություն է տարածել այն մասին, որ վրաց սահմանապահները հատել են Հայաստանի սահմանը և գրավել Շիրակի մարզի սահմանամերձ Բավրա գյուղի համայնքային հողերը<sup>1</sup>: Մի քանի օր անց տեղեկատվություն հայտնվեց նաև այն մասին, որ Վրաստանի սահմանապահ զորքերը գրավել են նաև Լոռու մարզի Պրիվոլնոյե<sup>2</sup> գյուղին հարող

<sup>1</sup> <http://news.am/ru/news/3123.html>

<sup>2</sup> <http://armar.am/2009/09/03/վրացի-սահմանապահները-բառացիորեն-նեղ/>

տարածքները (խոսքը վերաբերում է Պրիվոլնոյե գյուղի և Վրաստանի կազմում գտնվող հայկական Աղբյուրփի գյուղերի միջև ընկած անտառապատ բլուրներին - **Յ.Մ.-Շ.**): Պաշտոնական Երևանի և Թբիլիսիի ներկայացուցիչները ոչ մի հանրային մեկնաբանություն չտվեցին այս խնդրին՝ հայտարարելով, որ երկու երկրների միջև ընթանում է սահմանների ճշգրտման գործընթաց, և մինչև այդ գործընթացի ավարտը չարժե նման միջադեպերին մեծ նշանակություն տալ: Սակայն, չնայած մեկնաբանությունների նման պասիվությանը, իրականում Հայաստանի և Վրաստանի ղեկավարների միջև բավական ծանր խոսակցություններ են տեղի ունեցել այս կապակցությամբ:

Սեպտեմբերի 2-ին վրացական մամուլը տեղեկատվություն տարածեց այն մասին, որ հայ-վրացական սահմանում սպանվել են երեք վրացի սահմանապահներ: Վրացական մամուլն այդ փաստը միանգամից կապեց հայ-վրացական սահմանային վեճերի առկայության հետ՝ կարծիք հայտնելով, որ վրացիները զոհվել են հայ-վրացական փոխհրաձգության արդյունքում: Սակայն պաշտոնական Թբիլիսին շատ կտրուկ արձագանքեց իրենց լրագրողների կողմից տարածված այդ հաղորդագրությանը: Վրաստանի արտաքին գործերի նախարար Գրիգոլ Վաշաձեն մեղադրեց նման լուրեր տարածող վրաստանյան լրագրողներին «կլիմիկական ապուշության» տառապելու մեջ: Վրաց սահմանապահների սպանությունը Հայաստանի հետ չկապելու պատճառով վրացական կողմն սկզբից հայտարարեց, որ նրանք զոհվել են թուրք-վրացական սահմանում, այնուհետև տեղեկատվություն տարածեց այն մասին, որ սահմանապահներին զնդակահարել է այդ պահին իրենց հետ գտնվող չորրորդ զինծառայողը:

Սակայն Հայաստանի և Վրաստանի միջև տեղի ունեցած այս միջադեպը հանդիսանում է երկու երկրների միջև գոյություն ունեցող խնդիրների չնչին մասը միայն: Իրականում Հայաստանի Հանրապետության և Վրաստանի միջև առկա են բազում խնդիրներ: Եվ այն փաստը, որ երկու երկրների կառավարություններն ամեն կերպ փորձել են քողարկել այդ խնդիրները հայ-վրացական «դարավոր եղբայրությամբ», հարցն ամենևին էլ չի հեշտացրել: Եվ դեռ ավելին՝ այսօր հայ-վրացական հարաբերությունները հիշեցնում են 1918թ. դեկտեմբերը, երբ հայկական հողերին տիրելու վրացիների ձգտումը քիչ էր մնում կործաներ իրենց մայրաքաղաք Թբիլիսին:

Ընդհանրապես պետք է նշել, որ հայկական կողմը միշտ շատ մեծ կարևորություն է տվել հայ-վրացական հարաբերությունների բարիդրացիությանը: Դա պայմանավորված է եղել ոչ միայն այն հանգամանքով, որ Վրաստանի տարածքով է անցնում Հայաստանի

առևտրատնտեսական ճանապարհների հիմնական մասը, այլև նրանով, որ հիմնականում թշնամիներով շրջափակված հայ ժողովրդին պարզապես անհրաժեշտ է քիչ թե շատ լոյալ տրամադրված հարևանի առկայություն: Բացի այդ՝ նշված հարցում քիչ դեր չի խաղում նաև հայերի պատմական հիշողությունը, որը վրաց ժողովրդին միշտ ընկալել է փոքր եղբոր կարգավիճակով: Սակայն Վրաստանի հետ լավ հարաբերություններ պահպանելու Հայաստանի ձգտումն առաջինիս կողմից հաճախ ընկալվել է իբրև Հայաստանի հանդեպ ճնշումներ գործադրելու լավ հնարավորություն: Արդյունքում ստեղծվել է պարադոքսալ իրավիճակ, երբ երկու երկրների միջև «գոյություն ունեցող բարիդրացիական հարաբերություններն» իրականում մեծ վնաս են հասցնում հայ ժողովրդին:

Վերջիվերջո Վրաստանի օրեցօր ագրեսիվացող քաղաքականությունը բերեց նրան, որ այլևս հնարավոր չէր ասք փակել «հարավոր բարեկամի» նման քայլերի վրա: Վերջին ամիսների ընթացքում Հայաստանի բարձրաստիճան պաշտոնյաները մի քանի անգամ բարձրաձայնել են իրենց դժգոհությունը պաշտոնական թբիլիսիի հանդեպ: Մասնավորապես ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը Վրաստանին մեղադրեց իր աշխարհագրական դիրքը չարաշահելու և Հայաստանի համար ապրանքների տարանցման բարձր գներ սահմանելու մեջ՝ ասելով, որ «ապրանքների փոխադրումն աշխարհի ցանկացած կետից Փոթի կամ Բաթումի փաստացի կրկնակի էժան է, քան Փոթիից և Բաթումիից դեպի Հայաստան»<sup>3</sup>: Իսկ ԱԳՆ կենտրոնական ապարատի և ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների ու հյուպատոսական հիմնարկների հավաքում ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանն ասաց. «Մենք պետք է լուրջ ջանքեր գործադրենք վիրահայությանը հնարավոր աջակցություն ցույց տալու համար: Ջավախքի նկատմամբ մեր վարած քաղաքականության տրամաբանությունը, բովանդակային առումով, պետք է բխի «իմտեգրում առանց ծուլման» սկզբունքից: Իմտեգրումը, այս դեպքում, պետք է ենթադրի վիրահայերի՝ Վրաստանի արժանապատիվ, կարող, հարգված քաղաքացիների համբավի ամրապնդումը: Կարծում եմ, որ հայերենը Վրաստանում մարզային լեզու ճանաչելու, Հայկական առաքելական սուրբ եկեղեցու գրանցումն ապահովելու, Վրաստանի հայկական հուշարձանների պահպանմանն ուղղված քայլերը Վրաստանում միայն նպաստելու են հայ-վրացական բարեկամության ամրապնդմանը, փոխվստահության մթնոլորտի խորացմանը: Այս բոլոր հարցերում մենք պետք է լինենք նրբանկատ, բայց հետևողական և սկզբունքային»<sup>4</sup>:

<sup>3</sup> <http://www.newsarmenia.am/arm1/20090605/42086113.html>

<sup>4</sup> <http://president.am/events/statements/arm/?id=47>

Հայաստանի դիրքորոշման այսպիսի կոշտացումը միանգամից լուրջ անհանգստություններ առաջացրեց ինչպես Վրաստանում, այնպես էլ նրա դաշնակից երկրներում: Վրաստանի և ԱՄՆ-ի դիվանագիտական շրջանակներն արդեն իսկ սկսել են ակտիվորեն քննարկել հայ-վրացական հարաբերությունների հեռանկարներին վերաբերող հարցեր: Այդ քննարկումները Վրաստանի համար էլ ատելի մեծ նշանակություն ունեն, եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ հայ-թուրքական հարաբերությունների հնարավոր կարգավորումն ամբողջովին կփոխի Վրաստանի տեղը ու դերը Հարավային Կովկասում: Բացի այդ՝ պաշտոնական թբիլիսիին լուրջ անհանգստություններ են պատճառում նաև ռուսաստանյան և արևմտյան մի շարք ազդեցիկ լրատվամիջոցների հրապարակած տեղեկություններն այն մասին, որ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորմանը հաջորդելու է Վրաստանի հարցի քննարկումը Հայաստանի, Թուրքիայի և Ռուսաստանի կողմից, ինչը կարող է Վրաստանի մասնատման պատճառ դառնալ:

Ելնելով այդ վտանգներից՝ Թբիլիսիում, ըստ երևույթին, որոշել են մի քիչ փոխել Հայաստանի հետ հարաբերությունների ռազմավարությունը: Համենայնդեպս այդպիսի տպավորություն կարելի է ստանալ սեպտեմբերի 4-ին Երևան ժամանած Վրաստանի արտգործնախարար Գրիգոր Վաշաձեի խոսքերից: Նա նույնսիկ հայտարարել է, որ իր երկիրը պատրաստ է քննարկել հայերենին Սամցխե-Ջավախքում պետական լեզվի կարգավիճակ տալու հեռանկարը<sup>5</sup>:

Սակայն վստահորեն կարելի է պնդել, որ Վրաստանի քաղաքականությունը հիմնական փոփոխություններ չի կրի: Պաշտոնական Թբիլիսին այսօր պարզապես փորձելու է սիրաշահել Հայաստանի ղեկավարությանը՝ հույս ունենալով, որ հետագա քաղաքական գործընթացները հնարավորություն կընձեռեն Հայաստանի հետ հարաբերություններում դարձյալ անցնել հին մարտավարությանը: Սի բան ակնհայտ է. վրացական կողմը միշտ խուսափել է Սամցխե-Ջավախքի հայկական գործոնից և ամեն ինչ կանի դրանից ձերբազատվելու համար:

2009 թ. սեպտեմբերի 22-ին ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Քլինթոնը հանդիպել է Վրաստանի նախագահ Միխեիլ Սահակաշվիլիու հետ<sup>6</sup>: Չնայած այն հանգամանքին, որ հանդիպումը փակ բնույթ է կրել, այնուամենայնիվ ԱՄՆ Պետքարտուղարությունից տեղեկատվության արտահոսք է տեղի ունեցել, որից պարզվել է, որ Սահակաշվիլու հետ զրույցի կենտրոնական թեմաներից է եղել

---

<sup>5</sup> <http://www.natnews.info/2009/09/05/գրիգոր-վաշաձե-վրաստանը-պատրաստ-է-քննա/>

<sup>6</sup> <http://apsny.ge/2009/conf/1253642837.php>

հայկական Սամցխե-Ջավախք տարածաշրջանի հիմնախնդիրը<sup>7</sup>: Հիլարի Քլինթոնը դժգոհել է այն փաստի կապակցությամբ, որ այդ տարածաշրջանում օր օրի ավելանում են վրացական իշխանությունների ապօրինի զործողությունները, ինչի արդյունքում ավելորդ լարվածություն է ստեղծվում ամբողջ Հարավային Կովկասում: Մեզ հասած տեղեկատվության համաձայն՝ ԱՄՆ-ի պետքարտուղարի դժգոհությանն ի պատասխան Սահակաշվիլին փորձել է ապացուցել, որ Սամցխե-Ջավախքի հայության առաջնորդները ղեկավարվում են ռուսական հատուկ ծառայությունների կողմից և թշնամաբար են տրամադրված վրացական պետականության հանդեպ:

Վրաստանի ազգային փոքրամասնություններին վերաբերվող հարցերի վերահսկման ԱՄՆ-ի և, ընդհանրապես, Արևմուտքի ցանկությունը բավականին հիմնավորված է: Հարավային Կովկասում այժմ տեղի են ունենում այնպիսի քաղաքական գործընթացներ, որոնք կարող են ամբողջությամբ փոխել տարածաշրջանի պատկերը: Նախքան 2008 թ. օգոստոսյան պատերազմը Հարավային Կովկասում ԱՄՆ-ի գլխավոր դաշնակիցը Վրաստանն էր: Սակայն Ռուսաստանի միջամտությունը վրաց-օսական պատերազմին ամբողջությամբ փոխեց ԱՄՆ-ի ծրագիրները Վրաստանի հանդեպ: Վաշինգթոնում վստահ են, որ նման աղետալի իրավիճակի հիմնական մեղավորը Սահակաշվիլու ամբիցիոզ վարչակազմի անհավասարակշռված գործողություններն էին՝ չնայած ամերիկացիներն ընդունում են նաև մեղքի իրենց բաժինը: Սակայն դա արդեն կարևոր չէ: Եականն այն է, որ Հարավային Կովկասում ամերիկյան նախագիծը տապալվել է, և հիմա այս տարածաշրջանում նոր քաղաքականություն մշակելու անհրաժեշտություն է առաջացել: Եվ այդ գործն արժանապատիվ կերպով իրականացնելու համար ամերիկացիներն արդեն հաշվի են առնում ամեն մի մանրուք:

Առաջին որոշումը, որ կայացվել է Վաշինգթոնում մեր տարածաշրջանի առնչությամբ, այն է, որ այսուհետև ԱՄՆ-ը խստագույնս պետք է հետևի հարավկովկասյան երկրների ժողովրդավարության զարգացման գործընթացին: Վրաստանի փորձը ցույց տվեց, որ Արևմտյան քաղաքականության այդ կարևորագույն բաղադրիչը երբեք չի կարելի փոխարինել քաղաքական այլ գերակայության հետ: Հարավային Կովկասում ԱՄՆ-ի քաղաքականությունը ձախողվեց նաև այն պատճառով, որ Վաշինգթոնն այս տարածաշրջանում համագործակցում էր ոչ ժողովրդավար կառավարության հետ, ինչն առաջացրեց եվրոպական երկրների հիասթափությունը: Սահակաշվիլու կամայականությունների պատճառով հոդս ցնդեցին Վրաս-

---

<sup>7</sup> <http://armar.am/2009/09/23/ամն-պետքարտուղարությունը-որոշել-է-գր/>

տանը ՆԱՏՕ-ի կազմում տեսնելու ամերիկացիների բոլոր ցանկությունները: Եվ հիմա ԱՄՆ-ն որոշել է նախևառաջ շտկել իր այդ սխալը: Սահակաշվիլու հետ հանդիպման ընթացքում Յիլարի Քլինթոնն ասել է, որ այսուհետև Վրաստանի ազգային փոքրամասնությունների հարցերով ԱՄՆ-ը զբաղվելու է ոչ թե հասարակական կազմակերպությունների, այլ անմիջապես Պետդեպարտամենտի մակարդակով:

ԱՄՆ-ի քաղաքականության նման փոփոխությունը կարող է դրական անդրադառնալ Սամցխե-Ջավախքի հայության քաղաքական կարևորության բարձրացման վրա: Վրաստանում ԱՄՆ-ի դեսպանատան աշխատակիցներն արդեն մի քանի անգամ այցելել են հայկական տարածաշրջան և հանդիպել տեղի ակտիվիստներին: Սա հիմնալի հնարավորություն է հայերի համար Սացմխե-Ջավախքի հիմնախնդիրները միջազգային ասպարեզ հանելու համար:

Իսկ ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետությանը, ապա մեր դիվանագիտության գլխավոր գերակայությունը ստեղծված իրավիճակում պետք է դառնա այն, որ Վրաստանը լուծում տա նախագահ Սերժ Սարգսյանի բարձրացրած հիմնախնդիրներին: Հայաստանի համար այս հարցերն իսկապես սկզբունքային նշանակություն ունեն: Գտնվելով Ադրբեջանի հետ պատերազմական իրավիճակում՝ պաշտոնական Երևանն ուղղակի պարտավոր է ճանապարհներ ապահովել զինուժը տեխնիկական և այլ միջոցներով բավարարելու համար: Հայաստանի համար այդ ճանապարհն անցնում է Սամցխե-Ջավախքով և Վրաստանով: Եվ այն փաստը, որ Վրաստանի անհեռատես և անհավասարակշռված քաղաքականության պատճառով փաստորեն փակվել են Հայաստանի ցամաքային ճանապարհները, միանգամայն անընդունելի է: Հայկական կողմը պետք է հասկացնել տա վրացիներին այն պարզ ճշմարտությունը, որ մեր դիվանագիտության կոշտացումն ամենևին էլ պայմանավորված չէ հայ-թուրքական բանակցային գործընթացով: Այստեղ հարցերն ավելի խորքային են և վերաբերում են հայ ժողովրդի ազգային շահերին: Ուստի անհրաժեշտ է, որ Հայաստանը երբեք չհրաժարվի Վրաստանում իր ազգային շահերը պաշտպանելու քաղաքական կոշտ միջոցներից:

## 1992 ԹՎԱԿԱՆ: ՋԱՎԱԽՔՅԱՆ ԸՆԴՎՁՈՒՄՆԵՐԸ ՄԵՐՕՐՅԱ ՀԵՌՎԱՈՐՈՒԹՅՈՒՆԻՑ



*Վահե ՍԱՐԳՍՅԱՆ  
29.10.2009 թ.*

Դեռ 1992թ. հունվարից սկսած, երբ երկիրը նետվել էր քաղաքացիական պատերազմի գիրկը, վրացական մինիստրների կաբինետը (կառավարությունը) «հասցրեց» ընդունել որոշումներ **«գյուղատնտեսական նշանակություն ունեցող հողային մեֆորմների վերաբերյալ»**, որոնք մինչև գարնան սկսվելը պետք է կարգավորեին հողային հարաբերությունները, ապահովեին հողերի նպատակային բաշխումը Վրաստանի շրջաններում: Այդպիսի որոշումներից առաջինն ընդունվեց 1992թ. Հունվարի 18-ին<sup>1</sup>, որով փորձ էր արվում ինչ-որ կերպ կարգավորել հողերի բաշխման գործընթացը Վրաստանում: Այդ որոշման 4-րդ կետով Վրաստանի ամբողջ տարածքում հողերը բաժանվում էին երկու կատեգորիաների. **«Հանրապետության սեփականության տակ գտնվող հողերը, հաշվի առնելով նրանց նշանակությունը և նրանց վրա սեփականության տարբեր ձևերի հետագա տարածումը, բաժանվում են պետական հողերի ֆոնդի և հողային մեֆորմների ֆոնդի»**<sup>2</sup>: Այս որոշման մեջ դեռևս խոսք չի գնում տխրահռչակ **«սահմանային գո-**

<sup>1</sup> Кабинет министров Республики Грузия, Постановление N 48, 18 января 1992г., г. Тбилиси.

<sup>2</sup> Նույն տեղում:

**տու»** ստեղծման և կազմավորման վերաբերյալ, ինչի մասին որոշում ընդունվեց հետագա երկու հրամանագրերի մեջ, որոնք ընդունվել էին շաբաթներ անց՝ 1992թ. Փետրվարի 6-ին (N 128) և 1992թ. Մարտի 10-ին (N 290)<sup>3</sup>:

Այդ որոշումներով Վրաստանի կառավարությունը կատարում էր իր հերթական «չնտածված» քայլը, որով իր դեմ էր լարում երկրում բնակվող բազմաթիվ ազգությունների: Դրանցով, փաստորեն, դարձյալ վերականգնվում էր սահմանային գոտու ռեժիմը (առաժմ փոքր մասշտաբներով)՝ նման 1950-ական թվականներից առկա, ինչպես նաև՝ Ձ. Գամսախուրդիայի սահմանած հակաիրավական և հակաազգային ռեժիմներին: Սահմանից մինչև 21 կմ խորության վրա բնակվող մարդիկ (ընտանիքներ), ըստ այդ որոշումների, հնարավորություն չունեին ունենալու տնամերձ հողի սեփականության իրավունք՝ անհատական բնակելի տներ և այլ շինություններ կառուցելու համար<sup>4</sup>:

Իսկ Ախալքալաքի շրջանային վարչությունը իր՝ 1992թ. ապրիլի 11-ի N 25<sup>5</sup> և նույն թվականի ապրիլի 21-ի N 25 որոշմամբ (վերջինս նախորդ որոշման շարունակությունն էր)<sup>6</sup>, ստիպված, թե այլ պատճառներով, կիրառության մեջ դրեց Թբիլիսիի կողմից ընդունված N 48, N 128 և N 290 տխրահռչակ որոշումները:

Հետաքրքրական է, որ Ախալքալաքի շրջանային վարչության սկզբնական N 25 որոշման մեջ տեղ չեն գտել բացառապես սահմանային գոտուն վերաբերող օրենքների (ժամանակավոր վարձակալության, սեփականության իրավունք չունենալու և այլնի մասին) կետեր<sup>7</sup>, իսկ ապրիլի 21-ի՝ N 25 որոշման հավելվածի մեջ արդեն կարելի էր տեսնել այնպիսի կետեր, որոնք տարածվում էին շրջանի բնակչության վրա. «Սեփական տներ կառուցելու համար քաղաքացիներին հողատարածքներ են տրվում միայն ժամանակավոր օգտագործման իրավունքով, և ժամանակը լրանալուց հետո այն ենթակա է վերադարձման» (3-րդ կետի 3-րդ ենթակետ)<sup>8</sup>:

---

<sup>3</sup> Заседания Правления Ахалкалакского района от 26.05.1992г., Решение N 48, г. Ахалкалак.

<sup>4</sup> Джонатан Уитли, Интеграция национальных меньшинств в регионах Грузии Самцхе-Джавахети и Квемо Картли. Пять лет президентства М. Саакашвили, Рабочий доклад ЕСМИ (EUROPEAN CENTRE FOR MINORITY ISSUES), N 44, сентябрь 2009 г., с. 47.

<sup>5</sup> Заседания Правления Ахалкалакского района от 11.04.1992г., Решение N 25, г. Ахалкалак.

<sup>6</sup> Дополнение к решению N 25 от 11.04.1992г., принято заседанием Правления Ахалкалакского района от 11.04.1992г., г. Ахалкалак.

<sup>7</sup> Заседания Правления Ахалкалакского района от 11.04.1992г., Решение N 25, г. Ахалкалак.

<sup>8</sup> Дополнение к решению N 25 от 11.04.1992г., принято заседанием Правления Ахалкалакского района от 11.04.1992г., г. Ахалкалак.

Փաստորեն, եթե գյուղացին մեծ դժվարությամբ կառուցելու է ինչ-որ շինություն (բնակելի տուն, անասնագոմ, պահեստ և այլն), ապա ինչ-որ «ժամկետի լրանալուց հետո» այն խլվելու էր նրա ձեռքից. «Տրված տնամերձ հողատարածքների օգտագործման հրաման ստանալուց հետո տեղական իշխանության օրգանները պարտավոր են տիրոջը զրկել հողատարածքի օգտագործման իրավունքից և վերցնել հողատարածքը՝ տալով այն հողի պահուստային ֆոնդին» (որոշման 6-րդ կետ)<sup>9</sup>: Ակնհայտ է, որ այս որոշման կետերը բխում էին Թբիլիսյան վերոնշյալ որոշումներից. «Տնտեսությունների ղեկավարությունը պարտավոր է գյուղատնտեսության վերաբերյալ ակտի հիման վրա առանձնացնել հողատարածքներ՝ չխախտելով Վրաստանի հանրապետության նախարարների կաբինետի կողմից ընդունված N 48, N 128 և N 290 ռեֆորմների պահանջները» (որոշման 11-րդ կետ)<sup>10</sup>:

Վրաստանի պետխորհրդի՝ 1992թ. մայիսի 7-ի որոշումն<sup>11</sup> իր մեջ պարունակում էր կետեր, որոնք վերաբերում էին բնակչության իրավահարաբերությունների այլ ոլորտներին: Տվյալ որոշումով նախատեսվում էր «անհապաղ աշխատանքներ սկսել սահմանային գոտու ստեղծման և կազմավորման համար՝ Չանրապետության ցամաքային և ծովային սահմանների ամբողջ երկարությամբ»<sup>12</sup>: Այդ նպատակով «Վրաստանի Չանրապետության պաշտպանության նախարարությունը մյուս բոլոր շահագրգիռ նախարարությունների և գերատեսչությունների հետ համատեղ պարտավորվում է միջազգային իրավական նորմերին համապատասխան և հաշվի առնելով անկախ հանրապետությունների սահմանների պաշտպանության պրակտիկան՝ համալիր մշակել և լուծել հիմնախնդիրների մի ողջ շարք, որոնք կապված են սահմանային ծառայությունների ձևավորման և օգտագործման, նրանց նյութատեխնիկական բազայի ստեղծման հետ»<sup>13</sup>: Փաստորեն, վերոնշյալ օրենքը գալիս էր լրացնելու Թբիլիսիի՝ 1992թ. փետրվարի 6-ի N 128 որոշմանը (սահմանային 21 կմ-անոց գոտու ստեղծման մասին), որի առաջինից մինչև վերջին կետերը իրենց մեջ պարունակում էին հակաիրավական և բնակչության շահերին բացահայտորեն հակասող, ավելին՝ սահմանային գոտիներում իրադրությունը պայթյունավտանգ դարձնող դրույթներ:

<sup>9</sup> Նույն տեղում:

<sup>10</sup> Նույն տեղում:

<sup>11</sup> Постановление Государственного совета Республики Грузия, о решении комплексных проблем по формированию и функционированию пограничной зоны Республики Грузия, 7 мая 1992г., N 10, г. Тбилиси.

<sup>12</sup> Նույն տեղում:

<sup>13</sup> Նույն տեղում:

Այսպես, N 10 որոշման համաձայն՝ 21 կմ-անոց գոտին ամբողջովին հանձնվում էր Պաշտպանության նախարարությանը, որտեղ հաստատվում էր ռազմական ռեժիմ: Վերոհիշյալ նախարարությունը պետք է սեղմ ժամկետներում ներկայացներ «...սահմանային գոտու անձնագրային ռեժիմի ստեղծման որոշման նախագիծ՝ ամբողջ ցամաքային և ծովային սահմանների երկայնքով, այդ թվում՝ սահմանամերձ քաղաքներում, նավահանգիստներում և ծովային ակվատորիաներում»<sup>14</sup>: Վերոհիշյալ սահմանային երկայնքով գտնվող բոլոր կոլտնտեսությունները, հասարակական տնտեսությունները (գյուղատնտեսական ձեռնարկությունները), գյուղատնտեսական հունքի վերամշակման ձեռնարկությունները և այլ օբյեկտներ փոխանցվում էին Պաշտպանության նախարարության տնօրինությանը՝ համաձայն N 1, 2, 3 հավելվածների<sup>15</sup>: Վերոնշյալ բոլոր տեսակի կազմակերպությունների, հիմնարկ-ձեռնարկությունների տնօրինումը հանձնվում էր Պաշտպանության նախարարության տրամադրության տակ գտնվող *Հատուկ ծառայությանը*, որը պետք է կարգավորեր այդ ոլորտների հարաբերությունները, ինչպես նաև բանակին և այդ շրջաններում տեղակայված զորքերին ապահովեր սննդամթերքով<sup>16</sup>: Իսկ այն հողատարածքները, որոնք գտնվում են 21 կմ-անոց սահմանային գոտում, «կազմում են հանրապետական հողերի ֆոնդը (ինչպես այդ մասին նշել ենք 1992թ. հունվարի 18-ի N 48 որոշման մասին խոսելիս- Վ.Ս.) և ենթակա չեն սեփականացնողինան: Սահմանային գոտում արգելված է առանձնացնել նոր տնամերձ հողային տարածքներ, այդ թվում՝ անհատական բնակելի շինարարության նպատակով<sup>17</sup>: Նայելով Սամցխե-Ջավախք երկրամասի Վրաստանի տարածքում գտնվելիք աշխարհագրական դիրքին՝ դժվար չէ կռահել, որ այդ որոշումը լիովին «վերաբերում էր» այս շրջաններին: Ինչպես նաև թռուցիկ հայացք գցելով Վրաստանի քարտեզին՝ կարելի է տեսնել, որ Վրաստանի ազգային փոքրամասնություններով բնակեցված շրջանները հիմնականում տեղակայված են սահմանամերձ գոտիներում (հայեր, թուրք-մուսուլմաններ («ադրբեջանցիներ»), աջարներ, արխազներ, օսեր, խևսուլներ, փշավներ, թուշեր և այլն), որոնց շրջանում էթնոժողովրդագրական պատկերը փոխելու և նրանց ղեկավարումը հեշտացնելու նպատակով Վրաստանը նրանց մեջ փորձում էր «մխրճվել» այս ձևով:

<sup>14</sup> Նույն տեղում:

<sup>15</sup> Постановление Государственного совета Республики Грузия, о решении комплексных проблем по формированию и функционированию пограничной зоны Республики Грузия, 7 мая 1992г., N 10, г. Тбилиси.

<sup>16</sup> Նույն տեղում:

<sup>17</sup> Նույն տեղում:

Պա հասկանալի կրառնա, եթե հաշվի առնելով Վրաստանի պաշտպանության նախարարության որոշումը, որով զինակոչիկը պետք է իր ծառայությունն անցկացներ իր բնակավայրից առնվազն 70 կմ հեռու գտնվող տարածքում<sup>18</sup> (այսինքն՝ տեղացիների ծառայությունը սահմանային գոտում բացառվում էր), վկայակոչեք Պետխորհրդի որոշման և մեկ դրույթ, որով նախատեսվում էր «...թույլատրել երիտասարդներին, որոնք բանակ են զորակոչվել սահմանային գոտուց և հանրապետության այլ շրջաններից, հաշվի առնելով նրանց ցանկությունը, անցկացնել այլընտրանքային ծառայություն սահմանային տնտեսական գոտու գյուղատնտեսական ձեռնարկություններում և այլ տնտեսական նշանակության օբյեկտներում՝ աշխատանքային մասնակցության ձևով»<sup>19</sup>: Այսինքն՝ չէր բացառվում, որ այլ տեղերից Սամցխե-Ջավախք եկած արտոնյալ զինակոչիկները, տեղում լավ աշխատանք գտնելով, հետագայում նույնպես արտոնյալ պայմաններում մնային այդ տարածքներում:

Օրենքով նախատեսվում էր «հանձնարարել Աբխազիայի, Աջարիայի, սահմանամերձ այլ շրջանների (պատերազմական թոհուրոհի մեջ գտնվող և որպես հնքնավար Մարզ լուծարված Հարավային Օսիան չէր էլ հիշատակվում - Վ.Ս.) գործող օրգանների ղեկավարներին՝ Վրաստանի Հանրապետության Պաշտպանության նախարարությանը հատկացնելու ցանկացած օգնություն՝ հանրապետության սահմանների պաշտպանության կազմակերպման, ղեկավարության ներկայացմամբ՝ Պաշտպանության նախարարության սահմանապահ զորքերի ստեղծման, բնակեցված մասերում կամավորական խմբերի ստեղծման համար, որոնք նախատեսված են սահմանապահ զորքերին գործակցություն ցուցաբերելու համար...»<sup>20</sup>:

Ախալքալաքի շրջանային վարչությունը կարճ ժամանակ անց՝ իր 26.05.1992թ. նիստի որոշման մեջ, դատապարտեց Վրաստանի կառավարության կողմից արված նման քայլերը<sup>21</sup>: Որոշման մեջ կան նոր հիմնախնդիրներ, որոնք ի հայտ էին եկել օրենքի կիրարկման փորձերի ժամանակ: Մասնավորապես շրջանները զրկված էին կարտոֆիլի մթերման հնարավորությունից, անի որ բոլոր պահեստները հանձնվել էին Պաշտպանության նախարարությանը, իսկ

<sup>18</sup> «Ազատամարտ», 5-11 հունիսի 1992, թիվ 23:

<sup>19</sup> Постановление Государственного совета Республики Грузия, о решении комплексных проблем по формированию и функционированию пограничной зоны Республики Грузия, 7 мая 1992г., N 10, г. Тбилиси.

<sup>20</sup> Նույն տեղում:

<sup>21</sup> Решение N 48, Заседания Правления Ахалкалакского района от 26.05.1992 г., О результатах обсуждения постановления Госсовета Республики Грузия и о решении комплексных проблем по формированию пограничной зоны Республики Грузии, 7 мая, 1992г., за N 10, г. Ахалкалаки.

նոր պահեստների շինարարության տարրական իրավունքից բնակչությունը զրկված էր: Փաստորեն, փչանալու վտանգի տակ էր շուրջ 6000 տոննա կարտոֆիլ<sup>22</sup>: Նույն նիստով որոշվում է նաև վերոհիշյալ «սահմանային գոտի» կոչված վայրերի հողատարածքները հանձնել գյուղացիությանը: Որոշմանը հետևում էր Վրաստանի Պետխորհրդին ուղղված խնդրագիրը՝ վերոնշյալ որոշման առանձին կետեր վերանայելու և անձնագրային ռեժիմի հետ կապված հարցերը կարգավորելու ժամանակ հաշվի առնել Ջավախքի՝ ԴԴ-ի բնակչության հետ կապվածությունը<sup>23</sup>:

Ախալքալաքի շրջանային վարչության վերոհիշյալ որոշման առթիվ կարճ ժամանակ անց Ջավախք է հասնում Վրաստանի Պաշտպանության նախարարության նոտան՝ փոխնախարար *Դուրբաժեի* ստորագրությամբ: Նոտայում սպառնալից տոնով նշվում էր, որ չկատարելով Պետխորհրդի որոշումները՝ Ախալքալաքի շրջանային վարչությունը սովի է մատնել վրացական բանակը:

Շրջաններում դժգոհություններն արտահայտվեցին նաև զանգվածային բողոքի հանրահավաքներով և ստորագրահավաքներ կազմակերպելով՝ ընդդեմ այս որոշման: Մեծ հանրահավաքներ տեղի ունեցան 1992թ. հունիսի 5-ին և 6-ին Ախալքալաքում, որոնց ընթացքում ընդունված կոչի տակ ստորագրեցին շատ գյուղերի բնակիչներ (օրինակ՝ գյուղ Ազավրեթից ստացվել էր 98, գյուղ Կորխից՝ 213 ստորագրություն)<sup>24</sup>:

Բողոքի ընդարձակ հողվածով հանդես եկավ նաև Ջավախքում տարածվող «Ասպնջակ» պարբերաթերթը<sup>25</sup>:

Վրաստանի կառավարության հողային իրավահարաբերություններին առնչվող վերոբերյալ որոշումները լրջագույն խնդիրներ ստեղծեցին նաև **Դմանիսի և, հատկապես, Բոլնիսի և Մառնեուլի** գերազանցապես աղբբեջանաբնակ, մասամբ հայաբնակ շրջաններում: Այստեղ ևս արգելվեց հողերի սեփականաշնորհումը:

Հետագայում՝ 1994թ., երբ Վրաստանի միմիստրների կաբինետի նոր որոշմամբ 21 կիլոմետրանոց սահմանային գոտին չձևավորվեց (1998թ. ընդունված «**Պետական սահմանների մասին օրենքի**» համաձայն որոշվում էր 5 կիլոմետրանոց սահմանամերձ գոտին և 500 մետրանոց սահմանային գիծը, որտեղ նախկինում չէր թույլատրվում հողի սեփականաշնորհում), վերոնշյալ շրջանների նշյալ օրենքների տակ ընկած հողատարածքները վարձակալությամբ հանձնվեցին պետությանը, որից էլ այդ հողատարածքները յուրօրինակ մեխանիզմներ

<sup>22</sup> Նույն տեղում:

<sup>23</sup> Նույն տեղում:

<sup>24</sup> Տե՛ս այդ առթիվ հավաքված ստորագրությունների ցանկերը:

<sup>25</sup> «Ասպնջակ», 27.06.1992, թիվ 4 (16):

րով ձեռք գցեցին թբիլիսյան բիզնեսմենները, որոնք հիմնականում վրացիներ էին: Աղբբեջանցի գյուղացիները ստացան հողի աննշան քանակ (0,15 - 0,25 հա), երբ այդ ընթացքում Վրաստանի ուրիշ շրջաններ ստացել էին ոչ պակաս, քան 1,25 - 1,5 հա<sup>26</sup>: Այս անարդարության դեմ շուրջ 15 տարի պայքարեցին աղբբեջանակն մի շարք կազմակերպություններ: Այն մինչ վերջերս համարվում էր Վրաստանի ազգային փոքրամասնությունների շրջանում գոյություն ունեցող առաջնային խնդիրներից մեկը (հողը որպես եկամտի միակ աղբբյուր տեսնող աղբբեջանցու մոտ այն թիվ մեկ խնդիրն էր):

2005թ. հուլիսին Վրաստանի խորհրդարանը ընդունեց «**Գյուղատնտեսական հողերի սեփականաշնորհման մասին**» նոր օրենք, որով նախկինում պետությանը պատկանող կամ վարձակալությամբ տրված հողերը դարձան սեփականաշնորհման ենթակա: Այս օրենքով սեփականաշնորհման իրավունք ստացան նաև մինչև 500 մ երկարությամբ սահմանային շերտի մեջ մտնող հողատարածքները: Նոր օրենքի շնորհիվ 2006թ. առաջին 7 ամիսների ընթացքում շուրջ 8.000 աղբբեջանցիներից յուրաքանչյուրն ստացավ 0,5 հա հողատարածք<sup>27</sup>: Չնայած այս ամենին՝ վերոնշյալ շրջանների աղբբեջանական բնակչության շրջանում շարունակվում են հողի անարդարացի բաշխման հետևանքով առաջացած դժգոհությունները: Այս խնդիրների մասին բազմիցս բարձրաձայնվում է տեղական և Աղբբեջանում գործող մի շարք կազմակերպությունների, ինչպես նաև անհատ գործիչների կողմից:

Վրաստանի Պետխորհրդի՝ 1992 թ. մայիսի 7-ի չարաբաստիկ որոշումից երեք օր անց՝ մայիսի 10-ին, վրացական ազգային գվարդիայի զինվորական մի գումարտակ տեղակայվեց ՀՀ - Վրաստան սահմանի Նինոծմինդա – Բավրա անցակետի մոտ, որի կողմից շուտով փակվեց սահմանը այն պատճառաբանությամբ, որ այդտեղ պետք է տեղակայվեն մաքսային վարչության արգելափակոցները:

Վրաստանի իշխանությունների կողմից ընդունված հերթական չարաբաստիկ այս որոշումների և վերջիններիս կասեցման, միաժամանակ նաև՝ ՀՀ-Վրաստան սահմանին տեղակայված ազգային գվարդիայի վտարման մասին մեզ հայտնի է նաև հետևյալը<sup>28</sup>. սահմանային գոտու ստեղծման, այդ գոտում զորակազմեր տեղակայելու հարցը որոշումներից և ջախախթյան բացասական արձագանք-

---

<sup>26</sup> Джонатан Уитли, Интеграция национальных меньшинств в регионах Грузии Самцхе-Джавахети и Квемо Картли. Пять лет президентства М. Саакашвили, Рабочий доклад ECFM (EUROPEAN CENTRE FOR MINORITY ISSUES), N 44, сентябрь 2009 г., с. 47.

<sup>27</sup> Նույն տեղում, էջ 48:

<sup>28</sup> Նույն պարբերության բովանդակությունը մեզ է ներկայացրել Սամվել Պետրոսյանը:

ներից օրեր անց քննարկվել է Թբիլիսիում՝ Վրաստանի իշխանությունների ակտիվի հավաքի ժամանակ: Հավաքը վարող Վրաստանի Պետխորհրդի նախագահ **Էդուարդ Շևարդնաձեն** խնդրում է Ախալքալաքի շրջանը ներկայացնող **Սամվել Պետրոսյանին**՝ ներկայացնել իրավիճակը: Մինչ վերջինս կատարաստեր իր խոսքը, տեղից վեր է կենում Վրաստանի փոխվարչապետ **Պաստա Գոգուաշվիլին** և հարց ուղղում Ս. Պետրոսյանին. «Պարոն Պետրոսյան, ասացե՞ք խնդրեմ, ինչո՞ւ չեք բարեհաճում կատարել Վրաստանի կառավարության որոշումները»: Ս. Պետրոսյանի պատասխանը լինում է հետևյալը. «Պարոն Գոգուաշվիլի, իսկ Վրաստանի կառավարությունը արդյո՞ք ընդունում է խելացի որոշումներ»: Այս երկխոսությունը ավելի է մեծացնում նիստի լարվածությունը: Ս. Պետրոսյանի և Պ. Գոգուաշվիլու միջև տեղի ունեցած այս երկխոսությունն անգամ վերածվում է ֆիզիկական ընդհարման, հայտարարվում է ընմիջում, և միայն իրավապահների միջամտությունից հետո է ամեն ինչ հարթվում: Հասկանալի պատճառներով փոխվարչապետի դեմ են դուրս գալիս նաև նիստին ներկա արխագական և օսական պատվիրակությունների ներկայացուցիչները:

Շուտով ՀՀ-Վրաստան սահմանին Վրաստանի ՊՆ կողմից տեղակայված վրացական ազգային զվարդիայի վտարման համար սահման է մեկնում ջավախահայ պատվիրակությունը: Ջավախքի հասարակական – քաղաքական գործիչ **Դավիթ Ռատակյանն** այդ առթիվ ներկայացնում է. «*Ձորքի տեղակայումից անմիջապես հետո իմ զխավորած պատվիրակությունը (նշենք, որ Դավիթ Ռատակյանն այն ժամանակ Ախալքալաքի շրջանային վարչության ղեկավարի տեղակալն էր (փոխարեֆեկտը)), մեկնեց ՀՀ-Վրաստան սահմանային անցակետ, ուր մեզ ներկայացավ զորքի հրամանատար Ջեդզիհիձեն: Ես փոխանցեցի նրան մեր մտահոգությունները՝ ասելով, որ մեր նախագահները ներկայումս բանակցությունների մեջ են, դուք ինչո՞ւ եք եկել այստեղ, կամ ի՞նչ խնդիրներ կան ձեր ոլորտի հետ կապված: Նա պատասխանեց, որ ինքը զինվորական է և կատարում է իր ղեկավարության հրամանները: Սենք նրան պաշտոնապես փոխանցեցինք հետևյալը. «**Փոխանցիր հիմա քո հրամանատարությանը, որ եթե կես ժամ հետո դուք չհեռանաք այստեղից, ապա սենք այդ ուղղությամբ կձեռնարկենք միջոցներ**»: Նա մեզանից խնդրեց մեկ ժամ: Ինչպես հետագայում պարզվեց, վրացական զորախմբից կապվել են Ստեփանավան՝ երկու երկրների նախագահների հանդիպման վայր, որտեղից է. Շևարդնաձեն զորախմբին հրահանգել է խնդիրներ չստեղծել և իսկույն հեռանալ: Ձորքը վերադարձավ Ախալքալաք, ապա՝ Ախալցխա:*

Ձորքի հեռանալուց հետո, երբ բարձրացանք Ախալքալաքի շրջվարչության շենք, հավաքվել էին բազմաթիվ մարդիկ, որոնք մե-

դադրում էին շրջվարչության նախագահ Ս. Պետրոսյանին այն բանի մեջ, որ վերջինս, լինելով պատասխանատու պաշտոնյա անձ, թույլատրել էր գործի անարգել մուտքը Ջավախք և վերջինիս տեղակայումը սահմանային անցակետի մոտ: Ես, բարձրանալով կաբինետ, որպես գործողության պատասխանատու - պաշտոնյա՝ հայտնեցի Ս. Պետրոսյանին, որ գործն արդեն իջնում է Ախալցխա, այսինքն՝ ամեն ինչ իրականացվել է ճշգրտորեն»<sup>29</sup>:

Ինչպես արդեն նկատեցինք, սույն դեպքերը տեղի են ունեցել այն ժամանակ, երբ ՀՀ Ստեփանավան քաղաքում հանդիպում էին երկու երկրների՝ ՀՀ և Վրաստանի նախագահներ **Լ. Տեր-Պետրոսյանն ու Է. Շևարդնաձեն**<sup>30</sup>: *Դա 1992թ. հունիսի 5-ն էր*: Հանդիպումը լուսաբանող պաշտոնական հրապարակումներում ջալախքյան այս իրադարձության մասին չկան տեղեկություններ: Պատճառը «հասկանալի է»՝ չվտանգել «նորակառույց» «բարեկամական» հարաբերությունները: *(Լրացուցիչ նշենք, որ հանդիպման պաշտոնական օրակարգում եղել է Վրաստանի տարածքով անցնող հայկական հաղորդակցման միջոցների, կոմունիկացիաների և, հատկապես, գազատարի անվտանգությունն ապահովելու հարցը: Պայմանավորվածություն ձեռք բերվեց նաև երկու պետությունների մայրաքաղաքներում դեսպանատներ բացելու մասին: Այս գործընթացն իր շարունակությունն ստացավ 1992թ. հուլիսի 18-ին երկու երկրների արտգործնախարարների երևանյան հանդիպման ժամանակ, երբ կողմերը ստորագրեցին երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին համաձայնագիրը՝<sup>31</sup>):*

Ջավախքյան զինված ջոկատայինների ներկայացրած վերջնագրի լուրը կարճ ժամանակ անց հասնում է Երևան, այնտեղից էլ՝ Ստեփանավան՝ նախագահների հանդիպման վայր: Շուտով այս ամենին հետևում է Է. Շևարդնաձեի կարգադրությունը՝ **վրացական ազգային գվարդիան անհապաղ հեռացնել Ջավախքից**:

Ախալքալաքի շրջվարչության վերոհիշյալ նիստում ընդունված բողոքի նոտան՝ ուղղված Վրաստանի Պետխորհրդին, Ջավախքի բնակչության բազմահազարանոց ցույցը՝ Ախալքալաքի Ս. Մաշտոցի (նախկին Լենինի) անվան հրապարակում, ջալախահայության նման սկզբունքային պահվածքը վտարեցին ազգային գվարդիան սահմանից<sup>32</sup>, կանխվեց նաև սահմանային գոտու ստեղծման վերոհիշյալ տխրահեռակ որոշումների իրագործումը:

<sup>29</sup> Դավիթ Ռստակյանի հետ մեր հարցազրույցը տեղի է ունեցել 2009թ. սեպտեմբերի 20-ին Երևանում:

<sup>30</sup> «Հայաստանի Հանրապետություն», 06.06.1992:

<sup>31</sup> «Ազգ», 18.07.1992, հմմտ.՝ «Հայաստանի Հանրապետություն», 18.07.1992:

<sup>32</sup> «Ազատամարտ», քիվ 35, հունիս, 1992թ.:

## 1998 Թ. ՕԳՈՍՏՈՍԻ 12: ՋԱՎԱԽՔԻ ՎԵՐՁԻՆ ՀԱՄԱՐՁԱԿ ՔԱՅԼԸ



*Վահե ՍԱՐԳՍՅԱՆ  
08.09.2009 թ.*

Ջավախքում վերջին կտրուկ քայլը, որ տեղի է ունեցել 1990-ական թվականներից ի վեր, 1998թ. օգոստոսյան դեպքն էր: Այն եղավ նաև Ջավախքի՝ առանց այդ էլ ոչ հայեցակարգային պայքարի աստիճանական հանգման և Ջավախքում վրացական հիմքերի հետագա ուժեղացման նոր փուլի սկիզբը:

Եվ այսպես՝ վրացական մամուլում հակահայ հիստերիայի հերթական հուժկու ալիքը բարձրացավ 1998թ. օգոստոսի 12-ի դեպքերից հետո, երբ այդ օրը Ջավախքի ներկայացուցիչները Ախալքալաքից մեկ կմ հեռավորության վրա կանգնեցրեցին վրացական մի մեծ զորամիավորման շարժակազմի երթը, որը պատրաստվում էր, իբր թե, ռուսական զորքի հետ Աբուլ լեռան ստորոտում զորավարժություններ անցկացնելու<sup>1</sup>:

Տասնամյա հեռավորությունից նայելով՝ Ջավախքի նշված և ներկա ժամանակահատվածի գործիչներից ամեն մեկը վրացական զորամիավորումը Ջավախքից վտարելու օպերացիան վերագրում է իրեն: Մեր նպատակն է Ջավախքի պատմության այդ հետաքրքրական էջը հասարակությանը ներկայացնել առավել ճշգրտված ու անաչառ հողի վրա: Ուստի լսել ենք դեպքին առնչվող մարդկանց բո-

<sup>1</sup> «Հզոր Հայրենիք», թիվ 8, 20.08.1998թ.:

լորի կարծիքներն ու դրանք ինչպես առանձնաբար, այնպես էլ համադրված տեսքով ներկայացնում ենք ընթերցողին:

Եվ այսպես՝ պատմում է գործողության անմիջական նախաձեռնող **Դավիթ Վեբիլյանը**<sup>2</sup>. «Ես հիվանդանոցում էի, որտեղ վիրահատվում էր իմ բարեկանս, եկան ինձ շենքից դուրս հրավիրեցին Նելսոն Ալեքսանյանն ու վերջինիս հորեղբայր Վանիկ Ալեքսանյանը (Ախալքալաքի դատախազության քննիչը և մսի կոմբինատի տնօրենը): Նրանք ինձ տեղեկացրին, որ Ախալքալայից դեպի Ախալքալաք է գալիս վրացական զորքի շարժակազմ, և որ իրենք Ռուսթավի (գյուղ Ասպինձայի շրջանում՝ Վ.Ս.) պոստի մոտ հանդիպել են **Սամվել Պետրոսյանին**: Ս. Պետրոսյանը վերջիններիս տեղեկացրել է այն մասին, որ ինքը չի կարող գալ, քանի որ գնում է ժողովի, եթե կարող եմ՝ հայտնեն այդ մասին Վեբիլյան Դավիթին, թող քայլեր ձեռնարկի՝ զորքը ետ դարձնելու ուղղությամբ: Լսելով այդ մասին՝ ես զարմացա, քանի որ մենք ունեինք պայմանագիր այն մասին, որ վրացիները բանակի յուրաքանչյուր տեղաշարժ, դիսլոկացիա (տեղաբաշխում) պետք է համաձայնեցնեին Ջավախքի Կոորդինացիոն խորհրդի<sup>3</sup> հետ, քանի որ մենք երկար տարիներ ի վեր՝ դեռևս խորհրդային վերջին տարիներից, հայտարարել էինք, որ Ջավախքում քաղաքական իշխանության ղեկավարումը վերցնում ենք մեզ վրա: Ես Կարբադի Վարդգեսի մեքենայով իջա ներքև, հանդիպեցինք մեր տղաներին՝ Կոորդինացիոն խորհրդի անդամներին, քննարկեցինք ստեղծված վիճակը: Եղան տարբեր կարծիքներ, բայց քանի որ կար այդ պայմանագիրը, իսկ զորքի տեղակայումը մեր հողի վրա ժողովրդի շրջանում կառաջացներ չափազանց նեզատիվ երևույթներ, տեղիք կտար մեծամեծ հուզումների: Նպատակ ունենալով կանխելու սպասվող անկայունությունը՝ մենք որոշեցինք գնալ ու դա բացատրել զորակազմի ղեկավարներին: Երեք հոգով՝ ես, Կարբադի Վարդգեսն ու Բադրասարյան Սարգիսը, մեքենայով արագ իջանք Ախալքալաքից Ախալցխա տանող ճանապարհի՝ զորքին ընդառաջ: Մոտենալով նրանց՝ հարցրեցինք, թե ովքե՞ր եմ, ի՞նչ նպատակներով եմ գալիս Ախալքալաք: Պատասխանեցին, թե իրենք Ռուսաս-

<sup>2</sup> Դավիթ Վեբիլյանի հետ մեր հարցազրույցը տեղի է ունեցել 2009թ. օգոստոսին Ջավախքում:

<sup>3</sup> 1995թ. հուլիսին Ջավախք ժողովրդական շարժումը դիմեց վերոնշյալ կազմակերպություններին՝ կոչ անելով համախմբվել և ստեղծել մեկ ընդհանուր կենտրոնացված ղեկավար օրգան (կոորդինացիոն խորհուրդ): Կոորդինացիոն խորհուրդը կյանքի կոչվեց նույն՝ 1995թ. հուլիս ամսին: Ղեկավար այս մարմինը միավորում էր քաղաքական աշխատանքի բավարար փորձ և շրջանում հեղինակություն ունեցող 21 ակտիվիստների: Կոորդինացիոն խորհրդի նախագահ ընտրվեց Ի. Աբրահամյանը, տեղակալներ՝ Յու. Թառամազյանը, Ս. Պետրոսյանը, Ն. Մարաբյանը, քարտուղար՝ Մ. Խաչատրյանը: Տե՛ս «Ջավախք», հուլիս, 1995, N 6 (12), նույն տեղում, հուլիս, 1995, N 7 (13): Այսուհետ շատ դիմումներ, որոշումներ և այլ փաստաթղթեր ընդունվում էին հենց այս խորհրդի կողմից:

տանի Պաշտպանության նախարարության հետ ունեն պայմանագիր, որի համաձայն Արուլի լանջերին պետք է Ախալքալաքում տեղակայված ռուսական 62-րդ ռազմարգալի դիվիզիայի հետ անցկացնեն համատեղ զորավարժանքներ՝ Ախալքալաքի 15-րդ զինվորական ավանում հետագայում վերատեղաբաշխվելու համար: Փաստորեն զորավարժանքներից հետո մնալու էին Ախալքալաքում՝ իրենց հատկացված 15-րդ զինվորական ավանում: Ես պատասխանեցի, որ Ջավախքի հայ բնակչությունն այս ամենը համարում է անթույլատրելի, բացի դրանից՝ Կորդոինացիոն խորհուրդը ՌԴ-ի և Վրաստանի Պաշտպանության նախարարությունների հետ ուներ կնքված համաձայնագիր, որի համաձայն առանց ջավախքյան կողմի համաձայնության չպետք է իրականացվի ոչ մի քայլ: Ջորակազմի հրամանատար-գեներալը մեզ տեղեկացրեց, որ ինքը ևս կողմ չէ հայ-վրացական ընդհարման: Սենք ավելացրեցինք, որ պատրաստ ենք մեր անունից տալ գրություն, որտեղ կհիմնավորվեն մեր կողմից արված պատճառաբանությունները: Դրանից հետո նա զանգահարեց իր ղեկավարությանը, ինչ-որ բաներ պայմանավորվեցին, և զորքին տրվեց հետդարձի հրաման: Մնաց միայն հրամանատարն իր մի քանի սպաների հետ՝ սպասելով մեզ, մինչև ես կգայի Ախալքալաք և կպատրաստեի գրությունը: Ես եկա Ախալքալաք, պատրաստեցինք փաստաթուղթը Կորդոինացիոն խորհրդի կողմից, բերեցի տվեցի գեներալին: Նույն ժամանակ այնտեղ հայտնվեցին նաև բազմաթիվ ակտիվիստներ, մարդիկ՝ թվով 15-20 հոգի»:

Պատմում է **Սարգիս Բաղդասարյանը**<sup>4</sup>. «Վրացական զորամիավորման Ախալքալաք հասնելու մասին լուրը մեզ հայտնեցին Նելսոն Ալեքսանյանն ու վերջինիս հորեղբայր Վանիկ Ալեքսանյանը, որոնց ուղարկել էր Սամվել Պետրոսյանը: Ջորքը բավականին բազմամարդ

---

<sup>4</sup> 2005թ. Վրաստանի ՆԳ ռեֆորմների արդյունքում Ներքին գորքերի բազայի հիման վրա ստեղծվում է Վրաստանի ՆԳՆ-ի հատուկ հանձնարարականներով գլխավոր վարչությունը: Ստեղծվեցին նաև վերջինիս տարածաշրջանային վարչությունները: Այդպիսի մի վարչություն էլ ստեղծվեց Սամցխե-Ջավախքում: Տարածաշրջանային վարչության ղեկավարն էր Սարգիս Բաղդասարյանը: Սամցխե-Ջավախքի տարածաշրջանային վարչությունը գործել է երեք ու կես տարի՝ 2005-2008թթ., գտնվել է Ախալքալաքում: Այնտեղ աշխատել է 40 մարդ, 39-ը հայ մեկ վրացի: Դայ աշխատակիցները եղել են հիմնականում «Ջավախք» ժողովրդական շարժման և, ընդհանրապես, ջավախքյան քաղաքական կազմակերպությունների նախկին ակտիվիստներ: Որոշ մարդկանց կողմից վարչությունն անգամ անվանվել է «հայկական գորք՝ վրացական ՆԳՆ-ում»: 2008թ. հատուկ հրամանագրով լուծարվում է Սամցխե-Ջավախքի վարչությունը և բաշխվում է ՆԳՆ-ի վարչության վրա: Չափազանց հետաքրքրական է, որ ներկայում ամբողջ Վրաստանի մահանգներում կան այդ վարչությունները՝ բացի Սամցխե-Ջավախքից: Վրաստանի ՆԳՆ-ի հատուկ հանձնարարականներով գլխավոր վարչության գործառույթները լայն են՝ մեծ հակակոռուպցիոն ծրագրեր, ՆԳՆ-ի այլ վարչությունների հետ համատեղ մասնակցություն հատուկ գործողություններին, սահմանային հսկողություններ և այլն:

էր (մոտավորապես 500 մարդ) ու տեխնիկապես հագեցած (տանկեր, հրանոթներ, զրահատեխնիկա), վերջինիս երկարությունը գրեթե հասնում էր 300 մետրի: Չորքն արդեն հասել էր Ախալքալաքի մատույցներին: Մենք արագորեն հավաքվեցինք Սամվել Պետրոսյանենց դռան մոտ՝ որոշելու համար, թե ինչ քայլեր էինք ձեռնարկելու: Եղան տարբեր կարծիքներ: Այնուհետև Վաղարշակովիչը (խոսքը Դավիթ Վեքիլյանի մասին է՝ Վ.Ս.) բացեց Կարբադի Վարդգեսի ավտոմեքենայի դուռը՝ ասելով՝ ով գալու է, թող մատի: Մեքենան նստեցինք երեքս՝ ես, Դ. Վեքիլյանն ու Կարբադի Վարդգեսը: Հանդիպելով զորակազմի ղեկավարներին՝ պահանջեցինք բացատրություն, որոնք մեզ տեղեկացրին, որ եկել են ռուսական բանակի հետ անցկացնելու համատեղ զորավարժանքներ: Այդ մարդկանց բացատրեցինք, որ տարբեր հանգամանքների պատճառով մենք՝ ջավախքցիներս, դեմ ենք այդ զորավարժանքներին, դեմ է նաև ողջ ազգաբնակչությունը: Մեր կողմից նաև նրանց վախեցնելու փորձ արվեց: Եվ այդ ամենից հետո զորքին տրվեց ետդարձի հրաման: Չորքի ետդարձից հետո, երբ մնացել էր միայն ղեկավար անձնակազմը, նոր միայն հավաքվեցին մարդիկ: Մինչ այդ՝ բուն զորքի ետդարձի ժամանակ, եղել ենք երեքով, ում որ հիշատակեցի քիչ առաջ: Բացի երեքիցս ով որ կասի, թե զորքի հետդարձի ժամանակ եղել այնտեղ կամ մասնակցել է հետդարձին, բացարձակորեն ստում է, կեղծում պատմությունը: Եիշտ է, շատ մարդիկ կարող են ասել, որ Ախալքալաքի ձորում եղել են, բայց այդ ժամանակ տանկերն արդեն վաղուց հեռացել էին, հասել էին Ասպինձա: Դե, այդ ժամանակ Դ. Վեքիլյանը վրացի գեներալին հանձնեց համապատասխան հիմնավորում-գրությունը, որը ժողովրդի անունից դեմ էր հանդես գալիս զորավարժանքներին: Մինչ Կարբադի Վարդգեսն ու Դ. Վեքիլյանը կրեթեին գրությունը, ես մնացի զորքի ղեկավարության մոտ: Նույն ժամանակ և դրանից առաջ մեր տղաները վերևներում ցուցադրական «խաղեր» էին անցկացնում՝ ցույց տալով, թե իբր վերևներից էլ են մեր ջոկատները վերահսկում այդ ամենը և հարկ եղած պարագայում կարող էին «միջամտել»: Բնական է՝ դա ավելի շատ արվում էր կարծիք ստեղծելու և վրացական կողմին վախեցնելու համար: Եթե կցանկանաք, նշեք մարդկանց անուններ, ովքեր ասում են, թե եղել են այնտեղ, ես և բոլորս իմանանք, թե ովքեր են այդ ստախտները: Կրկնում եմ՝ ձորում, զորքի գնալուց հետո և բավական հեռավորության վրա՝ եղել են, բայց այդ մարդիկ տանկի երես չեն տեսել: Եթե եկող էին, ապա ինչու՞ չնստեցին ավտոմեքենան, երբ Դ. Վեքիլյանն առաջարկեց գնալու դեմառդեն: Թող ինչ որ մեր հետ էր կատարվելու, նույնը կատարվեր իրենց հետ: Չեկան...»<sup>5</sup>:

<sup>5</sup> Սարգիս Բաղդասարյանի հետ մեր հարցազրույցը տեղի է ունեցել 2009թ. օգոստոսին Ջավախքում:

Ձորքի արգելափակման դեպքից մեզ հայտնի է նաև հետևյալ ցուցադրական պահը. *Սամվել Պետրոսյանը հարցնում է **Խաչատուր Այվազյանին**<sup>6</sup>, թե ինչո՞ւ են ուշանում մեր ջոկատները, Խ. Այվազյանի կողմից «գործի է դրվում» առանց լարի ռացիան՝ իբր ջավախքյան ջոկատներին դեպքի վայր մոբիլիզացնելու հրահանգ տալու համար: Ս. Պետրոսյանը անգամ գիծ է քաշում վրացական զինվորականների առաջ՝ այն չհատելու պահանջով:*

Պարզ է, որ այս ամենը նույնպես արվել է՝ վախեցնելու համար վրացական զինվորականներին: Եթե Դ. Վեքիլյանն ու Ս. Բաղդասարյանը նշում են, որ զորքի հետդարձի պահին եղել են երեքով, ապա այս դրվագը պետք է որ տեղի ունեցած լիներ ոչ թե բուն զորքի, այլ զորակազմի ղեկավարության մոտ՝ այն պահին, երբ վերոհիշյալ անձինք գրոթյունը բերելու համար մեկնել էին Ախալքալաք: Այս ամենը մեզ հետ զրույցում հաստատեց նաև ինքը՝ Խ. Այվազյանը:

Ինչպես տեսանք վերևում՝ Կոորդինացիոն խորհրդի պատվիրակությունը խոսել է մի փաստաթղթի մասին, ըստ որի՝ Վրաստանի, Ռուսաստանի պաշտպանության նախարարությունների և Ջավախքի հասարակական-քաղաքական կազմակերպությունների համադրող խորհրդի միջև ստորագրվել է մի եռակողմ համաձայնագիր, որը բացառում էր որևէ զորատեսակի մուտքը, տեղաշարժ կամ կայանումը տարածաշրջանում<sup>7</sup>: Վրացական «Դիլիս զագեթի» թերթն անգամ հավաստիացնում է, որ այդ մասին տեղյակ չի եղել շրջանային վարչության նախագահ Դ. Մուրադյանը (որն այդ պաշտոնում փոխարինել էր Սերգեյ Դարբինյանին)<sup>8</sup>: Այս մասին հայտնվում է, որ Վրաստանի և Ռուսաստանի զինված ուժերն իբր թե համաձայնեցրել են զինավարժությունների օրը և տեղը: Բայց զարմանալի է, որ ռուսական կողմը ոչ միայն չի դիմավորել վրացական զորքին, այլև անգամ պատրաստ չի եղել զորավարժություններին և նույնիսկ չի պատասխանել վրացական հեռախոսազանգերին:

Վրացական զորաբանակը մեկ ժամ կանգնեցվում է Ջավախքի Կոորդինացիոն խորհրդի ներկայացուցիչների կողմից: Վերջիններիցս մեկի՝ Կարբադի Վարդգեսի մեքենան կանգնեցվում է զորքի առաջ՝ փակելով ճանապարհը: Ջավախքյան կողմի ներկայացուցիչները գործի են դնում ամեն ջանք՝ զորքին առաջ չթողնելու համար:

Լուրն անմիջապես հասնում է ԴԴ-ի և Վրաստանի ամենավերին օղակներ: ԴԴ-ի կողմից արձագանքում է Պաշտպանության նախարարությունը: Պատմում է տվյալ ժամանակ ՊՆ փոխնախարար **Վա-**

---

<sup>6</sup> Խաչատուր Այվազյանը 2006 թվականից զբաղեցնում է Ախալքալաքի մունիցիպալիտետի ժողովի նախագահի պաշտոնը:

<sup>7</sup> «Երկիր», 15.09.1998:

<sup>8</sup> «Երկիր», 15.09.1998:

**հան Շիրխանյանը**<sup>9</sup>. «Իմ մասնակցությունն այս գործողությանը եղել է պատահական, քանի որ այդ օրը ես մեքենայով տղայիս հետ գնում էի իմ հայրենի Ախալցխայի **Ծղալթբիլա** գյուղ՝ մի քանի օրով հանգստանալու: Ծանապարհին հանդիպեցի այդ ռազմական շարասյանը: Մինչ այդ մեր նախարարությունում ոչ-որ ոչինչ չգիտեր: Մի 10 մեքենա անցնելուց հետո կանգնեցի, ասի՝ տեսնեմ սա ի՞նչ շարասյուն է: Մեքենաները շարունակում էին առաջ ընթանալ, և հանկարծ դիմացից գալիս է Սամվել Պետրոսյանն իր մեքենայով: Կանգնեցինք, հարցրեցի նրան, թե սա ինչ է, պատասխանեց, որ ռուսական 62-րդ ռազմաբազայի կողմից պարպված 15-րդ զինվորական ավանը հատկացրել են վրացական զորքին, ու սրանք հիմա գալիս են այնտեղ բնակվելու, ի՞նչ անենք: Ասի, որ պետք է հետ դարձնել: Ես, փաստորեն, հայտվեցի գործողությունների մեջ՝ ոչ որպես փոխնախարար, այլ որպես ջավախքի: Ես կարծում էի, որ չարժեք կորցնել ռուսական ռազմական ներկայությունը Ջավախքում, առավել ևս՝ տեղակայել այնտեղ վրացական զորք: Դա 1998թ. էր, երբ հակահայ քաղաքականությունը շարունակվում էր բացահայտորեն, այս ամենն անթույլատրելի էր: Խոսեցինք Սամվելի հետ մի 10-15 րոպե, ես շարունակեցի իմ ծանապարհը, Սամվելն ասաց՝ ես կկազմակերպեմ: Ես, իհարկե, խոսեցի 33-ի հետ, որ այսպիսի բան կա, և զորակազմը պետք է հետ վերադարձվի: Արդեն զիշերը Սամվել Պետրոսյանը եկավ ինձ մոտ՝ Ախալցխա, ասաց, որ կազմակերպել է այդ ամենը, փակվել է ծանապարհը, և զորքը հետ է դարձվել»<sup>10</sup>:

Եվ այսպես շուտով զորքի հրամանատարությունը զորքին հետդարձի հրաման է տալիս: Հրամանատար-գեներալն (որոշ տեղեկություններով նա եղել է Վրաստանի ՊՆ-ի հրետանու հրամանատարը) անգամ Կոորդինացիոն խորհրդի ներկայացուցիչներից մի զրոյություն է խնդրում, որ, ըստ նրա, պետք է լիներ հետդարձի իրավաբանական հիմքը: Ջավախքյան կողմը ներկայացնող Դավիթ Վեքիլյանի կողմից Ախալքալաքից շուտով բերվում է վրացական զորքի մուտքը Ջավախք արգելելուն վերաբերող մի փաստաթուղթ, որի տակ ստորագրել են երեք՝ «**Դեմոկրատների միություն**» (Դավիթ Վեքիլյան), «**Կանաչների միություն**» (Սարգիս Բաղդա-

<sup>9</sup> Վահան Շիրխանյանը Ջավախքի Ախալցխա քաղաքի Ծղալթբիլա գյուղից է: 1991-1992թթ. եղել է 33 Կառավարությանը կից Պաշտպանության կոմիտեի նախագահ (դա 33 Պաշտպանության նախարարության նախակազմական կառույցն էր), 1993-1995թթ.՝ Պետնախարար Վազգեն Սարգսյանի ուժային կառույցների գծով խորհրդական և 10-րդ վարչության պետ, 1995-1999թ. հունիսը՝ Պաշտպանության փոխնախարար, 1999թ. հունիսից մինչ 2000թ. մայիսը՝ փոխվարչապետ և Արտադրական ենթակառուցվածքների գործունեությունը համակարգող նախարար:

<sup>10</sup> Վահան Շիրխանյանի հետ մեր հարցազրույցն անցկացվել է 2009թ. սեպտեմբերի 2-ին Երևանում:

**սարյան) և «Զավախք» ժողովրդական շարժում (Ստեփան Դավթյան)** կազմակերպությունների ղեկավար-ներկայացուցիչները:

Պատմում է Զավախքի հասարակական – քաղաքական գործիչ **Դավիթ Ռստակյանը**. «1998թ. օգոստոսի 12-ի կեսօրն անցել էր: Նստած էի Ախալքալաքի այգում: Հանկարծ ինձ է մոտենում Կարբատի Վարդգեսն ու ասում, որ Ախալքխայի ճանապարհով վրացական զորքը գալիս է դեպի Ախալքալաք: Ի՞նչ գորք, ի՞նչ տեղաշարժ դեպի Ախալքալաք. ես հանկարծակի գալով՝ վեր կացա տեղիցս: Նախքան հետագա ընթացքի մասին խոսելը՝ նշեմ, որ, երբ Վրաստանի Պաշտպանության նախարար Նադիրբաիժեի հետ Զավախք էր ժամանել ՌԴ Պաշտպանության նախարարության արտաքին հարաբերությունների գծով պատասխանատու Իվաշովը, մենք՝ Զավախքյան կողմի ներկայացուցիչներս, մանրամասն հիմնավորումներով, պատմական էքսկուրսներով հիմնավորեցինք, թե ինչո՞ւ ենք դեմ ռուսական զորաբանակի դուրս բերմանը Զավախքից: Այդ հիմքի վրա Իվաշովին ներկայացրինք համապատասխան փաստաթուղթ: Այս և այլ առիթներով մենք բազմիցս նշել ենք, որ ոչ միայն դեմ ենք ռուսական բանակի դուրս բերմանը, այլ նաև միանշանակորեն դեմ ենք վրացական զորամիավորման տեղակայմանը Զավախքում: Ինչպես արդեն նշեցի՝ այգում ինձ հասավ վրացական բանակի Զավախք ժամանման լուրը: Բնականաբար ես կարևոր համարեցի Ախալքալաքի կապի բաժանունքից կապվել ՀՀ և խոսել ամենավերին օղակների համապատասխան մարդկանց հետ: Ես գիտեի, որ այդ բաժանունքից իմ խոսակցությանը «ունկնդրում էին» վրացական անվտանգության մարմինները: ՀՀ ներկայացուցիչների պատասխանն ինձ միանշանակ էր՝ անել ամեն հնարավորը, որպիսի վրացական զորքը չմտնի Ախալքալաքի հատված: Դուրս գալով կապի բաժանունքից՝ ես նկատեցի որոշ լրտեսների, որոնք փորձում էին ճշտել մեր կողմից ձեռնարկվելիք հակաքայլերը: Ես տեղում որոշ ցուցադրական խոսակցություններ ունեցա՝ վրացական զորքի դեմ զինված գործողությունների մասին ինչ-ինչ պայմանավորվածությունների շուրջ: Վրացական կողմը, իմանալով մեր վճռական տրամադրվածության մասին և, մանավանդ, որ իրենց նշած համատեղ զորավարժանքներին ռուսական կողմը կարծես թե չէր պատրաստվում ներկայանալ, չափազանց վախեցավ: Զգիտենք՝ գուցե ռուսական կողմի նախապես պայմանավորվելն ու հետագայում չներկայանալը նպատակ ուներ կոնֆլիկտ հրահրել, չենք կարող ասել: Համեմայնդեպս վրացական կողմը բնականաբար վախեցել էր ռուսական այս քայլերից: Ահա այս պայմաններում պարզորոշ էր, որ վրացական կողմին այլևս մնում էր մի քայլ՝ վերադառնալ հետ, քանի որ ռուսական կողմը չկա, հայկական կող-

մը տրամադրված է չափազանց ազդեցիկ: Իսկ ո՞րն էր լինելու հետդարձի պատճառը: Բնականաբար՝ վրացական անվտանգությունը ուներ իր մշակած տարբերակները. եթե ժողովուրդը զորքին դիմադրի՝ ինչ պետք է անել, եթե չդիմադրի՝ ինչպես են զարգացնելու հետագա գործողությունները: Եթե զորքն այդպես հեշտ ու հանգիստ հետ վերադառնար, բնականաբար՝ զորքի հրամանատարությունը խիստ կպատժվեր վերևների կողմից: Իմ ենթադրմամբ վրացական կողմն արագորեն կիրառեց իր մշակած տարբերակներից մեկը՝ հետդարձի տարբերակը: Իսկ հետդարձի համար հարկավոր էին համապատասխան հիմքեր, որն էլ եղավ ջավախքյան կողմի ներկայացրած համապատասխան փաստաթուղթը»:

Նույն գիշերը անհայտ անձինք պայթեցնում են Ախալքալաքի շրջանային վարչության շենքի մի քանի սենյակներ<sup>11</sup>:

Դեպքի հաջորդ օրը սկսեցին սադրանքներով լի տեղեկությունների հրապարակումները: Ըստ Սամցխե-Ջավախքում նախագահի լիազոր-ներկայացուցիչ **Գիգլա Բարամիձեի**՝ պարզվում էր, որ զորքին կանգնեցրել են «28-30 զինված մարդիկ<sup>12</sup>, որոնցից 14-ը Ախալքալաքում ապրող ոչ Վրաստանի քաղաքացիներ են, որոնք ֆինանսավորվում են այլ պետության կողմից և ծրագիր են իրականացնում: Դրանք ռուսներ չեն, որովհետև լիազոր-նահանգապետը վստահեցնում է, որ զգեստափոխված ռուս զինվորականները եղել են մյուս 14-16 հոգու մեջ»<sup>13</sup>: Սրանով, փաստորեն, մեղադրանք էր ներկայացվում և ԴԴ-ին (քանի որ վրացական մամուլը [«Շանսի+», «Ախալի թառբաե, «Սաքարթվելոե և այլն] այդ «անհայտե 14 անձանց տակ մատնանշում էր ԴԴ քաղաքացիներին) և ռուս զինվորներին, հետևաբար նաև՝ Ռուսաստանին: Իր հերթին՝ ռուսական մամուլը ցավով է անդրադառնում վրացական շրջանակների այս և այլ զրպարտանքներին. ռուսական «Կրասնայա զվեզդա» թերթը գրում է. «Ավա՛ղ, սա առաջին դեպքը չէ, երբ հանրապետությունում փորձում են իզուր տեղը մեղադրել ռուս զինվորականներին: Բավական է հիշել Է. Շևարդնաձեի նկատմամբ փետրվարյան մահափորձը, որին հաջորդեցին ռուսական ռազմական հեմակայանները շրջափակելու կոչերը»<sup>14</sup>:

Ջավախքում իրադրությունը սրելուն ուղղված՝ այս փորձը շատ բացասական ազդեցություն կունենար տեղի բնակչության հոգեբանության վրա: Մյուս կողմից՝ ինչպես ճիշտ եզրակացրել են որոշ վերլուծաբաններ, Վրաստանում սպասվող տեղական ինքնա-

<sup>11</sup> «Երկիր», 15.09.1998:

<sup>12</sup> «Ջավախք», թիվ 2, օգոստոս, 1998:

<sup>13</sup> «Վրաստան», թիվ 65-66, 15.08.1998:

<sup>14</sup> «Երկիր», 29.08.1998:

կառավարման մարմինների ընտրությունների (1998թ. նոյեմբեր), ինչպես նաև 1999թ. խորհրդարանական ընտրությունների նախօրեին Հայաստանի հետ հարաբերությունները վատացնելու, Ջավախքում իրավիճակը դրանով սրելու և այս ամենով առանձին վրաց ազգայնականների «ազգային ոգին» բարձրացնելու և նրանց իրենց կողմը գրավելու վրացական ընդդիմության հերթական սցենարն էր: Դրանով էր պայմանավորված Հայաստանի (Վ. Օսկանյանի) կողմից այս միջադեպը «չկազմակերպված միջադեպ» անվանելը վրացական միջավայրում շատ վատ ընդունելը<sup>15</sup>: Եթե, այնուամենայնիվ, է. Շևարճնաձեն տեղյակ էր այս ամեին, ապա գոնե սրանից մեծ չափով փորձեց օգտվել վրաց ընդդիմադիր-ազգայնականների մի ստվար զանգված (Ջ. Վաշականաձեի և այլոց ղեկավար-առաջնորդությամբ), որոնց միջոցով ծայր առան հակահայկական, հակառուսական նոր տրամադրություններ:

Այս դեպքը կարելի է համարել Ջավախքի պայքարի վերջին համարձակ գործողությունը հետխորհրդային շրջանում: Թե ինչո՞ւ նման վերաբերմունքի չեն արժանանում պատահած դեպքերի առիթով վերջին շրջանում Ջավախքում հաստատված վրացական ուժային կառույցների ներկայացուցիչները՝ տարբեր շրջանակներ տարբեր կերպ են բացատրում: Ամենատարածված պատճառաբանությունը կապվում է Վրաստանի հզորացման հետ: Իսկ Ջավախքը վերջին տասնամյակում ինչո՞ւ չի կազմակերպվել ու հզորացել, ինչո՞ւ Վրաստանի նոր հարվածներին այս ընթացքում ավելացան հարվածները նաև «թիկունքից»:

Վրաստանի հարվածը Ջավախքը 1998-ին հետ մղեց, որից հետո Վրաստանը անցավ նոր տակտիկայի: Հետաքրքիր մի փաստ. Վրաստանն ի վերջո հասկանալով, որ միայնակ անհնար է կոտրել ջավախքյան դիմադրությունը, հակաջավախքյան գործողություններ իրականացնելու համար դիմեց ՀՀ-ի օգնությանը: ՀՀ որոշ ուժեր այնքան էլ անարձագանք չթողեցին այդ խնդրանքը: Վրաստանն իր պետական-իշխանական հայազգի ներկայացուցիչների միջոցով Ջավախքի խնդիրները քողածածկելու լայնամասշտաբ քարոզարշավի անցավ նաև մի շարք երկրների հայկական սփյուռքի շրջանում: Վրաստանի այս տակտիկական փաստորեն այնպիսին է, որ վերջինս հետ մղելու համար անհրաժեշտ էր ոչ միայն ջավախքցու դիմադրությունը, այլև՝ ՀՀ հայության, սփյուռքահայի, մտավորականի, լրագրողի, քաղաքագետի աջակցությունը: Դա մի նոր, անսպասելի մարտահրավեր էր հայությանը՝ նետված Վրաստանի կողմից, որին մենք քաջություն չունեցանք պատասխանելու:

---

<sup>15</sup> «Հզոր Հայրենիք», 15.09.1998:

## ՋԱՎԱԽՔԻ ՃԱՆԱՊԱՐՅՆԵՐԻ ՏԽՈՒՐ ԱՆՑՅԱԼՆ ՈՒ ՄՇՈՒՇՈՏ ԱՊԱԳԱՆ



*Վահե ՍԱՐԳՍՅԱՆ  
31.07.2009 թ.*

Ախալքալաքի մունիցիպալիտետի կողմից ս/թ հուլիսին անցկացված մանկական միջոցառում-հանդիպումների ժամանակ երեխաներին տրված այն հարցին, թե, եթե դու լինեիր ղեկավար, առաջին հրամանդ ո՞րը կլիներ, երեխաների մեծամասնությունը պատասխանել է. «Ասֆալտապատել ճանապարհները»:

Սանցխե-Ջավախք-Ծալկա (Ջավախք) տարածաշրջանի կարևորագույն խնդիրներից մեկը ճանապարհների չափազանց վատ, շատ տեղերում՝ անանցանելի լինելն է: Եվ իրոք, այս հիմնախնդիրը զարգացող աշխարհում մեծապես ազդում է մանկական ու մարդկային հոգեբանության վրա:

Ջավախքի հանդեպ Խորհրդային Վրաստանի վարած խտրական քաղաքականության հետևանքով Ջավախքում գրեթե բացակայում էին ասֆալտապատ ճանապարհները: Այդ ուղղությամբ աշխատանքները դեռ նոր էին սկիզբ առնում, երբ փլուզվեց ԽՍՀՄ-ը: Ջավախքցիները մինչ այսօր էլ՝ ԽՍՀՄ-ի փլուզումից գրեթե 20 տարի անց, չեն հավատում, որ մի օր իրենք հեշտ ու հանգիստ, առանց թրխկոցների, «ցնցումների» ու «վայրիվերումների» կհասնեն իրենց բնակավայրերը:

Միայն Ախալքալաքի նախկին շրջանում միջշրջանային ճանապարհների երկարությունը հասնում է 273 կմ-ի<sup>1</sup>, որը գրեթե ամբողջովին շարունակում է մնալ քայքայված վիճակում: Ջավախք մտնող ճանապարհները, հիմնական ուղղություններով, բացառությամբ Բորժոմ-Ախալցխա ուղղության, գտնվում են անմխիթար վիճակում: Դրանք են Բաթումի-Խուլու-Ադիգեն-Ախալցխա (100կմ), ԶԶ սահման-Նինոծմինդա (22կմ), Թբիլիսի-Ծալկա (90 կմ), Բորժոմ-Բակուրիան-Ցխրածղարոյի լեռնանցք-Ախալքալաք (50 կմ) ուղղությունները:

Ջավախքը մայր պետությանը՝ ԶԶ-ին կապող ճանապարհները հայկական միջոցներով և աննշան չափով վերջին անգամ վերանորոգվել են 1996թ.՝ «Հայաստան համահայկական հիմնադրամի» հատկացրած միջոցներով՝ շուրջ 250.000 դոլար<sup>2</sup>:

Վրացական պետական միջոցներով 1998թ. վերանորոգվեց և շահագործման հանձնվեց Ախալքալաք և Նինոծմինդա քաղաքներն իրար միացնող 20 կիլոմետրանոց հատվածը: Այն Ջավախքի «նահանգներ» կյանքում տվյալ շրջանում կարելի էր համարել խոշորագույն իրադարձություն: Վերջինիս շինարարական աշխատանքների համար հատկացվել էր շուրջ 4,5 մլն լարի<sup>3</sup>: ճանապարհի բացման առթիվ 1998թ. հոկտեմբերի 16-ին Թբիլիսի – Ծալկա ճանապարհով Ջավախք ժամանեց նաև Վրաստանի երկրորդ նախագահ Է. Շևարդնաձեն: Զետաքրքրական էր, որ վրացական իշխանություններն այդ առթիվ «ստիպված էին» փոքր-ինչ վերանորոգել նաև Թբիլիսի – Ծալկա 90 կմ երկարությամբ ճանապարհահատվածը, և, եթե մինչ այդ նշված հեռավորությունը բնակիչներն անցնում էին 4 ժամում, ապա նախագահին այդ ճանապարհն անցավ մեկ ժամում: Նախագահի հետ հանդիպման ժամանակ և՛ Ծալկայի, և՛ Նինոծմինդայի, և՛ Ախալքալաքի բնակիչները բարձրացրին բազմապիսի սուր հարցեր: Է. Շևարդնաձեն, փորձելով հայ-վրացական բարեկամության քողի տակ շրջանցել բոլոր հարցերը, իր այցի շրջանակներում

---

<sup>1</sup> Թեթվաձե Շ., Թեթվաձե Օ., Հայերը Վրաստանում (հին օրերից մինչ մեր ժամանակները), Թբիլիսի, 1998, էջ 231 (վրացերեն լեզվով):

<sup>2</sup> Տես այդ մասին պատմող ՋԱՎԱԽՔԻ ԱՌՏԱՆՑ ԶԵՆՈՒՄՍՍՏԵՍՆՈՒԹՅԱԼ (http://javakhk.tv/) ինտերնետային տեսանյութերը՝  
http://www.youtube.com/watch?v=kHl\_ePxdq8c,  
http://www.youtube.com/watch?v=qNmh\_e6nyTY&feature=related,  
http://www.youtube.com/watch?v=sWh01D1qRP4&feature=related հասցեներում, հմնՄ Դայնэ Аракелянэ, Ахалкалак (агентство “Хетк”, 10.03.2008 г.), Дорога, ведущая из Ниноцминды в Армению, стала труднопроходимой, 26.03.2008, 03:23, http://javakhk.net/forum/index.php?s=cc58f60763d00efa46dfc698252dd006&showtopic=122&st=20#:

<sup>3</sup> «Վրաստան», 24.10.1998:

նշեց. «Լուրջ հիմնախնդիրներ չկան, կան հարցեր, որոնք պետք է լուծել»<sup>4</sup>:

Ջավախքի հյուսիսային մի քանի գյուղերի, Բորժոմ – Բակուրիան – Ցխրածղարոյի լեռնանցք հատվածի և Ծավկայի առանձին մասերի ճանապարհները քիչ թե շատ վերանորոգվեցին 2000-ական թվականների սկզբներին՝ Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթանուղ-գազանուղի շինարարական աշխատանքների շրջանակներում, սակայն դրանք խիստ ժամանակավոր էին և մշտական խնամքի բացակայության, ինչպես նաև ոչ հիմնովին վերանորոգված լինելու պատճառներով կարճ ժամանակ անց ստացան նախկին տեսքը<sup>5</sup>:

2000-ական թվականների սկզբներին Ջավախքի ճանապարհների վերականգնողական աշխատանքների համար գումարներ են հատկացվել ՄԱԿ-ի Ջարգացման ծրագրերի կողմից: Սակայն այստեղ էլ ի հայտ են եկել և կոռուպցիոն, և խտրական դրսևորումներ: Դա ակնհայտ է դառնում, Ջավախքի բարձր լեռնային – արոտավայրային բնակավայրերի ճանապարհների շինարարության համար ՄԱԿ-ի Ջարգացման ծրագրերի (UNDP) հատկացրած գումարի բաշխման աղյուսակում<sup>6</sup>:

ծախսված գումարներն ըստ շրջանների	գումարի չափը (ԱՄՆ դոլարով)
Բորժոմի շրջան	115.000
Ադիգենի շրջան	248.000
Ախալցխայի շրջան	315.000
Ասպինձայի շրջան	236.000
Ախալքալաքի շրջան	265.000
Նինոծմինդայի շրջան	60.000
ընդամենը	1.239.000

Ինչպես տեսնում ենք, այն շրջանները (Բորժոմի, Ադիգեն, Ախալցխայ, Ասպինձայ), որտեղ վրացական տարրը առավել ընդգծ-

<sup>4</sup> Նույն տեղում:

<sup>5</sup> 2007թ. հուլիսի 19-ին Վրաստանի Կառավարության և «BP» ընկերության միջև ստորագրված պայմանագրի համաձայն՝ «BP» ընկերությունը պարտավորվում էր վերանորոգել Ջավախքի ճանապարհների՝ «Բաքու-Թբիլիսի-Ջեյհան» նավթանուղի խողովակաշարին մոտ որոշ հատվածները: «BP» ընկերությունն այդ առթիվ հատկացրել էր \$ 10 մլն: Այդ պայմանագրի համաձայն՝ վերանորոգվող ճանապարհների թվում էին նաև Բորժոմ – Բակուրիան, Բորժոմ – Ախալցխա և Ախալցխա-Վալե հատվածները: Տե՛ս

[http://www.bagin.info/default.asp?Lang=\\_Ru&NewsID=1003&SectionID=0&Date=10/26/2007&PagePosition=1](http://www.bagin.info/default.asp?Lang=_Ru&NewsID=1003&SectionID=0&Date=10/26/2007&PagePosition=1) կայքէջը, [ 25.10.2007 | 15:22 ]:

<sup>6</sup> Samtskhe – Javakheti, Realities and Perspectives, UNDP, Tbilisi, 2004, p. 53.

ված է, հատկացումներն ավելի շատ են, իսկ գերազանցապես հայաբնակ և տարածքով ավելի մեծ Ախալքալաքի և Նինոծմինդայի շրջաններին անհամեմատ քիչ հատկացումներն են կատարվել: Սակայն համատարած կոռուպցիայի պայմաններում այս հատկացումներն այնքան էլ էական ազդեցություն չունեցան խնդրի կարգավորման վրա:

2004թ. հունվարին ԱՄՆ-ի կառավարության կողմից հիմնադրված «Հազարամյակի մարտահրավերներ» կորպորացիան (MCC) շուտով մեծ չափով առնչվելու էր Ջավախքի ճանապարհների հետ: Մինչ այդ՝ նշենք, որ ԱՄՆ «Հազարամյակի մարտահրավերներ» կորպորացիան 2004թ. օգոստոսին Վրաստանին հատկացրեց 295,3 մլն ԱՄՆ դոլարի դրամաշնորհ՝ հնգամյա հատվածում իրականացվող ծրագրերի համար: Իսկ 2008թ. օգոստոսյան վրաց-օսական պատերազմից հետո (2008թ. նոյեմբերի 20-ին) այն ավելացվեց ևս 100 մլն-ով<sup>7</sup>:

ԱՄՆ-ի կառավարական ծրագրերի շրջանակներում 295,3 մլն ԱՄՆ դոլարի հատկացման պայմանագիրը ստորագրվեց 2005թ. սեպտեմբերի 13-ին՝ Վաշինգտոնում, Վրաստանի Կառավարության և «Հազարամյակի մարտահրավերներ» կորպորացիայի միջև, որն ուժի մեջ մտավ 2006թ. ապրիլի սկզբին<sup>8</sup>:

2006թ. մայիսի 5-ին նախագծի տնօրեն Դեվիդ Ջոնսի ներկայությամբ Ախալքալաքում տեղի ունեցավ «Հազարամյակի մարտահրավերներ» ծրագրի ստորև ներկայացվող նախագծերից առաջինի (Ջավախքի ճանապարհների արդիականացման նախագիծ) շնորհանդեսը: Իսկ ծրագիրն ընդհանրապես բաղկացած էր հետևյալ նախագծերից.

1. Ջավախքի ճանապարհների արդիականացման նախագիծ:
2. Գազանուղի արդիականացման նախագիծ:
3. Տարածաշրջանային ենթակառուցվածների զարգացման նախագիծ:
4. Վրաստանի տարածաշրջանային զարգացման հիմնադրամ:
5. Ագրոբիզնեսի զարգացման նախագիծ<sup>9</sup>:

---

<sup>7</sup> 2008 թ. նոյեմբերի 20-ին Վրաստանի վարչապետ Գրիգոր Մդալոբիշվիլին և ԱՄՆ «Հազարամյակի մարտահրավերներ» կորպորացիայի գլխավոր գործադիր տնօրեն Ջոն Դանիլովիչն ստորագրեցին ևս \$100 մլն դրամաշնորհի հատկացման պայմանագիրը, տե՛ս "Вызовы тысячелетия" выделили Грузии дополнительно \$100 млн, [www.regnum.ru/news/1087002.html](http://www.regnum.ru/news/1087002.html) 17:33 20.11.2008:

<sup>8</sup> Саакашвили пообещал жителям армянонаселенного региона Грузии улучшенное образование и хорошие дороги, постоянный адрес новости: [www.regnum.ru/news/846610.html](http://www.regnum.ru/news/846610.html), 10:47 22.06.2007.

<sup>9</sup> Տե՛ս <http://javakhk.net/forum/index.php?showtopic=122&st=0#> կայքէջը, 19.07.2006, 02:34:

ԱՄՆ-ի տրամադրած այս դրամաշնորհի շրջանակներում, ի թիվս այլ ոլորտների, նախատեսվում էր վերանորոգել մոտավորապես 245 կմ ճանապարհահատված<sup>10</sup>: Սկզբնական շրջանում նախատեսվում էր վերանորոգել հետևյալ հատվածները. 1. Թբիլիսի – Կողա – Մանգլիսի, 2. Ախալքալաք – Կարծախ, 3. Մանգլիսի – Ծալկա – Նինոծմինդա, 4. Ախալքալաք – Նինոծմինդա – Յայաստանի Հանրապետության սահման, 5. Խերթվիս – Վարծիա, 6. գյուղ Կարծախ (Ախալքալաքի մունիցիպալիտետ) – Թուրքիայի սահման<sup>11</sup>:

Մինչ այժմ վերանորոգված է միայն Խերթվիս – Վարծունիք (Վարծիա) հատվածը:

Օրագրի իրականացման սկզբնական ժամանակահատվածում ԱՄՆ-ի կողմից հատկացված 295,3 մլն դոլարից շուրջ 102,2 մլն-ը ուղղվել էր Ջավախքի ճանապարհների վերանորոգմանը, որը 2008թ. աճեց՝ հասնելով շուրջ 123,6 մլն-ի:

Մոտ 123,6 մլն դոլար կազմող հատկացումով ներկայումս նախատեսվում է վերանորոգել Ջավախք տարածաշրջանի 170,9 կմ - ճանապարհահատված: Շինարարական աշխատանքների իրականացման իրավունքը մի քանի անգամ փոխանցվել է տարբեր ընկերությունների: Ներկայումս այն իրականացնում են մրցույթը շահած երկու խոշոր՝ “Ashtrom international Ltb” (Իսրայել)<sup>12</sup> և “Papenburg/Ostaz” (Վերմանիա-Թուրքիա)<sup>13</sup> ընկերությունները:

---

<sup>10</sup> Այդ ամենի, ինչպես նաև Ջավախքի ու հայ – վրացական խնդիրների մասին ընդարձակ հարցազրույց է տվել ՀՀ վարչապետ Ա. Մարգարյանը՝ 2005թ. հունիսի 24-25-ը Ջավախք և Վրաստան կատարած իր այցի արդյունքների շրջանակներում: Տե՛ս Ջավախքի խնդիրները՝ Հայաստանի և Վրաստանի ուշադրությունների կենտրոնում, [http://www.armtown.com/news/am/yer/20050727/18006/27\\_2005թ.:](http://www.armtown.com/news/am/yer/20050727/18006/27_2005թ.)

<sup>11</sup> [www.mcg.ge](http://www.mcg.ge) (Фонд вызов тысячелетия – Грузии, Тбилиси, 2007г. (брошюру подготовил Отдел связей с общественностью Фонда вызов тысячелетия – Грузии)). Այս ամենի մասին որոշ տեղեկություններ տես նաև Ախալքալաքի մունիցիպալիտետի կայքէջում (<http://www.akhalkalaki.ge/>) Вызов Тысячелетия, <http://www.akhalkalaki.ge/norut81.html>:

<sup>12</sup> 2008թ. մարտի 20-ին «Հազարամյակի մարտահրավերներ Վրաստան» (Millennium Challenge Georgia (MCG)) հիմնադրամը և Ashtrom ընկերությունը ստորագրեցին պայմանագիր, որով Ashtrom-ը ստացավ \$65 մլն դոլար իրականացնելու Ջավախքի ճանապարհների մի մասի վերանորոգման աշխատանքները: Տե՛ս <http://javakhk.net/forum/index.php?s=973bc846975fb58fc7c9008f9d45c2aa&showtopic=122&st=20# կայքէջը>, 22. 03. 2008, 03:03:

<sup>13</sup> 2008թ. մայիսի 14-ին «Հազարամյակի մարտահրավերներ Վրաստան» (Millennium Challenge Georgia (MCG)) հիմնադրամը և հայտարարված մրցույթում հաղթանակ տարած գերմանա-թուրքական “Papenburg-Ostaz” ընկերությունը Ջավախքում՝ Նինոծմինդայի Դիլիֆ գյուղում, MCG-ի գործադիր տնօրեն Գրիգոր Աբրուշելաշվիլու և “Papenburg-Ostaz” ընկերության լիազոր-ներկայացուցիչ Կլաուս Բիլի գլխավորությամբ ստորագրեցին պայմանագիր: “Papenburg-Ostaz” ընկերությունն այդ պայմանագրով Ջավախքի ճանապարհներից երկու

Նախատեսված ժամանակացույցի համաձայն՝ աշխատանքները պետք է իրականացվեն 2008-2010թթ.<sup>14</sup>: Ծրագիրը մեկնարկել է 2008թ. գարնանը:

Ջավախքի ճանապարհաշինարարության` ՀՀ սահման – Նի-նոծմինդա – Սաթխա 34 կմ երկարությամբ, Ախալքալաք – Սուլդա 20 կմ երկարությամբ հատվածները կառուցվում են “Papenburg/Ostasth” (Գերմանիա-Թուրքիա) ընկերության կողմից: Սաթխա - Նարդևան (Ջավախքի Ծալկայի հատված) 47,8 կմ երկարությամբ, Նարդևան գյուղից Թբիլիսի տանող և Գոխնարի հատվածն ընկած մասը (34,6 կմ), դեպի Թեթրիժդարոյի շրջան ձգվող և Թբիլիսի շարունակվող Գոխնարի – Պարծխիսի հատվածը (37,1 կմ) վերականգնվում են “Ashtrom international Ltb” (Իսրայել) ընկերության կողմից:

2008թ. սեպտեմբերի 30-ին` ՀՀ նախագահ Ս. Սարգսյանի այցի շրջանակներում, Վրաստանի նախագահ Մ. Սահակաշվիլին հայտարարեց Ջավախքի ճանապարհները միջազգային տարանցիկ խաչմերուկ դարձնելու կարևորության մասին` ընդգծելով Ախալքալաքը, Ծալկան, Նինոծմինդան Թբիլիսիի հետ միացնող ճանապարհի կառուցումը, որն ավարտին էր հասցվելու մոտակա երկու տարիների ընթացքում, և դրա մոտավոր արժեքը կազմում է 170 մլն - դոլար<sup>15</sup>:

Ինչպես նշել ենք մեր նախորդ հրապարակումներում, Ջավախքով անցնող Թբիլիսի – Ծալկա – Նինոծմինդա – Ախալքալաք – Ախալցխա – Խուլու – Բաթում ճանապարհի շինարարությունն ու գործարկումը Վրաստանի համար կենսական առաջնահերթության խնդիր դարձավ, երբ տեղի ունեցավ 2008թ. օգոստոսյան վրաց-օսական պատերազմը: Այդ պատերազմի ժամանակ ակնհայտ դարձավ, որ լրջորեն վտանգված է Թբիլիսիի` Գորի քաղաքի միջոցով Բաթում, Փոթի նավահանգիստների, միաժամանակ նաև՝ ողջ արևմտյան Վրաստանի հետ կապվող «կյանքի զարկերակը»: Ելնելով այն ստույգ իրողությունից, որ վրաց-օսական պատերազմը մեկ օրում չի սկսվել, այլ հանդիսացել է երկարատև հաշվարկների ու պլանավորումների արդյունք` հնարավոր է, որ ԱՄՆ «Հազարամյակի մարտահրավերներ» կորպորացիայի` Ջավախքի ճանապարհա-

---

ուղղությունների շինարարության համար ստացավ \$33,1 գումար: Տես Реабилитация дорог Самцхе-Джавахети начнется в ближайшие недели (Грузия), [www.regnum.ru/news/1000316.html](http://www.regnum.ru/news/1000316.html), 22:31 14.05.2008:

<sup>14</sup> Տես <http://javakhk.net/forum/index.php?s=973bc846975fb58fc7c9008f9d45c2a&showtopic=122&st=20# կայքէջը>, 20.05. 2008, 04:08:

<sup>15</sup> Грузия и Армения создадут консорциум по строительству автомобильной магистрали между двумя странами, 19:26 30.09.2008, <http://www.regnum.ru/news/fd-abroad/armenia/1062517.html>:

շինարարական աշխատանքների ուղղությամբ հատկացումների կատարումը հենց պատերազմի պլանավորման արդյունք էր: Ջավախքով ծով դուրս գալու անհրաժեշտությունը անվտանգության անփոխարինելի երաշխիք է Վրաստանի համար: Այն կարող է անգամ որոշել Վրաստան պետության լինել չլինելու հարցը: Ուստի՝ այս ուղղությամբ ճանապարհների գործարկումն ու անխափան դարձնելը ուղղակի բխում է Վրաստանի անվտանգության շահերից: Ջավախքի ճանապարհաշինական ուղղություններին հպանցիկ հայացք զցելն անգամ պարզորոշ ապացուցում է այդ իրողությունը, իսկ Ախալքալաք – Սուլդա – Կարծախ – Թուրքիայի սահման ճանապարհն ուղղակի հեշտացնում է Վրաստանի «եւթը» դեպի Թուրքիայի տարածք:

Ահա այս իրողություններն են «թաքնված» այն «գաղտնիքի» հետևում, թե ինչո՞ւ հանկարծ, տասնամյակներ անց, Վրաստանը որոշեց վերանորոգել Ջավախքի ճանապարհները և այն էլ՝ Ամերիկայի միջոցներով: Այս զարմանքն այնքան էլ անհիմն չէ, քանի որ առաջին «հարվածը», որ ստանում է Ջավախք ոտք դնող յուրաքանչյուր ոք, ճանապարհների քայքայված վիճակից է: Վրաստանը մինչ օրս խայտառակ վիճակում էր պահում միջպետական նշանակություն ունեցող Ախալցխա – Ախալքալաք – Նինոծմինդա – ՀՀ սահման 110 կմ երկարությամբ ՆԿ – 12 մայրուղու Նինոծմինդա – ՀՀ սահման 22 կմ երկարությամբ հատվածը, որը անհամեմատ դժվարացնում էր ջավախահայության կապը մայր պետության հետ:

Այս վերանորոգումներով հիմնախնդիրը չի վերանում. դրանք ընդամենը լուծում են գլխավոր ճանապարհներից մի քանիսի հարցը: Այնինչ մեծ մասամբ գյուղական բնակավայերում ապրող ջավախահայության համար դարձյալ հիմնական խնդիր է մնում գյուղերից դեպի շրջկենտրոն տանող բոլոր ճանապարհների ծայրաստիճան քայքայված վիճակը: Այդպիսի ճանապարհների թիվը ահռելի է և՛ Ծալկայի, և՛ Նինոծմինդա-Ախալքալաքի, և՛ Ախալցխայի գյուղական հատվածներում:

Մեծ մասամբ քայքայված են նաև Ջավախքի քաղաքների փողոցները: Քաղաքային մունիցիպալիտետների առանձին հատկացումների շնորհիվ վերջին մեկ-երկու տարիներին վերանորոգվեցին միայն որոշ կենտրոնական փողոցներ<sup>16</sup>:

---

<sup>16</sup> 2008թ. Ախալքալաքի մունիցիպալիտետի հատկացրած միջոցներով, օրինակ, ասֆալտապատվել են քաղաքային մի քանի փողոցներ: Այդ մասին տես Ախալքալաքի մունիցիպալիտետի կայքէջում (<http://www.akhalkalaki.ge/>) Заасфальтированы улица вокруг центрального парка, <http://www.akhalkalaki.ge/norut2.html>: Նույն թվականին որոշ գյուղական ճանապարհների հարթեցման մասին տես նույն տեղում, Ремонт дорог, <http://www.akhalkalaki.ge/norut7.html>: Նույն տեղում տես նաև

Այս ամենի հետ մեկտեղ նշենք, որ այսօր վերանորոգվում է Ջավախքի միայն Նինոծմինդա – ՀՀ սահման ճանապարհային հատվածը: Մնացյալ՝ Նինոծմինդա – Ծալկա հատվածի շինարարական աշխատանքները կանգ են առել: Ճանապարհաշինական ողջ տեխնիկան վերջին օրերին տեղափոխվել է շինարարության վայրից: Պատճառը, ըստ տեղեկությունների, շինարարական տվյալ ընկերության կողմից մեկ այլ ընկերությանը «գործը ծախելն է»: Հայտնի չէ, թե կոնկրետ երբ են վերսկսելու աշխատանքները, սակայն մի բան ակնհայտ է, որ ավտոմեքենաների անցումը կիսատ թողած և փորփրած ճանապարհներով դարձել է գրեթե անհնար: Այդպիսով՝ Ծալկայի հայկական գյուղերի բնակիչները մեծ դժվարություններ են կրում, մինչ հասնում են Նինոծմինդա և ՀՀ: Այս պատճառով հայկական Ծալկան, որն առանց այդ էլ ուներ ՀՀ-ի հետ ճանապարհային կապի մեծ խնդիր, այժմ կանգնել է այդ կապի իսպառ կտրման եզրին: Ծալկան ՀՀ-ի հետ կապող մյուս ճանապարհը, որն անցնում է Թրիալեթի բնակավայրով, խրամ գետով և Դմանիսիով (Գուգուքի – Գոգավան սահմանային անցակետ), նույնպես խիստ անհարմար է, իսկ հարևան Թեթրիծղարոյով դեպի Մառնեուլ – ՀՀ սահման՝ նույնպես և՛ անհարմար է, և՛ երկար:

---

Վխալբալաքի մունիցիպալիտետի 2008 և 2009 թվականների բյուջետային հատկացումները՝ ճանապարհաշինարարական աշխատանքների համար, Бюджет, <http://www.akhalkalaki.ge/byuje.html>:

**ԵՐԿՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ:  
ՋԱՎԱԽԱՋԱՅԵՐԻ ՓՐԿՈՒԹՅՈՒՆԸ, ԹԵ՞  
ՀԱՅՐԵՆԱԶՐԿՈՒՄԸ**



**Վահե ՍԱՐԳՍՅԱՆ  
12.07.2009 թ.**

«Երկքաղաքացիություն», «երկքաղաքացիության մասին օրենք», «երկքաղաքացիության ինստիտուտ» հասկացությունները հայկական իրականության մեջ առավել ակնառու դարձան այն ժամանակ, երբ ՀՀ-ում 2005թ. նոյեմբերի 27-ին ընդունվեց նոր փոփոխված Սահմանադրությունը, որի 30.1 հոդվածով նախատեսվում է հետևյալը.

**«Հոդված 30.1 Հայաստանի Հանրապետության քաղաքացիներից ծնված երեխան Հայաստանի Հանրապետության քաղաքացի է: Յուրաքանչյուր երեխա, որի ծնողներից մեկը Հայաստանի Հանրապետության քաղաքացի է, ունի Հայաստանի Հանրապետության քաղաքացիության իրավունք: Հայաստանի Հանրապետության քաղաքացիության ծեռքբերման եւ դադարեցման կարգը սահմանվում է օրենքով:**

**Ոչ ոք չի կարող զրկվել Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից, ինչպես նաեւ քաղաքացիությունը փոխելու իրավունքից: Հայաստանի Հանրապետության քաղաքացուն չի կարելի հանձնել օտարերկրյա պետությանը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերի:**

**Երկքաղաքացիություն ունեցող անձանց իրավունքները եւ պարտականությունները սահմանվում են օրենքով»<sup>1</sup>:**

Հիշեցնենք, որ ՀՀ նախկին 1995թ. Սահմանադրությամբ հնարավորություն էր տրվում ՀՀ օրենսդրական դաշտում ստեղծելու երկքաղաքացիության ինստիտուտը:

Աշխարհասփյուռ հայության համար կենսական եւ բարոյական նշանակություն ունեցող այս ինստիտուտի ստեղծման առաջին քայլերը հույս են ներշնչում, որ մի օր դրա միջոցով բոլոր հայերն իրավունք եւ հնարավորություն կունենան ոչ միայն իրենց նպաստը բերելու մայր պետությանը «de facto», այլեւ նրա կողմից ունենալու իրավական պաշտպանվածություն: Այս հանգամանքը խնդրին հողորդում է բարոյական երանգավորում. յուրաքանչյուր հայ, եթե ինչ-որ իմաստով օգտակար է դառնում պետությանը, չպետք է զրկվի իրավական դաշտում դրսեւորվելու հնարավորությունից, այլ ընդհակառակը՝ պետք է անել հնարավորը՝ նրա իրավունքները ՀՀ քաղաքացու իրավունքներին հավասարեցնելու համար:

Աշխարհի տարբեր ժողովուրդներ, որոնք ունեն մայր պետություն եւ սփյուռք, այդ սփյուռքը դեպի հայրենիք ուղղորդելու եւ մայր պետության հետ կապերի սերտացման հարցերին անդրադարձել եւ անդրադառնում են ինտենսիվորեն<sup>2</sup>: Այսպես՝ 1948թ. Իսրայել պետության ստեղծումից կարճ ժամանակ անց՝ 1950թ. հուլիսի 5-ին, Իսրայելի խորհրդարանը (Զնեսեթ) միաձայն ընդունեց «Վերադարձի մասին» օրենքը, որը իրավունք էր տալիս Իսրայելի սահմաններից դուրս բնակվող հրեաներին, վերադառնալով հայրենիք, ստանալ Իսրայելի քաղաքացիություն: 1970թ. ընդունվեցին «Վերադարձի մասին» օրենքի փոփոխությունները, որոնք իրավունք էին ընձեռում հայրենադարձվել նաև նրանց, ովքեր ազգակցական կապեր ունեն հրեաների հետ՝ հրեայի ամուսին, հրեայի երեխաներ, բռներ<sup>3</sup>:

Վերջին շրջանում նախկին խորհրդային հանրապետություններից «Երկքաղաքացիության մասին» օրենք ընդունեց Ղրղզստանը (2007թ. մարտի 27): Նոր օրենքով պարզեցված կարգով կարող է ղրղզական քաղաքացիություն շնորհվել հանրապետության նախկին բնակիչներին: Արտասահմանցիները կարող են Ղրղզստանի

<sup>1</sup> ՀՀ Սահմանադրություն, փոփոխություններով, 27 նոյեմբերի, 2005թ.:

<sup>2</sup> Աշխարհի պետություններից Կանադան, Իսրայելը, Գերմանիան, Իռլանդիան, Եմենը, Ալբանիան, Լիխտենշտեյնը ծանաչում են երկքաղաքացիությունը: Տես Թորոպյան Թ., Երկքաղաքացիության ինստիտուտը եւ դրան առնչվող հիմնահարցերը, «Օրենք եւ իրականություն», թիվ 15-17, սեպտեմբեր-հոկտեմբեր, Երեւան, 2004, էջ 13:

<sup>3</sup> Կարեն Վերանյան, Իսրայել. պետություն-սփյուռք հարաբերությունների շուրջ, 28 Հուլիսի 2005, «Հանրապետական», թիվ 7 (27), Երեւան, 2005:

քաղաքացիությունն ստանալ միայն երկրի տարածքում 7 տարի պարելուց հետո: Հետաքրքրական է այն դրույթը, որ Ղրղզստանի քաղաքացիությունն չի շնորհվելու սահմանամերձ պետությունների բնակիչներին<sup>4</sup>: Իսկ ահա Ուկրաինայում 2008թ. վերջին նախագահ Յուշչենկոյի հակառուսական ակտիվությունը դրսևորվել է Ուկրաինայի տարածքում բնակվող Ռուսաստանի քաղաքացիների դեմ պայքարելու ձևով: Նա անընդունելի է համարել այն փաստը, որ Ուկրաինայի որոշ քաղաքացիներ միաժամանակ ունեն և՛ ուկրաինական, և՛ ռուսական քաղաքացիություն: Ուկրաինացիների երկքաղաքացիությունը նա համարում էր միջազգային իրավունքի նորմերի խախտում և մտադիր էր վերացնել երկքաղաքացիության մասին օրենքը երկրում<sup>5</sup>:

Վերադառնալով ՀՀ-ին՝ նշենք, որ երկքաղաքացիության ինստիտուտի ստեղծման մասին ՀՀ հասարակական-քաղաքական ամենատարբեր օղակներում հաճախակի են եղել քննարկումները՝ դեռ 1990-ական թվականներից ի վեր: Հարցի առթիվ հնչել են ամենատարբեր ու խիստ հակասական կարծիքներ: Հարցն այնքան էլ չուսումնասիրած եւ իրենց նեղկուսակցական շահերում պարփակված շատ քաղաքական գործիչներ բազմիցս անխնա քննադատել են այդ ինստիտուտի կայացումը ՀՀ-ում, եղել են նաեւ առարկայական պատճառաբանումներ: 1998թ. այդպիսի լայնածավալ քննարկումների է տարաբնույթ տեսակետների մի ծաղկաքաղ է հրատարակել «ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ» լրատվական գործակալությունը: *«Կարծում եմ երկքաղաքացիության ինստիտուտը եւ իրավական, եւ - միջպետական հարաբերությունների տեսանկյունից հավանաբար լրացուցիչ ուսումնասիրությունների կարիք ունի: Եթե մենք նույնիսկ Սահմանադրությամբ ամրագրենք երկքաղաքացիության ինստիտուտը, դրանից դեռեւս չի հետեւում, որ բոլոր սփյուռքահայերը ավտոմատ կերպով կդառնան ՀՀ քաղաքացիներ, որովհետեւ երկքաղաքացիության ինստիտուտը, այդուհանդերձ, գործնականում կիրառվում է միջպետական համաձայնագրերի շրջանակներում:*

*Ես ենթադրում եմ, որ նման դեպքերում մենք կունենանք լուրջ պրոբլեմներ: Շատ երկրներ չեն գնա այդ ճանապարհով, որովհետեւ նրանք մերժում են երկքաղաքացիությունը, որոշ երկրներ կա-*

---

<sup>4</sup> Ղրղզստանի խորհրդարանն ընդունեց երկքաղաքացիության մասին օրենքը, 27.03.2007, <http://www.armenialiberty.org/content/article/1587441.html>: Նշենք, որ անկախ Ղրղզստանի Հանրապետության «Քաղաքացիության մասին» առաջին օրենքն ընդունվել է 1993թ. դեկտեմբերի 18-ին, որով արգելվում էր երկքաղաքացիությունը: Տե՛ս Թորոսյան Թ., Երկքաղաքացիության ինստիտուտը եւ դրան առնչվող հիմնահարցերը, էջ 14:

<sup>5</sup> Նշենք, որ Ուկրաինայի «Քաղաքացիության մասին» 1991թ. հոկտեմբերի 8-ի օրենքը չէր թույլատրում երկքաղաքացիությունը:

րող են եւ գնալ, բայց այդ դեպքում մենք կունենանք քաղաքացիական առումով տարբեր կարգավիճակում գտնվող սփյուռք, սփյուռքահայեր կամ գաղթօջախներ:

Եթե իրոք հնարավոր լիներ երկքաղաքացիությունը օգտագործել ի նպաստ, ի բարօրություն, առանց լրացուցիչ անհաղթահարելի պրոբլեմներ ստեղծելու, իհարկե, երկու կարծիք լինել չէր կարող», իր ժամանակին նշել է ՀՀ Ազգային ժողովի նախագահ Խոսրով Հարությունյանը<sup>6</sup>:

Ներկայում հայ հասարակական-քաղաքական շրջանակներում շատ է խոսվում ՀՀ-ում երկքաղաքացիության մասին օրենքի ընդունման շուրջ: Սակայն ՀՀ-ի 2005թ. փոփոխված Սահմանադրության միջոցով երկքաղաքացիության ինստիտուտի ստեղծման հնարավորության ընձեռումից ի վեր մինչ օրս հրապարակի վրա չկա երկքաղաքացիության մասին օրենք, որը կլրացներ մի շարք բացեր եւ առավել դյուրին կդարձներ սփյուռքահայերի մայր պետության հետ շփումն իրավական ոլորտում: Ցավալի է, որ այս թյուրիմացությունը անխնայորեն տարածվում է ոչ միայն լրագրողների ու հասարակական շրջանակների, այլ նաեւ՝ պետական ամենաբարձրաստիճան չինովնիկների, այդ թվում նաեւ՝ Աժ-ի մի շարք պատգամավորների կողմից: Եթե հատկապես վերջիններս իրենք անգամ հանգիստ հայտարարում են «Երկքաղաքացիության մասին օրենքի» գոյության մասին եւ տեղյակ չեն, որ այդչափ կարելու օրենքի ստեղծումը հենց իրենց գործն է, ապա զարմանալի չէ մնացյալ շրջանակների ապատեղեկացվածությունը:

Ներկայում երկքաղաքացիության ինստիտուտի ստեղծված լինելն իրականում դրսեւորվում է ոչ թե նոր օրենքների ստեղծման, այլ՝ ՀՀ գործող մի շարք օրենքների փոփոխությունների եւ լրացումների, կառավարական մի շարք որոշումների տեսքով, որոնք այս կամ այն կերպ կարգավորում են նշված ոլորտի իրավահարաբերությունները: Ստորեւ ներկայացնում ենք այդ ամենի մասին համալիր տեղեկություններ:

2007 թ. փետրվարի 26-ին ընդունված «**«ՀՀ քաղաքացիության մասին» ՀՀ-ի օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին»** ՀՀ օրենքը<sup>7</sup>, որով «**Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին»** (6 նոյեմբերի 1995 թ.,

---

<sup>6</sup> Սոնա Մաշուրյան, Երկքաղաքացիություն՝ կո՞ղմ, թե՞ դեմ. խորհում են խորհրդարանականները, [ 13:40 - 30.09.1998 ], ԵՐԵՎԱՆ, 30 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ, <http://www.npc.nt.am/news.php?p=1&c=a&t=0&r=0&year=1998&month=09&day=30&shownews=21089&LangID=4>:

<sup>7</sup> Տե՛ս ՀՀ օրենքը «**«ՀՀ քաղաքացիության մասին»** ՀՀ օրենքում լրացումներ եւ փոփոխություններ եւ կատարելու մասին», ընդունվել է 26.02.2007, ստորագրվել է 06.03.2007, համար ՀՕ-75-Ն, ուժի մեջ է մտել 24.03.2007:

ՀՕ-16) ՀՀ օրենքում<sup>8</sup> կատարվեցին մի շարք փոփոխություններ, մասնավորաբար ուժը կորցրած ճանաչվեց «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» (6 նոյեմբերի 1995 թ., ՀՕ-16) ՀՀ օրենքի առաջին հոդվածի երրորդ մասը: Այն հետեւյալն էր. **«Հայաստանի Հանրապետության քաղաքացին միաժամանակ չի կարող լինել այլ պետության քաղաքացի»:** Իսկ նույն հոդվածի 6-րդ մասը, նոր խմբագրությամբ լրացվելուց հետո, սահմանում է, որ այլ պետության քաղաքացիություն ընդունելը եւս ինքնին չի հանգեցնում ՀՀ-ի քաղաքացիությունը կորցնելուն: Լրացում եւ փոփոխություններ են կատարվել նաեւ զործող օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասում, 10-րդ հոդվածի 2-րդ կետում, իսկ 13-րդ հոդվածը (ՀՀ քաղաքացիություն ստանալը) ամբողջությամբ շարադրվել է նոր խմբագրությամբ: Օրենքը լրացվել է նաեւ նոր՝ «Հոդված 13.1. Երկ-քաղաքացիություն» հոդվածով:

ՀՀ կառավարության 08.11.2007թ. թիվ 1332-Ն որոշմամբ անհրաժեշտ լրացում եւ փոփոխություններ են կատարվել նաեւ ՀՀ կառավարության 25.12.1998թ. թիվ 821 որոշմամբ հաստատված «ՀՀ-ում անձնագրային համակարգի կանոնադրության» մեջ. 7-րդ կետից հետո, այն լրացվել է 7.1-ին կետով, հետեւյալ բովանդակությամբ. **«ՀՀ երկքաղաքացու տրվում է ՀՀ քաղաքացու անձնագիր»:**

**«ՀՀ քաղաքացիության մասին»** ՀՀ օրենքում կատարված փոփոխությունների ու լրացումների արդյունքում համապատասխանաբար փոփոխություններ են կատարվել մի շարք այլ օրենքներում եւս, հատկապես **«Զինապարտության մասին»** ՀՀ օրենքում եւ **ՀՀ ընտրական օրենսգրքում:**

ՀՀ երկքաղաքացիների զինապարտության հետ կապված իրավահարաբերությունները կարգավորելու նպատակով **«Զինապարտության մասին»** ՀՀ օրենքում նախատեսվել է առանձին հոդված՝ **«3.1. Երկքաղաքացիների զինապարտությունը»:**

**«1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ընդունած այլ պետության քաղաքացին ազատվում է պարտադիր զինվորական ծառայությունից, եթե մինչև Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ընդունելը ոչ պակաս, քան 12 ամիս ծառայել է այլ պետության զինված ուժերում կամ այլ պետությունում ոչ պակաս, քան 18 ամիս անցել է այլ ընտրանքային զինվորական ծառայություն, բացառությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած պետությունների:**

---

<sup>8</sup> Տե՛ս ՀՀ օրենքը «ՀՀ քաղաքացիության մասին», ընդունվել է 06.11.1995, ստորագրվել է 06.11.1995, համար ՀՕ-16, ուժի մեջ է մտել 28.11.1995:

**2. Այլ պետության քաղաքացիություն ընդունած Հայաստանի Հանրապետության քաղաքացին չի ազատվում պարտադիր զինվորական ծառայությունից, անկախ այն հանգամանքից՝ ծառայել է նա այլ պետությունում, թե ոչ:**

**3. Երկքաղաքացին չի ազատվում զորահավաքից և վարժական հավաքից»<sup>9</sup>:**

Քաղաքացիների ընտրական իրավունքը սահմանող ՀՀ ընտրական օրենսգրքում եւս առկա են փոփոխություններ, որոնք ՀՀ-ում երկքաղաքացիության ինստիտուտի ներդրման հետեւանք են<sup>10</sup>.

« Հոդված 2. Քաղաքացիների ընտրական իրավունքը

**1. Հայաստանի Հանրապետությունում ընտրելու իրավունք ունեն 18 տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, իսկ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ՝ նաև համապատասխան համայնքում առնվազն մեկ տարվա հաշվառում ունեցող և փաստացի բնակվող յուրաքանչյուր ոք:**

Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ սույն օրենսգրքով Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար նախատեսված իրավունքներն ու պարտականությունները տարածվում են նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող՝ ընտրական իրավունքով օժտված անձանց վրա:

**2. (2-րդ կետն ուժը կորցրել է 26.02.07 ՀՕ-79-Ն)**

7. Հայաստանի Հանրապետության և միաժամանակ այլ պետության քաղաքացի հանդիսացող և Հայաստանի Հանրապետությունում հաշվառում ունեցող քաղաքացիները ընտրությունների ժամանակ քվեարկություններին մասնակցում են սույն օրենսգրքով սահմանված կարգով:

Հայաստանի Հանրապետության և միաժամանակ այլ պետության քաղաքացի հանդիսացող և Հայաստանի Հանրապետությունում հաշվառում չունեցող քաղաքացիները ընտրությունների ժամանակ քվեարկություններին չեն մասնակցում:

**(2-րդ հոդվածը լրաց. 19.03.99 ՀՕ-286, 13.10.99 ՀՕ-2, 05.04.00 ՀՕ-47, խմբ. 03.07.02 ՀՕ-406-Ն, լրաց., փոփ., խմբ. 22.12.06 ՀՕ-1-Ն, լրաց., փոփ. 26.02.07 ՀՕ-79-Ն)»<sup>11</sup>:**

<sup>9</sup> Տե՛ս ՀՀ Օրենքը «Զինապարտության մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին, ընդունվել է 26.02.2007, ստորագրվել է 06.03.2007, համար ՀՕ-76-Ն, ուժի մեջ է մտել 24.03.2007:

<sup>10</sup> Որոշտեղեկություններ վերցված են նաեւ ՀՀ Ոստիկանության Հասարակայնության հետ կապի եւ լրատվության վարչության տված որոշ պարզաբանումներից, 02-02-2008, [http://hhpress.am/?sub=hodv&hodv=20080202\\_7&flag=am](http://hhpress.am/?sub=hodv&hodv=20080202_7&flag=am):

ԴՅ 2005թ. Սահմանադրության ընդունումից ի վեր եւ վերջինիս հիման վրա ԴՅ Կառավարությունը այս ժամանակահատվածի իր գործունեության ծրագրերի՝ սփյուռքին նվիրված բաժնններուն ունի այս հարաբերությունների մասով հատուկ կետեր: Այսպես՝ **«ԴՅ Կառավարության ծրագրի մասին»** ԴՅ Կառավարության 2007 թ. հունիսի 21-ի N 695-Ա<sup>12</sup> եւ ԴՅ ԱԺ՝ **«ԴՅ Կառավարության ծրագրին հավանություն տալու մասին»** 26 հունիսի 2007 թ. Ն-013-4<sup>13</sup> որոշումների հավելվածի **«Սփյուռք»** բաժնուն նշվում է հետեւյալը. **«... գործնական քայլեր կիրականացվեն Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը ամրագրված երկ-բաղաբացիության ինստիտուտի ներդրման ուղղությամբ:**

**Այդ նպատակով կառավարությունը կնախաձեռնի հայրենադարձությանը նպաստող օրենսդրության մշակում, կգործադրվի Սփյուռքից Հայաստան ներգաղթի համալիր ծրագիր:**

**Կառավարությունն իր կարևորագույն խնդիրն է համարում արտերկրում հայության շահերի պաշտպանությունը»:**

Նույնկերպ՝ ԴՅ Կառավարության 2008 թ. ապրիլի 28-ի **«ԴՅ - Կառավարության ծրագրի մասին»** N 380-Ա եւ ԴՅ ԱԺ 2008 թ. ապրիլի 30-ի՝ **«ԴՅ Կառավարության ծրագրին հավանություն տալու մասին»** Ն-074-4<sup>14</sup> Հավելվածի «Սփյուռք» բաժնուն նշվում է. **«Կառավարությունը կնախաձեռնի հայրենադարձությանը նպաստող օրենսդրության մշակում, կգործադրվի Սփյուռքից Հայաստան ներգաղթի համալիր ծրագիր:**

**Կառավարությունն իր կարևորագույն խնդիրն է համարում արտերկրում հայության շահերի պաշտպանությունը»:**

Ինչպես տեսնում ենք, ԴՅ Կառավարության 2008թ. ծրագրում հանված է «երկբաղաբացիության ինստիտուտի ներդրման» մասին պարբերությունը՝ ելնելով այն հանգամանքից, որ նախորդ՝ 2007թ. ընթացքում այս ուղղությամբ իրականացվել են որոշակի քայլեր:

Երկբաղաբացիության ոլորտի կարգավորման մեջ այս կան այն կերպ իր դերակատարությունն ունի նաեւ 2008թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին ստեղծված **Սփյուռքի նախարարություն-**

---

<sup>11</sup> Տե՛ս՝ ԴՅ Ընտրական օրենսգիրք, ընդունվել է՝ 05.02.1999, ստորագրվել է՝ 17.02.1999, համար՝ ԳՕ-284, ուժի մեջ է մտել՝ 28.02.1999:

<sup>12</sup> Տե՛ս՝ ԴՅ Կառավարության Որոշումը «ԴՅ Կառավարության ծրագրի մասին», ընդունվել է՝ 21.06.2007, ստորագրվել է՝ 25.06.2007, համար N 695-Ա, ուժի մեջ է մտել՝ 22.06.2007:

<sup>13</sup> ԴՅ Ազգային ժողովի որոշումը՝ «ԴՅ Կառավարության ծրագրին հավանություն տալու մասին», ընդունվել է՝ 26.06.2007, ստորագրվել է՝ 26.06.2007, համար Ն-013-4, ուժի մեջ է մտել՝ 14.07.2007:

<sup>14</sup> ԴՅ Ազգային ժողովի որոշումը՝ «ԴՅ Կառավարության ծրագրին հավանություն տալու մասին», ընդունվել է՝ 30.04.2008, ստորագրվել է՝ 30.04.2008, համար Ն-074-4, ուժի մեջ է մտել՝ 24.05.2008:

նը<sup>15</sup>: Կերջինիս Կանոնադրության «Նախարարության գործառույթները» բաժնի 15-րդ կետում նշված է. «*Հայաստանի Հանրապետության օրենսդրության հիման վրա սփյուռքահայերին Հայաստանի Հանրապետության քաղաքացիության ձեռքբերման հարցում աջակցելը*»:

Այսփոխվ՝ քայլ առ քայլ կատարելով օրենսդրական, իրավական եւ այլ փոփոխություններ, ՀՀ-ում գնալով ամրապնդվում է երկքաղաքացիության ինստիտուտը:

### **Երկքաղաքացիության ինստիտուտի ամրապնդման ազդեցությունները Ջավախքի եւ ջավախահայության վրա:**

Ելնելով այն հանգամանքից, որ երկքաղաքացիության ինստիտուտն անմիջական առնչություններ ունի այլ պետությունների հետ, ՀՀ պետական-քաղաքական այրերը այս առթիվ բազմիցս հայտնել են նտավախություններ: Այս ինստիտուտի ներդանը դեմ հանդես եկողներից շատերը իրենց հիմնավորումները արել են՝ ելնելով հենց այն հանգամանքից, որ այն խաթարում է շատ երկրների հետ ՀՀ-ի հարաբերությունները: Այս տրամաբանությունը պարզ է. շատ երկրներ, որոնք չունեն այս ինստիտուտը, թույլ չեն տալու իրենց քաղաքացիներին ունենալու միաժամանակ նաեւ այլ երկրի (տվյալ դեպքում՝ ՀՀ-ի) քաղաքացիություն: Այստեղ էլ մշտապես խոսք է գնացել կնքվելիք այն միջպետական պայմանագրերի մասին, որոնք այս կամ այն կերպ պետք է կարգավորեն այս հարաբերությունները:

Ըստ հայազգի վերլուծաբանների՝ երկքաղաքացության վերաբերյալ աշխարհում, իրենց տարատեսակներով հանդերձ, հիմնականում կան երեք սկզբունքներ.

- ա. Երկքաղաքացիության չճանաչում:**
- բ. Երկքաղաքացիության ճանաչում:**
- գ. Հանդուրժողականության սկզբունք<sup>16</sup>:**

---

<sup>15</sup> Տես ՀՀ Կառավարության որոշումը «ՀՀ Սփյուռքի նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, ՀՀ Սփյուռքի նախարարության Կանոնադրությունը եւ աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին», ընդունվել է 11.09.2008, ստորագրվել է 24.09.2008, համար N 1049-Ն, ուժի մեջ է մտել 01.10.2008:

<sup>16</sup> Թորոսյան Թ., Երկքաղաքացիության իրավական հիմնախնդիրները, «21-րդ դար», թիվ 2 (16), 2007թ.:

Հայաստանի Հանրապետությունը, փաստորեն, Սահմանադրության 2005թ. փոփոխություններից հետո դուրս եկավ մարդկանց երկքաղաքացիությունը չճանաչող երկրների շարքից, եւ, քանի որ դեռեւս ոչ մի երկրի հետ չունի տվյալ ոլորտը կարգավորող կնքած պայմանագրեր, ինքնաբերաբար դասվում է «հանդուրժողականության սկզբունքով» առաջնորդվող երկրների շարքը, երբ **«քաղաքացիության մեջ ընդունող պետությունը հաշվի չի առնում տվյալ անձի՝ այլ պետության քաղաքացի լինելու հանգամանքը և չի պահանջում, որ տվյալ անձը պարտադիր կերպով դուրս գա իր երկրի քաղաքացիությունից: Միաժամանակ, այս սկզբունքն ընդունող երկրները կամ չեն պահանջում, որ իրենց քաղաքացիներն այլ երկրի քաղաքացիություն ստանալու դեպքում դուրս գան քաղաքացիությունից, կամ հանդուրժում են, որ իրենց երկրի քաղաքացին, անկախ իր կամքից, ստանա այլ երկրի քաղաքացիություն»**<sup>17</sup>:

Այսպիսով՝ ՀՀ-ն այսօր օտարերկրյա ծագումով հայ եւ ոչ հայ քաղաքացիներին տալիս է քաղաքացիություն՝ առանց այն երկրի հետ պայմանագրերի առկայության, որի քաղաքացին է այդ անձը:

Հարեւան Վրաստանի կազմում գտնվող հայկական Սամցխե-Ջավախք-Օալկա (այսուհետեւ՝ Ջավախք) տարածաշրջանը, լինելով խնդրահարույց տարածաշրջան, ՀՀ-ում երկքաղաքացիության ինստիտուտի ներդրումից կարճ ժամանակ անց հայտվեց հետաքրքրական գործընթացների թատերաբեմում՝ գրավելով ինչպես հայ, այնպես էլ վրացիների ու օտարերկրացիների ուշադրությունը: Կենսականորեն կապված լինելով ՌԴ-ի հետ՝ ՌԴ-Վրաստան պատերազմական հարաբերությունների պայմաններում ջավախահայությունը կանգնեց պայթյունավտանգ իրավիճակի առաջ: Ջավախահայությունն սկսեց մտնել Վրաստանի քաղաքացիությունից իրա-

---

<sup>17</sup> Նույն տեղում: Այստեղ ՌԴ-ն ներկայացվում է երկքաղաքացիությունը հանդուրժող երկիր: Նշենք, որ Ռուսաստանի գործող օրենսդրությամբ, Ռուսաստանի Դաշնության «Քաղաքացիության մասին» օրենքում 2002թ. կատարված փոփոխությունների համաձայն, օտարերկրյա քաղաքացին, Ռուսաստանի քաղաքացիություն ստանալու մասին դիմում ներկայացնելիս, պարտավոր է հրաժարվել առաջին քաղաքացիությունից: Տե՛ս «Հայաստանի տնտեսության առաջընթացը երկրից բնակչության արտահոսքը նվազեցնելու խթան է» (Հայաստանում Ռուսաստանի Դաշնային միգրացիոն ծառայության ներկայացուցչության ղեկավարի տեղակալ Ալեքսանդր Կանդևի բացառիկ հարցազրույցը //Նովոստի-Արմենիա, 09 հուլիս, 2008, 15:53, <http://www.hayinfo.am/am/interview/32176.html>): Ավելացնենք, որ ՌԴ «Քաղաքացիության մասին» օրենքն ընդունվել է 1991թ. նոյեմբերի 28-ին, որով չնայած ՌԴ քաղաքացուն իրավունք էր վերապահվում ընդունել այլ պետությունների քաղաքացիություն, որոնց հետ պետությունն ուներ համապատասխան պայմանագրեր, սակայն այլ պետությունների քաղաքացիության առկայությունը ՌԴ քաղաքացիներին չէր ազատում ՌԴ-ում ունեցած իրենց քաղաքացիական պարտավորություններից (հոդված 15):

ժարվելու եւ ԶԶ քաղաքացիության դիմումներ ներկայացնելու գործընթացի մեջ: Սկսեցին ինչպէս Վրաստանի Արդարադատության նախարարություն, այնպէս էլ՝ ԶԶ-ում Վրաստանի դեսպանատուն ներկայանալ հարյուրավոր ջավախահայեր, որոնք, Վրաստանի քաղաքացիությունից դուրս գալու մասին Մ. Սահակաշվիլու հրամանագիրն ստանալուն պէս ներկայանում էին ԶԶ Ոստիկանության Անձնագրային եւ վիզաների վարչություն:

Շուտով, սակայն, վերջիններիս շրջանում կայծակնային արագությամբ տարածում գտավ ԶԶ-ում երկքաղաքացիության ճանապարհով հայկական անձնագիր ստանալու հնարավորության մասին լուրը: Շատ նարդիկ ափսոսացին անգամ, որ իրենք արդեն զրկվել են Վրաստանի քաղաքացիությունից՝ կանխազգալով, որ Զավախքում շուտով իրենք այնքան էլ ցանկալի նարդիկ չեն լինելու: Երկքաղաքացիության միջոցով հայկական անձնագիր ստանալու գործընթացը կանխեց ջավախահայության շրջանում Վրաստանի քաղաքացիությունից շուտափույթ հրաժարվելու գործընթացը, որը նախկինում հանդիսանում էր պարտադիր նախապայման՝ փոխարենը ստեղծելով հեռահար վտանգներ, որոնց կանդրադառնանք ստորեւ:

Վերելում արդեն խոսեցինք երկքաղաքացիության տարատեսակների վերաբերյալ աշխարհի երկրների դասակարգման մասին: Վրաստանը համարվում է երկքաղաքացիության ինստիտուտ չունեցող երկիր եւ այդպիսով դասվում «երկքաղաքացիության չճանաչման» սկզբունքով առաջնորդվող երկիր: Վրաստանի Սահմանադրության երկրորդ գլխի 12-րդ հոդվածում նշվում է հետեւյալը.

**«1. Վրաստանի քաղաքացիություն տրվում է ծննդյան եւ հպատակագրման ճանապարհով:**

**2. Վրաստանի քաղաքացին, բացառությամբ սույն կետով կարգավորվող դեպքերի, չի կարող միաժամանակ հանդիսանալ այլ երկրի քաղաքացի: Վրաստանի նախագահը օտարերկրացուն կարող է տալ քաղաքացիություն, երբ վերջինս ունի Վրաստանին մատուցած հատուկ ծառայություններ կամ էլ վերջինիս քաղաքացիության շնորհումը բխում է պետական հետաքրքրություններից:**

**3. Վրաստանի քաղաքացիության շնորհումը եւ կասեցումը որոշվում է օրգանական օրենքներով (օրենք N 3272, 2004թ. փետրվարի 6)»<sup>18</sup>:**

---

<sup>18</sup> Վրաստանի Սահմանադրություն, ընդունված 1995թ. օգոստոսի 24-ին, 2005թ. հոկտեմբերի 25-ի փոփոխված (վրացերեն): Տե՛ս նաեւ՝ Закон Республики Грузия о гражданстве Грузии, Тбилиси, 1993:

Ելնելով այն հանգամանքից, որ ՀՀ-ի եւ Վրաստանի միջեւ գոյություն չունի միջպետական պայմանագիր՝ երկքաղաքացիության բնագավառում, իրավական տեսանկյունից վերոբերյալի մասին եզրակացությունը հետեւյալն է. ջավախահայերը, ստանալով ՀՀ քաղաքացիություն, Վրաստանի սահմաններից դուրս եւ ոչ իրենց մեղքով խախտում են այն երկրի Սահմանադրությունը, որի քաղաքացիներն են հանդիսանում իրենք:

ՀՀ-ի պարագայում, օրինակ, ՀՀ քաղաքացին, այլ պետության քաղաքացիություն ընդունելու կամ ստանալու դեպքում, ՀՀ կառավարության 20.09.2007թ. թիվ 1110-Ն որոշմամբ սահմանված կարգով, պարտավոր է մեկամսյա ժամկետում այդ մասին հայտնել լիազոր մարմնին. ՀՀ-ում ՀՀ ոստիկանության անձնագրային եւ վիզաների վարչություն կամ ոստիկանության տարածքային ստորաբաժանում, իսկ օտարերկրյա պետություններում՝ ՀՀ դիվանագիտական ծառայության մարմիններ:

1995թ. հունվարի 1-ից հետո մինչեւ նշված որոշումն ուժի մեջ մտնելը (պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը) ընկած ժամանակահատվածում, առանց սահմանված կարգի ՀՀ քաղաքացիությունից դուրս եկած եւ այլ պետության քաղաքացիություն ընդունած կամ ստացած անձինք այդ մասին պարտավոր են հայտնել վեցամսյա ժամկետում:

Համաձայն վրաց օրենսգետների հայտարարությունների՝ Վրաստանը, չունենալով երկքաղաքացիության ինստիտուտ, դեռեւս չի կարգավորել այն քաղաքացիների հետ իրավահարաբերությունները, որոնք միաժամանակ ունեն այլ պետությունների քաղաքացիություն: Վրաստանը այդ մարդկանց (մեր պարագայում՝ ջավախահայության) քաղաքացիական կարգավիճակի մասին, բացի հատուկ ներքին ուսումնասիրություններից, չունի բավարար պաշտոնական տեղեկություններ, ուստի միայն վերջիններիս մասին հայտնի դառնալու դեպքում է, որ կիրառվում են միջոցներ, որոնց հետեւանքով տվյալ անձը զրկվում է Վրաստանի քաղաքացիությունից: Բնական է՝ Վրաստանը չի հանդուրժելու ունենալ ՀՀ - քաղաքացիներով բնակեցված Ջավախք տարածաշրջան. շուտով առաջ է գալու այդ քաղաքացիներին իրենց սեփական բնակավայրեր մուտք գործելուն և այնտեղ մնալուն ուղղված օրենսդրական և այլ արգելքների հարուցման գործընթաց, ինչը հղի է պայթյունավտանգ հետևանքներով: Վերջինիս մուտքը Վրաստանի տարածք կարգավորվելու է օտարերկրացիների համար սահմանված հատուկ կարգերի համաձայն:

Հետաքրքրական է, որ ՀՀ-Վրաստան միջպետական պաշտոնական հանդիպումների ժամանակ եւ տարբեր այլ առիթներով

վրացական կողմը, դեռ 1990-ական թվականների վերջերին եւ 2000-ական թվականների սկզբներին, բազմիցս հայկական կողմին է փոխանցել իր մտահոգությունները՝ ՀՀ Սահմանադրության մեջ երկքաղաքացիությունն արգելող դրույթի հնարավոր փոփոխման կապացույթամբ: Այս մտահոգությանն ի պատասխան՝ հայկական կողմը տվել է իր բացատրությունները, որ **«ՀՀ նախագահին առընթեր սահմանադրական փոփոխություններ նախապատրաստող հանձնաժողովը շարունակում է իր աշխատանքները, եւ երկքաղաքացիության մասին դրույթը՝ հնարավոր դեպքում, կգործի միայն այն երկրում, որոնց օրենսդրությունը դա թույլ է տալիս»**<sup>19</sup>:

**«ՀՀ քաղաքացիության մասին»** Հայաստանի Հանրապետության օրենքի՝ երկքաղաքացիությանն առնչվող 13<sup>1</sup> հոդվածով նախատեսվում է հետևյալը<sup>20</sup>. **«Երկքաղաքացի է համարվում այն անձը, որն ունի մեկից ավելի պետությունների քաղաքացիություն:**

**Հայաստանի Հանրապետության երկքաղաքացի է համարվում այն անձը, որը Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից բացի, ունի նաև այլ պետության (երկրների) քաղաքացիություն:**

**Հայաստանի Հանրապետության երկքաղաքացին Հայաստանի Հանրապետության համար ծանաչվում է միայն որպես Հայաստանի Հանրապետության քաղաքացի: Սույն նորմը տարածվում է նաև 1995 թվականի հունվարի մեկից հետո, առանց սահմանված կարգի Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից դուրս գալու, այլ պետության քաղաքացիություն ընդունած կամ ստացած, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից միակողմանի հրաժարված Հայաստանի Հանրապետության քաղաքացիների վրա:**

**Հայաստանի Հանրապետության երկքաղաքացին ունի Հայաստանի Հանրապետության քաղաքացու համար նախատեսված բոլոր իրավունքները և կրում է Հայաստանի Հանրապետության քաղաքացու համար նախատեսված բոլոր պարտականություններն ու պատասխանատվությունը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով կամ օրենքով նախատեսված դեպքերի:**

**Հայաստանի Հանրապետության քաղաքացին այլ պետության քաղաքացիություն ընդունելու կամ ստանալու դեպքում**

---

<sup>19</sup> Տե՛ս՝ Շահնագարյան Ա., Հայ-վրացական հարաբերությունները հետխորհրդային շրջանում (1991-1999թթ.), ատենախոսություն, Երևան, 2002, էջ՝ 171:

<sup>20</sup> Տե՛ս՝ ՀՀ օրենքը «ՀՀ քաղաքացիության մասին», ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին, ընդունվել է 26.02.2007, ստորագրվել է 06.03.2007, համար՝ ՀՕ-75-Ն, ուժի մեջ է մտել 24.03.2007:

*պարտավոր է այդ մասին Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով մեկամսյա ժամկետում հայտնել Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմնին:*

*Սույն հոդվածի պահանջների խախտումն առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն»:*

Ինչպես վերելուն նշեցինք, «հանդուրժողականության սկզբունքով» առաջնորդվող ՀՀ-ն, սակայն, կիրառում է մեկ էական պայման, որ իր երկրի քաղաքացիություն ձեռք բերած անձն իր երկրի տարածքում ճանաչվում է միայն այդ երկրի քաղաքացի: Միաժամանակ՝ «ՀՀ քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ **«Ազգությամբ հայերը Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն են ձեռք բերում պարզեցված կարգով»:** Ջավախահայերը, փաստորեն, ՀՀ - քաղաքացիություն են ստանում սույն նորմով նախատեսված կարգի համաձայն: Իսկ նույն օրենքի 3-րդ հոդվածը հետելյալն է.

**«Հոդված 3 Հայաստանի Հանրապետության քաղաքացին Հայաստանի Հանրապետության քաղաքացի են սույն օրենքին համապատասխան Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերած անձինք:**

**Հայաստանի Հանրապետության քաղաքացիները հավասար են օրենքի առաջ՝ անկախ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերելու հիմքերից, ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից, ունեն Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված բոլոր իրավունքները, ազատությունները և պարտականությունները»:**

Ջավախահայերը, սկզբնական շրջանում երկքաղաքացիությունը համարելով իրենց փրկությունը եւ միամտաբար կարծելով, թե այդ իրենք «ձեռքի հետ» կունենան նաեւ «երջանկություն բերող» ՀՀ անձնագրեր, շուտով կանգնեցին հիասթափման ծանր փաստի առաջ. պարզ դարձավ, որ ՀՀ քաղաքացու անձնագիրը իրենց համար որքան երջանկություն, այնքան էլ խնդիրներ է առաջացնում, եւ այլեւս խիստ մշուշոտ է դառնում Վրաստանի տարածքում նրաց գոյությունը: Ջավախահայերն անգամ չեն էլ նկատել, որ ՀՀ քաղաքացիության գործերի հանձնման ժամանակ ՀՀ Ոստիկանության Անձնագրային եւ վիզաների վարչության պետին ուղղված դիմումի ձեւի մեջ լրացվում է. **«Տեղեկացված եմ, որ (տվյալ դեպքում՝ Վրաստանում) չի գործում երկքաղաքացիության մասին օրենքը»:** Դրանով ՀՀ-ն, փաստորեն, իրեն «մեղավոր չի ճանաչում», երբ ՀՀ - քաղաքացիություն ունենալու պատճառով տվյալ անձնավորության

եւ նրա մյուս քաղաքացիության երկրի միջեւ ծագեն խնդիրներ, եւ իրեն լիովին ազատում է պատասխանատվությունից:

ՀՀ քաղաքագետների միության նախագահ Հ. Հովհաննիսյանը այդ առթիվ բարձրաձայնել էր. «*Հայաստանում երկքաղաքացիության մասին օրենքի ընդունումը մահապատիժ է դարձել ջապախահայերի համար, քանի որ Ջավախքից հայերը զանգվածաբար գալիս են այստեղ, քաղաքացիություն են ստանում, որից հետո նրանց հանում են Վրաստանում ունեցած գրանցումից: ...Եթե գրանցումից հանում են, հաջորդ քայլը լինելու է այն, որ ըստ նոր ընդունվող օրենքի՝ կզրկեն նաև քաղաքացիությունից*»<sup>21</sup>:

ՀՀ Ոստիկանության Անձնագրային և վիզաների վարչության պետ Նորայր Մուրադխանյանի՝ 2008թ. դեկտեմբերի 23-ին հաղորդած տվյալների համաձայն էթե անցյալ 11 տարիների ընթացքում ՀՀ քաղաքացիություն է ստացել 1735 անձ, ապա միայն 2008թ. ընթացքում ՀՀ քաղաքացիություն է ստացել 1309 մարդ: 1249 անձ ՀՀ քաղաքացիություն ստացել են որպես երկրորդ քաղաքացիություն, իսկ 60-ը մինչ այդ եղել են առանց որեւէ քաղաքացիության: Նույն 2008թ. ընթացքում ՀՀ քաղաքացիությունից հրաժարվել է 312 անձ<sup>22</sup>:

Նշենք, որ երկրորդ քաղաքացիություն ստացածների մեծամասնությունը՝ 804 մարդ, հանդիսացել է Վրաստանի քաղաքացի: Կոնկրետ տվյալներ չկան, թե Վրաստանի որ շրջանից են վերջիններս, սակայն միանգամայն պարզ է, որ, եթե ոչ ամբողջությամբ, ապա մեծամասնությունը ջապախահայեր են:

Այս ամենին ի հավելումն՝ նշենք, որ Վրաստանը, չունենալով երկքաղաքացիության ինստիտուտը, իր՝ Եվրոպայի խորհրդին անդամակցության 10 տարիների ընթացքում դեռեւս չի վավերացրել «**Քաղաքացիության մասին եվրոպական կոնվենցիան**»<sup>23</sup>, որով կարտավորվեր, միջազգային չափորոշիչներին համապատասխան, կարգավորել իր երկրի տարածքում բնակվող ու նաեւ այլ երկրի քաղաքացիություն ունեցող անձանց հետ իրավահարաբերությունները<sup>24</sup>:

---

<sup>21</sup> Երկքաղաքացիության մասին օրենքը մահապատիժ է դարձել ջապախահայերի համար, 14:17 19/02/2009, <http://www.panorama.am/am/politics/2009/02/19/hovhannisyan/>:

<sup>22</sup> ՀՀ քաղաքացիներն ավելանում են [23 դեկտեմբերի, 2008 | 16:57 ], <http://hetq.am/am/society/qaghaqaci/>:

<sup>23</sup> Նշենք, որ Եվրոպայի խորհրդի հայաստանյան կայքէջում [http://www.coe.am/page.php?page\\_id=49](http://www.coe.am/page.php?page_id=49) առկա բոլոր կոնվենցիաների ցանկում, որպես «Քաղաքացիության մասին եվրոպական կոնվենցիա»-ի թարգմանություն, նշված է «European Convention on Nationality» անգլերեն անվանումը:

<sup>24</sup> Տե՛ս Европейская конвенция о гражданстве, (Страсбург, 6 ноября 1997 года).

Ջավախահայ գործիչների կողմից եւս վերջին շրջանում հնչեց-վել են բազմաթիվ նտահոգություններ, որոնցով փորձեր են արվել ԶԳ-ի պետական մարմինների հետ համատեղ գտնել Ջավախքի հայաթափումը կանխելու ճանապարհներ: Վերջիններիս ջանքերով անգամ փորձեր են արվել ԶԳ քաղաքացիություն ստացած ջավախահայերին «թաքցնել» Վրաստանից<sup>25</sup>: Սակայն այս ամենը լոկ առանձին նվիրյալների անհանդուրժողական պահվածքի արգասիք են: Ջավախքի նկատմամբ պետական հայեցակարգի բացակայու-թյունն ամեն ոլորտում եւ ամեն առիթով այս տարածաշրջանը կանգ-նեցնում է հերթական ծանր մարտահրավերի առաջ:

Վրաստանն այս հիմքի վրա կարող է Ջավախքում հեշտութ-յամբ անցկացնել մի լուրջ ուսումնասիրություն, եւ 2009թ. Վրաս-տանում անցկացվող մարդահամարը կարող է անակնկալ մատու-ցել բոլորին ջավախահայության թվաքանակը (Սամցխե-Ջավախքի 6 շրջանները, ներառյալ Ծալկայի շրջանը) 124.198-ի փոխարեն (2002թ.) ցույց տալով շուրջ 80-90 հազարի հասնող հայության թվապատկեր: Այնքան, որքան վերջին շրջանում կազմում էր միայն Ախալքալաքի շրջանի հայությունը (շուրջ 74.000): Ջավախահա-յությունն իր հսկա տարածաշրջանում կարող է ամիսներ անց տար-բեր ճանապարհներով վերածվել մի փոքր համայնքի: Ահա որտեղ է ողբերգությունը:

Իրականում ջավախահայությանը ԶԳ քաղաքացիություն ստա-նալու հնարավորությունից զրկելը նույնպես հղի է աղետալի հետե-լանքներով եւ զանգվածային հուզումների ալիքի հեռանկարով: Անհնար է մարդուն արհեստականորեն պահել իր տանը, երբ վեր-ջինս այնտեղ չունի հոգեւոր անվտանգության եւ սոցիալական ա-պահովության երաշխիքներ: Միակ ելքը Ջավախքն ուժեղացնելու մեջ է: Պետք է ոչ թե ջավախահայերին ԶԳ անձնագրեր տալով խթանել վերջիններիս շրջանում դեպի ՌԴ արտագաղթի տեմպերը՝ այդպիսով վտանգելով նաեւ տունդարձի իրավական ուղիները, այլ՝ ստեղծել պայմաններ, որ հայությունը զարգանա եւ ուժեղանա այս տարածաշրջանում:

Ի հավելումն նշենք, որ Մ. Սահակաշվիլու վերջին ս/թ հունիսի 24-25-ը ԶԳ կատարած այցի ընթացքում ձեռք բերված պայմանա-

---

<sup>25</sup> Եթե, օրինակ, նախկինում սովորականի պես բոլորից պահանջվում էր քաղաքացիության դիմումի և անհրաժեշտ փաստաթղթերի հետ ներկայացնել նաեւ տեղեկանք դատվածության մասին այն երկրից, որտեղ վերջին 10 տարիների ըն-թացքում մշտապես կամ առավելաբար բնակվել է տվյալ անձը, ապա վերջին շրջա-նում Վրաստանի քաղաքացիներից այլեւս չի պահանջվում այն: ԶԳ քաղաքա-ցիություն ստացած ջավախահայերի անուններն անգամ չեն ներառում ԶԳ Նախա-գահի քաղաքացիություն շնորհելու մասին հրամանագրերում եւ համապատասխան կայքէջերում:

վորվածությունների արդյունքում ՀՀ Ոստիկանության Անձնագրային եւ վիզաների վարչությունում ս/թ հուլիսի 10-ից ժամանակավորապես դադարեցված են Վրաստանի քաղաքացիների, ինչպես նաեւ Վրաստանի քաղաքացիությունից դուրս եկած անձանց՝ ՀՀ - քաղաքացիություն ստանալու մասին դիմում-հայտերի ընդունումը: Հասկանալի է, որ վրացական կողմը այդ «հաջողությունը» գրանցել է՝ ՀՀ-ի դեմ որպես սուր ճոճելով իր աշխարհագրական հարմար դիրքը:

Իսկ ՀՀ նախագահի վերջին օրերին տրված հրամանագրով ՀՀ քաղաքացիություն ստացած անձանց մեծամասնությունը կրկին Վրաստանի քաղաքացիներ են (հիմնականում՝ ջավախահայեր): Վերջիններիս անունները փակցված են ՀՀ Ոստիկանության Անձնագրային եւ վիզաների վարչության շենքի պատին: Պարզ է, որ Վրաստանի հատուկ ծառայությունների համար այլեւս դժվար չէ ձեռք բերել ՀՀ քաղաքացիություն ստացած Վրաստանի քաղաքացիների անվանացանկը:

«Վրաստանի սիրտը շահելու» ՀՀ-ի քայլերը կշարունակվեն այնքան ժամանակ, քանի դեռ հայկական շրջանակներում Ջավախքի հիմնահարցի նկատմամբ գոյություն չունեն հայեցակարգային մոտեցումներ: Իսկ հայեցակարգի բացակայությունը հանգեցնում է հետեւյալ հակասական, բայց օրինաչափ իրողությանը. **ՀՀ քաղաքացիության տրամադրումը ջավախահայության (հետեւաբար նաեւ Ջավախքի) կործանումն է, տրամադրման դադարեցումը՝ նույնպես:**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ, ՎՐԱՍՏԱՆԻ ՈՒ ԱՂԻՐԵՋԱՆԻ ՇԱՀՅԵՐԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ



**Իգոր ՄՈՐԱԴՅԱՆ**  
*քաղաքագետ*  
**04.08.2009 թ.**

Վրաստանն ու Ադրբեջանը ավանդաբար դիտարկվում են ոչ միայն բարեկամ պետություններ, այլև գործընկերներ ու դաշնակիցներ, որոնց միավորում են քաղաքական ու տնտեսական բավական լուրջ պայմանագրեր: Ընդհանուր առմամբ Վրաստանն ու Ադրբեջանը կարևոր օղակներ են ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի ռազմավարության մեջ՝ նավթի ու գազի արդյունահանման, տեղափոխման, ինչպես նաև ռազմական տրանզիտի առումով: Երկու երկրներն էլ գտնվում են արևմտյան հանրության, հատկապես ԱՄՆ-ի բավական ուժեղ վերահսկողության ներքո և հանդիսանում են որոշակի գետնտնտեսական փորձադաշտ, ուր փորձարկվում են ԱՄՆ-ի ու Մեծ Բրիտանիայի տարբեր նախաձեռնությունները, որոնք նպատակ ունեն քաղաքականացնել Հարավային Կովկասը, օգտագործել նրա քաղաքական պայմանները՝ Ռուսաստանի ու Իրանի նկատմամբ ճնշում գործադրելու համար: Թեկուզ և այս ռազմավարությունը լիարժեք չէ և հանգեցնում է հակասության ամերիկա-բրիտանական տանդեմի գլխավոր նպատակի առումով, իսկ այդ նպատակը, այնուհանդերձ, գազն ու նավթն են:

ԱՄՆ-ն ու Մեծ Բրիտանիան եվրոպական հանրության մասնակցությամբ փորձում են տարածաշրջանը բերել ընդհանուր շահերով

շաղկապված որոշակի իրավիճակի: Այդ քաղաքականության առանցքը Վրաստանն ու Ադրբեջանն են, և տվյալ հանգամանքը դրական է ազդում վրաց-ադրբեջանական հարաբերությունների զարգացման վրա: Սակայն 2005-2006-ից սկսած՝ ի հայտ եկան վրաց-ադրբեջանական մի շարք հակասություններ, որոնք գոյություն են ունեցել միշտ, բայց՝ քողարկված: Որոշիչ հանգամանք հանդիսացավ երկու կարևորագույն էներգետիկ կոնունիկացիաների՝ Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի և Շահդենիզ-Էրզրում տրանսկովկասյան գազամուղի կառուցման ավարտը, որոնք վերակառուցված Բաքու-Սուփսա նավթամուղի հետ ձևավորեցին էներգետիկ կոնունիկացիաների հիմնական համակարգը Հարավային Կովկասում, որը միմյանց է շաղկապում Ադրբեջանն ու Վրաստանը:

Թեկուզև Ադրբեջանը ժամանակին լուրջ զիջումներ կատարեց Վրաստանին՝ կոնունիկացիաների շահագործման եկամուտների առումով, սակայն դրանց վերջնական ձևավորումից հետո երկու երկրների համար խիստ տարբեր արդյունքներ ամրագրվեցին: Ադրբեջանի եկամուտները, որոնք, փաստորեն, պայմանավորված են այդ կոնունիկացիաների կենսագործունեությամբ, տասնյակ անգամ գերազանցում են Վրաստանի եկամուտները: Վրաստանը գործնականում հայտնվեց Պանամայի ջրանցքի կարգավիճակում Կովկասի և Կասպից ծովի ընդհանուր էներգետիկ կոնալեքսի շրջանակներում, որովհետև նախագծման շրջանում զգալի թվացող տրանզիտային եկամուտներն այսօր կազմում են վրացական պետության բյուջեի փոքր մասը: Եթե 2002-ին Վրաստանի բյուջեն 370 մլն դոլար էր, ապա 2007-ին այն արդեն կազմում էր 1 մլրդ 600 մլն դոլար, իսկ էներգակիրների տրանզիտից ստացվող եկամուտները, ներառյալ նավթի երկաթուղային փոխադրումները Վրաստանի տարածքով, չէին գերազանցում 100 մլն դոլարը: Հետագա քսան տարիներին, ըստ ԱՄՀ-ի, Ադրբեջանը կստանա 175 մլրդ դոլար եկամուտ, այսինքն՝ տարեկան ավելի քան 8,7 մլրդ դոլար՝ նույնիսկ նավթի գների ոչ բարձր մակարդակի պայմաններում: Իհարկե, սա անհամեմատելի է վրացական փայաբաժնի հետ, ինչն էլ գրգռիչ գործոն է դարձել Վրաստանի համար, քանի որ վերջինս էներգետիկ կոնունիկացիաների այդ կոնալեքսի կառուցման պատճառով երկարաժամկետ և կոշտ հակադրության մեջ մտավ Ռուսաստանի հետ, ինչն ահռելի քաղաքական ու տնտեսական վնաս հասցրեց երկրին, և դա համադրելի չէ գազի ու նավթի տրանզիտից ստացված եկամուտների հետ: Մանավանդ որ հետագա տարիներին Վրաստանը ստիպված կլինի ապահովել նաև այդ կոնունիկացիաների անվտանգությունը, ինչն ինքնին ծախսեր է պահանջում և ավելի է վատթարացնելու հարաբերությունները Ռուսաստանի հետ:

Վրաստանում բազմաթիվ քաղաքական գործիչներ ու վերլուծաբաններ նախընտրում են վերանայել այս իրավիճակի իրենց ընկալումները, նաև Աբխազիայի ու Յարավային Օսիայի կողուստը պայմանավորում են այդ ծրագրերին Վրաստանի մասնակցությամբ: Մանավանդ որ 2006-ից ի հայտ եկավ ԱՄՆ-ի նոր դոկտրինը՝ Կենտրոնական Ասիայի էներգետիկ և հումքային պաշարների արտահանումը դեպի Յարավային Ասիա վերակողմնորոշելու: Դա զգալիորեն տեղայնացրեց, այսպես կոչված, «Եվրասիական միջանցքի» նշանակությունը և զրկեց Վրաստանին տրանզիտի հաշվին իր եկամուտները մեծացնելու հույսերից: Այս հանգամանքը բազային դարձավ տարբեր պորբլեմների առաջացման ու խորացման համար, ինչպիսիք են ադրբեջանական բնակչության պայմանները Վրաստանում, մասնավոր առևտուրը երկու երկրների միջև, մշակութապատմական հիմնահարցերը: Ադրբեջանն ու Թուրքիան բավականին է-գոիստաբար վերաբերվեցին Վրաստանի պորբլեմներին գազի և էներգամատակարարումները բարձր գնի պատճառով լուրջ հարցականի տակ էին: Շահդենիզ-էրզրում գազամուղի կառուցման ավարտին Վրաստանը հատնվեց տուժածի վիճակում, քանի որ այդքան խոշոր նախագծի առկայությունը, միևնույն է, չի ապահովում նրա գազի պահանջարկը նույնիսկ մոտավոր ծավալներով: Վրաստանի քաղաքական շրջանակներում արդեն իսկ քննարկվում է այն հարցը, որ անհրաժեշտ է վերանայել գազի ու նավթի տրանզիտի սակագները Վրաստանի տարածքով, քանի որ դրանց հաստատման պահին նավթի գները կրկնակի ցածր էին ներկա գներից, իսկ գազը էժան էր 4-5 անգամ: Սա, անշուշտ, բավարար փաստարկ չէ այդ հարցը լուծելու համար, սակայն վրացական ինտելեկտուալ հոգեկերտվածքի համար միանգամայն բավարար է, որպեսզի այդ հարցը բարձրացվի: Դա չի կարող չհանգեցնել հակասությունների խորացման Վրաստանի ու Ադրբեջանի միջև՝ այդ դաշտ ներքաշելով նաև արևմտյան նավթային ընկերություններին ու կառավարություններին:

Վրաստանը վտանգ է զգում թուրք-ադրբեջանական դաշինքի ուժեղ ազդեցության տակ հայտնվելու առումով, սակայն հարկադրված է զնալ այդ ուղղությամբ, քանի որ տնտեսության և էներգետիկայի հիմնախնդիրները լուծելու այլ ճանապարհ չունի: Միաժամանակ անհրաժեշտ է ավարտին հասցնել Վրաստանը միջտարածաշրջանային նշանակության տրանզիտային երկիր դարձնելու ծրագրերը: Ադրբեջանի ու Թուրքիայի ազդեցությունը և, միաժամանակ, լրացուցիչ եկամուտներ ստանալու անհրաժեշտությունը Վրաստանի համար դարձան տարածաշրջանում այլընտրանքային տնտեսական համագործակցության ուղղությունների որոնման

գործոն: Պարզվեց, որ ատլանտյան տերությունները, չնայած իրենց հզոր տնտեսական ու քաղաքական ներկայությամբ, ի վիճակի չեն լուծելու տարածաշրջանի երկրների պրոբլեմները, հատկապես եթե նրանք լարված հարաբերությունների մեջ են առավել խոշոր հարևանների հետ: Ներկայումս, երբ Վրաստանի ու Ռուսաստանի միջև հակադրությունը հասել է այդպիսի բարձր մակարդակի, միաժամանակ կարևորվում է անվտանգության ապահովումը թուրքիայի ու Ադրբեջանի հետ Վրաստանի հարաբերությունների առումով, և վրացական իշխանությունների ուշադրությունն այդ ուղղությամբ աճում է: Այդ հիմնախնդիրն ավելի է լրջանում թուրք-ամերիկյան հարաբերությունների հայտնի վատթարացումը նկատի ունենալով, ինչպես նաև եվրոպական հեռանկարները թուրքիայի համար փակվելու առումով: 2006-ի աշնանը թուրքիան հայտարարեց, որ եվրոպական հեռանկարի բացակայության հստակեցման պարագայում ինքը կվերանայի կամ առհասարակ կիրաժարվի Բալկաններում ու Հարավային Կովկասում զուսպ և չափավոր քաղաքականություն վարելու պարտավորություններից, որոնք առկա են եվրոմիության և ԱՄՆ-ի հետ Անկարայի հարաբերություններում: Սակայն Վրաստանն առայժմ չունի որոշակի այլընտրանքային նախագծեր և չի կարող հրաժարվել թուրք-ադրբեջանական դաշինքի ազդեցության կամ նրանից կախվածության մեջ հայտնվելու հեռանկարից: Վրացական քաղաքական գործիչներին ու վերլուծաբաններին մտահոգում է նաև ռուս-թուրքական հարաբերությունների ամրապնդման հեռանկարը, որը պայմանավորված է ոչ միայն զեոտնտեսական ծրագրերով, այլև Սև ծովում, Կովկասում ու Կենտրոնական Ասիայում ամերիկյան քաղաքականությանը հակադրվելու փոխադարձ շահերով: Ռուս-թուրքական դաշինքը կարող է դառնալ շատ անցանկալի հանգամանք վրացական քաղաքականության համար՝ երկարաժամկետ հեռանկարի կտրվածքով:

Հայ-վրացական հարաբերություններն ունեն հակասական բնույթ և, ըստ էության, սկսում են ձևավորվել միայն հիմա՝ մարված հակասությունների և հիմնախնդիրների երկար տարիներ տևած իրավիճակից հետո: Վրացական հասարակությունն ու քաղաքական դասակարգը, ընդհանուր առմամբ, միշտ համարել են, որ Վրաստանն արևմտյան հանրության ֆավորիտն է և միշտ դիտարկվել է իբրև ավելի բարձր կարգավիճակ ունեցող երկիր ժողովրդավարության և քաղաքացիական հասարակության կայացման առումով: Բացի այդ՝ Վրաստանն իրեն համարում էր արևմտյան քաղաքականության ու արժեքների հիմնական կրողը և առաջ մղողը տարածաշրջանում, հանդես գալիս իբրև գլխավոր գործակալ ռուսական քաղաքական էքսպանսիոնիզմի հետ պայքարում: Վրաց հասարա-

կույթունը Հայաստանը դասում էր «երկրորդ սորտի» երկրների շարքին, որը ոչ մի կերպ չի համապատասխանում եվրոպական քաղաքական հոգեկերտվածքին: 1990-ականների առաջին կեսին Վրաստանում Հայաստանը համարում էին Հարավային Կովկասի տնտեսապես ամենահետամնաց երկիրը, որը տնտեսական զարգացման ոչ մի հեռանկար չունի: Միաժամանակ, երկարաժամկետ կտրվածքով չունենալով մարտունակ զինված ուժեր և կազմակերպական լծակներ, Վրաստանը նախընտրում էր սպասողական կեցվածք որդեգրել և հետևել հայ-ադրբեջանական հակամարտությանը, ուր կարևոր դեր էր խաղում Թուրքիան, որը, Հայաստանը շրջափակելով, սպասում էր Վրաստանից նրա կախվածության մեծացմանը՝ կոնունիկացիաների և, առհասարակ, կենսագործունեության առումով:

Հայաստանի կախվածությունը վրացական կոնունիկացիաներից պահպանվում է նաև հիմա, բայց դա քաղաքական իմաստով քիչ բան է տվել Վրաստանին: Հայաստանի տնտեսությունը Հարավային Կովկասում ամենադիֆերենցացվածն է, այն կողմնորոշված է դեպի ավելի զարգացած ու հեղինակավոր շուկաները: Հայաստանն առաջինն իրականացրեց տնտեսության բարեփոխման հիմնական միջոցառումները, նրա տնտեսական օրենսդրությունն ավելի լիբերալ է: Հայաստանն ընտրել է արդյունաբերական, բազմաոլորտ զարգացում ունեցող երկիր դառնալու մոդելը, որը զարգանում է ռազմավարական ներդրումների բացակայության պայմաններում: Բնակչության մեկ շնչին բաժին հասնող ՀՆԱ-ով, այսինքն՝ գնողունակությամբ, որը Հայաստանում կազմում է 4500 դոլար, նա զգալիորեն գերազանցում է Վրաստանի ցուցանիշը՝ 2900 դոլար: Հայաստանը հեռու է տրանզիտային-սերվիսային մոդելի տնտեսություն կառուցելու մտայնությունից և շարունակում է զարգացնել նյութական արտադրության ոլորտները: Վրացական շուկան լավ ծանոթ է հայկական արդյունաբերական ապրանքներին, Հայաստանը ներդրումներ է կատարում Վրաստանի ծխախոտի, թեթև արդյունաբերության և տրանսպորտային ոլորտներում ու բանկային համակարգում: Պաշտպանության ոլորտում Վրաստանը շարունակում է նշանակալիորեն զիջել Հայաստանին և նույնիսկ խնդիր չի դրել հավասարակշռություն ապահովելու առումով: Միջազգային ասպարեզում ժամանակի ընթացքում պարզվեց, որ արտաքին քաղաքականության հայկական մոդելը մի շարք առավելություններ ունի, քանի որ Վրաստանի առաջնահերթությունների ընդգծումը հանգեցրեց նրա հակադրությանը Ռուսաստանի հետ և դրանով իսկ կտրուկ սահմանափակեց նրա արտաքին քաղաքական ու տնտեսական հնարավորությունները: Վրաստանի նկատմամբ քննադատության բացակայության որոշակի փուլից հետո Արևմտյան հան-

րության մեջ և ամենից առաջ եվրոպական կառույցներում այդպիսի քննադատությունը ոչ միայն ի հայտ եկավ, այլև դարձավ հետևողական ու բավական ուժգին, ինչն էլ հանգեցրեց Արևմուտքի հարաբերությունների հավասարակշռմանը Վրաստանի ու Հայաստանի միջև: Դրան զուգահեռ՝ 2003-2006-ին Վրաստանը կարողացավ տնտեսական զարգացման մեջ հաղթահարել իներցիան և նոր պայմաններ ստեղծել վարչարարության, տարածաշրջանների և կենտրոնի միջև հարաբերությունները կանոնակարգելու առումով: Այդ հաջողությունները տնտեսության մեջ հնարավոր դարձան ԱՄՆ-ի, եվրոպական երկրների ու միջազգային ֆինանսական կազմակերպությունների զգալի օգնության շնորհիվ, ինչպես նաև սեփականաշնորհման աշխատանքների ճիշտ կազմակերպման, սովետային տնտեսության կրճատման և էներգակոմունիկացիոն շինարարության հաշվին:

Սակայն այդ տնտեսական ռեսուրսներից շատերը սպառված են, տնտեսության իրական սեկտորի վիճակը բարվոք չէ, քանի որ այնտեղ կատարվող ներդրումներն աննշան են: Այսպիսով՝ Վրաստանին չհաջողվեց Հայաստանի նկատմամբ հասնել քաղաքական, տնտեսական և պաշտպանական գերակայության: Ձևավորվել է քաղաքական հնարավորությունների որոշակի պարիտետ, քանի որ Հայաստանը գործընկերային հարաբերություններ ունենալով Ռուսաստանի և Իրանի հետ և միաժամանակ հակադրության մեջ գտնվելով Թուրքիայի հետ, այնուհանդերձ, հաջողությամբ ինտեգրվում է արևմտյան հանրությանը: Իսկ Վրաստանը, լինելով Արևմուտքի մերձավոր ու վստահելի գործընկերը, համարժեք հարաբերություններ չունի Իրանի ու Ռուսաստանի հետ, Թուրքիայի հետ հարաբերությունները դառնում են խնդրահարույց՝ վերջինիս աճող հավակնությունների պատճառով:

Այս հավասարակշռությունը ստեղծվել է արտաքին ու ներքին պայմանների բերումով և միաժամանակ ամրապնդվում է հայ-վրացական փոխադարձ շահերով: Վրաստանը ավելի ու ավելի հայտնվելով թուրք-ադրբեջանական դաշինքի ազդեցության ուղեծրում, Ռուսաստանի հետ շարունակական հակադրության պայմաններում կորցնելով Աբխազիան ու Հարավային Օսիան իր վերահսկողության տակ վերադարձնելու հույսերը, միաժամանակ գտնվում է տրանզիտային գործառույթների արդյունքում իր եկամուտները մեծացնելու որոնումների մեջ: Վրաստանի ներքին քաղաքականության հեռանկարներն անբողջությամբ պարզ չեն, երկրի ղեկավարությունն արտաքին և ներքին ուժերի լուրջ ճնշման տակ է, օրակարգում շարունակում է մնալ իշխանության ռոտացիայի հարցը: Այս պայմաններում Վրաստանը բացարձակապես կարիք չունի հայտնվելու Հայաստանի

տանի հետ հակադրության ռեժիմում, ինչը, ոչ մի դրական արդյունքների չհանգեցնելով, կարող է բերել հայաբնակ Սամցխե-Ջավախեթիի դուրս գալուն թբիլիսիի վերահսկողությունից:

Միևնույն ժամանակ Յարավային Կովկասում և հատկապես ռուս-վրացական հարաբերություններում լարվածության անախտադեպ մեծացումը, ինչպես նաև Թուրքիայի ու Ադրբեջանի քաղաքական հավակնությունների աճը որոշ պարզաբանումներ մտցրին հայ-վրացական հարաբերությունների իրական հեռանկարների առումով: Պարզ դարձավ, որ Յայաստանը Վրաստանի համար կարևոր գործընկեր է՝ ընդունակ լուծելու բազմաթիվ խնդիրներ Վրաստանի տնտեսության տարբեր ոլորտներում: Վրաստանն իր համար պարզեց, որ իր կողմից Յայաստանի էներգետիկ և տրանսպորտային կոմունիկացիաների շրջափակումը կհանգեցնի նաև սեփական տնտեսության բազմաթիվ բաղադրիչների ապակազմակերպմանը, վտանգի տակ կդնի ներքաղաքական կայունությունը, կհանգեցնի դատապարտման Արևմուտքի կողմից և, ի վերջո, ուժերի հավասարակշռության փոփոխության Յարավային Կովկասում, ինչում Վրաստանը բացարձակապես շահագրգռված չէ: Յայաստանի հետ գործընկերությունը Վրաստանը սկսել է դիտարկել իբրև մանրի հնարավորություն և տնտեսության մեջ այլընտրանքային ծրագրերի իրագործման միջոց: Վրաստանը սկսել է հասկանալ, որ միավելտոր գարգացումը խոցելի է և կարող է հանգեցնել լուրջ արտաքին կախվածության: Այդ իսկ պատճառով բավական զուսպ է վերաբերվում մի շարք կոնֆլիկտային հանգամանքներին Ջավախքում՝ զգուշանալով բացարձակապես անկանխատեսելի հետևանքներից: Յայաստանի հետ հարաբերությունների վատթարացման առումով թբիլիսին նաև զգուշանում է Ռուսաստանի և Արևմուտքի հնարավոր արձագանքից, միաժամանակ շահագրգիռ է Յայաստանի և Իրանի հետ տնտեսական համագործակցությամբ: Վրացական հասարակության մեջ դարաբաղյան պատերազմից հետո տարբեր ֆոբիաներ են ձևավորվել, և համարվում է, որ գործնականում անհնար է հակադրվել Յայաստանի զինված ուժերին: Վրացական քաղաքական գործիչները շատ լուրջ են գնահատում ԱՄՆ-ում հայկական լրբբի գործունեությունը, որը կարողացավ հասնել Վրաստանում ԱՄՆ-ի մասնակցությանը հայ բնակչության հետ կապված գործընթացները վերահսկելու առումով: Վրաստանի համար նաև շատ կարևոր է թույլ չտալ Ռուսաստանի միջամտությունը հայ-վրացական հարաբերություններին, ինչը հատուկ անհանգստություն է հարուցում վրացական քաղաքական ղեկավարության շրջանում:

## ԱՇՈՒՂ ԱԼԻՔ ՋԱՎԱԽՔ: ՀԱՅՐԵՆԱՊԱՀՊԱՆ ԳՈՐԾԻՉԸ



հոդվածը պատրաստել է  
Վահե ՍԱՐԳՍՅԱՆԸ

### *ԱՇՈՒՂ ԱԼԻՔ ՋԱՎԱԽՔ*

Հետխորհրդային տարիներին Ջավախք տարածաշրջանում մշակութային կյանքն ապրում է, կարելի է ասել, օրհասական մի ժամանակաշրջան: Ե՛վ Վրաստանի, և՛ ՀՀ-ի կողմից չարժանանալով պատշաճ ուշադրության՝ Ջավախքի մշակութային գործիչներն ու մտավորականները իրենց ապրուստը հոգալու համար թողեցին հայրենի բնօրրանն ու հեռացան: Մնաց լուկ հասարակ շինականը՝ իր պարզ ու շիտակ բնավորությամբ, իր կոշտացած ձեռքերով: Հայ ազգի լավագույն գուսանների ու աշուղների, բանաստեղծների ու արվեստագետների, գիտնականներին ու մտավորականների դարբնոցը մի պահ ամայացավ: Երկար ժամանակ ջավախահայի հոգևոր-մշակութային սովը բավարարող «սնունդը» փողոցային արվեստն էր, երգն ու երաժշտությունը: Դրա հետևանքները դեռ երկար ենք զգալու, քանզի ազգային արվեստից անտեղյակ մի ողջ սերունդ աճեց ու կյանք մտավ...

Սակայն ժողովրդի հոգում խոր արմատներ ունեցող ազգային մշակույթը չէր կարող անհետ կորչել, վերանալ. այն կարծես անթեղվեց ժողովրդի հոգում՝ սպսելով նոր բռնկումի: Ջավախքում մի պահ անթեղվեց հայկական ազգային արվեստը, մշակույթը: Թեև ջավախքից արտագաղթողները շատ էին, սակայն, թեև քիչ, բայց եղան մնացողներ, որոնք դիմացան դաժան ժամանակներին և կրկին երևան են եկել, կրկին փորփորում են մոխիրները՝ գտնելու այն կայծերը, որոնցից բոցկլտալու է հայկական ազգային ոգին: Յերոս են այդ մարդիկ, ինչպես և հերոսական է նրանց գործը: Նրանք փրկում են ոչ միայն ողջ ժողովրդի մի մասնիկ, ողջ մշակույթի մի հիմնասյուն, այլև՝ ողջ հայրենիքի մի հատված, մի ողջ պատմական հայրենիք: Նրանք փրկում են Ջավախքը: Ավելին՝ նրանք հետ են բերում իսկական Ջավախքը: Այդ նվիրյալներից է Աշուղ Ալիք Ջավախքը: Նախ՝ մի քանի խոսք նրա արմատների մասին:



Աշուղ Ալիք Ջավախքի (Ալիկ Քսպոյան) նախապապերը սերել են էրզրումից 6 կմ հեռավորության վրա գտնվող Արշուն բնակավայրից: Այստեղից Ջավախքի Ջիգրաշեն գյուղում հաստատված գերդաստանի շառավիղն էր նաև աշուղի ընտանիքը, որտեղ և 1950թ. ծնվում է Ջավախքի ապագա աշուղը: Ա. Քսպոյանը եղել է Ջիգրաշենի՝ այն ժամանակ դեռևս նոր միջնակարգ դարձած դպրոցի առաջին շրջանավարտներից: 1968թ., Քսպոյանենց ընտանիքը բնակություն է հաստատում Ախալքալաքում: Դպրոցն ավարտելուց հետո Ա. Քսպոյանը տեղափոխվում է Ռուսաստան և ընդունվում

Բլագովչեշենսկի պատմության ինստիտուտը, այն ավարտում է 1974թ.: Ուսանողական տարիներին 1,5 տարի զուգահեռաբար սովորել է Ռուսաստանի վաստակավոր արտիստ, երգիչ Վլ. Բաբերեժսկու օպերային ստուդիայում: Ե՛վ որպես ինստիտուտի, և՛ որպես օպերային ստուդիայի շրջանավարտ՝ Ա. Քսպոյանին հնարավորություններ են ընձեռվել՝ մնալու տեղում, աշխատելու տարբեր բնագավառներում: Սակայն հորը վաղ տարիքում կորցրած և ծեր մոր միակ խնամարկյալ հանդիսացող երիտասարդ Ալիկին կանչում էր հայրենի տունը: Կային նաև վերադարձի այլ պատճառներ. Հայրենի Ձավախքի կանչը, հայ աղջկա հետ ամուսնանալու մոր պահանջը...

Ձավախք վերադառնալուց հետո Ա. Քսպոյանը աշխատել է Ախալքալաքի շրջանային վարչությունում՝ որպես Գրքասերների ընկերության պատասխանատու քարտուղար, մասնակցություն է ունեցել նաև տարբեր գեղարվեստական խմբերի աշխատանքներին: Դեռ այդ տարիներին հրավեր է ստացել Երևանից՝ ընդգրկվելու Թ. Ալթունյանի անվան երգի-պարի անսամբլի կազմում: Այդ առթիվ էմմա Ծատուրյանի և անվանի բալետմեյստեր Ազատ Ղարիբյանի կողմից առաջարկներ են եղել և այն էլ՝ բավականին բարձր աշխատավարձով, եղել են նաև բնակարանի խոստումներ: Սակայն Ա. Քսպոյանն այդպես էլ մնում է հայրենի Ձավախքում՝ արձագանքելով Ախալքալաքի այն ժամանակվա մշակույթի բաժնի վարիչ Յուրի Սարիբեկյանի առաջարկին, որը, գիտակցելով Ա. Քսպոյանի դերակատարությունը Ձավախքի մշակույթի պահպանման և զարգացման գործում, տեղում ապրելու և գործելու լայն հնարավորություններ է տալիս ապագա աշուղին:

Ա. Քսպոյանը նորից լծվում է աշխատանքի. սկզբնական շրջանում մշակույթի տան գեղարվեստական մասի ղեկավար, այնուհետև՝ քաղաքային մշակույթի տան տնօրեն:

1989 թվականից Ախալքալաքի շրջանային մշակույթի տան տնօրենն է, որը այժմ կոչվում է Ախալքալաքի մուսիցիալախոտեի ակումբների միություն:

30 տարուց ավել է, ինչ աշխատում է մշակույթի ասպարեզում:

100-ից ավելի երգերի հեղինակ է: Թողարկել է երեք տեսաերիզ և մեկ աշուղական երգարան՝ բոլորն էլ «**Ձավախքի կանչը**» խորագրով:

Վրաստանի հայ գրողների «Վերնատուն» միության անդամ է, պարգևատրվել է Վրաստանի, ՀՀ-ի, ՌԴ-ի՝ շուրջ 20-ից ավելի մեդալներով:

2003թ. Հայհամերգի ու ՀՀ Արվեստի միջազգային կենտրոնի կողմից նրան շնորհվել է «Արվեստի նվիրյալի» կոչում:

2000թ. հիմնադրել է «Ջավախք» ազգագրական երգի-պարի անսամբլը:

Առաջին անգամ Ջավախքում բեմադրել է ջավախքյան ազգային երգն ու պարը և այն դուրս է հանել Ջավախքի և ՀՀ-ի սահմաններից, հասցնելով ՌԴ և Եվրոպա:

2006թ. Ախալքալաքի ժողովրդական թատրոնում բեմադրել է ներկայացում, Ջավախքի պատմության մեջ առաջին անգամ այդ ներկայացումով հանդես է եկել Թբիլիսիի, Գյումրիի և Երևանի բեմերում:

2006թ. Երևանում հանդիսավոր կերպով նրան շնորհվեց աշուղի կոչում՝ տալով **Աշուղ Ալիք Ջավախք** պատվանունը:

2007թ. նրա նախաձեռնությամբ առաջին անգամ Ախալքալաքում բացվում է աշուղական դպրոց: Այս դպրոցում նրա ղեկավարությամբ գործում է աշուղական անսամբլ, որը կրում է մեծն Ջիվանու անունը:

2008թ. նրա ջանքերով Ջավախքում ստեղծվում է մանկական թատրոն, որը նույն թվականին մեծ վերելքով մասնակցեց Երևանի «Նռան հատիկ» փառատոնին:



10 տարուց ավել է, ինչ նրա նախաձեռնությամբ Ախալքալաքի մշակույթի տանը գործում է մշտական երգչախումբ:

Ախալքալաքի շրջանում, ինչպես և Ջավախքի հարակից շրջաններում, հետխորհրդային տարիներին կաթվածահար եղած մշակութային օջախներում այսօր նկատվում են կենդանության նշաններ: Վերջին երկու տարիներին Ախալքալաքի շրջանում վերաբացվել է 29 գյուղական ակումբ, վերանորոգվում են (Ազավրեթ, Ալաստան, Կարծախ և այլն գյուղերի ակումբները:

Աշուղ Ալիք Ջավախքի նպատակն է, որ Ախալքալաքի շրջանի բոլոր ակունքներն ունենան գործունեության ծրագրեր՝ Ախալքալաքի շրջանային մշակույթի տանը գործող մշակութային 10 կոլեկտիվների (**Ժողովրդական թատրոն, Մանկական թատրոն, Տիկնիկային թատրոն, Երգի-պարի անսամբլ, Ժողովրդական գործիքների անսամբլ, «Ջավախք» ազգագրական երգի-պարի անսամբլ, Մանկական անսամբլ, Երգչախումբ, Աշուղական անսամբլ, Աշուղական դպրոց**) ներուժի ընդգրկմամբ, որոնք համերգային ծրագրերով ու ներկայացումներով պատրաստ են մեկնելու տարբեր գյուղեր և բնակավայրեր: Սրանցից շատերը մասնակցել են նաև Ջավախքի սահմաններից դուրս տարբեր փառատոների, մրցույթների՝ ամենուր քստ արժանվույն ներկայացնելով Ջավախքի մշակույթը:



Ջավախքի «Ակունք» անկախ պարբերականն իր էջերում (2008թ., հունվար, թիվ 1-2, (115-116) անդրադարձել է 2007թ. սեպտեմբերի 1-ից գործող **Աշուղական դպրոցին**. «Ախալքալաքի աշուղական դպրոցն այսօրվա հայ իրականության մեջ երկրորդն է՝ 33-ում թվմաս Պողոսյանի ղեկավարությամբ գործող Ջիվանու անվան աշուղական դպրոցից հետո: Դպրոցում սաները ուսանելու են երեք տարի, շրջանավարտները կստանան համապատասխան վկայականներ: Նրանք ուսումնասիրում են աշուղական տաղաչափություն, աշուղական արվեստի պատմություն, բենական մշակույթ, ծայրի մշակում և ճիշտ երգեցողություն: Սաներն իրենց ցանկությամբ ընտրում են հայկական ժողովրդական գործիքները՝ դուդուկ, շվի, զուռնա, դիոլ և դաշնամուր: Պարապմունքներն անցկացվում են շաբաթական երեք անգամ: Դասերը վարում են Աշուղ Ալիք

Ջավախքը, փորձառու դասատու Կարինե Քսպոյանը, շվիահար և դուդուկահար Նվեր Մոսոյանը, դիվահար Յովհաննես Կարախանյանը և այլք»:

Յուրաքանչյուր ամիս գործող ակումբների ղեկավարները հավաքվում են Ախալքալաքում, հաշվետվություն ներկայացնում կատարած աշխատանքների վերաբերյալ, քննարկում նոր ծրագրերն ու անելիքները:

Աշուղ Ալիք Ջավախքի կողմից գյուղական մշակութային տների գործունեությունն աշխուժացնելու նպատակով մշակվել են հատուկ միջոցներ: Օրինակ՝ Ակումբների միության շրջանակներում գործող Աշուղական դպրոցի սաները, դեռ չավարտած նույն դպրոցը, արդեն գյուղերում ստեղծում են իրենց երգի-պարի կոլեկտիվները: Այդպիսի գյուղերի օրինակներ են Վաչիանը, Դիլիսկան: Այսպիսով՝ եթե տարեկան անգամ փոքր թվով երիտասարդներ Ջավախքի տարբեր շեներից գան և թրծվեն Ախալքալաքի Ակումբների միության կոլեկտիվներում, այնուհետև հետ վերադառնան և իրենց բնակավայրերում զբաղվեն մշակութային գործունեությամբ, կարելի է հուսալ, որ տարիներ անց Ջավախքում կապահովվի մշակութային վերելք:



*Ջավախքի Ղարո գյուղի մշակութային տունն արդեն վաղուց ավերակների է վերածվել*

Ախալքալաքի Ակումբների միությունում գործող վերոհիշյալ 10 կոլեկտիվների շուրջ 250 անդամների միավորում են ստեղծված մթնոլորտն ու հայրենիքի հանդեպ ունեցած անսահման նվիրումը: «Ազգագրական երգի-պարի «Ջավախք» անսամբլը, որն այդ կոլեկտիվների ավանգարդն է, կարծես մի ընտանիք լինի, այնտեղ աշխատում են ես՝ իմ կնոջ, աղջկա ու տղայի հետ, խմբերում ընդգրկված բոլոր տղաներին ու աղջիկներին ես նույնպես համարում եմ իմ զավակները: Մենք վերջապես Ջավախքում կարողացանք վերականգնել այն մտածողությանը, որ ամոթ չէ երգելը, պարելը, որ 12 տարեկանից բարձր տարիքի աղջկան երգել, նվագել կամ պարել արգելելը այնքան էլ իրատեսական բան չէ», իր խոսքում նշում է Աշուղ Ալիք Ջավախքը<sup>1</sup>:

Ախալքալաքի մունիցիպալիտետի Ակումբների միության կոլեկտիվները վերջին շրջանում մասնակցում են ինչպես ՀՀ-ի ու Վրաստանի, այնպես էլ՝ ՌԴ-ի և արտասահմանյան այլ քաղաքների մի շարք մրցույթ-փառատոների: «Ամենայն պատասխանատվությամբ հայտարարում եմ, որ Ջավախքի հայկականությունը հայտնի դարձնելու ամենակարճ ճանապարհը նրա մշակույթի ցուցադրումն է ամբողջ աշխարհում: Իսկ դա իրագործելու համար հարկավոր է օգնություն, օգնություն՝ ՀՀ կառավարությունից, մի շարք հասարակական կազմակերպություններից: Մինչ օրս մենք տարբեր վայրեր, օրինակ՝ Գոնգարիա, ՌԴ-ի շուրջ 12 մեծ քաղաքներ այցելել ենք մեր միջոցներով, որոնք, ցավոք, խիստ սահմանափակ են,- մտահոգվում է Աշուղ Ալիք Ջավախքը:- Մեր առաջին հյուրախաղերի ժամանակ, օրինակ, ՌԴ-ում երբ լսում էին ջավախքյան կատարողների մասին, մտածում էին, որ մի քանի գյուղական մակարդակի երաժիշտներ էլի եկել են փող աշխատելու: Բայց երբ նրանց առաջ դուրս են գալիս 23 մանկահասակ պատանիներ և աղջիկներ, կարգով շարված, տարազավոր և հանդես գալիս բարձր մակարդակի կատարումներով, հանդիսատեսը հանկարծակիի էր գալիս: Այս քայլերով մենք իսկապես համայն աշխարհին մատուցում ենք իսկական Ջավախքը՝ իր անկրկնելի ու մաքուր հայ մշակույթով»:

«Ջավախք» ազգագրական երգի-պարի անսամբլը տարբեր վայրերում հյուրախաղերով ոչ միայն ներկայացնում է Ջավախքը, այլև սփռված ջավախահայերին տունդարձի խնդրանք-կոչ-պահանջ ուղղում: **Ջավախքը կանչում է բոլորին:** Իգուր չեն Աշուղ Ալիք Ջավախքի բոլոր տեսանկյուններն ու աշուղական երգարանը վերնագրված **«Ջավախքի կանչը»:** Լինում են դեպքեր, երբ համերգից հետո շատ ջավախահայերի մոտ բորբոքվում է հայրենա-

---

<sup>1</sup> Աշուղ Ալիք Ջավախքի հետ մեր զրույցը տեղի է ունեցել 2009թ. օգոստոսին Ջավախքում:

սիր ութթյան կրակը, և վերջիններս որոշում են իրենց հայրենի գյուղերում վերանորոգել տարբեր մշակութային օջախներ:

Հայ մշակույթի նվիրյալի համար Ջավախքը չի սահմանափակվում միայն Ախալքալաքի կամ Նինոծմինդայի շրջաններով. նա աշակերտներ ունի տարբեր վայրերից՝ սկսած Ախալցխա-Սամցխեից մինչև Ծալկայի հայկական բնակավայրերը: Նույնկերպ և Ախալքալաքի Ակունքների միութայն կուլեկտիվները այցելում են Ախալցխայից մինչ Ծալկա: Նրա «Գովք Ջավախքի» երգն արդեն դարձել է Ջավախքի օրհներգը, որը ճախրում է Ախալցխայից մինչ Ծալկա՝ յուրաքանչյուր ջավախքցու սրտում առաջացնելով հուզմունք, նվիրում ու հայրենասիրական զգացումներ:

Ա. Քսպոյանի «Ջավախքի կանչը» գրքի առաջաբանի հեղինակը իրավացի է, երբ գրում է, թե «Մեր հնագույն բնօրրանի ազգագրական պարարվեստը մոռացության մոխիրներից ազատողն ու շողշողացնողն է Ալիկը. վաղնջական «Բուլուլը», «Կլոր պարը», «Ետ ու առաջը», զուտ ջավախքյան այլ շուրջպարեր է «գտնում» ու բեմադրում նա՝ վերահաստատելով, որ ջավախսահայերի պարարվեստը ոչ թե դարերի, այլ հազարամյակների պատմություն ունի»<sup>2</sup>:

Ցավոք, Ախալցխա-Սամցխե հատվածում, չնայած գերակա հայկական ազգաբնակչությանը, չկան մշտական գործող հայկական պետական մշակույթի տներ<sup>3</sup>: Այդ շրջաններում (Ադիգեմ, Ախալցխա, Ասպինձա, Բորժոմ) Աշուղ Ալիք Ջավախքի կապը միայն հայկական դպրոցների հետ է, իսկ վրացական մշակույթի տների հետ, բացի մեկ երկու փոխադարձ այցելություններից, չկան այլ հարաբերություններ: Ծալկան նույնպես իր 13 հայկական գյուղերով չունի մշտական գործող ոչ մի մշակութային օջախ: Ներկայում, չնայած հայկական բնակչության դեռևս գերակայությանը, Ծալկայի մշակութային միջոցառումները սահմանափակվում են միայն անվանի գուսան Հավասու օրվան նվիրված տոնակատարություններով: Աշուղ Ալիք Ջավախքի ծրագրերից մեկն էլ այն է, որ Ծալկան դուրս չմնա ջավախքյան միջոցառումներից, վերադառնա ջավախքյան մշակույթի աշխարհ, սակայն տեղաշարժվելու միջոցնե-

---

<sup>2</sup> Հատված Ա. Քսպոյանի «Ջավախքի կանչը» (Թբիլիսի, 2005) գրքի առաջաբանից, էջ 4:

<sup>3</sup> Քիչ թե շատ մշակութային-ազգապահպան գործունեություն է ծավալում Ախալցխայի երիտասարդական կենտրոնը (հիմնված 2006թ.՝ տեղի երիտասարդության նախաձեռնությամբ և Հայ Օգնության Միության Ջավախքի օգնության ծրագրերի համծնախմբի օժանդակությամբ: Սա Սամցխեի տարածքում գործող միակ երիտասարդական-մշակութային հայկական օջախն է, որտեղ այցելում են տեղի արվեստասեր ու շնորհալի երիտասարդները՝ փորձելով այդպիսով անսասան պահել ու համահայկական փառատոներում ներկայացնել պատմական Ախալցխայի ոգեղեն մշակույթը):

րի բացակայության պատճառով աշուղի կոլեկտիվների ձայնն այդպես էլ չի հասնում այդ վայրեր: Մեր գրույցի ժամանակ նա ասաց. «Ես մեծ սիրով կընդունեմ Ջավախքի ամեն անկյունից՝ Ախալցխայից, Ասպինձա-Դամալայից, Նինոծմինդայից, Ծալկայից ու այլ վայրերից եկած հրավերները, սակայն տեղաշարժվելու տարրական միջոց անզամ չունենք, որը խիստ դժվարացնում է մեր գործը: Մենք, մեր ազգայինից բացի, մեր հանդիսատեսին ներկայացնում ենք նաև այլ ժողովուրդների պարեր: Օրինակ՝ մեր աշակերտները Քոբուլեթիում, բացի հայկական ազգային-ժողովրդական պարերից, հայ ու վրացի հանդիսատեսին ներկայացրեցին նաև վրացական պարեր՝ բարձրարվեստ կատարումով զարմացնելով անզամ վրացի պարուսույցներին»:



*Մշակույթի տունը ք. Ախալքալաքում*

Սամցխե-Ջավախք-Ծալկա տարածաշրջանում, փաստորեն, Ախալքալաքից բացի, մշտական գործող հայկական մշակութային տուն գոյություն ունի միայն Նինոծմինդայում:

Օրակարգային է նաև մասնագետ ուսուցիչների խնդիրը. վրաստանում նման մասնագետներ պատրաստելը անիրական է, իսկ ՀՀ-ից Ջավախք եփկողներ չկան: Գյուղերում նույնպես մշակութային ծրագրեր իրականացնողները Ախալքալաքի մշակույթի տան սակավաթիվ մասնագետնրն են՝ տեղի ակումբների վարիչների աջակցությամբ:

ՀՀ-ում (Երևանում) շատերը Ջավախքի աշուղների անուններով աշուղական դպրոցներ են հիմնում, ընդ որում՝ միայն ջավախքցի երեխաների համար: Սակայն փաստ է, որ Երևանում սովորող շատ

քիչ ջավախահայ երեխաներ են վերադառնում Ջավախք: «Եղբայր, եկեք այստեղ՝ Ջավախքում զարգացնենք այդ ամենը, Երևանում կամ ԳԳ-ում թող լինեն Ջավախքի աշուղների անվամբ դպրոցներ, օրինակ՝ Ջիվանու անվան աշուղական հրաշալի դպրոցը, որը ստեղծել է պրոֆեսոր Թովմաս Պողոսյանը, սակայն եթե ուզում ենք տեղում մշակույթ զարգացնել, ապա պետք է աշխատենք այստեղ՝ Ջավախքի հողի վրա», - շարունակում է Աշուղ Ալիք Ջավախքը:

Ախալքալաքի ակումբների միությունը, իր բոլոր կուլեկտիվներով, գործում է Ախալքալաքի մշակույթի տան շենքում, որն ունի պայմանների բարելավման կարիք: Աշուղական երգի դպրոցը արդեն մեկ տարի է, ինչ գործում է պետական միջոցներով. ուսուցիչների համար աշխատավարձ է սահմանված Ախալքալաքի շրջանային բյուջեից:

Աշուղ Ալիք Ջավախքը մասնագետ-ուսուցիչների խնդրում նույնպես գտել է ելքը. տարբեր աշակերտներ, որոնք ավարտում են այս կամ այն կուլեկտիվում, տեղում աշխատում են որպես ուսուցիչներ:

Մեր օրերում Ջավախքի մասին խոսողները շատ են, նրան հեռվից կարոտողները՝ նույնպես: Սակայն Ջավախքը դրանով չի ապրի, չի ապրի անգամ այն դեպքում, երբ այնտեղ այցելենք մի քանի տարին մեկ անգամ, մի խաչքար կամ եկեղեցի կանգնեցնենք, մի քանի մոմ վառենք, բարևենք գյուղի ծերերին, հիշենք մեր մանկությունը և... հեռանանք: Ջավախքի հիմնախնդիրն այսօր, լինելով քաղաքական, հանդես է գալիս լեզվական-մշակութային տեսքով: Ուստի՝ Աշուղ Ալիք Ջավախքի գործունեությունն այս իմաստով դադարում է լինել սոսկ մշակութային: **Այն առաջնահերթորեն հայրենապահպան գործ է:**

Պատմությունը ցույց է տվել, որ այն ամենը, ինչը կառուցվում է օտար հողի վրա, երկար կյանք ունենալ չի կարող: Օտար հողի վրա կառուցած կյանքը ևս շատ մոտ է կանգնած մահվանը: Ավելի ստույգ՝ այդ կյանքը բարոյապես վաղուց է վախճանվել, իսկ սոսկ ֆիզիկական գոյությամբ մի՞թե կարելի է կյանք անվանել: Մարդ հավերժանում է միայն իր հայրենիքում, ինչպես իր գործով Ջավախքում հավերժացել է արդեն մեզ հարազատ դարձած Աշուղ Ալիք Ջավախքը:

Աշուղ Ալիք Ջավախքի երգերի մեծամասնությունը նվիրված է Ջավախքին: Այդ երգերը բխում են Ջավախքի լեռներից, ժայռերի ծերպերից, կարկաչափոս գետերից, լեռնային հրաշագեղ լճերից, ծաղկահովիտներից, հնամյա բնակավայրերից ու հայկական ճարտարապետության քարեղեն վկաների խորշերից, վերջապես՝ պարզ ու շիտակ ջավախքցու տանջված, բայց անկոտրում սրտերից՝ իլուր աշխարհի հաստատելով ճշմարտությունը, որ **Ջավախքը հա-**

**յության հայրենիքն է:** Հայրենանվեր աշուղը տարիներ առաջ Կարսում նույն հավատով ու համոզմունքով թուրք հասարակության առաջ իր գիլ ձայնով չերկմտեց երգելու հանրահայտ «Ղարս, Ղարս, Ղարս, ... Ե՞րբ պիտ նորից Մայր Հայաստանին վերադառնաս» երգը:

Սիրելի՛ աշուղ, թող քո գործը օրինակ ծառայի բոլոր ջավախահայերին համար, քո «Ջավախքի կանչերը», հասնեն բոլոր տարագիր ջավախքցիների ականջներին, թող դարձի բերեն, հայրենական հողի վրա մեկտեղեն բոլորին: Թող քո երգերը համայն աշխարհի ջավախահայության համար սթափության կոչ, ահազանգ և, ի վերջո, տունդարձի առաջնորդներ դառնան:

## ՍԱՆԱՍԱՐՅԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ\*

### Լևոն ԳԱՐԱԳԱՇԵԱՆ

Հետզհետե մոռացության կը տրվի կրթական այս հաստատությունը, որ 32 տարի անընդհատ գործած է հայ կյանքին մեջ:

Անոր մասին գրված շատ քիչ տեղեկություններ կան. Պոլսոս Խնամակալության տեղեկագիրներեն և մեկ-երկու եվրոպացիներու թռուցիկ հուշերեն զատ, Մխիթարյան հայրերեն Քոստան վարդապետն է, որ քանի մը էջ նվիրած է Սանասարյանին իր «Բարձր Հայք» անունով գործին առաջին հատորին մեջ:

Այս հաստատության հիմքը, կտակը, որ մինչև հիմա ծանոթ պետք էր ըլլար ժողովուրդին, բնավ մեջտեղ չկա, և հայությունը ճշգրիտ ոչինչ չգիտե անոր մասին:

Ներկա գրությունը ուսումնասիրություն մը չէ ոչ ալ պատմությունը այս հաստատության. երախտավորի պարզ հուշերն են միայն, թերևս կիսկատար, բայց գրի առնված այն նպատակով, թե օգտակար պիտի ըլլան ապագա պատմաբանին:

### ՄԿՐՏԻՉ ՍԱՆԱՍԱՐՅԱՆ

Հիմնադիր բարերարն է մույն հաստատության: Ծնած է Թիֆլիս, 1818-ին, վանեցի հորե և մորե: Կարդալ և գրել սովորած է Աբամելիք քահանային քով: 6 տարեկան հասակին մեջ հաճախած է Ներսեսյան վարժարան, ուր առած է նախնական կրթությունը: Չլրացուցած այս վարժարանի ընթացքը՝ ուզած է Կարնո ճամփով անցնիլ Վենետիկ՝ բարձրագույն կրթություն ստանալու:

1835-ին կորսնցնելով իր հայրը, Մկրտիչ Սանասարյանին խնամակալ կընտրվի իր մորեղբայրը՝ Երեմիա, որ զինքը ետ կը կեցնե Վենետիկ երթալու նպատակեն և ռուսական բանակին մեջ զինվոր կարծանագրե: Մինչև 1845, այսինքն՝ 10 տարի զինվորական կյանքի մեջ կը մնա:

\* «Հայրենիք», մարտ, 1928, մարտ, N 5 (65), էջ 91-102:

«Հայրենիք», ապրիլ, 1928, N 6 (66), էջ 102-111:

Այդ այն շրջանն է, երբ կապստամբին Կովկասի լեռնականները, չերքես և չեչեն: Մկրտիչ մեծ դեր կը կատարե այդ դժվարին պայքարին մեջ ու պաշտոնի բարձրացման հետ կստանա նաև Ս. Գևորգի պատվանշան: Ծանրապես վիրավորված՝ Մկրտիչ կը թողու գինվորական կյանքը՝ հանգստյան թռչակ ստանալով ցմահ:

Մորենական մեծ հոր մահեն ետք Մկրտիչ չի կրնար տիրանալ իր բաժին ժառանգության: Կը հաստատվի Պետերբուրգ 1849-ին, ուր կը ծանոթանա «Կավկազ և Մերկուրի նավային ընկերության» վարչության հետ, որ կը գործեր Վոլգա գետի և Կասպից ծովու վրա: Իր ունեցած դրամով բաժնետոմսեր կը գնե նույն ընկերութենեն և, շնորհիվ իր ընդունակություններուն և զորեղ կամքին, կընտրվի ընկերության տնօրեն, պաշտոն մը, զոր կը շարունակե ցմահ:

1889-ին կը տոնվի Մկրտիչ Սանասարյանի քսան և հինգ ամյա հոբելյանը և ի պատիվ իրեն ընկերության նավերեն մին իր անունով կը կոչվի: Բախտը կը ժպտի իրեն և մեծ հարստության տեր կը դառնա:

1860-են սկսած իր դուռը բաց է եղեր արդեն բարձրագույն կրթություն ստանալու միտում ունեցող երիտասարդներու առջև: Ան թռչակ կը կապե բարձրագույն վարժարաններու ուսանողներուն և սաներ կընտրե անոնցմե:

Իր սեփական նպատակներեն մին եղած է ունենալ հայ օրինակելի կրթարաններ, այդ նպատակով ալ Բարձր Հայքի կեդրոնին՝ Կարնո մեջ, 1880-ին կը հիմնե իր վարժարանը Օրմանյան վարդապետի առաջնորդության օրոք: Սանասարյան նյութապես կաջակցի նաև ուրիշ կրթական հիմնարկություններու. 1885-ի հուլիս ամսուն կայցելե իր վարժարանը, ընկեր ունենալով Ներսեսյան վարժարանի տնօրեն Արշակ Նահապետյանը: Հոն կը մնա երկու շաբաթի չափ ու կը մեկնի:

Վարժարանին գոյությունը ապահոված է 120.000 լիրայի մոտ գումարով մը, զոր կը զետեղե զանազան ազգերու դրամատուներուն մեջ: Վարժարանին տևականությունը ապահովելու համար, ի կենդանության, կտակակատար կընտրե ռուս արտաքին գործերու բարձրագույն պաշտոնատար և քաջահմուտ արևելագետ Կարապետ Եզյանցը, որ իր հարգելի և մտերիմ բարեկամն եղած է և միևնույն ատեն խորհրդակիցը կտակին և անոր հարակից բոլոր գործերուն մեջ: Կտակով կը հաստատե նաև Կ. Պոլսո մեջ օրվան Պատրիարքի նախագահությանը խնամակալություն մը, ցմահ պաշտոնավարելու իրավասությունը ունեցող անդամներով:

Ասոնցմե զատ, Սանասարյան վարժարանին նյութական մատակարարությունը հսկելու համար Հոգաբարձություն մը կը կազմե Կարնո մեջ օրվան Առաջնորդին նախագահությամբ: Իսկ կրթական

գործը կը թողու Ուսուցչական մասնաժողովին, որուն իրավասութ-  
յունն ունեին իր սաներն ու բոլոր գլխավոր ուսուցիչները:

Այս կարգադրություններն ընելէ ետք, Սանասարյան գործն կը  
քաշվի ու կը փոխադրվի Նիս, դարմանել տալու համար իր հիվան-  
դությունը: Հոն չհաջողելով, կանցնի Փարիզ և, հակառակ մեկէ ա-  
վելի բժիշկներու խնամքին, կը կնքէ իր մահկանացուն 1890, մայիս  
19-ին, 72 տարեկան հասակին մեջ:

Իր աճյունները մեծ շուքով կը փոխադրվին Թիֆլիս և կամ-  
փոփվին Թիֆլիսի Մայր եկեղեցվո գավիթին մեջ:

Հայ ազգը զայն մեծարելու համար աղա մակդիրը կը կցն անոր  
անունին, Աղա Մկրտիչ Սանասարյան կոչելով զինքը:

\* \* \*

Կտակակատար Կարապետ Եզյանց կը շարունակէ վարժարա-  
նի վերին հսկողության գործը, կը բարձրացնէ անոր ծրագիրը և  
մեծ ուժ կուտա գրաբար լեզվին, զոր կանվանէ եղեր հայուն ամե-  
նաթանկագին գանձը, ու կտակակատարի կամքը գործադրած ըլ-  
լալու խղճի հանգիստով կը կնքէ մահկանացուն 1905-ին և վարժա-  
րանը կանցնի Կ. Պոլսո խնամակալության, որ մինչև պատերազմ  
կը ղեկավարէ զայն ու տակավին կը պահպանէ այդ իրավասությու-  
նը, իր ձեռքին տակ ունենալով Սանասարյանի բյուջեին մնացորդ  
մասը:

Սանասարյանի կտակին ուշագրավ մասերն են. «վարժարանը  
պահպանել Հայաստանի սահմաններուն մեջ և պատրաստել տոհ-  
մային դաստիարակությամբ օժտված կիրթ երիտասարդներ, որոնք  
առավելապես ծառայեն ազգային կրթական գործին»:

## **ՎԱՐԺԱՐԱՆԻՆ ԲԱՑՈՒՄԸ**

Երջանկահիշատակ բարերարը համոզված է եղեր, թե իր ցեղը  
ծաղկյալ վիճակ կրնա ունենալ միայն իր ազգային մշակույթով,  
ուստի իբրև առաջին նպատակ, թե՛ Թուրքիայեն և թե՛ Ռուսաստա-  
նեն կընտրէ հայ ընդունակ երիտասարդներ ու կը դրկէ զանոնք եվ-  
րոպական համալսարաններ ուսուցչության պատրաստվելու հա-  
մար. կիրագործն իր երկրորդ նպատակը՝ վարժարանը հիմնելով:  
Օրմանյան վարդապետի առաջարկով Կարինը լավագույն վայրը  
կը նկատէ իբրև հայկական նահանգներու կեդրոն:

1881-ի հոկտեմբերին է, որ իր սաներեն Արաբկիրի Վաղշեն  
գյուղացի Պողոս Դելփյան, մասնագետ ուսողական գիտություննե-  
րու, և սամսոնցի Հովսեփ Մաղաթյան, մասնագետ բնական գի-

տություններու, լրացնելով Ենայի համալսարանին ընթացքը, կը վերադառնան Կարին: Օրմանյան վարդապետ մեծապէս կաջակցի անոնց իր Առաջնորդի հանգամանքովը:

Առաջին տարին կունենան միայն 12 աշակերտ և դասավանդությունները տեղի կունենան Առաջնորդարանի շէնքին մեջ: Դժբախտաբար նույն տարին, Դելփյան, ծանր հիվանդութենէ մը բռնվելով, կը կնքէ իր մահկանացուն, լավ անուն և հիշատակ ձգելով իր ետին:

1882-ի փետրվարին Եվրոպայեն կուգան բարերարին մյուս երկու սաները՝ Գևորգ Աբուլյան և Սարգիս Սողկյան, ու դասախոսությունները կը սկսին:

Եթէ հիշողությունս ինձ չի դավեր, ասոնց հետ կան եղեր նաև ուրիշ երեք սաներ՝ պատմագետ Ստեփաննոս Պալասանյան և մանկավարժ Մանդինյան և երրորդը չեմ հիշեր, որոնք չհամաձայնելով Թուրքիա գալ, անցած են Կովկաս ու դարձյալ կրթական մշակներ դարձած:

1882-ի օգոստոսին, Սանասարյան հաստատությունը Ազգային Առաջնորդարանէն կը փոխադրվի Կարնո Աղջկանց Զոփսիմյան վարժարանի շէնքը, ուր կը մնա մինչև 1912, և այդ շէնքը կը կոչվի Սանասարյան վարժարան:


Մինչև 1886 շէնքը ծրիաբար կը գործածվի, սակայն տեղվույն ազգային վարժարաններուն նպաստելու համար բարերարը 100 լիրա տարեկան վարձք կը նշանակէ այնուհետև:

1887-ին, Սանասարյան կարգ մը նկատումներով, ուզած է վարժարանը փոխադրել Խարբերդի Սորսորի վանքը, ուր հողեր ևս գնել տված է, սակայն շէնքին կառուցումը չիրագործվելով, հաստատությունը կը մնա ընդմիշտ Կարին, հոն ալ, հակառակ գնված հողերուն, սեփական շէնք ունենալու ձեռնարկները դարձյալ կը մնան ապարդյուն, որովհետև հնարավոր չըլլար կայսերական իրադէ ձեռք բերել:

## ՎԱՐժԱՐԱՆԻ ՇԵՆՔԸ

Եկեղեցիին կողքին, Կարնո հյուսիսային անկյունը, մոտավորապէս 300 մետր լայնությամբ և 350 մետր երկայնությամբ ընդարձակ շրջափակ մը, որուն ճիշտ մեջտեղը դրված է վարժարանին մայր շէնքը սրահի մը վրա դեմ առ դեմ վեց դասարաններով:

Շէնքին ավագ դռնէն ներս կը մտնես, դեմդ կը կենա երկաթյա ճաղերով շրջապատված բարերարին մարմարյա կիսանդրին, որուն պատվանդանին վրա գրված է ոսկէ տառերով. «Առ Մկրտիչ Սանասարեան իւր երախտագէտ վարժարանը, 1818-1890»:



ՍԱՆԱՍԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Այս կիսանդրին շինված է սաներու մեջ հանգանակված 72 ոսկի գումարով:

Սրահի երրորդ բաժինը թանգարանին հատկացված է, ուր ապակեփակ պահարաններու մեջ դրված են հանքաբանական, կենդանաբանական և մարդակազմական հարուստ նյութեր:

Այս սրահի ճակատին վրա կը բացվի ընդարձակ ննջարանը, ուր է հանդեսներու հատուկ բեմը և հսկող ուսուցչի ննջարանը՝ միջնորմով մը բաժնված աշակերտներու մասեն:

Շենքի ճակատի երկու կողմերը պարտեզներն են, աջակողմը՝ թզուկ մայրիներու փոքր պուրակը. շենքին աջ կողմը մեծ պարտեզն է, ծաղկաստան և հաղարջենիք, շրջապատը բոլորակված հսկա բարդիներով և ուռենիներով:

Շենքին ետևն է մարգարանը և ծախ կողմը՝ սառուղին (չմշկատեղի), ուր ձմռան եղանակին կը չմշկեն աշակերտները:

Շրջափակին արևելյան անկյունն է նոր շենքը, շինված վարժարանին ծախքով, որուն ստորնահարկը հատկացված է մեկ կողմեն՝ գրադարանի և դասարաններու և մյուս կողմը՝ մառանի, իսկ վերնահարկը՝ մասամբ վարժարանի մեջ բնակող տեսչին և մասամբ ալ հիվանդանոցին:

Շրջափակին ճիշտ հյուսիսային անկյունը շինված են փուռ, խոհանոց, լվացարան և բաղնիք, իսկ անոնց ճիշտ հակառակ կողմը՝ արհեստանոցներ և տարրաբանական աշխատանոց:

Պետք է ըսել, թե Սանասարյանի շենքը չէր օժտված մանկավարժական և առողջապահական բոլոր հարմարություններով:

## ՎԱՐԺԱՐԱՆԻՆ ԱՍՏԻՃԱՆՆ ՈՒ ԾՐԱԳԻՐԸ

Սանասարյան առաջին տասնամյակին ունեցած է իննամյա դասընթացք և համապատասխան է գերմանական դաստիարակչական (Erziehungsschule) միջնակարգ վարժարաններու աստիճանին:

Երկրորդ տասնամյակին ավելի բարձրանալով, վարժարանը համապատասխանած է գերմանական Realgymnasium կոչված բարձրագույն վարժարաններուն և ունեցած է յոթնամյա ընթացք:

Վարժարանի հիմնադրության թվականեն քսան տարի ետք միայն՝ Կարնո կրթական տնօրենության պաշտոնագրով կարելի եղած է ճանջցնել տալ զայն իբր բարձրագույն նախակրթարան և միջնակարգ վարժարան (ոյուշտիե և իտատիե):

1886-են սկսած, Սանասարյան ունեցած է արհեստանոցներ՝ կահագործության և կոպղարարության բաժիններով: Արհեստանոցներու ուսուցիչները պատրաստված էին Պետերբուրգի արհեստագիտական վարժարանին մեջ, վարժարանին ծախքովը:

Կահագործության ուսուցիչն էր Արամ Վահանյան (կարնեցի), իսկ կոպղարարության ուսուցիչը՝ Գևորգ Գառնակերյան (կովկասցի): Երկուքն ալ վարպետ վերջին ծայր նուրբ աշխատության:

Ամբողջ շրջանին, արհեստանոցներեն ելած են 69 արհեստավորներ, որոնք թե՛ Կարնո և թե՛ մյուս հայաբնակ քաղաքներուն մեջ հռչակ հանած են որպես զնահատելի վարպետներ:

Օսմանյան Սահմանադրության տարիեն, Սանասարյան հաստատությունը, ազատ զգալով ինքզինքը կաշկանդումներե, պաշտոնապես հաստատեց լսարանական դասընթացք եռամսյա շրջանով, որուն հետևեցան ոչ միայն աշակերտներ, այլև քաղաքեն ուսուցիչներ և կարգ մը պաշտոնյաներ:

Ուժ տալու համար գիտական աշխատություններուն, Հաստատությունը 900 թվականներեն առաջ հիմնած էր Տարրաբանական առանձին աշխատանոց՝ հարուստ նյութերով և գործիքներով: Գ. դասարանեն սկսած, ընտրյալ սաներ կարգ մը դասեր զանց ընելով, ամեն օր կեսօրեն ետք կը հետևեին այդ աշխատության մասնագետ ուսուցչի մը հսկողությամբ:

Պատրաստականեն մինչև երրորդ դասարան բարձրագույն նախակրթարանի ծրագիրը կավարտեր: Թվաբանությունը վերջացած ըլլալով, կը սկսեր գրահաշիվ և երկրաչափություն, հայերեն աշխարհաբարի տեղ բանահյուսություն և զրականություն՝ հարակից շարադրության դասերով, և մատենագրություն, իսկ գիտություններեն՝ բուսաբանություն, կենդանաբանություն, մարդաբանություն, տարրաբանություն և բնագիտություն՝ իրենց լայն առու-

մով, նաև քաղաքային տնտեսություն, օրենսգիտություն և թուրքերենն ֆրանսերեն փոխադարձ թարգմանություն:

Եվրոպական լեզուներեն կավանդվեր ֆրանսերեն և գերմաներեն, վերջինս կամավոր էր և կը սկսեր երկրորդ դասարանեն:

Հայերեն գրաբարն ալ այս դասարանեն սկսելով՝ կը վերջանար բարձրագույն դասարանին մեջ մատենագիրներու ուսումնասիրությամբ:

## ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ

Սանասարյան միևնույն ատեն ուներ երեք տեսուչ՝ Գևորգ Աբուլյան, Սարգիս Սողիկյան և Հովսեփ Մադաթյան, երեքն ալ բարերարին որդեգիր սաները և անոր ծախքովը Եվրոպայի մեջ դաստիարակված: Ասոնք հավասար իրավունքներ ունեին, խորհրդակցաբար կը վարեին վարժարանը և յուրաքանչյուրը կավանդեր 16 ժամ դաս:

Բարերարը իր մահեն առաջ հանձարարած էր կտակակատար Եգյանցին, որ կանոնագիր պատրաստե. այդ կանոնագրին մեջ ճշտված են երեք սաներու պաշտոնները և ատոր համաձայն անոնք իրենց առանձին պաշտոններն ունեին ու եթե անոնցմե մին մեռներ, մյուսները պիտի շարունակեին գործը, մինչև որ մեկ հոգի մնար:

**Պրոֆ. Գևորգ Աբուլյան** - Թիֆլիսցի հայտնի ընտանիքի գավակ. որդեգիր սան և ապահովված կենսաթոշակով: Կը բնակեր վարժարանին մեջ ընտանիքով ու ստանձնած էր վարժարանին կարգապահական և տնտեսական բաժիններու ղեկավարությունը:

Ուներ վայելուչ արտաքին մը. միջահասակեն վեր, երկար մազերով, երկճղի մորուքով պատվական մարդ մը: Հայտնի էր իբրև լեզվագետ և հմուտ էր, ի միջի այլոց, անգլերեն, գերմաներեն և ֆրանսերեն լեզուներուն: Քաջահմուտ էր հայերեն գրաբարին, մատենագիրներեն շատ մասեր բերնուց կըսեր: Ուսուցիչ էր պատմության, աշխարհագրության, տիեզերագիտության և երբեմն գերմաներենի: Քաջ ջութակահար և առաջին դասերը ինքը ավանդած:

Լինչ իր ճամփորդության ընթացքին Կարինեն անցնելու ատեն Սանասարյան կայցելե և ներկա կըլլա երաժշտության դասերուն, որոնցմե գոհ մնալով կըսե իր գրքին մեջ.

«Այդ դասը մեծ խնամքով կավանդվեր: Տեսա բազմաթիվ աշակերտներ, որ լավ ջութակ կը նվագեին»:

Աբուլյան շատ հարգված ու սիրված էր վարժարանին մեջ իր հմտության և վարչագիտության շնորհիվ: Ձիմքը անվանած էինք

գիտությանց շտեմարան: Վարժարանին մեջ այն դեմքերեն էր, որ բնավ չէին հիւննար. միշտ նորություններ ուներ:

Պատրաստած էր պատմության, աշխարհագրության և տիեզերագիտության սովարահատոր ձեռնարկներ:

Հաճելի և հետաքրքրական դասավանդության եղանակ ուներ. դասերը կը համեմեր անեկդոտներով և պատմական ասացվածներով:

Եվրոպական ցամաքամասի գլխավոր երկիրները անծամբ պտտած ըլլալուն՝ գրավիչ էին իր աշխարհագրության դասերը:

Նիստ ու կացով, վարվելակերպով, խոսքով ու գործով կենդանի օրինակ մըն էր վարժարանին մեջ. հարգված էր որպէս մեծ մարդ և արժանի էր այդ հարգանքին: Միակ մարդն է, որ 32 տարվան երկար ժամանակաշրջանի մեջ երբեք չէ խոնարհած իր բարձրութենէն:

Բարերարի մահվան տարեդարձին ինքն էր անոր կենսագրությունն ընողը. յուրաքանչյուր տարի տարբեր եղանակով կը ցուացներ անոր պատկերը, անոր անհատականությունը: Բարերարի Կարին այցելության միջոցին, Աբուլյան ծանր հիվանդութենէն մը դեռ նոր ապաքինած, հագիվ կրնա մինչև արտաքին դուռը երթալ դիմավորության:

Բարերարը երբ կը տեղեկանա անոր տկարության՝ սրտմտելով կըսէ.

«Աբուլ, դուք իրավունք չունիք հիվանդանալու, որովհետև բան մը չի պակսիր ձեզի»:

Աբուլյան երբեք չի մոռնար այս դեպքը և շատ հաճախ կը կրկներ զայն ներքին հուզումով մը: Իր խրատներն ու խորհուրդները ազդու կը դարձնէր պատմական օրինակներով: Ողջամիտ էր վերջին ծայր և որոշումներն անդառնալի իրեն համար:

Անգամ մը պետք էր հոգաբարձուներեն մեկուն զավակը արտաքսել վարժարանէն իր անուղղա նկարագրին պատճառով: Դուրսէն դիմումներ, միջնորդություններ և նույնիսկ հոգաբարձուին սպառնալիքն ու հրաժարականը ազդեցություն չկրցին ընել: Հրապարակավ քակեց անոր զավկին դպրոցական կաշիէ գոտին և ընդմիշտ հեռացուց վարժարանէն:

Ծայրահեղորեն կատեր ամեն անոնք, որ ազգային իշխանությանց դէմ անարդար քննադատություն կընէին.

«Մենք եթէ չհարգենք, օտարները բնավ չպիտի հարգեն»,- կըսէր:

Թունդ ազգասեր մըն էր, զգացում մը, որ պատմական դեմքերու նկարագիրը հանելու ատեն պայծառորեն կը զգացվէր:

Դժբախտաբար, Աբուլյանի ձեռնարկները առանց հրատարակության մնացած են, ձեռնարկներ, որ արդյունք են երկար տարիներու ուսումնասիրության և փորձառության:

Վերջին պատերազմը չհայտարարված՝ Կարին էր. որպես ռուսահպատակ՝ հյուպատոսարանի հրավերով Կովկաս մեկնեցավ:

Այժմ կը գտնվի Ֆրանսիա:

**Պրոֆ. Յովսեփ Սադաթյան** - Սամսոնցի էր, բարերարին որդեգիր սաներեն երկրորդը, ապահովված կենսաթոշակով: Միջահասակեն քիչ մը վար, փայլուն մազերով, երկար և կլոր մորուքով. պզտիկ ձեռքերով և պզտիկ ոտքերով ազդեցիկ մարդ մը: Հմուտ գերմաներենի և մասնագետ բնական գիտություններուն: Քաջ մակավարժ էր և ոչուրըմբռնելի դասախոս, մասնավանդ փոքրիկ կարգերուն համար:

Արջառի և ոչխարի, կատվի և շունի, ճնճղուկի և հավի, ինչպես նաև առողջապահական մախնական գիտելիքներու իր դասերը հետաքրքրական էին և շինիչ մանուկներու համար: Բուսաբանության, կենդանաբանության և անդամազնության հմտալից դասերը բարձրագույն կարգերու մեջ՝ պատվաբեր: Չկար աշակերտ, որ բուսաբանական և կենդանաբանական հավաքածոներ չունենար:

Ինքը կազմակերպած էր վարժարանին թանգարանը. լավ գիտեր կենդանիներ և թռչուններ լեցնելու արհեստը: Կարնո կլիմայի բոլոր կենդանիները կային թանգարանին մեջ. արջը իր կորյուններով, աղվեսը իր խորամանկ երևույթով, երզնցիկ թռչուններ իրենց բույներով և հավկիթներով, բազեն օդին մեջ սավառնելու վիճակով, և վերջապես, ցինն ու ուրուրը ճյուղերու վրա թառած, կենդանաբանական պարտեզի պատրանքը կուտային թանգարանին:

Սադաթյան վերջին ծայր հոգածու վարժարանին բոլոր իրերուն, հսկողն էր պարտեզներուն, ծառերուն ու ծաղիկներուն. աշակերտներուն ածուներ բաժնած էր և լավ տունկեր հասցնողները կը վարձատրեր նվերներ տալով անոնց:

Բուսաբանության, կենդանաբանության և մարդակազմության ձեռնարկներ ուներ ամեն դասարանի հատուկ: Կը քննադատեր Մենևիշյանը, մասնավանդ անոր տարօրինակ բառերը: Իր ձեռնարկները հայտնի էին հայեցի բառերուն համար, զորս ընտրած էր գավառաբարբառները խղճի մտոք ուսումնասիրելով և բաղդատելով: Սադաթյանի ձեռնարկներն ալ չհրատարակվեցան:

Ինք որպես տեսուչ ստանձնած էր թուրք կառավարության մոտ վարժարանի հարաբերական գործերը: Այս պաշտոնը անհրաժեշտ էր համիդյան այն շրջանին, երբ շատ խիստ հսկողության տակ էր Սանասարյանը: Սիրված էր թրքական բոլոր շրջանակներեն: Ան

շատ անգամ ստիպված էր բացակայիլ իր դասերեն կառավարության քով կատարելիք դիմումներուն պատճառով:

Այս պարագան քննադատության պատճառ եղած էր իր անունին շուրջ: Ճանչցված էր որպես թրքասեր մարդ և իրավամբ ալ Կարնո վերջին հայ երեսփոխանն եղավ օսմանյան պառլամենտին մեջ՝ ընտրված թուրքերու կողմէ:

Ինք փեսա էր Փաստրմաճյան ընտանիքին, որուն վերապրողներուն կողմէ շատ քննադատվեցավ հետպատերազմյան շրջանին:

Չմոռնամ հիշել, թէ պրոֆ. Մադաթյանի Նվարդ անունով աղջիկը, հետևելով Սանասարյանի ընթացքին բացառաբար, վկայական ստացավ 1904-ին: Հայտնի դաշնակահար էր և սովրած վարժարանին մեջ:

**Պրոֆ. Սարգիս Սողկյան** - Խարբերոցի, դարձյալ որդեգիր սան բարերարին և ապահովված կենսաթոշակով: Սովորականեն քիչ մը մեծ գլխով, մազերը միշտ մեքենայով խուզված, կարճլիկ մորուքով, մարմնեղ և վայելուչ մարդ մը: Հմուտ անգլերենի, ֆրանսերենի և գերմաներենի, քաջահմուտ՝ հայերենի և երաժշտության, ուսուցիչ՝ ֆրանսերենի, կրոնի և դաշնակի, ու օժտված փայլուն պերճախոսությամբ:

Այս իմաստուն մարդը, սակայն, արտաքինով շատ անխնամ էր, ֆեսն ու զգեստները օրերու փոշիովը ծածկված և տանը հեռավորությամբ պատճառով սովորաբար առաջին դասաժամերեն 5-10 րոպե միշտ կը խորեր:

Ստազբաղ և հոգվով չարչարված մարդու տպավորությունը կը ներ: Իր տունը շինել տալու ատեն, շատ անգամ դասերու միջոցին աշակերտներուն չափել կուտար դասարանին լայնքն ու երկայնքը:

Դասերու ատեն կը պտտեր սովորաբար, և այդ պատճառով ալ աշակերտներ կը խուսափեին իրմե ու չէին օգտվեր:

Կրոնի դասերը կավանդեր գրաբար Ավետարան կարդացնելով. բովանդակությունը պատմել տալէ ետք ուսումնասիրության կը սկսեր: Հոս կը փոխվեր Սողկյան և կը մտներ իր բուն դերին մեջ. երևան կուզար փիլիսոփա-բարոյախոս ուսուցիչն ու կառնիքներ աշակերտությունը:

Կը պատմվեր, թէ իր ընկեր Մադաթյանի սպառնալիքներուն տակ ձեռնբափ եղած էր գործե և անփույթ կյանք կը վարեր:

Ծայրահեղորեն ոգևորիչ և հուզիչ եղած են իր հուսկ բանքերը արտասանված ընթացավարտներուն, իր բանախոսությունները հանդեսներու մեջ և իր դամբանականները դազաղների վրա:

Կարելի չէ մոռնալ այն հուզիչ դամբանականը, զոր արտասանեց ան հանգուցյալ փոխտեսուչ Գրիգոր Ջաքարյանի դազաղին

վրա 1906-ին Կարնո գերեզմանատանը մեջ՝ արցունքի մեջ խեղդելով սգակիր հանդիսականները:

Սողիկյան սիրահար էր բնության. շատ անգամ ինքը անձամբ կառաջնորդեր աշակերտությունը պտույտի, կը խոսեր, կը նկարագրեր, կը սովորեցներ: Իր տան կից պարտեզին մեջ կը հասցներ Կարնո կլիմային անվարժ բույսեր. անհուն ոգևորությամբ կը խոսեր իր կարոսներուն, ծնեբեկներուն, գինեբուկներուն և թրաշուշաններուն վրա:

1908-ին, երբ վարժարանի լսարանական դասընթացքը հաստատվեցավ պաշտոնապես, Սողիկյան հոն կը դասախոսեր փիլիսոփայության և գրականության պատմություն:

1915-ին Կարին էր: Գերման հյուպատոսարանի զինվորական կցորդ Ֆոն Շոյպներ կը բնակեր անոր տան երրորդ հարկը: Տեղահանության միջոցին հայերը Սողիկյանի միջոցավ դիմում կատարեցին գերմաններուն, շատ ազդու դիմում, որուն արդյունքն այն եղավ, որ թուրք կառավարությունը զինքը ձերբակալեց քաղաքին մեջ և անմիջապես մահվան վճիռ արձակեց: Սակայն, շնորհիվ գերմանական դեսպանատան միջամտության, գերմաններու ընկերակցությամբ փոխադրվեցավ Գոնիա:

Այժմ Ամերիկա կը գտնվի:

**Գրիգոր Չաքարյան** - Արիեստով փաստաբան և ուսուցիչ. 1906-ին վարժարանի մատակարար Բրուտյանի դեմ կարգ մը գանգատներ ծայր տալուն պատճառով, խնամակալության կողմե Կարին կը ղրկվի իբրև քննիչ:

Իր առաքելությունը կատարելե տեք, ան կը վերադառնա Պուլիս և անձամբ տեղեկագիր կուտա Խնամակալության և հոն կը նշանակվի փոխտեսուչ Սանասարյանի ու կը դառնա Կարին: Բարերարին երեք սաները անակնկալորեն կը դադրին տնօրենի պաշտոնեն և կը մնան իբրև ուսուցիչ՝ պահելով Դոգաբարձության մասնակցելու իրենց իրավունքը:

Պետք էր տեսնել այն անխարդախ և լուրջ վերաբերումը, զոր ցույց տվին անոր նկատմամբ պրոֆ. Աբուլյան և Սողիկյան: Գործը իրենցն էր, բայց անտրտունջ հանձնեցին զայն նորեկին՝ միայն այն գերագույն նպատակով, թե չխանգարվի վարժարանի ընթացքը, չքայքայվի հաստատությունը, բան մը, որուն համար բարերարին հոգին անգամ խռոված պիտի ըլլար:

Չաքարյան գործի ձեռնարկեց, սակայն իր տկարությունները կարճ ժամանակի մեջ երևան եկան թե՛ վարչագիտության և թե՛ դասավանդություններուն մեջ:

Աշակերտությունն անմիջապես վերահաս եղավ նախորդներու և Ձաքարյանի միջև գոյություն ունեցող տարբերության, ու չանցած մեկ-երկու ամիս, ծայր տվին դժգոհությունները, զանգասները:

Ձաքարյան շվարեցավ, դիմեց նախորդ տնօրեններու աջակցության, բայց հեղեղն սկսած էր, առաջքն առնել դժվար էր: Ան շատ ավելի նսենացավ օրենսգիտության և քաղաքային տնտեսության դասերուն մեջ:

Ձաքարյան դժբախտ մարդ էր, ոչ միայն չկրցավ տոկալ Սանասարյանի տնօրենության գործին, այլև չկրցավ հաշտվիլ Կարնո խիստ կլիմային հետ, ու հակառակ իր զգուշություններուն (ինքը անձամբ դեղեր կը գներ ու կը գործածեր առանց բժշկի հավանության)՝ ծանր թոքատապի բռնվեցավ ու մեռավ Կարնո մեջ: Հագիվ անոր մահը ծանուցված խնամակալության, վերջինս հեռագրով տնօրենության գործը հանձնեց դարձյալ պրոֆ. Աբուլյամին, որ վարեց վարժարանը մինչև Օսմանյան Սահմանադրության հռչակումը:

\* \* \*

Ձաքարյանի տեսչության օրով ներքին տնօրենի պաշտոնին դրկված էր խնամակալության կողմե Հալզալըի երկրագործական վարժարանի փոխտնօրեն Նշան Գալֆայան, որ կավանդեր գյուղատնտեսության և ֆրանսերենե թուրքերեն փոխադարձ թարգմանության դասեր:

Գալֆայան քաղաքեն դուրս բանջարանոցներ մշակեց, բայց միևնույն ատեն ուզելով փոփոխության ենթարկել պրոֆ. Մադաթյանի անխոնջ ջանքերով հառաջ բերած պարտեզն ու ծառերը, բուրդին ալ փչացման պատճառ դարձավ. չորցան տասնյակ տարիներն ի վեր հասակ առած եղևնիները և թզուկ մայրիներու անտառը:

Պրոֆ. Աբուլյանի տնօրենությունը խաղաղ կերպով ընթացավ մինչև 1908 թ., երբ շնորհիվ արտաքին թունոտ թելադրանքի և կուսակցական նեղմիտ ըմբռումներու, վարժարանը դարձյալ վրդովվեցավ: Այս անգամ խնամակալությունը Պոլիս կանչեց պրոֆ. Սողիկյան և Խաչատրյան. վերջինս փոխվերատեսչի պաշտոնով վերադարձավ Կարին:

Խաչատրյանի տեսչությունն ալ փայլուն չեղավ, հակառակ խնամակալության՝ այդ մասին ունեցած մեծ հույսին:

Ներքին խլրտումները չդադրեցան, աշակերտությունը տկարացավ, ընթացավարտները թուրքերեն կարդալ մը անգամ չէին գիտեր:

1912-ին եկավ Սանասարյանի նախկին սան և խնամակալության ներկայացուցիչ Գրիգորիս վրդ. Պալաքյան՝ իբրև քննիչ:

Անոր տեղեկագրեն ետք, Խնամակալությունը որոշեց փոխադրել վարժարանը Սեբաստիա, ի միջի այլոց, հետևյալ երկու գլխավոր պատճառներով, որոնցմով երկարորեն զբաղեցան պոլսահայ քերթեր:

1.- Բալկանյան պատերազմեն ետք, հավանական ընդհանուր պատերազմի ընթացքին, վարժարանը կրնար ծանր վտանգներու ենթարկվիլ Կարնո նման սահմանագլխային քաղաքի մը մեջ:

2.- Միմիայն այդ միջոցով կարելի պիտի ըլլար զսպել այն ըմբոստ ոգին, որ արմատացած էր աշակերտության մեջ:

Իհարկե, Կարնո ժողովրդին համար, որ 39 երկար տարիներ զուրգուրացած էր կրթական այս բույնին վրա, դժվար էր դյուրութեամբ բաժնվիլ անկէ: Ժողովրդին մեկ մասը, պարագլուխ ունենալով տաքարյուն երիտասարդներ, թեև ուզեց արգելք ըլլալ այս կարգադրության, բայց որոշումն անդառնալի էր. փոխադրությունը կատարվեցավ, հուսալքումի մատնելով թէ՛ հասարակությունը և թէ՛ մանավանդ Սանասարյանի մեջ կրթված երիտասարդությունը:

Սանասարյան երկու տարի ալ Սեբաստիո մեջ ապրեցավ, բայց ոչ շատ փայլուն, ու շիջեցավ, երբ վրա հասան հայկական եղեռնի օրերը:

Ստույգ տեղեկություն ունինք, թէ 1915-ի տարագրության օրերուն աշակերտություն և ուսուցչություն միասին տարագրված ու միասին ալ խողխողված են:

## **ՈՒՍՈՒՑՉՈՒԹՅՈՒՆ**

Սանասարյան ուներ երկու կարգի ուսուցիչներ, գլխավոր՝ առանց բացառության համալսարանական կրթությամբ օժտված և օգնական ուսուցիչներ:

Նախապես հայերենի համար հրավիրված է Դ. Գուրգեն, բայց շատ կարճ պաշտոնավարություն ունեցած է: Իրեն հաջորդած են պրոֆ. Խաչատրյան և Կորյուն Մկրտիչյան:

Վերջինս երիտասարդ տարիքի մեջ կնքած է իր մահկանացուն: Եղած է բանաստեղծի ընդունակություններով օժտված ուսուցիչ: Թողուցած էր 178 էջերե բաղկացած ինքնագիր և թարգմանված ձեռագիր ոտանավորներ, որոնց մեջ աչքի կը զարնեին Լ. Ուիլանտի «Գուսանի անեծքը», Ալբերտ Շամիսոյեն՝ «Կանանց սերն ու կյանքը», «Սրտի և հոգվի համար» և Դուլիոս Գրասերի 12 քերթվածները: Ուներ «Գրիգոր Մագիստրոս» և «Տիգրանուհի» պատմական վեպերը և «Սասունցի Դավիթ», ինչպես նաև «Ամանորը», որ իբրև հիշատակ մնացած էր վարժարանին մեջ և ամեն Նոր տարիի կարտասանվեր աշակերտներու կողմէ:

Այս ձեռագիրները, երկու տետրակներու մեջ ամփոփված, մատենադարանին սեփականությունը կը կազմեն: Կըսվի, թե պրոֆ. Խաչատրյան կորուստե ազատած է զանոնք:

**Նիկողայոս Թոթվայան**, ակնցի, թարգմանիչը օսմանյան օրենսգիտության (մեծելե):

Երկար ֆեսը դեպ առաջ ծռած, ամառ և ձմեռ երկար վերարկու մը հագած, ուրքերը ճերմակ գուլպա և կոնտուրա, գավառացիի տարօրինակ պատկեր մը. միշտ լուրջ, բայց ավելի խոժոռադեմ ու ծայրահեղորեն ազդեցիկ: Հմուտ էր հայերենի, ֆրանսերենի և թուրքերենի, զորս սովորած էր իրարու հետ բաղդատելով:

Շատ հարուստ մատենադարան մը կը պատցներ իր հետ, ուր որ երթար: Կավանդեր թուրքերենի բոլոր դասերը: Իր օրով թուրքերենը փայլուն եղած է Սանասարյանի մեջ:

Բարեխիղճ մարդ էր, արձակուրդներուն կը պատրաստեր հաջորդ տարվան բոլոր դասարաններուն հատուկ քերականություն և բառարան: Կրթոտ էր, երբեմն շատ խիստ կը վարվեր աշակերտներուն հետ և դասերուն մեջ կը քննադատեր իր ընկեր ուսուցիչները: Ոսկի ձեղունի տակ ծնած ըլլալը կը հիշեր, երբ գործը մեծատուններու զավակներուն հետ ըլլար: Սիրցուցած էր թուրքերենը:

Խիստ կերպով կը քննադատեր Մ. Աբիկյանի գործերն ու բառարանը: «Աբիկյան շան պես ցկներ է, բայց ապարդյուն», - կըսեր ու միշտ ալ անոր հեղինակությունները կը գործածեր իբրև դասագիրք:

Ինքն ալ թուրքերենե հայերեն ընդարձակ բառարան մը կը շիներ և մինչև **միմ** գիրը պատրաստած էր: Լեզուները իրարու հետ բաղդատելով սովորած ըլլալուն, առհասարակ կանոններն ու նրբությունները թուրքերեն և ֆրանսերեն միասին կը հիշեր:

Արժեքավոր մարդ էր, բայց չկրցավ շատ երկար մնալ, 6-7 տարի պաշտոնավարելէ ետք հեռացավ վարժարանն և մեռավ Սամսոնի մեջ:

Այնուհետև թուրք լեզվի ուսուցման համար քանի-քանի թուրք ուսուցիչներ եկան և գացին, որոնց մեջ նշանավոր էին Սոֆթա Ռեմզի էֆ. և Ջեննեթ Ջադե Իսմայիլ էֆենտի: Վերջինս տարագրության շրջանին, Ուրֆայի դեպքեն երկու տարի ետքը, երբ ճամփու վրա իբրև գործավոր կաշխատցնեին 100-ե ավելի ընտանիքներ, որոնցմէ 40-ը կարնեցի, տողերս գրողը ճանջցավ և փոխադրեց զայն Ուրֆա իբրև իր աշակերտը և ստույգ մահե ազատեց:

**Խոսրով Պապայան** և **Սերոպե Նորատունկյան** Պոլստ մեջ պատրաստվելէ ետք թուրքերենի ուսուցիչ եղած են վարժարանին, Սանասարյանի վերջին տարիները:

**Մայր Լապեռախիս և Գրեսթե:** Երկուքն ալ ֆրանսացի, կավանդէին իրենց մայրենի լեզուն, առաջինը կարճ ժամանակ մնաց, բայց վերջինը երկար ատեն պաշտոնավարեց և օգնեց պրոֆ. Խաչատրյանին “Les anciens Armeniens”-ի պատրաստութեան մեջ:

Այս մարդը շատ չէր ախորժեր քաղաքի կյանքին. ամառ-ձմեռ կապրեր Կեզ գյուղին մեջ և իր սեփական ծիովը կամ սահնակովը քաղաք կուգար. թափթփած էր. ահռելիորեն կը ծխեր՝ ծխախոտին վարդի չոր թերթեր խառնելով, այնպես որ մատները, բեղերն ու մորուքը բոլորովին դեղներ էին նիկոտինի ազդեցութեամբը: Չիու աղբին մեջ թաթախված հիկին դասարան կը մտներ շատ անգամ հազարով և ձեռքերը շփելով. բայց օրինակելի ու սիրված ուսուցիչ էր, իր դասերը ոգևորված ու օգտակար դասեր էին: Իր օրով ֆրանսերենը գորավոր էր վարժարանին մեջ:

**Գևորգ Ճիյերճյան** - Արաբկիրցի. 1896-ի հայկական ջարդերեն ետքը կուգա Կարին Սիմոն Աղապալյանի ընկերակցութեամբ, լրացուցած համալսարանի ընթացքը:

Պատրաստված բնագետ ուսուցիչ էր և գիտեր լավ հայերեն: Բարձրահասակի մոտ, աչքերու խումար նայվածքով, երկճղի կարճ մորուքով արագաքայլ մարդ մըն էր:

Մասնագետ էր տարրաբանութեան և բնագիտութեան և նույն նյութերն ալ կը դասախոսեր մաքուր գրական հայերենով: Շատ հաջող կերպով կը կատարեր բնագիտական և տարրաբանական փորձերը:

Իր օրով վարժարանն ունեցավ տարրաբանական առանձին աշխատանոց, որուն կը մասնակցէին ընտրված սաներ: Խարբերդի Սորսորի վանքին քովերը վարժարանին հաշվույն նախապես զնված հողերուն վրա սեփական շենք կառուցանելու և վարժարանը հոն փոխադրելու գործին Ճիյերճյան պաշտոնյա նշանակվեցավ և մեկնեցավ Խարբերդ: Սակայն, թուրք կառավարութեան անթույլատու քաղաքականութեան երեսն ասպարդյուն եղավ իր առաքելութունը:

Յակառակ որ իբրև սան վարժարանի ծախքովը պատրաստված էր Եվրոպայի մեջ, իր պայմանը չլրացուցած՝ հեռացավ վարժարանէն, անցավ Եվրոպա ու հաստատվեցավ Եգիպտոս: Այժմ Սուդան է:

**Սիմոն Աղապալյան** – Կարնեցի, վարժարանի սաներէն, պատրաստված գերմանական արհեստագիտական վարժարաններու մեջ. միևնույն ատեն բնագետ, ուսողագետ և մեքենագետ էր: Կավանդէր երբեմն գրահաշիվ, գծագրութիւն և վերահսկիչն էր արհեստանոցներուն:

Գիյերճյանի մեկնումեն ետք ինքը ստանձնեց տարրաբանութեան և բնագիտութեան դասերը. աշխատասեր էր, եռանդուն, բայց մերթ րնդ մերթ իր դասերն անհասկնալի ըլլալու չափ կը խճողեր: Գործնական ոգիով տոգորված, շատ զվարթ և փիլիսոփա մարդ մըն էր:

Վարժարանի անհրաժեշտ պաշտոնյան կը նկատվեր. ամեն գործի կը հասներ և գլուխ կը հաներ: Չէր մոռցած գերմաներենի շեշտը և հայերեն կը խոսեր նույն շեշտով:

Սանասարյան Սեբաստիա փոխադրվելու ատեն ինքը չզնաց:

Պատերազմի ատեն գտնված է Կիլիկիո շրջանը, իբրև թարգման գերմաներուն: Այժմ Ֆրանսա է:

**Լևոն Փասպանյան** - Թոքատոցի և աշակերտ Սանասարյանի. պատրաստված Փարիզ իբրև ուսուցիչ ֆրանսերենի: Կարմիր երեսներով եռանդուն երիտասարդ մըն էր. հայերենը մոռցած էր, բայց լավ կավանդեր ֆրանսերենը: Սեբաստիո մեջ ալ Սանասարյանի ուսուցիչ եղած, տարագրված ու սպանված է աշակերտներուն հետ:

**Սանվել Տետեյան** - Դարձյալ Սանասարյանի ընթացավարտներեն, Եվրոպա դրկված էր լեզվաբանութեան հետեւելու համար: Ավելի գործնական ըլլալով, իր ժամանակի մեծագույն մասը հատկացուցած էր առևտրական ուսումներու: Իր դասերը շնորհալի չէին: Սեբաստիո մեջ ալ Սանասարյանին ուսուցիչ ըլլալով, աշակերտութեան հետ տարագրված է ընտանյոք և ծանր խոշտանգումներէ ետքը սպանված:

**Արամ Հակոբյան** - Պոլսեցի էր, վարժարանէն ընդունակ մեկը չէր. վեցերորդ դասարանը կրկնեց. սակայն, Խնամակալութիւնը զինքը Փարիզ դրկած էր սովորելու համար: Հինգ տարվան շրջանէ մը ետք վերադարձավ առանց աչքառու բան մը կարենալ ընելու: Հանվեցավ վարժարանէն և մտավ Օսմանյան դրամատուն՝ իբրև քարտուղար:

**Գրիգոր Գոյիւնյան** - Դերջանցի և ընթացավարտ վարժարանին: Իբրև ընդունակ ջութակահար, պահված էր ուսուցիչ ջութակի և երաժշտութեան:

Բարեխիղճ դասախոս էր. ամեն տարի 3-4 խումբ ջութակահար ուներ: Հյուսկատոսական հրավերներուն, կուսակալներու պարահանդեսներուն՝ երաժշտութեան համար վարժարանին դիմում կըլլար:

Գոյիւնյան իր խումբով և վարժարանէն դաշնակահարի մը ընկերակցութեամբ կը պատասխաներ այդ հրավերներուն գոհացնելով մանավանդ եվրոպացիներու ճաշակը: Ինքը զարգացուց վարժարանին մեջ ջութակներու և դաշնակի ընկերակցութեամբ կազմված խումբերը: Սեբաստիո մեջ ալ վարժարանին ուսուցիչ էր և տա-

րագրութենէ ազատած էր տեղվոյն կուսակալին շնորհիվ, որուն զավակներուն ջութակի ուսուցիչն էր միևնույն ատեն:

Սանասարյանի մէջ մեկէ ավելի տարիներ պաշտոնավարած են նաև Վահան Գույումճյան (ակնցի), Սկրտիչ Պարսամյան (խարբերոցի), Տիգրան Ամսեյան (սղերոցի), Սուքիաս Սողոմոնյան (դավրեժցի), Լևոն Գարագաշյան (կարնեցի) և ավանդած են զանազան դասեր: Ասոնք բոլորն ալ վարժարանին սան են եղած:

**Պրոֆ. Խաչատրյան** - Բնիկ ակազկերտցի, Գևորգյան ճեմարանին մէջ միջնակարգ կրթություն առնելէ ետք, անցած է Գերմանիա, ուր երկար ատեն մասնավորապէս աշակերտած է պրոֆ. Յուրբշմանին, լեզվաբանություն սովորելու համար:

Երկար հասակով չոր մարդ մը. երկճղի մորուքով, թելավոր ակնոցը աչքին և դասերէ դուրս թիկնոցը միշտ ուսին. ծայրահեղորեն ճշտապահ և ազդեցիկ: Կավանդէր հին և նոր հայերեն, հայոց քննական և եկեղեցական պատմություն: Քաջ գրաբարագետ էր և գրեթէ գոց գիտեր մատենագիրները, այնչափ որ շատ կարդացած էր:

Պատրաստած էր աշխարհաբար սովարահատոր քերականություն մը, համաձայնական և ստուգաբանական-լեզվաբանական հարուստ բաժինով մը, օգտված էր առավելապէս գերման քերականներէ: Բարձրագոյն դասարաններուն մէջ կավանդէր գրականություն և բանահյուսություն, որոնց համար ալ ընդարձակ ուղեցույցներ ուներ, զորս միշտ կը սրբագրէր, կը կոկէր: Ուներ նաև շատ ընդարձակ հայ եկեղեցական պատմություն, որուն հրատարակության հետամուտ եղավ, Օսմանյան Սահմանադրութենէն ետքը, Կարինի առաջնորդ Սմբատ եպիսկ. Սաադեթյան:

Մատենագրության դասերուն համար ուներ ընդարձակ էջեր. աշակերտներուն հետ մատենագիրները ծայրէ ծայր կարդալէ ետք, ուսումնասիրություն կը կատարէր անոնց մասին հետևյալ մանրամասնությամբ.

- 1.- Ընթերցում հեղինակին:
- 2.- Բովանդակությունը (նյութը):
- 3.- Պատմիչը (կենսագրություն, ըմբռնելու և գրելու եղանակը):
- 4.- Ոճը (հարազատ և անհարազատ կողմերով):
- 5.- Բաղդատություն ժամանակակից ուրիշ պատմիչներու հետ:
- 6.- Մատենագրին տեղը մեր գրականության մէջ:

Խորենացիի, Եղիշեի, Փարպեցիի, Բյուզանդի, Եգնիկի, Կորյունի և ուրիշ մատենագիրներու մասին այսպիսի ուսումնասիրություններ ուներ տասնյակ էջերով, զորս կը դասախոսէր շատ խղճամիտ կերպով: Իր քննական պատմությունն ալ արժեքավոր կողմեր

ուներ և պատրաստած էր երկարամյա ուսումնասիրություններն  
ետքը:

Խաչատրյան ալ չկրցավ հրատարակել տալ իր ձեռագիրները,  
բացի “Les anciens Armeniens”-են, զոր պատրաստեց իրեն աջակից  
ուներնալով ֆրանսերենի ուսուցիչ մայր Գրետթե. մյուսները բոլորն  
ալ մնացին անտիպ:

Խաչատրյան իր թոշակին կարևոր մեկ մասը հատկացուցած էր  
գրքերու, զորս կը ստանար ռուսական հյուպատոսարանի թարգ-  
ման Զարոթյուն Գութենյանի միջոցով: Պրոֆ. Աբուլյանեն ետքը  
վարժարանի երկրորդ սյունն էր, հեղինակավոր, աշխատասեր, բա-  
րեխիղճ ու միշտ նոր: Վարժարանին մեջ արդեն միջոցներ կը խոր-  
հեր հայերենը ազատել իր ուղղագրական դժվարություններեն:

Յատկանշական գիր մը ուներ. երկար ու ծուռուլիկ, զոր կը  
գրեր գրիչը ցուցամատին և միջամատին մեջ բռնելով: Երբեք չէր  
բացակայեր, հիվանդ վիճակի մեջ իսկ, շատ անգամ դասի կուգար  
վիզը, գլուխը փաթաթված, հիացում պատճառելով աշակերտութ-  
յան: Ազգասեր մարդ էր և այդ ոգին կը դներ իր դասերուն մեջ:

Վարժարանը հիմեն ի վեր ուներ բանախոսության դաս մը, որ  
տեղի կունենար շաբաթ օրերը, կեսօրեն վերջ, երրորդեն վեցերորդ  
դասարաններու մասնակցությամբ: Աշակերտները կարգով պար-  
տավոր էին նյութեր ուսումնասիրել և բանախոսել: Խաչատրյան կը  
վարեր այդ դասը. բանախոսը լսելն ետք, աշակերտներու դիտո-  
ղությունները նկատի կունենար ու ապա ինքը կեզրակացներ, իր  
քննադատություններն ընելով բանախոսի շարժումներու, ձայնի,  
լեզվի և նյութի մասին:

Բանախոսության այս դասը ընդհանուր զարգացումի և հրա-  
պարակախոսության տեսակետեն շատ օգտակար եղած է սանա-  
սարյանցիներուն:

Խաչատրյան հայկական եղեռնի օրերուն Պոլսեն կաքսորվի  
ընկերներով Գոնիա, ուրկե խույս կուտա կը հասնի Միջագետք,  
Մուսեային, ուր զանազան անուններով տեղավորված շատ մտավո-  
րականներ ունեինք, և ձեռնարկու Մովսես Ստեփանյանի միջոցնե-  
րով կանցնի դեպի Բաղդադ ու կազատե մահե:

Ինքը այժմ Երևանի համալսարանի ուսուցիչ է և անդամ այն  
մասնախումբին, որ ձախող կերպով փոփոխության ենթարկեց հայ  
լեզվի ուղղագրությունը:

**Պավիթ Ումիկյան** - Թիֆլիսցի և կատարելագործված Պետեր-  
բուրգի համալսարանին մեջ, գիտեր ռուսերեն, ֆրանսերեն և գեր-  
մաներեն:

Մազերը մասամբ թափված, գլխին առջևը մազերու գեղեցիկ փունջ մը, սրածայր մորուքով շեկլիկ և բարեձև մարդ մը: Մասնագետ էր մաթեմատիկի, ազդեցիկ, անվհատ և քաջ ուսուցիչ մը:

Իր դասերը սկիզբէն ի վեր արդյունավոր եղած են, այնպես որ Սանասարյանի տկար աշակերտներն անգամ լավ էին ուսողութեան մեջ, թէն Լինչ կըսէ՝ գրահաշվական խնդիր մը առաջարկեցի և չկրցին լուծել անմիջապէս:

Ումիկյան դիտակալ մարդ էր և շատ կը նեղեր ու կը հեզներ թույլ աշակերտները. ամենքն ալ կը քաշվէին իրմէ, բայց շատ ալ կը հարգէին:

Ումիկյան ալ ձեռնարկներ ուներ. թվաբանութեան, գրահաշվի և երկրաչափութեան ամբողջ ընթացքները շատ ընդարձակ կերպով պատրաստած էր հարակից խնդիրներով ու անոնց վրայէն ալ կը դասախոսեր: Ասոնք ալ անտիպ մնացած են:

Վարժարանը Սեբաստիա փոխադրելու ատեն խնամակալութիւնը առաջարկեց իրեն, որ վարժարանին հետ մեկնի, բայց ան մերժեց, և որովհետև 25 տարիէն ավելի աշխատած էր, հանգստեան թոշակին փոխարէն միանվազ ստացավ 250 ոսկի ու մեկնեցավ Կովկաս:

1906 թվականին վարժարանը որդեգրեց ընդհանուր հսկողի դրութիւնը և այդ պաշտոնին հրավիրեց Պոլսէն Կարին աքսորված Անդրանիկ Եսայանը: Եսայան միայն կը հսկեր, դաս չէր ավանդեր. բարեհամբույր անձ մըն էր, բայց ընդհանուր հսկողութեան շատ հարմար մարդ չէր:

Տարագրվեցավ Քղիեն՝ իր ծննդավայրէն, և ճամփան սպանվեցավ:

Ասոնք եղած են Սանասարյանի տեսուչներն ու ուսուցիչները, որոնցմէ մեծագույն մասը քառորդ դարէն ավելի աշխատած է հայ մշակութիւնին համար և ծաղկեցուցած կրթական այս հաստատութիւնը:

## ԱՇԿԵՐՏՈՒԹՅՈՒՆ

Առաջին աշակերտները հավաքված են պրոֆ. Մաղաթյանի կողմէ 81-ին. ան այդ նպատակով կատարած է երկար և դժվարին ճամփորդութիւն. հասած է մինչև վերին Միջագետք, Եդեսիա. իր տպավորութիւնները շատ վատ եղած են այդ պտուտի մասին:

«Հայ ժողովուրդը խույս կուտար ուսումնէն և ուսումնականէն, որովհետև իր գլխին տերը չէր», - այսպէս էր Մաղաթյանի արտահայտութիւնը:

Իրավ ալ ան չի հաջողի պետք եղածին չափ սաներ ունենալ և առաջին տարին վարժարանը կը սկսի միայն 12 աշակերտով: Կարին ալ խեռ կը նայի նորահաստատ կրթարանին. զավակները հանձնել օտարին, որ տանին ու պահեն, դժվար բան էր այն ժամանակի մարդոց համար:

Սակայն, տեսչությունը չի հուսահատիր. առաջին տարին գործը թեև փոքր, բայց հաջողությամբ կը պսակվի. այնուհետև համբավը կը տարածվի, նորություններու հրապուրիչ անունը ամենուն վրա լավ ազդեցություն կունենա. գործը կը կանոնավորվի, աշակերտները կը շատնան և վարժարանը կը սկսի:

Սանասարյան ավելի շատ գիշերօթիկ աշակերտ ուներ, քան թե ցերեկյա: Չրիավարժներու մեծագույն մասը բարեբարին սաներն էին, բայց կային ուրիշներ ալ, որ ռուսահայ այս կամ այն մեկենասի հաշվույն կուսանեին: Մանթաշև, Ծատուրով և ուրիշներ ունեցած են իրենց սաները վարժարանին մեջ:

Չրիավարժներու որոշ թիվ նշանակված էր յուրաքանչյուր հայաբնակ քաղաքի համար. ասոնք վարժարանին վարչության փափագին համաձայն կընտրվեին Առաջնորդարաններու կողմէ: Մինչև որ այդ սաները ընթացավարտ չըլլային կամ ուրիշ որևէ պատճառով չպակսեին, անոնց տեղ նորեր չէին ընդունվեր:

Անատոլիի բոլոր քաղաքներեն աշակերտներ կային. Կովկասեն, Պարսկաստանեն և Պոլսեն ալ աշակերտներ ունեցած է: Հանգուցյալ Բյուզանդ Քեչյան իր Պարույր որդին Սանասարյան ղրկած էր, բայց ան չկրցավ երկար մնալ և վերադարձավ:

Նահանգներուն մեջ Կարին բացառություն էր. կարնեցի բավական թվով ցերեկյաներ կային, բացի գիշերօթիկ սան աշակերտներեն: Ներկայացող ամեն աշակերտ կրթական և առողջապահական որոշ պայմաններ լրացնելէ ետք միայն կընդունվեր: Ամբողջ շրջանին նորեկներեն շատ քիչեր կրցեր են երրորդ դասարանի քննություն տալ: Սովորաբար երկրորդ դասարան կը մտնեին, նույնիսկ ազգային վարժարաններու վկայական ունեցողները:

Թոշակավորներն ալ թվով շատ եղած են. արևմտյան և ծովեզերյա քաղաքներեն խումբով կուգային. Տրապիզոնեն, Սամսոնեն, Թոքատեն, Զիլեեն տասնյակներով գիշերօթիկ և թոշակավոր աշակերտներ կային:

Հեռու քաղաքներեն եկողները սովորաբար գիշերօթիկ էին, իսկ կարնեցիները՝ ցերեկյա:

Նախապես գիշերօթիկներու վարձքը 20 ոսկի էր, բայց վերջին տեսները, կարգ մը պայմաններով, 12 ոսկիի գիշերօթիկներ ալ ընդունվեցան:

Ամբողջ շրջանին վարժարանն ունեցած է 513 գիշերօթիկ և 327 ցերեկյա աշակերտ, որոնց համար 32 տարվան ընթացքին ծախսված է 100.000 լիրայի մոտ գումար մը, 3.500 լիրայի չափ տարեկան բյուջե ունենալով վարժարանը:

Ընդունելության պայմանները խիստ ըլլալով, բնական թերուրուն ունեցող աշակերտներ գրեթե չկային:

Առատ սնունդ ուներ վարժարանը. առավոտները սովորաբար թեյ և պանիր, պահք օրերը հրուշակ կամ ձիթապտուղ, իսկ կեսօր և երեկո ապուր մը և հետը կերակուր. անուշեղեններն զատ, շաբաթը երկու անգամ ալ պտուղ կը տրվեր: Կերակուրներու քանակն ու որակը միշտ կենթարկվեին վարժարանի բժշկին հավանության:

Յակառակ Կարնո խիստ կլիմային, ամբողջ շրջանին հազիվ 2-3 մահ պատահած է վարժարանին մեջ. ասոնցմէ մին զոհն էր 901-ի ծանր երկրաշարժին, որ տեղի ունեցավ հունվար ամսուն, երբ ոչ միայն վարժարանի աշակերտությունը, այլև քաղաքի բնակչությունը ամբողջ ամիս մը վրաններու տակ ապրեցավ բուք ու բորանին:

Պարզ, բայց վայելուչ համազգեստ մը ուներ վարժարանը. մուգ լեղակագույն բաճկոն մը բարձր օձիքով և ծալծլուն հառաջամաստով, մեջքին կաշիե գոտի մը, առջևը քառանկյունի դեղինի մը վրա Ս. Վ. (Սանասարյան վարժարան) գրված. գլուխը ֆես և ոտքերը՝ միշտ սև կոշիկ: Ձմեռը ներքնազգեստեն զատ կը տրվեր սրճագույն հաստ վերարկու մը և երբեմն ռուսական կրկնակոշիկ:

Աշակերտությունը տեսուչներու և ուսուցիչներու ընկերակցությամբ Սրտաձորի մեջ կանցըներ ամռան երկու ամիսները վրաններու տակ, և այդ պատճառով ալ սաներեն շատ քիչեր ամռան արձակուրդին իրենց ծնողաց քով կերթային:

Ծանր հանցանքներու հետևանքով միայն կարտաքսվեին սաները, թոշակավոր թե ծրիավարժ, գիշերօթիկ թե ցերեկյա: Արտաքսվողները թիվով քիչ եղած են: Երկու տարիեն ավելի նույն դասարանի մեջ մնացող աշակերտներն ալ, ծրիավարժ թե թոշակավոր, կը հանձնվեին իրենց ծնողքին:

Արտաքսումը կը կատարեր տեսուչներն մին, սովորաբար պրոֆ. Աբուլյան, որ հրապարակավ հայտարարելէ ետք հանցանքը, գոտին մեջքեն կը քակեր: Գոտիե զրկվիլ, պատվե զրկվիլ կը նշանակեր: Արտաքսումի դեպքերը միշտ ահավոր տպավորություն բողուցած են վարժարանին մեջ:

Լինչ Կարնո մեջ Սանասարյանի տված այցելության ատեն հետևյալ տպավորությունը ունեցած է աշակերտության մասին.

«Սաներու բոլորին դեմքին վրա վճռականություն մը կը տեսնես, որ ապացույց է զորեղ նկարագրի մը գոյության»:

իրոք ալ ընթացավարտները, սովորաբար 17-20 տարեկան, եղած են վառվուրտ և կյանքով լի երիտասարդներ:

### ԿՅԱՆՔԸ

Պատրաստված ուսուցչություն և առողջ ու քաջակազմ աշակերտություն,- ահա Սանասարյանի կյանքն ստեղծողները:

Հակառակ գիշերօթիկի հանգամանքին, սամերը, որոնք ըստ պայմանի պաշտպան մը կամ խնամակալ մը ունենալու ստիպված էին Կարնո մեջ, ամեն կիրակի ազատորեն քաղաք կելնեին: Հարաբերությունները, վարժարանի սովորություններն ու կյանքը, ուսուցչի և աշակերտի շատ սերտ շփումը մեղմացուցած էին գիշերօթիկի ցուրտ հանգամանքը. վարժարանի ընթացավարտները վախկոտ, այլամերժ և քաշված նկարագիր չունեին, ինչ որ հատուկ է առհասարակ գիշերօթիկ հաստատություններու, այլ կյանքին մոտիկ և կյանքին համար պատրաստված երիտասարդներ:

Ուսուցչությունը ընդհանրապես գերմանական խիստ և չափված-ձևված կրթությամբ մը օժտված ըլլալուն, շատ բնականորեն վարժարանին մեջ ալ պետք էր, որ նույն դրությունը ստեղծեր: Սակայն, տարօրինակ հակադրությամբ մը, հաստատության մեջ անգլո-սաքսոն լայն, թույլատու դրություն մը կար կարծես, որ իր բարերար ազդեցությունն ըրած էր ամբողջ աշակերտության վրա: Մեքենական խիստ հսկողություն չկար վարժարանին մեջ. կարգով դասարանն դուրս ելնելու և դասարան վերադառնալու ձևերը երբեք գոյություն չունեին. անոնք միայն ճաշարան կը մտնեին կարգով, որովհետև տեղը նեղ էր. մյուս ատենները ազատ երթևեկություն. դրություն մը, որ երբեք անպատեհություններ չէ ունեցած:

Հսկողը պարզ հուշարար մըն էր՝ ժամանակացույցը գործադրող և միմիայն ստորին երկու դասարաններով հետաքրքրվող: Շենքեն ներս աղմուկ չկար, մանավանդ սերտողությանց պահերուն: Աշակերտները հոն իրենց տունին նման ազատ էին և այդ ազատությունը ստեղծած էր կարգապահության լուրջ գիտակցությունը: Ավանդական ձև մըն էր, որուն ականատես ըլլալով նորեկները, նույն ճամփուն մեջ կը մտնեին ու կը շարունակեին:

Հիննն ի վեր, վարժարանի սովորությունն էր ամեն կիրակի և տոն օրերը աշակերտությունը եկեղեցի առաջնորդել տեսուչներու և ուսուցիչներու մասնակցությամբ:

Մեծ հանդիսությամբ կը տոնվեին Տարեգլխու, Ծնունդի, Բարեկենդանի և Ջատկի տոները, ինչպես նաև Բարերարին մահվան տարեդարձը: Այդ տոներու իրիկունները, աշակերտության սեղանակից կըլլային Առաջնորդ և Հոգաբարձություն: Կը հրավիրվեին

ուսուցիչներու և Հոգաբարձութեան ընտանիքները: Նոր տարիի սեղանը չավարտած՝ բեմեն կը ներկայացվեր Հին և Նոր տարին. պրոֆ. Սողիկյան իր համով-հոտով ճառը կը խոսեր, հին տարիին և անոր հետ բոլոր թերութիւններուն ողջերթ և Նոր տարիին ու անոր հետ կապած հույսերուն բարի գալուստ մաղթելով: Աշակերտներն ալ իրենց կարգին խոսք կառնէին արտահայտվելու: Հաջորդ օրը անոնք խումբ-խումբ կայցելէին ուսուցիչներուն և ծանոթներուն, և կաղին խաղալով բախտ կը փորձէին:

Ծնունդի և Ձատկի խթումներուն, պատարագեն ետք Առաջնորդ, պատարագիչ քահանա և դպրաց դաս զգեստավորյալ վարժարան կուգային տնօրինէք կատարելու. աշակերտները միահամուռ օրվան շարականը կերգէին և կը ստանային Առաջնորդէն իրենց նշխարը:

Ծնունդի և Մեծ Պահքի առաջին և վերջին շաբաթները պահք կը պահեր ամբողջ վարժարանը և տարվան մեջ մեկ-երկու անգամ կը հաղորդվեր: Եվ այս ամենը կը կատարվեր Բարեբարին ու կտակակատարի ջերմ փափագին իբրև արդյունք, զոր վարչությունը անշեղ կերպով կը գործադրեր հավատարիմ ավանդապահի մը խղճմտությամբը:

Անասարյանի կյանքին մեջ հաճելի անակնկալներ էին գարնան պտույտները, դեպի դաշտ, դեպի Եփրատ գետ, հետզհետե դեպի լեռնային մասերը, Լուսավորչաց վանք, Աղզի Աջրգ, Գըրգ Տեփրմեն և այլն:

Մեկ օր առաջ պատրաստություն կը տեսնվեր. հաջորդ առավոտ կանուխ յուրաքանչյուր դասարան ճամփա կելլեր իր ուսուցչին առաջնորդությամբ: Աշակերտության մեծագույն մասը կը հետևեր պրոֆ. Սողիկյանին և Խաչատրյանին: Սողիկյանը կը խոսեր Եվրոպայի կյանքեն, լեռներուն վրա Ալպյան հիշատակները կը քրքրեր գողտր և անուշ բարբառով: Խաչատրյան անխոնջ քալող էր, ուսումնասիրող, իր պտույտները գիտության և պատմության դասեր էին:

Աշակերտությունը մինչև կեսօր շրջագայելե ետք, ծաղիկներ, բույսեր, կենդանիներ ու քարեր հավաքած կը վերադառնար պտույտի կեդրոնավայրը, ուր հասած կըլլար ճաշը՝ եզան սայլով: Դեպի Կարնո շրջակա բարձրադիր մասերը կատարված պտույտները բառին բովանդակ առումով կատարյալ լեռնագնացություններ էին, ամենաբարձր գագաթները հասնելու, հեռու-հեռու հորիզոններ դիտող ձյունապատ կատարները մագլցելու, քաղաքի, դաշտի տափակ կյանքեն տարբեր կյանք մը ըմբռնելու, անհուն ցանկություն մը դեպի վեր, դեպի բարձր:

Վարժարանը այդ բոլոր վայրերում վրա հայեցի դրոշմ մը դրած էր, զանազան անուններով, որ ժամանակի ընթացքին մնացած ու ընդհանրացած էր նույնիսկ թուրք ժողովուրդին մեջ: Հաղթանակեն վերջ, հետաքրքրական վայրէջք մը կը սկսեր. ճարպիկության, մարմնո դյուրաշարժության փորձերու շրջան մը. ոմանք զիզգագ ուղղությամբ դեպի վար կը սուրային, ուրիշներ ծյունին վրա նստած՝ կիջնեին. իյնալու, վիրավորվելու վախը չկար, չկար նաև կաշկանդում պաշտոնեության կողմէ:

Այս պտույտները, շատ անգամ դժվարին և հոգնեցուցիչ, մեծ նշանակություն ունեցած են աշակերտության համար: Չարքաշության, դժվարությանց տոկալու և հաղթահարելու առիթներ էին անոնք և անխառն հաճույքի միջոցներ:

### **ՏԻԶԻԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ**

Մինչև 1908 թ., կարելի է ասել, մարզանքի դաս չուներ վարժարանը. եղածները գաղտագողի և պատահական կերպով կատարված բաներ էին. պորձ. Աբուլյան երբեմն քալելու և շվեդական ձևեր ընելու փորձեր կատարել կուտար: Միայն երկաթյա ծող մը և օղակավոր չվաններ ուներ վարժարանը իբրև մարզանքի միջոց:

Այս պակասը սակայն կը լրանար այն բազմապիսի խաղերով, որոնք սկիզբը Սանասարյանին հատուկ և ապա տարածված Կարնո վարժարաններում և ժողովուրդին մեջ: Վարժարանը գիշերօթիկ անունով կը ճանչցվեր քաղաքին մեջ և խաղերն ալ գիշերօթիկ խաղեր անունը կը կրեին:

Ձմռան շրջանին գլխավոր զբոսանքն էր չմշկումը (բաթենաժ). սառի հատուկ ընդարձակ տեղ մը ուներ վարժարանը՝ սառուղի (սառի ճամփա, տեղ) անունով, ուր կը կապվեր արհեստական ծավալուն սառ մը. ամեն աշակերտ, զգեստի կամ կոշիկի նման, ուներ իր չմուշկն ու փոկերը և պարտավոր էր սահիլ: Ձբոսանքի ատեն աշակերտք և երբեմն ուսուցիչներ սառին վրա էին. վարժ եղողները թռչունի արագությամբ բոլորշի կը դառնան. նորավարժները կիյնան ու կելլեն. կյանք մը, եռուզեռ մը սառին վրա: Տեղ-տեղ ձեռք ձեռքի տված շղթա են կազմեր, ուրիշներ չմուշկով շրջանակներ կը գծեն, թիվեր կը գրեն սառին վրա:

Այս զբոսանքը դեկտեմբերեն փետրվար կը տևեր:

Ձմռան պտույտներ ալ կը կատարվեին դեպի դաշտ, միշտ սառ գտնելու և սահելու նպատակով: Այս պտույտները կարճատև էին և տեղի կունենային երբեմն կիրակի օրերը կեսօրեն ետքը:՝ Սահելու սովորությունն ալ Սանասարյանով կը սկսի Կարնո մեջ: Այս կրթարանը ուներ նաև գնդակով գերի, բերդ, գնդամուղ և երեք ոտք

ցատկելու խաղերը. գնդակով գերին ու բերդը կատաղի մրցումներ էին երկու կողմի աշակերտներուն համար, մանավանդ շաբաթ օրերը, երբ բարձրագույն դասարանի աշակերտությունն ալ ազատ զգալով ինքզինքը խմբովին կը մասնակցեր այդ խաղերուն:

Ուժի և քաջության փորձեր էին ասոնք, որոնց շատ անգամ ներկա կըլլային պաշտոնական անձնավորություններ և մանավանդ կարներբնակ եվրոպացիները:

Արտաքնապես կառավարության փափագը գոհացնելու համար, մարզանքի դասեր չկային, բայց այս խաղերը, ձմռան չնշկումն ու պտույտները լիովին կը բավարարեին այդ պակասը: Սանասարյան միշտ ունեցած է առողջ աշակերտություն:

## **ԲԱՐԵՐԱՐԻՆ ՄԱՅԿԱՆ ՏԱՐԵՂԱՐՁ**

1890 թ. մայիս 19-ին բարերարը կը կնքե իր մահկանացուն Փարիզի մեջ, խոր սուգով համակելով ընդհանրապես ամբողջ հայությունը և մասնավորապես իր երախտավորյալ վարժարանը:

Մայիս 19-ը Սանասարյանի կյանքին մեջ եղած է հուզումի և ինքնամփոփման օր պաշտոնետեության թե աշակերտության համար:

Մեկ օր առաջ երկու բարձրագույն դասարաններու աշակերտները ուսուցչի մը առաջնորդությամբ կերթային դեպի լեռները թարմ ծաղիկներ, գիներբուկ, անմոռուկ, ոսկեծաղիկ հավաքելու և անոնցմե կազմված պսակներով զարդարելու բարերարին կիսանդրին:

19-ի առավոտը պատարագ և հոգեհանգստյան պաշտոն կը կատարվեր եկեղեցիին մեջ, ուր ոչ միայն վարժարանը, այլև Կարնո հայ հասարակությունը ներկա կըլլար. վերջինիս համար ալ հիշատակելի և տոնելի օր եղած էր մայիս 19-ը:

Եկեղեցվո արարողություններեն ետքը, պատարագիչը, որ սովորաբար Առաջնորդը կըլլար, քահանայական և դպրաց դասը զգեստավորյալ և անոնց ետևեն ժամվորները վարժարան կը փութային պսակազարդ կիսանդրիին շուրջը հոգեհանգիստ կատարելու:

Այնուհետև, ընդարձակ սրահին մեջ, խուռն բազմության մը ներկայության տեղի կունենար հանդեսը, նվիրված բարերարի կյանքին ու գործին: Ուղերձներ, ոգեկոչումներ աշակերտության կողմե, բարերարին կենսագրությունը իր բազմազան դրվագներով՝ սովորաբար պրոֆ. Աբուլյանի կամ Սողիկյանի կողմե:

Բարերարին մահվան տարեդարձը սրտազեղ և անկեղծ երախտագիտության, ինքնամփոփումի և նոր ուխտի տոնն էր վարժարանին համար. զորավորները նոր թափ, նոր թռիչ կառնեին. թույլերը,

տկարները ուժ ու խրախույս կամբարեին, բարերարին և անոր միջոցով ազգին արժանավոր զավակներ դառնալու նպատակն ուխտելով:

## ՄՐՏԱՁՈՐ

Կարնո հյուսիսային կողմը, քաղաքեն 6 ժամ հեռու, Եփրատի ջրաբաշխի լեռնակույտերուն (Կապույտ լեռներ) ստորոտը, ընդարձակ ձորի մը անունն է՝ կնքված Սանասարյանի կողմն և նվիրագործված ժողովրդեն:

Սրտածոր Սանասարյանի ամառանոցն էր, ուր կանցըներ ան արձակուրդի երկու ամիսները: Հաճելի վայր էր. դեպի հյուսիս կը խորանա լեռնակույտերու միջև ու կը վերջանա Եփրատի ակունքին մոտ, ուրկե կը սկսի Սրտածորի վտակը, որ երկկողմյան աղբյուրներեն առատանալով՝ կը մեծնա հետզհետե ու դուրս կուզա ձորեն երթալ թափելու համար Եփրատ, որ հսկա օձի մը գալարումներով Կարնո դաշտը կը կիսե:

Սրտածորի երկու կողմերուն վրա, կես ժամ հեռավորությամբ գետեղված են երկու հայաբնակ գյուղեր՝ Ըղտածոր և Խաչկավանք անունով:

Չորդուռը, վտակին երկու եզերքներուն վրա կը տարածվին ընդարձակ մարգագետիններ, որոնք հուլիսի սկիզբը դեռ չեն քաղված ու ցորենի արտերուն տպավորությունը կը թողուն: Վերը՝ բարձրադիր տափարակին վրա կը գետեղվեր վարժարանին վրանաքաղաքը. եզերային մասերուն վրա ուսուցիչներ իրենց ընտանիքներով և մեջտեղը աշակերտներ: Խոհանոցը կը շինվեր գետակին եզերքը, ուր կը թաղվեին հսկա հնոցներ, անկե քիչ հեռու, գետակին առաջքը կտրելով զորավոր թումբով մը կը շինեին լոգարանը՝ մարդահասակ և ավելի խորությամբ:

Ամեն դասարան ուներ իր առանձին լեռնանման երկայնքով վրանը ուսուցչի մը հսկողությամբ: Վրանի երկու կողմերը դրված էին աշակերտներու անկողիները: Վրաններու փեշերը բարձրացնելու և իջեցնելու, զանոնք մաքրելու և խմելու ջուրը բերելու ծառայությունները կը կատարեին աշակերտները:

Ամեն առավոտ աշակերտները կարթննային ջութակի վրա նվագված «Առավոտ լուսո» և «Աղոթարանը բացվեցավ» աղոթքներով, զոր կը կատարեին մեկե ավելի ջութակահարներ՝ վրաններու շուրջ պտտելով:

Բոլոր աշակերտները լողվարտիք հագած և ճերմակ սավաններու մեջ փաթթված՝ լողարան կիջնեին առտվան կարճ լոգանքն ընելու:

Բացօթյա աղոթքեն ետք ճաշարանի վրանը կը մտնեին նախաճաշելու, բաղկացած սովորաբար առատ հացե և մեծկակ գավաթ մը կաթե:

Ժամը 9-11 սերտողության շրջանն էր. վերաքննելիներն իրենց դասերը կը կրկնեին, մյուսները՝ Սրտածոր փոխադրված մատենադարանեն առնված գրքեր կը կարդային: Ճաշեն և ընթրիքեն առաջ ալ լոգանք կընեին աշակերտները:

Ճաշ և ընթրիք միշտ բաղկացած էր երկու կերակուրե, բացի պտուղներե, որ շաբաթը երկու կամ երեք անգամ միայն կը տրվեր:

Սրտածորի կյանքը կը շեննար մասնավորապես արևամուտեն ետքը, երբ օդը կը զովանար և աշակերտությունը դուրս կուզար վրաններեն: Խաղերու, երգերու և պարերու շրջանը կը սկսեր, գետեզերքի մարգագետիններուն վրա, հեռու քաղաքի լրտեսող աչքերեն:

Անման էին լուսնկա գիշերները, որ խորհրդավոր երևույթ մը կուտային Սրտածորին: Ամառանոցի երկու ամսվան կյանքը հաճելի անակնկալներ ուներ աշակերտության համար, որ շաբաթը 3-4 անգամ ամբողջ օրը կամ կեսօրեն ետքը պտույտի կելլեր դեպի ձորերի ներսերը կամ մերձակա գյուղերը:

Սրտածորը իր բոլոր մասերով ծանոթ էր աշակերտության: Ջրվեժները, աղբյուրները, քարաժայռերն ու հովիտները կնքված էին զանազան անուններով և նվիրագործված ժողովրդեն: Բարձրադիր մեծ աղբյուրը, որ աջակողմյան լեռնալանջերեն դուրս կուզար, բարերարին ի պատիվ Սանասար աղբյուր կոչված էր: Անոր հակընդդեմ լեռներու կուրծքեն կախված հսկա ժայռերը՝ Սողիկյան ժայռեր: Վտակին եզերքը, խաչքարի մը քովիկեն ցայտող աղբյուրը՝ Խաչաղբյուր:

Ջրվեժներեն ամենեն բարձրն ու վտանգավորը Աբուլյան ջրվեժ հորջորջված էր խորհրդավոր անվանումով: Գեղածիծաղ հովիտներ՝ կնքված Մաղաթյանի և Ումիկյանի անուններով: Ձորի վերնամասին մեջ երկրաշարժեն փեռնկված մութ ու ահավոր ժայռերու ընդմեջեն հեղեղող քարավեժը Եգյանին ի պատիվ կոչված էր: Իսկ Ձորբերանի քարայրին մոտիկ աղբյուրը, ուր սովորաբար իրիկունները ընթրիք կընեին աշակերտները, Մաղաթյանի դստեր անունով Նվարդի աղբյուր ըսված էր, որովհետև դեռ երեխա, օրիորդը խեղդվել ազատած էր հոն:

Ձորամիջյան բոլոր պտույտներուն գլխավոր հանգրվաններեն մին էր Աբուլյան ջրվեժը, ուր կը խմբվեին տղաքը իրենց լողալու ճարպիկությունը փորձելու: Կազդուրվելու վայրն էր Սանասարյան աղբյուրը՝ իր զուլալ և պաղ ջուրով և բարձրահայաց դիրքով:

Չանազան նպատակներով պտույտներ կը կատարվեին. մերթ վայրի պտուղներ հավաքելու փափագով, երբ սաները իրենց ձեռ-

քերով հյուսած կողովիկները կը բեռնավորեին հաղարջով, մորով ու շլորով, մերթ լողալու և շատ հաճախ դեպի երկնամբարձ գա-գաթները բարձրանալու, դիտելու և ուսումնասիրելու համար:

Այս պտույտներուն մեջ հաղթականները անոնք էին, որ այծյա-մի արագութեամբ կը մագլցեին բարձրագոյն տեղերը՝ ավարելու համար պտղաշատ փիկները: Հայկական երգերը կը հնչէին լեռնե-րու կատարեն, ժայռերու բարձունքեն:

Պտույտները կուղղվէին երբեմն դեպի լեռնային և դաշտային գյուղերը՝ մեղր, վարունգ և ձմերուկ ուտելու: Մեղրաշատ գյուղն էր Օրթուզի՝ Շեղջիկ լեռան փեշերուն փոված: Մեղրակերութեան մրցում կը կատարվեր հոս-հոն դրված տաշտերուն շուրջ, որոնք լեցված կըլլային փեթակներէ նոր կթված մեղրով: Վարունգի և ձմե-րուկի արտերը կը վարձվէին ու տղաք կը մտնէին իրենց ձեռքով ժողվելու իրենց ուզածը:

Արծակուրդի վերջին օրերուն կը կատարվէին ամենէն երկար պտույտները դեպի Եփրատի ակունքը (Խաչափայտ) և դեպի Թորթում (Տայոց աշխարհի մեկ ձորամասը), որ Կարնո պտղաստանն է:

Այս պտույտներուն առաջնորդն էր պրոֆ. Խաչատրյան. կը մասնակցեին բարձրագոյն երկու դասարանները միայն: Մեկնունը կըլլար կեսօրէն ետքը. կը քալէին ամբողջ գիշերը ձորն ի վեր և արշալուսին ատենները կը հասնէին Եփրատի ակունքը, Կարնո շրջանի ամենաբարձր լեռնամասերը, որոնք կը կազմեն Եփրատի և ճորոխի ջրաբաշխը: Խումբը հոն կը հանգստանար մինչև Էտինք և իրիկվան դէմ կիջներ դեպի Թորթումի ձորը, մեկ կամ մյուս գյուղը գիշերելու համար:

Խաչատրյան, որ ոչ միայն այս շրջանին, այլ Բարձր Հայքի մե-ծագոյն մասին անձամբ ծանոթ էր, կայցելէր այդ շրջանի հին բեր-դերը, եկեղեցիները, ավերակները, ամենքն ալ անմատչելի դիրքե-րով, և ճշգրիտ տեղեկութիւններ կուտար անոնց մասին: Այս կարգի ճամփորդութիւններու ատեն ան իր հետ ուներ միշտ Հայաստանի քարտեզը, ծանրաչափ, ջերմաչափ, ինչպէս նաև իր սիրական որսի հրացանը, որուն մեջ կը դներ անխուսափելիորէն կապար նետող խողովակը:

Դեպի Թորթում վայրէջքի գլխավոր նպատակն էր այցելել Թորթումի լիճն ու ջրվեժը: Խարս գյուղին առջև հսկա լեռան փլուզու-մով կազմված է այս լիճը, որուն ջուրը 90 մետրէ ավելի բարձունքէ մը վար կը գահավիժէ դեպի Թև գյուղը, Նիագարայէն հետո երկ-րորդ բարձր ջրվեժը թերևս:

Ուսումնասիրական տեսակ մը շրջագայութիւն էր այս արշա-վանքը, որ կը տներ մեկ շաբաթէն ավելի, մեկ ու կէս դարէ ի վեր թրքացած այս գավառակին մեջ, որ պահած էր սակաւ հայկական

շատ անուններ և սովորություններ և հայերենով ծանրաբեռնված թուրքերեն մը:

Ըստ երևույթին, շատ տարօրինակ պիտի ըլլար լսել Ընկուզիկ գյուղը, իր ձորդուռը և հոն գտնել միայն թուրքեր: Կը մտնես գյուղեն ներս, աչքդ կտրածին չափ դարևոր ընկուզեմիներ, կը հետաքրքրվիս, կա՞ Բեշիշ օղլի ընտանիքը, կա՞ Մանաս օղլի, հարցումիդ կը պատասխանեն, թե իրենց պապերը հայնակ կը խոսին եղեր, Չարկևոր լեռան ուխտի կերթան եղեր: Ու բեռնավորված նոր ծանոթություններով, ինչպես նաև ճնշված այն զգացումով, թե մարդը մարդուն գայլ է, խուճը կը վերադառնար Սրտածոր:

Ամառանոցի վերջին օրերն են այլևս. Նավասարդյան խաղերը և մրցումները կատարված ու մրցանակները բաշխված են: Կլիման փոխվիլ սկսած է. զիշերները ցուրտ են. վրանի տակ մնալը դժվար ու վտանգավոր: Կարնեցիներն ու Կարնո մեջ մոտիկ ազգական ունեցողները քաղաք կը դրկվին, քանի մը օր ետք մնացողներն ալ կը վերադառնան. կը մեռնի Սրտածորի շեն կյանքը ու երկու ամիս լուռ ու մունջ մնացող վարժարանն է, որ կյանք կառնե:

Սրտածորի երկամսյա գյուղագնացությունը մարմնով կազդուրվելու, հոգիով արիանալու և չարքաշության վարժվելու կյանքն էր Սանասարյանի համար, որ առողջ ու կայտառ՝ դարձյալ գործի կը լծվեր, ուսման ընդարձակ դաշտին մեջ նոր նվաճումներ ընելու և նոր հաղթանակներ տանելու:

Սանասարյան շատ բան կը պարտեր Սրտածորին:

## **ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԸ**

Սանասարյան 6000-ե ավելի հատորներ ուներ մատենադարանին մեջ: Եվրոպական լեզուներով՝ գերմաներեն, ֆրանսերեն և անգլերեն գրքերը շատ էին: Մասնավոր ուշադրություն դարձված էր հայկական բաժնին, ուր գոյություն ունեին մատենագիրները, վեներտիկյան և վիեննական հրատարակություններ և թիֆլիսյան շարք մը հատորներ:

Մինչև երրորդ դասարան աշակերտները ուսուցիչներու կողմե որոշված գրքեր միայն կը կարդային, այնուհետև սաները ազատ էին ընտրելու իրենց փափագած գրքերը և կարդալու:

Մատենադարանն ուներ 100-ի մոտ հին ձեռագիր մատյաններ, որոնցմե ոմանք բավական արժեքավոր:

Մատենադարանին մեկ մասը փոխադրվեցավ Սեբաստիա. մյուս մասը թուրք կառավարությունը բռնագրավեց պատերազմի ընթացքին:

## ԹԱՆԳԱՐԱՆԸ

Երկու գլխավոր բաժին ուներ թանգարանը. հնագիտական, որ ճոխացած էր մասնավորապես Բարերարի անձնական թանկարժեք հնություններով, զորս իր մահեն առաջ վարժարան դրկած էր, և գիտական բաժին՝ կենդանաբանական, բուսաբանական և հանքաբանական մասերով:

Այս երկրորդ մասը կազմած էր պրոֆ. Մադաթյան, տարիներու հարատև աշխատանքով:

Ամբողջ Անատոլուի մեջ Սանասարյանի թանգարանը անուն ուներ: Կարին եկող բոլոր օտարականները կայցելեին հոն:

Ուրբաթ և կիրակի օրերը կեսօրեն ետքը ազատ էր թանգարանի մուտքը: Հետաքրքիրներու մեծ բազմություն կուգար դիտելու հոն գտնվող կենդանիները, զմռսված դիակներն ու շիշերու մեջ դրված ուշագրավ զեռունները:

Ոչ միայն Կարնո շրջանի, այլև ուրիշ ավելի տաք վայրերու կենդանիներեն ալ կային հոն, նույնպես բույսեր և հանքեր: Բոլոր նյութերը գիտական կարգով և բաժանումներով դասավորված և մակագրված լատիներեն անուններով:

Գիտական դասերու լավագույն օժանդակն էր թանգարանը. աշակերտությունը կը սովորեր բոլոր նյութերը՝ տեսնելով, զննելով:

Թանգարանեն քիչ բան փոխադրվեցավ Սեբաստիա. մնացածները թուրք վարժարանները տարվեցան պատերազմի ատեն:

## ՍԱՆԱՍԱՐՅԱՆԻ ՈԳԻՆ ՈՒ ԴԵՐԸ

Վարժարանը կը հիմնվի այնպիսի շրջանի մը, երբ Թրքահայաստան քաղաքական և կրթական մութ պատկեր մը ուներ, իսկ կովկասահայր իր ծայրահեղ ռուսասիրությամբը վտանգավոր անելի մը առջև կը գտնվեր:

Օտարացումի այս հեռանկարը շատ զորեղ կերպով մտահոգած է թե Բարերարը և թե իր խորհրդակից կտակակատարը: Պետք էր հիմնել հաստատություն մը, որ թումբ մը ըլլար այդ այլասերումին դեմ ու մինևույն ատեն մշտահոս աղբյուր մը, ուրկե հայ ժողովուրդն ստանար իր հոգեկան սնունդը, իր ոգևորությունը, և ճիշտ այս պատճառով ալ անոնք իրենց պատրաստած կտակին մեջ կը շեշտեն ազգային դաստիարակության զորավոր միտքը ու կը փափագին, որ սաներն ամենեն ավելի այդ նպատակին ծառայեն, ըլլան ուսուցիչ, ընդգրկեն հոգևորական ասպարեզ ու այդ կերպով բարձրացնեն ցեղը:

Հաստատության բոլոր վարչությունները ավանդապահի պարկեշտ կեցվածքով հարգած են այնքան ցանկալի այս նպատակը:

Վարժարանը զորեղ կերպով մշակած է հին ու նոր հայերենները, ընդարձակ կերպով ծանոթացուցած է ազգային և եկեղեցական պատմությունները, սեր ստեղծած է դեպի ազգային եկեղեցին, նկատելով զայն գոյության զորավիզներեն մին, հարգանք տածած է դեպի ազգային մեծ դեմքերը անխտորոհ, արժեք տված է հիշատակարաններուն:

Ահա այն գլխավոր ոգին, որով տոգորված է եղեր Սանասարյանի աշակերտությունը: Բառին բովանդակ իմաստով՝ այս հաստատությունն եղած է ազգային հզոր շունչ մը մեր իրականության մեջ ու իր այդ նկարագրին դրոշմը դրած է ամեն տեղ, ուր երևցած է:

Սուր խթան մը եղած է Կարնո վարժարաններու հառաջդիմության. Ազգանվեր հայուհյաց, Միացյալ ընկերություն անուղղակիորեն օգտված են Սանասարյանի ուղղութենեն: Իսկ մանչերու Արծնյան և աղջկանց Յոհիսիմյան վարժարանները կարելի է նկատել Սանասարյանի թոռները: Ավելորդ է խոսել այն ազդեցության մասին, որ ըրած է օտար կրթական հաստատություններու վրա:

Գրասեղաններու վրայեն աշակերտներն արտահայտել սկսած են իրենց ազգային զորեղ նկարագիրը:

Սանասարյան ունեցած է մեկե ավելի աշակերտական ձեռագիր թերթեր, որոնք ամենեն ավելի նվիրված են եղեր հայ պատմության, լեզվին, գավառաբարբառներուն, ազգային դեմքերուն, պատմական հիշատակարաններուն և այլն: Այդ թերթերը գրական արժանիքե ալ զուրկ չեն եղած:

Սաները չեն բավականացած պղատոնական զգացումներով. մեծապես հետաքրքրված են Սասունի կոտորածներեն խուսափող և Կարին հասնող բեկորներու կյանքով և գաղտագողի կերպով օգնած են անոնց նյութապես: Ոգևորված են հեղափոխական անցյալ սերունդով: 1900-են ասդին դեպի Մուշ, Սասուն մեկնող խումբերը Բասենի դաշտին մեջ իրենց քաջագործություններով մեծ ազդեցություն գործած են աշակերտության վրա, այն աստիճան, որ 1904-ի ավարտական դասարանեն խուսափող և խումբերուն մասնակցող կտրիճներ անգամ երևան եկած են՝ օգնության հասնելու համար կոտորվողներուն, առևանգվողներուն:

Մեր ունեցած հիասթափումներեն և մանավանդ ազգային լավագույն արժանիքներեն մաս մը կորսնցնելե ետք, այսօր թերևս - խորթ երևին մեզի այս դրվագները, բայց իր ժամանակին անձնվիրության և տոհմասիրության ամենեն անկեղծ շեշտերն են ասոնք մեր պատմության մեջ:

Ավելորդ կը նկատեն հիշել այն գնահատումը, զոր ըրած են Պոլսեն, Վենետիկեն և Կովկասեն Կարին այցելող ականավոր անձնավորություններ՝ մեծ դեր մը վերապահելով այս հաստատության:

32 տարիներու շրջանին Սանասարյան երբեք չէ քննադատված հայ ժողովուրդէն և եղած է միշտ անոր պարծանքին ու գուրգուրանքին առարկան, ինչ որ լավագույն ապացույցն է այն խոր հիացումին և երախտագիտութեան, որ ազգն ունեցած է անոր նկատմամբ՝ ըմբռնելով ու հաստատելով անոր դերը:

Ազգային այս ցայտուն ոգին, սակայն, չէ վնասած երբեք կրթութեան մյուս երեսին, ընդհանուր զարգացումին: Սանասարյան միևնույն ոգևորութեամբ հետևած է նաև համաշխարհային կյանքին ու զարգացումով ալ եղած է աչքի զարնող հաստատութիւն: Սաներեն անոնք, որ միջոց ունեցած կամ գտած են եվրոպական կրթութիւն ստանալու, շատ մեծ դյուրութեամբ մասնակցած են համալսարանական քննութեանց և շատ տեղեր առանց քննութեան ընդունվելով, հաջողութեամբ ալ ավարտած են:

Արմենակ Չայրանյան, Սուրեն Ուզունյան, Սարգիս Սերթյան, Արմենակ Մաղաթյան, Գաբրիել Անտուրյան, Խոսրով Չօջան, Վահան Բալասանյան, Չայկակ Տեր-Ռափայելյան և ուրիշ շատեր Սանասարյանի սաներն են, որոնք բժշկական ասպարեզն ընդգրկած էին:

Չակառակ Բարերարի կամքին, քիչ սաներ կրոնական սքեմ հագած են. Գրիգորիս եպիսկ. Պալաքյանէ, զավառացի քանի մը ներհուն քահանաներէ ու վերջերս Գրիգոր Շահլամյանէ զատ ուրիշներ չեն հիշեր:

Վերջին շրջանին բավական թվով գիտութեանց պսակավորներ ալ ունեցած է Սանասարյան. բայց ասոնք հազիվ գործի լծված, Մեծ եղեռնին զոհ դարձած են, բացի տասնյակ մը անհատներէ, որոնք հոս-հոն ցրված են այսօր:

Որպէս արվեստագետ՝ նկարիչ Սարգիս Խաչատրյան և Մախոխյան դարձյալ Սանասարյանի սաներն են:

Չայ առևտրական աշխարհին ալ, Կարնո թե գավառներու մեջ, հոծ թվով սանասարյանցիներ ունեցած է, որոնցմէ ամենքն ալ առհասարակ փայլուն դիրք ստեղծած են իրենց համար: Միայն Կարինեն տասնյակներով անցած են եվրոպա՝ առևտրական ուսումներուն հետևելու համար: Կարինեն, Վանեն, Բաղեշեն դեպի Պոլիս, մինչև Մանչեսթըր, Լիվըրփուլ հասնող վաճառականներ շատ են: Կարնո մտավորականութիւնը սանասարյանցի էր:

Այս հաստատութիւնը շատ փայլուն դեր կատարած է հայկական վեց նահանգներու կրթական գործին մեջ, լիուլի գոհացում տալով իր Բարերարին փափագներուն: Երբեք չափազանցութիւն չըլլար, երբ ըսեմ, թե հայաբնակ ամեն քաղաք մեկէ ավելի սանասարյանցի ուսուցիչ ուներ:

1912-ին, երբ Կարնո «Չառաջ» թերթը անկէթ մը բացավ հայաբնակ քաղաքներու ուսուցչութեան մասին, արդյունքն այն եղավ,

որ հայ ուսուցչության 60-65 %-ը սանասարյանցի էր՝ սովորաբար տնօրենի կամ ավագ ուսուցչի պաշտոնով, և այս պատճառով մեզի երբեք զարմանք չէին պատճառեր այն բազմաթիվ հեռագիրներն ու նամակները, որ ամեն տարի կը հասնեին Կարնո Առաջնորդարան սանասարյանցի ուսուցիչ խնդրելով:

Սանասարյանի կարգախոսն էր՝ դեպի կրթական գործ, դեպի գավառի մութ անկյունները երթալ և այն տեղերը կատարել սերմնացանի գործը:

Կասկած չկա, թե ան հաջողած էր իր գերագույն նպատակին մեջ՝ սատար հանդիսանալով հասարակաց կյանքին: Սակայն, իր այս սրարշավ գնացքին մեջ արհամարհած է անհատական եսն ու բարձրացումը և զոհած է զանոնք հասարակաց սեղանին առջև, ու ճիշտ այդ պատճառով ալ չէ տված պետք եղած թվով շեշտված անհատականություններ:

Հասարակաց օգտին տեսակետով ավելորդ պիտի ըլլա խոսիլ նույն ատենները հայ իրականության մեջ գործող ամերիկյան և եվրոպական քոլեջներու մասին, որովհետև անոնք եղած են սովորաբար Ավետարանական հաստատություններ՝ հակահայկական անբացատրելի բնույթով օժտված: Գալով Պոլսո մեջ գոյություն ունեցող երկու հայ միջնակարգ վարժարաններուն, թեև անոնք տված են կարգ մը ուժեղ անհատներ, բայց հավաքական տեսակետով նվազ նվիրված են եղեր հասարակաց կրթության, քան Սանասարյան. ասոնք Պոլսո կարգ մը առավելությունները վայելելէ ետք, իրենց աչքերը ուղղած են միշտ դեպի Արևմուտք, իսկ Սանասարյան՝ դեպի Արևելք, դեպի հայկական կյանք:

Այսպես, Սանասարյան շեշտված կերպով երևան եկած էր արդեն հայ իրականության մեջ և ուժեղ հավաքականությամբ մը լծված ազգային մշակույթի ծանրածանր ու ապերախտ գութանին ու հայ միտքը լայն կերպով բացած էր իր ակոսները անոր առջև, երբ վրա հասան հայկական եղեռնի օրերը: Անճիտվեցավ երիտասարդ այդ սերունդը՝ չուռճացած, իդեալ կատարելության չհասած:

Տեղին հետ խողխողվեցան սաներեն 90 %-ը. վարժարանը հիմնահատակ կործանեցավ, բյուջեն զեղչվեցավ խոշոր տոկոսով ու այդ հոյակապ հաստատությունը գնաց ու կապվեցավ Կեդրոնականին, որ այսուհետև միմիայն պոլսեբնակ հայերուն օգտակար պիտի կրնա ըլլալ:

Խեղճ Սանասարյան...

## ՍԱՆԱՍԱՐՅԱՆՑԻՆԵՐԸ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԵՋ\*

Ն. Տ. Ս. Թաշճյան

Չ.Յ. Դաշնակցության քառասուն տարվան հարուստ կյանքին վրա ակնարկ մը նետողը բուրգերու պես բարձր կանգնող երևույթներուն քով կը նշմարե նաև շատ մը ուրիշ, համեմատաբար փոքր երևույթներ, որոնք կը գեղեցկացնեն, ա՛լ ավելի կը զարդարեն հայ կյանքի այս վսեմագույն ծնունդը՝ Դաշնակցությունը:

Շա՛տ խոսված է ու գրված Դաշնակցության կատարած դերի մասին մեր կյանքին մեջ: Անոր քառասնամյակին նվիրված այս փոքրիկ հուշարձանին մեջ, ընկերներ դարձյալ պիտի անդրադառնան անոր՝ նոր վերլուծումներով և տարբեր անկյուններե դիտելով այդ ճոխ և բազմաբովանդակ կյանքը:

Ես ալ, երբ իմ դաշնակցական կյանքիս երեսուներորդ տարիի շենին վրա կանգնած, մտամփոփ և խոհուն, կը նայիմ մեր կազմակերպության վրա, իմ աչքիս առջև կը պարզվի սխրալի պատկեր մը, որու ուրվագծման մեկ թեթև փորձն է, որ պիտի ընեմ այս անգամ:

1881 հոկտեմբեր 1-ին, Դաշնակցության հիմնարկութենեն ճիշտ ինը տարի առաջ, հիմը կը դրվեր կրթական հաստատության մը, որու, կարելի է ըսել, ամբողջ սերունդը ապագային պիտի նվիրվեր հայ ազատագրության դատին՝ Չ. Յ. Դաշնակցության միջոցով:

Բարերար Մկրտիչ Սանասարանցի կտակով հաստատված համանուն վարժարանն էր այդ:

Կրթական այդպիսի հաստատության մը բացումը ավելի նշանակալի կը դառնար, երբ ան տեղի կունենար Բարձր Հայքի մայրաքաղաք Կարինի մեջ, ուր այդ օրերուն տեղի կունենային հայկական ազատագրության առաջին խլրտումները:

Թուրք կառավարությունը չարտոնեց վարժարանի սեփական շենքի կառուցումը այդ նպատակի համար գնված ընդարձակ հողին վրա՝ առարկելով, որ այդպիսի բարձր շենքի մը կառուցումը մերձակա ամրոցներուն մոտերը թույլատրելի չէ: Ավելի չարամտություն, քան ռազմագիտական լուրջ արգելք:

\* «Հայրենիք», 1931 թ., փետրվար, թիվ 4 (100), էջ 126-133:

Հրաժարելով սեփական շենք ունենալու գաղափարեն՝ Սանասարյանը մշտապես կը հաստատովի քաղաքին ծայրը, եկեղեցիին կից և անոր պատկանող շենքի մը մեջ, որ աստիճանաբար ընդարձակվելով Հիմնադրին ծախքովը կը հարմարցվի վարժարանի պահանջներուն:

Անցնելէ առաջ մեր բուն նյութին, որ է ամփոփ հիշողություն մը արձանագրել Սանասարյան դաստիարակություն ստացած և հայ կյանքի մեջ առավել կամ նվազ աչքառու դեր կատարած դաշնակցականներու մասին, անհրաժեշտ է ներկայացնել այն մթնոլորտը, որուն մեջ կը զարգանար ուսանողությունը:



ՍՐՏԱԶՈՐԻ ՎՐԱՆՆԵՐԸ

Վարժարանը, իբրև գլխավորապես գիշերօթիկ, վանական կյանքի շատ մոտիկ վիճակ մը կը ներկայացներ, մանավանդ իր առաջին քսանամյակին: Ամփոփված պարսպանման չորս պատերու մեջ, գրեթե ամբողջովին կտրված էինք արտաքին աշխարհեն: Պարսպի դուռը կը բացվեր մեր առջև այն ժամանակ միայն, երբ ուսանողությունը այս կամ այն առիթով խմբովին դուրս պիտի ելլեր:

Գիշերօթիկ աշակերտներուն համազգեստը և անոնց խիստ կարգ ու կանոնի տակ ապրած կյանքը այն տպավորությունը կը ներին այցելուին վրա, թե անոնք մասնավոր ուխտի մը պատկանող անձեր են՝ նվիրված գեղեցիկ իդեալի մը և իրարու կապված ուժեղ կապերով: Եվ այդ զգացումն ալ ուներ ուսանողությունը:

Վանական այս կենցաղը թեև կը նպաստեր ուսանողության ինքնամփոփ կերպով իր աշխատանքին նվիրվելուն, բայց այնչափ ալ նպատակահարմար չէր կյանքին մեջ գործելու պատրաստվող սե-

րունդի մը համար: Ամբողջ յոթը տարի այդ փակ շրջապատին մեջ անցնելէ վերջ, երբ կյանքի դռները կը բացվէին մեր առջև, մենք զմեզ կը գտնէինք բոլորովին նոր ու տարբեր միջավայրի մը մեջ:

Բացի այս թերութենէն, վարժարանը կը ներկայացնէր իր նպատակին ծառայող շատ հարմար միջավայր մը, իր ընտիր ուսուցչական կազմով, իր ճոխ գրադարանով և թանգարանով:


Եվրոպական ազատ միջավայրի մեջ դաստիարակված և ազատ կյանքի պահանջներուն գիտակից ուսուցչական խումբ մը, ավելի քան երեսուն տարի, անընդհատ և հարատև աշխատանքով կատարեց իր դերը՝ տալով զավառի հայության հարյուրավոր ուսուցիչներ, հանրային գործիչներ:

Սանասարյանը հատկանշողը ոչ այնքան իր տված բարձր կրթությունն է, գիտական ճռճճան ֆորմուլներով հարուստ, որքան այն մաքուր, հայկական ոգին, նվիրումի ոգին, որ կը ներշնչվէր հոն:

Դպրոցական ճոխ ծրագրին մեջ, դաստիարակչական մեծ դեր կատարող, նկարագիր կերտող դասերն էին՝ ՀԱՅԵՐԵՆ (գրաբար և աշխարհաբար), հայ մատենագրության խղճամիտ ուսումնասիրությամբ, ՀԱՅՈՑ ՊԱՏՈՒԹՅՈՒՆ, ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՊԱՏՈՒԹՅՈՒՆ (որ ուրիշ բան չէր, բայց եթէ տարբեր ձևով ավանդված ազգային պատմություն մը), ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԶԳԱՑ ՊԱՏՈՒԹՅՈՒՆ և ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ, իբրև լրացուցիչ այս դասերուն, ֆրանսերեն և մանավանդ գերմաներեն դասավանդություններուն զուգընթաց, կընտրվէին ազատաշունչ և դաստիարակիչ գրքեր՝ ընթերցանության և ուսումնասիրության համար:

Այս ուղղությամբ անգերազանցելի դեր կատարած է վարժարանի ոգին, տեսուչներէն պրն. Գ. Աբուլյան, որ իբրև ուսուցիչ ընդհանուր ազգաց պատմության և աշխարհագրության, գիտեր սքանչելի վարպետությամբ ուսանողության ուշադրությունը կեդրոնացնել ազգային ոգին դարբնող, հայրենասիրական կրակը հրահրող երևույթներու շուրջ: Աբուլյանի ավանդած գերմաներէնն ալ տեսակ մը ազատագրական պատմություն էր, որովհետև քերականական գիտելիքներէն հետո մեր դասաժամերը գրավված էին գերմանական հայրենաշունչ գրականության հատընտիրներու ընթերցումով, որ Աբուլյան գիտեր այնչափ հետաքրքիր դարձնել իր լուսաբանություններով և մեկնաբանություններով: Այսպէս էր, օրինակ, Շիլլերի «Վիլհելմ Տելը», Չվիցերիայի ազատագրական պայքարը ներկայացնող այդ սքանչելի գործը. այդպէս էին գերմանական ազատաշունչ գրականութենէն թեոդոր Քյորնըրի և ուրիշներու բանաստեղծությունները, որոնցմէ շատեր գոց կը սովորէինք: Չափազանցություն ըրած չեմ ըլլար, եթէ ըսեմ, թէ ասոնց ընթերցումն ու ու-

սունճասիրությունը նույնքան ներշնչող եղած են մեզի համար, որ-  
քան մեր ազգային պատմության դասերը, և նույնքան հրահրող մեր  
հայրենասիրական զգացումները, որքան ընթերցումը Բաֆֆիի, ո-  
րու «Կայծեր»-ը գաղտագողի ներս կը թռչեին վարժարանի պա-  
րիսպներեն...



ԸՆԹԱՏԱՆԱԲՏՆԵՐՈՒ ԽՈՒՄԲ ՄԸ

1900-ի շրջանաւարտներու խումբը, բարերար Սանսարեանցի նկարով եւ վարժարանի գլխաւոր շէնքի պատկե-  
րով, որու ձայն կողմը կ'երեւի Կարինի հոշակաւոր եկեղեցիի մէկ մասը՝ իր զանգակատունով:

*Կահնգանոսեան*՝ *ձախէն աջ* — ԽԱՍՏԱՏՈՒՐ ԿՈՏՈՏԵԱՆ — Սերաստացի. երկու տարիներ ռուսկական պաշտօն վա-  
րժ. տեղահանութեան առեմ պատաստան շէնքի մը մէջ, ուր ժամերով կը գրագեցնէ գիրքնէ գիրքակալելու կէտ  
զինուորներ, միս միճակ կառելով անոնց դէմ, եւ խլիւլ վերջ բազմաթիւ գոհեր թշնամիէն, ինք ալ կ'իյնայ այդ հե-  
րասական պայտարին մէջ:

ՏԱԿՈՐ ՊԵՋԻՐՅԱՆ — Գոմիայի կողմերէն, ռուսցի իր ծննդավայրին մէջ:  
ԲԱԿՐԱՏ ԽԵՐՊԵՆՆԱՆ — Կարնեցի. վաճառական:  
Ն. Տ. Ս. ԹԱՇՅԱՆ — Այս յուշերը գրի առնողը. Խարբերցի: Ռուսցի Մէլզերի Կերտանակամին մէջ. 1903-ի  
Վերջերը եկած Ամերիկա: 1900-էն ի վեր Գաշնակցական:

ԽՈՒՄԲ ՔԷՄՊԵՆՆԱՆ — Ալեցի. հաստատուած Խարբերդ, իրիւ ներկայացուցիչ Սինկեր կարի մեհնայի  
ընկերութեան. ճահտակուած տեղահանութեան առեմ:

ՎԱՂԱՐՇԱԿ ՄԱՏՈՒՐԵԱՆ — Բարբերցի. յանձնակաւար. գործօն Գաշնակցական:  
ՎԱՀԱՆ ԳՈՒՅՈՒՄՅԱՆ — Ալեցի. ռուսկական պաշտօններ վարած Ալեմ, Սանսարեան վարժարան եւ այլուր:

Աշխակցած «Ազատամարտ» օրաթերթի. եռամեակ Գաշնակցական:  
ՊԱՐՈՅՐ ՊԱՍՏԱՆՆԱՆ — Կարնեցի. ընթացաւարտ ԸՂԱՎ Վերջ Երոպայի մէջ. հետեւած համբային երկրաչա-  
փութեան, որ մը Բարձր Հայքի լեռներուն թափուն հարստ Ելեմները երեւան հանելու բազմամեակ: Զոհ՝ տեղահա-  
նութեան:

Բարբերի նկարին ձայն կողմը նստողը՝ ԱՐՄԵՆԱԿ ԱՆՅՐԱՆՆԱՆ (Տօբ.), Տիֆլիսիցի, որ Երոպա թշկուրին  
ուսուցիչ վերջ, Սանսարեանքեան շրջանին վերադարձաւ Պոլիս՝ բաւական գործօն մասնակցութիւն բերելով կու-  
սակցական աշխատանքներու մէջ: Տեղահանուած իր ընկերներուն հետ է: Յոհառակուած:

Նկարին աջ կողմը՝ ԼԵՒՈՆ ՓՕՍՏԱՆՆԱՆ — Թօգրքի. վարժարանին ծախելով զրկուած Ֆրանսա՝ պարտատու-  
ելու համար ֆրանսերէնի ռուսկութեան Սանսարեանի մէջ: Տեղահանութեան արարկներուն գոհ:

Խմբակաւոր կը ցուցնէ վարժարանի գիշերօթիկ աշակերտներու համազգեստը: Երկու քացատրիւնները՝ Կար-  
նեցի գերեկաններն են:

Մտքի զարգացման և հոգիի ու սրտի դաստիարակության հետ զուգընթաց, պետք եղած ուշադրությունը կը տրվեր նաև ուսանողության ֆիզիկական զարգացման: Մարմնամարզի և շատ մը խաղերու հետ միասին, կը խաղայինք նաև ֆուտբոլ և Կարինի երկարատև ծնռան ընթացքին ամեն օր կը չմշկեինք վարժարանի խնամքով պատրաստված չմշկարանին մեջ: Գարնան, ամբողջ օրը տևող դաշտագնացություններ կունենայինք:

Ֆիզիկական զարգացման և կազդուրման տեսակետե անմոռանալի կը մնա մեր ամառնային արձակուրդը, որ կանցընեինք դաշտի հյուսիսային կողմը գտնվող ձորաբերանը զարմված վրաններու տակ և որ անվանված էր Սրտածոր: Մաքուր օդ, ջուր ու սնունդ, ամենօրյա լոգանք ձորեն հոսող առվակին բերանը շինված ավազանին մեջ, հաճախակի շրջագայություններ դեպի ձորամեջը, և օրվան որոշ ժամերուն սերտողություն. ահա՛ մեր արձակուրդը:

Բարձրագույն կարգերուն համար, սովորական այս կենցաղեն զատ, կար նաև ուրիշ զբաղում մը. ուսուցիչներեն մեկի կամ մյուսի առաջնորդությամբ արշավանքներ կազմակերպելն էր այդ դեպի բարձր գագաթները, դաշտը եզերող լեռնաշղթան, դեպի խաչափայտի լեռները, դեպի Եփրատի ակունքը և դեպի զանազան ուրիշ վայրեր:

Սոսկ ժամանցի համար չէին տեղի ունենար ամբողջ օրը տևող այս արշավանքները. ազգային պատմության և հայրենի աշխարհագրության մեկ-մեկ գործնական դասեր էին ասոնք՝ հաճախ ավելի տպավորիչ, ավելի հուզող:

Կը հիշեմ այդ արշավանքներեն մեկը, որ կատարեցինք առաջնորդությամբ ավագ ուսուցիչներեն Ա. Խաչատրյանի: Դեպի խաչափայտի ամենաբարձր գագաթները, ուրկե պարզ ու ջինջ օր մը հաջողեցանք տեսնելու Ազատն Մասիսի ծյունափառ գագաթը՝ հեռուն, շա՛տ հեռուն, կապուտակ երկինքին վրա ամպի մինակ մնացած կտորի մը երևույթով: Բավական ատեն սևեռած պահեցինք մեր կարոտի ակնարկները անրջային այդ երևույթին, մինչև որ հոգնեցան մեր աչքերը և այդ սպիտակ տեսիլքը անհայտացավ...

Ուրիշ արշավանք մը, շատերեն մեկը, որ նույնպես անջնջելի կերպով տպավորված է մտքիս ու հոգիիս վրա, այդ՝ տեսուչ Աբուլյանի առաջնորդությամբ տեղի ունեցածն է: Վերջին տարին է, վերջին առիթը, ուսանողության հետ քիչ մը ավելի մտերմանալու, սրտի խոր ծալքերը բանալու և անոնց ըսելու ավելին, քան որ սովորական դասավանդության միջոցին կըսվի: Կը քալենք, խուճբով բղրված մեր սիրելի դաստիարակին շուրջը, որ կը խոսի շարունակ հայոց պատմութենեն, մեր այցելած վայրերու հիշատակներեն: Հանկարծ կանգ կառնե ան հի՛ն-հի՛ն դարերու հիշատակներով հա-

րուստ վայր մը.- «Արծակեցեք, զի տեսանեն զբազմութիւն աներածոյն իմ հայրենեաց»... Հին վանքի մը ավերակներուն մեջ էինք. սկսանք քալել մտամուրթի և երկյուղած զգացումով: Հոս-հոն նշմարվող խաչքարերը կը խոսեին մեզի անցյալի փառքերեն, հիմ, լամ օրերեն...

Այսչափ ուսանողության ստացած ուղղակի դաստիարակութեան մասին: Անոր զուգընթաց կար նաև անուղղակի, գաղտնի դաստիարակությունը, որ կուգար դուրսեն և բարձրագույն կարգի աշակերտներուն միջոցով աստիճանաբար կանցներ իրենց հաջորդներուն:

Կարինը, իբրև միջնաբերդներեն մեկը Հ.Յ. Դաշնակցության, չէր կրնար իրեն անհաղորդ պահել կրթական այս բարձր հաստատության չափահաս սաները՝ որոնք բնականորեն կոչված էին իրենց գործակիցներն ըլլալու կյանքի մեջ: Վարժարանի կահագործության ուսուցիչներեն կարմեցի Արամ Վահանյանն էր հարաբերության կապը ներսի ու դուրսի հետ, իսկ հաջորդաբար ուրիշներ, որոնց միջոցով ուսանողության բարձրագույն կարգերը կը ստանային «Դրոշակ» և հեղափոխական գրականություն, բնականաբար շատ գաղտնի, որովհետև տեսչությունը շատ իրավամբ կը զգուշանար վարժարանը վտանգված տեսնել այսպիսով:

Ահա այսպես կը դաստիարակվէր հայ պատանին Սանասարյանի հովանիին տակ: Եվ բոլոր անոնք, որ լրացնելով դասընթացքը, մեկնեցան ծննդավայր, իրենց հետ տարին այս նույն ոգին՝ իր կարգին փոխանցելու համար գավառի պատանեկության:

Ծանոթ հայասեր և գիտնական ճանապարհորդ Լինչ, Սանասարյան այցելած ատեն, հետևյալ կերպով արտահայտված է աշակերտության մասին. «Սաներու բոլորի դեմքին վրա վճռականություն կը տեսնես, որ ապացույց է զորեղ նկարագրի մը գոյության»:

Վարժարանի հարյուրավոր աշակերտներուն մեջ քիչեր, աննշան թվով բացառություններ միայն գտնված են, որ շեղած են իրենց ցույց տրված ճամփեն, կամ չեն արդարացուցած իրենց վրա դրված հույսերը:

Եվ բոլոր անոնք, որ ազգային կյանքի մեջ ունէ գործոն դեր կատարած են, կատարած են իբրև դաշնակցական: Վարժարանեն դուրս, կյանքի մեջ, Դաշնակցության հարիւր բնական շարունակությունը կը նկատեինք մեր աշակերտական կյանքին: Իբրև բացառություն՝ կը ճանչնամ մեկը միայն, Արմեն-Գարոյի դասընկեր Հարություն Սարգիսյան, որ խարբերդի մեջ հարեցավ Հնչակյան կուսակցության, վերջը, Ամերիկայի մեջ Վերակազմյալ Հնչակյան, միշտ մնալով լավ հայ և մաքուր հայրենասեր: Կարևորը նպատակին ծառայելն էր. միջոցները կրնային տարբերիլ:

Այսպես պատրաստվեցավ Սանասարյանցի դաշնակցական սերունդը, որով իմ ծանոթությանս սահմանին մեջ և հնարավոր չափով պատկերը պիտի փորձեմ ներկայացնել, ուրիշներուն թողլով լրացնել իմ պակաս թողուցածս կամ սրբագրել վրիպումներս: Ավելորդ է ըսել, թե այդ սերունդի բոլոր ներկայացուցիչները անձամբ ճանչնալու հնարավորությունը չունեի: Գրած եմ հուշերս ինձ ծանոթներու մասին, իսկ ինձ անձամբ և մոտեն անծանոթներու մասին տեղեկություններ հավաքած եմ ուրիշներե, ջանալով կարելի եղածին չափ ամբողջական ընել նյութս:

ԱՐԱՍ ԱՐԱՄՅԱՆ (Աշոտ-Թաթուլ) - Ահա մեկը, որ քսան տարեկան վառվռուն տարիքին մեջ կը միանա Դաշնակցության անոր հիմնված թվականեն իսկ և վեց տարվան իր գործունեությամբ կը հասնի ղեկավարի դիրքին իր շրջանի մտավորականության մեջ և ընդհանուր կազմակերպության մեջ աչքի զարնող տեղ կը գրավե:

Բնիկ կարնեցի, ծնած 1870-ին: Սանասարյանի ընթացքն ավարտելէ վերջ կըլլա Թաղական խորհուրդի քարտուղար կարճ ժամանակի մը համար և շուտով կանցնի իր կյանքի կոչումին, որ է ըլլալ հեղափոխական գործիչ:

1892-ին կը մասնակցի Դաշնակցության անդրանիկ Ընդհանուր ժողովին, ուր եռանդուն կերպով կը պաշտպանե անհատական տեռորի իր դավանանքը: Հեղափոխական մարդու դերը պիտի ըլլա, կը հավատար ան, հարվածել վատն ու մատնիչը, հայ ժողովուրդի ազատության թշնամիները, ուր որ տեսնե, ուր որ գտնե, առանց վերին մարմիններու հրահանգին կամ որոշումին սպասելու:

Ընդհ. ժողովեն վերադարձին, իբրև պարզուկ գյուղացի, կը շրջի Կարնո գյուղերը և կը կազմակերպե երիտասարդությունը: 1896-ի հուլիս 9-ին կը ձերբակալվի Քյոփոյու Քյոյի մեջ և երեք տարվան բանտային տաժանելի կյանքե մը վերջ, Կարին քաղաքի հրապարակներեն մեկին վրա կախաղան կը բարձրացվի 1899 օգոստոս 9-ին: Դեպի կախաղան կը դիմե ան կտրիճի վայել կեցվածքով և չվանը իր իսկ ձեռքով իր վզին անցնելէ առաջ, հրաշունչ ճառ մը կարտասանե՝ ներբողելով հեղափոխությունը և դատապարտելով թրքական անարգ բռնակալությունը: Իր վերջին խոսքերը կըլլան՝ «կեցցե՛ հեղափոխություն»:

Այսպես կը վերջանա այս խոստմնալից կյանքը՝ ավսոսանքը իր սրտին մեջ, որ ինք բախտ չունեցավ զենքը ձեռքը և թշնամին հարվածելու պահուն իյնալ...

ԳԱՐԵԳԻՆ ՓԱՍՏՐՄԱՃՅԱՆ (Արմեն-Գարո) - Կարնեցի, զավակ Փաստրմաճյան հայտնի գերդաստանին:

Հիշողություններու այս թռուցիկ արձանագրության մեջ կարևոր տեղ կը գրավեն ան ոչ թե միայն իբրև ամենեւն կարկառուն դէմքը դաշնակցական այդ սերունդին, այլ և իբրև անդրանիկ ընթացավարտներէն մին Սանասարյանի:

Փաստրմաճյանի կյանքն ու գործունէությունը այնչափ ծանոթ են արդէն, որ հազիվ թէ պետք ըլլա երկար կանգ առնել և ներկայացնել զայն: Սահմանափակ այս էջերուն մեջ ժամանակագրական կարգով հիշենք միայն դէպքերը և անցնինք:

1891-ին կավարտե Սանասարյանը:

1894-ին կերթա Ֆրանսայի Նանսի քաղաքը՝ երկրագործություն ուսանելու, նպատակ ունենալով վերադառնալ Կարին՝ երկրագործական արդիական միջոցներով մշակելու Փաստրմաճյաններու ընդարձակ հողերը՝ այդպիսով գործնական դաս մը տալու հայ գյուղացիին: Հազիվ սկսած իր դասերուն, տեղի կունենա 1895-ի ջարդը՝ փոթորկելով Նանսիի 26 հայ ուսանողությունը, որոնցմէ չորսը՝ Արմեն-Գարո, Սրենց, Հրաչ և Ներուզ կը թողուն դպրոցը և կը վերադառնան Երկիր՝ վրեժխնդրական ոգիով լեցված: 1896-ին Արմեն-Գարո կը մասնակցի Պանք-Օթոմանի գրավման: Ցույցէն հետո կանցնի Զվիցերիա, ուր կը հետևի բնական գիտություններու և 1900-ին կավարտե դոկտոր գիտության տիտղոսով, և կարճ ատենվան մը համար կուգա Ամերիկա, ուր իբրև քիմիագետ կաշխատի, կարծեմ Նյու Ջրսիի մէջ: 1901-ին կանցնի Թիֆլիս, ուր կը բանա քիմիական աշխատանոց մը: Վրա կուգան հայ-թաթարական կռիվները 1905-ին, և Արմեն-Գարո կը թողու իր աշխատանոցը, մասնակցելու համար ինքնապաշտպանության աշխատանքին, զոր հաջող կերպով տարավ: 1908-ին, Օսմանյան Սահմանադրության հռչակումով, Կարինի երեսփոխան ընտրվեցավ Վարդգեսի հետ և գնաց Պոլիս, ուր ունեցավ աչքառու գործունէություն մը: 1914-ի աշնան անցավ Կովկաս և մասնակցեցավ կամավորական գունդերու կազմակերպման աշխատանքին, եղավ հայկական Երրորդ զորագնդի հրամանատար՝ Դրոյի վիրավորվելէն հետո:

1917-ի հունիսին եկավ Ամերիկա իբրև ներկայացուցիչ Թիֆլիսի Հայոց ազգային խորհուրդին և իբրև մանավանդ պատվիրակ էջմիածնի կաթողիկոսին:

Ամերիկայի մէջ ձեռնհասորեն վարեց իրեն հանձնված դիվանագիտական գործը: Հրատարակեց "Why Armenia should be Free" (Ինչո՞ւ Հայաստանը պետք է անկախ ըլլա) գրքուկը և տարածեց ամերիկյան ազդեցիկ շրջաններուն, որոնց հետ անձնական հարաբերություններ ալ հաստատած էր արդէն: Կարծե հիշել հոս անոր մտերմությունը և սերտ գործակցությունը Չեխոսլովակիայի նախ.

Մասարիքի հետ, որ իբրև բարեկամ իրենց ազատության պայքարը մղող ազգերու, շատ համակրած էր Գարոյին:

Հայաստանի Հանրապետության հռչակումով, եղավ Հայաստանի ներկայացուցիչը Վաշինկթոնի մեջ: Այնչափ խորապես համոզված էր Հայաստանի անկախության տևականության, որ չուզեց վարձակալ ըլլալ և ժողովրդային նվիրատվությամբ գնեց Վաշինկթոնի Հայկական դեսպանատունը: Իր ջանքերուն շնորհիվ, Միացյալ Նահանգներու կառավարությունը առաջինն ըլլալով, ճանջցավ հայկական անկախ հանրապետությունը: Այդ լուրը «Հայրենիք»-ին կը հաղորդէր Վաշինկթոնէն հեռագրով մը, որուն մեջ կըսեր. «Կյանքիս ամենաերջանիկ օրն է. Միաց. Նահանգներու կառավարությունը ճանջցավ Հայաստանի Հանրապետությունը»:

Երկար չտևեց, դժբախտաբար, այդ ուրախությունը: 1922-ին հրաժեշտ տվավ Ամերիկային, սրտաբեկ և ֆիզիկապես խորտակված, երթալ միանալու իր տիկնոջ և մեկ հատիկ զավկին ժնկի մեջ, ուր և մեռավ կարճատև հիվանդութենէ մը վերջ:

**ՄԻՍԱԸ ԳՈՒՅՈՒՄՅԱՆ (Առանձար) –** Թալասցի, հարուստ ընտանիքի զավակ, օժտված բազմակողմանի ընդունակություններով, որոնց մեջ աչքի կը զարներ երգիծականը: Սուր դիտողության տեր, վարժարանի աշակերտները, աչքի ընկնող աշակերտները, մկրտած էր զիրենք հատկանշող ածականներով: Ընկերական էր և կատակախոս: Իր սուր և քննադատող բնավորությամբ չկրցավ հաշտ ապրիլ ուսուցչության հետ և, կարծեմ, կիսատ թողուց Սանասարյանը: Մտնելով Դաշնակցության մեջ՝ գրավեց աչքի զարնող դիրք: 1900-ի թե 1901-ի ատենները Ամերիկա կուգա՝ այստեղի կուսակցական աշխատանքին լծվելու համար, բայց հազիվ Նյու Յորք ոտք դրած, կը տեսնե, որ սա իր միջավայրը չէ, և հաջորդ նավով իսկ կը վերադառնա Եվրոպա: Մեծ փափագ ուներ մտնելու Սասուն, ուր այն օրերուն ֆեդայական եռանդուն գործունեություն մը կար: Չհաջողելով գոհացում տալ իր այդ բաղձանքին, կանցնի Կիլիկիա, իբրև տեսուչ Ատանայի ազգային վարժարանին: Հակառակ նյութապես ապահովված, հարուստի զավակ ըլլալուն, մեծ եռանդով կը փարի ուսուցչական ասպարեզին: Գրած է «Փրկիչներ» անուն գրքույկ մը, ուր երևան կը բերե իր հեզնական-երգիծական անվիճելի կարողությունը: Երիտասարդ հասակի մեջ կը մեռնի այս տաղանդավոր հայը՝ անմուրազ, իր շատ մը ընկերներուն պես:

**ՏԻԳՐԱՆ ԽԱՉԻԿՅԱՆ (Արզուման) -** Կարնեցի, շրջանավարտ ըլլալէ վերջ, 1907-ի ատենները, Եդիշե Թոփչյանի ջանքերով,- որ այն ատեն Կարնո ազգային վարժարաններու տեսուչ էր,- Եվրոպա

կը դրկվի, կառավարական ծախքով, բարձրագույն կրթություն ստանալու համար: Կուսակցականորեն դաստիարակված Ռոստոմի և Թոփչյանի շունչով, ժնկի մեջ կըլլա դաշնակցական ուսանողական միության ամենաեռանդուն և գործոն անդամներեն: Կաշխատակցի «Ուսանող» ամսագրին և ընկերական իր ջերմ և դյուրահաղորդ բնավորությամբ կըլլա տեղական մասնաճյուղի ոգին: Չորս տարի բնական գիտություններու հետևելէ վերջ, 1912-ին կը վերադառնա Պոլիս: Թուրք կառավարությունը կառաջարկէ անոր պաշտոնով մեկնիլ թրքական շրջանները, բայց ան նախընտրելով գործել հայկական զավառներուն մեջ, կը մերժէ կառավարության առաջարկը:

1914-ին մասնակցեցավ Կարինի Ընդհանուր ժողովին, որմէ վերջ փախստական անցավ Պոլիս և հետո Բուլղարիա: Եղավ գործիչ բալկանյան շրջանի, և ընդհանուր պատերազմի ընթացքին եղավ հարաբերության կապ Պոլսի մարմիններուն և արտասահմանի հետ: Տեղահանության շրջանին, Ջավեն պատրիարքի հանձնարարությամբ կը մեկնի Թիֆլիս՝ Ազգային խորհուրդին տեղեկացնելու թրքահայության սպառնացող վտանգի մասին և ստանալու անոնց խորհուրդն և նյութական օժանդակությունը: Կը վերադառնա Պոլիս, նյութական բավական կոկիկ գումար մը իր հետ: Նորեն կանցնի Բալկանները: Ջինադադարին՝ Պոլիս, ուր պատգամավոր ընտրվեցավ մասնակցելու Երևանի Ընդհանուր ժողովին, բայց 1919-ին զոհ գնաց անագորույն հիվանդության մը:

Այս ճարպիկ և հանդուգն գործիչը կը ճամփորդեր Ստեփան Արզումանյան պարսկական անցագրով մը, ուրկէ ստացած է իր հեղափոխական անունը՝ Արզուման:

ՏԻԳՐԱՆ ԱՄՍԵՅԱՆ (Ծամհուր, Ֆերիտ-ճենիլ) - Սղերդցի, ուսանողության շրջանին ցույց տված է արտակարգ ընդունակություն և հակառակ արաբախոս շրջանէ մը եկած ըլլալուն, շուտով կը տիրանա հայերենի, կը հրատարակէ «Մանիշակ» անուն աշակերտական խմորատիպը: Ընթացավարտ ըլլալով, եղած է ուսուցիչ-գործիչ: 1905-1906-ի շրջանին ուսուցչության կանչված է Սանասարյանի մեջ:

Սիրահար հեղափոխական ձեռնարկներու, հաճախ կը զբաղի եղեր պայթուցիկներու պատրաստությամբ, որու հետևանքով տեղի ունեցած պայթումի մը պատճառով կը ձերբակալվի և կը բանտարկվի Այնթապի մեջ: Տեղահանության ատեն, խումբ մը երիտասարդներու հետ, կաքսորվի Գոմիա, ուրկէ կը հաջողի անցնիլ Տավրոս և Ամանոս, այս անգամ իբրև մարդիմցի ասորի, և շնորհիվ իր գերմաներեն գիտնալուն՝ գերմանական երկաթուղային ընկերութ-

յան մեջ կը հաջողի թռուցիկ պաշտոն մը ապահովել և ազատ-համարձակ երթևեկել Բյուզանդիեն Մուսուլ գծին վրա՝ պատճառ ըլլալով շատ մը վտանգված հայերու ազատման դեպի Վան և ապահով ուրիշ վայրեր:

Ձինադադարի շրջանին, Ադանայի մեջ հրատարակվիլ սկսող «Կիլիկիա» կուսակցական թերթին և դաշնակցական պրոպագանդին կը տրամադրէ իր ուժերը: Հայաստանի Հանրապետության օրերուն կանցնի Հայաստան և կունենա եռանդուն գործունեություն մը թե՛ իբրև դաշնակցական և թե՛ իբրև անդամ Խորհրդարանի: Փետրվարյան ապստամբության ատեն և կռվի տաք վայրկյանին հանդգնությունը կունենա եռագույնը ձեռքը առաջ սուրալու՝ Հայաստանի անկախության խորհրդանիշը կանգնեցնելու համար Խորհրդարանի շենքին վրա, բայց գնդակահար կլինա:

ՍԵՐՈՎԲԵ ՆՈՐԱՏՈՒՆԿՅԱՆ - Սղերդցի, պաշտոնավարած Սանասարյանի մեջ, որու Սեբաստիա փոխադրության շրջանին կը հաստատվի Պոլիս, ընտրվելով ազգային երեսփոխան: Պաշտոն ճարելով ներքին գործոց նախարարության մեջ՝ մոտեն պատեհություն կունենա տեղեկանալու ներքին գավառներուն մեջ տեղի ունեցող անցուդարձերուն, որոնց գիտակ կը պահե Պոլսո մեր մարմինները՝ այսպիսով մեծ ծառայություն մատուցանելով: Կաքսորվի Պոլսո հայ մտավորականության ձերբակալության ատեն և անոնց հետ կը բաժնէ դառնության բաժակը...

Նահատակված և բնական մահով մեռած ինծի ծանոթ հայտնի դեմքերն են ասոնք: Դեռ կենդանի և ազգային և կազմակերպական գործոն աշխատանքի լծվածներուն մեջ կը գտնվին.-

ՎԱՀԱԳՆ ՔՐՄՈՅԱՆ.- ուսուցիչ, գործիչ, Հայաստանի Հանրապետության ներքին գործոց նախարարի օգնական, այժմ գործիչ Ամերիկայի դաշնակցական շրջանին:

ԽՈՍՐՈՎ ՊԱՊԱՅԱՆ.- նույնպես գործիչ, և ուսուցիչ Սանասարյանի մեջ և այլուր, անդամ Հայաստանի Խորհրդարանի, Ամերիկայի մեջ իբրև անդամ «Հայրենիք»-ի խմբագրության և քարտուղար Կարմիր խաչի Կեդր. վարչության, Նյու Յորք, անդամ Ամերիկահայ ազգային կեդրոնական վարչության:

ՄԿՐՏԻՉ ՊԱՐՍԱՄՅԱՆ.- ուսուցչական պաշտոններ վարած է Մեզրեի Կեդրոնականին և Սանասարյանի մեջ: Նաև տնօրեն Գոնիայի վարժարանին: Այժմ հաստատված է Փարիզ և նվիրված գրական աշխատանքի:

**ՓԱՅԼԱԿ ՍԱՆԱՍԱՐ.**- Փարիզի դաշնակցական կազմին անդամ, կաշխատակցի «Հառաջ»-ին:

**Յ. ՏԵՐՊԵՏԵՐՅԱՆ.**- հաստատված Փարիզ, զբաղելով հանդերձ անշարժ կալվածի գործով, ժամանակ կը գտնե գրական-գիտական ուսումնասիրություններու, հրատարակված «Հայրենիք» ամսագրի մեջ: Գործոն դաշնակցական:

**ԱՐՏ. ՅՈՎՍԵՓՅԱՆ (Մալխաս).**- 1887-ին մտած է Սանասարյան, երկու տարի միայն ուսանելէ վերջ վերադարձած իր ծննդավայրը՝ Տրապիզոն: 1894-ին դարձյալ եկած է Սանասարյան, կիսատ թողուցած ուսումն ավարտելու, բայց իր դասընկերներուն հետ կուներա ըմբոստ կյանք մը և շրջանն ավարտելու վեց ամիս մնացած կը հեռանա:

Հովհաննես Սյուզմեճյանի հետ կը հրատարակե «Ընկերական սիրտ» անուն ուսանողական խմորատիպ մը: Կահագործության ուսուցիչ կարնեցի Արամ Վահանյանի միջոցով կը ստանան եղեր «Դրոշակ» և կուներան գաղտնի ժողովներ: Հեղափոխական խլրտումներու այս շրջանին, նամակ կը գրեն ճեմարանի և Ներսիսյան վարժարանի, այնտեղի ուսանողության հետ կապ հաստատելու համար: Նամակները կը բռնվին տեսչության կողմէ և իրենց շարք մը ուրիշ ըմբոստական արարքներուն համար խմբովին կը բանտարկվին՝ վարժարանի «խուց»-երեն մեկին մեջ:

Վարժարանէն հեռանալէ վերջ, կերթա Սամսոն, ուր այն ատեն կը գտնվեր Դաշնակցության ներկայացուցիչ Արտաշես Դեյան և առաջին անգամ կը մտնե կազմակերպության շարքերուն մեջ 1896-ին: 1896-ի օգոստոսին կուգա Ամերիկա, կը գործակցի Ամերիկայի դաշնակցական ընկերներուն, կը հրատարակե «Հեղափոխական վեպիկներ» գրքույկը՝ Միր Հագոր կեղծանունով: 1903-ի սկիզբը կը մեկնի Ժնև, ուրկե Երկիր, հետո, Սահմանադրության շրջանին, Պոլիս, ուր կընտրվի Սղերդի շրջանէն ազգային երեսփոխան: Կամավորական շարժման ատեն Կովկաս կանցնի. կը մասնակցի Երևանի Ընդհանուր ժողովին: Հանրապետության անկումէն հետո, կանցնի արտասահման: Այժմ Բոստոնի մեջ զբաղած է իր «Ապրումներ»-ը հրատարակելու աշխատանքով:

Հաջորդ տողերուն մեջ կարձանագրեմ, շատ անփոփ ծանոթություններով, անունները այն ընթացավարտներուն, որոնց մասին միջոց ունեցած չեմ մանրամասն և ստույգ տեղեկություններ քաղելու:

**ՀՈՎՀ. ԱԲԳԱՐՅԱՆ.**- տրապիզոնցի:

ԲԱՐՈՒՆԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ.- վանեցի. ուսուցչական պաշտոն վարած Տրապիզոնի մեջ:

ՎԱՐԵ ԹՈԳԱՅՅԱՆ.- կարնեցի, ուսուցիչ և կուսակցական գործոն աշխատանքի լծված:

ՀՈՎՀ. ՊՈՂՍՈՅԱՆ.- քղեցի, ուսուցիչ և գործոն դաշնակցական:

ԱՆԴՐԱՆԻԿ ԵՍԱՅԱՆ.- քղեցի, ուսուցիչ Սանասարյանի մեջ և այլուր:

ՄԱՆՈՒԿ ՊԱԼՈՅԱՆ.- բալուցի. ուսուցչական պաշտոններ վարած Տրապիզոն, Երիզա և այլուր: Մասնակցած է Կարինի Ընդհանուր ժողովին և զոհ գացած տեղահանության սարսափներուն:

ԲՅՈՒՋԱՆԴ ԳԱՐԱԿՅՈՉՅԱՆ.- կիրասոցի. 1911-ին ուսուցիչ էր իր ծննդավայրին մեջ:

ՊՈՂՈՍ ՊԱԼԵՈՉՅԱՆ.- մարզվանցի(?). ուսուցչական պաշտոններ վարած Ամասիա, Իզմիր և այլուր:

ԳԱՐ. ԱԼԹՈՒՆՅԱՆ.- շապին-գարահիսարցի. ուսուցիչ իր ծննդավայրին մեջ: Ավագ ուսուցիչ Սամսոնի ազգային վարժարանին, տարագրության զոհ:

ՍՏԵՓԱՆ ՇԵՀՐԵՐՅԱՆ.- քղեցի. տեսուչ Կարնո Հռիփսիմյան վարժարանի և Միացյալի Քղիի շրջանին:

ԼԵՎՈՆ ԳԱՐԱԳԱՇՅԱՆ.- կարնեցի. ուսուցչական պաշտոն վարած Կարին և այլուր. այժմ կը գտնվի Կիպրոս, ուսուցչական պաշտոնով Սելքոնյան որբանոցին մեջ:

\* \* \*

Ինչպես տեսնվեցավ այս համառոտ ուրվագծումեն, Կարինեն մինչև Պոլիս ամբողջ տարածության վրա, գրեթե բոլոր աչքի գարնող հայկական կեդրոններուն մեջ, սանասարյանցիները կատարած են իրենց համեստ դերը կրթական-հեղափոխական ասպարեզին մեջ, արժանի հիշատակության և գնահատության:

1912-ին Կարնո «Յառաջ» թերթի կատարած վիճակագրական ուսումնասիրության մը համաձայն, հայաբնակ քաղաքներու ուսուցչության 60-65 %-ը եղած են Սանասարյանի ընթացավարտներ, կամ իբրև տեսուչ և կամ իբրև ավագ ուսուցիչ:

\* \* \*

Յարգանք ձեզ, բոլորիդ, որ ինկաք պարտականության ճանփուն վրա:

Քառասնամյակի տոնակատարության այս հանդիսավոր պահին, ողջ մնացածներս կը նորոգենք մեր ուխտը՝ մեր համեստ ուժերով շարունակելու ձեր կիսատ թողուցած աշխատանքը, մինչև իրականանա մեր բոլորի երազը:



**ՏՈՒՐԱՆ ԽԱԶԻԿԵԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՒ ԻՐ ՀԱՐԵՒԱՆՆԵՐԸ\*



**Ս. ՎՐԱՅԵԱՆ**

Ժողովրդների քաղաքական վիճակը մեծապես կախուած է այն շրջապատից, որի մէջ գտնուում են նրանք: Հայ ժողովրդի քաղաքական դրութիւնը ճիշտ ըմբռնելու, ապագայի անսխալ ուղիներ գծելու համար, ամենից առաաջ պէտք է հաշւի առնել այն ուժերը, որոնց կողքին ապրում է նա և որոնց կեանքին պէսպէս թելերով կապուած է իր կեանքը:

Հայաստանի հարեւաններին կարելի է բաժանել երկու կարգի.- Նախ՝ այն ժողովուրդները, որոնց հետ մեր յարաբերութիւնները բուլորովին պարզ են: Դրանք են Պարսիկները և Թուրքերը: Պարսկաստանի և Հայաստանի միջև չկան վիճելի լուրջ խնդիրներ. սահմանները որոշ են և երկուստեք ճանաչուած, բարեկամութիւնը, կարելի է ասել, բնական է, երկու կողմի համար էլ օգտակար և անհրաժեշտ: Տնտեսական մի շարք առկախ մնացած հարցեր (*տրանզիտ*, ևն.) կը լուծեն առանց դժարութեան, հէնց որ Հայաստանը դառնայ միջազգային իրաւունքի անկախ անձնաւորութիւն: Այն անվերապահ

---

\* Հոդվածն առանց բնագրային փոփոխութիւնների արտատպւում է «Դրօշակ» հանդէսից (Փարիզ, 1926թ., N 3, էջ 68-71):

համակրանքը, որ պարսիկ ժողովուրդն իր բոլոր խաւերով ցոյց տուաւ դէպի հայ ժողովուրդն ու Յայաստանը վերջինիս անկախութեան շրջանուն և շարունակուն է ցոյց տալ այսօր էլ, գրաւական է, որ ապագայուն էլ երկու ժողովուրդների միջև բարեկամութիւնը կը լինի անկեղծ և տևական.

Որոշ է փոխարաբերութիւնը նաև Թուրքիայի ու Յայաստանի միջև: Թուրքիայի անհաշտ և թշնամական ընթացքը դէպի բոլոր հայերն անխտիր, մինչև այժմ փակել է հասկացողութեան ամէն դուռ: Ամէն անգամ, երբ հայկական շրջաններուն առաջ են եկել տարրեր, որոնք փորձել են փնտռել հայ-թրքական արիւնոտ կնճիռը լուծելու համար խաղաղ միջոցներ, նրանց ճիգերը հանդիպել են թուրք ղեկավարների բացայայտ թշնամանքին և յօդս են ցնդել: Այսօր էլ տակաւին Յայերն ու Թուրքերը կազմուն են երկու հակամարտ բանակներ, որոնք բոլոր ճակատներուն կեանքի և մահուան կռիւ են մղուն միմեանց դէմ: Այդ կռիւը աղետաւոր է երկու կողմերի համար էլ, բայց մաշի կարող վերջանալ, մինչև որ Թուրքիայի մէջ էլ ծագի և ընդհանրաճայ այն գիտակցութիւնը, թէ հայ ժողովրդի արդար պահանջները պետք է բաւարարեն:

Յայաստանի երկրորդ կարգի հարևանները նրանք են, որոնց շահերը իրար հետ ամենասերտ կապերով միացած լինելով հանդերձ՝ դեռ ևս չունին բոլոր կողմերի համար էլ ընդունւած, հանրաճանաչ սահմաններ, համակեցութեան որոշ ձևեր և փոխադարձ շահերի ճիշտ գիտակցութիւն: Այդ ժողովուրդներն են, ադրբեջանցիք ու վրացիները հիւսիսուն և քրդերը հարաւուն.

Քրդերը դեռ ևս պետական կեանքով չեն ապրել, գտնուուն են ազգային զարթօնքի սկզբնական շրջանուն և չունին բանաձեւած, որոշ և հանրապարտադիր ազգային-քաղաքական ծրագիր. այդ պատճառով հայ-քրդական փոխարաբերութիւնների ձևակերպման գործը մնուն է ապագայի խնդիր: Յակառակ այն հանգամանքին, որ երկու կողմերն էլ բազմաթիւ ծանրակշիռ հարցերով կախուած են միմիանցից, դեռ շատ ջուր կը հոսի, երևի, մինչև որ հայ-քրդական հասկացողութիւնը դառնայ գործօն փաստ:

Այդ է դրութիւնը վրացիների և ադրբեջանցիների նկատմամբ. այստեղ գիտակցութիւնը չէ որ բացակայուն է: Ընդհակառակը, Յայաստանի հարեւան այս երկու ժողովուրդները ունին միանգամայն յստակ ազգային գիտակցութիւն ու քաղաքական ծրագիրներ, դեռ երէկ ապրուն էին սեփական պետական կեանքով և այսօր էլ շարունակուն են պայքարիլ յանուն անկախութեան վերականգման: Բացի այդ, մեջտեղը կայ նրանց և Յայաստանի փոխարաբերութեանց հարուստ փորձ և առատ նիւթ, անցեալի զնահատութեան և ապագայի լաւագոյն յարաբերութիւնների մշակման համար: Միւս կողմից, այս երեք

ժողովուրդների աշխարհագրական, տնտեսական և ազգագրական պայմանները այնպես են, նրանց կեանքը այնքան սերտ կերպով կապուած է միմիանց հետ, որ մէկի բարեկեցութիւնը դժուար է երևակայել առանց միւսի բարօրութեան: Այդ պատճառով, Ադրբեջանի, Յայաստանի, Վրաստանի փոխարարբերութեանց հարցը որ առաջնակարգ նշանակութիւն ունէր երէկ, մնում է հրատապ, և այսօր:

Բօլշևիկները պնդում են, թէ Կովկասում ազգային հարց գոյութիւն չունի, բոլոր վիճելի խնդիրները լուծուած են “ժողովուրդների ազատ կամարտայայտութեամբ” և ամենուրեք իշխում է եղբայրական սէր ու համերաշխութիւն: Մի տեսակ “ի յերկիր խաղաղութիւն և ի մարդիկ հաճութիւն»: Եւ իրօք, առաջին հայեացքից այդպէս էլ թւում է. բուն վէճեր ու բաղխումներ չեն նկատուում և տիրում է լռութիւն: Բայց ուշադիր դիտողը շատ հեշտութեամբ մը տեսնէ, որ այդ նոյն չարագուշակ ու գերեզմանային լռութիւնն էր, որ տիրում էր ցարական իշխանութեան օրով: Այն ժամանակ էլ ժամդարմական մտրակի հովանու ներքև “եղբայրական սէրն ու համերաշխութիւնն” էր թագաւորում կովկասեան ժողովուրդների միջև. բայց այդ չէր խանգարում, որ հէնց որ փոքր ինչ ազատութիւն տրուէր, նոյն այդ ժողովուրդները սկսէին միմիանց վրա յարծակել խօսքով, գրչով ու դաշոյնով:

Սօտաւորապէս նոյն ժամդարմական ձևերով է “լուծուած” ազգային հարցը այսօր Կովկասում և, բնականաբար, տիրող “խաղաղութիւնն ու հաճութիւնն” էլ միևնոյն բնոյթն ունին: Ազգային հակամարտութիւնները չեն վերացուած, խեղդուած են: Ամենագօր Չէկան ընդհանուր լռութեան է դատապարտել ամենքին, բայց հէնց որ այդ Չէկայի ազդեցութիւնը թուլանայ, ազգային կրքերը դարձեալ երևան կը գան տարերային թափով և, ինչպէս պատահեց ցարիզմի խորտակման վայրկեանին, նորից կարող են մէջտեղ ելնել թշնամանքն ու զէնքը: Ուր չկայ փոխադարձ հասկացողութիւն մարդկանց մէջ, խօսքը միշտ անցնում է զէնքին... Այդպէս կարող է պատահել, որովհետև անցեալ անհամաձայնութեանց ու բարդութիւնների բոլոր հիմնական պատճառները մնացել են անփոփոխ և այժմ:

Խորհրդային իշխանութիւնը նկատելով սոսկ իբրև ժամանակաւոր դրութիւն, որը, հակառակ իր մեծադորդ խոստումների ու բազմազան փորձերի, իրական խաղաղութիւն չտուեց Կովկասեան ժողովուրդներին, այս վերջինները պէտք է աշխատեն ստեղծել այնպիսի մի դրութիւն, որ վաղը, երբ այլևս ո՛չ ժամտարմ լինի և ո՛չ Չէկա, հնարաւոր լինի հաստատել իսկական խաղաղութիւն ու համերաշխութիւն: Այս նպատակով նրանք պէտք է նորից ու նորից անդրադառնան անհամաձայնութեան և կռիւների աղբիւր ծառայող երեւոյթներին և ջանան գտնել վիճող կողմերի համար ընդունելի և ընդհանուրի ներդաշնակ զարգացումն ապահովող ձևեր: Այս մտա-

հոգութեամբ, ահա մենք կը փորձենք քննութեան առնել այն խնդիրները, որոնք ցարդ անլոյծ են մնացել Չայաստանի, Վրաստանի ու Ադրբեջանի միջեւ: Կրկնում ենք՝ մեր մեկնակետը այն ըմբռնումն է, որ խորհրդային ռեժիմը ժամանակաւոր դրութիւն է, անխուսափելիօրէն պիտի խորտակուի և նրա աներակների վրա մեքքենական կերպով նորից կեանք պիտի ստանան Անդրկովկասեան անկախ հանրապետութիւնները:

\* \* \*

*Չայաստան եւ Վրաստան.*- Առաջ ամենահեշտ կարգադրելիք խնդիրը համարում էր հայ-վրացական յարաբերութիւնը: Ճիշտ է, ցարական իշխանութեան շրջանում յաճախ էին տեղի ունենում կրքոտ վէճեր հայ և վրացի ղեկավար տարրերի միջեւ, բայց ժողովրդական լայն զանգւածները ապրում էին հաշտ ու համերաշխ: «Վերին խաւերի» վէճերի գլխաւոր նիւթերն էլ, մեծ մասամբ, տեղական բնոյթ ունէին և պատում էին Թիֆլիս քաղաքի և վրաց ազնուականութեան շահերի շուրջը: Յեղափոխութեան օրերին այդ յարաբերութիւնները բաւական մռայլեցին, երբ վրաց մենշելիկները թել տալով թաթար կալուածատերերին՝ փորձեցին իրենց վեհապետութիւնը հաստատել Կովկասում, սակայն նոյն այդ մենշելիկ կուսակցութիւնը ընդառաջ գնաց հայկական պահանջին՝ հայկական ազգային շրջանակի կազմութեան խնդրում և առանց առարկութեան ընդունեց մշակուած սահմանագիծը, որի համաձայն Չայաստանի մէջ էին մտնում Լոռին և Ախալքալաքի գաւառը:

Վերաբերումը արմատապէս փոխեց Վրաստանի անկախութեան հռչակումից յետոյ, երբ մենշելիկ յայտնի պարագլուխ Յերակլի Ծերեթէլին յանուն վրաց ազգի յայտարարեց, որ «ռազմագիտական ու տնտեսական նկատումներով» Ախալքալաքը, Լոռին և Ղազախի գաւառի մի մասը պէտք է միացւին Վրաստանին: Այս յայտարարութեան հետևեց յիշեալ շրջանների բռնի գրաւումը զինուորական ուժով, իսկ այդ քայլն էլ, իր հերթին, առաջ բերեց հայ-վրացական արհմտոտ պատերազմը: Թիֆլիսում տարուած այս քաղաքականութեան հետ կատարեալ ներդաշնակութեամբ զարգացաւ և վրաց դիւանագիտական աշխատանքը արտասահմանում<sup>7)</sup>, ուր վրաց պատուիրակութիւնը վեհաժողովին ներկայացրած յուշագրով վրացական սահմանները հասցնում էր մինչեւ Ռիզէ, Բզովդալ ու Չաթինդաղ, Վրաստանի մէջ առնելով ամբողջ Լազիստանը, Թորթումն ու Օլթին, Արտահանը, Ախալքալաքը, ամբողջ Լոռին ու Ղա-

---

<sup>7)</sup> Տե՛ս Աւալովի «Անկախ Վրաստան» (ռուսերէն) հետաքրքրական գիրքը, որ լոյս տեսաւ անցեալ տարւայ վերջին Փարիզում:

զախի շրջանի մի մասը: Այս ծրագրով փակւում էր Հայաստանի առջեւ ծովային ելք ունենալու հնարաւորութիւնը, Հայաստանը առնւում էր վրաց ազդեցութեան շրջանակի մէջ և կախման մէջ էր դրւում վրաց քաղաքականութիւնից: Հասկնալի է, որ նման մի դրութեան չէին կարող հանդուրժել հայերը, որոնք, իրենց հերթին, պիտի աշխատէին ապահովել Հայաստանի գոյութեան և զարգացման հիմքերը: Այս տարբեր ըմբռնումներից ու ներհակ ձգտումներից ծնունդ առին այն բոլոր դէպքերը, որոնք մռայլեցին հայ-վրացական յարաբերութիւնների հորիզոնը և պատճառ դարձան երկու կողմի համար այնքան աղետաւոր գործի:

Փոխւած է այժմ վերաբերումը: Դժբախտաբար, նշաններ չկան ցոյց տւող, որ վրաց գործիչների մտայնութեան մէջ տեղի է ունեցել փոփոխութիւն: Հակաբուլչեվիկ վրացիները շարունակւում են պնդել իրենց նախկին պահանջների վրա, իսկ կոմունիստ վրացիները՝ խօսքով պայքարելով առաջիկաների դէմ՝ փաստօրէն իրականացնում են նրանց ծրագիրը: Այսպէս, օրինակի համար, հազիւ հարիւր հազար ազգաբնակչութիւն ունեցող Աբխազիան և դրա կէսից չանցնող Աջարիան ինքնավար են. ինքնավար է և մի բուռը ժողովուրդ ունեցող Օսէտիան: 1917-ի “Կովկասեան Տարեգրքի” համաձայն 94,789 հայ բնակիչ ունեցող Ախալքալաքը շարունակւում է մնալ Վրաստանի ծայրագաւառ, և վրաց կոմունիստները խուլ են ձևնում դէպի Ախալքալաքցիների աղաղակները: Հակառակ հայ կոմունիստների, վրաց կոմունիստների բնորոշ յատկութիւնը այն է, որ նրանք ուժգնօրէն համակուած են ազգային և՛ ազգայնական - գաղափարներով և Վրաստանի ճակատագիրը շօշափող հիմնական հարցերում չեն տարբերւում Վրաց միւս հոսանքներից:

Հայ-վրացական վէճը այսօր էլ գտնւում է նոյն տեղը, ուր դրւած էր երէկ մենչեւիկ քաղաքականութեան շնորհիւ: Եւ այդ վէճի մէջ առաջին տեղը շարունակւում է գրաւել հողային հարցը, որ, թրքահայկական հեռանկարների մթութեան պատճառով. անհամեմատ աւելի սուր բնոյթ է ստացել: Ծերէթլիի բերանով Վրաստանի “տնտեսական ու ռազմագիտական” շահերը ջատագովող և Վրաստանի սահմանները մինչև Ռիզէ ու Չաթինդաղ հասցնող քաղաքական միտքը պարտաւոր է գիտակցել, որ հէնց Վրաստանի անկախութեան իրականացման համար անհրաժշտ է, որ Հայաստանը ունենայ պետական գոյութեան զարգացման տարրական պայմաններ, որոնք անհնար են, եթէ նա չունենայ արտաքին աշխարհի հետ կապելու ճանապարհ և իր ազգային հաւաքականութիւնն ապահովող հողեր: Սահմանային հարցը հայերի համար շատ աւելի բարձր է, քան “տնտեսական ու ռազմագիտական” նկատումները, որոնցով տոգորւած են վրացիները. սահմանային հարցը մեզ հա-

մար նշանակում է հայկական զանգւածները Հայաստանի պետական սահմաններում տեղաւորելու կարելիութիւն: Եթէ վրաց ժողովուրդը ազգային տեսակետից գրեթէ ամբողջովին ամփոփւած է նախկին Քուբայիսի ու Թիֆլիսի նահանգներում, այսինքն՝ Վրաստանի սահմանների մէջ, հայ ժողովրդի հազիւ մի երրորդն է միայն ներկայ Հայաստանում. գրկել նրան Ախալքալաքից, ուր մօտ 95,000 Հայի կողքին հազիւ 10,000 Վրացի է հաշւում, կտրել նրանից հայկական Լոռին, փակել նրա առջև ճանապարհը դէպի ծով, նշանակում է խլել նրանից գոյութեան և ապահովութեան գլխաւոր գործօնները: Թէ իրենց ազգային կազմով, թէ աշխարհագրական դիրքով և թէ ներքին ձգտումներով այդ շրջանները կապւած են Հայաստանի հետ, հանդիսանում են բնական շարունակութիւնը հայկական լեռնաշխարհի, և վրաց “տնտեսական ու ռազմագիտական” նկատումները, որ անհիմն էին առաջ, այսօր, քաղաքական նոր հանգամանքներում, արդէն բոլորովին անհասկանալի են և ծառայում են միայն թունաւորւած մթնոլորտը էլ անելի թունաւորելու: Այս դրութեան պէտք է վերջ տրի:

Լուծել հայ-վրացական հողային վէճը՝ նշանակում է վերացնել հայ-վրացական մերձեցման գլխաւոր արգելքը: Սահմանային հարցի կարգադրութիւնը մեծապէս կը հեշտացնէ և միւս խնդիրների լուծումը և, որ էականն է, բօլշևիկների ձեռքից կը խլէ պրովոկացիայի ամենաուժեղ զենքերից մէկը, որից նրանք վարպետութեամբ օգտւում են իրենց տիրապետութիւնը ամրացնելու համար: Վիճելի հարցերի բաց մնալը ժողովրդական խաւերի մէջ առաջ է բերում այն տպաւորութիւնը, թէ այսքան փորձերն ու փորձութիւնները ոչինչ չեն սովորեցրել կովկասեան գործիչներին, վախ է պատճառում, որ ապագայում էլ կրկնելու են երէկայ դէպքերը: Մինչդեռ փոխադարձ հասկացողութիւնը ու ներհակութիւնների վերացումը ահագին բարերար ազդեցութիւն կունենար լայն զանգւածների հոգեբանութեան վրա:

Այստեղ մենք քննութեան չենք առնում տնտեսական, քաղաքական և այլ հարցերը, որոնք նոյնպէս մնում են անլոյծ ու վերջնականապէս չկարգադրուած հայերի և վրացիների միջև: Այդ հարցերը, ինչպէս ասացինք, կարող են անելի հեշտութեամբ փակուել, եթէ վճռուի առաջին և հիմնական խնդիրը – հողավէճը: Սրա վրա պէտք է կեդրոնանայ պատասխանատու շրջանների ուշադրութիւնը: Եւ ինչպէս առաջ, Հայաստանում, ամէն անգամ, երբ խօսք էր բացւում հայ-վրացական յարաբերութիւնների մասին, նախաձեռնութեան առաջին քայլը սպասւում էր վրաց քաղաքական շրջաններից, այսօր եւս առաջին խօսքը նրանց է պատկանում, որով-

հետև պահանջները նրանց կողմից են դրուում և նրանք են, որ շարունակում են մնալ անզիջող:

*Հայաստան եւ Ադրբեջան.*- Մի կողմ դնելով երկրորդական խնդիրները, հայ-ադրբեջանեան փոխարաբերութեանց մէջ կար և մնում է երկու ծանրակշիռ կէտ, որից բղխել են բոլոր դէպքերը: Առաջինը այն վերաբերումն է, որ Ադրբեջանը ունեցել է և ունի դէպի Թիւրքիան. երկրորդը՝ դարձեալ հողային վեճն է:

Ռուսական յեղափոխութեան առաջին օրերից հէնց, Ադրբեջանի պատասխանատու շրջանները բռնեցին թիւրքերի կողմը և ինչով կարող էին օգնեցին նրան Ռուսաստանի դէմ մղած պատերազմում, թրքական ներշնչումով և արդբեջանցիների ճիգերով կազմակերպեցին քրդական և թաթարական ըմբոստութիւններ Երեւանի, Շարուր – Նախիջեւանի ու Սուրմալուի շրջաններում, ռուսական ռազմաճակատի ամենատագնապալի օրերին: Նոյն ճիգերի հետևանքներից մէկը եղաւ և Կովկասեան միութեան քայքայումը և թիւրքերի ներխուժումը Անդրկովկասի ներսերը: Ադրբեջանցիք, առանց վարագուրելու իրենց քաղաքական յոյսերը կապեցին թիւրքերի հետ, որոնց հետ գործեցին ձեռք-ձեռքի: Հայ ժողովրդի ամենաողբերգական օրերին ադրբեջանցիները թիւրքերի հետ էին ընդդէմ հայերի: Թիւրքերի օգնութեամբ ուզում էին կարգադրել և իրենց հողային ծրագիրները, որոնց իրագործումով փաստօրէն մէջտեղից վերացում էր Հայաստանը: Այսպէս, Բաթումի խորհրդածողովում հան խոյսկին և Եուսուֆբեգովը նոյն իսկ Երեւանն էին պահանջում, վեհանձնօրէն հայերին թողնելով Էջմիածինը, իբրև նայրաքաղաք: Իսկ Թոփչիբաշեւի հաղադութեան վեհածողովին ներկայացրած ծրագրով հայերին թողնում էր շուրջ 10,200 քառ. կիլոմէտր տարածութիւն, մնացեալ հողերը պահանջում էին Ադրբեջանի համար: Գանձակ, Ղարաբաղ, Չանգեզուր, Նախիջեւան, Շարուր, Երեւանի գաւառի մի մասը, Սուրմալու, Կարս, Օլթի, Արտահան՝ ադրբեջանցի ազգայնականների կարծիքով պէտք է կազմէին մասը Ադրբեջանի, որը բարեկամական դաշնագրով պիտի միանար Թիւրքիային:

Ոչինչ չկայ զարմանալի, որ ադրբեջանեան քաղաքական այս ծրագիրները և նրանց ղեկավարների գործելակերպը պիտի բանային խոր անդունդ երկու դրկից ժողովուրդների միջեւ և առիթ պիտի ծառայէին անվերջ դաւերի ու արիւնոտ բաղխումների: Ադրբեջանեան ղեկավարների այդ ախորժակները պատճառ դարձան անշուշտ և այն բանի, որ բոլշեւիկներն այնպէս հեշտութեամբ մտան Բագու և քար քարի վրայ չթողին անկախութիւնից:

Հիմզ տարի է ահա բոլշեւիկներն իշխում են Ադրբեջանում. ադրբեջանցի գործիչների մտայնութեան մէջ հիմնական փոփո-

խութիւն տեղի ունեցե՞լ է: Ո՛չ դժբախտաբար. փոփոխութեան նշաներ չեն նշմարուում: Եւ այստեղ էլ պէտք է նկատել, որ այս տեսակետից մեծ տարբերութիւն չկայ հակաբուլշեւիկ և բուլշեւիկ ադրբեջանցիների մէջեւ. Նարիմանովի և Յուսէյնովի ազգային քաղաքականութիւնը միայն ձեւով է տարբերուում Եուսուֆբէգովի և Խան Խոյսկու հետապնդած նպատակներից. էութիւնը նոյնն է: Այսպէս Կոմունիստ Ադրբեջանցիների համար էլ Նախիջեւանը կամուրջ է ծառայում՝ Բագուի և Անգորայի միջեւ, ինչպէս և մուսաւաթական ադրբեջանցիների: Կոմունիստներն էլ զուտ հայկական Ղարաբաղը համարում են Ադրբեջանի մաս, ինչպէս և մուսաւաթականները: Կոմունիստներն էլ քոչի հարցում տառաջի կերպով ղեկավարուում են նոյն սկզբունքներով, որով ղեկավարուում էին իրենց նախորդները: Կոմունիստական Ադրբեջանն էլ թրքական պրոպագանդի ու դաւերի օջախ է, ինչպէս էր մուսաւաթական Ադրբեջանը: Եւ ուշադիր ընթերցողը կը նկատէ, որ թէև շատ զուսպ ձեւերով, Երեւանի բուլշեւիկեան թերթերն էլ նոյն մտքերն են յայտնում խորհրդային Ադրբեջանի ընթացքի դէմ, ինչ որ յայտնում էին ու շարունակում են յայտնել դաշնակցական թերթերը, այն տարբերութեամբ միայն, որ դաշնակցականները յամառ կերպով պաշտպանում են հայ ժողովրդի ազգային շահերը, մինչդէռ կոմունիստները տեղի են տւել բոլոր ճակատներում:

Պարզ է, որ այս փոխարարբերութիւնը Ադրբեջանի և Հայաստանի միջեւ չի կարող համարուիլ բնականոն: Այդ վիճակի դարմանումը անհրաժեշտ պահանջ է երկու կողմերի համար էլ: Ի՞նչ սկզբունքներ պէտք է դրուին, իբրև հիմք նրանց յարաբերութիւնների:

Ամենից առաջ, իարկէ, պէտք է որոշուի քաղաքական օրիէնտացիայի խնդիրը: Ո՛չ մի ազգային հոսանք հայ իրականութեան մէջ չի կարող հաշտ աչքով նայել մի քաղաքականութեան, որի նպատակն է Թիւրքիան խառնել կովկասեան ժողովրդների ներքին գործերի մէջ, այն Թիւրքիան, որը յամառ կերպով հետապնդում է հայերի բնաջնջման ծրագիրը: Եւս առաւել անընդունելի է մի դրութիւն, ըստ որի Ադրբեջանի ազգային բաղձանքների իրագործողը և սահմանային խնդիրների կարգադրողը պէտք է լինի Թիւրքիան: Այս կէտում թիրիմացութիւն չպէտք է մնայ: հետեւաբար, եթէ Ադրբեջանի ղեկավարները շահագրգռուած են Հայերի հետ ընդհանուր լեզու գտնելու խնդրում, պէտք է վերջնականապէս հրաժարուեն այդ մոլութիւնից և ամուր կերպով կանգնին իրական անկախութեան տեսակետին վրա - անկախութիւն ո՛չ միայն հիւսիսից, այլ և հարաւից: Խալիլ ու Նուրի փաշաների Ադրբեջանը չի կարող ծառայել խաղաղութեան ու հաշտութեան գործին Կովկասում: Ըստ

ամենայնի անկախ և արտաքին ազդեցութիւններէից ազատ Ադրբեյջանի հետ համերաշխութեան լեզու գտնելը դժուար չի լինի իր հարեւանների համար: Միայն ամբողջական անկախութեան գաղափարը իւրացնելով՝ Ադրբեյջանին գործիչները ընդունակ կը լինեն հասկանալու, թէ ո՛ր է տանում իրենց որդեգրած քաղաքականութիւնը Հայաստանի սահմանների նկատմամբ:

Անտարակոյս, հազիւ թէ ադրբեյջանցիների մէջ էլ այժմ շատ լինին այնպիսիները, որոնք դեռ հաւատում են եուսուֆէկով-խան Խոյսկիների ծրագիրների լրջութեանը. կեանքի փորձերը նրանց համար էլ ի զուր չանցան: Բայց, անշուշտ, տակաւին քիչ չեն մարդիկ, որոնք հայ-ադրբեյջանեան սահմանավեճը քննելիս բնաւ հաշի չեն առնում Հայաստանի կենսական շահերը: Հակառակ դէպքում՝ ինչո՞ւ Նախիջեւանը պիտի շարունակէր մնալ Բագուի գերիշխանութեան տակ. ինչո՞ւ լեռնային Ղարաբաղն ու լեռնային Գանձակը – հայկական լեռնաշխարհի անմիջական շարունակութիւնը կազմող այդ շրջանները-պիտի համարէին վիճելի՝ չնայած, որ աշխարհագրութիւնը, ազգային կազմը, քաղաքական նկատումները, ամենքը խօսում են ի նպաստ Հայաստանի:

Ինչպէս հայ-վրացական սահմանային խնդիրները, հայ-ադրբեյջական սահմանավեճն էլ թելադրում է անյապաղ լուծում: Անյետածգելի անհրաժեշտութիւն է որ պատասխանատու շրջանները գտնեն երկու կողմերի համար էլ արդար և ընդունելի սահմանագիծ, որով մեանանգամ ընդմիշտ քակուէր այս չարաբաստիկ հարցը: Եւ այստեղ էլ առաջին խօսքը պատկանում է մեր հարեւաններին, որովհետեւ նրանք են եղել միշտ նախայարձակի ու պահանջողի դերում, նրանք են յետ մղել վիճելի հարցերը խաղաղութեամբ և փոխադարձ զիջումներով լուծելու բոլոր փորձերը:

Հայ-ադրբեյջանեան հողավեճի կարգադրութիւնը կը բանայ նոր դարագլուխ կովկասեան ժողովուրդների պատմութեան մէջ: Նա խոշոր չափով կը դիւրացնէ և անհամաձայնութիւնների առարկայ միւս խնդիրների կարգադրութիւնը: Այս խնդիրների մէջ առաջին տեղը բռնում է քոչի հարցը, որ այսօր էլ շարունակում է յուղել հանրային միտքը: Հայաստանը, որ տառապում է ծայրայեղ սակաւահողութիւնից, որի երկրագործութիւնն ու խաշնարածութիւնը չեն կարողանում զարգանալ, ստիպուած է ահագին քանակութեամբ հող – 379,720 դեհատին – տրամադրել ադրբեյջանցի անասնապահներին, գրեթէ առանց փոխհատուցման: Ադրբեյջանցի գիւղացին դաշտային շրջաններում զբաղւում է հողի մշակութեամբ և միեւնոյն ժամանակ հայկական լեռները իր ձեռքն է պահում իր հօտերի համար, այն ինչ հայ գիւղացին իր տանը հող չի ճարում և Ադրբեյջանի առատահող շրջաններից էլ օգտուելու իրաւունք չունի:

Այս դրութեան, իհարկէ, չի կարելի հանդուրժել: Քոչի հարցը, որ Կովկասեան կեանքի ամենացաւոտ կողմերից մէկն է, պէտք է որոշուի ո՛չ թէ միակողմանի կերպով, ինպաստ Ադրբեջանի. այլ յօգուտ երկու կողմերին էլ: Քոչի հարցի լուծման երկու ձեւ կայ կամ հետզհետէ վերջ պիտի տրուի քոչւորութեան և հայկական սարերը պէտք է թողնեն միայն Հայաստանի ժողովուրդին, կամ ադրբեջանցի քոչւորներին տրամադրուած հողերի փոխարէն Ադրբեջանի կողմից պէտք է տրւի փոխհաստուցում:

Փոքր տեղ չի բռնում հայ-ադրբեջանեան փոխարաբերութիւնների մէջ և Բագլի նաւթը, որը մուսաւաթական կառավարութեան օրով դարձել էր քաղաքական ճնշման միջոց: Ակնյանտնի է, որ նաւթի հարցը միակողմանի կերպով վճռելի խնդիրներից չէ. նաւթից օգուտելու հնարաւորութիւնը լիակատար կերպով պէտք է ապահովւի և հարեւան երկիրների համար: Ինչպէս Բաթումի ճակատագրով կենսականօրէն շահագրգռուած են Հայաստանն ու Ադրբեջանը, նոյնպէս և Բագլի նաւթով՝ Վրաստանն ու Հայաստանը:

Այս և ուրիշ խնդիրների լուծումը զգալի կերպով կը հեշտանայ, եթէ կարգադրուի գլխաւոր հարցը-հողավէճը. իսկ սրա լուծումն էլ նախեսառաջ կախուած է ադրբեջանեան ժողովրդի քաղաքական գիտակցութիւնից ու դիրքից:

Ինչպէս տեսնում ենք, Հայաստանի և հարեւան ժողովուրդների փոխարաբերութեան հարցը շարունակում է մնալ կնճռոտ ու մշտայոյզ վիճակի մէջ, և լուծման հեռանկարները այնքան էլ պայծառ չեն: Հին մտայնութիւնը չի վերցւած բոլորովին: Այդ մտայնութիւնը շարունակում է ապրել և բոլշեւիզմի կեղեւի տակ: Սրանից ոմանք հանում են այն եզրակացութիւնը, թէ այսօր ժամանակը չէ այդ հարցերը արժարժելու, նրանք հաշուեյարդարը պէտք է թողնիլ ապագային, երբ իրենց վեհապետական իրաւունքներին տիրացած ժողովուրդները ի վիճակի կը լինին նման խնդիրներով զբաղելու: Այժմ մէկ գործ կայ միայն անելիք - միանալ և միահամուռ ուժերով կռւել հասարակաց թշնամու դէմ:

Նման համոզում սնուցանել՝ նշանակում է չըմբռնել հարցի էութիւնը: Հէնց որպէզպի Կովկասեան ժողովուրդների ազատութեան ժամը մօտենայ, անհրաժշտ է օր առաջ լուծել այդ խնդիրները: Հէնց ազատութեան առաջին օրն իսկ նոր սխալներ չգործելու համար, պէտք է այսօր լուծուին այդ հարցերը: Նրանք պէտք է լուծուին և նրա համար, որ վերջ գտնէ Կովկասում տիրող թշնամական մթնոլորտը, և ժողովուրդները կարողանան բաց սրտով ու վստահութեամբ մօտենալ միմիանց և առանց վարանումի «միանալ ու միահամուռ ուժերով կռուիլ հասարակաց թշնամու դէմ»:

## ՎԵՐԱՅԻՇՈՒՄՆԵՐ ԲԱՆԱՍՏԵՂԾ ՅՈՎՅԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԿՅԱՆՔԵՆ\*

(ՁՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՅՈՒՇԵՐԸ)

Ձորավար Անդրանիկը բարեկամական ջերմ կապերի մեջ էր Յովհաննես Թումանյանի հետ: Բանաստեղծի անժամանակ մահը ցնցում է Անդրանիկին, և նա 1923թ. մայիս ամսին Բոստոնում լույս տեսնող «Պայքար» թերթում տպագրում է իր հիշողությունները մեծ բանաստեղծի մասին: Ինչպես վկայում է թերթի ծանոթագրությունը՝ «Ձորավար Անդրանիկ առանց խորունկ հուզման և առանց արցունքոտելու չէ որ քրքրած է իր հուշերը»...

Տպագրում ենք այդ հուշերը:



ԱՆԴՐԱՆԻԿ

Անհատներ կան, որոնց ներկայությունը հանրային ու ընկերային կյանքին մեջ՝ հմայք, ուժ, վստահություն և ոգևորություն կներշնչե: Այսպիսի անձերուն կյանքը և անոնց մատուցած ծառայությունները ժողովուրդը ոչ միայն կդիտե և կվայելե հանդիսատեսի աչքերով, այլ գիտե հարգել, սիրել և գնահատել: Այսպիսի ժողովրդային

---

\* Յողվածն առանց բնագրային փոփոխությունների արտատպվում է «Գրական թերթից» (Երևան, 18 դեկտեմբերի, 1964):

դեմքերեն մեկն է հայ գեղջկական բանաստեղծության ռաիվիրան, բանաստեղծ Յովհաննես Թումանյան:

1904-ին առաջին անգամ ըլլալով տեսա և ճանչցա զայն իր բնակարանին մեջ սևքարեցի Սաքոյի միջոցով: Բանաստեղծը իր զվարթ ու խնդուն բնավորությամբ լավ տպավորություն և անուշ զգացումներ ունենալու հմայքը ստեղծեց մեծս: Առաջին տեսակցությամբ մտերիմներ ու բարեկամներ էինք: Մեկ նայվածք մը բավ էր հասկընալու և ճանչնալու անոր սրտի անբիծ ու նկարագրին անաղարտ վիճակը: Մագնիսական ուժ մը քաշած կապած էր զիս իրեն ավելի սիրելու, ավելի մտերմանալու, ավելի հիանալու և հարգելու: Իր բարձր հասակին, գեղեցիկ ու վայելուչ կազմվածքին կմիանային ժպտուն աչքեր, շնորհալի և հրապուրիչ երևույթ մը տալով իրեն: Լոռիի Դսեղ գյուղին մեջ նահապետական կյանք մը կապրեր բազմամղամ ընտանիքի հայրն ըլլալով: Բաց էին իր տան դռները բոլորին առջև: Վանքի մը պես ամեն օր ուխտավորներ և այցելուներ կմտնեին ու կելնեին վայելելով այդ նահապետական տան ճոխ սեղաններն ու բարիքները: Առանց հյուրի սեղան չէր նստեր և ոչ ալ օրը կփակեր առանց բարի գործ մը կամ ծառայություն մը կատարելու: Վրեժխնդրություն, քեն, ատելություն, չարիք և նախանձ՝ կյանքի այս զգացումները անծանոթ էին իրեն: Բյուրեղի պես մաքուր և պարզ էր իր սիրտն ու հոգին, ու մանիշակի չափ խոնարհ ու քնքույշ: Տիպար հայրն էր, ազգասեր ու գործունյա: Առաքինության և սիրո մարմնացումն էր Թումանյան: Այս գեղեցիկ ու բարձրագույն հատկանիշներով օժտված բանաստեղծը ոչ միայն սիրելի և հարգելի էր հայ ժողովրդին, այլ կհարգվեր և կսիրվեր ռուս, վրացի, պարսիկ և թաթար ժողովուրդներեն:

1914-ին, երբ Ազգային բյուրոն կազմակերպվեցավ, բանաստեղծ Թումանյան անոր անդամներեն մեկն էր: Թումանյան ճանչցված էր իբր ռուսասեր: Թումանյան իր հեռատես կարողությամբ հասկցած և ըմբռնած էր, թե հայ ժողովուրդն իր աշխարհագրական դիրքին համար, պետք է կապե իր քաղաքական ճակատագիրը ռուսերու բախտին հետ: Պետք չէ սպասել և ակնկալել հեռավոր դռներ օգնություն և աջակցություն, ցեղին բարեկաման և ազատաման համար: Թումանյան մնաց Ազգային բյուրոյին մեջ և պայքարեցավ մութ ու տգետ ուժերուն դեմ մինչև վերջ իր քաղաքականությունը ջատագովելով, հոգ չէր, որ բյուրոյի անդամները կծառանային իր դեմ մութ ուժերով և տխուր խաղերով...

1915-ին, երբ Վասպուրականը գրավվեցավ ռուսներեն, Թումանյան Վան եկավ տեսնելու իր ժողովուրդն ու հայրենիքը ավելի մոտեն: Ի՞նչ տպավորություններով վերադարձավ՝ չեմ գիտեր, բայց երբ 1915-ին Մեծ գաղթը եղավ... բանաստեղծը իր տունը, իր ըն-

տանիքի վայելքները թողուցած եկավ իր երկու չափահաս աղջիկներուն հետ Էջմիածնի, Իգդիրի և Երևանի փողոցներուն և վանքի պատերուն տակ բռնված գաղթականներուն օգնելու: Վարցավեն երբ ամեն օր հարյուրավորներ կմեռնեին, այդ փոքրիկ ձեռքերը գիշեր ու ցերեկ իրենց կյանքին գնով կգործեին կյանք մը փրկելու վարցավի ճիրաններեն: Թումանյան կրնար անփույթ ու անտարբեր իր ցեղի ցավին երջանիկ կյանք մը ապրիլ: Կրնար կեղծ բառերով և փուճ արցունքներով նստած և ընկողմանած ճոխություններու մեջ՝ հայրենիքի վիշտը երգել թուղթի վրա... Կրնար ամառանոցներու և հանքային ջուրերու հեշտանքը վայելել: Կրնար հարստանալ և փառքերու տիրանալ, բայց այս բոլորը արհամարհեց իր ցեղին բեկորներու համար ու տքնեցավ անոնց հետ, անոնց ցավն ու վիշտը բաժնելով: Իր արենակիցներուն դառն վիճակը և չարչարանքները խլեցին իր խնդում ճակատեն ու աչքերեն ժպիտն ու ծիծաղը, անթելելով իր սրտի մեջ իր ցեղին ցավը: Այդ ցավը մաշեցուց, հատցուց զինք մինչև որ մահը վերջ դրավ իր խոցուն խորհուրդներուն, ա՛լ չի գգալու, ա՛լ չի տառապելու և չի վիճաբանելու կեղծ և ոչ հարազատ ազգասերներուն հետ...

Թումանյան Տրապիզոնի ճակատի կռիվներեն մեկուն մեջ իր եղբայրը կորսնցուց: Վասպուրականեն Սալմաստ, երբ 25.000 գաղթականությունը կը նահանջեր, իր 22 տարեկան տղան կիյնար գաղթականին նահանջի գիծը ապահովելու ջանքերով: Ձոհաբերության և հայրենասիրության այն բարձր ու վսեմ գաղափարականը բանաստեղծը ներշնչած էր իր գավակներուն, անոնց ուսուցանելով ծառայել և մեռնիլ ամեն բանե առաջ հայրենիքի համար:

1917-ին, երբ Ալեքսանդրապոլի աջ կողմը Ղազանճի Կյուլի Պուլախ Զզըխլարի կողմերը կգտնվեի պաշարված թուրք ու թաթար ուժերե, լուր առի, թե Ալեքսանդրապոլը երեք ժամեն թուրքերուն հանձնած և Ղարաքիլիսե փախած են: Թրքական շղթան կտրելով Լոռի եկա, ուր Ջալալօղլիի մեջ Թումանյան Լոռիի ներկայացուցիչներով զիս դիմավորելե վերջ խնդրեց, որ Լոռի ամրանամ և կռվիմ մինչև վերջը: Դիրքեր փորել տվի և գործի ձեռնարկեցի: Հաջորդ օրը լուր եկավ, թե թուրքեր Ղարաքիլիսեն գրաված են: Այս լուրեն քանի մը ժամ վերջը Թումանյան եկավ և արցունքոտ աչքերով պատմեց ինձի, թե լավ է, որ 30.000 գաղթականներու հետ հեռանաս Լոռիեն, որովհետև այդ մարդիկը ճերմակ դրոշակներով պիտի դիմավորեն թուրք բանակը... Այս տխուր լուրին վրա մեկնեցա դեպի Դիլիջան, ուր ոչ հայ և ոչ ալ թուրք զինվորներ գտա:

1919-ին... երբ Էջմիածնի եկա և անկե Թիֆլիս, վեց օր իբր հյուր Թումանյանի տան մեջը մնացի՝ արտասահման մեկնելեն առաջ: Ճաշի սեղանին վրա, ուր ներկա էին տասը հանրածանոթ հայ

դեմքեր, հարցուցի անոնց, թե ի՞նչ էր պատճառը հայ-վրացական կռվին: Բուլորը միասին ըսին, թե մերոնք չեն արդարանար...

Վրացիներու արտաքին գործոց նախարար պր. Գեգեչկորի լուր դրկած էր թոււմանյանին, թե Ձորավար Անդրանիկը կուզեմ տեսնել. թոււմանյանի հետ միասին գացինք նախարարին քով: Բանաստեղծը եղավ մեր թարգմանը, ես այսպես խոսեցա.

Պր. Գեգեչկորի, նախ եկա ցավ հայտնել, որ այս երկու ժողովուրդները կռվեցուցիք իրարու դեմ և թշնամութիւն մը առաջ բերիք: Քննութիւն չպիտի ընեմ, թե որ մեկն էր մեղավոր: Եթե դուք այս երկու ժողովուրդներուն մեջ սիրո խարիսխը չի դնեք, երկուքն ալ պիտի տուժեն: Տարբերութիւնը պիտի ըլլա ձեր և մեր՝ մեկ գիշեր: Իրիկունը մեր դիակը պիտի վերցնեն, առավոտն ալ՝ ձերը: Հասարակ երկու ժողովուրդները մեղք չունին, դեկավար ուժերդ եք պատասխանատուն: Դուք պատասխանատուներդ այս գործը կատարել տվիք: Բայց ի սեր ձեր ցեղի փոքրիկներուն, ինչո՞վ մեղավոր են մեր հազարավոր որբերը, որ այնտեղ կոտորվին անոթի, և դուք փակեք Բաթումի ճամփան, այլուր չի փոխադրելու դեպի Հասստան:

Հուզված ձայնով մը պատասխանեց.

«Պզտիկ քննութիւն մը կատարե, եթե մենք մեղավոր ենք, պատրաստ ենք մեր մեղքը վերցնել մեր վրա»:

«Կցավիմ, որ ես ժամանակ չունիմ և կմեկնիմ Բաթում, բարի եղեք ճամփա բանալ և վագոն տալ ժողովուրդիս համար»: Խոստացավ ինձի: Հաջորդ առավոտ յոթնասուն վագոն Բաթում դրկված էր՝ ուտելիք և հագնելիք փոխադրելու դեպի Հայաստան:

Անցյալ տարի Կ. Պոլիս եկած էր մեր ազգայիններուն բացատրելու և ըսելու հայրենիքին կարիքներն ու պետքերը: Ամեն անոնք, որոնք շփման եկան ու ճանչցան զայն, չպիտի կրնային չի սիրել ու հարգել անոր անկաշառ ու զոհաբերող սիրտն ու հոգին:

Իր գրական տաղանդին համար իմ բառերս շատ կարճ կուզան: Գրագետ չեմ, այդ բաժինը հայ գրագետներուն ու բանաստեղծներուն կթողում, տոկ մեկ քանի վերհիշումներ ըրի իր կյանքի գիծերեն, այդ առաքինի և անձնվեր բանաստեղծին՝ հայ գաղաթականին ու հայրենիքին համար կատարած գործն ու ջանքերը Ամերիկահայ գաղութին ծանոթացնելու հույսով:

Ես ալ շատ սիրած եմ անոր երգերը: Երգած, զգացած և վայելած եմ անոր երգերն ու գրական արտադրութիւնները: Հիացումով հետևած եմ «Անուշ» պոեմին, «Սասունցի Դավիթին», «Մի կաթիլ մեղրին», «Շունն ու կատուին», «Քաջ Նազարին» և այլն:

Կողբամ անոր դառն վաղաժամ կորուստը: Հայրենի հողին վրա ապրող հայ գեղացին և մտավորականը դեռ շատ պետք ունենի ա-

նոր: Թունանյան կապն էր գյուղացիին և ուսյալին: Սիրելի ուսուցիչն ու վարժապետն էր մանուկներուն: Կհանգչի այսօր երկար տառապանքե և հիվանդությունե մը վերջ: Ան շատ ու շատ հանգիստ խիղճով իջավ գերեզման, անոր համար, որ կատարեց իր պարտականությունը ցեղին ու հայրենիքին հանդեպ: Վայ անոնց, որոնք գիտակցաբար կատարած են շատ մը չարիքներ հայ ցեղի զավակներուն անունին վրա՝ առանց խղճահարվելու և զղջալու:

Սիրելի՛ Յովհաննես, չկաս այլևս, որ վիճիս ու տառապիս ցեղիդ բարօրության ու գոյության համար: Ալիանգչած են հոգնատանջ ոտքերդ ու ձեռքերդ: Թող ուրախանան ամեն անոնք, որոնք իրենց դեմ չեն գտներ սիրտդ, որ անկաշառ էր ու անխարդախ, հոգի մը, որ վեհանձն էր ու անվախ: Հանցանքը, որ ունեիր՝ *կուսակցական* չէիր... հանցանքը, որ ունեիր՝ սիրտդ չէր կեղծեր: Ընդունե երկնային փառքիդ մեջ սա մեկ քանի տողերը, ուր ջանացած են ծրարել իմ հարգանքիս հետ, թշվառ ցեղիս երախտագիտության արտահայտությունն ալ, որուն համար հոգնեցար, տառապեցար և կյանքիդ գնով զոհաբերվեցիր զավակներովդ, Իգդիրի, Էջմիածնի և Երևանի մեջ:

Հանգիստ ոսկորներուդ, հարգանք հիշատակիդ, Սիրելի՛ Յովհաննես: Ակնածանքով կը խոնարհիմ շիրիմիդ առջև: Թեթև գա հորը վրադ:

# ԱՐՅԵՍՏՆԵՐԸ ԱԽԱԼՔԱԼԱՔՈՒՄ\*

## Ա. ՇԻՐԻՆՅԱՆ

Ախալքալաք քաղաքում և նրա շրջանում, շատ հնուց մեծ թվով հայեր են բնակվել, որոնք բազմիցս ենթարկվել են կոտորածների, գաղթի, մանավանդ Լենկթեմուրյան ավազակախմբերի կողմից: Չնայած այդ ամենին, Ախալքալաքի բնակչության թիվը չի պակասել, որովհետև 1826-30 թթ. Երզրումից մեծ թվով բնակիչներ տեղափոխվեցին Տավաթք, որտեղ Տաշվանքա բլրի հետևի մասում եղած քաղաքի դիմաց հիմնեցին նոր Ախալքալաքը:

Երզրումից եկած գաղթականների 99-ը տոկոսը արիեստավորներ ու առևտրականներ էին, որոնք տեղավորվեցին նոր քաղաքում: Տնայնագործ արիեստավորների շնորհիվ, որոնք գերակշռող մասն էին կազմում, ունեին իրենց արիեստակցական կազմակերպությունները և խանութների ու արիեստանոցների շարքերը:

Արիեստավորների մեջ առաջ եկան այսպես ասած ասնաֆներ, այսինքն նույն արիեստի մարդիկ՝ դարբինը-դարբինի հետ, կոշկակարը-կոշկակարի հետ, գլխարկ կարողը՝ գլխարկ կարողի հետ, դերձակը-դերձակի հետ և բոլոր տեսակի արիեստները, որոնք միմյանց անվանեցին ասնաֆներ: Առաջ եկան կազմակերպություններ, որոնք հետագայում ձեռք բերին վարչական իրավունքներ, այսինքն նրանք իրավասու դարձան վարպետի կոչում շնորհելու, օրինազանց վարպետներին դրամական տուգանքով և մի քանի օրով նրանց խանութն ու արիեստանոցը փակելու:

Ասնաֆներն ունեցան հետագայում իրենց ուստաբաշիները, վաճառականները առանձին, արիեստավորներն առանձին:

Ասնաֆների իրավունքները գնալով ընդլայնվում էր, նրանք ուստաբաշիների միջոցով հնարավորություններ ստեղծեցին զբաղվելու քաղաքի և շենքերի բարեկարգման հարցով, խեղճերին օգնություն ցույց տալու և այլ հարցերով:

---

\* Հոդվածն առանց բնագրային փոփոխությունների արտատպվում է «ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» հանդեսից (թիվ 3, 1980, էջ 39-42):

Նշենք այն արհեստավորներին, որոնք սկզբից գոյություն են ունեցել Ախալքալաքում:

**1. Չիվյաշնիկներ.**- հին ոտնաման կարող, կարում էին չուստեր, որոնք այն ժամանակ, նրանցից գրեթե 99 տոկոսը աշխատում էր դրսում բաց երկնքի տակ, որտեղ ունեին մի կոճղ, մի փոքր աթոռ և մի քանի գործիքներ, որտեղ մեծ մասը վերանորոգում էին չստերը: Բացի հայերից ուրիշ ազգի մարդիկ չեն եղել չյուվաշնիկներ: Սրանց թիվը մինչև 1910 թ. եղել է 30 -32, իսկ 1940 թ. 70 հոգի:

**2. Փափախիներ՝ գոյակ կարողներ.**- տեղավորված էին՝ թարգմանի կամ շապխաճիների հետ մի արհեստանոցում: Սրանք բոլորը նորից հայեր էին: Մինչև 1910 թ. եղել են 6 հոգի, իսկ 1940 թ. 2 հոգի:

**3. Շապխաճիներ.**- գլխարկ կարողներ, աշխատում էին թարգու, կամ վարսավիրի հետ, քաղաքի տարբեր մասերում ցրված, որպեսզի մեկը մյուսին չխանգարեր և աչքով չտար: Բոլորը՝ հայեր: Շապխաճիների թիվը մինչև 1910 թ. եղել է երեք հոգի, 1940 թ. 7 հոգի:

**4. Թարգիներ.** չերկեսկի, արխուլուղ և հին տարազի չավվար կարողներ: Թարգիների թիվը մինչև 1910 թ. եղել է 12 հոգի, իսկ մինչև 1936 - 37 թ. համարյա թե վերջացավ: Բոլորը՝ հայեր:

**5. Պարտնոներ.** դերձակներ, այս բառը ևս վերցրած է ռուսերենից: Իմ կարծիքով, քանի որ տեղի հայերը գաղթել են թուրքերի մոտից, բայց ավելի շատ շփվել են ռուսական գործի հետ, այդ պատճառով էլ մի շարք անուններ վերցրած են թուրքերենից, մի շարք անուններ ռուսերենից, որոնք շարունակվում են մինչև մեր օրերը: Թարգիների մի մասը հետագայում դարձան դերձակ: Մինչև 1910 թ. եղել են 4 հոգի, իսկ 1940 թ. 20-ից ավել: Բոլորը՝ հայեր:

**6. Սապոժնիկներ.** կոշկակարներ: Միայն սապոզներ չէին կարում, այլև կանացի և տղամարդկանց տուֆլիներ, սկառախտոներ, չստեր, բայց բոլորը կոշվում էին սապոժնիկներ: Մինչև 1910 թ. եղել են երեք հոգի, իսկ 1940 թ. 13 հոգի, բոլորը՝ հայեր:

**7. Օլթան կարողներ.** օլթանը կոշիկի, սապոզի, տուֆլիկի կամ չուստիկի երեսն է, կամ ներսի մի մասը, որը կարում և տալիս էին չիվյաշնիկներին և կոշկակարներին, որոնք միմյանց հետ կապված էին և ամառվա վերջին կամ 10 օրը մեկ անգամ հաշիվները փակում էին:

**8. Չարխճիներ.** տրեխ սարքողներ: Չափազանց շատ էր այն ժամանակ տրեխների պահանջը հատկապես գյուղերում: Մինչև 1910 թ. 25 հոգի, 1940 թ. 7-8 հոգի: Չարուխ կարողներին ավելի առաջ անվանել են դաթանջիներ:

**9. Բառբառներ,** դալաքներ, վարսավիրներ, սափրիչներ: Ժողովրդի մի մասը վարսավիրներին անվանում էր բառբառներ, մի

մասն էլ դալաքներ: Նրանց մեծ մասը զբաղվում էր նաև հեքիմությամբ, աստամներ քաշելով, վերքերի բուժումով, որոնց մեծ մասը իրենց մոտ պահում էին սիլիկ - (տզրուկ), որոնք շատ անգամ շտապ օգնության դեր էին կատարում (նայած հիվանդությանը):

Առաջներում եղել են երկու տեսակի՝ մի մասը եղել է թափառաշրջիկ: Գյուղերում ման էին գալիս և սափրում մարդկանց, իսկ մյուսներն ունեին իրենց բառբառխանաները:

Գաղթից հետո թափառաշրջիկ բառբառների թիվը գրեթե լրիվ պակասեց: Քաղաքի բառբառները պայմանագրային կարգով վերցնում էին մի գյուղ, և շաբաթը մեկ գնում թրաշելու, որի համար բերքահավաքի ժամանակ նա ստանում էր իր հախը (հասանելիքը) մի կոտ գարի կամ ցորեն: Մինչև 1910 թ. եղել են 3-4 հոգի, իսկ 1940 թ. 40-45 հոգի, որոնց մեծ մասը կազմում էին քաղաքի բոշաները (մաղազործները):

Բուլոբ վարսավիրները՝ իրենց բառբառխանաներով դասավորված էին մի շարքում, ժամի (եկեղեցու) դիմաց, իսկ մի մասն էլ չարսուն (կենտրոնական փողոցում):

**10. ԴԱՄՐՉԻՆԵՐ.** դարբիններ, տեղավորված էին մի կվարտալի վրա, Վայրամովի լինոնադի գործարանի անկյունից մինչև հին մասլուպրոմի շենքի անկյունը: Այս փողոցը քաղաքի 1-ին փողոցն էր իր երկարությամբ, բայց մնացած տարածության վրա ներքևից վերև բնակելի տներ էին: Փողոցը կոչվում էր դամբըչնոց: Դացըրչնոցի շարքում տեղավորված էին նաև նալբանդները (պայտառները), մխչիները (մեխ պատրաստողները), կալյոսնիկները:

Ինչպես բառբառները, դամբըչիները ևս ունեին իրենց գյուղերը, որոնց հետ մտնելով պայմանագրային հարաբերության մեջ, աշնանը ստանում էին իրենց հախը ցորեն կամ գարի:

Դամբըչների ասնաֆուրջունը բուլոբից ուժեղ էր գործում:

**11. Կալյոսնիկներ** – պատրաստում և վերանորոգում էին սայլի, ֆուրգունի, կաշկայի ակեր: Իսկ երկաթյա մասը տալիս էին դամբըչիներին, որոնք պատրաստում և միացնում էին մասերը: Այսպիսի արհեստանոցներ եղել են մինչև 1910 թ. մի հոգի, իսկ 1946 թ. 4:

**12. Դուրգարներ.** Ատաղծագործներ, ցրված էին քաղաքով մեկ, գրեթե բոլորը աշխատում էին իրենց տներում: Խորհրդային կարգեր հաստատվելուց մի քանի տարի հետո մի քանի հոգի քաղաքի տարբեր փողոցներում բացել էին իրենց արհեստանոցները: Ատաղծագործների, մի մասը պատրաստում էր տնային իրեր, պահարան, խոնչա, սնդուկ, սեղան, աթոռ, մի մասը փայտե շերեփներ, գրղնակներ, և այլ իրեր, մյուս մասը՝ դուռ, պատուհան, հատակ, առաստաղ և այլն: Նրանց թիվը մինչև 1910 թ. 4-5 հոգի էր, իսկ մինչև 1940 թ. 17 հոգի:

**13. ԽՆՉԱՐՉԻՆԵՐ.** սղոցողներ: Դրանք մասնագետներ չէին, այլ խեղճ, արհեստ չունեցող մարդիկ, կոնդերը (գերան) խզարում աշխատում էին 2 կամ 4 հոգով: Կոնդերը դնում էին (պառկեցնում) մեծ փոսի երկարությամբ, մեկը վերևից, մյուսը տակից սկսում են սղոցել վերևից ներքև, ներքևից վերև, մեծ դժվարությամբ տախտակ ստանում:

**14. ԹԱՆԱՔԱԾԻՆԵՐ.** թիթեղագործներ. ունեին իրենց շարքը: Պատրաստում էին նավթի աման, ճրագ, լամպ, վառարան, վառարանի խողովակներ, դույլ, ջրի ամաններ, ընտանիքի համար օգտագործվող բոլոր անհրաժեշտ գործիքներ: Մինչև 1910 թ. եղել են 3-4 հոգի, մինչև 1940 թ. 12 հոգի:

**15. ԺԵՇՏԱՆԾԻՆԵՐ.** սրանք ևս թիթեղագործներ էին, զբաղվում էին թիթեղյա կտուրների ծածկելով, կտուրների խողովակներ պատրաստելով ու կտուրների վերանորոգումով: Մինչև 1910 թ. եղել են 2, մինչև 1940 թ. 5-6 հոգի:

**16. ՓԱՆԻՉԻՆԵՐ.** ղազանչի, պղնձագործներ: Նրանց թիվը մինչև 1910 թ. եղել է 2, իսկ մինչև 1940 թ. 4-5 հոգի: Ունեին իրենց արհեստանոցը:

**17. ԱՔՄԱԿՉԻՆԵՐԸ.** լավաշ եփողներ: Մինչև 1910 թ. եղել են 8 - արմակչիներ, (մինչև 40 թ. 24 - ) այսինքն 5 - արմակխանա:

**18. ՓՈՆԾԻ.** հացթուխ: Եփում էին սոմին (կլոր հաց) թոփխանա, մատնաքաշ, որը ինչքան հնանում, այնքան համեղանում էր: Բացի բնակիչների այդ պահանջներից, նրանք բնակիչներից վերցնում էին նոր տարվա և հարսանիքների համար խմորեղենի, չանախի, խոզի գոճի, ոչխար կարմրացնելու (եփելու) պատվերներ:

Օգտագործում էին փայտ, աթար, տարթ փուռը վառելու և տաքացնելու համար: Նախապատերազմյան շրջանում մի 3-4 տարի առաջ մի քանի փուռ անցան մազութի և ֆարսոնկայի: Մինչև 1910 թ. եղել է 3-4 փուռ, մինչև 1940 թ. կար 10-12, այդ թվում` պետական փուռը:

**19. ՏԱՊՈՒՍԱՆԱ.** Կաշեգործարան: Մինչև 1910 թ. 1 հատ, հետո` 2: Գտնվում էին Պզտի ձորի եզրին: Պատրաստվում էր երեք տեսակի կաշիներ` սեգ, (այծի մորթուց), մեշին (ոչխարի մորթուց), լոս (խոշոր եղջերավոր անասունների կաշուց):

**20. ՍԱՊՈՆ ԷՓՈՂՆԵՐ.** (օճառ պատրաստողներ): Մինչև 1920-22 թ. եղել է մի սապոն եփողի գործարան:

**21. ԹԻՎԱՆՔԻ.** (հրացան վերանորոգող) 1910 թ. եղել է 1, իսկ մինչև 1940 թ. 2 հոգի: Վերանորոգում և սրում էին սառը զենքեր, ինչպես հրացան, խանչալ (դաշյուններ), կարի, մսի մեքենաներ:

**22. ԲՅԱՐՔԱՆԱԾԻՆԵՐ, ՔԻՐԱՄԻՏԻԱՆԱՆԵՐ** (աղյուսի գործարան):

**23. ՔԻՐԱՃԽԱՆԱ.** (կրի գործարան):

**24. ԲԱՂՆԵՊԱՆՆԵՐ:** Մինչև 1910 թ. եղել է 2 բաղնիք, որից հետո կառուցվել է երեքը, իսկ Սովետական կարգեր հաստատվելուց հետո կառուցվեց պետական բաղնիք: Բաղնեպանը բաղնիքի մեծն էր, որին էր պատկանում շենքը և ամեն ինչ: Իր տրամադրության տակ ուներ աշխատողներ, համամճի, որը կատարում էր գանձապահի դերը, բանվոր, որը բաղնիքն էր վառում (տաքացնում), քեսաճիները և նաթրները, որոնք ամեն մի մարդ քեսայելիս ստանում էին 20 կոպեկ, իսկ նաթրները դրանք կանանց գլուխ վաճողներն էին ու քեսայողները, որոնք ամեն մի գլուխ վալու համար ստանում էին 5, 10, 20 կոպեկ, օրեկան լվալով 20-25 կանանց գլուխ:

**25. ՈՍԿԵՐԶԻՆԵՐ.** Մինչև 1916 թ. եղել է 2, մինչև 1940 թ. 8-9 հոգի:

**26. ԿԱԶԿԱՃԻՆԵՐ.-** Կաշկաճիների թիվը բավականին շատ էր, գաղթից հետո էլ ավելի շատացան (25-30): Ունեին իրենց բիրժան (կանգառը) շուկայի մոտ:

Կաշկաճիների մի մասը զբաղված էին Տաշվանքա և քաղաք գնալ գալով, որտեղից տեղափոխում էին կավահող, ավազ և դիժ (մանր քար) շինարարության համար:

Ձմռան ամիսներին կաշկան փոխարինվում էին սանքայով (սահնակ):

**27. ՖԱՅՏՈՆՃԻՆԵՐ** (կառնապաններ): Մինչև 1910 թ. եղել են 14-15 ֆայտոնճի, մինչև 40 թ. 25-30, որոնք ունեին իրենց կանգառը, որը գտնվում էր Վայրամաղայի լիմոնադի գործարանի մերձակայքում: Ֆայտոնճիների մեծ մասը նաև ունեին ֆուրդոններ, որոնցով բեռ էին տեղափոխում մի քաղաքից մյուսը:

Նրանք բացի ֆայտոնից և ֆուրդոնից ունեին նաև շատ գեղեցիկ սահնակներ: Բացի բիրժավոյ (քաղաքում օգտագործվող սահնակներից) ունեին նաև շրջանները գնալու համար մեծ սանքաներ: Տեղավորվում էին 5-6 հոգի, նրանց վրա տաք թուլոպներ (քուրքեր) և վալինկաներ: Ֆայտոնճիները շատ անգամ կատարում էին շտապ օգնության դեր: Նրանք մինչև վերջ էլ ունեին իրենց տարազը:

**28. ՄԿԻՏԱՆՃԻՆԵՐ.-** Գինեվաճառներ.- Չմայած Ախալքալաքի բնակչության քիչ թվին, այստեղ գաղթից հետո էլ մկիտանճիների (գինետների) թիվը շատ է եղել: Տեղի հատկապես գյուղացիները սկսեցին արաղ քաշել գարուց, որը և տարածվեց քաղաքում:

Այսօրվա մեր հասկացողությամբ մկիտանճին ճաշարանի տերն էր, իսկ մկիտանը ճաշարան: Ձմռանը ավելի լեփ լեցուն էին լինում մկիտանները, որտեղ խաշը, չանախը, փիթին իրենց կողմն էին քաշում բոլոր ուստող խմող մարդկանց, հատկապես արհեստավորներին:

Սովետական կարգերի հաստատումից մի քանի տարի անց մկիտանները փակվեցին:

**30. ՂԱՅՅԱԽԱՆԱՆՆԵՐ.**- Սրճարաններ. դայֆախանան մեր այսօրվա սրճարանի հետ ոչ մի նմանություն չունի: Այն ժամանակ մարդիկ՝ մեծ մասը գաղափար էլ չունեին ակումբների և կլուբների մասին: Տղամարդկանց համար երջանկություն էր ազատ ժամանակը երեկոյան անցկացնել ընկերներով դայֆախանաներում, որտեղ ջահելները իրավունք չունեին մտնելու: Նրանք այնտեղ հավաքվում էին իբր դայֆակոֆե խմելու և սկսվում էր նարդի, թուղթ-կարթ, աչկո խաղալը, հեքիաթներ պատմելը, երգեր ասելը (հատկապես թուրքական շիքյաստաներ), որից հետո և սկսվում էր հարբեցողությունը:

**31. ԽԱՆՈՒԹՅԱՆՆԵՐ.**- Խանութպաններ, վաճառականներ.- Չնայած Ախալքալաքի փոքր լինելուն, խանթճիների թիվը մինչև 1910 թ. եղել է 17-20, իսկ մինչև 1935-36 թթ. այն քառապատկվել էր:

Մինչև գաղթը խանթճի առևտրականները իրենց խանութներում վաճառել են ամեն տեսակի մթերքներ և իրեր միասին խառն: Խանութում վաճառվում էր աղ, կոնֆետ, ալյուր, քաղցրավենիք, մրգերի ամեն տեսակներ: Գաղթից հետո այն կարծես դասավորվել էր, քանի որ ժողովուրդը գաղթից վերադառնալով, լինելով տարբեր քաղաքներում, այնտեղից իրենց հետ բերել էին որոշ կուլտուրա, այսպես ասած արդեն ի վիճակի էին կողմնորոշվելու ունեցած խանութում վաճառել այնպիսի մթերքներ, որը մեկը մյուսին համապատասխանի:

**32. ՅՈՂՁԵՐ.**- Սրգավաճառներ.- Այս ձևի առևտրականների թիվը շատ շատ էր:

Այն մարդիկ, որոնք ունեին խանութ և իրենց խանութում վաճառում էին միայն միրգ, նրանց անվանում էին խանութճի, իսկ սրանց յոգեր:

Յոգերը առևտրականներ էին և նրանց մեջ պատահում էր, որ առևտուր չի արել և առևտրից գաղափար էլ չունի, հանկարծ յոգ էր դառնում:

Ախալքալաքի շրջանի Թուրքիային սահմանակից թուրքական մի քանի գյուղեր՝ Յոքամը, Քարսեպը, Էրինջան, Դավնյան, Մրագուլը, Նաքալաքը, Մարգաստանը, Խրթվիզը, Ուճմանան, բոլորն էլ մրգով հարուստ էին և իրենց ունեցած միրգը մեծակ բերում էին Ախալքալաք և տանում շրջանի հեռավոր գյուղերը վաճառելու: Թուրքերը բերած թուրք վաճառում էին յոգերին, քաղաքից գնում իրենց համար անհրաժեշտ ապրանք:

Յոգերը ունեին նաև իրենց օգնականները, որոնք արկղով խնձորը ուսին դրած, կշեռքը և կշռաքարերը արկղի մեջ, ման էին

գալիս քաղաքի մեջ՝ փողոցներով բղավելով անուշիկ խոնձոր, դաբաղարմարի, դաբաղարմարի տանձ, նանազիր տանձ և վաճառուն բնակչությանը:

**33. ԲՈՅԱԶԻՆՆԵՐ.**- Ներկարարներ.- Բոյաջիների թիվը Ախալքալաքում եղել են մինչև 1910 թ. 3-4 հոգի, իսկ հետո մինչև 1935-36 թթ. 15-17 հոգի: Գլխավորապես թել էին ներկում:

**34. ԽԱՆՆԵՐ.**- Յուրանոցներ.- Ինչպես ծանոթացանք սկզբից Ախալքալաքում եղել է երկու հյուրանոց՝ սկզբից Կտոյի գաստինիցան, քիչ ուշ Պիպինենց գաստինիցան, որոնք Ախալքալաք մուտք գործող ժողովրդի 2-3 տոկոսից չէին կարող պատսպարել, բացի դրանից դժվար այն ժամանակ այդ խեղճ գյուղացիներին բոլորին թողնեին և իրանք էլ ի վիճակի չէին հյուրանոցում իջնելու: Քաղաքում հրապարակ եկան խաներ, որոնք ոչ թե միայն մարդկանց էին գիշերելու տեղ տալիս, այլև ձիերին, եզներին, էշերին, մնացած վաճառքի բերած անասուններին, բերած ապրանքին: Գաղթից հետո խաների թիվը բազմապատկվեց, հատկապես սովետական կարգերի հաստատումից հետո, երբ երևան եկան ավտոմեքենաները, շատ ֆուրդունճիներ, ֆայտունճիներ թողին իրենց զբաղմունքը, վերջ տվին ձիերին և գոմերը դարձրին խաներ, ստեղծեցին հարմարություններ:

**35. ՊԱՏՇԱՐՆԵՐ.**- Քարտաշներ.- Քաղաքի բնակչությունից շատ քչերն էին զբաղվում քարտաշությամբ, մեծ մասամբ գյուղերից էին գալիս:

**36. ՆԵՐԿԱՐԱՐՆԵՐ.**- Այս ձևի արհեստավորները շատ քիչ են եղել, միայն գաղթից շատ հետո սկսեցին մի 6-8 հոգի զբաղվել դրանով: Նրանք շատ սկզբից ներկում-սպիտակեցնում էին միայն քիրաճով (կրով) տների ֆասաթները, սենյակները, իսկ ավելի ուշ, երբ հրապարակ եկավ յուղաներկը, սկսեցին նաև օգտագործել և աշխատել յուղաներկերով, ներկում էին դուռ, պատուհան, հատակ:

**37. ՂԱՍԱՊՆԵՐ.** Մսագործներ.- Առավոտյան երբ գնում էիր «խափանը»- շուկան, որտեղ անասուններ էին վաճառում, այստեղ առաջին հերթին կտեսնեիր ղասապներին. որոնք գնում էին՝ ոչխար, կով, եզ և անմիջապես սպանդանոց տանում, որպեսզի հաջորդ օրվա համար ունենային վաճառելու միս:

Ղասափի համար հարկավոր էր ունենալ մի կասաթարա (միսը ջարդելու գործիք) փոքր կացին, 2-3 տեսակի դանակ, (դանակը սրելու համար) կշեռքը, կշռաքարերը և չանգյալ՝ միսը կախելու և կոճ (կլոր փայտ) միսը ջարդելու համար:

**38. ԳՐԱԳԻՐՆԵՐ.**- Սրանք պատկանում էին գրագետ մարդկանց շարքին, որոնք գրագրություն էին անում հարուստ վաճառականների մոտ: Մի մասն էլ գործավարություն էր տանում մանու-

Ֆակտուրիստների մոտ և ստանում աշխատավարձը ըստ վաճառականի խղճի: Գաղթից հետո նրանք սկսեցին նաև դիմումներ, նամակներ գրել անգրագետ մարդկանց համար և խորհրդական դառնալ դժվար լուծվող հարցերի համար:

**39. ՅԵՔԻՄՆԵՐ.**- Սրանք պատկանում էին այն մասնագետների թվին, որոնք քիչ թե շատ զարգացած էին ըստ իրենց գիտակցության: Ջբաղվում էին ատամ քաշելով, մայլաններ (դեղեր) պատրաստելով (բույսերից), յախու զցելով ջարդվածքին, դուրս ընկածի բուժման հարցով: Դրանք բոլորը բառբառներն (վարսավիրներն) էին:

**40. ԲՈՍԱՆԾԻՆԵՐ.**- Բավականին մեծ արժեք ունեին այս բուսանճիները: Հարազատենք, Ըմփոսենք, Պապլոյենք, որոնք քաղաքի բնակչությանը մատակարարում էին կարելի է ասել շատ համեղ, քարմ և ամեն տեսակի կանաչեղեն:

**41. ՋԱՂՁՊԱՆՆԵՐ.**- Քաղաքացիները իրենց հացը եփել էին տալիս իրենց սեփական ալյուրից, ահա և ցորենը կամ գարին ջաղացքը տանելուց մեկ կամ երկու օր առաջ նրանք պայմանավորվում էին ջաղացպանի հետ, որից հետո կաշկայով, կամ էլի վրա բարձած տանում էին աղալու: Ամբողջ գիշերը չէին քնում, ալյուրի մեջ շաղախված ջաղացպանի հետ տանջվում էին մինչև լույս: Ջաղացքներում շատ-շատ էր լինում հերթը:

**42. ՓԵՇՏՄԱՆԾԻՆԵՐ.**- Ախալքալաքից մինչև Ախալցխա տանող ճանապարհի վրա մինչև օրս կա փեշտմալ կոչվող կանգառը և մի կտուրե տուն, որտեղ փեշտմալճիք (Մամասենք, Փեշտմալճոնք) պահում էին ձիեր, որպեսզի Ախալքալաքից եկող հոգնած ձիերը փոխարինվեն հանգստացած ձիերով, կարգի բերվեն ֆուրգոնը կամ կառքը և շարունակեն դեպի հեռուն, նույնը և Ախալցխայից եկող-զմացողը: Ահա այսպես անընդհատ նրանք աշխատում էին օր ու գիշեր: Այդ կանգառում նրանք ունեին իրենց մրգի բաղերը, որտեղ և միրգ էին վաճառում ճամփորդներին:

**43. ԲՅՈՒՐՔՉԻՆԵՐ.**- Քուրք կարողներ.- Մինչև գաղթը Ախալքալաքում քուրք կարողներ չեն եղել, գաղթից հետո միանգամից երևան եկան երեք քուրք կարողներ (Մածոռենք, Ջուռնաճոնք և Կուղիկամյանք): Այն ժամանակ քաղաքի քուրք հազմողների մեծ մասը ֆայտոնճիներ, ֆուրգունճիներ, կաչկաճիներն էին և այն մարդիկ, որոնք ծնունդով ժամանակ ուրիշ քաղաքների հետ առնչություն ունեին: Մորթիները գնում էին քուրքչիները (ոչխարի մորթիներ), որոնք իրենք անձամբ մշակում էին և ապա նրանցից քուրք կարում: Ավելացած կտորները վաճառում էին փափախ կարողներին, որոնք փափախ էին կարում:

**44. ՊՈՎԵՐՆԵՐ.-** Խոհարարներ.- Այս արհեստի մարդիկ մինչև գաղթը շատ քիչ են եղել: Գաղթից հետո պովերներից մի քանիսը իրենց համար բաց արին փոքր ճաշարաններ: Պովերները հին ժամանակներում մեծ օգուտ էին ստանում մեծ հարսանիքների ժամանակ:

**45. ՆԱԹՐՆԵՐ.-** Բաղմիքներում աշխատում էին նաթրներ, այս խեղճ կանայք, առավոտից մինչև ուշ երեկո լրիվ տկլոր վիճակում, առաջներում կապած միայն մի ֆարտուկ, ծանր օդի մեջ մաքրում, քեսա էին խփում լողացող կանանց, լվալով նրանց գլուխները և ստանում կոպեկներ: Նրանց պարտականության մեջ էր մտնում ջրի տաքի և սառի ապահովումը, նախկներով ապահովելը, դրսից սառ ջուր բերելը:

**46. ՔԵՍԱԾԻՆԵՐ.-**

**47. ՍՈՒԾԻՆԵՐ.-** Ջրկիրներ.- Ջրկիրների մի քանի տեսակներ գոյություն ունեին Ախալքալաքում, բայց սուճի ասելով հասկացվում էր ձիով և իշով ջուր կրողները, իսկ իճաթով և ձեռով ջուր բերողները՝ ջրկիրներ:

**48. ՊՈՒԼՈՒՇՆԻԿՆԵՐ.-** Հրուշակագործներ.- Մինչև 1940 թ. կարելի է հիշել մեկ պուլուշնիկ (հրուշակագործ) չհաշված փռնճիների կողմից պատրաստված խմորեղենները:

**49. ՋԱՍ ԹՆՈՂՆԵՐ.-** Ապակի քցողներ.

**50. ԿԱԼՎԱԾԱՏԵՐԵՐ.-** Ախալքալաքի առաջացումից հետո կավածատերեր երկար ժամանակ չեն եղել, երբ առաջ եկան առևտրականները, մանուֆակտուրիստները, նրանցից մի քիչ շուտ առաջ եկան կավածատերերը, շահագործելով գյուղացիներին, հողերը վերցնելով իրենց ձեռքը և արենդայով տալը:

**51. ՍՎԱՂԾԻՆԵՐ.- ՔԻՐԱԾԻՆԵՐ.-** Մինչև սվաղճին ավագը չաներ, մալարը չէր կարող սպիտակեցնել: Սվաղճիները կավե հողից էին սվաղում, որի հետ քիչ քանակությամբ քիրած խառնում: Գաղթից հետո հարուստ խավը սկսեց նոր տներ կառուցել ահա և սվաղճիների պահանջը ավելացավ, որոնք բնակարաններում քիրամիտից (աղյուսից) վառարաններ էին պատրաստում, կտուրների վրա քիրամիտե բուխարիկներ սարքում, իսկ բնակարաններում կտրվածքներ անելիս ու վերանորոգելիս նորից սվաղով պատում:

**52. ՇՈՒՆԻԿՆԵՐ.-** Շոռնիկների գործը մինչև 1940 թ. կարելի է ասել շատ լավ էր և պահանջը շատ: Նրանք սպասարկում էին ֆուրդունճիներին, ֆայտոնճիներին, կաշկաճիներին, որոնց գործը անմիջապես կապված էր շոռնիկների հետ, որոնք ձիերի համար պատրաստում էին անեն տեսակի սարքավորումներն ու հարմարանքները, ինչպիսիք էին գյամը, թամքը, վոժերը, իզանկիները, խամութները, բոլոր, բոլոր հարմարանքները:

**53. ՍԱՐԿԱՎԱԳՆԵՐ.-** Տերտերներ.- Մինչև գաղթը և գաղթից հետո էլ սարկավագների վիճակը շատ լավ է եղել:

**54. ՓԵԹԱԿ պահողներ.-** Մեղվապաններ.

**55. ՎԱՐԺԱՊԵՏՆԵՐ.-** Ուսուցիչներ.-

**56. ՍԱՆԴԻ շինողներ.-** այս ձևի արհեստավորների թիվը մի երկուսն էին, չնայած նրանց պահանջը շատ էր: Սանր պատրաստում էին փայտից ու ոսկորից:

**57. ԿԼԱԵԿՉԻՆԵՐ.- ԴԱԶԱՆՉԻՆԵՐ.- ՊՂՆԶԱԳՈՐԾՆԵՐ.-** Թե գաղթից առաջ և թե գաղթից հետո կլաեկճիների թիվը 3-4-ից չի անցել: Նրանք նոր պղնձե ամաններ չէին պատրաստում, այլ վերանորոգում էին եղածը հնից:

**58. ՖԱՍ ԿԱՐՈՂՆԵՐ.-** Ֆաս կարողների թիվը շատ քիչ էր, պահանջը շատ, կարողների մեծ մասը կանայք էին: Մինչև գաղթ և գաղթից հետո ֆաս դնում էին ամեն մի ծեր (թե տղամարդ և թե կինարմատ) հատկապես գլուխները չմրսելու համար: Կային նաև շքեղ ֆաս սարքողներ, որոնք հագնում էին բեզերը, աղաները, հարուստ վաճառականները:

**59. ՍԱԹԾԻՆԵՐ.-** Ժամագործներ.-

**60. ԹԱԼԱԼՆԵՐ.-**

Քաղաքացու որևէ մեկից եթե կորել է անասունը, այն թալալին վճարում էր որոշ գումար, թալալը դուրս էր գալիս քաղաքի գլխավոր փողոցի վերևի ծայրից սկսում էր բղավել, որ կորել է Պիճի Մկենց եզը, ով գտել է 10 մանեթ միրտա (նվեր) և այդպես բղավելով հասնում էր փողոցի մյուս ծայրը: Եթե այն գողացված չէր, անմիջապես գտնում էին:

## ԽՈՐԵՆԻԱ ԳՅՈՒՂԻ ԶԱՐԴԻ 80-ԱՄՅԱԿԻՆ\*

### Խաչատուր ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

1918 թվականի մարտի 3-ի Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագրի 4-րդ կետով եւ ռուս-թուրքական լրացուցիչ պայմանագրով Ռուսաստանը պետք է զորքերը դուրս բերեր Արդահանի, Կարսի, Բաթումի նահանգներից: Մայիսի սկզբին թուրքերը հարձակվում եւ գրեթե առանց դիմադրության վերցնում են վերոհիշյալ նահանգները, իսկ մայիսի 7-ին ներխուժում են Ջավախք:

Վեհիբ փաշայի ուղարկած կանոնավոր զորքերը, Չլդրի թուրքերի հետ միասին, մայիսի 7-ի գիշերը հարձակվում են Ախալքալաք գավառի Կարծախ գյուղի վրա: Այստեղ գտնվող հայկական զնդի կամավորները երկու օր խիզախորեն դիմադրում են, սակայն, վերջին փամփուշտները սպառվում են եւ ստիպված նահանջում ու միանում են Սաթխա գյուղի կամավորականներին: 10 օր՝ մինչեւ վերջին փամփուշտները, նրանք հերոսաբար դիմադրում են թուրքերի առաջխաղացմանը: Գավառի Գումբուրդո, Ալաստան, Ագարվեթ, Դիլիսկա, Վաչիան, Մեծ Խանջալի եւ այլ գյուղերի կամավորական ջոկատները, նույնպիսի խիզախությամբ էին դիմադրում թուրքերի հարձակումներին: Կամավորական ջոկատների հերոսամարտերի շնորհիվ գավառի բնակիչները հնարավորություն են ունենում գյուղերում թողնել իրենց ունեցվածքի մեծ մասը, փախչել Ծալկա, Բակուրիան եւ այլ ուղղություններով: Կամավորականներից շատերը զոհվում են հերոսաբար, իսկ մի մասն էլ նահանջում եւ միանում է փախստականներին:

Խորենիա գյուղի բնակիչները, սայլերի քարավանով 30 կմ անցնելուց հետո, հասնում են Աբուլ սարի արեւելյան մասում գտնվող իրենց յայլան (ամառանոցը): Երկու օր անց թուրք լրտեսները որպես «բարերարներ», զնում են «յայլա» եւ խորենիացիներին հավատացնում, որ «Խորենիայի եկեղեցու քահանան գնացել է

---

\* Հոդվածն առանց բնագրային փոփոխությունների արտատպվում է «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» թերթից (Երևան, 27 հունիս, 1998):

թուրք փաշայի մոտ եւ «մանդատ» է վերցրել խորենիացիների համար, որպեսզի թուրք ասկյարները խորենիա գյուղի բնակիչներին վերաբերվեն այնպես, ինչպես հարեւան թուրք, Ուլչմանա եւ Յեշտիա գյուղերում բնակվող կաթոլիկ հայերին»:

Տարակուսանքի մեջ ընկած գյուղացիները հավատում են «բարի» լուր բերողներին: Անդրդվելի են մնում Գոքորենք, Թաթոսենք, Տոնոյենք (մոտ 15 տուն) եւ գաղթում են Ծալկա: Գյուղի մնացած բնակչությունը, մոտ 800 հոգի, վերադառնում է խորենիա: Պարզվում է, որ գյուղի քահանան ոչ թե զնացել է թուրք փաշայի մոտ «մանդատ» վերցնելու, այլ փախչելու ժամանակ թուրքերը նրան սպանել են:

Խորենիա հասնելուց հետո գյուղացիները շրջափակվում են թուրք ասկյարներով: Երկու օր անց, իբր «հաշվառման» համար, բնակիչներին հավաքում են Թափարվան գետի մարգագետնում: Տղամարդկանց առանձնացնում են եւ դահիճներով շրջապատված, տանում-փակում են Շահինյան Մաթոսի մարագում: Հավաքված կանանցից առանձնացնում են գեղեցիկ հարս ու ասղջիկներին, իսկ մյուսներին՝ երեխաների հետ միասին, փակում են մեկ այլ գյուղացու մարագում: Մութ գիշեր է, ասկյարները քնած են մոտակա տներից մեկում: Կանայք սկսում են եղունգներով քանդել մարագի պատը եւ մեծ դժվարությամբ անցք բացել: Լուսաբացին, պատի անցքից նրանք փախչում են դեպի ձորը:

Շատերն ընկնում են հորդառատ, խոր գետը եւ խեղդվում, ումանք էլ փախչելու ժամանակ զնդակոծություններից զոհվում են: Փրկվում են երկու կին՝ Վարդանյան Սամանը եւ Սերոբյան Ծովհարը:

Մայիսի 20-ի վաղ առավոտյան թուրք դահիճները հավաքվում են մարագների հողածածկ կտուրների վրա եւ բահերով փորփորում-քանդում են կտուրները, անցքեր բացում եւ զնդակոծում բնակիչներին:

Անօգնական երեխաների ողբալի ձայներ, կանանց անվերջանալի ճիչեր, աղաղակներ, ծերունիների աղերսանքներ, հառաչանքներ, զնդակների շառաչներ: Դժոխային մի տեսարան: Աբգարյաններից, Աճուլյաններից, Բաղալյաններից, Զարդարյաններից, Միերյաններից եւ Քոնկյաններից ոչ ոք չմնաց՝ բոլորը զնդակահարվեցին, իսկ Ասատրյաններից, Առաքելյաններից, Խաչատրյաններից, Սարգսյաններից, Սերոբյաններից, Տեր-Վարդանյաններից, Վարդանյաններից (Օհանենց), Ֆիդանյաններից փրկվեցին նրանք, ովքեր բանակում էին կամ այդ պահին գյուղում չէին:

Նույն բարբարոսությունները թուրքերն անում են Թախչա գյուղի 300 բնակիչների նկատմամբ: 1918թ. մայիսի 19-25-ը Ախալքա-

լաքի գավառում թուրքերը ոչ միայն կոտորածներ կազմակերպեցին, այլ նեժ քանակությամբ հարստություն թալանեցին:

Սոսկալի էր փախստականների վիճակը: Ծավկայուն եւ Բակուրիանուն ապաստանած 70 հազար ախալքալաքցի փախստականները աղետալի վիճակում էին: Երկարատեւ սովից, տիֆի համաճարակից եւ այլ հիվանդություններից օրական մահանում էին ավելի քան հարյուր փախստականներ:

Յունիսի 24-ին Բակուրիանից Գրիգորյանը գրում է. «30 հազար հայ փախստականներ կան: Երեկ եկան Ախալքալաքի շրջանից էլի 15 հազար հոգի, քաղցածների թիվն օրեցօր սաստիկ մեծանում է, հեռանկարը սոսկալի է»: («Մշակ» 121, 1918թ.): «Յարյուր հազարավոր քաղցած եւ ոտաբորիկ փախստականները կիտվել են Մցխեթայից սկսած մինչեւ Դուշեթի ու ավելի խորքերը: Չկա ոչ մի օգնություն, ոչ մի մարդու կողմից»: («Մշակ» 96, 26.5.1918թ.):

Թուրքերի հետապնդումից Ախալքալաքի վերջին փախեփախը տեղի ունեցավ 1921 թվականի ձմռան սկզբին: Բարեբախտաբար, այն կարճատեւ եղավ, եւ փախստականները վերադարձան իրենց տները:

...Տարիներ շարունակ, ձմռան երկար գիշերներին օդաներում հավաքված, հորենիայի ականատեսները սոսկունով էին վերհիշում թուրքերի կատարած բարբարոսությունների մասին: Յամագյուղացի Սիմիկ Խոսրովի Կիրակոսյանը (1909-1992) մտածում էր հորենիայի ջարդերի զոհերի հիշատակին հուշարձան կանգնեցնելու մասին: Նա գյուղում կառուցել է 1962թ. կամուրջը, 1977թ. հիմնովին վերակառուցել է Դիզի հարթասրբի շենքը, ջրաղացը վերանորոգելու համար հաճախ է օգնել ավագ եղբորը՝ Արմենին:

1978թ. մարտի 22-ին վարպետ Սիմիկը երազ տեսավ. «Ինձ մոտեցան լուսեղեն մարդիկ եւ ասացին, որ հուշարձան կառուցեմ զոհվածների հիշատակին: Փառանձեմ քեռակինս խորհուրդ տվեց չիրաժարվել՝ կառուցել»:

Չախ ոտքի խրոնիկական ծանր վերքից ամիսներով անկողնում պառկած 69-ամյա վարպետը արթնանում է սրտապնդված: Զարմանում է, որ ոտքի ցավը բոլորովին անցել էր:

Երեւանից գնում է քարհանք, այստեղից էլ հորենիա եւ սրած գործիքներով սկսում է ձեւ տալ քարերին ու նախշազարդել:

Վեց ամսում նա պատրաստեց երկու հուշարձան, մեկը՝ տղամարդկանց, մյուսը՝ կանանց հիշատակին:

## ՆԵՐՍԵՍ ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆ\*

Գ. ՄԱՂՈՅԱՆ

1920 թվականին նա քահանա էր, մեր հայոց լեզվի ուսուցիչը: Ուներ մորուք՝ փոքր, ինչպիսին ունենում էին արհեստավորները: Դասերն անցնում էին շատ աշխույժ: Գաղթից նոր էինք վերադարձել, ո՛չ թուղթ-մատիտ ունեինք, ո՛չ դասագիրք: Բայց տեր Ներսեսը առանց դասագրքի այնպիսի հմտությամբ մեզ սովորեցրեց «Մի կաթիլ մեղրը», որ ցայսօր մնացել է մեր հիշողության մեջ: Երանի թե ձեռքի տակ դասագիրք ունեցող ուսուցիչների մի տասը տոկոսը կարողանար այդ անել:

Դժավրության առաջ կանգնեց՝ հետևյալ տողերը բացատրելիս.

*Ինչպես շնաճանճի մի բույժ  
Քանդես, թողնես.  
Էն ճանճի պես...*

Դասարանում կային հյուսնի, դարբնի, դալայչու, փռնչու երեխաներ, բայց ոչ ոք չկարողացավ բացատրել, թե ինչ բան է շնաճանճը: Ես կովերի հետ գործ ունեի: Գիտեի, որ երբ դաշտում կովը կու է թափում, մի քիչ սեռեկռելուց հետո կուի վրա հարձակվում են մի տեսակ սև խոշոր ճանճեր: Ժամանակի ընթացքում, երբ կուն արտաքինից չորանում է, նույն ճանճերը նրա տակ բույն են դնում և ձագ հանում: Ավելի ուշ, երբ կուն կարծրանում է, թիթին է դառնում, ոտքով խփելու դեպքում գազազած ճանճերը դուրս են թափվում և հարձակվում բույնը քանդողների վրա:

Իմ բացատրությունը բավարարեց ուսուցչին: Վերի թաղից, ներքի թաղից, գործի տեղից, ճամփի կեսից դեպի մեղր ծախողի խանութը վազող ամբոխի վարմունքը իսկապես նման էր բույնը քանդած շնաճանճերի վարքագծին: Նա մի պահ մոռացավ երևի, որ գրավորս վատ է և գովեց ինձ: Պարզվեց, որ դասընկերներս նույն-

---

\* Հոդվածն արտատպվում է «Հանդես Երևանի համալսարանի» գիտահնչոր-մացիոն լրատուից (N 2 (97), Երևան, 1997, էջ՝ 114-115):

պես քանդել են շնաճանճի բույն, ենթարկվել դրանց հարձակմանը: Բայց կու, թիթին բառերի բացատրությունը, շնաճանճերի վարքագծի մեկնությունը պարզ խոսքերով, նրան դուր էր եկել և արժանի էր համարել գովելու:

Փարաջայի լայն թևերը, որ միշտ խանգարում էին ձեռքերի երևալուն, նա վեր քաշեց և շարունակեց ընթերցումն ու բացատրությունը:

Հետո, շատ հետո, երբ կարդացի նրա հուշերը իր եղբոր՝ Վահան Տերյանի մանկության մասին, հասկացա, որ նա հատուկ սեր է ունեցել հայրենի բարբառի նկատմամբ:

- Աչիչս բան կերևա,- ասել է մանուկ Վահանը, երբ լացով վեր է թռել քնից:

Աչք բառի սեռական աչիչ ձևը, հազվագյուտ էր բարբառագիտության մեջ: Իլիա Աբուլաձեին հայ բարբառագիտության քննություն համձնելիս՝ իմ բերած բաղն-ոց թաս, ձեռ-աց աղտ, օտ-աց չամուռ սեռականների վերջավորությունը նա չգիտեր և գոհ մնաց. եթե աչ-իչ վերջավորությունը ևս լսեր ավելի կփառավորվեր:

Երևի 1925-ին էր. Ներսես Տեր-Գրիգորյանն ընտանիքով փոխադրվեց Թիֆլիս: 1928-29 ուսումնական տարում նորից եկավ Ախալքալաք և ստանձնեց բարձր դասարանների հայոց լեզվի ու գրականության ուսուցչի պաշտոնը: Ես 8-րդ դասարանում էի: Արդեն գրավորից լավ էի, դասի ժամանակ ակտիվ: Հ. Սուրխաթյանի կազմած «Հայ գրականություն» դասագրքից քաղաքում մի-երկու հատ կար. մեկը մեր ուսուցչինն էր: Մենք դարձյալ դասագիրք չունեինք: Նա լավ նախապատրաստված գալիս էր դասի, պատմում էր այնպես լավ, որ հափշտակված լսում էինք և ապա պատասխանում նրա առաջադրած հարցերին: Հետևում էր փաստերի ճիշտ շարադրմանն ու իմաստավորմանը, բառեր հստակ արտասանությանը:

Փարաջան վաղուց էր հանել: Հագնում էր սև հաստ կտորից կարած խալաթ՝ կրծքին և կողքերին խոշոր գրպաններով, կապում էր բարակ կաշվե գոտի՝ շատ թույլ, ուստի դասի ընթացքում գոտու ճարմանդը շուտ-շուտ տեղը փոխում էր:

Արդեն ծեր էր, բայց ծերության ի՞նչ հատկանիշներ ուներ՝ դժվարանում եմ ասել. ես այն ժամանակ ծերերի հալից բոլորովին չէի հասկանում: Ինչպես տարիներ առաջ, նույնպես և այժմ քայլում էր հանգիստ, համաչափ քայլերով: Ակնոց գործածում էր: Ձեռնափայտի դեռ չէր ընկել: Աշակերտներին երես չէր տալիս. թե՛ լավ սովորողներին, թե՛ վատ սովորողներին նայում էր միևնույն աչքով: Անհրաժեշտության դեպքում գովաբանում կամ կշտամբում էր՝ միշտ առանց կրթի, չափի մեծ զգացումով:

Պարտականությունները կատարում էր խղճի մտոք: Կային ուսուցիչներ, հիմա նույնպես կան, որոնք դասի սկզբից մինչև վերջ պատմում էին իրենց անցյալի, նշանավոր նախնիների, իրենց հոգսերի մասին և զանգը հնչելուն պես վազում ուսուցչանոց: Ն. Տեր-Գրիգորյանը ռացիոնալ կերպով էր օգտագործում իր դասի 40-45 բոլորները, հարստացնում, ամրապնդում աշակերտների գիտելիքները: Մեր ուսուցիչներից միայն նա իրավունք ուներ դասարանից դուրս գալուց հետո հպարտությամբ հայտարարելու.

- Ահա մի լիարժեք դաս էլ ունեցա 8-րդ դասարանում:

Մեր ուսուցիչն ավելի շատ իրավունք ուներ խոսելու իր տաղանդավոր եղբոր մասին, որի ստեղծագործական բնութագիրը պարտավոր էինք գիտենալ: Ծրագրի այդ մասն անցնում էր հատուկ խնամքով. Վ. Տերյանի կյանքից պատմում էր հետաքրքիր դրվագներ, բայց միշտ հարազատ մնալով ծրագրին:

## ՀԱՅ ԿԱՅՈՒՐԿԵ ԵԿԵՂԵՑԻ\*

Հայ կաթողիկե եկեղեցին Հռոմի կաթոլիկ եկեղեցու հետևորդ հայերի (եկեղեցական և աշխարհական) հավաքականություն է, որը միացած է Հռոմի աթոռին եկեղեցական ու դավանական հաղորդությամբ, ճանաչում և ընդունում է Հռոմի պապի գերագահությունը: Իբրև կառույց և եկեղեցական առանձին նվիրապետություն՝ Հայ կաթողիկե եկեղեցին կազմավորվել է 1740-ի նոյեմբերին, Հալեպում, երբ Աբրահամ Արծիվյան եպիսկոպոսն օծվել է հայ կաթոլիկ համայնքի պատրիարք (Աբրահամ Ա Արծիվյան): 1742-ին Հռոմի պապ Բենեդիկտոս XIV-ը վավերացրել է Աբրահամ Ա Արծիվյանի պատրիարքական ընտրությունը:

Հայերը կաթոլիկության և Լատին եկեղեցու հետ առաջին անգամ առնչվել են Կիլիկիայի հայկական իշխանապետության շրջանում՝ Խաչակրաց արշավանքների ժամանակ (XI դ. վերջ – XII դ. սկիզբ): XIV դ. սկզբին Հայաստանում տարածվել է ունիթորությունը (միարարություն), երբ լատին քարոզիչները սկսել են քարոզել միություն Հռոմի կաթոլիկ եկեղեցու հետ: XIV դ. 1-ին կեսին Հայաստանի արևելյան գավառներում (Նախիջևան, Երնջակ, Ջահուկ ևն) և պարսկահայերի շրջանում կազմակերպվել են հայ ունիթորական համայնքներ: XV-XVII դդ. կաթոլիկությունը բավական տարածվել է Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրության Ախալցխայի փաշայության գավառներում, նաև հայկական գաղթավայրերում: Մինչև XVIII դ. կաթոլիկացվել են Լեհաստանի և Հունգարիայի հայ գաղութները: Հայ կաթոլիկները, որպես Կ. Պոլսի հայոց պատրիարքությունից անկախ և առանձին կրոնական համայնք (միլլեթ), Օսմանյան կայսրությունում ճանաչվել են 1829-ի սեպտեմբերի 14-ին:

Արևելյան Հայաստանում հայ կաթոլիկ համայնքները հիմնականում ստեղծվել են Ադրիանուպոլսի պայմանագրից (1829) հետո, երբ Կարինից (Էրզրում), Ալաշկերտից, Մուշից և այլ վայրերից գաղթած հայեր, այդ թվում և կաթոլիկ, անցել են Ռուսական կայսրություն, բնակություն հաստատել Շիրակում, Տաշիրում, Լոռիում, Ջավախքում և հիմնել մի քանի տասնյակ գյուղեր, որտեղ կառուցել են

\* «Հայ սփյուռք» հանրագիտարան, Երևան, 2003, էջ 671-674:

եկեղեցիներ, դպրոցներ, հիվանդանոցներ: Արևելյան Հայաստանի և Ջավախքի հայ կաթոլիկ գյուղերի ու գավառների համար Հռոմի աթոռը XIX դ. կեսից ստեղծել է եկեղեցական կազմակերպություն, իսկ 1909-ին ամբողջ Կովկասի համար առաքելական կառավարիչ է նշանակել Սարգիս ծ. վրդ. Տեր-Աբրահամյանին, որը պաշտոնավարել է մինչև խորհրդային կարգերի հաստատումը: Այդ տարիներին Ռուսական կայսրության հայ կաթոլիկների ընդհանուր թիվն անցել է 61 հզ-ից, գործել են 70-ից ավելի եկեղեցիներ և մատուռներ:

Մինչև Մեծ եղեռնը Արևմտյան Հայաստանում, Կիլիկիայում, Օսմանյան կայսրության այլ վայրերում հայ կաթոլիկ համայնքներ եղել են Սեբաստիայում, Ադանայում, Անարզաբայում, Կարինում, Խարբերդում, Մուշում, Իզմիրում, Քեսաբում և այլուր: Եպիսկոպոսական աթոռներ են եղել Կ. Պոլսում, Հալեպում, Բեյրութում, Մարաշում, Ադանայում, Դիարբեքիրում: Գործել են 19 թեմ, 156 եկեղեցի, 110 առաքելություն, 148 դպրոց, 32 վանք, 6 դպրեվանք: Տեղասպանության հետևանքով մեծ կորուստներ է կրել նաև հայ կաթոլիկ համայնքը: Ջարդերից մազապուրծ հայ կաթոլիկները սփռվել են աշխարհով մեկ: Նրանց համախմբելու և Հայ կաթողիկե եկեղեցին վերակազմելու նպատակով 1928-ին Հռոմում գումարվել է հայ կաթոլիկ եպիսկոպոսների բանակցական ժողով, որտեղ որոշվել է պատրիարքական աթոռը տեղափոխել Կ. Պոլսից և վերահաստատել Չմմառի վանքում (Լիբանան, 1931-ից) և հռչակել Լիբանանի պատրիարքական թեմը: 1934-ին կառուցվել է Էշրեֆիեի պատրիարքարանի շենքը, ինչպես նաև Ս. Ավետման եկեղեցին: Պատրիարքարանի տարածքում կառուցվել է նաև Մեծ եղեռնի զոհերին նվիրված հուշարձան:

Ներկայումս Հայ կաթողիկե եկեղեցու նվիրապետությունն են կազմում Տանն Կիլիկիո հայ կաթողիկե պատրիարքությունը, Լիբանանի պատրիարքական թեմը, Բերիո թեմը (Հալեպ, Սիրիա), Բարձր Ջեզիրեի թեմը (Կամիշլի, Սիրիա), Կ. Պոլսի թեմը (Թուրքիա), Ալեքսանդրիայի թեմը (Կահիրե, Եգիպտոս), Սպահանի թեմը (Թեհրան, Իրան), Բաղդադի թեմը (Իրաք), Ֆրանսիայի թեմը (Փարիզ), Հյուսիսային Ամերիկայի թեմը (Նյու Յորք), Հարավային Ամերիկայի թեմը (Բուենոս Այրես, Արգենտինա), Հայաստանի, Վրաստանի և Արևելյան Եվրոպայի թեմը (առաջնորդարանը՝ Գյումրիում), Դամասկոսի պատրիարքական էքզարքությունը (Սիրիա), Երուսաղեմի պատրիարքական փոխանորդությունը (Պաղեստին), Հունաստանի վիճակը և Իտալիայի համայնքը:

Տանն Կիլիկիո Հայ կաթողիկե պատրիարքությունը ներկայումս ունի շուրջ 240 հզ. հետևորդ:

Հայ կաթողիկե եկեղեցու կաթողիկոս-պատրիարքն է Ներսես Պետրոս ժժ Թարմունին (1999-ից):

**Լիբանանի պատրիարքական թեմ**, առաջնորդարանը՝ Բեյրութում: Թեմի առաջնորդը կաթողիկոս-պատրիարքն է, որը թեմը վարում է իր ընդհանուր փոխանորդի և վարչական խորհրդի միջոցով: Գործում է 9 եկեղեցի. առավել հայտնի են Բեյրութի Ս. Եղիա-Ս. Գրիգոր Լուսավորիչ մայր տաճարը, Ս. Փրկիչ և Ս. Խաչ եկեղեցիները: Հայ կաթոլիկ եկեղեցիներ կան նաև Ռաուդայում և Հազմիեում, Ջմնառում, Այնճարում, ինչպես նաև մի մատուռ՝ Բիկֆայայի Մխիթարյանների ամառանոցում: Անցյալում հայ կաթոլիկ եկեղեցիներ են գործել նաև Սայդա, Սուր և այլ բնակավայրերում, որտեղ ժամանակին եղել է հայ կաթոլիկ ստվար բնակչություն:

Լիբանանում հոգևոր և կրթական լայն գործունեություն են ծավալում Ջմնառի, Մխիթարյան և Անարատ հղության հայ քույրերի միաբանությունները: Բեյրութի Հազմիե արվարձանում Մխիթարյանները հիմնել են երկրորդական մի վարժարան (Ճերկայունն չի գործում), 1972-ին բացվել է Մխիթարյան միաբանության Ռաուդայի դպրեվանքը: Ներկայումս (2003) Բեյրութում գործում են Անարատ հղության հայ քույրերի միաբանության Ս. Հռիփսիմյանց (1922-ից), Ս. Ազնես վարժարանները, ինչպես նաև դպրոցներ Ջահլեում և Այնճարում, Ջմնառի աղջկանց և Այնճարի երկսեռ որբանոցները: 1937-ին հիմնված Ս. Շուշան վարժարանը 1997-ին վերածվել է մանկամտուրի: Լիբանանահայ կարևոր կրթօջախներից է Մեսրոպյան վարժարանը: Անցյալում լիբանանահայ պատանիներին հայեցի դաստիարակություն տալու գործում մեծ է եղել նաև Հիսուսյան միաբանության Բեյրութի Ս. Գրիգոր Լուսավորիչ ճեմարանի դերը: Թեմում գործում են մի շարք մշակութային, բարեսիրական, մարզական և սկաուտական միություններ, 4 երգչախումբ:

**Բերիո թեմ**: Առաջնորդանիստն է Հալեպի Տիրամայր Մայր օգնությանց եկեղեցին. կառուցվել է 1840-ին: Թեմն ունի 5 եկեղեցի, 5 դպրոց: Գործում են մշակութային, բարեսիրական, մարզական միություններ:

**Բարձր Ջեզիրեի թեմ** (առաջնորդարանը՝ Կամիշլիում): Ունի 3 եկեղեցի և 1 դպրոց: Գործում է ընկերային կենտրոնը:

**Կ. Պոլսի թեմ**: Ունի 4 եկեղեցի և 4 դպրոց, որոնք կառավարվում են Մխիթարյան միաբանության և Անարատ հղության քույրերի միաբանության կողմից: Թեմի խնամակալության ներքո է Սուրբ Հակոբ հիվանդանոցը:

**Ալեքսանդրիայի թեմ** (առաջնորդարանը՝ Կահիրեում): Ունի 3 եկեղեցի (Կահիրեում, Հելիոպոլսում, Ալեքսանդրիայում) և 1 դպրոց՝ Անարատ հղության քույրերի միաբանության տնօրինությամբ:

**Սպահանի թեմ** (առաջնորդարանը՝ Թեհրանում): Ունի 2 եկեղեցի և 2 դպրոց, մեկը՝ թեմական, մյուսը՝ Անարատ հղության քույրերի:

րերի միաբանությանը պատկանող: Թեմի տնօրինության տակ են Յայկաշենի հայկական ավանը և Տարեցների տունը:

**Բաղդադի թեմ:** Ունի 1 եկեղեցի և 1 դպրոց՝ ղեկավարությամբ Անարատ հղության քույրերի միաբանության:

**Ֆրանսիայի թեմ** (առաջնորդարանը՝ Փարիզում): Ունի 6 եկեղեցի (Փարիզ, Աննովիլ լե Գոնես, Լիոն, Մարսել, Վալանս, Սեն Շամոն): Գործում են Անարատ հղության քույրերի միաբանության Մարսելի վարժարանը և Լիոնի Աղջկանց կենտրոնը:

**Յուսիսային Ամերիկայի թեմ** (առաջնորդարանը՝ Նյու Յորքում): Ընդգրկում է ԱՄՆ և Կանադան: ԱՄՆ-ում կան 8 համայնքային կենտրոններ՝ իրենց եկեղեցիներով. Նյու Յորք, Ֆիլադելֆիա, Դետրոյտ, Լիթլ Ֆոլդ (Նյու Ջերսի), Լոս Անջելես (երկու), Սան Դիեգո, Քենթրիջ: Գործում է 3 դպրոց՝ Ֆիլադելֆիայում, Բոստոնում, Լոս Անջելեսում՝ Անարատ հղության քույրերի միաբանության ղեկավարությամբ, և մեկ դպրոց՝ Մխիթարյան հայրերի (Լոս Անջելես), ինչպես նաև 2 եկեղեցի (Մոնրեալ և Տրոնտո) և 1 դպրոց Կանադայում:

**Հարավային Ամերիկայի թեմ** (առաջնորդարանը՝ Բուենոս Այրեսում): Ունի 3 համայնքային կամ ծխական կենտրոններ՝ իրենց եկեղեցիներով [Բուենոս Այրես (Արգենտինա), Սան Պաուլո (Բրազիլիա) և Մոնտեվիդեո (Ուրուգվայ)]: Բուենոս Այրեսում կա մեկ դպրոց՝ Մխիթարյանների ղեկավարությամբ:

**Հայաստանի, Վրաստանի և Արևելյան Եվրոպայի թեմ** (առաջնորդարանը՝ Գյումրիում): Կազմավորվել է 1991-ին՝ Հոռնի պապի վճռով: Ընդգրկում է նաև Ռուսաստանը և Ուկրաինան: Թեմում գործում են Փանիկ, Արևիկ, Ազատան, Լանջիկ, Չիթանքով (Շիրակում), Աշոցքի Մեծ Սեպասար և այլ գյուղերի, ինչպես նաև Վրաստանի Նինոծմինդայի, Ախալքալաքի և Ախալցխայի շրջանների գյուղերի եկեղեցիները:

2000-ի օգոստոսին օծվել է Վրաստանի Նինոծմինդայի շրջանի ժղանովական գյուղի Ս. Սարգիս նորակառույց եկեղեցին: Աշոցքում գործում է «Տիրամայր Նարեկի» հիվանդանոցը, Գյումրիում՝ Ներսիսյան դպրեվանք-ընծայարանը: Անարատ հղության հայ քույրերին է պատկանում Գյումրիի Պողոսյան կրթական համալիրը. երկուական քույրերով փոքր կենտրոններ կան Տաշիրում (Հայաստան) և Հեշտիայում (Վրաստան): Հայ կաթոլիկներ են ապրում նաև Ռուսաստանի Սոչի, Ադլեր, Կրասնոդար, Մոսկվա և այլ քաղաքներում: Թեմի առաջնորդն է Մխիթարյան հայր Ներսես արք. Տեր-Ներսիսյանը:

**Դամասկոսի պատրիարքական էքզարքություն:** Ունի 1 եկեղեցի և 1 դպրոց: Գործում են երիտասարդական և սկաուտական խմբեր, երգչախումբ:

**Երուսաղեմի պատրիարքական փոխանորդություն:** Ունի 1 սրբավայր՝ Քրիստոսի խաչի ճանապարհի վրա՝ Երրորդ և Չորրորդ

Կայան, նրան կից՝ հյուրանոց ուխտավորների համար: Փոխանորդության հետ կապված է Հորդանանի փոքրաթիվ համայնքը, որն Ամմանում ունի 1 եկեղեցի և 1 դպրոց:

**Հունաստանի վիճակ** (առաջնորդարանը՝ Աթենքում): Ունի 2 եկեղեցի:

**Իտալիայի համայնք:** Ունի 2 եկեղեցի և Վենետիկի Մխիթարյան միաբանության մայրավանքը Ս. Ղազար կղզում: Հռոմում գործում են Լևոնյան հոգևոր վարժարանը, Վատիկանի ծայնասփյուռի հայկական բաժինը:

Հայ կաթոլիկ համայնքներ կան Գաև Լեհաստանում, Ավստրալիայում (գործում են 2 եկեղեցի՝ Սիդնեյում ու Մելբուռնում, և 1 դպրոց), Հունգարիայում (1 եկեղեցի):

Ներկայումս գործում է հայ կաթոլիկական երեք միաբանություն. Մխիթարյան միաբանությունը, Ձմմառի Արծիվյան պատրիարքական միաբանությունը և Անարատ հղության հայ քույրերի միաբանությունը: Մխիթարյանները մեծ ներդրում ունեն հայ հոգևոր, մշակութային և գիտական զարթոնքի ու վերելքի գործում, նշանակալի է հատկապես նրանց հայագիտական-բանասիրական, հրատարակչական-կրթական գործունեությունը: Հայ գաղթավայրերում Մխիթարյանները մեծապես նպաստել են հայապահպանությանը: Հայ մշակույթի և գիտության զարգացման գործում մեծ է Մխիթարյան հայրերի՝ միաբանության հիմնադիր Մխիթար Սեբաստացու, Մ. Չամչյանի, Մ. Ավգերյանի, Հ. Ավգերյանի, Ղ. Ինճիճյանի, Մ. Ջախջախյանի, Ա. Բագրատունու, Ղ. Ալիշանի, Հ. Գաթրոճյանի, Հ. Տաշյանի, Ն. Ակինյանի, Պ. Անանյանի և այլոց վաստակը, որոնք հեղինակել են պատմագիտական, աշխարհագրական, հայագիտական կոթողային աշխատություններ, բառարաններ, լեզվաբանական-թարգմանական գործեր: Մխիթարյաններն իրենց թանգարաններում, մատենադարաններում, ձեռագրատներում ունեն հայերեն և օտար լեզուներով գրքերի, հայկական ձեռագրերի, կիրառական արվեստի, կերպարվեստի, դրամների և բազմաթիվ այլ նյութերի հարուստ հավաքածուներ:

Ավելի քան երկու դար բաժանված մնալուց հետո (Վենետիկ և Վիեննա) Մխիթարյան միաբանությունը վերամիավորվեց 2001-ին:

1993-ից Հայաստանի Հանրապետությունում գործում է «Հայաստանի Մխիթարյան կենտրոնը» (Երևան), որի նպատակն է օժանդակել Հայաստանի և սփյուռքի ազգային-մշակութային և կրթական գործին: Կենտրոնը կազմակերպում է դասախոսություններ, հրատարակում գրքեր: Ղեկավարն է Սերոբ վրդ. Չամուրյանը (2000-ից):

Ձմմառի միաբանությունն իր հոգևոր և մշակութային առաքելությունն իրականացնում է հայկական շատ գաղթավայրերում:


Վանքի ձեռագրատանը, մատենադարանում, թանգարանում, դիվանում պահպանվում են հայկական ձեռագրերի, հայ և օտար հրատարակությունների, սրբագան իրերի, գեղարվեստական գործերի, եկեղեցական և ազգային պատմությանը վերաբերող վավերագրերի եզակի հավաքածուներ, հնագիտական նյութեր:

Անարատ հղության հայ քույրերի միաբանությունը գործում է սփյուռքի բոլոր մեծ համայնքներում (Սիրիա, Լիբանան, Եգիպտոս, Իրան, Իրաք, Ֆրանսիա, ԱՄՆ): 1992-ից միաբանության քույրերը գործում են նաև Հայաստանում և Վրաստանում:

Հայ կաթողիկե եկեղեցին ունի նաև ընկերային, բարեսիրական, մշակութային կազմակերպություններ. Լիբանանում գործում են Հայ կաթողիկե միությունը, Ս. Մեսրոպի արհմերի սկաուտական շարժումը, երկու որբանոց, Ստամբուլում՝ հիվանդանոց, Թեհրանում՝ ծերանոց: Մի շարք թեմերում ստեղծվել են մշակութային կենտրոններ:

Հայ կաթողիկե եկեղեցին և Մխիթարյան միաբանությունը կրթական գործունեություն են ծավալում սփյուռքի բոլոր խոշոր համայնքներում և Հայաստանում: Գործում է 44 դպրոց, որոնց մեծ մասը երկրորդական վարժարաններ են (լիցեյի մակարդակով)՝ շուրջ 35 հզ. աշակերտով: Անարատ հղության հայ քույրերը ևս ունեն իրենց դպրոցները և ընծայարանները: Կրթական կենտրոններից էր Վենետիկի Մուրատ-Ռափայեյան վարժարանը (1998-ից չի գործում)՝ հարուստ գրադարանով և թանգարանով: Մխիթարյանների տնօրինությամբ գործում են Բուենոս Այրեսի, Հալեպի, Բեյրութի, Լոս Անջելեսի Մխիթարյան վարժարանները: XVIII-XIX դդ. Մխիթարյան վարժարաններ են գործել Արևմտյան Հայաստանում, Թուրքիայի հայաշատ վայրերում, Հունգարիայի հայ գաղթավայրերում, Սիմֆերոպոլում, Ախալցխայում և հայաբնակ այլ վայրերում: Կաթոլիկ հայ հոգևոր կադրերի պատրաստման բարձրագույն դպրոց է 1883-ին Ջոնում հիմնադրված և ցայսօր գործող Լևոնյան վարժարանը: Հայաստանի հայ կաթոլիկ համայնքի համար հոգևորականներ պատրաստելու նպատակով 1994-ին Գյումրիում բացվել է Ներսիսյան դպրեվանք-ընծայարանը:

1843-ից անընդմեջ Վենետիկի Մխիթարյանները հրատարակում են «Բազմավեպ» հայագիտական-բանասիրական հանդեսը, որը ներկայումս հրատարակվող հայ ամենահին պարբերականն է: Վիեննայի Մխիթարյանները 1847-63-ին հրատարակել են «Եվրոպա» շաբաթաթերթը, 1887-ից ցայսօր՝ «Հանդես ամսօրյա» հայագիտական-բանասիրական ամսագիրը: Մխիթարյանները շարունակում են «Հայագիտական մատենաշար» (Վենետիկ) և «Ազգային մատենադարան» (Վիեննա) արժեքավոր մատենաշարերի հրատարակումը:



#### **Վահան (Վլադիմիր) Մաղալյանը**

ծնվել է Հյուսիսային Լոռու (այն ժամանակ՝ Վրացական ԽՍՀ) Թեթրիծղարոյի շրջանի Դաղեթ-Խաչեն գյուղում: Մինչև 9-րդ դասարան սովորել է հայրենի գյուղի միջնակարգ դպրոցում, ապա փոխադրվել է հարևան Ծալկայի շրջանի Նարդևան գյուղի միջնակարգ դպրոց, որն ավարտել է ոսկե մեդալով: Այնուհետև ընդունվել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետ, որի 2-րդ կուրսից զորակոչվել է բանակ և, երեք տարի ծառայելուց հետո, վերադարձել ու ուսումնառությունը շարունակել է նույն ֆակուլտետի ժուռնալիստիկայի բաժնում, որն ավարտել է 1968 թվականին: Սովորել է նաև ասպիրանտուրայում, «Վրաստանի խորհրդահայ մամուլի սկզբնավորումն ու զարգացումը (1921-1941թթ.)» թեմայով պաշտպանել ատենախոսություն և ստացել բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Երկար տարիներ եղել է «Երևանի համալսարան» շաբաթաթերթի և «Հանդես Երևանի համալսարանի» գիտաինֆորմացիոն լրատուի գլխավոր խմբագիր: Այժմ ԵՊՀ հայագիտական կենտրոնի ավագ գիտաշխատող է, շարունակում է իր ուսումնասիրությունները իր հայրենի Հյուսիսային Լոռու, Ջավախքի և Վրաստանի հայ նորագույն մամուլի ու գրատպության պատմության ուղղությամբ: Հիմնադրել է պարբերաբար լույս է ընծայում «Գրական համալսարան» տարեգիրքը, կազմել է «Քնար համալսարանի», «Արտի խոսք» և «Երևանի պետական համալսարանը վավերագրերում» արժեքավոր ժողովածուները, զբաղվում է նաև գրական-թարգմանչական գործունեությամբ, հեղինակ է երկու մենագրության և բանաստեղծությունների ժողովածուների:

Վ. Մաղալյանը Հայաստանի Հանրապետության, Վրաստանի, Արցախի և սփյուռքյան գիտական հանդեսներում տպագրել է բազմաթիվ ուսումնասիրություններ՝ նվիրված Ջավախքի, Արխագիայի, Աջարիայի ու վիրահայ մամուլին, գրականությանն ու մշակույթին, հայ-վրացական գրական-մշակութային փոխառնչություններին և այլ խնդիրների: Նա ՀՀ ժուռնալիստների միության ու ժուռնալիստների միջազգային համադաշնության անդամ է, երկու անգամ (1999 և 2009թթ.) պարգևատրվել է ԵՊՀ Ոսկե մեդալով, արժանացել է նաև այլ մեդալների ու պատվոգրերի:

Վ. Մաղալյանը Հայաստանի Հանրապետության, Վրաստանի, Արցախի և սփյուռքյան գիտական հանդեսներում տպագրել է բազմաթիվ ուսումնասիրություններ՝ նվիրված Ջավախքի, Արխագիայի, Աջարիայի ու վիրահայ մամուլին, գրականությանն ու մշակույթին, հայ-վրացական գրական-մշակութային փոխառնչություններին և այլ խնդիրների: Նա ՀՀ ժուռնալիստների միության ու ժուռնալիստների միջազգային համադաշնության անդամ է, երկու անգամ (1999 և 2009թթ.) պարգևատրվել է ԵՊՀ Ոսկե մեդալով, արժանացել է նաև այլ մեդալների ու պատվոգրերի:

## ՊԱՏՄԱԿԱՆ ԹՈՒՂՔԻ ԱՆՑՅԱԼԻՑ\*

*Վահան ՄԱՂԱԼՅԱՆ  
բանասիրական գիտությունների թեկնածու*

Գուգարքը, որ, ըստ VII դարի «Աշխարհացոյց»-ի, Մեծ Հայքի տասներեքերորդ նահանգն էր, ուներ ինը գավառ՝ Ջորոփոր, Կողբոփոր, Ծորոփոր, Տաշիր, Թռեղք, Կանգարք, Արտահան, Ջավախք Վերին և Կղարջք: Թռեղքը, ինչպես տեսնում ենք, թվարկված գավառների շարքում հինգերորդն է: Այն հռոմեական մատենագիր Պլինիոս Ավագի (մ.թ. 23-79 թթ.) կողմից հիշատակվում է Regio Thriare (Թրիար) ձևով, ինչից էլ առաջացել է «Թռեղք» կամ «Թռեղք»-ը: Հայ մատենագրության մեջ այն հայտնի է նաև «Երկիրն Թռեղեաց կամ Ծաղկեայ» անվամբ<sup>1</sup>, որն ունեցել է 2.195 քառ. կմ տարածք: Լեռնային այս գեղատեսիլ երկրամասը անցյալում եղել է Գուգարաց աշխարհի կազմում և նրա հետ մեկտեղ մ. թ. ա. VIII դ. մտել է Ուրարտուի, իսկ IV-III դարերում՝ Երվանդունիների հայկական պետության մեջ: Մ. թ. ա. III դ. վերջերին Սելևկյանների միջամտությամբ միացվել է Վիրքին, սակայն Արտաշես Ա թագավորը մ. թ. ա. II դ. սկզբին այն վերստին միավորել է Մեծ Հայքին, որն այդուհետև դարձել է նրա չորս սահմանակալ վարչամիավորումներից՝ բղջխություններից մեկը՝ Ցուրտավ կենտրոնով (IV-V դդ.)<sup>2</sup>:

Հայաստանը Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև բաժանվելու ընթացքում (387 թ.) Սասանյան արքունիքի միջամտությամբ Գուգարքը իր բոլոր գավառներով, բացառությամբ Տաշիրի, դարձյալ կցվել է Վրաց մարզպանությանը, իսկ Արշակունյաց թագավորության անկումից (428 թ.) հետո Վիրքին է անցել նաև Տաշիր գավառը: Հետագայում՝ 652 թ., հայոց մարզպան և սպարապետ Թեոդորոս Ռշտունին Գուգարքը կրկին միացրել է Հայաստանին, իսկ IX դ. կեսերից այն բաժանվել է Երկու մասի: Նրա արևելյան գավառ-

\* Հոդվածն արտատպվում է «Հանդես Երևանի համալսարանի» գիտահնքորմացիոն լրատուից (N 1 (96), Երևան, 2000, էջ 40-58):

<sup>1</sup> Ս. Ս. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Եր., 1963, էջ 54:

<sup>2</sup> Հայկական սովետական հանրագիտարան, հատ. 3, Եր., 1977, էջ 241:

ներն անցել են հայ Բագրատունիների տիրապետության ներքո, իսկ արևմտյանը՝ քաղկեդոնականություն ընդունած վրաց Բագրատունիներին: Ավելի ուշ՝ X դ. կեսերին այդ գավառները Հայոց Բագրատունյաց թագավորության կազմի մեջ «Տաշիրի երկիր» անվամբ դարձել են առանձին իշխանություն, որն այնուհետև կոչվել է Տաշիր-Չորագետի կամ Լոռու (Գուգարքի) Հայոց Կյուրիկյան թագավորություն: Այդ երկրամասը դարեր շարունակ, մերթ լինելով Վրաստանի և մերթ էլ Հայաստանի կազմում, վրացիների կողմից անվանվել է Հարավային Վրաստան կամ Սոմխիթ (Սոմխեթ՝ Հայաստան), իսկ հայերի կողմից՝ Գյուսիսային Հայաստան կամ Վրաց դաշտ (Վիրք):

Վրաց մարզպանության մեջ մտնելուց հետո Գուգարքը ենթարկվել է վարչական տրոհման ու մանրատման, որի հետևանքով նրա նախկին ինը գավառներին ավելացել են ևս հինգը: Գյուսիսարևմտյան մասում առաջացել են Ներքին Ջավախքը և Շավշեթը, Տաշիրի վերաբաժանումից Գաջենագետի (այժմ՝ Մաշավերա) և նրա վտակ Բողնիսի (Բոլնիսի) ձորահովիտներում կազմավորվել են Քուիշափորն ու Բողնոփորը<sup>3</sup>, իսկ Թեղքի մանրատումից նրա արևելյան մասում ձևավորվել է Մանգղեաց կամ Մանգլեաց փորը (վրացերեն՝ Մանգլիսիս խևի)<sup>4</sup>: Նորակազմ գավառներից երեքը՝ Քուիշափորը, Բողնոփորը և Մանգղեաց փորը, ըստ «Աշխարհացոյց»-ի, գտնվել են Վիրքի կազմում և դրանք Հայաստանին են անցել IX դ. կեսերին:

---

<sup>3</sup> Այս գավառի անունն առաջացել է Բողնիս ձորահովտի (վրացերեն՝ Բոլնիսիս խեվի) անունից: Ենթադրվում է, որ այն եղել է Գուգարքի կենտրոնական գավառը, ուր գտնվել է բյուզնդների մատոց Ցուրտավ քաղաքը: Այն ավերվելուց հետո, ըստ երևույթին, գավառի կենտրոնը դարձել է Բողնիս կամ Բոլնիս ավանը, որը եղել է ներկայիս Բոլնիս-Խաչեն գյուղի տեղում: Բոլնիսն հիշատակվում է XII-XIV դդ.: Այստեղ է գտնվել վրաց եկեղեցու եպիսկոպոսամիստ աթոռներից մեկը, որը մասնակցել է 506 թ. Դիլիսի հակաքաղկեդոնական ժողովին: Այս ավանն հետագայում, թաթար-սելջուկյան արշավանքների շրջանում, ավերվել է, նրանից մնացել է միայն ս. Սիոն բազիլիկ եկեղեցին, որը կառուցվել է 478-493 թթ. և կանգուն է առ այսօր: Ներկայիս Բոլնիս քաղաքը, որ այդ տարածաշրջանի վարչական կենտրոնն է, հիմնադրվել է 1818 թ. կոլոնիստ գերմանացիների կողմից, գտնվում է հին ավանից 10 կմ դեպի հյուսիս, Մաշավերա գետի ձախ ափին: Նախկինում կոչվել է Եկատերինենֆելդ, 1921-ից՝ Լյուքսեմբուրգ, իսկ 1943-ից՝ Բոլնիս:

<sup>4</sup> Նշված այս հինգ գավառներից բացի, Ս. Տ. Երեմյանը իր «Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի» գրքում նշում է նաև երկու նոր գավառ. մեկը՝ Պարուարը՝ Մանգլեաց փորի մոտ, Տփղիսի շրջակայքում, իսկ մյուսը՝ Խանցիխեն՝ վրաց դաշտում: Ինչպես այս գավառների սխալ տեղադրության և Գուգարքին չպատկանելու, այնպես էլ Կղարքքի, Ներքին Ջավախքի և Շավշեթի կազմավորման մասին մի շարք դիտողություններ է արել և ուղղումներ կատարել Բ. Հարությունյանը իր «Մեծ Հայքի Գուգարք աշխարհը ըստ «Աշխարհացոյց»-ի» հոդվածում (տես «Բանբեր երևանի համալսարանի», 1977 թ., N 2, էջ 176-198):

\*  
\*   \*  
\*

Պատմական թռեղքի մի զգալի մասը՝ շուրջ 1000 քառ. կմ տարածք, արևմուտքից մտնում է հրաբխային սարահարթի մեջ, իսկ արևելյան մասն ավելի լեռնային է և ձգվում է մինչև Վրաց դաշտ: Այն հյուսիս-արևմուտքից սահմանակից է եղել Վիրքին, արևմուտքից՝ Ջավախքին, հարավ-արևմուտքից՝ Կանգարքին կամ Դմանեաց աշխարհին, իսկ հարավարևելյան կողմից՝ Տաշիրին ու Ծոբոփորին: Տաշիրի վարչական տրոհման հետևանքով թռեղքը սահմանակից է դարձել Քուիշափորին ու Բողնոփորին, իսկ Սանգլեաց փորի անջատումով վերանում է նրա հարևանությունը հիշյալ գավառների հետ: Հետագա դարերում Սանգլեաց փորը դարձյալ միավորվել է թռեղքի հետ ու կազմել մեկ վարչական միասնություն:

Թռեղքի գավառն ունի լեռնային բարդ ռելիեֆ, որն հարուստ է բարձր գագաթներով ու բազուկներով, խոր կիրճերով ու ձորերով, զոգավոր սարահարթերով ու հովիտներով, ալպյան հարուստ գոտիներով: Նրա արևմտյան սահմանակողը օղակում են Ջավախքի լեռները իրենց Աչքասար (3196 մ), Դալիդաղ (Գիժ լեռ, 2661 մ) և Կոյունդաղ (Հոսի լեռ, 2415 մ) գագաթներով. Վերջին երկուսի միջև ընկած Թիքմադաշ (Ցից քար, 2180 մ) լեռնանցքով անցնում է Թբիլիսի-Ծալկա-Ախալքալաք խճուղին: Իսկ արևմտյան մասը երիզում են Սամսարի լեռները իրենց Աբուլ (3305 մ), Սամսար (3285 մ), Ղարադաղ (Սև լեռ, 3052 մ) և Շավնաբաղ (Մթնասար, 2929 մ) լեռնագագաթներով: Վերջին երկուսի միջև ընկած է Տաբաձղուրու լեռնանցքը (2150 մ), որտեղով անցնում է Ծալկա-Տաբաձղուր-Բորժոմ խճուղին:

Երկրամասը հյուսիսային կողմից դեպի արևելք երիզում է թռեղքի լեռնաշղթան, որը սկիզբ է առնում Մթին սարերից ու Բորժոմի կիրճից և շուրջ 150 կմ երկարությամբ ձգվում մինչև Թբիլիսիի մատույցները: Այն Փոքր Կովկասի համակարգին պատկանող և նրա հյուսիսարևմտյան մասում Քուռ գետի աջ ափը երիզող լեռնաշղթա է, որի ամենբարձր գագաթներն են Արջևանը (2595 մ), Ցխրածղարոն (Իննաղբյուր, 2422 մ) և Կլղեկարին (Վիմադուռ, 2300 մ): Թռեղքի կենտրոնական մասում են գտնվում նաև Բեղենի լեռները (1900-2000 մ) և նույնանուն սարահարթը՝ 11 կմ երկարությամբ և 5 կմ լայնությամբ: Այս բարձրավանդակի ամենամեծ սարավանդը, սակայն, Ծալկայինն է, որն ունի 45 կմ երկարություն և 15 կմ լայնություն ու ծովի մակերևույթից բարձր է 1480-1700 մետր:

Իսկ հարավից թռեղքը օղակում են Վիրահայոց լեռները, որոնք, սկիզբ առնելով Ջավախքի լեռնաշղթայից, 73 կմ երկարությամբ հյուսիս-արևմուտքից ձգվում են դեպի հարավ-արևելք և հաս-

նուն Դեբեդ գետի աջ ափը: Այդ լեռնաշղթան, որի բարձրությունը 1800-2000 մ է, իսկ ամենաբարձր գագաթը՝ Լալվարը՝ 2544 մ, գառիթափ իջնուն է դեպի Խրամ գետի հովիտը՝ դառնալով Թռեղքի բնական սահմանը հարավ-արևմուտքից:

Այսպիսով, կարող ենք ասել, որ Թռեղքը մի լեռնային թերակղզի է՝ երեք կողմերից շրջափակված բարձր սարերով ու խորունկ ձորերով, որոնք նրա բնական սահմաններն են, իսկ հարավ-արևելքից նրա դեմ փռված է դեպի Քուռ գետի ավազանը տանող Ներքին Քարթալինայի հարթավայրը, որի մեծ մասը պատմական Հայոց դաշտի տարածքն է եղել անցյալում:

Թռեղքը հարուստ է հորդահոս գետերով ու գետակներով, լեռնային վճիտ լճերով ու հորդաբուխ աղբյուրներով, որոնք, թեք լեռնալանջերով սրընթաց հոսելով, խառնվում են նույն լեռնաշխարհով անցնող Խրամ և Ալգեթ մեծ գետերին: Խրամը, որ անցյալում կոչվել է Քցիա կամ Ցուրտագետ, Քուռ գետի աջակողմյան ամենամեծ վտակն է: Այն սկիզբ է առնում Ցխրածղարո (Իմնաղբյուր) լեռան գագաթից՝ 2422 մ բարձունքից, և հոսում է անդնդախոր ձորերով ու կիրճերով, որոնց ուղղաձիգ խորությունը հաճախ հասնում է 0,5 կմ-ի: Խրամի երկարությունը 220 կմ է, որից շուրջ 80-ը գետն անցնում է մեծ թեքության սահանքավոր հունով, սրընթաց հոսանքով, և պատմական Ցուրտավ քաղաքի ավերակների մոտ դուրս է գալիս ձորից և մտնում Ներքին Քարթալինայի (Քորչալու) հարթությունը: Գետի ավազանի մեծությունը 8340 քառ. կմ է, անկումը՝ 2162 մ: Այս գետը հնուց ի վեր մեծ նշանակություն է ունեցել Թռեղքի լեռնաշխարհի տնտեսության համար. նրա վրա գործել են բազմաթիվ ջրաղացներ, ոռոգվել են այգիներ ու ցանքատարածություններ: Այսօր էլ նրա վրա կառուցված են մի քանի խոշոր հիդրոէլեկտրակայաններ: Նրա ջրերում բազմանում են խրամուլի, մուրծա, ծածան և կարմրախայտ ձկնատեսակները:

Այուս հորդառատ գետն այստեղ Ալգեթն է, որի անունը հայերեն է, ծագել է «ալ գետ» կամ «այլ գետ» բառակապակցություններից, որոնք, վրացերենի ազդեցությամբ հնչյունափոխվելով, դարձել են «ալգեթ»՝ տեղիք տալով մի շարք ավանդությունների<sup>5</sup>: Այ-

---

<sup>5</sup> «Ալ գետ» անունը հետագայում վրացերենի ազդեցությամբ դարձել է «Ալգեթ», ինչպես, ասենք, Սոմխեթ, Կախեթ, Մցխեթ, Դուշեթ և այլ տեղանուններ: Սակայն, «ալ գեթ» բառակապակցություն կա նաև թուրքերենում, որը թարգմանվում է հետևյալ կերպ. «ալ-վերցրու, գեթ-գնա», այսինքն՝ վերցրու գնա, առ տար: Այստեղից էլ հյուսվել է այն ավանդությունը, ըստ որի, իբրև այս գետը հորդացած ժամանակ ոչինչ չի խնայում, ավերը քանդում, շուրջբոլորն ավերում և ինչ ընկնում է բերանը, իսկույն կլանում, քշում տանում է: Դրա համար էլ նա կոչվել է «Ալ գեթ»: Սակայն սա ժողովրդական ստուգաբանություն է, որը ոչ մի կապ չունի այդ գետի հայերեն անվան ծագման հետ:

նինչ, այդ անունն առաջացել է նրա հատակին բուսնող ալեծուփ խոտերի գույնից, որոնք գետի ջրերին կարմրավուն երանգ են հաղորդում, և հեռվից նայելիս՝ թվում է ջուրը ներկված է արյունով:

Թռեղքն ունի հարուստ բուսական ու կենդանական աշխարհ. այստեղ կան փարթամ անտառներ, որոնք առատ են պտղատու ծառերով ու թփերով, աճում են բազմազան խոտեր ու ծաղիկներ, սննդարար բուսատեսակներ: Անտառներն ու դաշտերը լի են վայրի թռչուններով, իսկ լեռներն ու ձորերը՝ գազաններով ու սողուններով: Գետերում ու լճերում ապրում են տարատեսակ ջրային կենդանիներ:

Թռեղքը մտնում է Քուռարաքսյան միջագետքի մեջ և նրա ամենավաղ զարգացած շրջաններից է, որն հարուստ է հնագույն մշակույթի մնացորդներով: այստեղ հայտնաբերվել են կիկլոպյան կառույցներ, հին և նոր քարեդարյան հատիչներ, դամբարանաբլուրներ, բրոնզեդարյան քառանիվ սայլ, մեգալիթյան դարաշրջանի հուշարձաններ, ախատանքային գործիքներ ու պերճանքի առարկաներ: Թռեղքում զարգացել և լայն տարածում են ունեցել կավագործությունը, ջուլհակությունը, մետաղամշակությունը, նախազարդ ու նկարազարդ խեցեգործությունը և այլն: Հնագետների հավաստմամբ, Թռեղքի դամբարանաբլուրների մշակույթը մոտ է Սևանի ավազանի և Լոռու մշակույթներին, ընդհանուր գծեր ունի համապատասխան ժամանակաշրջանի առաջավորասիական մշակույթի հետ<sup>6</sup>: Թռեղքը հարուստ է նաև պատմաճարտարապետական կոթողներով, վեհանիստ բերդերով ու ամրոցներով, գեղեցիկ եկեղեցիներով, քարակերտ բնակավայրերով ու շիրմատներով և այլ հնագույն հուշարձաններով, որոնցից շատերը կրում են հայերեն արձանագրություններ:

Այս տարածաշրջանի հնագույն ու մշանավոր քաղաքներից է եղել Ցուրտավը, որը գտնվել է Տաշիրի ու Թռեղքի սահմանագլխին: Նրա ավերակները ներկայումս գտնվում են Գաջենագետի և Խրամի միախառնվելու տեղում, Բոլնիսի շրջանի Արոխլո գյուղի մոտակայքում: Ըստ ավանդության, Ցուրտավը (Գաջենք) հիմնադրվել է Հայկ Նահապետի եղբորորդու՝ Քաջի կողմից և Հայոց Արշակունյաց թա-

---

<sup>6</sup> **Լևոն Մելիքսեթ-Քեյ**, Մեգալիթյան մշակույթը Վրաստանում (վրացերեն), Թբիլիսի, 1938, էջ 130: Թռեղքի լեռնաշխարհի պեղումների արդյունքների մասին տես նաև՝ **Е. Такишвили**, Археологические экскурсии, разыскания, заметки. Тифлисская губерния, Борчалинский уезд, Тriaлетское приставство. СМОМПК, выпуск 43, Тбилиси, 1913 (на груз. языке); **Б.А. Кувшин**, Археологические раскопки в Тriaлети в 1936-1940 гг., Тбилиси, 1941; նույն՝ Археологические раскопки в 1947-1948 гг. в Цалкском районе, Тбилиси, 1948; Археологические раскопки в 1959-1962 гг. в Тriaлети, см. Журнал “Советская археология”, 1964г., N2; **Б.Б. Пиотровский**, Археология Закавказья с древнейших времен до I тысячелетия д.н.э., Ленинград, 1949; **О. Джапаридзе**, Археологические раскопки в Тriaлети в 1966-1968 гг., Тбилиси, 1969 (на груз. языке) և այլն:

գավորության օրոք եղել է Գուգարաց բղեշխների աթոռանիստը, իսկ քրիստոնեություն ընդունելուց հետո դարձել է նաև եպիսկոպոսանիստ կենտրոն: Գուգարքը, ինչպես հայտնի է, Մեծ Հայքի թագավորության չորրորդ բղեշխությունն էր նրա ծայր հյուսիսում, որի հիմնական ֆունկցիան էր՝ պաշտպանել երկրի հյուսիսային սահմանները Կովկասյան լեռների վաչկատուն ցեղերի հարձակումներից: Գուգարաց բղեշխը (վրացերեն՝ սապիտիաշխ) կրում էր Աշուշա տոհմանունը և նստում էր Ցուրտավում: Հայ պատմիչ Ուխտանեսը Ցուրտավի մասին գրում է. «Ցուրտավը, որ միշտ և հար հիշատակեցինք պատմության ընթացքում ու այստեղ էլ ենք հիշատակում, այն ժամանակ այդ անունով էր կոչվում, իսկ այժմ Գաչենք է հորջորջվում: Այն ժամանակ լի և ընդարձակ, մեծ ու հռչակավոր մայրաքաղաք էր, իսկ այժմ փոքրացած ու չափավոր գյուղաքաղաք է գետի ափին, որ իր անունով Գաչենագետ է կոչվում Վրաց դաշտ կոչվող նահանգում, որ հայոց և վրաց երկու աշխարհների միջասահմանն է՝ Կովկասյան լեռան հանդիման, սահմանակից հրաշաշեն ու հրաշալի, հռչակավոր ու ականավոր Տփղիս մեծ մայրաքաղաքին: Ցուրտավը մեր արքա Վաղարշակ Արշակունու կողմից հյուսիսի կողմնակալ կարգված Գուգարացիների մեծ Բղեշխի բնակավայրն է եղել»<sup>7</sup>: Նույն Ուխտանեսի վկայությամբ ժամասացությունը Ցուրտավում կատարվել է հայերեն ու վրացերեն միաժամանակ:

Հայտնի է նաև, որ Մեսրոպ Մաշտոցը հայ գրերը ստեղծելուց հետո այցելել է Ցուրտավ: Այստեղ, ըստ ավանդության, գտնվել է նաև սպարապետ Վարդան Մամիկոնյանը, որի դուստրը՝ Շուշանիկը, ամուսնացած էր Աշուշայի որդու՝ Վագգենի (Վարսկեն) հետ: Վերջինս հետագայում, որպես բղեշխ փոխարինելով հորը, ուրացել է քրիստոնեությունը և ընդունել է զրադաշտականություն, հալածել ու մահվան է հասցրել Աստժո ուխտին հավատարիմ Շուշանիկին: VI-VII դարերում այստեղ հայտնի է եղել Սուրբ Շուշանիկի մատուռը: Հետագայում Շուշանիկի տապանը այդ մատուռից հանվել և փոխադրվել է Տփղիս (Թբիլիսի) ու ամփոփվել Քուռ գետի գեղատեսիլ ափին վաղ միջնադարում կառուցված Ս. Աստվածածին արքունական եկեղեցու սրահում: Հետագայում այդ եկեղեցուն կից կառուցվում է Մետեխի բերդամրոցը: Ցուրտավում են հասակ առել, կրթվել և իրենց սկզբնական շրջանի գործունեությունը ծավալել իշխան Վահան Մամիկոնյանը և պատմիչ Ղազար Փարպեցին: Այս քաղաքից է սերել նաև Իսկով (Հակոբ) Ցուրտավցին, որը վրաց մատենագրության մեջ հայտնի է իր «Շուշանիկի վկայաբանությունը» նշանավոր երկով: Ցուրտավն ավերվել է VII դարում, արաբներ

<sup>7</sup> **Ուխտանես եպիսկոպոս**, Պատմութիւն Հայոց. Պատմութիւն բաժանման Վրաց ի հայոց, Վաղարշապատ, 1871, էջ 34:

րի կողմից, VIII-IX դդ. այն կրկին վերականգնվել է, բայց արդեն որպես գյուղաքաղաք, և իր տեղը զիջել է այդ տարածաշրջանում գտնվող Շամշուլդե կամ Սամշվիլդե բերդաքաղաքին:

Գուգարքի կամ Թռեղքի հնագույն բնակավայրերի թվին է պատկանում Սամշվիլդեն: Ըստ ավանդության, նրա շրջակայքում է ոսկե դագաղով թաղված վրաց Թամար թագուհին, որը, փաստորեն, Վրաստանի գահակալն էր 1178-ից, իսկ հորը՝ Գեորգի Գ-ի մահից հետո՝ 1184-ից մինչև իր մահը (1213 թ.) եղել է թագուհի:

Սամշվիլդեն հայկական և վրացական հնագույն աղբյուրներում ու տարեգրություններում հիշատակվում է որպես աթոռամիստ քաղաք, հայտնի վաղնջական ժամանակներից: Վրացական «Քարթլիս ցխովրեբա» ժամանակագրությունը Սամշվիլդե քաղաքի հիմնադրումը վերագրում է Չայոսի եղբայր Քարթլոսին: Նրա պարսպի հնագույն շերտերը կառուցվել են մ. թ. ա. I հազարամյակի առաջին կեսին: Ըստ տեղեկությունների, երբ Աշուշա բոեշխի մահից հետո վրաց Վախթանգ Գորգասալին (446-499) իր թագավորության վերջին օրերին Վրաստանը բաժանելով իր որդիների և երիսթավների միջև, վերացրեց Գուգարաց բոեշխությունը՝ տալով Սամշվիլդեն երիսթավ Ադարկազին, Կղարջքը՝ Արտավազդին, Ծունդան՝ Նազարին, դրանից հետո Գուգարքը, որի նշանավոր ամրոցներից էր Սամշվիլդեն<sup>8</sup>, են-

---

<sup>8</sup> Սամշվիլդեն միջնադարյան Չայաստանի շատ ամրոցների ու բերդաքաղաքների նման կառուցված է հատող ձորերով առաջացած եռանկյունաձև հրվանդանի վրա, որի ժայռեղեն կողերը իջնուն են խրամ և ճավճավ գետերի վրա, որոնք հուժկու թափով քերելով նրա գիրթ իջնող կողերը, ցածուն՝ անդնդախոր կիրճում, միախառնվում ու սրընթաց շարունակում են իրենց հոսքը: Բնության կողմից ստեղծված այդ գեղատեսիլ ու անառիկ սարահարթն ունի պրկված աղեղի տեսք: Իսկ վրացերեն՝ ձգված, լարված, նետը թռիչքի պատրաստած աղեղին անվանում են «սամշվիլդե», որտեղից էլ առաջացել է ամրոցի անունը: «Սամշվիլդե» բերդանունը «երեք նետ» իմաստով թարգմանել է նաև Յովի. Դրասխանակերտցին (տես նրա՝ Չայոց պատմություն, Երևան, 1996, էջ 297): Նրա նկարագրությունը կարելի է գտնել Ս. Յովհաննիսյանի «Չայաստանի բերդերը» (Վենետիկ, 1970, էջ 32) աշխատության մեջ, ինչպես նաև Ն. Զուբինաշվիլու «Սամշվիլդեի Սիռնը» (Թբիլիսի, 1960) ռուսերեն գրքում: Յնագետ Ի. Ղարիբյանը, որ պեղումներ է կատարել Կյուրիկյանների Լոռե ամրոցում և եղել է նաև Սամշվիլդեում, վկայում է, որ այդ երկու ամրոցները միմյանց կրկնությունն են թե՛ տեղանքի նմանությամբ և թե՛ կառուցապատումներով: Իսկ մենք, որ եղել ենք և՛ Սամշվիլդեի, և՛ Ամբերդի ամրոցներում, կարող ենք ասել, որ այս երկու բերդերը ևս մեծ նմանություն ունեն միմյանց թե՛ տեղանքով և թե՛ շինություններով: Պետք է ավելացնենք նաև, որ Սամշվիլդեի մասին հայ բանահյուսության մեջ կան մի շարք ավանդություններ: Սամշվիլդե բերդաքաղաքի շրջակայքում կան նաև մի շարք այլ պատմական կարևոր հուշարձաններ ու լքված բնակավայրեր: Դրանցից հնագույնները խրամ գետի ձախ ափին, խորունկ կիրճում գտնվող երեք եկեղեցիներն են, որոնցից մեկի արևելյան պատին փորագրված արձնագրությունից իմանում ենք, որ կառուցվել են VII դարում, Շողակաթ թագուհու դստեր կողմից: Դրանք կերտված են սրբատաշ քարերով և հայացքով նայում են հարավ՝ դեպի գետի ջրերը:

թարկվեց մերթ վրացիներին և մերթ հայերին ու անկախություն չստացավ մինչև 782 թվականը: Արաբ պատմիչ Բալաձորու վկայությամբ Սամշվիլդեն վերականգնվել ու բարենորոգվել է պարսից խոսրով I Անուշիրվանի ժամանակ (531-579): Հետագայում Գուգարքը, այդ թվում և Սամշվիլդեն, ենթարկվել են մի շարք արշավանքների, որոնցից ամենաավերիչը եղել է Բուղայի ասպատակությունը (850 թ.):

Աշոտ Ա-ը, դառնալով Հայաստանի թագավոր (885-890 թթ.), Գուգարքի արևելյան մասերը ազատագրում է արաբներից և միավորում Բագրատունյաց թագավորությանը որպես պետական արքունական տիրույթներ: Դրանից հետո նա, նկատի առնելով Գուգարքի ռազմաստրատեգիական կարևոր նշանակությունը, հատուկ ուշադրություն է դարձնում նրա պաշտպանությանը: Այդ նպատակով ստեղծվում է տեղական իշխանություն, որի կառավարիչները նաև զորապետներ էին: Աշոտ Ա թագավորը Գուգարքում կառավարիչ է նշանակում իր որդուն՝ թագաժառանգ Սմբատին, որը նստում էր Սամշվիլդե բերդաքաղաքում: Սակայն վերջինս, որ իշխանաց իշխանի տիտղոս ուներ, հոր մահվան լուրն առնելով, վերադառնում է Բագարան՝ Տաշիրում իր փոխարեն կառավարիչ նշանակելով Վասակ և Աշոտ Գնթունի եղբայրներին: Նա շուտով օժվում է թագավոր (890-914) և ամրապնդում է Հայաստանի հյուսիսային սահմանները՝ այնտեղ ունենալով Սամշվիլդե և Ասկուրեթ ամրակուռ բերդերը, որոնք կարևոր նշանակություն ունեին Հայաստանի համար և նրա սահմանները պաշտպանում էին Տփղիսի և Ատրպատականի արաբական ամիրայությունների ոտնձգություններից:

Աբխազաց Կոստանդին թագավորը 904 թ. արշավում է Հայաստանի վրա: Նա տիրում է Գուգարքին, բայց շուտով պարտվում է հայոց և վրաց միացյալ զորքերից ու գերի ընկնում: Բայց այդ հաղ-

---

Այստեղ գտնվող մյուս հուշարձանը, որ մի քարաշեն հողակերտ եկեղեցի է, դարձյալ գտնվում է Խրամի ձորում, անտառի մեջ, ճանտառ հնագույն բնակավայրին մոտ: Նրա պատին փորագրված արձանագրության մեջ ասվում է. «Ես Բատ (իմա՝ Սմբատ) իշխանաց իշխան շինեցի զգիւղս եւ զեկեղեցիս... թուին և (951)»: Այստեղից ոչ հեռու կա մեկ այլ պարսպապատ զեկեցկաշեն եկեղեցի, որի արձանագրությունը վկայում է, որ այն եղել է «Սուրբ Անապատ» և ժամանակին լի է եղել «միաբանությամբ, ուր ժողովեալ պարապէին ի մշտամոռունչ սաղմոսերգութիւնս, սակայն յաւերեալ եւ յամայնալ փառթամ նահանգիս այսմիկ ի ձեռն անգութ լեռնականաց անշքացեալ աւերեցաւ եւ յամայնալ փառթամ նահանգիս այսմիկ ի ձեռն անգութ լեռնականաց անշքացեալ աւերեցաւ և անապատս այս, միաբանք որոյ ցիր եւ ցան եղեալք, գնացին ի զանազան վանօրայս Հայաստանի, եւ եկեղեցիս այս ցայսօր մնա յայսպիսի ողբալի դրութեան»:

Սամշվիլդեի մոտ գտնվող մյուս հայկական բնակավայրը եղել է Կրծանիսը, որը դարձյալ ավերվել է թուրքերի կողմից: Յաթաղանից մագապուրծ նրա բնակիչները տեղափոխվել և Տփղիսի շրջակայքում հիմնադրել են իրենց նոր գյուղը՝ դարձյալ Կրծանիս անվամբ, որն այժմ մտնում է Թբիլիսիի շրջագծի մեջ և կազմում է նրա թաղամասերից մեկը նույն անվամբ:

թանակը երկար չի տևում, հետո Գուգարքի համար գալիս են ծանր տարիներ, Սամշվիլդեն մերթ ընկնում է մեկ, մերթ մյուս նվաճողների ձեռքը: Սմբատ թագավորի եղբրական սպանությունից հետո, արաբները դարձյալ ասպատակում են Տաշիրն ու Կանգարքը, գրավում Թեղքըն ու Կրաց դաշտը և հասնում են մինչև Տփղիս:

Այդ խառնակ ժամանակներում Սամշվիլդեի բերդապահ Վասակ և Աշոտ Գնթունիները, օգտվելով Յուսուֆի արշավանքից առաջացած անիշխանությունից, դադարում են հայոց թագավոր Աշոտ Բ Երկաթին (914-930) հպատակվելուց: Նրանք Գուգարքի բնակչությանը ապստամբեցնում են Աշոտ Երկաթի դեմ և 921 թ. իրենց անկախ են հռչակում: Աշոտ Երկաթն իմանալով այդ լուրը՝ նրանց հնազանդեցնելու նպատակով արշավում է դեպի Սամշվիլդե: Սակայն նա այնտեղ չի տանում իր ամբողջ բանակը, քանի որ տեղում պարենավորման մեծ դժվարություններ կային: Ուստի նա, բանակը թողնելով թիկունքում, իր եղբոր՝ Աբասի հետ ընտրում է 250 ձիավոր և նրանց հետ առաջնորդվում է Սամշվիլդե: Այնտեղ հասնելուն պես պաշարում է ամրոցը, ուր թաքնված էին Գնթունի կառավարիչները: Բայց այդ պաշարումն անհաջող է անցնում, քանի որ այնքան էլ հեշտ չէր անմատչելի պարիսպները գրավելը: Աշոտը, թողնելով Սամշվիլդեն, իր 250 զինվորներով մեկնում է Ասկուրեթ ամրոցը: Այդ պահին Վասակ և Աշոտ Գնթունիները՝ տեսնելով որ Աշոտ Երկաթը զորքը ցրել և ինքն էլ մեկնել է Ասկուրեթ, պատրաստություն են տեսնում: Նրանք ծածուկ մոտ 4000 մարդ են վարձում Կովկասի լեռնականներից և Տփղիսից ու հանկարծակի հարձակվում են աշոտ թագավորի զորքի վրա: Չնայած անակնկալին, Աշոտ Երկաթը իր Աբաս եղբոր հետ 250 զինվորներով խիստ հարձակվում է գործում այդ ստվար բազմության վրա, մեծ կոտորած է անում և փախուստի մատնում Գնթունիների հրոսակախմբին, բայց Սամշվիլդեն առնել չի կարողանում: Պարտություն կրած Գնթունի եղբայրները փակվում են նրա մեջ<sup>9</sup>:

Աշոտ Երկաթը, թողնելով Սամշվիլդեն, վերադառնում է ու երկիրը մաքրում օտար նվաճողներից: Այդ խիզախությունների համար նա հռչակվում է Շահնշահ: Այդ ընթացքում Սամշվիլդեում մնացել էր միայն Վասակ Գնթունին, իսկ նրա եղբայր Աշոտը, օտար նվաճողների դեմ ընդհարումներում ծանր վերք էր ստացել ու մահացել: Սամշվիլդեում մնացած Վասակ Գնթունին այս ամենից հետո դարձյալ չի ցանկանում հնազանդվել Աշոտ Երկաթին: Փոխարենը նա ենթարկվում է վիրաբխագաց թագավոր Գուրգենին և, որպես համագործակցության փոխհատուցում, նրանից խնդրում է մի ամրոց, քանի որ ին-

<sup>9</sup> **Յովհաննես Դրասխանակերտցի**, Հայոց պատմություն, երևան, 1996, էջ 298:

քը խոստացել էր հաղթության դեպքում նրան հանձնել Սամշվիլդեն: Վասակը, ամրոցը թողնելով բերդապահների հսկողությանը, գնում է Գուրգենի մոտ, որն արդեն զորք կազմած դեպի իրեն էր գալիս: Նրանք իրար հանդիպելով՝ գալիս են Սամշվիլդե: Սակայն բերդապահները նրանց առջև ամրոցի դռները չեն բացում՝ զարմանալով Վասակ իշխանի այդքան շուտ վերադառնալու վրա: Նրանք հայտնում են, որ միայն Վասակը կարող է ներս մտնել և ուրիշ ոչ ոք: Եվ միայն Վասակին ներս ընդունելուց հետո կարող են ամրոցի դռները բացել Գուրգենի առջև: Բայց Գուրգենը մնում է անհողողոդ և կամենում է կռվով ամրոցն առնել: Այս ամենը տեսնելով՝ բերդապահները մոռնալով ներս են ուղարկում հայոց Աշոտ Երկաթ թագավորի մոտ և նրան տեղեկացնում են եղելության մասին: Աշոտ Երկաթը, իմանալով այս ամենը, կրկին զորք է առնում ու մեկնում Սամշվիլդե: Հայոց թագավորի գալստյան լուրն առնելով՝ վիրաբխագաց թագավոր Գուրգենը ճողոպրում է՝ իր հետ տանելով Վասակին: Սամշվիլդեի պահապանները, տեսնելով Գուրգենի փախուստը, Աշոտ Երկաթի առջև էլ չեն բացում բերդի դռները՝ ասելով, քանի որ չկա Վասակը, իրենք ոչ ոքի առաջ չեն բացի ամրոցի դարպասները և ոչ ոքի ներս չեն թողնի: Այդ բանը լսելով՝ Աշոտ թագավորը զայրացած պաշարում է Սամշվիլդե ամրոցը և հարմար պահի է սպասում, որպեսզի գրոհով առնի: Դրա համար քաղաքի բնակիչները հակառակվում են նրա հետ: Այդ ընթացքում վիրաբխագաց թագավոր Գուրգենը, որ զորքը համալրած կրկին եկել էր Սամշվիլդե, բերդի գաղտնի ճանապարհով մի պատգամատար է ուղարկում ամրոցի պահապանների մոտ և խոստանում է նրանց տալ Վասակ իշխանին, եթե վերջիններս Սամշվիլդեի դարպասները բացեն իր առջև և ամրոցը հանձնեն իրեն: «Եվ ես,- ասում է Գուրգենը,- այստեղից քշելով Աշոտ Երկաթին, ձեզ կազատեմ նրանից, ապա եթե ոչ, նա կկոտորի բոլորիդ և ես էլ կսպանեմ Վասակին»: Բերդապահները, վախենալով, որ, իրոք, Գուրգենը կարող է սպանել Վասակին, պատգամաբերին ետ են ուղարկում՝ խոստանալով բերդը հանձնել Գուրգենին, միայն թե վերջինս հեռացնի Աշոտ Երկաթի զորքը: Գուրգենը, այդ լուրն առնելով, քաղաքացիներից 300 մարդ է ուղարկում բերդի գաղտնի ճանապարհով, որոնք, մտնելով ամրոց, կոտորում են բերդապահներին: Այս բանը տեսնելով՝ սամշվիլդեցիները բարձրանում են վերնաբերդ և սկսում կռվել Գուրգենի զորքի դեմ:

Այս միջոցին Աշոտ Երկաթը կարծում է, թե բերդի զորքերն են կռվում միմյանց դեմ: Եվ նա սկսում է մեղել վերնաբերդում կռվողներին այնպես, որ նրանք արդեն դժվարանում են դիմադրել Գուրգենի զինվորներին: Ուստի, նրանք ստիպված ամբողջ ձայնով գոռում են, որ իրենք ոչ թե իրար, այլ Գուրգենի զորքի դեմ են կռվում:

Եվ Աշոտ արքան ձայն է տալիս. «Եթե ինձ համար եք ձգտում այդպիսի կռիվների, հապա ինչո՞ւ իմ առաջ չի բացվում այդ դուռը, որպեսզի ես մտնեմ ու հեշտությամբ կատարեմ այդ հանդեսը և առատորեն ձեզ տամ բոլոր բարիքները»<sup>10</sup>: Եվ ապա նրա առաջ բացվում են Սամշվիլդեի ամրակուռ դարպասները:

Հաղթանակով Աշոտ Երկաթը մտնում է Սամշվիլդե ամրոցը և իրեն հպատակեցնում բերդապահներին ու Գուրգենի զորքին: Բայց քանի որ Գուրգենի զորքը գերի ժամանակ անգամ իրեն լավ չի պահում, նա խիստ պատիժներ է սահմանում, հրամայում է նրանց բոլորի աչքերը հանել և քթներն ու ականջները կտրել և այդպես արձակել Գուրգենի մոտ<sup>11</sup>:

Աշոտ Բ Երկաթից հետո Հայաստանի Բագրատունյաց թագավորության ճյուղը շարունակում է Աբաս Բագրատունին (929-953): Նրա օրոք երկիրը հիմնականում ապրում է խաղաղ կյանքով: Այդ ժամանակ Սամշվիլդեն դարձյալ նրանց տիրույթն էր: Աբասից հետո թագավոր է օժվում Աշոտ Գ Ողորմածը (953-997), որը Սամշվիլդե բերդաքաղաքի հսկողությունը դնում է իր կրտսեր որդու՝ Գուրգենի վրա: Վերջինս շուտով իրեն հռչակում է այդ տարածքների թագավոր և հիմնադրում է Տաշիր-Չորագետի կամ, ինչպես հետագայում է կոչվում, Լոռու (Գուգարքի) հայոց Կյուրիկյան թագավորությունը: Գուրգեն Բագրատունու անունը տեղական բարբառով հնչում էր նաև Կորիկե կամ Կյուրիկե, որտեղից էլ, ըստ ավանդության, ծագել է նրա թագավորության անունը<sup>12</sup>: Նա այդ երկրամասում թագավորել է շուրջ քառորդ դար՝ 966 թ. մինչև 991-ը<sup>13</sup>, որից հետո, հրաժարվելով

<sup>10</sup> **Հովհաննես Դրասխանակերտցի**, նույն տեղում, էջ 299:

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 299:

<sup>12</sup> «Կյուրիկե» անվան ծագման բացատրությունը Լ. Մելիքսեթ-Բեկը տալիս է հետևյալ կերպ. «Այն իշխանները, գրում է նա, որոնք «քորիկոզ» (= հունարեն «կվիրիակոս»- «կվիրիոս» կամ հայերեն արտասանությամբ «կորիկե» տիտղոսն էին կրում, տիրում էին այս երկրին (Թռեղքին – Վ. Մ.) X դարի վերջերից մինչև XI դարի երկրորդ կեսը (տես «Արշավ» համդես, Թիֆլիս, 1940 թ., N 4, էջ 54):

<sup>13</sup> Գուրգենի թագավոր դառնալու տարեթվերը հակասական են, նշվում են՝ 966, 970, 972, 979 թվականները, նույնիսկ պոռֆ. Ս. Պողոսյանը ընդունում է 989-ը (տես նրա՝ Հայ ժողովրդի պատմություն, հատ. 2, Երևան, ԵՊՀ հրատ., 1965, էջ 353), իսկ Լեոն գրում է, որ նա թագավոր է հռչակվել իր հոր մահից (977 թ.) հետո միայն՝ 982-ին (տես Երկերի ժողովածու, հատ. 2, էջ 611): Ի դեպ, անցյալի գրեթե մեր բոլոր մեծանուն պատմաբանները անդրադարձել են Կյուրիկյան թագավորության պատմությանը: Նրանց մոտ, սակայն, վկայակոչված են այդ թագավորության հիմնադրման ու անկման տարբեր թվականներ՝ 966-989-ը՝ հիմնադրում, իսկ 1113-1118-ը՝ անկում: Այդ խնդիրը տեղիք է տվել բանավեճի: Ժամանակին Ի. Ղարիբյանը, որն այդ թագավորության հիմնադրման տարեթիվ է ընդունում 979-ը, հանդես է եկել «Կյուրիկյան թագավորության հռչակման տարեթվի շուրջ» հոդվածով (տես «Բանբեր Երևանի համալսարանի», 1977 թ., N 1, էջ 78-87): Այն քննարկվել է գիտական մամուլում և Ռ. Ի. Սաթևոսյանի՝ հիշյալ թագավորության պատմությանը նվիրված «Տաշիր-Չորագետ»

աշխարհիկ կյանքից, կրոնավորել է Սանահնի վանքում<sup>14</sup>: Տաշիր-Ձորագետի թագավոր այնուհետև դառնում է նրա որդին՝ Դավիթ Անհողինը (991-1048), որն ըստ Լեոյի, իր թագավորության մայրաքաղաքը դարձնում է Սամշվիլդեն<sup>15</sup>: Նա, ժառանգելով այդ փոքրիկ գավառական թագավորությունը, իր եռանդով, երկարատև ու անխոնջ գործունեությամբ հանդիսացավ մի այնպիսի հարստության հիմնադիր, որի կատարած դերը Հյուսիսային Հայաստանում խիստ կարևոր էր: Գուգարքը նորից դառնում է մի կենտրոն, ուր քաղաքական կյանքը՝ հետզհետե գարգանալով, առաջ է բերում քաղաքական-կուլտուրական մեծ շրջաններ, որոնք արդեն գավառական երևույթներ չէին այլևս, այլ ընդհանուր հայկական, և խոր հետք են թողնում մեր պատմության մեջ ընդհուպ մինչև XIX դարը<sup>16</sup>:

---

գրքի էջերում: Պետք է արձանագրել, որ արդ Կյուրիկյան թագավորության հիմնադրման տարեթիվ է ընդունված 966-ը, իսկ անկմանը՝ 1113-ը, որոնք էլ նշված են «Հայկական համառոտ հանրագիտարանում» (տե՛ս հատ. 2, էջ 707): Միաժամանակ պետք է նշենք, որ ոչ միայն այս, այլ նաև Կյուրիկյան թագավորության գահակալների վերաբերող թվական տվյալների մեջ կան մի շարք անճշտություններ, այդ թվերը տարբեր հեղինակների մոտ և տարբեր աղբյուրներում հակասում են միմյանց: Մենք հիմնականում հենվում ենք ՀԳԱ հրտ. կողմից լույս ընծայված «Հայ ժողովրդի պատմություն» բազմահատորյակում ընդունված թվագրման համակարգից:

<sup>14</sup> Սանահնի վանքի Ամենավրկիչ եկեղեցու կառուցման տարեթվերը ևս հակասում են միմյանց: Մի տեղ դրանք նշված են 957-966-ը Տե՛ս Լեո, Երկերի ժողովածու, հատ. 2, Երևան, 1967, էջ 611: Ի դեպ, Սամշվիլդեն Հայոց Կյուրիկյան թագավորության մայրաքաղաք դառնալու թվականն ընդունվում է 970-ը, անկախ այն բանից, որ Ցուրտավի կործանումից (VII դ.) հետո այդ տարածաշրջանում, որպես նշանավոր քաղաք, հայտնի է դառնում Սամշվիլդեն, ուր դեռևս 880-ական թթ. նստում էին Գնթունի իշխանները: Պետք է նկատել, որ Դավիթ Անհողինից էլ առաջ Սամշվիլդեն եղել է Հյուսիսային Հայաստանի վարչական ու ռազմապաշտպանական կարևոր կենտրոն, ուր էլ իր գործունեությունը ծավալել է Գուրգենը՝ Անհողինի հայրը (տե՛ս ՀՄՅ, հատ. 10, էջ 170), իսկ մեկ այլ տեղ՝ 966-972-ը (տե՛ս ԶԺՊ, հատ. 3, էջ 385): Արդ, չգիտես ո՞րն է ճիշտը:

<sup>15</sup> Տե՛ս Լեո, Երկերի ժողովածու, հատ. 2, Երևան, 1967, էջ 611: Ի դեպ, Սամշվիլդեն Հայոց Կյուրիկյան թագավորության մայրաքաղաք դառնալու թվականն ընդունվում է 970-ը, անկախ այն բանից, որ Ցուրտավի կործանումից (VII դ.) հետո այդ տարածաշրջանում, որպես նշանավոր քաղաք, հայտնի է դառնում Սամշվիլդեն, ուր դեռևս 880-ական թթ. նստում էին Գնթունի իշխանները: Պետք է նկատել, որ Դավիթ Անհողինից էլ առաջ Սամշվիլդեն եղել է Հյուսիսային Հայաստանի վարչական ու ռազմապաշտպանական կարևոր կենտրոն, ուր էլ իր գործունեությունը ծավալել է Գուրգենը՝ Անհողինի հայրը:

<sup>16</sup> Լեո, Երկերի ժողովածու, հատ. 2, էջ 611:  
Հայ պատմագրության մեջ կա նաև այն տեսակետը, որ Դավիթն իր «Անհողին» մականունն ունեցել է Գագիկ թագավորի պատժիչ արշավանքից ավելի վաղ՝ 996 թ., և դա հիշատակված է Հաղբատի վանքի մի արձանագրության մեջ: Ուստի այդ անվան առաջացումը բերդերի և հողերի կորստյան հետ կապելը, որքան էլ տրամաբանական լինի, մնում է կասկածելի: Առայժմ այդ մականվան ծագման պատճառը վերջնականապես պարզված չէ և ունի լրացուցիչ հետազոտության ու բացատրության կարիք (տե՛ս ԶԺՊ, հատ. 3, էջ 103):

Դավիթն իր հորից ժառանգություն ստացած փոքրիկ թագավորությունը կարճ ժամանակամիջոցում ընդարձակում է, նվաճում է Վրաստանի որոշ տարածքներ, գրավում Դմանեաց քաղաքը ու ընկճում է իրեն է հպատակեցնում Տփղիսի էմիրին: Նա սկսում է իր թագավարության սահմանները ընդարձակել ու ամրապնդել: Այդ ժամանակ Գանձակի Փատլուն էմիրը հարձակվում է Գուգարքի վրա, սակայն ջարդվում է Դավթի կողմից և հազիվ է կարողանում ճողոպրել: Նույն ժամանակում է, որ Գագուն իշխող մի հայ նախարար դավաճանում է Դավթ Անհողինին և հպատակվում է վրաց թագավորին: Նա, կամենալով պահպանել իր անկախությունը, դիմում է նրա հովանավորությանը և, վրացական դավանություն ընդունելով ու կրկին մկրտվելով, ստանում է Դեմետրե անունը: Ծիսակատարվում է Դավիթը և հարձակվում դավաճան Դեմետրեի վրա, որը Գագուն էր նստում: Դավթ Անհողինը նրանից խլում է բերդը, որից հետո Դեմետրեն երկար չի ապրում:

Այսպես ուժեղանալով՝ Դավթ Անհողինը 1001 թ. իրեն անկախ է հռչակում, չի ուզում ճանաչել հայոց Շահնշահ Գագիկ Ա-ի գերիշխանությունը և հնազանդվել նրան: Հակառակ դրան, Գագիկ Ա-ը ձգտում էր ստեղծել կենտրոնական միասնական հզոր պետություն, որի համար էլ պայքարում էր գավառական ինքնակալությունների դեմ: Նրա զորքերը 1001 թ. մտնում են Գուգարք, իջնում վրաց դաշտ, պատժողական մի պտույտ են գործում Սամշվիլդե բերդի շուրջը ու դուրս գալիս Գագ գավառը: Երեք ամսվա ընթացքում քարուքանդ են անում Տաշիրի երկիրը և այնտեղից էլ անցնում են Աղստևի ձորը: Նրանք գահընկեց են անում Դավթին ու գրավում նրա տարածքները: Այդ պատճառով էլ նա անվանվում է «Անհողին», այսինքն՝ հող չունեցող: Դրանից հետո նա զղջում է իր արարքը Գագիկ թագավորի հանդեպ և Սարգիս կաթողիկոսի (992-1019) միջնորդությամբ ներում է խնդրում նրանից: Գագիկ թագավորը նրան է վերադարձնում խլված տիրույթները: Այդպես, Դավթ Անհողինը ճանաչում է Գագիկ Ա-ի գերիշխանությունը և արդեն նվիրվում է իր երկրի շինարարությանը:

1020 թ. մեռնում է հայոց Գագիկ թագավորը՝ երկիրը թողնելով իր որդի Յովհաննես-Սմբատին (1020-1040): Այս միջոցին Դավթ Անհողինը նորից է նախապատրաստվում պատերազմի Անիի թագավորության դեմ, օգտվելով այն հանգամանքից, որ Յովհաննես-Սմբատի եղբայր Աշոտը (1022-1040) պայքարում է իր եղբոր դեմ՝ գահը ժառանգելու նպատակով, նույնիսկ Աշոտը հաղթում է Յովհաննես-Սմբատին, սակայն հայ իշխանների միջնորդությամբ հաշտություն է կնքվում նրանց միջև, և Աշոտ Դ-ը թագավորում է Պարսկաստանին և Վրաստանին կից գավառներում: Ահա այդ ժամանակ

է, որ Դավիթ Անհողինը գրավում է Ուտիքը, մտնում է Աղվանք և դառնում նաև Աղվանքի թագավոր, բայց մայրաքաղաքը պահում է դարձյալ թագավորանիստ Սամշվիլդե ամրոցը:

Դավիթ Անհողինը ուժեղանալով՝ նոր բերդեր ու ամրոցներ է կառուցում, Լոռեն վերաշինում է և իր որդի Գուրգենին էլ նշանակում է նրա կառավարիչ: Նա շուտով խնամհանում է Դվինի եմիր Աբուլսուարի հետ, որը ծագումով պարսիկ էր՝ նրան կնության տալով իր քրոջը: Սակայն Աբուլսուարը նախանձում է Դավթին այդ նվաճումների համար: Նա պարսից շահի՝ Տուղրիլի հետ դաշն կնքած, 15 հազարանոց զորքով, 1036 թ. մոտենում է Աղվանքին ու շարժվում դեպի արևմուտք: Նա ծաղր ու ծանակի է ենթարկում քրիստոնեությունը, քանդում է եկեղեցիները, հավատի համար գլխատում շատերին: Դավիթ Անհողինը, ունենալով ընդամենը 10 հազար զորք, կռվի է բռնվում նրա հետ և օգնություն խնդրում հայոց իշխաններին, աբխազներին ու Կապանի նախարարներին, ինչպես և Աղվանքի Տեր-Հովհաննես կաթողիկոսին: Նրանք, ուղարկելով իրենց ուժերը, Գուգարքի զորքը դարձնում են 19 հազար: Դավթի զորքին նաև հոգևորականներն են ներշնչում, որ կռվեն ու չընկճվեն: Դավթի զորքը հինգ օր հետապնդում է թշնամուն և նրա թողած ավարը բաժանում հայոց զորականների և հոգևորականների միջև:

1030-ական թթ. Կյուրիկյանները Անդրկովկասում ամրապնդում են իրենց դիրքերը: Դրան նպաստում է նաև այն հանգամանքը, որ Կախեթում ևս իշխում էին Կյուրիկյանները, ուր և հաստատվել էր նրանց տան ճյուղը: «Դա Դավիթ Անհողինի քաղաքական խոշոր հաջողությունն էր: Լոռվա թագավորն ամուսնացել էր Կախեթի թագավոր Կվիրիկեի քրոջ՝ Ջորակրցելու հետ, ուստի Կվիրիկեի մահից հետո իշխանությունը ժառանգեց Դավթի որդի Գագիկը, որը և Կախեթի Կյուրիկյան հարստության հիմնադիրը հանդիսացավ, ազգակցական և քաղաքական սերտ կապեր հաստատվեցին Լոռվա Բագրատունիների հետ»<sup>17</sup>:

1040 թ. մեռնում են հայոց թագավոր Հովհաննես-Սմբատը և նրա եղբայր Աշոտ Դ-ը: Երկիրը երկու տարի մնում է առանց թագավորի: Այդ ընթացքում Դավիթ Անհողինը կրկին արշավանք է ձեռնարկում թագավոր դառնալու նպատակով, բայց հայ նախարարները ստիպում են նրան վերադառնալ Գուգարք: Դրանից հետո հայոց թագավոր է դառնում Գագիկ Բ-ը (1042-1045), որը Աշոտ Դ-ի որդին էր: Նրան բյուզանդական կողմնորոշման պարագլուխները, հակառակ Վահրամ Պահլավունու և մյուսների հորդորների, մոլորության մեջ են գցում և Անին դնում են Բյուզանդիայի գերիշխանության

<sup>17</sup> Հայ ժողովրդի պատմություն, հատ. 3, Երևան, ՀԳԱ հրատ., 1976, էջ 103:

տակ՝ այդպիսով վերացնելով Հայոց թագավորությունը: Այդ ժամանակ նա հրաժարվում է գահից (սպանվել է բյուզանդացիների ձեռքով 1079 թ.): Այս շրջանում է, որ հայոց նախարարներից ոմանք ցանկանում են Հայաստանը դուրս բերել Բյուզանդիայի գերիշխանությունից և Դավիթ Անհողիմին էլ ընտրել թագավոր: Բայց հայ նախարարների մի մասը դարձյալ չի համաձայնվում և, այդպիսով, կործանվում է Բագրատունյաց թագավորությունը: Դա տեղի է ունեցել 1045-46 թթ., իսկ 1048-49 թթ. մեռնում է Դավիթ Անհողիմը:

Այսպիսով՝ Դավիթ Անհողիմի օրոք, չնայած նրա թույլ տված սխալներին, Գուգարքն ունենում է զգալի նվաճումներ, ամրապնդվում է երկրի պաշտպանունակությունը, մեծ զարգացում է ապրում տնտեսական, հասարակական-քաղաքական և մշակութային կյանքը, Սամշվիղե մայրաքաղաքը դառնում է միջնադարյան Հայաստանի ամրակուռ բերդերից մեկը:

Դավիթ Անհողիմին հաջորդում է նրա որդին՝ Կյուրիկե Ա Բագրատունին (1050-1090), որի օրոք Գուգարքն արդեն սահմանակից էր Բյուզանդական կայսրությանը: Սելջուկների դեմ միասնական ճակատ կազմելու փոխադարձ համաձայնությամբ Կյուրիկեն վայելել է Բյուզանդիայի հովանավորությունը: Դրանով Կյուրիկյաններն ընդգծում էին հայոց Բագրատունյաց թագավորությանը իրենց ավելի մոտ կանգնած լինելը: Նրանք իրենց համարում էին Բագրատունիների իշխանության շարունակողները: Ուստի, Անիի թագավորության անկումից հետո միայն նրանք ստանձնեցին դրան կտրելու իրավունքը՝ դրանով ցույց տալով Գուգարաց տան ավագությունը մյուս թագավորական տների նկատմամբ:

Սակայն, երբ 1064 թ. սելջուկները մտնում են Վրաստան, Կյուրիկեն, իր երկրի անվտանգությունը ապահովելու նպատակով, ընդունում է սուլթան Ալփասլանի (1029-1072) գերիշխանությունը և դրանով իր թագավորությունը պահում է կիսանկախ վիճակում: Այս անգամ էլ սելջուկներն են Կյուրիկյաններին օգտագործում Անդրկովկասում բյուզանդական կայսրության ազդեցության դեմ պայքարելու համար: Ալփասլանը 1063-ին դառնում է սուլթան, իսկ 1065-ին նա կնության է խնդրում Կյուրիկեի դստերը և, հորից ստանալով մերժում, վրաց թագավոր Բագրատ Դ-ին (1014-1072) պարտադրում է՝ հանդգելու նրան: Բագրատն այդ կապակցությամբ հանդիպում է Կյուրիկեի հետ, բայց վերջինս դարձյալ չի համաձայնվում: Սակայն նա հետո ստիպված է լինում ոչ միայն իր դստերը կնության տալ Ալփասլանին, այլև Բագրատին է զիջում իր տերության մի քանի ամրոցները Սամշվիղե մայրաքաղաքի հետ մեկտեղ: Սակայն Բագրատը, Սամշվիղեից բացի, մյուս բոլոր բերդերը վերադարձնում է Կյուրիկեին: Ահա այսպես, Հայոց Կյուրիկյան թագավորության հարյու-

րանյա (966-1065 թթ.) մայրաքաղաք Սամշվիլդեն անցնում է Վրաստանին, իսկ Կյուրիկեն իր թագավորության կենտրոնը դարձնում է Լոռե ամրոցը և 1065 թ. տեղափոխվում է այնտեղ:

Սելջուկների առաջնորդ Ալվիասլանին հաջորդում է նրա որդին՝ Մելիքշահը (1072-1092), որի սուլթանության շրջանում սելջուկները աստիճանաբար գրավում են Լոռու թագավորության տիրույթները: Եվ Կյուրիկեն, որպեսզի փրկի երկիրն ավերածություններից, ստիպված, 1088 թ. մեկնում է Խորասան ու տեսակցվում Մելիքշահի հետ, որը նրան լավ ընդունելություն է ցույց տալիս և ապահովում Կյուրիկյան թագավորության անվտանգությունը: Մելիքշահը իր տիրապետության տակ եղած բոլոր երկրներում, այդ թվում և Հայաստանում, կատարում է մեծ թվով բարենորոգչական աշխատանքներ: Վրաստանը այդ տարիներին հզորանում էր Բյուզանդիայի իշխանության տակ, որը չէր կարող չամհանգստացնել Մելիքշահին: Եվ նա հարձակվում է Վրաստանի վրա ու գրավում Տփղիսն ու Սամշվիլդեն, որը Բագրատ Դ-ի օրոք կրկին գրավել էին վրացիները: Այդ գրավված քաղաքները Մելիքշահը հանձնում է Սրահանգ էմիրին: Վերջինս 1073-74 թթ. դարձյալ ընդհարվում է վրացիների հետ՝ դաշնակից ունենալով Գանձակի, Դվինի և Դմանիսի էմիրներին: Սամշվիլդեից ոչ հեռու՝ Փարցխիս գյուղի մոտ Սրահանգի և վրաց Գեորգի Բ թագավորի (1072-1089) զորքերի միջև տեղի է ունենում ուժեղ ճակատամարտ: Այդ կռվում Սրահանգը պարտվում է ու փախչում Գանձակ: Սակայն հետագայում սելջուկյան թուրքերը պարբերաբար հարձակումներ են գործում Վրաստանի վրա և ավերում շեն քաղաքները, որոնց թվում և Կյուրիկյան թագավորության երբեմնի կենտրոն Սամշվիլդեն, որն արդեն Կլդեկարիի Լիպարիտյանների սեփականությունն էր:

Մելիքշահի մահից հետո Գանձակի ամիրայությունը շարունակում է իր հարձակումները Գուգարքի վրա և նրանք սկսում են գրավել նաև հայոց Կյուրիկյան թագավորության մյուս գավառները: Այդ շրջանում այնտեղ իշխում էին Կյուրիկե Ա-ի որդիները՝ Դավիթն ու Աբասը: Ինչպես վկայում են Կիրակոս Գանձակեցին և Վարդան Վրադապետը, նեղվելով վրացիներից, նրանք շուտով թողնում են Լոռեն և հեռանում այնտեղից Առանի կողմերը: Դա տեղի է ունեցել 1113-1118 թթ. միջև: Այդ շրջանում էլ անկում է ապրել Լոռու հայոց Կյուրիկյան թագավորությունը: Վրաց թագավոր Գեորգի Բ-ը դեռևս սելջուկյան տիրապետությունից էլ առաջ Սամշվիլդեն, որպես տիրույթ, նվիրել էր Իվանե Օրբելիանիին: Հետագայում, երբ Վրաստանի գահակալը դարձավ Դավիթ Շինարարը (1089-1125), նա Օրբելիան տանը նվիրեց նաև իր կողմից սելջուկ-թուրքերից ետ գրաված Ագարակն ու Լոռեն՝ իրենց գավառներով: XII դարի սկզբին

Կյուրիկյան թագավորության սահմանները ավելի են սեղմվում, մնում է միայն Տաշիրը: Շուտով Տաշիրը ևս անցնում է վրացիներին: Իսկ Կյուրիկեի որդիները՝ Դավիթ Բ-ը և Աբաս Ա-ը (երկուսը միասին, մոտ 1090-1145), հեռանալով Լոռեից, Առանում որպես ժառանգություն ստանում են. Աբասը՝ Տավուշը, իսկ Դավիթը՝ Մածնաբերդը և այդ վայրերում ստեղծում են իրենց փոքրիկ իշխանությունները:

Դրանից հետո Դավիթ Բ-ի մասին ոչ մի տեղեկություն չի հիշատակվում, իսկ Աբաս Ա-ը, Տավուշը կորցնելուց հետո, տեղափոխվում է Մածնաբերդ, ուր էլ վախճանվում է 1145-ին: Այնուհետև հիշատակվում է Դավթի որդի Կյուրիկե Բ-ը (1145-1170), որը զոհվում է պապենական տիրույթները վերականգնելու մի փորձի ժամանակ: Վերջինիս որդիներից մեկը՝ 12-ամյա Աբասը (1170-1176) հաջորդում է հորը և յոթ տարի անց վախճանվում, իսկ մյուսը՝ Վասակը, Նոր բերդում հիմնում է մի փոքրիկ իշխանություն:

Դավիթ Շինարարի գահակալության առաջին տարիներին Տփխիսը, Ռուսթավը, Սամշվիլդեն և Սոմխեթի որոշ մասերը դեռևս - սելջուկյան թուրքերի ձեռքին էին, իսկ Կախեթը առանձին թագավորություն էր և այնտեղ իշխում էր Դավիթ Անհողինի Գագիկ որդու թոռը՝ Կյուրիկե Դ-ը (1084-1102): Հետագայում Դավիթ Շինարարը աստիճանաբար իր երկրի սահմաններից դուրս է շարտում սելջուկյան թուրքերին և ազատագրում է նաև Հայաստանի որոշ մասերը, որոնց թվում՝ Տաշիրն ու Սամշվիլդեն:

Այսպիսով՝ հայոց Կյուրիկյան թագավորությունը սկզբնավորվում է Աշոտ Գ Ողորմածի որդի Գուրգենի կամ Կյուրիկեի կողմից և տևում է շուրջ երկու դար, մինչև Կյուրիկե Բ-ի մահը, որը տեղի է ունեցել 1170-ին: Այդ ընթացքում մինչև այժմ հաջորդել են ութ թագավոր, որոնք գահակալել են Սամշվիլդում (966-1065 թթ.), իսկ այնուհետև Լոռեում (1065-1113 թթ.), ապա Տավուշ և Մածնաբերդ ամրոց-քաղաքներում (1113-1170 թթ.), որից հետո հիմնադրվում է Կյուրիկյան տան Նոր բերդի ճյուղը (1170-1250-ական թթ.): Կյուրիկյանների Կախեթի տան ճյուղը սկզբնավորվել է Կյուրիկե Գ Մեծի (1010-1037) կողմից և շարունակվել մինչև 1102 թ., որի վերջին ներկայացուցիչը եղել է Կյուրիկե Դ-ը (1084-1102):

Պատմական ասպարեզից հեռանալով՝ Կյուրիկյանները մեծ դեր են կատարել այս լեռնաշխարհում: Նրանք աչքի են ընկել նաև շինարարական լայն գործունեությամբ: Հայտնի է նրանց պալատական եկեղեցին Սամշվիլդում, ինչպես և Սանահնի վանքը, որի տեղում, ըստ ավանդության, Գրիգոր Լուսավորիչը վաղ քրիստոնեական շրջանից պաշտամունքի առարկա դարձած Խաչ էր տնկել: Հենց նրա տեղում էլ X դ. առաջին կեսին կառուցվել է Սանահնի ս. Աստվածածին եկեղեցին, ապա Խոսրովանույշ թագուհու հիմնադրած ս.

Ամենափրկիչը: Սրանց էլ ավելացել են Հրանուշ թագուհու կառուցել տված ճեմարանը, Գրատունը (1063 թ.) և այլ կցաշինություններ:

Սանահնից ոչ հեռու, X դ. կեսերին հիմնադրվել է Հաղբատի վանքը, որի հիմնական եկեղեցին դարձյալ Խոսրովանուշի հիմնադրած ս. Նշանն է: Նրա շինարարությունն սկսվել է 976 թ. և ավարտվել 991-ին: Սանահնի և Հաղբատի եկեղեցիների վրա կան բարձրաքանդակներ Կյուրիկյան թագավորության հիմնադիր Գուրգենի և իր եղբայր՝ հայոց Սմբատ Բ թագավորի (977-990) պատվերներով: Դրանք եղել են ժամանակի հյուսիսարևելյան Հայաստանի գիտակրթական ու մշակութային խոշոր կենտրոններ:

Այդ թագավորության կապակցությամբ Հովհ. Թումանյանը մի հետաքրքիր դիտողություն է անում. «Հայաստանում՝ էստեղ-էստեղ,- գրում է նա,- ամուր վայրերն ապավինած իշխանական տների մնացորդները գլուխ բարձրացրին և զանազան տեղեր ստեղծեցին տանից ավելի թագավորություններ: Եղ թագավորություններին մեկն էր և Լոռու Կյուրիկյան թագավորությունը, որի պատմությունը, դժբախտաբար, մինչև էսօր մութն է մնում»<sup>18</sup>:

Զնայած Հովհ. Թումանյանի այս ուշագրավ դիտողությունից հետո անցել է 82 տարի, և այդ ընթացքում Կյուրիկյան թագավորության մասին (և ոչ միայն նրա) գրվել են մի շարք արժեքավոր աշխատություններ<sup>19</sup>, բայց և այնպես կարող ենք ասել, որ շատ խնդիրներ դեռևս մնում են չլուծված, կան ճշգրտման կարոտ թվեր ու փաստեր, առայժմ վիճարկելի են առանձին տեսակետներ և այլն: Դրանք պետք է գիտական քննախույզ հայացքով վերանայվեն և ստեղծվեն միջնադարյան հայկական տեղական թագավորությունների լիարժեք պատմությունը ընդգրկող աշխատություններ, որով իրականացված կլինի մեծ բանաստեղծի ցանկությունը:

Գուգարքում սելջուկները համեմատաբար կարճ են իշխում, շուտով այդ երկրամասը հայ-վրացական միացյալ ուժերի կողմից մաքրվում է, որը գլխավորում է Վրաց թագավոր Դավիթ Շինարարը:

<sup>18</sup> **Հովհաննես Թումանյան**, ԵԼԺ, հատ. 7, Երևան, ՀԳԱԱ հրտ., 1995, էջ 361:

<sup>19</sup> Լոռու Կյուրիկյան թագավորության մասին իրենց երկերում արժեքավոր շատ տեղեկություններ են թողել հայ միջնադարյա պատմիչները, հատկապես՝ Հովհաննես Դրասխանակերտցին, Ստեփանոս Տարոնացին (Ասողկ), Արիստակես Լաստիվերցին, Գրիգոր Մագիստրոսը, Սմբատ Սպարապետը, Կիրակոս Գանձակեցին, Վարդան Արևելցին, Ստեփանոս Օրբելյանը, Մատթեոս Ուռնայեցին, Սամուել Անեցին, Առաքել Դավրիժեցին, ինչպես և վրաց պատմիչ Ջուանշերը: Նրանց այդ տեղեկությունների հիման վրա էլ հետագայում գրվել են արժեքավոր աշխատություններ, որոնցից են՝ Ղ. Մովսեսեան, Լոռիի Կիրիկեան թագավորներու պատմութիւնը, Վիեննա, 1923, Մ. Հովհաննեսեան, Հայաստանի բերդերը, Վենետիկ, 1970, Ռ. Մաթևոսյան, Տաշիր-Ձորագետ (X դ. -XII դ. սկիզբ), Երևան, 1982 և այլն: Այդ թագավորության պատմությանը տարբեր առիթներով անդրադարձել են նաև Մ. Զամչյանը, Ս. Ջալալյանը, Լեոն, Գ. Մանանդյանը, Լ. Մելիքսեթ-Բեկը և շատ ուրիշներ:

Նա 1110 թ. ազատագրում է Սամշվիլդեն, իսկ մինչև 1123 թ. գրեթե ամբողջ Տաշիր-Ձորագետը և միացնում է Վրաստանին: Այնուհետև Սամշվիլդեն կրկին դառնում է վրաց Օրբելիանիների տան սեփականությունը (XII-XVII դդ.), իսկ Կյուրիկյան թագավորության մյուս տիրույթները անցնում են Ջաքարյաններին (1118-1380):

Սամշվիլդեն 1400 թ. գրավել է Լենկթեմուրը և քաղաքը լրիվ ավերել: Դրանից հետո Սամշվիլդեն նորից է բնակեցվել, որտեղ հաստատվել են շուրջ 20.000 հայ ու վրացի: Այս ընթացքում է նաև Լոռե քաղաքը տրվել Սյունյաց Բեշքեն Օրբելյան իշխանաց իշխանին (1437 թ.): Հայ ազգաբնակչությունը, լսելով նրա առաքինությունների մասին, երկրի տարբեր կողմերից գաղթել է նրա մոտ: Վրաց Ալեքսանդր Ա թագավորը (1412-1442) վախենալով, որ կարող է Սամշվիլդեի հայերը ևս գաղթեն Բեշքենի մոտ, Անմաղին անունով մի կաշառված հայի ձեռքով թունավորում ու սպեցնում է նրան: Սակայն Բեշքեն իշխանի մահով անգամ գաղթականության առջև չեն կարողանում առնել:

Նույն այս Ալեքսանդր Ա թագավորը, օգտվելով Անդրկովկասում ստեղծված խառնակ վիճակից, իր թագավորությունն ուզում է ազատել օտար լծից և այդ կապակցությամբ մերժում է հարկ վճարել թուրքմեն վաչկատուն ցեղերի առաջնորդ Ջահնշահին: Ուստի, Ջահնշահը մտնում է Արևելյան Վրաստան և, երկար պաշարումից հետո, 1440 թ. գրավում է Սամշվիլդեն: Նա դեռ քաղաք չմտած 1664 մարդու զուլխ է կտրել տալիս և նրանց զանգերով քաղաքի հանդեպ մի միմարե կանգնեցնում, 60 եկեղեցականների և իշխանների քաղաքի դռան առաջ են մորթում, իսկ քաղաքի մեջ 3000 հոգու զանազան տանջանքներով խողխողում են և 9400 հոգու էլ գերի են տանում, բացի նրանցից, ում քաղաքից դուրս գտել ու արդեն տարել էին<sup>20</sup>:

Այս ծանր հարվածից հազիվ սթափվել էր Գուգարքը, երբ 1578 թ. թուրքերը կրկին արշավում են Վրաստան: Նրանք արդեն վերջնականապես հիմնահատակ կործանում են Սամշվիլդեն, որի բնակիչները գերեվարվում ու կոտորվում են: Դրան էլ հաջորդում է 1605 թ. Շահ Աբասի հրամանով տեղի ունեցած բռնազաղթը դեպի Սպահան, որի ընթացքում հազարավոր հայեր են տեղահանվում Սամշվիլդեի շրջակայքից, որից հետո այն, փաստորեն, դառնում է անմարդաբնակ: Հետագայում այդ ամրակուռ բերդաքաղաքի շրջակայքը նորից է կենդանացել, և XVIII դարի սկզբում Սամշվիլդեն դարձյալ հիշատակվում է որպես խիտ բնակեցված քաղաք: Բայց այս անգամ էլ նրա բնակիչները ստիպված են լինում գաղթել լեզ-

---

<sup>20</sup> Սիբայել Չամչյան, Պատմություն հայոց, հատ. 3, Երևան, 1983, էջ 471-472:

գինների ու կովկասյան մյուս վայրի ցեղերի ավերիչ արշավանքների հետևանքով, որից հետո այն վերջնականապես վերածվում է ավերակների:

Ներկայումս կանգուն են նրա պարիսպներն ու բուրգերը, որոնք իրենց ներսում պահպանում են երբեմնի ծաղկուն քաղաքի ավերակված պալատներն ու վանքերը, մյուս ամրությունների մնացորդները<sup>21</sup>:

Թռեղքի մյուս հնագույն բնակավայրը Ասկուրեթն է, որը գտնվում է Սամշվիլդեից շուրջ 25 կմ դեպի հյուսիս-արևելք, Ալգեթ գետի ձորահովտում: Այն Տաշիր գավառում եղած երբեմնի պատմական Ասկուրեթ բերդավանն է, որը IX դ. վերջերից մատենագրության մեջ հիշատակվում է որպես Բագրատունյաց թագավորության ռազմակայան: Հայոց Սմբատ Ա թագավորը Ասկուրեթի բերդի հսկողությունը Սամշվիլդե բերդաքաղաքի հետ մեկտեղ նույնպես դրել էր Գնթունի իշխաններ Վասակ և Աշոտ եղբայրների վրա: Վերջիններս հետագայում, օգտվելով Սմբատի որդի Աշոտ Բ Երկաթի ծանր կացությունից, անկախություն ձեռք բերելու նպատակով, ապստամբել են նրա դեմ: Սակայն Ասկուրեթի մոտ տեղի ունեցած մարտում Աշոտ Երկաթը և իր եղբայրը՝ Աբասը, պարտության են մատնել խռովարարներին, գրավել են, ինչպես վերը տեսանք, Ասկուրեթի և Սամշվիլդեի ամրոցներն ու իրենց հպատակեցրել դրանց տերերին:

Ըստ պատմական աղբյուրների, Ասկուրեթն ավերվել է երկրաշարժից, XII դարում: Այժմ էլ մնում են նրա պաշտպանական հաստաբետ պարիսպների, պալատների ու այլ շինությունների ավերակները, ինչպես նաև սրբատաշ քարերով շինված ս. Աստվածածին եկեղեցու հետքերը, որն, ըստ ավանդության, կառուցվել է Անդրեաս Առաքյալի կողմից, հնագույն մեհյանի տեղում: Նրա խորանում դրված է եղել Աստվածամոր պատկերը: Ասում են, իբրև, Բյուզանդիայի Հերակլ կայսրը, լսելով Ասկուրեթի եկեղեցու Աստվածամոր հրաշագործ պատկերի մասին, ուխտի է գնացել այնտեղ և, տեսնելով, որ եկեղեցին հին է ու խարխլված, հրամայել է հիմնովին քանդել ու նրա տեղում սրբատաշ քարերով մի հոյաշեն ու ոսկեզմբեթ եկեղեցի կառուցել, որի մեջ դնել հիշյալ սրբապատկերը: Այդ նորակերտ եկեղեցին է եղել, որ XII դարում սաստիկ երկրաշարժից հիմնահատակ կործանվել է: Փլվելու պահին, ըստ ավանդության, նրա երկնասլաց ոսկեպատ գմբեթը կամացուկ ցած է ընկել ու խնամքով ծածկել Աստվածամոր պատկերը, որ նա մնա անխաթար:

---

<sup>21</sup> Սամշվիլդե քաղաքի շինությունների և նրա շրջակայքի հնությունների նկարագրությունը մենք ավելի մանրամասնորեն տվել ենք մեր «Դաղեթ-Խաչեն» (Երևան, «Մանկավարժ» հրատ., 1999) գրքում (տես էջ 29-39):

Ասկուրեթը ժամանակին ունեցել է նաև վրաց եկեղեցու եպիսկոպոսանիստ աթոռ:

Յարկ է նշել, որ մեր պատմագիտական և տեղեկատու գրականության մեջ Ասկուրեթի ամրոցի գտնվելու վայրը հաճախ սխալ է նշվում: Օրինակ, ըստ «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան»-ի (հատ. 1, Երևան, 1986, էջ 237), նրա տեղը ցույց է տրված երկու՝ իրարից շուրջ 300 կմ հեռավորության վրա գտնվող վայրերում. մեկը՝ Ալգեթ, իսկ մյուսը՝ Կուր գետի ակունքների մոտակայքում, մի բան, որ անտրամաբանական է: Նույն ամրոցը չէր կարող գտնվել երկու տարբեր վայրերում:

Յովհ. Դրասխանակերտցի կաթողիկոսը, որ եղել է այդ շրջանի շատ իրադարձությունների ժամանակակիցն ու ականատեսը, նաև մասնակիցը, և դրանց մեծ մասը նկարագրել է իր «Հայոց պատմության» մեջ, Ասկուրեթի տեղը նշում է Սամշվիլդեի շրջակայքում, որի հսկողությունը հանձնարարված է եղել վերոհիշյալ Գնթունի իշխաններին: Աշոտ Երկաթն առաջին անգամ երբ պաշարել է Սամշվիլդե բերդաքաղաքը և այն չի կարողացել գրավել, նա պարեն ճարելու նպատակով իր զորքը ցրել է շրջակայքում և ինքն էլ 250 ձիավորով մեկնել է Ասկուրեթ: Եթե Ասկուրեթն այդքան հեռու գտնվեր Սամշվիլդեից, բնական է, որ հայոց արքան չէր կարող իր զորքը թողնել անտեր և մեկնել այնտեղ: Ուրեմն Ասկուրեթը մոտ է եղել Սամշվիլդեին, որ նա զնացել է այնտեղ դադար առնելու և կրկին արշավելու Սամշվիլդեի վրա: Եվ իրոք, ըստ Դրասխանակերտցու վկայության, նա իր Աբաս եղբոր հետ շուտով Ասկուրեթի մոտ ճակատամարտ է տվել Աշոտ և Վասակ Գնթունիների զաղտնի հավաքագրած զորքի դեմ և տարել փառավոր հաղթանակ:

Սեզ թվում է, սխալ է նաև Ասկուրեթ անվան հնչյունափոխությունից Ածխուերի, Ածխոր կամ Ազղոր անունների առաջացումը, որոնք վկայակոչված են մի շարք գրքերում: Ծիշտ է, այդ անուններով բնակավայր եղել է և այժմ էլ կա Արևմտյան Վրաստանում, Կուր գետի ավազանում, բայց նա ոչ մի կապ չունի Արևելյան Վրաստանում՝ պատմական Վրաց դաշտի հարևանությամբ գտնվող Ասկուրեթ և Ասկուրեթ բերդերի ու նրանց անվան հետ: Այդ թյուրիմացությունը, ըստ երևույթին, գալիս է Ղ. Ալիշանից, որը նույնությամբ կրկնել է նաև Մ. Յովհաննիսյանը իր «Հայաստանի բերդերը» գրքում (Վենետիկ, 1970, էջ 580-582): Նույն հեղինակը սխալվում է նաև, երբ իր հիշյալ գրքում նշում է, թե 1770 թ. վրաց Յերակլ Բ թագավորը (1744-1798) ռուսաց զորքի օգնությամբ Ասկուրեթի մոտ տեղի ունեցած ճակատամարտում թուրքերի դեմ հաղթանակ է տարել: Այդ ճակատամարտը տեղի է ունեցել ոչ թե Ասկուրեթի, այլ ներկայիս Ախալցխայի մոտ, Կուր գետի ավազանում գտնվող պատմական Ածխուերի ամրոցի՝

այժմյան Ազդոր գյուղի մոտ: Պարզապես անվան մանուկները շփոթություն է առաջացրել գիտնականների մոտ: Ասկուրեթ բերդանվան հնչյունափոխությունից հետագայում առաջացել են Ասուրեթ կամ Յասուրեթ ձևերը, որոնք կրող գյուղ կա այժմ հին բերդի փլատակների շրջակայքում, Սամշվիլդեից շուրջ 25 կմ հյուսիս-արևելք, Թեթրիծղարո-Կողա-Թբիլիսի ճանապարհի վրա: Դա հենց նորակերտ հին Ասկուրեթն է: Յետագայում Ասկուրեթը վրացերենի ազդեցությամբ հնչյունափոխվել ու կոչվել է Ասուրեթ, որը հաճախ հնչում է նաև Յասուրեթ ձևով: Այս ամբողջից 1-2 կմ դեպի արևմուտք, Մանգլիս քաղաքի մոտ է գտնվում հայ Բագրատունիների մյուս ամրոցը՝ Սակուրեթը<sup>22</sup>, որը դարձյալ եղել է Յուսիսային Յայաստանի կարևոր ռազմակայաններից մեկը: Սակուրեթի մոտ է գտնվել նաև Օրբելիանիների նշանավոր տան Օրբեթ բերդավանը, որի տեղում այժմ նույնանուն գյուղն է Ալզեթ գետի ձախ ափին:

Թռեղքի հարավային փեշերին, Ալզեթ գետի ձախ ափին է գտնվում Մանգլիս ավանը, որը միջնադարում եղել է Թռեղքից անջատված Մանգղեաց փոքր (վրացերեն՝ Մանգլիսիս խևի) գավառի կենտրոնը: Այն հնագույն աղբյուրներում հաճախակի հիշատակվող տեղանուն է: Մանգղեաց փոքր գավառն ունեցել է 925 քառ. կմ տարածք և զբաղեցրել է Ալզեթ գետի ձորահովիտը: Վիրքի կազմի մեջ է մտել IV դարում: Մանգլիսում մինչև այսօր էլ կանգուն է Բյուզանդիայի Կոստանդինոս կայսեր կառուցել տված Սուրբ Խաչ տաճարը<sup>23</sup>, որը երկար ժամանակ եղել է եպիսկոպոսանիստ առաջնորդարան: Այնտեղ էր նստում «մանգլելի» տիտղոսը կրող եպիսկոպոսը, որը մասնակցել է 491 թ. Վաղարշապատի և 506 թ. Դվինի հակաքաղկեդոնական ժողովներին: Մանգլիսի մոտ է տեղի ունեցել 1121 թ. Դիդգորիի նշանավոր ճակատամարտը վրաց և թաթար-սելջուկյան զորքերի միջև, որն ավարտվել է վրացիների հաղթանակով և դրանով Թռեղքն ազատագրվել է օտար նվաճողների լծից:

Թռեղքի մյուս հնագույն բնակավայրը, որը հիշատակված է «Քարթլիս ցխովրեբա»-ում, Գարիսն է: Սա ևս հին պատմություն ու-

---

<sup>22</sup> **Ս. Տ. Երեմյանի** «Յայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի» գրքի և Յայկական հանրագիտարանների «Կյուրիկյան թագավորություն» բառահոդվածների (տե՛ս ՅՍՀ, հատ. 5, էջ 493 և ԳՀԳ, հատ. 2, էջ 708) քարտեզներում Ասկուրեթ և Սակուրեթ բերդերը տեղադրված են միմյանցից 2-3 կմ հեռավորության վրա: Ըստ այդ քարտեզների, դրանք առանձին ամրոցներ են, սակայն այդ երկու բերդերը նույնացված և ներկայացված են «Ասկուրեթ» բառահոդվածի տակ (տե՛ս ՅՍՀ, հատ. 10, էջ 134), որը, մեզ թվում է, ճիշտ չէ: Դրանք ժամանակին եղել են իրարից անկախ ամրոցներ, որոնց տեղում հետագայում հիմնադրվել են առ այսօր գոյատևող Սաղարաշեն և Ասուրեթ գյուղերը:

<sup>23</sup> «Մանգլիս»-ը հնում հայտնի է եղել նաև «Մանգղեաց Սուրբ Խաչ» անունով: «Մանգղիս»-ը հայերեն «անգղ» անվան վրացերեն ձևն է, որ դարձել է մանգլիս:

նի, որի մասին, սակայն, մեզ քիչ տեղեկություններ են հասել: Նրա մասին վրաց ժամանակագրությունում կա միայն մեկ հիշատակություն, ըստ որի Գարիս գյուղի մոտ, Խրամի ձորում, 1556 թ. տեղի է ունեցել ճակատամարտ պարսիկների և վրաց բանակի միջև: Արդեն ծերունի Լուարսաբ Ա թագավորը (1527-1556) այդ պատերազմում զորքի հրամանատարությունը վստահում է իր որդի Սիմոնին և ինքն էլ մասնակցում է ճակատամարտին: Այդ մարտում չնայած թագավորը սպանվում է, բայց վրաց բանակը նրա խիզախ որդու գլխավորությամբ հաղթանակ է տանում ղզլբաշիների նկատմամբ:

Դրանից հետո ժողովրդի ազատագրական պայքարը սկսում է գլխավորել Սիմոն Ա-ը, որ հոր սպանվելուց հետո դարձել էր թագավոր (1556-1600): 1569 թ. Սիմոնի զորքը դարձյալ Թեռքում, Փարցխիս գյուղի մոտ, Ալգեթի կիրճում, մեծ ճակատամարտ է տալիս ղզլբաշիների դեմ: Սակայն դավաճանությամբ ու մատնությամբ նա գերվում ու տարվում է Պարսկաստան և մինչև 1578 թ. մնում է այնտեղ: Դեռ գերությունից ազատվելով և վերադառնալով հայրենիք, նա գլխավորում է վրաց ժողովրդի ապստամբությունը Օսմանյան Թուրքիայի դեմ: Սակայն այս անգամա էլ Բուլնիսի մոտ տեղի ունեցած մի ճակատամարտում (1599 թ.) նա նորից գերվում է և տարվում Ստամբուլ, ուր էլ 1600 թ. մեռնում է եղիղուլի բանտում:

Վախուշտու հաշվառման մատյանում հիշատակված է Գարիս գյուղի մասին, սակայն ե՞րբ է այն հիմնադրվել և ովքե՞ր են եղել նրա բնակիչները՝ հայե՞ր, թե՞ վրացիներ, ոչինչ չի ասված: Միայն մի բան է հայտնի, որ Գարիսը XVII-XVIII դարերի արշավանքների ժամանակ հիմնովին ավերվել է և նրա ավերակների վրա XIX դարի առաջին քառորդում հիմնադրվել է ներկայիս Թեթրի-Օղարո քաղաքը, որը սկզբնական շրջանում եղել է մի փոքրիկ հայկական բնակավայր:

Թեռքում դարեր շարունակ հայտնի են եղել Օրբելիանիները: Ըստ ավանդության, նրանք Վրաստան են եկել ճենաց թագավորական տնից, ճենբակուր թագավորի մահից հետո իրենց մեջ ծագած խռովության հետևանքով, և բնակություն են հաստատել Օրբեթում<sup>24</sup>, որտեղից էլ ծագել է նրանց տոհմանունը՝ «Օրբուլներ» կամ

---

<sup>24</sup> Պատմագիտական գրականության մեջ ասվում է, որ «Օրբեթ»-ը Սամշվիլոե ամրոցի հին անունն է: Սակայն պետք է նկատել, որ Թեռքում «Օրբեթ» անունով կա նաև մեկ այլ բնակավայր, որի շրջակայքում կան կիսավեր բերդեր ու ամրոցներ: Այն գտնվում է Սամշվիլոեից դեպի հյուսիս-արևելք և ոչ մի կապ չունի վերջինիս հետ: Պատմական այդ երկու բնակավայրերը իրարից հեռու են շուրջ 30 կմ և գտնվում են հակառակ ուղղությունների վրա: Մեզ թվում է Օրբեթ բերդի տեղադրությունը Արմազ կոչված լեռան վրա, որ Ստեփանոս Օրբելյանն է նշում իր պատմության մեջ (տե՛ս Ս. Օրբելյան, Սյունիքի պատմություն, ներածությունը և ծանոթագրությունները Ա. Ա. Աբրահամյանի, Եր., 1986, էջ 301 և 505-506), որքան էլ սխալ լինի, չպետք է նույ-

«Օրբեթցիներ»: Ամրոցը կոչվել է նաև «Օրբի»: Իսկ «Օրբի» նշանակում է «բազեների երկիր»: Իշխաններին իրենց բնակատեղիների անուններով կոչելը հնում եղել է սովորույթ: Այսպիսով, «Ճենուլք» կոչված տոհմը այստեղ կոչվել է «օրբուլք»:

Պատմագիտության մեջ հայտնվել է նաև այն կարծիքը, որ այս «օրբուլները», որ ճենաց աշխարհի<sup>25</sup> թագավոր ճենբակուրի փախստական ժառանգներից էին, սերել են Մամիկոնյաններից, և նրանք Գուգարքում հաստատված ու քաղկեդոնականությունը ընդունած Մամիկոնյանների մի ճյուղն են եղել:

Օրբելիանիները քաջ մարդիկ էին, նրանք Վրաստանի հարավային սահմանները ազատագրեցին պարսիկներից ու նեցուկ եղան երկրին, որից հետո վրաց աշխարհում դարձան սպարապետներ ու զորագլուխներ: Վրաց առաջին թագավոր Փառնավազի օրոք Օրբելիանիները ավելի մեծ պատվի արժանացան: Եվ այսպես, այդ տոհմը Վրաստանում բազում մեծագործություններ է կատարում և թագավորական պալատում բարձր դիրքեր զբաղեցնում: Եվ նրանց այդ դիրքը շարունակվում է մինչև վրաց Գեորգի Գ թագավորը (1156-1184), որը նախանձից դրդված, այդ տոհմը գրեթե ամբողջությամբ վերացնում է վրաց աշխարհից, նրանց հերոսական անունները ջնջում իրենց պատմության էջերից ու ժամանակագրություններից<sup>26</sup>:

---

նացնել Սամշվիլդեի հետ: Ստ. Օրբելյանը, որ այնքան մանրակրկիտ ու հավաստի է տալիս իր տոհմաճյուղի պատմությունը, շատ լավ է իմացել և Սամշվիլդե, և Օրբեթ բերդերի տեղերը, և նա, թվում է, սխալվել չէր կարող: Եթե Սամշվիլդե ժամանակին կոչվել է նաև Օրբեթ, ապա պատմիչն իր մատյանի համապատասխան էջերում կնշեր այդ մասին: Այնինչ, նա այդ երկու տեղանուններն էլ իր գրքում օգտագործել է և չի նույնացրել: Սա գիտական լուրջ խնդիր է և պետք է պատմագիտության մեջ ունենա իր վերջնական ու ճիշտ պատասխանը:

<sup>25</sup> Հայ պատմագրության մեջ կա նաև այն տեսակետը, որ «ճենաց աշխարհ»-ը ոչ թե Չինաստանն է, այլ Տայքի մոտ գտնվող ճանիքը, ուր ժամանակին ապրում էին ծաները: Ավանդության մեջ ճենք ասելով հասկանում էին ոչ թե հեռավոր չինացիներին, այլ հարևան ծաներին, որոնք ապրում էին Մամիկոնյանների տոհմական կավածքից՝ Տայքից ոչ հեռու: Ըստ հորեմացու վկայության, հայերը ճաներին կոչում էին ճան, ճանի-ք, այժմ՝ Ջանիք: Մամիկոնյանների տոհմական հատկությունները՝ դյուրաբորբոք խառնվածքը և արտասովոր քաջությունը ցույց են տալիս, որ նրանք ավելի շուտ ազգակից են դեռևս Ձ դարում իրենց ռազմատենչությամբ աչքի ընկնող ծաներին, քան հեզաբարո չինացիներին: Այս լուսաբանությամբ Մամիկոնյանների մասին եղած զրույցը պատմական հիմք է ձեռք բերում: Վրաստանի Օրբելյան իշխանները ևս իրենց նախահայրերին որոնում էին ճենաց աշխարհում, և որ նրանց մոտ էլ հանդես է գալիս ճենբակուրը (տես Ն. Աղոնց, Հայաստանը Հունաստանի հարաշրջանում, Երևան, 1987, էջ 448):

<sup>26</sup> Օրբելիանիների տոհմաճյուղի պատմությունը մանրակրկիտ կերպով տես Ստ. Օրբելյանի «Սյունիքի պատմություն» գրքում (էջ 301-343): Ի դեպ, այնտեղ տրված է նաև թե ինչպես են Օրբելիանիները բաժանվել երկու ճյուղի՝ հայ և վրաց, ներկայացվում է հայ Օրբելյանների տոհմաճյուղի առաջացման ու բարգավաճման

Օրբելիանիները, սկսած ամիրսպասալար Սմբատից (1130-ական թթ.), նաև խնամհիական կապերի մեջ են եղել վրաց թագավորների և հայ Կյուրիկյանների հետ: Նրանք ևս Բագրատունիներ էին: Նրանց կառուցած բերդերն ու ամրոցները գտնվում են Խրամի խորունկ կիրճերում, ինչպես նաև ներկայիս Օրբեթ գյուղի շրջակայքում, որը վաղնջական ժամանակներից եղել է նրանց տիրույթը: Այստեղ իր վեհությանը աչքի է ընկնում Խելեթի (Խուլլութի) ամրոցը, որն հիմնադրվել է XVII դ. երկրորդ քառորդում, Ղափլան Օրբելիանի իշխանի կողմից՝ նրա տոհմի Հայաստանում գտնվող ճյուղի իշխանների նվիրատվությամբ, որը վերջիններս արել էին իրենց երբեմնի տիրույթներում գտնվող Փիթարեթի ամրոցը վերականգնելու և նորոգելու համար: Սակայն Ղ. Օրբելիանին անհրաժեշտ ու կենսական է գտնում կառուցել նոր ամրոց ու եկեղեցի, քան վերականգնել հինը: Նոր ամրոցը կառուցելուց հետո նա նոր միայն ձեռնամուխ է լինում Փիթարեթի հոյակերտ կոթողի վերանորոգչական աշխատանքներին, որը կառուցվել է ս. Աստվածածնի հիշատակին վրաց Գեորգի Դ թագավորի (1213-1222) օրոք:

Թռեղքի մյուս պատմաճարտարապետական հուշարձանը Գուդարեխի մենաստանն է, որի կառուցման գեղատեսիլ վայրը ընտրել է վրաց թագուհի Ռուսուդանը (1222-1245): Լեռնային վճիռ գետակը, հորդ ու սառնորակ աղբյուրը, հարուստ բուսականությունը և անտառապատ լեռները վանքին տալիս են մի առանձին հմայք: Սա ևս շրջափակված է հաստաբեստ պարիսպներով, ունի մի շարք կառուցապատումներ, զանգակատուն, պալատներ, մառաններ և այլն, որոնց փլատակներն են արդ մնացել: Գուդարեխի վանքը կառուցվել է XIII-XIV դարերում, վրաց Դեմետրե Անձնուրաց թագավորի (1271-1289) օրոք: Նրա զանգակատունը կանգնեցվել է 1278 թ.: Վանքն անխափան գործել է մինչև XVIII դարը, որից հետո միայն այն ավերվել է օտար նվաճողների կողմից:

Իր հնությանը ու գեղեցկությանը աչքի է ընկնում նաև Զխվիթի ս. Երրորդություն եկեղեցին, որը կանգնած է բարձրաբերձ ու կոնաձև մի լեռան վրա: Ոլորապտույտ ու դժվարանցանելի արահետը լեռան լանջով տանում է դեպի վանքը, որտեղից բացվում է մի գեղատեսիլ տեսարան՝ Ալզեթ և Խրամ գետերի համայնապատկերով: Այդ վանքն, ըստ երևույթին, կառուցվել է XIII դարում, չնայած նրա շուրջը կան ավելի վաղ և ուշ միջնադարյան կառուցապատումներ: Վեհանիստ է և Փարցխիս գյուղի մոտ գտնվող ամրոցը, որի պա-

---

պատմությունը, ապա և ցույց է տրվում, թե Վրաստանում նրանց տոհմը վերացվելուց հետո կրկին ինչպես է վերականգնվել ու բարձր աստիճանների հասել և նորից տիրացել իր հին տիրույթներին Թռեղքում:

րիսպների բարձրությունը տեղ-տեղ հասնում է 12 մետրի: Այն կառուցվել է X-XI դարերում:

Թռեղքի հարավարևելյան տարածքում աչքի են ընկնում նաև Մեծ Թոնեթի ս. երրորդություն (X-XI դդ.), Մեծ Կլեբիսի (XI դ.) և այլ վանքեր ու եկեղեցիներ, որոնք կանգուն են մինչև այսօր:

Ծալկայի սարահարթը և Թռեղքի հարավ-արևմտյան փեշերը ևս անցյալում եղել են խիտ բնակեցված: Այդ են վկայում պահպանված պատմական հուշարձաններն ու հնագույն բնակատեղիները: Ի դեպ, Ծալկա անունը ծագել է Թռեղքի պատմական «Ծաղկա» («Ծաղկեայ») հայերեն անվանումից<sup>27</sup>: Ծալկան անցյալում հայտնի է եղել որպես հանգստավայր, ուր գտնվել է Սաբդիաշխո հայտնի ամառանոցը: Վերին Ծալկայում են գտնվում նաև մեգալիթյան Ծղուրվեթ ու միջնադարյան Ռեխա քաղաքները: Վերջինս կառուցվել է տարանցիկ կարևոր ճանապարհների խաչմերուկում: Այստեղից լեռների միջով մի ճանապարհի տանում է դեպի Բորժոմի կիճը և Մեխիեթ, իսկ մյուսը՝ Շավմաբաղի ստորոտով դեպի Ջավախքի սարահարթը և դուրս է բերում Սև ծովի առափնյա շրջանները:

Հնում Ծալկայում հայտնի է եղել Բագվաշիների տոհմը, որը շուրջ 300 տարի իշխել է Թռեղքում: IX դարի երկրորդ կեսին նրանցից սերած Լիպարիտ իշխանը, որ Արևելքում հայտնի քաղաքական-պետական գործիչ էր ու զորավար: Ծալկայում, Կլեբկարի (Վինադուռ) կոչվող ամրակուռ ու անմատչելի լեռնանցքում կառուցում է իր ամրոցը, որը թշնամիների համար դառնում է մի անանցանելի պատնեշ: Հետագայում նրա ժառանգորդները կոչվել են Լիպարիտյաններ և XII դարում իշխել են նաև Կյուրիկյանների Սամշվիլոե բերդաքաղաքին:

---

<sup>27</sup> Թռեղքի հին անունը «Ծալկա» ձևով առաջին անգամ թարգմանվել է XII դարում «Քարթլիս ցխովրեբա» ժամանակագրությունից, որը և հասել է մինչև մեր օրերը: Այդ անունն այժմ վրաց գիտնականները այլ կերպ են մեկնաբանում: Նրանցից մեկը՝ Գ. Ի. Ջարդալիշվիլին գտնում է, որ «Ծալկա» տեղանունը ծագել է վրացերեն «ժալեկվա» բառից, որը թարգմանվում է՝ ողողում, քշում, տանում (տե՛ս նրա «Աշխարհագրական անունների բացատրություն» գիրքը (վրացերեն), Թբիլիսի, 1965, էջ 146: Ըստ երևույթին նա նկատի է ունեցել Խրամ գետի՝ զարնանային հորդացումների ընթացքում տեղանքում առաջացած հեղեղումներն ու ավերածությունները: Սյուն հեղինակը՝ Կ. Խարաձեն, գտնում է, որ այն ծագել է Գուրիայում աճող «ժալիկե» բույսի անունից (տե՛ս «Մացնե»-2, էջ 71): Սակայն հարգարժան գիտնականը մոռանում է, որ Ծալկայի սարահարթը Գուրիայից շատ է հեռու և այնտեղ այդպիսի բուսատեսակ չի աճում, ուստի և նրա բացատրությունը անհիմն ու անտրամաբանական է: «Ծալկա» տեղանունն, իրոք, առաջացել է հայերեն «ծաղկոց-ծաղկեայ» բառերից, ինչպես ճիշտ կերպով մեկնաբանում է Ս. Տ. Երեմյանը (տե՛ս նրա «Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի» գիրքը, Երևան, 1963, էջ 54): Այս անունը նույն ձևով իր պատմության մեջ հիշատակում է վրաց նաև մատենագիր Ջուանշիրը:

Մյուս հնագույն կառույցն այստեղ Ծալկայի ամրոցն է՝ հայտնի իր պաշտպանական ջրամբարներով ու ջրանցքներով: Դարեր շարունակ Ծալկայում են իշխել Սաբարաթինոյի կառավարիչները, այստեղ են իրենց ամառային հանգիստն անցկացրել Գուգարաց աշխարհի բղեշխները: Այս վայրերում հանգստացել է նաև վրաց Վախթանգ VI թագավորը (1703-1724) և անվանի աշխարհագետ Վախուշտի Բագրատիոնին (1696-1757): Վերջինս 1717-1724 թթ. եղել է նաև Ներքին Քարթալինայի կառավարիչը՝ նստավայր ունենալով Ծալկայի այժմյան Դաշբաշ (հնում՝ Ախալքալաք) ավանը:

Թռեղքում ու նրան մերձակա շրջաններում կան բազմաթիվ այլ կիսավեր հուշարձաններ ու լքված բնակատեղիներ, որոնց մասին բավարար տեղեկություններ չունենք, ուստիև դրանց չենք անդրադառնում: Այդ ամենն այսօր վկայում են, որ այս լեռնաշխարհը դարեր շարունակ եղել է օտար նվաճողների արշավանքների թատերաբեմ: Այն մեծապես տուժել է XVIII դարի առաջին կեսին լեզգիների ու թուրքերի անընդմեջ հարձակումներից: Նրանց ավարառությունների ու գերեվարությունների հետևանքով գրեթե ամբողջությամբ դատարկվել ու ամայացել է երբեմնի այդ շեն ու ծաղկուն երկրամասը: Հետագայում, XVIII դարի վերջերին և XIX դարի սկզբներին Թռեղքը նորից է վերաբնակեցվել և կրկին դարձվել Վրաստանի գեղատեսիլ անկյուններից մեկը:

Այսպիսով, Թռեղքի լեռնաշխարհը Գուգարքի կազմում վաղնջական ժամանակներից եղել է հայերի ու վրացիների օրրան: Այն իր ավելի քան երկհազարամյա գոյության ընթացքում մերթ եղել է Հայաստանի ու մերթ էլ Վրաստանի կազմում և կարևոր դեր է խաղացել հայ և վրաց ժողովուրդների բարեկամության ու զինակցական դաշինքի ամրապնդման, նրանց տնտեսական, հասարակական-քաղաքական և մշակութային կյանքի աշխուժացման ու բարգավաճման գործում: Թռեղքում դարեր շարունակ հայերն իրենց մեծ լուսման են ներդրել պատմաճարտարապետական ու նյութական այլ հուշարձանների կերտման ասպարեզում, որոնց մի զգալի մասը կանգուն է առ այսօր և կարոտ է հոգատար վերաբերմունքի ու գիտական լուրջ ուսումնասիրության:

# ՊԱՏՄԱԿԱՆ ԹՈՒՂՔԻ ՆԵՐԿԱՆ\* (Համառոտ ուրվագիծ)

*Վահան ՄԱՂԱԼՅԱՆ  
բանասիրական գիտությունների թեկնածու*

## 1

Գուգարաց աշխարհի գեղատեսիլ թռեղք<sup>1</sup> գավառը ներկայումս Ներքին Քարթալինայի մի մասն է կազմում, որը, գտնվելով հյուսիսային լայնության 41° - 42°-ի և արևելյան երկարության 44° - 45°-ի միջև ու ներառելով թեթրիծղարոյի և Ծալկայի վարչական շրջանները, զբաղեցնում է 2224,5 կմ<sup>2</sup> տարածք: Պետք է նկատել նաև, որ թեթրիծղարոյի շրջանի տարածքի մի զգալի մասը նախկինում թռեղքից մասնատված Մանգլեաց փոքր գավառն է պատկանել, իսկ հարավ-արևելքից նրա մեջ մտնող մասը, որ Խրամ և Ալգեթ գետերի ստորին միջագետքն է, հնում Վրաց դաշտի կամ Սոմխիթի տարածաշրջանն է եղել: Իսկ Ծալկայի շրջանն այժմ զբաղեցնում է բուն թռեղքի հիմնական մասը<sup>2</sup>:

---

\* Հոդվածն արտատպվում է «Հանդես Երևանի համալսարանի» գիտահնփոր-մացիոն լրատուից (N 2 (97), Երևան, 2000, էջ՝ 61-82):

<sup>1</sup> Թռեղքի լեռնաշխարհի անցյալի պատմությանը մենք անդրադարձել ենք մեր «Պատմական թռեղքի անցյալից» հոդվածում, որը տպագրվել է սույն հանդեսի նախորդ համարում (տե՛ս «Հանդես Երևանի համալսարանի», 2000 թ., N 1, էջ 40-58):

<sup>2</sup> Ս. Տ. Երեմյանի «Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի» գրքում (տե՛ս էջ 54) թռեղքի մակերեսը նշված է 2195 կմ<sup>2</sup>, իսկ երբեմնի նրա ամբաժան մասը կազմող Մանգլեաց փոքրինը՝ 925 կմ<sup>2</sup>, որոնք միասին կազմում են 3120 կմ<sup>2</sup>: Այդ երկու գավառների տարածքների վրա ներկայումս կազմավորված են Ծալկայի և Թեթրիծղարոյի շրջանները, որոնք համապատասխանաբար ունեն 1050,1 կմ<sup>2</sup> և 1174,4 կմ<sup>2</sup> մակերեսներ և միասին կազմում են 2224,5 կմ<sup>2</sup>, այնինչ, ըստ վերոհիշյալ մակերեսների, դրա փոխարեն պետք է ունենային 3120 կմ<sup>2</sup> տարածք: Հարց է ծագում. իսկ ո՞ւր մնաց 896 կմ<sup>2</sup>-ը: Հեղինակն իր հաշվարկների մեջ արդյոք պատմական թռեղքի տարածքի մասն հանդիսացող Մանգլեաց փոքրի 925 կմ<sup>2</sup> մակերեսը և ներառել է 2195 կմ<sup>2</sup>-ի մեջ, թե ոչ: Եթե՛ այո, ապա ամեն ինչ ճիշտ է, իսկ եթե ոչ, ապա թռեղքի ընդհանուր տարածքից այսօր պակասում է 896 կմ<sup>2</sup> մակերես, որը, ըստ երևույթին, տարբեր ժամանակներում կցվել է հարևան շրջաններին, հատկապես Դմանիսի շրջանին, որը կազմավորվել է պատմական Կանգարքում: Սակայն նրա մակերեսը, ըստ «Աշխարհացոյց»-ի, անցյալում եղել է ընդամենը 305 կմ<sup>2</sup>, իսկ ներկայումս 1206 կմ<sup>2</sup> է: Հարց է ծագում. որտեղի՞ց է նրա այդ տարածքին ավելացել

Այդ երկու՝ մեկը մյուսի շարունակությունն հանդիսացող վարչական միավորները այժմ արևելքից սահմանակից են Գարդաբանի, հյուսիս-արևելքից՝ Մցխեթի ու Կասպիի, հյուսիսից՝ Գորիի, հյուսիս-արևմուտքից՝ Բորժոմի, հարավ-արևմուտքից՝ Ախալքալաքի և Նինոծմինդայի (նախկին Բոգդանովկայի), հարավից Դմանիսի և Բուլնիսի, հարավ-արևելքից՝ Մամնեուլի (նախկին Բորչալուի) շրջաններին: Նրա միջին բարձրությունը ծովի մակերևույթից շուրջ 1900 մետր է:

Ծալկայի և Թեթրիժարոյի շրջանների տարածքները ի սկզբանե բնակեցված են եղել հայերով ու վրացիներով: Վախուշտի Բագրատիոնի կողմից 1721թ. կատարված հաշվառման համաձայն, քարտեզներով ու գոյություն ունեցող այլ սկզբնաղբյուրներով այժմյան Թեթրիժարոյի շրջանի տարածքում եղել են 186 գյուղեր, որոնք հետագա դարերում տեղի ունեցած արյունալի պատերազմների ու ավերիչ արշավանքների հետևանքով ամայացել են, և դրանց բնակիչները զոհվել կամ ցրվել են Վրաստանի ու Հայաստանի խորքերում: Այդ 186 գյուղերից 124-ը ներկայումս գոյություն չունեն: Սակայն սա լրիվ պատկերացում չի տալիս շրջանի տարածքի անհետ վերացած մյուս գյուղերի մասին, որոնց անուններն ու ավերակներն են միայն մեզ հասել<sup>3</sup>:

Ռուսաստանի հետ Վրաստանի միավորվելը (1801 թ.) առաջադիմական կարևոր նշանակություն ունեցավ: Ընդհատվեցին դարեր ի վեր մշտական դարձած պատերազմներն ու հարձակումները, աստիճանաբար վերացավ երկրի քաղաքական մասնատվածությունը, և Վրաստանի պատմական տարածքները միավորվեցին, ապահովվեց նրա սահմանների անվտանգությունը, վրաց ժողովուրդը մասնակից դարձավ ինքնակալության և ճորտատիրության դեմ ռուս և ռուսական կայսրության մեջ մտնող մյուս ժողովուրդների միասնական պայքարին: Այդ ամենը նպաստավոր պայմաններ ստեղծեցին երկրի տնտեսական, հասարակական-քաղաքական կյանքի ու մշակույթի առաջընթացի համար<sup>4</sup>:

Այդ ժամանակ Վրաստանի հետ մեկտեղ Ռուսաստանին են անցել նաև Լոռվա մեծ մասը (պատմական Ծոբոփոր, Ձորոփոր և Կողբոփոր գավառները), Կանգարքը, Քուիշափորը (Ավազաձոր), Բող-

---

901 կմ<sup>2</sup>-ը: Մեզ թվում է, դա հենց այն 896 կմ<sup>2</sup> է, որ այսօր պակասում է Թեղքի ընդհանուր մակերեսից: Եվ իրոք, եթե ընդունենք, որ պատմական Կանգարքը, Թեղքը և Սանգվեաց փորը միասին ունեցել են՝ 305+2195+925= 3425 կմ<sup>2</sup>, ապա այժմ այդ նույն գավառների տեղում ձևավորված Դմանիսի, Ծալկայի և Թեթրիժարոյի շրջանները միասին ունեն 1206+1050,1+1174,4=3430,5 կմ<sup>2</sup> տարածք: Ինչպես տեսնում ենք, հիշյալ գավառների անցյալի և ներկայի ընդհանուր մակերեսների գունարը գրեթե նույնն է: Իսկ ինչ վերաբերում է 5,5 կմ<sup>2</sup> տարբերությանը, ապա դա Դմանիսի շրջանին է անցել, ըստ երևույթին, պատմական Տաշիրի տարածքից:

<sup>3</sup> Վ. Ա. Գոնգաձե, Թեթրի-Ծղարո (նրա ոչ հեռու անցյալը և ներկան), վրացերեն, Թբիլիսի, հրատ. «Սաբճոթա Սաբարթվելո», 1959, էջ 18-25:

<sup>4</sup> Վրաստանի պատմություն, Թբիլիսի, 1986, էջ 147-148:

նուփորը, Ջավախքը, Խանցիխեն ու Պարուարը և Թռեղքը Մանգլեաց փորի հետ մեկտեղ: Ռուսաստանին անցած այդ տարածքները շուտով ենթարկվում են վարչական փոփոխությունների: Կանգարքը կոչվում է Դմանիսի կամ Բաշկիչետ, Քուիշափորը, Բողնուփորը,<sup>5</sup> Ծորուփորը, Չորուփորը մտնում են Թիֆլիսի նահանգի Բորչալուի<sup>6</sup> գավառի մեջ, իսկ Թռեղքը և Մանգլեաց փորը, որ վարչական մեկ միասնություն էին արդեն, ինչպես նաև Խանցիխեն ու Պարուարը, կազմում են Թիֆլիսի նահանգի Թիֆլիսի գավառը: Վերին Ջավախքում հետագայում XIX դարի երկրորդ քառորդում ստեղծվում է Ախալքալաքի գավառը, իսկ Ներքին Ջավախքում՝ Ախալցխայի, որոնք ևս մտնում են Թիֆլիսի նահանգի մեջ<sup>6</sup>:

Գրեթե ամայացած ու անմարդաբնակ դարձած այդ երկրամասը հիմնականում վերաբնակեցվել է Ռուսաստանի հետ միավորվելուց հետո միայն, երբ իսպառ վերանում են Պարսկաստանի ու Թուրքիայի, ինչպես նաև Կովկասի լեռնականների ու Ադրբեջանի էմիրների կողմից դեպի Արևելյան Վրաստան ու Հյուսիսային Հայաստան հաճախակի կազմակերպվող արշավանքները:

Թռեղքը Մագլեաց փորի հետ մեկտեղ նույնպես վերաբնակեցվել է այդ շրջանում: Վերակենդանացել է պատմական կարևոր նշանակություն ունեցող, սակայն միջնադարում ավերակների վերածված նրա երբեմնի շեն քաղաքների ու գյուղերի մի փոքր մասը միայն:

Նորաստեղծ այդ բնակավայրերը կարելի է բաժանել երեք հիմնական խմբի. 1. Բնակավայրեր, որոնք հիմնադրվել են հնագույն քա-

---

<sup>5</sup> «Բորչալու» տեղանունը նախապես եղել է ցեղանուն: Դա թաթար-մոնղոլական այն ցեղի անունն է, որը Դմանիսից մինչև Թիֆլիսի մատույցները մշտական բնակություն է հաստատել, և այդ երկրամասը հետագայում կոչել է իր անունով՝ Բորչալու: Նույնը կարելի է ասել նաև Ղազախի շրջանի մասին, որը դարձյալ կրում է ցեղի անունը: «Ղազախ» ցեղը թուրքացած մոնղոլական-ուզբեկական ցեղերի ճյուղերից է, որի մի մասը վրաց Գեորգի Բ թագավորի (1072-1089) օրոք զաղթեցվում և բնակեցվում է Հայաստանի հյուսիսային շրջաններում: Հետագայում այդ ցեղանունից առաջացել է Գագ գավառի և նրա կենտրոն խաղխաղ քաղաքի նոր անունը՝ Ղազախ: Թե «բորչալու» և թե «ղազախ» ցեղերը պատկանում են «ղզլբաշ» 15 ցեղերի թվին:

<sup>6</sup> Խորհրդային կարգեր հաստավելուց հետո Գուգարաց աշխարհի այդ գավառների տարածքներում ստեղծվում են հետևյալ շրջանները. Կանգարքում և Թռեղքի մի մասում՝ Դմանիսի, Քուիշափորում ու Բողնուփորում՝ Բոլնիսի, Ծորուփորում՝ Մառնեուլի, Խանցիխեում ու Պարուարում՝ Գարդաբանի, Վերին Ջավախքում՝ Ախալքալաքի ու Բոզդանովկայի (այժմ՝ Նիոտոմինդայի), Ներքին Ջավախքում՝ Ախալցխայի և Ասպինձայի: Իսկ պատմական Թռեղքում և նրա անբաժան մասը կազմող Մանգլեաց փորում՝ ստեղծվում են Ծալկայի և Աղբուլաղի (ներկայումս՝ Թեթրիծղարոյի) շրջանները: Հայաստանի Հանրապետության Ստեփանավանի և Կալինինոյի (այժմ՝ Տաշիրի) շրջանները ներկայումս զբաղեցնում են պատմական Տաշիրի, իսկ Թունանյանի և Նոյեմբերյանի շրջանները, ինչպես և Ադրբեջանի Ղազախի շրջանի մի զգալի մասը՝ Ծորուփորի և Կողբուփորի տարածքները: Չորուփորը իր տարածքով համարյա համընկնում է Կարմիրի և Իջևանի շրջաններին: Իսկ Կղարջքը, Արտահանը և Շավչեթը, ինչպես և Ներքին Ջավախքի մի մասը այժմ մտնում են Թուրքիայի տարածքի մեջ:

ղաքների ավերակների տեղում, 2. Բնակավայրեր, որոնք հիմնադրվել են նշանավոր գյուղատեղիներում և 3. Արևմտյան Հայաստանից գաղթած հայերի և հույների կողմից հիմնադրված բնակավայրեր:

Առաջին խմբին են պատկանում Մանգլիսը, Ասուրեթը, Սամշ-վիլդեն, Օրբեթը, Ծինծղարոն, Թեթրիծղարոն (նախկին Գարիսը), Կուսիսը և այլն: Երկրորդ խմբի մեջ են մտնում շրջանի մյուս գյուղերը, որոնք հիմնադրվել են XVIII-XIX դարերում: Իսկ երրորդ խմբի բնակավայրերը հիմնադրվել են հիմնականում XIX դարի առաջին կեսին Ծալկայի սարահարթում, և որոշ հունական գյուղեր էլ՝ Թեթրիծղարոյի շրջանում:

Հիշյալ բնակավայրերը ևս, ըստ բնակչության ազգային կազմի, նույնպես բաժանվում են առանձին ենթախմբերի. ա) Միայն վրացական բնակավայրեր, բ) Արդեն վրացախոս դարձած հայաբնակ գյուղեր<sup>7</sup>, գ) Ջուտ հայկական բնակավայրեր, դ) Օսական բնակավայրեր, ե) Խառն ազգաբնակչությամբ բնակավայրեր, հիմնականում հայերով ու վրացիներով բնակեցված, զ) Ռուսական բնակավայրեր, է) Աղրբեջանական գյուղեր և ը) Հունական բնակավայրեր, որոնց թվում՝ նաև հայերեն խոսող հունաբնակ գյուղեր:

Այսպիսով, Թռեղքի լեռնաշխարհը, որ այժմ ունի երկու վարչական միավոր. արևելքից՝ Թեթրիծղարոյի, իսկ արևմուտքից՝ Ծալկայի շրջանները, վաղնջական ժամանակներից հայտնի է եղել որպես մարդու բնօրրան: Այստեղ կան բազմաթիվ բնակավայրեր, որոնց տարիքը հաշվվում է հազարամյակներով: Մի շարք գյուղեր ու ավաններ էլ հիմնադրվել են վերջին երկու-երեք հարյուրամյակների ընթացքում: Սակայն մեր խնդիրը չէ՝ տալ դրանց բոլորի պատմությունը<sup>8</sup>: Մենք այստեղ հիմնականում ներկայացնելու ենք այն քաղաքների ու գյուղերի հակիրճ պատմությունը, որոնք մեզ են հասել միջնադարից, ինչպես նաև վրացախոս հայաբնակ և զուտ հայաբնակ գյուղերի ոչ վաղ անցյալի ու ներկայի պատկերը:

---

<sup>7</sup> Ի դեպ, այս երևույթը նկատելի է ոչ միայն Թռեղքի տարածքում, այլև հարևան Դմանիսի, Բոլնիսի, Մառնեուլի, Գարդաբանի, Մցխեթի, Կասպիի, Գորիի ու Դուշեթի շրջաններում և Կախեթում, որոնց գյուղերի ու քաղաքների բնակչության մի մասը ժամանակին եղել են հայեր և, հետագայում, առավելապես խորհրդային կարգերի օրոք, աստիճանաբար մոռանալով իրենց մայրենի լեզուն, այժմ խոսում են վրացերեն:

<sup>8</sup> Դրանցից մի քանիսի մասին խոսվել է մեր նախորդ հոդվածում: Մենք այստեղ հիմնականում ներկայացնում ենք այն հայկական բնակավայրերի համառոտ պատմությունը, որոնք ներկայումս գոյատևում են Թռեղքում: Ի դեպ, այստեղ Թեթրիծղարոյի շրջանի հայկական, վրացախոս հայկական և հայախառն բնակավայրերի մասին օգտագործված նյութերի մի մասը ժամանակին տպագրվել է «Հայկական սովետական հանրագիտարանի» ու «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանի» բազմահատորյակներում: Դրանք մենք կրկին վերանայել, ճշգրտել և հարստացրել ենք պատմական մոր տեղեկություններով ու փաստերով:

Սկսենք **Թեթրիծղարոյի շրջանից**, որի տարածքը հարուստ է բերրի վարելահողերով, փարթամ անտառներով ու սառնորակ աղբյուրներով, բարձրադիր մարգագետիններով ու արոտավայրերով: Ունի մեղմ ու առողջարար կլիմա, լայն հնարավորություններ՝ անասնապահության, հացահատիկային ու բանջարաբուստանային կուլտուրաների մշակության և այգեգործության համար: Այստեղ ժամանակին զարգացած են եղել նաև ծխաբուծությունը, մեղվապահությունը, շերամապահությունն ու ծխախոտագործությունը:

Թեթրիծղարոյի շրջանը Վրաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց առաջ մտել է Թիֆլիսի նահանգի Թիֆլիսի գավառի մեջ, 1921-1929-ին կազմել է Թիֆլիսի մարզի մասը, 1930-ից կոչվել է Աղբուլաղի, իսկ 1940-ից՝ Թեթրիծղարոյի շրջան, որի կենտրոնը մինչև 1940 թ. եղել է Աղբուլաղը, որը 1940-ից վերանվանվել է Թեթրիծղարո: Ներկայումս շրջանն ունի 78 բնակավայր, որոնցից մեկը՝ քաղաք՝ Թեթրիծղարոն, իսկ մյուսը՝ քաղաքատիպ ավան Մանգլիսը: Մնացած բնակավայրերը ավաններ ու գյուղեր են, որոնցում հիմնականում բնակվում են վրացիներ, հայեր, հույներ, օսեր, ռուսներ ու ադրբեջանցիներ: Վրացական գյուղերի թիվն հասնում է շուրջ 20-ի, որոնցից են Ախալսոփելին, Ասուրեթը, Չխիկվթան, Փարցխիսը, Ալգեթը, Մեծ և Փոքր Կղեխսները, Ճիվճավը, Շեխվետիլան, Ցխնառը, Շախշավդարը, Գոլթերը, ճալան, Պանտիանը, Խոպիսը, Խախշը և այլն, օսական գյուղերն են՝ Վերին և Ներքին Ախալշենները, Իփնարը, Դմանիսը, Լիպան, Մենկալիսը, Փիթարեթը, Վերին և Ներքին Քալափները, հունական են՝ Ծինծղարոն, Մեծ և Փոքր Իրագաները, Ջիգրաշենը, Իվանովկան, Աբելիանը, հայկական գյուղերն են՝ Կոդան, Մուխաթը, Մարաբդան, Վաշլեվանը, Մեծ և Փոքր Էնագեթները, Էրտիսը, Բորբալոն, Բոզվին, Մածեվանը, Սաղարաշենը, Արտիսուբանը, Մեծ և Փոքր Թոնեթները, Կումիսը, ռուսական բնակավայրերն են Ալեքսեևկան, Թեթրիծղարոն և Մանգլիսը (վերջին երկուսն այժմ՝ խառն ազգաբնակչությամբ): Շրջանն ունի նաև երկու ադրբեջանական գյուղ, որոնցից մեկը Շիխիլոն, գտնվում է շրջկենտրոնից 8 կմ հարավ-արևմուտք, հայկական Սամդրեթ գյուղի հարևանությամբ, իսկ մյուսը՝ Քյոսալարը, գտնվում է շրջկենտրոնից շուրջ 10 կմ և Դաղեթ-Խաչեն հայկական գյուղից շուրջ 3 կմ հարավ-արևելք, Խրամ գետի ձախ ափին:

Շրջանի վարչական կենտրոն **Թեթրիծղարո** քաղաքը հիմնադրվել է Թրիալեթի լեռնաշղթայի հարավային փեշերին, XIX դարի առաջին քառորդում, և կոչվել է Բելի-Կլուչ (Սպիտակ աղբյուր): 1930 թ. նույնանուն շրջանի վարչական կենտրոնն է, 1966-ից դասվել է քաղաքների շարքը, գտնվում է Թբիլիսիից 59 կմ հարավ-

արևմուտք, իսկ Մառնեուլի երկաթուղային կայարանից՝ 29 կմ հյուսիս-արևմուտք, ծովի մակերևույթից բարձր է 1180 մ, երկաթուղային կայարան է Թբիլիսի-Մարաբդա-Ծալկա-Նինոսմինդա-Ախալքալաք գծի վրա, այստեղով են անցնում նաև Թբիլիսի-Մառնեուլ-Ծալկա-Նինոսմինդա, Թբիլիսի-Կոդա-Ասուրեթ-Ծալկա-Նինոսմինդա ճանապարհները, ներկայումս ունի շուրջ 10 հազար բնակչություն՝ ռուս, հայ, վրացի, օս և հույն: Այստեղ գործում են կաթնամթերքների վերամշակման, քաղցրահամ ջրերի, պահածոների և հացի գործարաններ, գավառագիտական թանգարան, մշակույթի տուն, երկու կինոթատրոն, միջնակարգ դպրոցներ, հիվանդանոցներ և կենցաղասպասարկման բազմաթիվ օբյեկտներ: Խորհրդային կարգից հաստատվելուց հետո, մինչև Հայրենական մեծ պատերազմը, այստեղ գործել են հայկական միջնակարգ դպրոց, մանկավարժական ուսումնարան, իսկ 1915-1930 թթ. եղել է որբանոց, ուր ապաստանել են Մեծ եղեռնից փրկված հայ որբերը: Նրանցից շատերը հետագայում դարձել են նշանավոր գործիչներ: Ժամանակին Թեթրիծղարոյում տպագրվել են «Կոլխոզային ուղի» (1930-1947 թթ.) շրջանային և «Հանուն սոցիալիստական խոզաբուծության» (1933-1935 թթ.) հայերեն թերթերը: Իսկ այժմ շրջանային թերթը լույս է տեսնում միայն վրացերեն ու ռուսերեն: Այստեղ է սովորել Խորհրդային Միության հերոս Սերգեյ Վարդանի Գրիգորյանը (1923-1943), որի կիսանդրին կանգնեցված է տեղի ռուսական միջնակարգ դպրոցի բակում, ուր կրթություն է ստացել նա և ապա ընդունվել Թբիլիսիի Ա. Ս. Պուշկինի անվան պետական մանկավարժական ինստիտուտ: Իսկ Մեծ Թոնեթ գյուղում ծնված և Թբիլիսիի կապի և հաղորդակցության տեխնիկումն ավարտած մյուս հերոսի՝ Իվանե Գաբրիելի Դեմետրաշվիլու (1910-1945) կիսանդրին դրված է շրջկենտրոնի կապի շենքի բակում, ուր որպես պետ է աշխատել նա ռազմաճակատ մեկնելուց առաջ: Այստեղից են սերունդ նաև նշանավոր մաթեմատիկոս Գարուն Ալեքսանդրի Թումանյանը, արվեստաբան Հենրիկ Իգիթյանը և շատ ուրիշներ:

Ներկայիս Թեթրիծղարո քաղաքը հիմնադրվել է հնագույն Գարիս գյուղի տեղում: Սկզբում եղել է մի փոքրիկ հայկական բնակավայր, որը 1841 թ. ունեցել է 80 բնակիչ (46 տղամարդ և 34 կին) և մեկ ստորին հոգևորական<sup>9</sup>: Արխիվային մեկ այլ վավերագրում նշված է, որ Բելի-Կյուչը 1848 թ. ուներ երկու եկեղեցի՝ մեծ և փոքր, մեծը՝ հին գյուղատեղիում, իսկ փոքրը՝ գերեզմանատանը: Փոքր եկեղեցին դարձվել էր ռուսական զորքի վառողի պահեստ, իսկ մեծ

---

<sup>9</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության պատմության պետական կենտրոնական արխիվ, ֆոնդ 53, ցուցակ 1, գործ 3802, թերթեր 178-179 (այսուհետև՝ ՀՀ ՊՊԿԱ):

եկեղեցին՝ ցորենի պահեստ<sup>10</sup>: Պետք է նկատել, որ հիշյալ եկեղեցիներից մեկը, ըստ երևույթին մեծը, կառուցված է եղել դեռևս XVI դարում, որի խորանի աջ կողմում այդ մասին փորագրված է եղել հայերեն արձանագրություն<sup>11</sup>:

Իսկ ռուսների բնակեցումը ե՞րբ է սկսվել Թեթրիծղարոյում: Այս հարցին պատասխանում են դարձյալ արխիվային վավերագրերը: 1820 թ. այստեղ մշտապես հաստատվում է ռուսական գունդը: Անհրաժեշտություն է առաջանում այդ գնդի համար կառուցել շտաբի շենք և զորանոցներ: Այդ շինարարությունն սկսում են իրականացնել զորքի հատուկ ջոկատները, որոնք կոչվում էին բանվոր-հարյուրյակներ<sup>12</sup>: Այդ զորանոցին առնչվող օժանդակ աշխատողները հիմնում են երկու թաղամաս, որոնցից մեկը կոչվել է Սլաբոդկա (ներկայումս՝ Կոստանտինովկա թաղամասը), իսկ մյուսը, որ հիմնադրվել է ավելի ուշ՝ 1837 թ., կոչվել է Պոսելեննի: Այս վերջինս հենց կառուցվել է նախկին Գարիս գյուղի ավերակների վրա: Նշված երկու թաղամասերում էլ 1821 թ. սկսում են բնակվել ռուսները, որոնք այդ բնակավայրը անվանում են «Բելի-Կյուչ», այսինքն՝ Սպիտակ աղբյուր: Պետք է միաժամանակ նշել, որ Խրամ և Ալգեթ գետերի միջև ընկած հարթավայրում 1820 թ. առաջ Թեթրիծղարո անունով ոչ մի բնակավայր գոյություն չի ունեցել: Այն հիմնադրվել է 1820-21 թթ., նախկին Գարիս գյուղի տեղում<sup>13</sup>, իսկ նրա Բելի-Կյուչ կամ Թեթրիծղարո անվանելու պատճառը եղել է կրաքարերի միջից բխող աղբյուրը, որը գտնվում է գրեթե քաղաքի կենտրոնում, բարձր բլրակի լանջին:

Այդ աղբյուրի ջուրը անձրևի ժամանակ կաթի նման սպիտակում է, որից էլ առաջացել է քաղաքի անունը: Թեթրիծղարոն անվանվել է նաև Աղբուլաղ, որը թուրքերեն դարձյալ Սպիտակ աղբյուր է նշանակում: Այս վերջին անունը նա ստացել է 1829-30 թթ., երբ Արևմտյան Հայաստանից գաղթած հայերն ու հույները բնակություն են հաստատել նրա շրջակայքում: Նրանք չեն կարողացել հստակ արտաբերել «Թեթրիծղարո» անունը, և այն թարգմանաբար անվանափոխել են «Աղբուլաղ» և այդպես իրենց համար հեշտացրել նրա արտասանությունը:

Այսպիսով, Թեթրիծղարո փոքրիկ գյուղը, որ հավասարապես անվանվել է Բելի-Կյուչ և Աղբուլաղ, զնալով ծավալվել, հիշյալ թաղամասերը միավորել ու դարձել է մի մեծ ավան: Արխիվային մի

<sup>10</sup> ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 53, ց. 1, գ. 89, թ. 1:

<sup>11</sup> **Խարզիս Զալալյանց**, ճանապարհորդութիւն ի մեծն Հայաստան, հատ. Բ, Տփլիսի, 1858, էջ 96:

<sup>12</sup> **Վ. Ա. Գոնգաձև**, Թեթրի-Ծղարո, Թբիլիսի, 1959, էջ 53:

<sup>13</sup> Նոյն տեղում, էջ 92-93:

վավերագրով հաստատվում է, որ Բելի-Կյուչը 1839 թ. ունեցել 124 զինվորական ընտանիք՝ 361 ռուս բնակիչներով, որոնցից 233-ը տղամարդ, իսկ 128-ը՝ կին<sup>14</sup>: Փաստորեն հայկական արխիվներում պահպանվող Բելի-Կյուչի վերաբերյալ վավերագրերը ցույց են տալիս, որ ժամանակին դրանցում գրանցվել են միայն հայ ազգաբնակչության տվյալները՝ ծխերի քանակը, դպրոցի և եկեղեցու հետ կապված մյուս փաստերը: Այդ վավերագրերում ռուս և վրաց ազգաբնակչությունների թվական տվյալները չեն բերված, քանի որ նրանք հայկական եկեղեցու և դպրոցի հետ կապ չեն ունեցել: Միաժամանակ պետք է նշել, որ Բելի-Կյուչի հիմնադրման շրջանում այնտեղ վրացի գրեթե չի բնակվել, եղել են հիմնականում հայեր և ռուսներ: Ռուսները մեծամասամբ զորանոցների սպայական անձնակազմի ընտանիքների անդամներն ու օժանդակ ծառայողներն են եղել, չհաշված իսկական ծառայության մեջ գտնվող զինվորների: Ինչևէ, նշենք, որ 1850-ական թվականներին Բելի-Կյուչն ուներ շուրջ 400 հայ և 500 ռուս ու այլազգի բնակչություն<sup>15</sup>:

Հայերն այստեղ ապրել են ինքնավար կյանքով, ունեցել են երկու եկեղեցի, դպրոց, խանութներ, գրադարան և այլ մշակութային օջախներ: 1871 թ. ավանում արդեն սկսում է գործել հայկական արական ծխական դպրոցը, որը 1873-ի հունվարին ունեցել է 1 ուսուցիչ և 13 աշակերտ: Սակայն, ըստ երևույթին, երկար կյանք չի ունեցել, որովհետև այն ցույց չի տրված հայ դպրոցների 1875 թ. ցուցակներում: Հինգ տարի անց, 1881 թ. այն նորից է գործել՝ ունենալով 20 աշակերտ<sup>16</sup>: 1884 թ. Բելի-Կյուչն արդեն ուներ 433 հայ բնակիչ (224 տղամարդ և 209 կին): 1887 թ. Լոռիս-Մելիքյանց տոհմից Նունե Հովհաննեսի Շանշյանցը այստեղ կառուցել է տվել հայկական եկեղեցի: Նա մտադրություն է ունեցել եկեղեցուն կից կառուցել նաև դպրոցի շենք<sup>17</sup>, քանի որ այդ շրջանում փակվել էր հայկական դպրոցը: Ահա թե այդ մասին ինչ է գրում «Արծազանք» լրագիրը. «Աղբուլաղում՝ ըստ այժմու ռուս կոչման Բելի-Կյուչ, ապրում է մոտ 50 տուն հայ: Հոգևոր ծխական դպրոցի պետքը զգալի է այստեղ: Հասարակությունը խոստացել էր տարեկան զումար հատկացնել այդ նպատակին»<sup>18</sup>: Սակայն հայ դպրոցների 1885 թ. ընդհանուր փակման պատճառով այդ դպրոցը ևս չի վերաբացվել: Միայն 1889-ին ավանի հայ բնակչությունը որոշում է վերաբացել դպրոցը: Ամենայն Հայոց կաթողիկոսը 1889-ի սեպտեմբերի 20-ի N 487 կոնդակով վրաստանի թեմի հա-

<sup>14</sup> Կ. Ա. Գոնգաձե, Թեթրի-Շղարո, Թբիլիսի, 1959, էջ 83:

<sup>15</sup> ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 35, ց. 1, գ. 98, թթ. 38-39:

<sup>16</sup> Կ. Ա. Խուղդյան, Արևելահայ դպրոցները 1830-1920 թթ., Եր., 1987, էջ 600:

<sup>17</sup> ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 56, ց. 3, գ. 357, թթ. 36-37:

<sup>18</sup> «Արծազանք», Թիֆլիս, 1884, հոկտեմբեր, էջ 599:

յոց առաջնորդին իրավունք է տվել Աղբուլաղ ավանում (իմա՝ Բելի-Կյուլ) բաց անելու եկեղեցական ծխական արրական միդասյան դպրոց<sup>19</sup>։ 1893 թ. այդ դպրոցն սկսում է գործել, որը երրորդ կուպարի էր, ուներ մեկ բաժանմունք և հիմնվել էր ժողովրդի միջոցներով։ Շենքը եկեղեցական էր, բաղկացած էր երեք սենյակից, ուսուցիչն էր Արամ Իսահակյանը, որն ավարտել էր Ներսիսյան դպրոցը։ Դպրոցի տարեկան ծախսը կազմում էր 347 ռուբլի։ Յետագայում, 1894-95 ուստարում այստեղ ուսուցիչ է աշխատում Իսահակ Տեր-Գրիգորյանը։ Հոգաբարձուներն են եղել Սարգիս քահանա Տեր-Գրիգորյանը, ազնվական Հովսեփ Արեշյանը, խնամակալուհի Նունե Շանշյանը, երեցփոխ Աստվածատուր Բայրամյանը։ Գրադարանն ուներ 222 գիրք։ Դպրոցի շենքը սեփական էր, եռահարկ և բաղկացած 8 սենյակից։ Այն կառուցվել էր ժողովրդավարությամբ և Թիֆլիսի Քանոյան եկեղեցու օժանդակությամբ<sup>20</sup>։

Այս դպրոցը, սակայն, շուտով փակվել է, քանի որ նրա անունը չկա ցարական կառավարության կողմից 1895-ին կազմված և հաջորդ տարում փակված հայ դպրոցների ընդհանուր ցուցակներում։

1897թ. Թեթրիճարոն արդեն ուներ 795 հայ բնակիչ (462 տղամարդ և 333 կին)։ Այստեղ 1905-ին վերաբացվել է խառն միդասյան դպրոց, որը 1907-ին ուներ 28 աշակերտ և 12 աշակերտուհի, ուսուցիչն էր Գևորգ Մեսյանը, որն ավարտել էր Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը։ Հոգաբարձուներն էին Գևորգ Բայրամյանը և Գրիգոր Ստեփանյանը։ 1908-ին Բելի-Կյուլն ուներ 73 հայ ընտանիք, երկու քահանա։ Դպրոցն ուներ 40 աշակերտ և 1 ուսուցիչ՝ Սարգիս Ավետիքյան, երեք հոգաբարձու՝ Մարտիրոս Ազատյանը, Սարգիս Տեր-Հարությունյանը, երեցփոխ Հարություն Շատվորյանը։ Այդ շրջանում Բելի-Կյուլն ուներ ընդամենը 864 հայ և վրացի բնակչություն<sup>21</sup>, իսկ 1913-ին՝ 954 բնակիչ (536 տղամարդ և 418 կին)<sup>22</sup>։

\*  
\*   \*  
\*

Թեթրիճարոյի շրջանը իր վեհ լեռների ու զուլալ աղբյուրների պես մաքուր ու լուսավոր շատ դեմքեր է տվել հայ գրականությանն ու մշակույթին, գիտությանն ու կրթական գործին, հազարավոր խիզախ հոգիներ են մարտիրոսվել հայրենի հողի փրկության ու նրա

<sup>19</sup> Կ. Ա. Խուրդյան, Արելահայ դպրոցները 1830-1920 թթ., Եր., 1987, էջ 600։

<sup>20</sup> ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 35, ց. 1, գ. 98, թթ. 38-39, ֆ. 56, ց. 3, գ. 357, թթ. 36-37։

<sup>21</sup> Տե՛ս Գ. Առաքելյանի «Հանրամատչելի հանրագիտական բառարանը», Թիֆլիս, 1915, էջ 70։

<sup>22</sup> ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 56, ց. 6, գ. 986, թ. 255-256։

փառքի հավերժացման համար: Այդ լեռներում ու ձորերում դարեր շարունակ հայ շինականի շուրթերից հնչել է հայոց «Յորովելը»:

Հայ մեծ բանաստեղծ Յովհաննես Թումանյանը 1901-1902 թթ. իր ընտանիքով հանգստացել ու կազդուրվել է Թեթրիժարոյում և հմայվել նրա բնութամբ ու մարդկանցով: 1902 թ. նրա հետ եղել է նաև Ղազարոս Աղայանը:

Ավելի ճիշտ, վերջինս է Թումանյանին հրավիրել՝ շրջելու իր մանկության վայրերում: Հայտնի է, որ Ղ. Աղայանը Սամշվիլոյ գյուղի քահանա Տեր-Պետրոսի մոտ է սովորել, և հետագայում էլ իր «Երկու քույր» վեպի նյութը վերցրել է Ղաղթե-Խաչեն ու Սամշվիլոյ գյուղերի կյանքից: Բացի այդ, Աղայանը իր մի շարք ստեղծագործություններ գրել է այդ վայրերից ստացած անմիջական տպավորությունների տակ, օգտագործել է տեղի բանահյուսությունը: Հիշենք թեկուզ նրա «Տորք Անգեղ» պոեմը, բանաստեղծությունները, հեքիաթներն ու շատ այլ ստեղծագործություններ:

Ղազարոս Աղայանը բազում թելերով կապված է եղել Սամշվիլոյ և Ղաղթե-Խաչեն գյուղերի հետ: Նրա պապը եղել է Ղաղթե-Խաչենցի, իսկ քույրը ամուսնացած է եղել Սամշվիլոյում, որն էլ առիթ է հանդիսացել, որ Աղայանը հաճախակի այցելի իր քրոջը, շրջի հարազատ վայրերում: Նրա ծննդավայրը՝ Բոլնիս-Խաչենը ևս հեռու չէ այդ վայրերից: Այսօր էլ Թեթրիժարոյից ուղքով 3-4 ժամում կարելի է հասնել Բոլնիս-Խաչեն:

Հայ ժողովրդի մյուս մեծ բանաստեղծը՝ Ավետիք Իսահակյանը ևս մտադրվել է լինել Թեթրիժարոյում: Նա 1940 թ. հուլիսի 12-ին Աբասթուանից իր կնոջը՝ Սոֆյա Իսահակյանին գրած նամակում նշում է. «Ախալցխայից եթե Ախալքալաք չգնացի, Բորժոմի վրայով կդառնամ Թիֆլիս, մի տեղ էլ պիտի գնամ, Բելի-Կյուլչ: Հետո կգամ տուն»։ Սակայն հաջորդ օրը՝ հուլիսի 13-ին գրած նամակում նա հայտնում է. «Վաղը գնում եմ մոտիկ Տարուցիայի լիճը, ուր հայ գյուղ կա: 17-ին Թիֆլիս կլինեն: Ուզում եմ Բելի-Կյուլչ գնալ, բայց ուշ է արդեն: Շատ նյութեր եմ հավաքել. արդեն նյութերի մեջ խեղդված եմ, բայց նորից ազահ եմ նոր բան տեսնելու և լսելու»<sup>23</sup>: Չնայած դրան, այդպես էլ Ավ. Իսահակյանը, ցավոք, Թեթրիժարոյ չի մեկնել և այնտեղի հայության կյանքին ու կենցաղին չի ծանոթացել:

\*  
\*   \*  
\*

Թեթրիժարոյի շրջանի հնագույն բնակավայրերից է **Մանգլիս** ավանը, որն անցյալում եղել է Մանգլետաց փոքր գավառի կենտրոնը:

<sup>23</sup> Ավ. Իսահակյան, Երկեր, հատ. VI, Երևան, 1979, էջ 546-547:

Այն փռված է Թրիալեթի լեռնաշղթայի հարավային լանջին, Թբիլիսի-Ճալկա-Նինոծմինդա ճանապարհի վրա, գտնվում է Թեթրիծղարո քաղաքից 37 կմ հյուսիս-արևմուտք, իսկ Թբիլիսիից 56 կմ հյուսիս-արևելք, ծովի մակերևույթից բարձր է 1200 մ: Բնակիչները ռուսներ, հայեր և վրացիներ են: Այս քաղաքը ևս, շատ բնակավայրերի նման, XVIII դարի կեսերին եղել է գրեթե անմարդաբնակ: XIX դարի առաջին քառորդում Ռուսաստանից Բելի-Կյուչ և Մանգլիս են տեղափոխվում շուրջ 3000 ռուս գյուղացիներ, որոնց մի մասը բնակություն է հաստատում Բելի-Կյուչում, իսկ մեծ մասը՝ Մանգլիսում: Հետագայում, անցյալ դարի կեսերին ու վերջերին, ինչպես նաև մեր դարասկզբին, դարձյալ Ռուսաստանից, Մանգլիս են տեղափոխվում 15 հազարից ավելի ռուս գյուղացիներ, որոնք տեղաբնակ հայերի ու վրացիների հետ շենացնում են այդ պատմական քաղաքը:

Հայերը Մանգլիսում հաստատվել են վաղմջական ժամանակներից: Նրանք եկել են Հայաստանի տարբեր գավառներից ու Արցախից, կառուցել են եկեղեցի, ունեն առանձին գերեզմանատուն և պատմական այլ հուշարձաններ: 1890-ին Մանգլիսի ս. Գևորգ եկեղեցուն կից բացվել է հայկական դպրոց, որը գործել է երկար տարիներ և հետագայում փակվել: Մանգլիսը 1917 թ. ունեցել է 453 հայ բնակիչ, իսկ 1979-ին ավանի բնակչության թիվն հասել է շուրջ 4000-ի, որից 240-ը եղել են հայեր:

Մանգլիսը հայտնի է նաև որպես ամառանոց, որը թաղված է եղևնու և սոճու խիտ անտառների մեջ, ուր կան բազմաթիվ լեռնակլիմայական առողջարաններ, որոնցում հիմնականում բուժվում են շնչառական ուղիների հիվանդություններ ունեցող մանուկներն ու դեռահասները: Ժամանակին այստեղ կազդուրվել և հանգստացել են Ղ. Աղայանը, Հովհ. Թումանյանը, Լ. Շանթը, Դ. Դեմիրճյանը, Ստ. Լիսիցյանը և հայ մշակույթի բազմաթիվ այլ նշանավոր գործիչներ: Այդ մասին նրանք ուշագրավ ու հետաքրքիր տեղեկություններ են թողել իրենց հուշերում ու նամակներում, կան լուսանկարներ ու գեղանկարներ՝ կատարված Մանգլիսում: Դրանցից թերևս հիշատակենք Գ. Բաշինջաղյանի նշանավոր «Մեծ բացատ» (1905 թ.) ճեպանկարը: Մեծ գեղանկարիչը Թռեղքում կատարել է նաև այլ նկարներ, որոնցից մեկը՝ «Խրամ գետի ափերը» 1892-ին ցուցադրվել էր Թիֆլիսում, որից հետո այն, որպես լավագույն գեղանկար, ուղարկվել է Մոսկվա՝ աշխարհագրական ցուցահանդես:

Մանգլիսը ներկայումս քաղաքատիպ ավան է, ունի ռուսական և վրացական դպրոցներ, որոնցում սովորում են նաև հայ երեխաները, գրադարան, մշակույթի տուն, կինոթատրոն, կապի բաժանմունք, հի-

վանդանոց, կենցաղսպասարկման տներ և այլն: Այստեղ է գտնվում նաև Թբիլիսիի «Իսանի» կոշիկի ֆաբրիկայի մասնաճյուղը:

\*  
\*   \*  
\*

Թեթրիժդարոյի շրջանի այժմյան **Ասուրեթ** ավանը գտնվում է շրջկենտրոնից 20 կմ հյուսիս-արևելք, ծովի մակերևույթից բարձր է 760 մ: Այն հիմնադրվել է կոլոնիստ գերմանացիների կողմից, XIX դարի առաջին կեսին, պատմական Ասկուրեթ բերդաքաղաքի ավերակների շրջակայքում, Թրիալեթի լեռնաշղթայի հարավային փեշերին, Ալգեթ գետի ծախ ավիին: Հայրենական մեծ պատերազմի ընթացքում, գերմանացիներին աքսորելուց հետո, այն վերաբնակեցվել է վրացիներով: Այստեղ կան նաև որոշ թվով հայեր ու ռուսներ: Ասուրեթն այժմ բարեկարգ ավան է, ունի միջնակարգ դպրոց, սկունք, գրադարան, փոստատուն, կենցաղսպասարկման տներ և այլն: Նրա շրջակայքում, բացի հին ամրոցի մնացորդներից, կան նաև եկեղեցիների ավերակներ ու լքված գերեզմանատներ:

\*  
\*   \*  
\*

Մյուս հնագույն բնակավայրն այստեղ **Ծինժարոն** է, որը գտնվում է Ալգեթ գետի աջակողմյան մի բարձունքում: Ըստ Վախուշտու պատմածի, Ծինժարոյում կա մի աղբյուր, որի ջրով ոչ մի հատիկ չի եփվում, բայց խմելու համար անփոխարինելի է ու առողջարար: «Ծինժարո» տեղանունը վրացերեն է, որը բառացի նշանակում է՝ առջևում աղբյուր է, աղբյուրի կողմ (մոտ): Այս գյուղի շրջակայքում եղած ամենահին հուշարձանները VIII-IX դարերից են մեզ հասել: Ասում են, թե Թամար թագուհին է այս տեղը ընտրել որպես ամառանոց, և այն մինչև XV դարը եղել է վրաց արքունական հանգստավայրը՝ շնորհիվ իր հարմար դիրքի, մեղմ կլիմայի և հարուստ բուսականության: Թուրքերն ու լեզգիները XVII դարում հիմնահատակ ավերել են Ծինժարոն: Նրա ավերակների տեղում 1813 թ. բնակություն են հաստատել Անատոլիայից տեղափոխված շուրջ 120 տուն հողագործ հույներ<sup>24</sup>:

Այժմ Ծինժարոն բարգավաճ ու հարուստ գյուղ է, գտնվում է Թեթրիժդարո-Մառնեուլ-Թբիլիսի ճանապարհի վրա, շրջկենտրոնից 5 կմ դեպի արևելք, իսկ Թբիլիսիից 55 կմ հարավ-արևմուտք, ծովի մակերևույթից բարձր է շուրջ 1000 մ:

<sup>24</sup> См. «Народы Кавказа», том II, М., изд. АН СССР, 1962, т. 423:

\*  
\*   \*  
\*

**Կուլմիս** գեղատեսիլ լճի մերձակայքում է գտնվում նույնանուն գյուղը, որը ներկայումս մտնում է Գարդաբանի վարչական տարածքի մեջ, իսկ նախկինում պատկանել է Թռեղքին: Այս գյուղն ունի շուրջ 1300 տարվա պատմություն: Այն հիմնադրվել է մոտավորապես VII դարում: Մինչև IX դարը այստեղ իշխել են արաբները, որը վկայում են պատմական հուշարձանների վրա պահպանված արձանագրությունները:

Գյուղը հյուսիսային կողմից շրջափակող բարձրադիր լեռան վրա մինչև այժմ էլ կանգուն է IX դարում արաբների կողմից կառուցված ամրոցը, որը XII դարում վերաշինվել և դարձել է Օրբելիանիների տան սեփականությունը: Այստեղ կա նաև «Սամեբա» կոչվող մի վանք-ուխտատեղի, որը միջնադարում կառուցել են հայերը: Նրա գավթուն պահպանվում են Օրբելյան իշխաններից մի քանիսի դամբարանները:

Չեռագայում XVII-XVIII դարերում տարբեր վայրերից գաղթած հայերը Կուլմիսի ավերակների վրա հիմնադրել են իրենց նոր գյուղը և նրա կենտրոնում կառուցել մի փոքրիկ քարաշեն եկեղեցի ս. Աստվածածին անվամբ, որի մուտքի ճակատին կա մի հայերեն արձանագրություն:

1842 թ. Կուլմիսն ուներ 650 հայ բնակիչ, իսկ դրանից 20 տարի անց՝ 1862-ին՝ 102 տնտեսություն 969 հայ բնակչով, որից 510-ը արական, իսկ 459-ը՝ իգական սեռի: 1884-ին այն ուներ 180 տուն, որից 158-ը հայ և 22-ը վրացի բնակչությամբ, երկու եկեղեցի, մեկը հայկական, իսկ մյուսը՝ վրացական: 1917 թ. այստեղ կար 203 տուն, 1489 բնակչով, իսկ 1926 թ. մարդահամարի տվյալներով Կուլմիսում եղել է 1500 բնակիչ, որից շուրջ 1200-ը՝ հայեր:

\*  
\*   \*  
\*

Թեթրիժարոյի շրջանում հայերը հիմնականում բնակություն են հաստատել շրջկենտրոնին մոտիկ, խրամ գետի ափամերձ վայրերում, ինչպես նաև Ալգեթ գետի ձորահովտում: Նրանք վտանգի պահին միշտ էլ ապաստանել են վրացիների կողքին: Այդ պատճառով էլ հայերը հիմնականում բնակություն են հաստատել Կողա, Մուխաթ, Վաշլեվան, Էրտիս, Բորբալո, Արտիսուբան, Էնագեթ, Բոգվի, Մեծ Թոնեթ, Փոքր Թոնեթ և այլ գյուղերում<sup>25</sup>: Սակայն այս գյու-

<sup>25</sup> Վ. Ա. Գոնգաձե, նշված աշխատությունը, էջ 38:

ղերի հայերն այժմ ամբողջովին մոռացել են հայոց լեզուն և նրանց համար մայրենի լեզու է դարձել վրացերենը: Իսկ ինչ վերաբերում է տարբեր տեղերից եկած այն հայերին, որոնք XVIII դարի վերջին և XIX դարի առաջին քառորդում են բնակեցվել Թեթրիժդարոյի շրջանի տարածքում գտնվող Դաղեթ-Խաչեն, Սամշվիլո, Սամղրեթ, Վարխունո, Մեծ Դուռնուկ, Փոքր Դուռնուկ, Փոքր Դաղեթ գյուղերում, ապա նրանք, չնչին բացառությամբ, վրացերեն չգիտեն<sup>26</sup>:

Առաջին խմբի գյուղերը, որ հիմնականում տեղավորված են Ալզեթ գետի ավազանում, հիմնադրվել են ավելի վաղ՝ XVII-XVIII դարերում, որոնց առաջին բնակիչները եղել են լեռնային վրացիներ և Վրաստանի ու Հայաստանի տարբեր վայրերից տեղափոխված հայեր: Իսկ զուտ հայկական գյուղերը հիմնադրվել են ավելի ուշ՝ XVIII դարի վերջերին: Ղարաբաղի մելիքները 1799 թ. ռուսաց Պավել I կայսրին ուղղված նամակում գրում են, թե՛ գոնե շնորհի արեք հրամայելու վրաց թագավորին, որ նա մեզ հող տա Վրաստանի Գուգարքի սահմանում մեր մարդկանցը տեղափոխելու համար, քանի որ այստեղ առաջ էլ եղել են հայ գյուղեր և ժամանակի ընթացքում ավերվել են պարսիկների ու թուրքերի կողմից: Այդ երկիրը թեև լեռնոտ է, բայց շատ բերրի է, այնտեղ կան հանքեր և անտառներ, և մենք կկարողանանք ապրել ու միաժամանակ ամուր կպահենք ձեր հարավային սահմանները<sup>27</sup>:

Այսպիսով, ռազմասեր և հերոսական Արցախի ժողովուրդը, տեղ որոնելով իր համար, նոր կյանք է հիմնադրում հին Գուգարաց աշխարհում և մասնավորապես նրա հռչակավոր Լոռի-Sաշիրում, որը պատմական հիշատակներ է թողել իր հարուստ և գեղեցիկ բնության ծոցում իբրև հայության, և նրա գաղափարը հարստացնող մի մեծ պատմական օջախ է ստեղծում<sup>28</sup>:

Ահա այսպես, Արցախից գաղթած հազարավոր հայերի մի զգալի մասը վրացիների հետ կողք-կողքի ապաստան է գտնում պատմական Թեղթի գավառում և նրա անբաժան մասն հանդիսացող Մանգլեաց փորում, շենացնում է դրանց ավերակված բնակավայրերը:

\*  
\*   \*  
\*

Արդ հակիրճ կերպով ներկայացնենք Թեթրիժդարոյի շրջանի վրացախոս հայաբնակ գյուղերի պատմությունը: Դրանցից հնա-

---

<sup>26</sup> Նույն տեղում, էջ 38:

<sup>27</sup> Լեո, Երկերի ժողովածու, հատ. 3, գիրք II, Երևան, 1973, էջ 410:

<sup>28</sup> Լեո, նույն տեղում, էջ 411:

գույնը **Կոթին** կամ **Կողին** է (այժմ՝ **Կողա**), որը գտնվում է շրջկենտրոնից 28 կմ արևելք՝ Թեթրիծղարոյից և Մառնեուլից դեպի Թբիլիսի տանող ճանապարհի հանգուցակետում, մի հարթ վայրում: Գրավոր աղբյուրներում հիշատակվում է XII դարից: Այն մի քանի անգամ ավերվել է թաթար-սելջուկների և մոնղոլներ արշավանքների ժամանակ: Կողին XVIII դարում Արցախից գաղթած հայերի կողմից նորից է վերաբնակեցվել, վրացիներով համալրվել է հետագայում: 1842 թ. ունեցել է 539 հայ բնակիչ, իսկ 1884 թ. 70 տուն հայ, 35 տուն վրացի, 1917-ին նրա բնակչության թիվն հասնում էր 797-ի, որից 606-ը՝ հայեր, իսկ 191-ը՝ վրացիներ: 1979 թ. արդեն ուներ շուրջ 400 տուն՝ 1164 հայ և վրացի բնակչով:

Կողան ունի երկու եկեղեցի. մեկը հայկական (ս. Աստվածածինը), մյուսը՝ վրացական: Հայկականը կառուցվել է գյուղի հասարակայնության կողմից, նրա միջոցներով, իսկ վրացականը, ի հիշատակ կյանքից անժամանակ հեռացած իր կնոջ, կառուցել է տվել տեղի կալվածատեր, գեներալ Սազոնովը: Կողայում 1913 թ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի հատուկ կոնդակով բացվել է ծխական դպրոց, որը հետագայում փակվել է: Ներկայումս Կողայի բնակչության մեծ մասը իրեն համարում է հայ, բայց խոսում է վրացերեն:

Այժմ պահպանվում են գյուղի եկեղեցիները, հայկական գերեզանատունը և պատմական այլ հուշարձաններ: Այստեղ է ծնվել վրաց գրականության դասական Վասիլի Բարնովը (1856-1934), որի կիսանդրին դրված է գյուղի կենտրոնում:

**Մարաբդան** նույնպես Թեթրիծղարոյի շրջանի վրացախոս հայկական գյուղերից է, որն ընկած է շրջկենտրոնից 32 կմ արևելք, Թեթրիծղարո-Մառնեուլ-Թբիլիսի ճանապարհի ձախ կողմում, նրանից 3 կմ արևմուտք, մտնում է Կողայի վարչատարածքային կազմի մեջ: Պահպանվում են հայկական եկեղեցին և այլ հնություններ: Գյուղն ունի երկու թաղամաս, որոնք շուրջ 1 կմ հեռավորության վրա են գտնվում և բաժանվում են մի ձորակով: Այդ թաղամասերից մեկը պաշտոնապես կոչվում է Հին Մարաբդա, իսկ մյուսը՝ Նոր Մարաբդա: Այստեղով է անցնում Թբիլիսի-Թեթրիծղարո-Ծալկա-Ախալքալաք երկաթուղին:

**Մուխաթ** կամ **Մուխեթ** գյուղը, որ գտնվում է Թեթրիծղարո-Ասուրեթ-Կողա ճանապարհի ձախ եզրին, շրջկենտրոնից 26 կմ արևելք, արդեն գրեթե միացել է Կողային և մտնում է նրա վարչատարածքային կազմի մեջ: Մուխաթն հիշատակվում է թաթար-սելջուկյան և մոնղոլական արշավանքների շրջանից (XIII-XIV դդ.), երբ այն ավերվել է: Հետագայում կրկին վերաբնակեցվել է հայերով: Ունի երկու քարաշեն եկեղեցի, որոնցից ս. Աստվածածինը միջնադարյան կառույց է և գտնվում է գերեզանատանը, իսկ մյու-

սը՝ ս. Գևորգը, կառուցվել է XVIII դարի վերջերին: Այստեղ պահպանվում են հայագիր տապանաքարերով գերեզմանատունը և այլ հնություններ:

1851 թ. Սուխաթն ունեցել է 25 տուն 216 հայ բնակչով, իսկ 1970 թ. ուներ 782 հայ և վրացի բնակիչ: Գործում է ութամյա վրացական դպրոց, ուր հաճախում են նաև հայ երեխաները, իսկ միջնակարգ կրթություն ստանում են հարևան Կողա գյուղում:

**Բորբալոն** գտնվում է շրջկենտրոնից 28 կմ հյուսիս-արևելք, Թեթրիծղարո-Ասուրեթ-Կողա ճանապարհի ձախ կողմում, ծովի մակերևույթից բարձր է 710 մ: 1880 թ. ունեցել է 42 տուն, որից 7-ը՝ հայկական: Դրանից շուրջ 100 տարի անց՝ 1984 թ. այստեղ կար 95 ընտանիք, որից 15-ը՝ հայկական: Ունի հայկական եկեղեցի և գերեզմանատուն:

Բորբալոյի հարևանությամբ **Բոզվի** գյուղն է, որը 1842 թ. ունեցել է 184, իսկ 1856-ին՝ 245 հայ բնակիչ: Այստեղ հայերը կառուցել են ս. Աստվածածին եկեղեցին, իսկ 1884-ից գործել է շինական ուսումնարան, ուր սովորել են հայ երեխաները: Բոզվին եղել է նաև եկեղեցու թեմական կենտրոն, ուր 1926 թ. հաշվառվել է 1257 հավատացյալ, որի մեծ մասը եղել են հայեր:

**Վաշլեվանը** կամ **Վաշլովանը** (հնձորուտ), որ մտնում է Բորբալոյի վարչատարածքային կազմի մեջ, XVIII դարի վերջերին հիմնադրել են Արցախից գաղթած հայերը: Հետագայում այստեղ բնակություն են հաստատել Կախեթից ու Գորիից եկած հայերը: Այն ընկած է շրջկենտրոնից 25 կմ արևելք, Թեթրիծղարո-Ասուրեթ-Կողա ճանապարհի ձախ կողմում, Թրիալեթի լեռնաշղթայի Քյորոզլի կոչվող լեռան ստորոտում: Անցյալ դարի կեսերին ունեցել է 270 հայ բնակիչ, իսկ 1880-ին՝ 65 տուն, որից 50-ը՝ հայկական, 15-ը՝ վրացական, շուրջ 100 տարի անց՝ 1979 թ. Վաշլեվանն ուներ 160 տուն՝ 656 հայ բնակիչներով: Այստեղ կան հայկական ս. Աստվածածին եկեղեցին, գերեզմանատուն և այլ հնություններ:

**Էրսիսը** նույնպես մտնում է Բորբալոյի վարչատարածքային կազմի մեջ, գտնվում է շրջկենտրոնից 27 կմ արևելք, Թրիալեթի լեռնաշղթայի հարավային լանջին, Թբիլիսի տանող ճանապարհի ձախ կողմում: 1979 թ. ուներ 80 տուն՝ 300 բնակչով, հիմնադրվել է Արցախից և Կախեթից գաղթած հայերի կողմից, ունի հայկական եկեղեցի, գերեզմանատուն և այլ հնություններ, գործում է վրացական միջնակարգ դպրոց:

**Մեծ Էնագեթը** գտնվում է շրջկենտրոնից 16 կմ հյուսիս-արևելք, Թեթրիծղարո-Ասուրեթ-Կողա ճանապարհի վրա, Թրիալեթի լեռնաշղթայի հարավային փեշերին, Ալգեթ գետի ձախ ափին: Հիմնադրվել է XVIII դարում Հայաստանի և Վրաստանի տարբեր

շրջաններից գաղթած հայերի կողմից: Հետագայում համալրվել է նաև վրացի բնակչությամբ: 1979 թ. ուներ 250 տուն՝ շուրջ 1000 հայ և վրացի բնակչով: Ունի միջնակարգ դպրոց, կապի բաժանմունք, հիվանդանոց և կենցաղսպասարկման այլ տաղավարներ: Այստեղ կան հայկական և վրացական եկեղեցիներ, գերեզմանատներ և պատմական այլ հուշարձաններ: Այստեղ է ծնվել նշանավոր հեղափոխական Արսեն Ջորջիաշվիլին, որի անունով էլ հետագայում գյուղը կոչվել է **Ջորջիաշվիլի**:

**Փոքր Էնագեթը** ևս հիմնադրվել է XVIII դարում Կախեթից ու Կասպիից տեղափոխված հայերի կողմից, գտնվում է շրջկենտրոնից 20 կմ հյուսիս-արևելք, Թբիլիսի տանող ճանապարհի աջ կողմում, Մեծ Էնագեթի (Ջորջիաշվիլի) հարևանությամբ: Ունի ս. Նշան հայկական եկեղեցին, հայագիր տապանաքարերով գերեզմանատուն: 1869 թ. այստեղ բնակվել է 260 հայ, իսկ 100 տարի անց՝ 1979 թ. ուներ 150 տուն՝ հայ և վրացի բնակիչներով: Հայ երեխաները հաճախում են տեղի ութամյա վրացական դպրոցը, իսկ միջնակարգ կրթություն ստանում են Ջորջիաշվիլի (Մեծ Էնագեթ) գյուղում:

Այստեղ է ծնվել Ամենայն Հայոց Կաթողիկոս Դավիթ Ե Էնագեթցին (Ղորղանյան): Նրա ծննդյան թվականն անհայտ է, մահացել է 1817-ին Էջմիածնում և թաղված է այնտեղ: Նա 1800 թ. ընտրվել է Կոստանդնուպոլսի հայոց պատրիարք, որից հրաժարվել և վերադարձել է Էջմիածին, 1801 թ. ընտրվել և 1802-ին օծվել է Ամենայն Հայոց Կաթողիկոս և մինչև 1807 թ. զբաղեցրել է այդ բարձր գահը:

**Արտիսուբանը**, որ մտնում է Ջորջիաշվիլի (Մեծ Էնագեթ) գյուղի վարչատարածքային կազմի մեջ, գտնվում է շրջկենտրոնից 19 կմ հյուսիս-արևելք, Թբիլիսի տանող ճանապարհի ձախ եզրին: Հիմնադրվել է XVIII դարի վերջերին, որի առաջին բնակիչները գաղթել են Արցախից, ունի ս. Քևորգ անվամբ եկեղեցի, գործում է վրացական տարրական դպրոց, որտեղ սովորում են նաև հայագզի երեխաները:

**Սաղարաշեն** վրացախոս հայկական գյուղը ևս գտնվում է Ալագեթ գետի ավազանում, նրա ձախ ափին, շրջկենտրոնից 15 կմ հյուսիս-արևելք, Թեթրիժարո-Ասուրեթ-Կողա ճանապարհի վրա: Հիմնադրել են Արցախից և Կախեթից եկած հայերը XVIII դարի վերջերին: Ունի հայկական եկեղեցի և գերեզմանատուն, գործում է վրացական միջնակարգ դպրոց, ուր հաճախում են նաև հայ երեխաները: Արտիսուբանի տարրական դպրոցն ավարտած երեխաները ևս իրենց ուսումնառությունը նույնպես շարունակում են այս դպրոցում:

Մյուս հայկական գյուղն այստեղ **Մածեվան** կամ **Մեծ Ավանն** է, որը նույնպես հիմնադրել են հայերը XVIII դարի վերջերին: Այն ըն-

կած է շրջկենտրոնից 6 կմ արևելք, Թեթրիծղարո-Մառնեուլի ճանապարհի ձախ կողմում, նրանից դեպի արևմուտք, փռված է անտառապատ գեղատեսիլ լեռան ստորոտում, Ալզեթ գետի աջակողմյան մի բարձունքի վրա: Ունի հայկական եկեղեցի և գերեզմանատուն, գործում են միջնակարգ դպրոց, կապի բաժանմունք և այլ օջախներ:

Հայերի կողմից են հիմնադրվել նաև շրջանի **Սեծ Թոնեթ** և **Փոքր Թոնեթ** գյուղերը, որոնք գտնվում են Ալզեթ գետի վերին ավազանում, Մանգլիս ավանից դեպի հարավ: Ինչպես այս, այնպես էլ Թռեղքի լեռնաշղթայի հյուսիսային լանջերին ու նրա ուսերին գտնվող **Կոջոր**, **Ճղնեթ**, **Տաբախմեյա**, **Կիկեթ**, **Ներքին** և **Վերին Թելեթներ** գյուղերում, որոնք հիմնադրվել են XVII-XVIII դարերում, անցյալ դարավերջին ու մեր դարասկզբին դրանցում գործել են հայկական ծխական դպրոցներ, եկեղեցիներ և այլ հաստատություններ, ունեն հայկական գերեզմանատներ: Ներկայումս այդ գյուղերի բնակչության մի զգալի մասը հայեր են, սակայն խոսում են վրացերեն և նրանց երեխաները հաճախում են վրացական դպրոց:

\*  
\* \* \*

Թեթրիծղարոյի շրջանում վրացախոս հայկական այս 14 բնակավայրերի կողքին ներկայումս գոյություն ունեն 8 հայկական գյուղեր, որոնք, ինչպես նշեցինք վերը, հիմնականում հիմնադրվել են XVIII դարի վերջերին, և դրանց բնակիչներն այսօր էլ խոսում են մայրենի լեզվով՝ հայերեն ու պահպանում իրենց բառն ու բանը, կենցաղն ու ազգային սովորույթները:

Հայկական այդ բնակավայրերի շարքում ամենախոշոր ու նշանավոր գյուղը **Դաղեթ-Խաչենն** է, որն հիմնադրվել է 1789 թ. Արցախից գաղթած մի խումբ խաչենցիների կողմից<sup>29</sup>: Անունն առաջացել

---

<sup>29</sup> Ի դեպ, վերջին շրջանում մի շարք գրքեր տպագրվեցին՝ նվիրված Վրաստանի հայկական բնակավայրերի պատմությանը: Պետք է նկատել, որ դրանք հիմնականում սիրողական բնույթի, գիտականությունից և նույնիսկ, շատ դեպքերում պատշաճ մակարդակի գրագիտությունից հեռու, միաժամանակ իրական փաստերն աղավաղող և բազմաթիվ թյուրիմացությունների ու շփոթությունների տեղիք տվող աշխատություններ են, որոնցից մեկն էլ Ա. Խ. Դավթյանի «Հայկական և հայախառը բնակավայրերը Վրաստանում» գիրքն է (Եր., Երևանի համալ. հրատ., 1997, 432 էջ), որի մեջ նյութերը դասավորված են առանց որևէ կարգ ու կանոնի, աղավաղված են մի շարք գյուղերի ու քաղաքների անուններ, բացակայում են շատ բնակավայրեր, որոնցից մեկն էլ Դաղեթ-Խաչենն է: Սխալ են ներկայացված շատ գյուղերի ու քաղաքների տեղն ու աշխարհագրական դիրքը, հեռավորությունները Թբիլիսիից ու միմյանցից և այլն: Այդ ամենի հետ մեկտեղ հիշյալ գրքի էջերը առատ են փաստական սխալներով ու տպագրական բազմաթիվ վրիպակներով:

է վերաբնակների հայրենի խաչեն գավառի և նոր բնակատեղիի Դաղեթ տեղանունների միակցումից՝ Դաղեթ-խաչեն:

Դաղեթ-խաչենը գտնվում է Թբիլիսիից շուրջ 50 կմ հարավ-արևմուտք, Մառնեուլի երկաթուղային կայարանից 20 կմ արևմուտք, իսկ Թեթրիծղարո շրջկենտրոնից՝ 9 կմ հարավ-արևելք, Թբիլիսի-Մառնեուլ-Թեթրիծղարո-Ծալկա ճանապարհից մոտ 2 կմ - ձախ, մեղմաթեք լեռնալանջի վրա, ծովի մակերևույթից բարձր է 860 մ: Նրա հյուսիսային կողմով, շուրջ 1,5 կմ հեռավորությամբ անցնում է Թբիլիսի-Մարաբդա-Թեթրիծղարո-Ծալկա-Բոզդանովկա (այժմ՝ Նինոծմինդա)-Ախալքալաք երկաթուղին, իսկ առջևով, մոտ 4 կմ ցած, անդնդախոր ձորերով ու կիրճերով հոսում է հրամ գետը: Բնությունը գեղեցիկ է, ունի սառնորակ և հանքային աղբյուրներ, շրջապատված է պտղատու ծառերով հարուստ թավուտ անտառներով:

Դաղեթ-խաչենը վարչական կենտրոն է, տասնամյակներ շարունակ այստեղ է գտնվել գյուղխորհրդի գործկոմը, իսկ ներկայումս գործոն է գյուղական ժողովը: Ունի կապի բաժանմունք, միջնակարգ դպրոց, ակումբ, գրադարան, բուժկայան և կենցաղսպասարկման այլ օբյեկտներ: Ունեցել է ս. Աստվածածին անվամբ մի քարաշեն հոյակերտ եկեղեցի, կառուցված XIX դարի առաջին կեսին, որը 1918 թ. հայ-վրացական ընդհարման ժամանակ ավերվել է վրաց մենշկիկների կողմից:

Այժմ գյուղում կա մեկ այլ գործող եկեղեցի՝ ս. Պապ անվամբ, որը կառուցվել է 1895 թվականին: Մյուս եկեղեցիները, որ այժմ ավերակված են, գտնվում են գյուղի շրջակայքում, նրան մոտիկ: Դրանցից մեկը կոչվում է «Եղցեն», իսկ մյուսը՝ «Աղալոեն խաչը»: Գերեզմանատունը ևս ունեցել է մի եկեղեցի, որն այժմ չկա, միայն նրա հիմքերն են նշմարվում ու մեկ էլ նրանից մնացել է մի հին խաչքար:

Դաղեթ-խաչենը եղել է հարավային Վրաստանի խոշորագույն կոլտնտեսություններից մեկը, որը 1970-1991 թթ. արդեն խորիտնտեսություն էր, իսկ ներկայումս դասվում է շրջանի ինքնակառավարվող տնտեսությունների շարքը: Բնակիչներն զբաղվում են հողագործությամբ ու անասնապահությամբ, զարգացած են այգեգործությունը, հացահատիկային և բանջարաբոստանային կուլտուրաների մշակությունը, անցյալում զբաղվել են նաև խաղողագործությամբ, շերամապահությամբ, ձիաբուծությամբ ու մեղվապահությամբ:

Գյուղն իր գոյության ավելի քան 210 տարիների ընթացքում եղել է Վրաստանի հայկական խոշորագույն բնակավայրերից մեկը: Մեր դարասկզբին ունեցել է 3706 բնակիչ, բոլորն էլ հայեր: Հայրենական մեծ պատերազմի նախօրյակին Դաղեթ-խաչենում կար

շուրջ 1000 տնտեսություն՝ 7000 բնակչով: Պատերազմի տարիներին ռազմաճակատ են մեկնել 1000-ից ավելի Դաղեթ-խաչենցիներ, որոնց շուրջ կեսը գոհվել է կռվում: Ներկայումս շուրջ 20.000 Դաղեթ-խաչենցիներ են բնակվում Թբիլիսում, Երևանում, Մոսկվայում, Պետերբուրգում և այլ քաղաքներում, ինչպես նաև արտասահմանյան երկրներում: Անցած երկու դարերի ընթացքում Դաղեթ-խաչենցի դուրս եկել և Թբիլիսիում բնակություն է հաստատել 8000-ից ավելի ընտանիք, շուրջ 300 ընտանիք ներկայումս բնակվում է Երևանում, ավելի քան 1000 ընտանիք էլ տեղափոխվել է այլ համրապետություններ ու արտասահման:

Դաղեթ-խաչենում դպրոց սկսել է գործել անցյալ դարի կեսերից, իսկ 1870 թ. արդեն կար գյուղական ծխական դպրոց, որը տարբեր ժամանակներում փակվելով ու կրկին բացվելով, իր գոյությունը պահպանել է մինչև խորհրդային կարգեր հաստատվելը: Այդ դպրոցը մեր դարասկզբին նպաստ է ստացել Բաքվի հայ մշակութային միությունից: Խորհրդային կարգերի ընթացքում, մինչև 1935 թ. Դաղեթ-խաչենում գործել է ութամյա դպրոց, որից հետո այն դարձել է միջնակարգ:

Գյուղը տվել է բազմաթիվ անվանի մարդիկ, ազգային-ազատագրական պայքարի անձնավեր հերոսներ, պետական ու ռազմական, հասարակական-քաղաքական ու մշակութային գործիչներ, գրողներ ու գիտնականներ: Այդ շարքում են ԽՍՀՄ սոցիալիստական աշխատանքի հերոսներ Ստեփան Մովսիսյանը, Յովհաննես Մկրտչյանը, Գարեգին Վանյանը, զեներալներ Արտեմ Յովսեփյանցը, Ռուբեն Մաղալյանը, ակադեմիկոս Ալեքսանդր Միքայելյանը, պրոֆեսորներ Յակոբ Էլիբեկյանը, Յակոբ Փերիխանյանը, Ալբերտ Վանյանը, արվեստագետներ Սեդրակ Մաղալյանը, Վաղարշակ Էլիբեկյանը, գրողներ Գևորգ Մեսյանը, Լևոն Շամյանը, Միքայել Ախտյանը, Վահան Մաղալյանը, թատերագիր-դերասան Արմեն Բայանդուրյանը և շատ ուրիշներ: Գյուղը նշանավոր շատ ներկայացուցիչներ ունի ժողովուրդների, արդյունաբերության ու գյուղատնտեսության գրեթե բոլոր բնագավառներում:

Դաղեթ-խաչենի շրջակայքը, հատկապես Խրամի ձորը, հարուստ է հնագույն բնակատեղիներով, ձորալանջերին կան բազմաթիվ ավերակված շինություններ ու գերեզմանոցներ, քարանձավային կացարաններ, որոնք կոչվում են «Լեզգին ծակեր»: Իսկ մի հսկա լեռան ստորոտում գտնվող լայնամիստ քարայրի խորքում, ժայռի մեջ փորված է մի փոքրիկ եկեղեցի-ճգնարան, որն ունի դեպի ներս տանող քարե աստիճաններ, քարակոփ դուռ, խորան և զմբեթ, ուր լույսի ոչ մի շող երբևէ չի թափանցել: Դրսից ոչինչ չի նշնարվում, քարայրի աննկատելի նեղ անցքը ժայռի տակ է

գտնվում: Իսկ խիտ ծառերով ծածկված անմատչելի ժայռի ճակատից կախված լարծուն ջրիմուռները, որ առաջացել են նրա ծերպերից բխող հանքային աղբյուրի ջրերից, իջնում են ցած, մինչև նեղ ու անանցանելի կածանը ու մթագնում ժայռի վեհ տեսքը: Ի դեպ, Դաղեթ-Խաչենցիները այդ աղբյուրը կոչում են «Քաքուտ ախալուր»: Մեզ թվում է, ժայռափոր այդ ճգնարանը երբեմնի Հայոց Կյուրիկյան թագավորության ժամանակներից է մնացել, և ո՛վ իմանա, թե ինչպիսի իմաստուն այր է իր կյանքի վերջին օրերն աղոթքով անցկացրել ցարդ ոչ մի տեղ չհիշատակված այդ խավար մենաստան-խցում: Խրամի ձորում, պատմական այդպիսի «անակնկալներ» շատ են հանդիպում: Այստեղ մնացել են նաև գետի վրա կառուցված միջնադարյան հսկա կամրջի խելերը:

Շրջանի մյուս հայաբնակ խոշոր գյուղը **Սամշվիղոն** է, որը գտնվում է նույնանուն բերդաքաղաքի ավերակների մոտ, Խրամ և ճավճավ գետերի միախառնվելու վայրից շուրջ 2 կմ հյուսիս-արևմուտք, ճավճավ գետի ձախափնյա մի հարթ բարձունքի վրա, շրջկենտրոնից 5 կմ հարավ-արևելք, Թբիլիսի-Թեթրիծղարո-Ծալկա ճանապարհի ձախ կողմում, Դաղեթ-Խաչեն տանող խճուղու վրա, ծովի մակերևույթից բարձր է շուրջ 900 մ: Գյուղի հյուսիսային կողմով անցնում է Ծալկա տանող երկաթուղին:

Խամշվիղո գյուղը, ըստ որոշ աղբյուրների, հիմնադրվել է XVI դարում: Սակայն հետագայում ավերվել և անայացել է: Այդ ավերակների վրա 1807 թ. բնակություն են հաստատել Երևանի խանության Քանաքեռ գյուղից տեղափոխված մի խումբ գաղթականներ: Նրանք Վրաստան են տեղափոխվել Աղա Մահմեդ խանի արշավանքի նախօրյակին՝ 1785 թ. և սկզբում բնակություն են հաստատել Թիֆլիսից 40 կմ հարավ-արևմուտք, Խրամ գետի մերձափնյա Քոլագիր ամրոցի մոտ, ուր և մնացել են մինչև 1807 թ., որից հետո տեղի անբարենպաստ պայմանների, խմելու ջրի պակասի, տափաստանային չոր ու շոգ կլիմայի, թունավոր սողունների առատության հետևանքով, որոնք շատ մարդկանց մահվան պատճառ էին դառնում, թողել են Քոլագիրն ու տեղափոխվել Սամշվիղո բերդաքաղաքի մոտակայքը և այնտեղ, ջրառատ ու անտառախիտ մի վայրում, հիմնադրել իրենց նոր բնակավայրը և անունն էլ, ի հավերժացումն միջնադարյան հռչակավոր ամրոցի, դրել Սամշվիղո:

Սամշվիղոյում 1853 թ. կառուցվել է ս. Աստվածածին եկեղեցին, որի գավթում, մի մարմարե տապանաքարի տակ հանգչում է նրա հիմնադիր Պետրոս քահանա Արարատյանցի (?-1860) աճյունը: Նա է առաջինը այս գյուղում բացել դպրոց, որը գործել է երկար տարիներ: Ի դեպ, նա է եղել Ղազարոս Աղայանի առաջին ուսուցիչը՝ վերջինիս Շամշուղոնում սովորելու ժամանակ:

Սամշվիլդոն մտնում է Դաղեթ-խաչենի գյուղխորհրդի վարչատարածքային կազմի մեջ, 1980 թ. ուներ շուրջ 250 տուն 1500-ից ավելի բնակչությամբ: Գործում է հայկական միջնակարգ դպրոց, ունի մանկապարտեզ, ակումբ, գրադարան, բուժկետ, ճաշարան, խանութներ, արհեստանոցներ և կենցաղսպասարկման այլ օբյեկտներ:

Սամշվիլդոյում, վերոհիշյալ քահանա Տեր-Պետրոսի ընտանիքում է ծնվել հայ նշանավոր գյուղագիր Ալեքսանդր Արարատյանը (1855-1885)<sup>29</sup>, որը, հայրենի գյուղում նախնական կրթություն ստանալուց հետո, ուսումը շարունակել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում (1868-1870 թթ.): Այն ավարտելուց հետո զբաղվել է գրական-ստեղծագործական աշխատանքով ու մանկավարժությամբ, ուսուցչություն է արել Թիֆլիսում, հայրենի գյուղում և հարևան Դաղեթ-խաչենում, բացել է դպրոցներ: Նա գրել է պատմվածքներ, վիպակներ, դրամաներ ու մանկական բանաստեղծություններ, որոնցից հայտնի են «Երկու թունձ կամ խեղճ սիրահարներ» (1870 թ.), «Գյուղական խալֆա» (1883 թ.), «Հիմնարկություն զավառական ուսումնարանի» (1889 թ.) վիպակները: Գրել է նաև մանուկների համար՝ տպագրելով «Քնարիկ մանկական» (1880 թ.) և «Փնջիկ» (1885 թ.) ժողովածուները: Ա. Արարատյանը գրել է շուրջ մեկ տասնյակ պիեսներ, որոնց մեջ առանձնանում է «Սուտ ճգնավոր»-ը, որը լույս է տեսել Ետմահու՝ 1891 թ., և հետագայում ունեցել է մի քանի հրատարակություն ու բեմադրություն: Նրա կատակերգություններից ուշագրավ են «Կրակի մեջ են ընկել», «Տըլոտ Կարո», «Փոքրիկ փխոյաններ» և այլ գործեր: Նա իր «Գյուղական խալֆան» ինքնակենսագրական վիպակում նկարագրել է Սամշվիլդոյի խալֆայական դպրոցը, որը գործել է անցյալ դարի կեսերին: Նրա ջանքերով էլ 1879-ին այդ դպրոցը վերածվել է կանոնավոր ծխական դպրոցի, իսկ 1908-09 ուստարում այն արդեն մեկդասյա երկսեռ դպրոց էր, ուր սովորում էին 30 տղա և 5 աղջիկ: Այդ դպրոցը նպաստ էր ստանում Բաքվի հայ մշակութային միությունից: Խորհրդային կարգեր հաստատվելուց հետո Սամշվիլդոյում տասնամյակներ շարունակ գործել է ութամյա դպրոց, որը 1965-ից դարձել է միջնակարգ և գործում է առ այսօր:

Այս գյուղից է նաև թուրքալեզու հայ նշանավոր աշուղ Քեչիշ-Օղլին (Դավիթ Երիցյան, 1807-1879), որը Սամշվիլդոյից ոտքով

---

<sup>29</sup> «Հայ նոր գրականության պատմություն» հնգատորյակում (Երևան, ԶԳԱ հրատ., 1962-1985) Ալեքսանդր Արարատյանը թյուրիմացաբար ներկայացված է տարբեր հատորներում որպես երկու առանձին հեղինակ (տե՛ս հատ. 3, էջ 703-706 և հատ. 4, էջ 491-497), մեկում՝ որպես արձակագիր, իսկ մյուսում՝ մանկագիր-բանաստեղծ: Այս շփոթությունը պետք է նկատի ունենալ և հետագա հրատարակություններում և ուսումնասիրություններում շտկել:

հասել է Մշո Սուրբ Կարապետի վանքը ուխտի, այնտեղից էլ գնացել է Կեսարիա և ապա անցել Պոլիս, ուր, աշուղական մրցավեճերում հաղթելով թուրք նշանավոր աշուղների, ձեռք է բերել մեծ համբավ: Մահացել է Կոստանդնուպոլսում և թաղվել տեղի հայկական գերեզմանատանը<sup>30</sup>:

Սամշվիլդոյուն են ծնվել նաև Սոցիալիստական աշխատանքի հերոսներ Երվանդ Դանիելյանը, Բախշի Յարուբյունյանը, ինչպես նաև այլ նշանավոր գործիչներ:

Գյուղի շրջակայքը հարուստ է պատմաճարտարապետական հուլարածաններով: Նրանից 2 կմ հարավ-արևելք գտնվում է ս. Աստվածածին, իսկ Խրամի ձորում՝ ս. Շողակաթ եկեղեցիները: Նույն ուղղությամբ մոտ 3 կմ վրա գտնվում են Շամշուլդե բերդաքաղաքի ավերակները: Այստեղ կան նաև այլ հնավայրեր՝ գյուղատեղիներ, գերեզմանատներ, մատուռներ ու եկեղեցիներ:

Նույն շրջանում է հիմնադրվել նաև **Սամդրեթ** (Սմդրեթ) հայկական գյուղը, որը գտնվում է շրջկենտրոնից 8 կմ հարավ-արևմուտք, Խրամ գետի ձախափնյա մի սարավանդի վրա, Թբիլիսի-Թեթրիծղարո-Ծալկա ճանապարհի ձախ կողմում, ծովի մակերևույթից բարձր է շուրջ 700 մ: Նրա հիմնադիրները 1710 թ. եղել են Սուշից ու Վանից գաղթած և մի քանի տարի Դուշեթի շրջանի Անանուր գյուղում ապաստանած մի խումբ հայեր: Յետագայում գյուղը համալրվել է Կոստանդնուպոլսից ու այլ վայրերից տեղափոխված հայ գաղթականներով:

Սամդրեթը մտնում է Դմանիս գյուղի վարչատարածքային կազմի մեջ, 1980 թ. ուներ շուրջ 100 տուն՝ 300 բնակչությամբ: Այստեղ գործում են ակումբ, գրադարան, բուժկետ, կապի բաժանմունք, այլ օջախներ: Յոթնամյա հայկական դպրոցը, որը տեղավորված է երկհարկանի շենքում, ունի շուրջ 60 աշակերտ, ուր սովորում են նաև մոտակա Շիխիլո ադրբեջանական գյուղի երեխաները: Գյուղի կենտրոնում էր գտնվում 1730 թ. կառուցված եկեղեցին:

Գյուղի շրջակայքը հարուստ է պատմաճարտարապետական հուշարածաններով, որոնք ունեն հայերեն արձանագրություններ և կառուցվել են վաղնջական ժամանակներում: Գյուղից շուրջ 1 կմ - հեռավորության վրա, նրա արևմտյան մասում, Մարալդաղի (Պախրասար) գեղատեսիլ լանջին է գտնվում 1896 թ. կառուցված ս. Գևորգ եկեղեցին, որն այժմ ուխտատեղի է նաև շրջակա մյուս գյուղերի բնակիչների համար: Գյուղից 1,5 կմ հեռավորության վրա է գտնվում XII դարից մեզ հասած Սաբարո կուսանոցը, իսկ սրանից 4 կմ հեռու, Խրամ գետի ափամերձ մի բարձունքի կա, ըստ երևույ-

---

<sup>30</sup> Տե՛ս **Խ. Պ. Ամիրյան**, Թուրքալեզու հայ աշուղներ (Օսմանյան կայսրություն, 16-20-րդ դարեր), Փարիզ, 1993, էջ 180-181:

թին, ավելի հին մեկ այլ եկեղեցի ևս, որի պատերին կան հայերեն վիմագիր արձանագրություններ:

Սամղրեթը «Սամղեթ» ձևով հիշատակում է նաև Ս. Ջալալյանը: Նա գրում է. «Ի գեղ հայոց և վրաց հեռի ի Շամշուլտ բերդաքաաքե եօթն վերստիս ի մէջ անտառախիտ ծառաց, ունի զհոյակապ մատուռն յանուն սրբոյն Գեորգայ: Ի վերայ որման եկեղեցւոյ գրի. «Ես՝ Բէկի շինեցի զեկեղեցիս վասն միաբանաց եկեղեցւոյն և սորա ետուն ինձ երկու ժամ թուին ՌԿԱ (1612)»»<sup>31</sup>: Մոտակայքում եղած մի տապանաքարի արձանագրությունը հիշատակում է, որ «Աշոտ Երկաթ պատերազմեցաւ ընդ Վասակայ ի վերայ Շամշուլդէի աստ օթագանեցաւ և միւս աւուր յաղթութիւն արար եւ զնաց»: Իսկ մեկ այլ խաչքարի վրա փորագրված է. «Սուրբ Խաչս բարեխօսէ Շահարբանին. Ծարդան կազմողի. թուին ՌԼԲ (1583)»<sup>32</sup>: Այս ամենը վկայում են, որ Սամղրեթում և նրա շրջակայքում վաղմջական ժամանակներից բնակվել են հայեր:

**Վարխունո** (Վարխունա) հայաբնակ գյուղը գտնվում է Թրիալեթի հարավային փեշերին, շրջկենտրոնից 1 կմ հյուսիս-արևմուտք, Թրիլիսի-Թեթրիժարո-Ծալկա ճանապարհի աջ եզրին: Հիմնադրել են Արևմտյան Հայաստանի Բասենի գավառից գաղթած հայերը հին ավերակների տեղում, կանգուն եկեղեցու շուրջը: Պահպանվում է հնագույն գերեզմանատուն՝ մամռապատ տապանաքարերով, որոնք ունեն հայերեն արձանագրություններ: Հետագայում այստեղ բնակություն են հաստատել նաև Արցախից, Լոռուց և Ղազախի շրջանից տեղափոխված հայերը: Ունի 100-ից ավելի տուն՝ շուրջ 500 բնակչությամբ, բոլորը՝ հայեր: Գործում են հայկական ութամյա դպրոց, ակումբ, գրադարան, բուժկայան և այլն: Այժմ գյուղը մտնում է Թեթրիժարո քաղաքի շրջագծի մեջ և կազմում է նրա թաղամասերից մեկը:

Վարխունոյում են ծնվել ցարական բանակի գեներալներ Դանիել Հարությունյանը, Սիքայել Արեշյանը, Առաքել Քարամյանը, Բանաստեղծ Սարտին Քարամյանը, ԵՊՀ հիմնադիր դասախոսներից մեկը՝ ականավոր մանկաբարձ, գիտության վաստակավոր գործիչ, պրոֆ. Գրիգոր Արեշյանը: Նույն տոհմից են սերում նաև պրոֆեսորներ Լևոն Արեշյանը, Սալոմե Արեշյանը, Գեորգի Արեշյանը և ուրիշներ:

Վարխունո գյուղի շրջակայքը ևս հարուստ է պատմական հուշարձաններով: Նրանից արևմուտք, անտառապատ մի վայրում են գտնվում Դեդոփալ գյուղի ավերակները: Նրա կիսավեր եկեղեցու սե-

---

<sup>31</sup> Ս. Ջալալյան, Ճանապարհորդութիւն ի Սեծն Հայաստան, հատ. Բ, Տփլիս, 1858, էջ 94-95:

<sup>32</sup> Նույն տեղում, էջ 95:

ղանի կամարի ճակատին փորագրված է. «Շինեցաւ Սարիամ Դէղօփալ թագուհոյ վրաց վասն բնակչաց հայազգի. թուին ՌԿԶ (1617)»<sup>33</sup>:

**Մեծ Դուռնուկ** (Դուռնիկ) գյուղը հիմնադրվել է XVIII դարի կեսերին: Գտնվում է շրջկենտրոնից 22 կմ արևելք, Թեթրիծղարո-Սամնետուլ-Թբիլիսի ճանապարհի ձախ կողմում, Ալզեթ գետի աջափնյա մի բարձունքի վրա: Բնակիչները գաղթել են Արցախից և Կախեթի գավառի Թելավ քաղաքից: Հետագայում նոր խմբեր են եկել Շուլավերից և Հայաստանի այլ վայրերից: 1842 թ. ունեցել է 284 հայ բնակիչ, իսկ 1863-ին՝ 48 ծուխ՝ 343 բնակչով: Ներկայումս ունի շուրջ 70 տուն՝ 150 բնակչով: Գործում են ութամյա դպրոց, գրադարան, փոստատուն, բուժկայան: Այստեղ ս. Գևորգ անվամբ երկու եկեղեցի կա, որոնցից մեկը կառուցվել է 1780-ին, իսկ մյուսը՝ XIX դարի կեսերին:

XVIII դարի վերջերին Մեծ Դուռնուկից բաժանվել և նրանից 0,5 կմ արևմուտք հիմնադրվել է **Փոքր Դուռնուկ** գյուղը: Հետագայում այս նորաստեղծ գյուղը համալրվել է Վրաստանի Դարբազ գյուղից գաղթած բնակիչներով: Ունի տարրական դպրոց, ակումբ, գրադարան և այլն:

**Փոքր Դաղեթ** (Պուճուր Դաղեթ) բնակավայրը գտնվում է շրջկենտրոնից 6,5 կմ հարավ-արևելք, Թեթրիծղարո-Սամշվիլդո-Դաղեթ-Խաչեն խճուղու ձախ եզրին, ունի քարաշեն եկեղեցի (XIX դ.), հորդաբուխ սառնորակ աղբյուր, բնակության համար հարմար դիրք: Բնակիչները XIX դարի կեսերին տեղափոխվել են Մեծ Դաղեթ (Դաղեթ-Խաչեն) գյուղից, որտեղից էլ առաջացել է նրա Փոքր (կուճուր, պուճուր) Դաղեթ անունը: Այժմ այնտեղ բնակվում է 3 ընտանիք:

Թեթրիծղարոյի շրջանի հայկական ամենափոքր բնակավայրերից են նաև **Ծիլաղբյուրը** և **Շահնապատը**: Ծիլաղբյուրը գտնվում է Թբիլիսի տանող ճանապարհի ձախ եզրին, Ներքին Թելեթից 2 կմ հյուսիս-արևմուտք: Այժմ ունի 3 ընտանիք: Իսկ Շահնապատը մի բարձր բլրի գագաթին գտնվող ուխտատեղի է, ուր կա ս. Գևորգ անվամբ մի քարաշեն եկեղեցի: Ներկայումս այնտեղ ոչ ոք չի բնակվում և եկեղեցին էլ չի հսկվում, լքված է ու անտեր:

### 3

Պատմական Թռեղքի մեծ մասը՝ 1050 կմ<sup>2</sup>, ներկայումս հյուսիս-արևմուտքից զբաղեցնում է **Ծալկայի շրջանը**, իսկ նրա մնացած մասը՝ շուրջ 900 կմ<sup>2</sup>, մտնում է Դմանիսի շրջանի վարչական տա-

<sup>33</sup> Ս. Զալալյանց, ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, հատ. Բ, Տփլիսիս, 1858, էջ 95:

րածքի մեջ: Ծալկայի շրջանին բաժին են ընկնում համանուն սարահարթն ու Թրիալեթի լեռնաշղթայի հարավ-արևմտյան փեշերը: Հիշյալ սարահարթը շրջափակված է բարձր լեռներով ու խորունկ ձորերով, որոնք հարուստ են հորդառատ գետակներով ու ջրառատ աղբյուրներով: Դրանք, լեռնալանջերով ու ձորակներով սրընթաց իջնելով ցած, թափվում են սարահարթի գրեթե կենտրոնով հոսող Խրամ (Քցիա) գետը: Սարահարթը բաժանվում է երկու մասի՝ ներքին և վերին: Նրա ներքին մասում, Խրամ գետի վրա, մի հարմարավետ վայրում, կառուցվել է ջրամբար, որի մակերեսը 33,7 կմ<sup>2</sup> է, տարողությունը՝ 312 մլն մ<sup>3</sup>, իսկ խորությունը՝ 25 մ է: Ջրամբարը ծովի մակերևույթից բարձր է 1512 մ: Այն կառուցվել է տարվա բոլոր եղանակներին գետի հոսանքը կարգավորելու նպատակով:

Ծալկայի սարահարթը հարուստ է նաև լճերով: Այստեղ մշտապես գոյություն ունեցող լճերից են. Շավմաբաղում՝ Աբխազին, Ղզլբիլիսա գյուղի մոտ՝ Ջամուշը, Սամբայի և Բաշկովի լճերը՝ համանուն գյուղերի մոտ: Սրանցից խոշորներն են Բաշկովը և Ջամուշը, որոնց շրջագիծը հասնում է շուրջ 2 կմ-ի, իսկ խորությունը՝ 2-4 մ է: Այս լճերը հիմնականում սնվում են գրունտային, ձնհալքի, անձրևների ու աղբյուրների ջրերով:

Ահա այս գեղատեսիլ սարահարթը և նրան երիզող Թռեղքի լեռների փեշերը անցյալում եղել են խիտ բնակեցված: Սակայն թուրքերի ու լեզգիների անընդհատ ասպատակությունների, ավարառությունների ու գերեվարությունների, թալանի ու կողոպուտի հետևանքով XVIII դարի վերջերին այս տարածքներն արդեն դարձել էին անմարդաբնակ:

1828-29 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ ռուսական զորքերի կողմից ազատագրվեց Օսմանյան կայսրության տիրապետության տակ եղած Արևմտյան Հայաստանի տարածքների մի զգալի մասը: Ռուսական զորքերը կարճ ժամանակաընթացքում ազատագրեցին Սև ծովի կովկասյան ափերը, Ախալցխայի փաշայության մեծ մասը՝ Ախալցխա և Ախալքալաք քաղաքներով, ապա գրավեցին նաև Կարսը, Բայազետը, Ալաշկերտը, Էրզրումը, Օլթին, Խնուսը, Սուշը, Դերջանը, Բաբերդը, Գյումուշխանեն և այլ քաղաքներ ու դուրս եկան Կ. Պոլսի մատույցները, հասան գրեթե Տրապիզոն: Թուրքական սուլթան Մահմուդ II-ը, տեսնելով, որ պարտություն է կրում, Ռուսաստանին առաջարկեց հաշտության պայմանագիր կնքել: Ադրիանուպոլսում 1829 թ. սեպտեմբերի 14-ին կնքվում է հաշտության պայմանագիր, ըստ որի՝ Սև ծովի Կովկասյան ափերի հետ մեկտեղ Ռուսաստանին էր անցնում Ախալցխայի փաշայության մի մասը՝ Ախալցխա և Ախալքալաք քաղաքներով: Սակայն Արևմտյան Հայաստանի մեծ մասը, որ ազատագրվել էր ռուսաց

բանակի կողմից, ամբողջությամբ ետ վերադարձվեց Թուրքիային՝ մեծ հուսախաբություն պատճառելով հայերին, քանի որ վերջիններս, թուրքական լծից ազատագրվելու հույսով լցված, այդ պատերազմում իրենց կամավորական ջոկատներով ու խմբերով մեծապես օգնել էին ռուսներին՝ հաղթանակի հասնելու գործում:

Ստեղծված իրավիճակում Թուրքիային վերադարձված տարածքներում դժվարանում էր հայերի հետագա բնակության վիճակը: Ուստի 1829-30 թթ. Արևմտյան Հայաստանի մի շարք նահանգներից ու վիլայեթներից Ռուսաստանի գրաված տարածքներն ու Արևելյան Հայաստան են տեղափոխվում 14.047 ընտանիք՝ շուրջ 100 հազար բնակչով ու հաստատում իրենց նոր բնակավայրերը: Նրանց մի մասը բնակություն է հաստատում Հայաստանի լեռնային վայրերում, իսկ մեծ մասը զբաղեցնում է Ախալքալաքի ու Ծալկայի տարածքները: Այս նոր լեռնաշխարհը, որ իր դիրքով ու բնական պայմաններով շատ էր նման Երզրումի նահանգին, դուր է գալիս նորեկներին, և նրանք այստեղ իրենց հայրենի բնակավայրերի անուններով՝ հիմնադրում են նոր գյուղեր ու ավաններ: Գաղթականների 7298 ընտանիքը Երզրումից էր, 4215-ը՝ Բայազետից, 2467-ը՝ Կարսից, 67-ը՝ Արտահանից: Այդ ընթացքում 532 ընտանիք հույներ էլ գաղթել էին Ներքին Բասենից և Կիզիկի ու Օվայի սանջակներից<sup>34</sup>, որոնք բոլորն էլ հաստատվում են Ծալկայի սարահարթում: Իսկ հայ ընտանիքներից Ծալկայի սարահարթը իրենց մշտական բնակավայր են ընտրում 1.050-ը, որոնք շուտով հիմնադրում են իրենց գյուղերը:

Առաջին հունական գյուղը՝ Բեշտաշենն այստեղ հիմնադրվել է 1830 թ. գարնանը, իսկ հայկական Աշկալան՝ նույն տարվա հունիսի 15-ին: Հետագայում հիմնադրվում են նաև մյուս գյուղերը: Այսպես՝ 1830 թ. հուլիսի 5-ին հիմնադրվել են Օզնին և Նարդևանը, ապա Ղուշչին, Ղզլբիլիսան, Դարագյուղը և Դաշբաշը: 1840-45 թթ. նարդևանցիների մի մասը առանձնացել և հիմնադրել է Սյազմա գյուղը<sup>35</sup>, իսկ 1837-48 թթ. Աշկալայից մի շարք ընտանիքներ ա-

---

<sup>34</sup> Ի դեպ, հույների առաջին գաղթական խմբերը Թուրքիայի Գյումուշխանե բնակավայրից Անդրկովկաս են տեղափոխվել դեռևս վրաց Յերակ II թագավորի օրոք, ավելի ճիշտ 1763-ին: Նրանք եղել են հանքագործներ, որոնք բնակություն են հաստատել Լոռիում և այնտեղ Ալավերդու պղնձահանքերում մշակել են պղինձ: Հետագայում XVIII դարի վերջերին և XIX դարում նորանոր խմբեր են տեղափոխվում Անդրկովկաս, և նրանք հիմնականում բնակություն են հաստատում Վրաստանի Ծալկայի և Թեթրիծղարոյի շրջաններում, ինչպես նաև Ալավերդու շրջակայքում:

<sup>35</sup> Այազման հիմնադրվել է Թեթրիծղարո (Սպիտակ աղբյուր) հնագույն բնակավայրի տեղում, ուր կա VI դարից մեզ հասած և ցարդ կամգուն մի եկեղեցի, որն այազմեցիների կողմից օգտագործվում է որպես սրբավայր: «Այազսա» բառն հունարեն է, որն ունի օրհնված (սուրբ) ջուր իմաստը: Իսկ այդ ջուրը, որ մի հորդ աղբյուր է և բխում է հիշյալ եկեղեցու մուտքին մոտ գտնվող մի քարաժայռի տակից, ունի կաթի գույն, որից էլ առաջացել է գյուղի հին Թեթրիծղարո անունը:

ռանձնանում և հիմնադրում են Խաչգյուղը և Ղաթուռը: Այնուհետև հայ-հունական Ջինիս գյուղի հայերի մի մասը անջատվում և հիմնում է Ջիֆթքիլիսան, իսկ մյուս մասը նույնպես առանձնանում և 1845 թ. հիմնադրում է Բուռնաշեթը: 1860-64-ին հիմնադրվում է բոշաների Դամալա-Խարաբան:

Շրջանի միակ վրացական գյուղը՝ Ռեխան, հիմնադրվել է 1829-30 թթ.: Ելիզավետպոլի գերմանացիների մի մասը նույն շրջանում գաղթել և այստեղ ձևավորել է Ալեքսանդերոֆելդ գաղութը (ավանը), որը հետագայում կոչվել է Ռոզենբերգ (Վարդերի լեռ կամ Վարդալեռ), ապա՝ Խորհրդային կարգերի օրոք՝ Սոլոտովո, իսկ այժմ կոչվում է Թրիալեթ: Ներկայումս այնտեղ բնակվում են հույներ, հայեր, վրացիներ և ռուսներ, գերմանացիները Հայրենական Մեծ պատերազմի ընթացքում արքորվել են Միջին Ասիա: Ծալկայում XIX դարի առաջին քառորդում հիմնադրվել են<sup>36</sup> նաև թուրքական Արջևան, Սարվան, Կեդակլար, Թեջիս, Չոլյան և Մինասազքենդ գյուղերը<sup>37</sup>:

Շրջկենտրոնը հիմնադրվել է 1829-30 թթ. երգրումի վիլայեթից գաղթած հույների կողմից և կոչվել է Բարմաքսիզ: Երբ 1936 թ. Ծալկայի սարահարթը առանձնացվել ու կազմել է ինքնուրույն վարչական միավոր, կենտրոնը դարձել է Բարմաքսիզը, որն անվանափոխվել և այդուհետև կոչվել է Ծալկա: Ի դեպ, Ծալկա անունը ծագել է Թռեղքի պատմական «Ծաղկա» կամ «Ծաղկեայ» հայերեն անվանումից:

1897 թ. մարդահամարի տվյալներով Ծալկայում բնակվում էր 26.673 մարդ, որից 12.926-ը՝ տղամարդ, իսկ 12.747-ը՝ կին: Ըստ դավանանքի. ուղղափառներ՝ 16.456, հայ-լուսավորչականներ՝ 7.178, մահմեդականներ՝ 2.530, լութերականներ՝ 439 մարդ: Ըստ ազգությունների՝ Ծալկայի բնակչությունն ուներ հետևյալ պատկերը. հույներ՝ 10.739, հայեր՝ 7.178, հույն-հայեր՝ 986, վրացիներ՝ 500, թուրքեր՝ 2.530, գերմանացիներ՝ 439, բոշաներ՝ 186, ռուսներ՝ 62, լեհեր՝ 8 մարդ:

Ծալկայի շրջանը ներկայումս ունի 44 բնակավայր, որից 22-ը՝ հունական, 13-ը՝ հայկական, 5-ը՝ թուրքական, 3-ը՝ հայ-հունական, 1-ը՝ վրացական: Հայկական գյուղերն են Աշկալան, Ղաթքիլիսան, Նարդևանը, Ղուշչին, Օզնին, Խաչգյուղը, Ջիֆթքիլիսան, Բուռնաշե-

---

<sup>36</sup> Ծալկայի շրջանի հայկական բոլոր բնակավայրերի հիմնադրման պատմությունը ավելի մանրամասնորեն տվել է **Յ. Ս. Միքայելյանը** իր «Ծալկայի հայերի ազգագրությունը և բանահյուսությունը» գրքում (Երևան, 1998), էջ 17-38, իսկ հունական գյուղերի մասին տես **Д. И. Читлов**, Цалкинцы-дети Грузии (Тбилиси, 1992) աշխատության մեջ:

<sup>37</sup> **Յ.Ս. Միքայելյան**, նշված աշխատությունը, էջ 21:

քը, Ղաբուռը, Այազման, Դարագյուղը (Ձորագյուղ), Դաշբաշը և Դամալա-Խարաբան: Հայ-հունական գյուղերն են Կյարակը, Ախալիկը և Թրիալեթը:

Ծալկայի շրջանի հայկական գյուղերը հիմնականում գտնվում են սարահարթի արևմտյան մասում, այսինքն՝ Վերին Ծալկայում, իսկ Ներքին Ծալկայում միայն երկուսն են՝ Դաշբաշը և Դարագյուղը:

Բոլոր գյուղերում կան վարչական մարմիններ, միջնակարգ և ութամյա դպրոցներ, կապի բաժանմունքներ, բուժկայաններ և այլ հաստատություններ: Ազգաբնակչությունը հիմնականում զբաղվում է անասնապահությամբ, ինչպես և հացահատիկային և բանջարաբոստանային կուլտուրաների մշակությամբ: Այստեղ ընդհանրապես առատ են աճում կարտոֆիլն ու կաղամբը: Վերջին տասնամյակներում Ծալկայի խստաշունչ կլիմա ունեցող սարահարթում լայն տեղ է զբաղեցնում նաև այգեգործությունը:

Ծալկայի շրջանը ևս մեր գիտությանն ու մշակույթին տվել է բազմաթիվ անվանի մարդիկ, հասարակական-մշակութային նշանավոր գործիչներ, որոնցից են ՀԽՍՀ ժողովրդական արտիստ Գուսան Հավասին, բանաստեղծներ Դանիել Հարությունյանը, Արտակ Ոսկանյանը, արձակագիրներ Սերգեյ Գալստյանը, Վահան Թամարյանը, Վարուժան Այվազյանը, Ռուսաստանի գիտության վաստակավոր գործիչ, ռազմական գիտությունների դոկտոր, պրոֆ. Հրայր Սիմոնյանը, ֆիզմաթ գիտությունների դոկտոր, պրոֆ. Ռաժդեն Բաբերցյանը, քիմիական գիտությունների դոկտոր Վալերի Նազարեթյանը և 10-ից ավելի թեկնածուներ: Այստեղ են ծնվել նաև Խորհրդային Միության հերոս, զեներալ-մայոր, զրող Աշոտ Ղազարյանը, Փառքի երեք աստիճանի շքանշանների ասպետ Վարազդատ Ղուլիկյանը, սոցիալիստական աշխատանքի հերոս Սերյոժա Ավետյանը և այլ անվանի մարդիկ: Այստեղից են սերում նույնպես ԽՍՀՄ ժողովրդական նկարիչ, սոցիալիստական աշխատանքի հերոս Դմիտրի Նալբանդյանը և նշանավոր ճարտարապետ Գևորգ Քոչարը (երկուսն էլ՝ Դաշբաշ գյուղից):

Ծալկայի հույները նույնպես տվել են բազմաթիվ անվանի մարդիկ. Խորհրդային Միության երկու հերոս՝ Ֆեոֆիլակտ Ջուբալովը և Ֆեոդոր Քոթանովը, ավիացիայի զեներալ-մայոր, վաստակավոր օդաչու Յակիմ Յանակովը և այլ բարձրաստիճան զինվորական գործիչներ: Գիտության ասպարեզում ևս ունեն 10-ից ավելի գիտությունների դոկտորներ և շուրջ 100 թեկնածուներ:

Շրջանում ներկայումս բնակվում են հույներ, հայեր, ադրբեջանցիներ, վրացիներ և ռուսներ: Հույների թիվն հասնում է շուրջ 30 հազարի, մեծ է նաև հայերի թիվը՝ մոտ 15 հազար: Ադրբեջանցիները, վրացիներն ու ռուսները համեմատաբար փոքր տոկոս են կազ-

մում: Շրջկենտրոնն Ծալկա քաղաքում ևս գերակշռում են հույները, որոնց կողքին ապրում են նաև հայեր ու վրացիներ: Հույները Ծալկայի շրջանում ստանում են ռուսական կրթություն, բոլոր հունական գյուղերում գործում են ռուսական դպրոցներ:

Ծալկան ներկայումս թռեղքի աչքի ընկնող քաղաքներից է: Նրա անունը, մինչև Բարմաքսիզ ավանի շրջկենտրոն դառնալը, կրել է ներկայիս Հունիե-Կալա գյուղը, որը գտնվում է Խրամ գետի աջ ափին, այժմյան ջրամբարի մոտ: Իսկ Բարմաքսիզի տեղում հնում եղել է Էծանի վրացական գյուղը, որը XVIII դարում վերածվել էր ավերակների: Էրզրումից գաղթած հույները այնտեղ հիմնադրում են իրենց ավանը, որն էլ 1936-ից կոչվում է Ծալկա: Այն տեղավորված է Ներքին Ծալկայի մի գեղատեսիլ հովտում, որը երեք կողմից շրջափակված է մեղմաթեք լեռնալանջերով, իսկ արևելյան կողմից բաց հարթավայր է՝ երիզված եղևնիների խիտ անտառով: Քաղաքը ծովի մակերևույթից բարձր է շուրջ 1600 մ: Այն երկաթուղային կայարան է Թբիլիսի-Մարաբդա-Թեթրիժղարո-Նինոծմինդա գծի վրա, Մառնեուլ երկաթուղային կայարանից հեռու է 84 կմ: Նրա միջով են անցնում Թբիլիսի-Մառնեուլ-Թեթրիժղարո-Նինոծմինդա և Թբիլիսի-Մանգլիս-Նինոծմինդա ճանապարհները, որոնցից առաջինը ամենաերկարն է՝ 129 կմ, իսկ երկրորդը ամենակարճը՝ 90 կմ:

Ծալկայում կան մի շարք մշակութային օջախներ, արդյունաբերական ու գյուղատնտեսական ձեռնարկություններ, միջնակարգ դպրոցներ, պարարվեստի ուսումնարան և այլն: Այստեղ տասնամյակներ շարունակ գործել են բժշկական և մանկավարժական ուսումնարաններ, գյուղատնտեսական տեխնիկում, որոնք միջնակարգ մասնագիտական կրթություն են տվել նաև հարյուրավոր հայ պատանիների ու աղջիկների: Ծալկայում 1936 թ. հիմնադրվել է հայատառ ու ռուսատառ տպարան, ուր սկսել է լույս տեսնել «Լեւինյան ուղի-Լեւինյանի պուտ» (1936-1991 թթ.) երկլեզվյան թերթը:

Ծալկայի գեղատեսիլ բնությունը, նրա մաքուր օդն ու քաղցրահամ ջրերը, վեհանիստ լեռներն ու կապույտ երկինքը դեպի իրենց են ձգել շատ անվանի մարդկանց: Նրանցից մեկն էլ եղել է Հովհ. Թումանյանը, որը մեր դարասկզբին Փարվանա լիճ մեկնելու ճանապարհին կանգ է առել Ծալկայում և հյուրընկալվել Դաշբաշ (Քարագլուխ, հնում՝ Ախալքալաք) գյուղում, ուր տեսել է վեհանիստ ժայռի կատարից գյուղին հսկող մենավոր վիթխարի կաղնին: Ասում են՝ Դաշբաշի ծերունիների հետ նա քեֆ է արել այդ ծառի տակ և հետագայում գրել իր հայտնի «Ջրվեժը» բանաստեղծությունը: Այդ բարձր բլրից շատ լավ է երևում Դաշբաշի հիասքանչ ջրվեժը, որն առաջանում է Քոռ (Կուր) գետակի պաղպաջուն ջրերից և շուրջ 500 մետր բարձունքից գահավեժ թափվում է Խրամի խորունկ կիրճը:

Այսպիսով, կարող ենք ընդգծել, որ պատմական Թռեղքուն և հարակից տարածքներում ձևավորված Թեթրիծղարոյի, Ծալկայի և Դնանիսի, ինչպես և Բոլնիսի, Մառնետուլի ու Գարդաբանի վարչական շրջանները, որոնք ներառում են նաև հինավուրց Վրաց դաշտը կամ Սոմխիթը, անցյալի նման շարունակում են մնալ հայախիտ բնօրրան: Միջնադարում օտար նվաճողների կողմից ամայացած ու անմարդաբնակ դարձած այդ տարածքները XVIII դարի վերջերին և XIX դարի սկզբներին վերաբնակեցվելով լեռնական վրացիներով, ռուսներով ու Կախեթից, Արցախից, Լոռուց և Արևմտյան Հայաստանի տարբեր վիլայեթներից գաղթած հայերով՝ նորից կյանքի են կոչվել՝ շարունակելով հարստացնել ու զարգացնել հայ և վրաց ժողովուրդների բարեկամության ու համագործակցության դարավոր ավանդույթները:

Վերջին երկուսուկես դարերի ընթացքում հայերը Թռեղքուն և նրան հարող շրջաններում կառուցել են բազմաթիվ վանքեր ու եկեղեցիներ, հասարակական ու մշակութային շենքեր, կամուրջներ ու ճանապարհներ, ստեղծել են պատմաճարտարապետական մնայուն հուշարձաններ, հրատարակել հայերեն պարբերականներ, որոնք լրացնում ու հարստացնում են հնուց ի վեր հայահոծ այդ երկրամասի անցյալի ու ներկայի պատմության ուշագրավ էջերը: Մնում է, որ մեր գիտնականները լրջորեն ուսումնասիրեն և իմաստավորեն մեր ժողովրդի այդ հատվածի մաքառումներով ու հերոսություններով լի պատմությունը:

## ՄԱՇՏՈՑՅԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԸ ՎՐԱՍԱԼՈՒՄ\*

### Վահան ՄԱՂԱԼՅԱՆ

*բանասիրական գիտությունների թեկնածու*

Չայոց գրերի գյուտի 1600-ամյակը, որը լրանում է այս տարի, առիթ է մեկ անգամ ևս հետադարձ հայացք ձգելու մեր դպրության անցած ճանապարհին և ի մի բերելու նրա բազմադարյան հարուստ պատմությունը, որի շատ էջեր դեռևս մնում են բաց:

Չայտնի է, որ մեսրոպյան գրերի գյուտից անմիջապես հետո՝ V դարի սկզբին, հայոց վերածնունդ ապրող առաջին դպրոցը Սահակ Պարթևի ու Մեսրոպ Մաշտոցի կողմից հիմնադրվել է Վաղարշապատում: Այնուհետև Մաշտոցի ձեռքով հայագիր դպրոցներ են բացվում երկրի տարբեր մասերում: Եվ այդպես, հայոց դպրությունը, հայ գիրն ու գրչությունը լայն տարածում են գտնում ու զարգանում Չայաստանում:

Անցած տասնվեց դարերի ընթացքում հայ ժողովուրդը, չնայած իր կրած ծանր տառապանքներին ու բռնի տեղահանություններին, երբեք մոռացության չի մատնել իր լեզուն, իր գիրն ու գրականությունը: Կույր բախտը ուր էլ նետել է նրա բզկտված բեկորները, ուր էլ ապաստանել են թեկուզև մի բուռ հայեր, նրանք իրենց հանապազօր կարիքները հոգալու հետ մեկտեղ մտածել են նաև հոգևոր կյանքի օջախներ ու դպրոցներ հիմնադրելու մասին: Այդպես են ստեղծվել հայոց կրթական մի շարք նշանավոր հաստատություններ աշխարհի տարբեր ծագերում: Սակայն, ցավոք, դեռևս նրանց մասին մենք չունենք լիարժեք տեղեկություններ: Մենք չունենք նաև բուն պատմական Չայաստանի տարածքում գործած մեր ազգային դպրոցների ամբողջական պատմությունը:

Չայ հին և միջնադարյան դպրոցների մասին շատ արժեքավոր տեղեկություններ կան ցրված մեր մատենագիրների երկերում, ինչպես և վերջին տասնամյակներում գրված պատմաբանասիրական բնույթի աշխատություններում, հայ ժողովրդի պատմության ակա-

---

\* Հոդվածն արտատպվում է «Մանկավարժական միտք» հանդեսից (Երևան, «Տաթև» գիտակրթական համալիր, 2005 թ., № 4, էջ 97-108):

դեմիական հրատարակություններում, հայրենագիտական գրքերում և այլուր: Դրանց հետ մեկտեղ մեր որոշ հանրահայտ կրթօջախների մասին տպագրվել են արժեքավոր գրքեր, գավառական դպրոցներին վերաբերող շատ նյութեր էլ դեռևս մնում են մամուլի էջերում: Դրանք պետք է ուսումնասիրել, համակարգել և հայոց դպրոցի անցած ուղու լիարժեք պատկերը ներկայացնել սկզբից մինչև մեր օրերը:

Չնայած այդ ուղղությամբ որոշակի քայլեր կատարվել են, հայ դպրոցի թե՛ անցյալի և թե՛ նոր ու նորագույն շրջանների պատմության ու մանկավարժական մտքի վերաբերյալ գրվել են մի շարք արժեքավոր աշխատություններ ու մենագրություններ<sup>1</sup>, բայց և այնպես անելիքները դեռևս շատ են:

Մեր ներկա աշխատանքը Վրաստանի հայկական դպրոցների անցած ուղին ներկայացնելու մի համեստ փորձ է: Այդ պատկերն ավելի ամբողջական դարձնելու նպատակով անդրադարձել ենք նաև դրանց ակունքներին, այսինքն՝ Մեսրոպ Մաշտոցի հիմնադրած դպրոցներին, որոնցից էլ հետագա դարերում ճյուղավորվել են թե՛ վրացալեզու և թե՛ հայալեզու կրթօջախները Վրաստանում:

Սակայն մինչ բուն նյութին անցնելը փորձել ենք ամփոփ ձևով ներկայացնել նաև վրաց գրերի գյուտի մասին ցարդ եղած տեսակետները և այդ գրերի ստեղծման գործում Մաշտոցին վերապահված դերը: Չէ՞ որ, ըստ մեզ հասած պատմական տեղեկությունների, նա է եղել Վրաստանի դպրոցների հիմնադիրն ու առաջին ուսուցիչը, որը իր իսկ հորինած այբուբենը սկսեց ուսուցանել երեխաներին:

\* \* \*

Վրաց գրերի ստեղծման ժամանակի ու դրանց հեղինակի մասին ցարդ հայտնի է երկու սկզբնաղբյուր: Դրանցից մեկը հայ առա-

---

<sup>1</sup> Դրանցից կարելի է առանձնացնել՝ Գ. Զարպիանալեան, Հայկական հին դպրութեան պատմութիւն, Վենետիկ, 1897, Վ. Հացունի, Դաստիարակութիւն հին հայոց քով, Վենետիկ, 1923, Ա. Ալպօեան, Պատմութիւն հայ դպրոցի, հատ. Ա, Գահիրէ, 1956, Ա. Խ. Մովսիսյան, Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության (IX-XV դարեր), Եր., 1956, Մ. Հ. Սանթրոսյան, Արևելահայ դպրոցը XIX դարի առաջին կեսին, Եր., 1969, Գ. Ա. Նազիկյան, Արևմտահայ մանկավարժական միտքն ու դպրոցը XIX դարի սկզբից մինչև XIX դարի 50-60-ական թվականները, Եր., 1969, Վ. Ս. Երկանյան, Պայքար հայկական նոր դպրոցի համար Անդրկովկասում (1870-1905 թթ.), Եր., 1970, Ց. Ռ. Սիմոնյան, Ակնարկներ հայ դպրոցի և մանկավարժական մտքի պատմության, Եր., 1971, Գ. Հ. Հարությունյան, Արևելահայ մանկավարժական միտքը XIX դարի երկրորդ կեսին, Եր., 1978, Ս. Կ. Խուրդյան, Արևելահայ դպրոցները 1830-1920 թվականներին, Եր., 1987, Նույնի՝ Սովետահայ դպրոցի պատմություն (1920-1941 թթ.), ակնարկներ, Եր., 1973 և այլ գրքեր:

ջին պատմագիր Կորյունի «Վարք Մաշտոցի» կենսագրական երկն է, ըստ որի՝ վրաց գրերը հայկական ու աղվանական այբուբենների հետ մեկտեղ ստեղծել է հայ մեծ լուսավորիչ ու եկեղեցական գործիչ Մեսրոպ Մաշտոցը V դարի սկզբին: Ի դեպ, այդ մասին հավաստի տեղեկություններ է թողել նաև Մաշտոցի մյուս աշակերտը՝ Մովսես Խորենացին իր «Հայոց պատմություն» մատյանում:

Երկրորդ սկզբնաղբյուրը XI դարից մեզ հասած «Քարթլիս ցխովրեբա» («Վրաստանի կյանքը») ժամանակագրությունն է, որի կազմող վրաց հայտնի պատմագիր Լեոնտի Մրովեցին (Մրովելի) նշում է, թե վրաց գրերի ստեղծողը եղել է Քարթլիի առաջին թագավոր Փառնավազը մ. թ. ա. IV դարի վերջին կամ III դարի սկզբին: Փառնավազը, ըստ ավանդության, Վրաստանի վրա իշխել է Քրիստոսի ծննդից երեք դար առաջ (302-237 թթ.):

Սակայն վրաց հնագույն Տարեգրությունը, այս կցկտուր տեղեկություններից բացի, այլ բան չի հաղորդում, չի մեկնաբանում, թե վրացերենի այբուբենը ժամանակի ինչ գրերի հիման վրա, ինչպես և ինչ սկզբունքներով է ստեղծվել, մի բան, որը Կորյունն իր «Վարք Մաշտոցի» երկում տալիս է հստակ ու հանգամանորեն:

Չտա՞գա շրջանի գրեթե բոլոր հայ պատմիչները, որոնք անդրադարձել են հայոց գրերի գյուտին, հենվել են Կորյունի հաղորդած տեղեկությունների վրա: Այստեղ չմոռանանք նշել նաև V դարի վերջի մատենագիր Ղազար Փարպեցուն, որն իր «Հայոց պատմության» մեջ մանրակրկիտ կերպով անդրադարձել է հայոց գրերի գյուտին: Բայց, ավստ֊ս, ի տարբերություն վարքագիր Կորյունի և պատմահայր Խորենացու, նա լռում է Մաշտոցի վրաստանյան լուսավորչական գործունեության մասին, չնայած իր գրքում բազմաթիվ էջեր ունի նվիրված Վրաստանին<sup>2</sup>:

Իսկ ինչ վերաբերում է վրաց մատենագիրներին ու գիտնականներին, ապա նրանք, հենվելով իրենց սկզբնաղբյուրների հաղորդած տեղեկությունների վրա, իհարկե, մերթընդմերթ հիշատակելով նաև Կորյունի անունն ու «Վարքը», ջանում են ապացուցել, որ վրաց գրերը ստեղծվել են ավելի վաղ, քան կարող են վերագրվել Մաշտոցին:

XIX-XX դարերի գրեթե բոլոր գիտնականները՝ թե հայ (Ի. Հարությունյան, Մ. Աբեղյան, Ստ. Մալխասյանց, Հ. Աճառյան, Հ. Տաշյան, Հ. Մանանդյան, Գ. Կեր-Մկրտչյան, Գ. Սևակ, Էդ. Աղայան և ուրիշներ), թե վրացի (Ի. Ա. Իավախիշվիլի, Կ. Խ. Կեկելիձե, Շ. Ծ. Չիճիգուրի, Ա. Գ. Շանիձե, Գ. Ծ. Ծերեթելի, Ն. Փ. Շոշիաշվիլի, Ռ. Ն. Պատարիձե, Զ. Ն. Ալեքսիձե, Ս. Ջանաշվիլի, Դ. Բաքրաձե, Պ. Ինգորովա, Դ. Ղարիջաշ-

---

<sup>2</sup> Հայ պատմագրության և բանասիրության մեջ կա այն կարծիքը, որ Ղազար Փարպեցու «Պատմության» մեջ ևս եղել են այդ դրվագները, սակայն հետազայում նրա գրքից այդ էջերը ընկել ու կորել են:

վիլի, Դ. Չուբինաշվիլի, Ս. Ջանաշիա, Ս. և Ն. Ղաուխչիշվիլիներ, Գ. Մելիքշվիլի և ուրիշներ) և թե օտարազգի (Մարի Բրոսսե, Վիկտոր Լանգուա, Ալֆրեդ Գուտշմիդտ, Ֆրիդրիխ Մյուլլեր, Հայնրիխ Հյուբշման, Յոզեֆ Մարկվարտ, Վինֆրիդ Բոդեր, Վ. Գարդտհաուզեն, Ֆաուլման, Հոլզեր Պեդերսոն, Ն. Յա. Մառ և ուրիշներ), որոնք անդրադարձել են հայոց գրերի գյուտին և Մաշտոցի կենսագրությանը, շուշափել են նաև վրաց այբուբենի ստեղծման խնդիրը:

Այդ գիտնականները հիմնականում բաժանվում են երեք խմբի:

Մի խումբը, հենվելով սկզբնաղբյուրների վրա և ուսումնասիրելով ստեղծված հսկայածավալ նյութը, այն տեսակետն է հայտնում, որ վրաց գրերի ստեղծողը Մեսրոպ Մաշտոցն է:

Մյուս խումբը մերժում է այդ տեսակետը և պնդում, որ վրաց գրերը ստեղծվել են Մաշտոցից շատ առաջ՝ վրաց առաջին թագավոր Փառնավագի օրոք և նրա կողմից: Այս խմբին պատկանող գիտնականները իրենց տեսակետը հիմնավորելու համար բերում են հետևյալ պատճառաբանությունները, որ իբր վրացերենի տառածները, նշանների հնչյունային արժեքները, դրանց անվանումները, ինչպես նաև նշանների քանակն ու դասավորությունը հայերենի հետ չեն համընկնում, ուստի և դրանք Մաշտոցը չի ստեղծել:

Վրաց գրերի ստեղծման գործում Մաշտոցի դերը նսեմացնելու կամ ժխտելու նպատակով վրացի լեզվաբանները բերում են նաև մեկ այլ կռվան: Նրանք ենթադրաբար ասում են, թե Մաշտոցը վրացերեն չգիտեր, նա ինչպե՞ս կարող էր հնարել այբուբենը մի լեզվի, որին չէր տիրապետում: Սա, իրոք, եղած փաստարկներից ամենալուրջն է: Սակայն ոչ մի տեղ առայժմ չի հայտնաբերվել մի սկզբնաղբյուր, ուր գրված լիներ, թե Մաշտոցը վրացերեն չգիտեր: Մաշտոցը ժամանակի ամենալուսավորյալ անհատականություններից մեկն էր, որը տիրապետում էր մի շարք լեզուների, այդ թվում՝ գուցե և վրացերենին:

Ոմանք էլ այն կարծիքն են հայտնում, որ վրաց գրերի ստեղծման մասին Կորյունի հաղորդած տեղեկությունները «Վարք Մաշտոցի» երկի բնագրում չեն եղել, դրանք արտագրող գրիչների կողմից կատարված հետագա շրջանի հավելումներ են:

Վրաց և օտարազգի գիտնականների մեջ կան նաև այնպիսիք, որոնք, ինչպես օրինակ, Ի. Ն. Ջավախիշվիլին և ուրիշները, նույնիսկ գտնում են, որ վրաց գրերի ծագումը ավելի հին է, քան վերագրվում է Փառնավագ թագավորին, և այդ թվականը տանում հասցնում են մինչև մ. թ. ա. VII դարը:

Կա նաև գիտնականների մի երրորդ՝ այսպես կոչված միջին խումբ, որը Մաշտոցին ընդունողներին ու նրան մերժողներին փորձում է «հաշտեցնել»՝ գրավելով միջին դիրք: Դրանց մեջ է նաև մե-

ծանուն վրացագետ ու հայագետ Ն. Յա. Մառը: Նա գտնում է, որ եթե վրաց այբուբենը անգամ Մաշտոցը չի հնարել, ապա նա V դարում եղած գրերը, որ արդեն ունեին պակասավոր կողմեր և լիովին չէին համապատասխանում վրացերենի հնչյունական համակարգին, կարգավորել, լրացրել ու համապատասխանեցրել է ժամանակի վրաց լեզվին:

Հայտնի է, որ վրացերենն ունի իրարից տարբեր երկու տեսակի գիր, որոնցից առաջինը կոչվում է խուցուրի (եկեղեցական-կրոնական), իսկ երկրորդը՝ մխեդրուլի (գինվորական, որ այժմ անվանում են քաղաքացիական-աշխարհիկ): Ընդունված այս երկու խումբ տառատեսակները ներկայումս վրացագիտությունը բաժանել է երեք խմբի՝ նախկին առաջին տեսակը՝ խուցուրին, բաժանելով երկու առանձին տեսակների: Ինչևէ, նոր խմբավորության առաջին տեսակը կոչվում է մարգլովանի-ասոմթավրուլի (V-IX դարեր): Սա գլխագիր բոլորագիրն է, իսկ սրա փոքրատառը կոչվում է նուսխուրի, որը տարածված է եղել IX-X դարերում:

Մյուս գրատեսակը մխեդրուլին է, քաղաքացիական կամ աշխարհիկ գիրը, որը Վրաստանում լայն տարածում է գտել XI դարից հետո:

Նշված տառատեսակներից ամենահինը խուցուրին է, որը ձևով նման է երկաթագիր հայերենին: Առաջին անգամ այս գիրը տեսնողները նույնիսկ փորձում են կարդալ հայերեն: Այս գրով են ստեղծվել վրացերեն բոլոր հին ձեռագրերը, պատմական արձանագրությունները: Այս գիրը մինչև վերջերս էլ զործածվում էր վրացերեն եկեղեցական գրքերում: Իսկ մխեդրուլին, որը, ինչպես նշում է Հ. Աճառյանը, «եվրոպականացված ձև ունի, տառերը բոլոր բարակ և կլոր-կլոր գծերով են ձևացած», ներկայումս օգտագործվում են թե՛ ձեռագրերում և թե՛ տպագրության մեջ:

Մաշտոցի հորինածը եղել է խուցուրին, որի ծագումը համարում են հունաբյուզանդական, իսկ մխեդրուլին՝ արևելաարամեական գրից: Այս հարցում ևս գիտնականները բաժանվում են երկու խմբի: Նրանք, որոնք վրաց այբուբենի ստեղծող են համարում Մեսրոպ Մաշտոցին, գտնում են, որ այդ գրերը ծագել են փյունիկյան կամ հունաբյուզանդական գրից: Իսկ այն գիտնականները, որոնք վրաց այբուբենի հիմքը համարում են արևելաարամեական գիրը, չեն ընդունում, որ Մաշտոցն է վրաց գրերի հեղինակը:

Ի դեպ, նշենք, որ վերջին շրջանի հայոց գրերի ստեղծման սկզբնաղբյուրների ու խնդիրների հետազոտողները եկել են այն համոզման, որ Մաշտոցը օգտվել է մ. թ. ա. զործածված հին հունական գրից<sup>3</sup>: Նա իր ստեղծած այբուբենները դասավորել է հունարե-

---

<sup>3</sup> Տե՛ս Պ. Մ. Պողոսյան, 1600-ամյա գաղտնիքներ, Երևան, ԵՊՀ հրատ., 1991:

նի նման՝ արանքներում ավելացնելով այն տառերը, որոնք չկան հունարենում: Նրա ստեղծած հավելյալ հայերեն 14 տառերը, որոնք հունարենում չունեն իրենց համապատասխան հնչյունները, դարձյալ գծագրվել են հունական նախատիպարներից՝ դրանց մեջ դնելով հին հայոց ինքնության և ոգու ինքնատիպության կնիքը՝ ելնելով հայկական զարդանախշերի պատկերներից:

Հին վրացական այբուբենի բոլոր տառանշանները ևս հայերենի նման բաղկացած են երկու տարասեռ տարրերից՝ հիմնական և երկրորդական: Ընդ որում, բացահայտվել է, որ Մաշտոցը, թափանցելով հին այբուբենների ստեղծման գաղտնիքների մեջ, երեք լեզուների գրերն էլ հորինել է նույն սկզբունքներով՝ հունարենի հետ օգտագործելով նաև հին հայկական խորհրդանիշները: Նրա հորինած գրերի անունները ևս յուրահատուկ են: Եթե համեմատում ենք մյուս լեզուների գրերի անունների հետ, ապա տեսնում ենք, որ գրեթե բոլոր լեզուներում դրանք հնչում են երկվանկ՝ ալֆա, բետտա, գամմա և այլն: Միայն հայերեն, վրացերեն և աղվաներեն գրերն են, որոնց անունները հնչում է միավանկ. օրինակ, հայերենում՝ այբ, բեն, գիմ, դա և այլն: Նույնն է նաև վրացերենում՝ ան, բան, գան, դոն և այլն: Նշենք նաև, որ վրացերենի հնչյուններն էլ գրեթե հավասար են հայերենի հնչյունների թվաքանակին: Եվ Մաշտոցը վրացերենի համար ևս ստեղծել է 36 տառ: Իսկ ներկայումս 36-ի փոխարեն վրաց լեզուն ունի 33 հնչյուն, որոնցից 5-ը՝ ձայնավոր, իսկ 28-ը բաղաձայն են: Հայերենի նման վրացերենի ամեն մի հնչյունին նույնպես համապատասխանում է մեկ գիր:

Այս ամենը մեկ անգամ ևս վկայում են այն մասին, որ ինչպես հայերեն, այնպես էլ վրացերեն և աղվաներեն այբուբենները ստեղծվել են մեկ մարդու կողմից, և այդ անձը Մեսրոպ Մաշտոցն է: Նրա ստեղծագործական ձեռագիրը ուսումնասիրողների հավաստմամբ այդ երեք այբուբենների մեջ նույնն է:

Ամփոփելով կարող ենք ավելացնել նաև, որ վրաց գիտնականները իրենց գրերի գյուտի թվականը, նրա ստեղծման գործում ազգայնական մղումներից ելնելով՝ Մաշտոցի դերը ժխտելու նպատակով, ինչքան էլ ուզում է ետ տանեն, միևնույնն է, դրանից ոչինչ չի փոխվում, քանի որ առայժմ վրացերեն գրերով մի որևէ սկզբնաղբյուր չի հայտնաբերվել, որ թվագրված լինի V դարից առաջ: Վրացերեն գրված ամենահին սկզբնաղբյուրը, որ հասել է մեզ, Բուլնիսի սիոնի տաճարի պատին փորագրված շինարարական արձանագրությունն է, որը թվագրվում է 493-494 թվականներով: Իսկ Վրաստանի սահմաններից դուրս՝ Պաղեստինում, Բեթղեհեմի մոտակայքում, վրացական հնագույն եկեղեցու ավերակների պեղումների ժամանակ հայտնաբերված խճաքարերով կատարված վրացատառ արձա-

նագրությունը, գիտնականների հավաստմամբ, պատկանում է V դարի երկրորդ կեսին. այն Հակոբ Ցուրտավյոզ (Իակոբ Խուցեսի Ցուրտավելի) «Շուշանիկի վկայաբանությունը»<sup>4</sup> երկն է, որը գիտնականների հաշվարկներով գրվել է 476-482 թթ. միջակայքում:

Ի դեպ, վրաց գրերի ստեղծման վերաբերյալ վրացագիտության մեջ եղած բոլոր կարծիքներն ու տեսակետները Տ. Գ. Պապուաշվիլու կողմից խմբավորված ու ներկայացված է «Ակնարկներ Վրաստանի պատմության» բազմահատորյակի (8 հատորով) 2-րդ հատորում<sup>5</sup>, որտեղ ևս ժխտվում է Մաշտոցի դերը վրաց գրերի ստեղծման գործում:

Մեր նպատակից դուրս է կրկին անդրադառնալ հիշյալ խնդրին նվիրված գրականության վերլուծությանը: Այդ առթիվ արդեն հրապարակի վրա կան բազմաթիվ աշխատություններ, որոնցից շատերում հիմնավորվում է, որ վրաց այբուբենի ստեղծողը Մեսրոպ Մաշտոցն է: Դրանցից վկայակոչենք միայն մեկը: Հանճարել լեզվաբան Յ. Աճառյանը, իր «Հայոց գրերը» կոթողային մենագրության մեջ, հենվելով սկզբնաղբյուրների ու իր ժամանակի գիտական գրականության վրա, համակողմանիորեն քննում ու տալիս է առաջացած գրեթե բոլոր հարցերի պատասխանները և հանգում է այն ճիշտ եզրակացությանը, որ վրաց գրերը ստեղծել է Մեսրոպ Մաշտոցը V դարի սկզբին, ավելի ստույգ՝ 409 թվականին: Նա, մերժելով վրացական սկզբնաղբյուրների պարունակած ավանդությունները իրենց գրերի ստեղծման մասին և դրանց հիման վրա գիտնականների արած անհիմն ենթադրությունները, ապացուցում է, որ վրացիները V դարից առաջ գիր ու գրականություն ընդհանրապես չեն ունեցել, այլ օգտվել են օտար այբուբեններից: Յ. Աճառյանը, համադրելով ու վերլուծելով եղած սկզբնաղբյուրներն ու իր ժամանակի գիտական գրականության տվյալները, եկել է այն եզրակացության, որ ամենահավաստի աղբյուրը մնում է Կորյունի «Վարքը»: Այդ առթիվ նա գրում է. «... Երբ մեր ձեռքի տակ է այնպիսի հավատարիմ, լավատեղյակ, ժամանակակից և վստահելի մի աղբյուր, ինչպիսին է Կորյունը, կարելի<sup>6</sup> է միթե կասկածել նրա տեղեկությանց ճշմար-

---

<sup>4</sup> Այս ստեղծագործության վերնագիրը հայերեն հնչում է նաև «Շուշանիկի տառապանքները», «Շուշանիկի նահատակությունը» կամ երկուսը միասին՝ «Շուշանիկի տառապանքներն ու նահատակությունը», ըստ Ս. Վբեյանի՝ «Շուշանիկ Վարդենի», այժմ ընդունված է՝ «Սուրբ Շուշանիկի վկայաբանությունը»: Բանասիրության մեջ հայտնվել է նաև կարծիք (Ն. Յա. Մառ), որ այն սկզբնապես գրված է եղել հայերեն, որից կատարվել է վրացերեն թարգմանությունը, իսկ բնագիրը հետագայում կորել է: Հեղինակը՝ Յակոբ Ցուրտավյոզն, եղել է Շուշանիկի դաստիարակը Ցուրտավ թաղաքում, ըստ երևույթին՝ ազգությամբ հայ, եկեղեցական գործիչ:

<sup>5</sup> Տե՛ս Очерки истории Грузии в восьми томах, том II, Грузия в IV-X веках, Тбилиси, изд. АН СССР Мецниереба, 1988, 467-477:

տության վրա: Հատկապես Կորյունի և վրաց գրերի գյուտի մասին խոսելով, նկատելով, թե Կորյունը, լինելով վրաց աշխարհի եպիսկոպոս, երկար ժամանակ ապրած և թերևս վախճանված Վրաստանում, ոմանց կողմից մինչև իսկ վրացի կամ վրացահայ համարված, անշուշտ շատ լավ ծանոթ պիտի լիներ գրերի գյուտի հանգամանքներին և ամենևին պատճառ չկա իր ասածները իբրև անվավեր մերժելու... Կասկածել Կորյունի վրա նշանակում է առհասարակ ուրանալ պատմությունը»<sup>6</sup>:

Հ. Աճառյանը իր այս տեսակետը հիմնավորելու նպատակով բերում է նաև Յո. Մարկվարտի կարծիքը: Վերջինս գրում է. «Պետք ենք ընդունիլ, թե Կորյուն այս եղածներուն (վրաց գրերի գյուտի հանգամանքներին) շատ մոտանց ծանոթ էր, ըստ որում, ինչպես ինքն իսկ անձամբ կպատմե, որ ի Վիրս եպիսկոպոս եղավ»<sup>7</sup>:

\* \* \*

Մեսրոպ Մաշտոցը վրաց գրերը ստեղծելու և Վրաստանում դպրություն, քրիստոնեություն ու լուսավորություն տարածելու մասին մտածել էր դեռևս Սյունյաց նահանգում եղած ժամանակ: Նա գտնում էր, որ կրթության հիմքը սեփական գիր ունենալն է, ուստի մտածում է հարևան վրացիների համար ևս ստեղծել սեփական այբուբեն: Չնայած նա կարող էր հայերենի այբուբենը փոփոխելով տալ վրաց ժողովրդին, բայց V դարի հայ հանճարեղ լուսավորիչը այդպես չի վարվում: Նա գտնում է, որ ամեն մի ժողովուրդ պետք է ունենա իր ինքնուրույն գիրը, որը նման չլինի մեկ այլ ժողովրդի այբուբենի: Մաշտոցը այդպես էլ վարվում է: Եվ, ինչպես Հ. Աճառյանն է նկատում, նա հորինելով վրաց գրերը, դրանց տալիս է հայերենից տարբեր ձևեր, կարգավորում է ուրիշ շարքով և մշակում ընթերցանության կանոններ: Շարունակելով իր միտքը՝ Հ. Աճառյանն ավելացնում է. «Մեսրոպի այս վարմունքի մեջ տեսնվում է այն վեհ զգացմունքը, որի համեմատ ամեն մի ժողովուրդ և ամեն անհատ պարտավոր է հարգել մյուս ժողովուրդների ինքնուրույնությունը: Ազգակերությունը, որ արդի շատ եվրոպական պետությանց ազգայնական քաղաքականության հիմքն է կազմում, հեռու էր Մեսրոպի պես մաքուր և ազնիվ անձի մտքից: Լուսավորությունը նա չկապեց նեղ շովինիզմի հետ, ցույց տվեց և բաց արեց առաջադիմության ուղիղ ճանապարհը՝ սեփական լեզվով գրականությունը»<sup>8</sup>:

<sup>6</sup> Հրաչյա Աճառյան, Հայոց գրերը, խմբագրությամբ ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս Է. Բ. Աղայանի, Երևան, Եր. համալ. հրատ., 1984, էջ 180-181:

<sup>7</sup> Հ. Աճառյան, նշվ. աշխատ., էջ 181:

<sup>8</sup> Հ. Աճառյան, նշվ. աշխատ. էջ 174-175

Մերոպ Մաշտոցը լուսավորչական գործունեություն ծավալելու նպատակով Վրաց աշխարհ է մեկնել երկու անգամ: Առաջին անգամ, ըստ Յ. Աճառյանի հաշվարկների, նա Վրաստան է այցելել 409 թվականին, իր երրորդ քարոզչական ուղևորության ընթացքում՝ Գողթնում ու Սյունիքում լինելուց հետո:

Վարքագիր Կորյունը ավելի հավաստի է ներկայացնում Մաշտոցի առաքելությունը Վրաստանում: Նա գրում է, որ հայ դպրության հիմնադիրը «սիրոջից իրեն շնորհվածի համեմատ» սկսեց նշանագրեր հորինել վրացերեն լեզվի համար: Նա «գրեց, դասավորեց և օրինավոր կերպով հարդարեց և իր աշակերտներից մի քանի լավագույններին հետն առավ, վեր կացավ գնաց, իջավ վրաց կողմերը: Եվ գնաց, ներկայացավ թագավորին, որի անունը Բակուր էր, և աշխարհի եպիսկոպոսին, անունը՝ Մովսես: Եվ թագավորն ու ազնվականները, բոլոր գավառներով միասին, շատ անսաջին նրան ըստ աստվածային օրենքի»<sup>9</sup>: Ապա վարքագիրն ավելացնում է. «Եվ նա իր արվեստն առաջարկելով խրատեց, հորդորեց նրանց, և այն ժամանակ ամենքը հանձն առան նրա ուզածը կատարել: Եվ վրացերեն լեզվի մի թարգմանիչ գտավ, որ անվանվում էր Ջաղա, մի գրագետ և ճշմարտահավատ մարդ. այնուհետև վրաց արքան հրամայեց իր իշխանության զանազան կողմերից և խառնաճաղանջ գավառներից մանուկներ ժողովել և տալ վարդապետի ձեռքը»<sup>10</sup>:

Եվ այսպես՝ Մերոպ Մաշտոցը, Ջաղային էլ առնելով ու ձգելով «ուսման բովի մեջ», «հոգևոր սիրով ու եռանդով» ուսուցանում է վրացի երեխաներին, նրանց հոգիներից «ի բաց բերում» հանում է «ղևերի ու սնտոի կուռքերի պաշտամունքի շարավահոտ աղտն ու ժանգը» և նրանց, որ ժողովված էին «այնքան առանձին և բաժանված լեզուներից», «մեկ աստվածային պատգամներով» կապում, դարձնում է «մեկ ազգ, մեկ աստծու փառաբանիչներ»: Կորյունն այստեղ նկատի ունի այն իրողությունը, որ ժամանակին Վրաստանում վրաց ազգը դեռևս մի միասնականություն չէր դարձել, այնտեղ խոսում էին տարբեր բարբառներով, կրոնական հոգևոր միասնություն նույնպես չկար նրանց միջև: Ուստի, Մաշտոցի գործունեությունը Վրաց աշխարհում ունեցել է նաև վրաց ժողովրդին միավորելու, միասնական մի ազգ դարձնելու, մի հավատի, այն է՝ քրիստոնեության բերելու նշանակություն: Նա բացում է առաջին վրացական դպրոցը և ինքն էլ սկսում իր ստեղծած գրով ուսուցանել երեխաներին, նրանց բացատրել, թե ինչ կարևոր նշանակություն ունի սեփական գրականությունը ազգի լուսավորության ու զարգացման համար: Այդ աշակերտների մեջ գտնվում են այնպիսիք, որոնք

<sup>9</sup> Տե՛ս Կորյուն, Վարք Մերոպ Մաշտոցի, Եր., 1984, էջ 47-48:

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 48:

բարձրանում են եպիսկոպոսական աստիճանի: Նրանցից առաջինը եղել է Սամուել անունով մի սուրբ և բարեպաշտ մարդ, որը հետագայում դարձել է արքունի տան եպիսկոպոս»<sup>11</sup>:

Այս ամենը որոշ լրացումներով ու փոփոխություններով վկայում է նաև Մաշտոցի մյուս աշակերտ, Կորյունի կրտսեր ժամանակակից Պատմահայր Մովսես Խորենացին: Նա գրում է. «Մեսրոպ Վրաց աշխարհի գնալով նրանց համար էլ... ստեղծում է նշանագրեր, մի ոմն Ջաղայի հետ, որ հունարեն և հայերեն լեզուների թարգմանիչ էր...»<sup>12</sup>: Ինչպես տեսնում ենք, Խորենացու հաղորդած տեղեկությունների մեջ կա մի լուրջ անհամապատասխանություն Կորյունի ասածի հետ: Կորյունը նշում է, որ Մաշտոցը վրաց գրերը ստեղծեց և նոր միայն գնաց Վրաստան՝ դրանք տանելով իր հետ: Իսկ Խորենացին վկայում է, որ Մաշտոցը Վրաստանում է ստեղծել վրաց այբուբենը մի ոմն Ջաղայի օգնությամբ: Այս հակասությունը և դրա հետ մեկտեղ այլ թյուրիմացություններ, որ կան Խորենացու մոտ, ժամանակին նկատել է Դ. Աճառյանը և հօգուտ Կորյունի լուծել այդ խնդիրները<sup>13</sup>: Ուստի, մենք չենք ուզում այստեղ անդրադառնալ դրանց:

Խորենացու վկայությամբ՝ Մաշտոցը Վրաստանում Ջաղայի օգնությամբ ընտրում է երեխաներ, բաժանում է երկու դասի և նրանց համար ուսուցիչներ է թողնում իր աշակերտներից Տեր Խորձենացուն և Մուշե Տարոնացուն: Այստեղ ուզում ենք ընդգծել, որ Ջաղան ո՛չ թե Մաշտոցին օգնում է վրաց գրերը ստեղծելու գործում, այլ վրաց արքայի հրամանով նա երեխաներ է ժողովում երկրի տարբեր կողմերից և Մաշտոցին աջակցում՝ նրանց ուսուցման գործը կազմակերպելու մեջ:

Ապա, ըստ Կորյունի վկայության, Մաշտոցը, «երբ Վրաստանի բոլոր կողմերում կարգի դրեց աստվածապաշտության գործը (քրիստոնեության քարոզումը, գրի տարածումն ու դպրոցաշինությունը – Վ. Մ.)», բաժանվում է նրանցից ու վերադառնում Հայոց երկիր և այստեղ իր կատարածի մասին բոլոր եղելություններով հանդերձ պատմում է Սահակ Պարթևին: Եվ նրանք դրա համար փառավորում են Աստծուն<sup>14</sup>:

Այնուհետև Մաշտոցը գնում և դպրոցներ է բացում նաև հայոց «կես ազգի համար, որ հռոմների (հունական) թագավորի իշխանության տակ էր: Սա նրա չորրորդ քարոզչական ուղևորությունն էր: Հունահայաստանում նույնպես իր գործը կատարելով և իր

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 48:

<sup>12</sup> Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Եր., 1990, էջ 215:

<sup>13</sup> Տե՛ս Դ. Աճառյան, նշվ. աշխատ., էջ 178-179:

<sup>14</sup> Տե՛ս Կորյուն, Վարք Մեսրոպ Մաշտոցի, էջ 48:

աշակերտներից մի քանիսին նրանց մոտ վերակացուներ թողնելով՝ այն է՝ պատրաստվում էր վերադառնալ Վաղարշապատ, երբ, ինչպես նշում է Կորյունը, «եկավ հանդիպեց նրան մի երեց մարդ, ազգով՝ աղվան, անունը՝ Բենիամին»<sup>15</sup>: Եվ «Մաշտոցը, որ ժողովրդի մեջ գիր ու գրականություն և գրականության միջոցով ուսում և կրոն տարածելու ցանկությամբ լցված մի անձ էր, օգուտ քաղեց այս առիթից և նույն անձից օգտվելով, ուզեց հնարել աղվաններն եզվի համար սեփական այբուբեն: Ինքը աղվաններն լեզվին բոլորովին անծանոթ էր, բայց այնպիսի մի անձի համար, որ արդեն երկու լեզուների այբուբենն էր հնարած, դժվար չէր զանազան քննություններով երևան հանել ու ճանաչել նույն լեզվի սեփական ձայները: Այսպես էլ արավ Մեսրոպը: Նա հարցրեց, քննեց նույն Բենիամին քահանային, աղվաններն լեզվի զանազան բառեր հնչել տվեց և վերջապես կազմեց աղվաններն այբուբենը»<sup>16</sup>:

Մեսրոպ Մաշտոցը երկրորդ անգամ Վրաստանում, դարձյալ ըստ Յ. Աճառյանի հաշվարկների, եղել է 424 թվականին կամ դրանից հետո, իր հինգերորդ քարոզչական գործունեության ժամանակ, Աղվանքում գիրը տարածելուց և դպրոցներ հիմնելուց հետո: Այս անգամ նրան մեծ ընդունելություն է ցույց տվել արդեն թագավոր դարձած Արծյուղը (ըստ Խորենացու՝ Արձիլ): Սա վրաց թագավոր Արչիլն է, որը Վրաստանի վրա իշխել է V դարի երկրորդ քառորդում: Նա իր հողում, ինչպես վկայում է Կորյունը, «շատ պայծառացրեց ու ծաղկեցրեց ուսումը»:

Այս ուղևորության ընթացքում Մաշտոցը լինում է իր բոլոր նախկին աշակերտների մոտ, նրանց հորդորում և պատվիրում է, որ «ճշմարտության մեջ մնան», քաջալերում նրանց ուսման մեջ: Նա շրջում է ամբողջ երկրում, ստուգում իր հիմնադրած դպրոցների վիճակը, ուսուցիչներ ու վերակացուներ կարգում և պատրաստվում է վերադառնալ Հայաստան: Այդ ժամանակ Մաշտոցին իր երկիրն է հրավիրում Տաշրացիների «պատվական և աստվածասեր» իշխան (բղեշխ) Աշուշան: Նա Մաշտոցի տրամադրության տակ է դնում իրեն ու իր ամբողջ գավառը, և այնտեղ գրի ու դպրության արմատավորումը «առանց որևէ պակասության» գերազանցում է, քան մյուս բոլոր գավառներում միասին: Եվ այստեղ այդ գործին վերակացու թողնելով վերը հիշատակված իր աշակերտ, բայց արդեն եպիսկոպոս դարձած Սամուելին՝ ինքը վերադառնում է Հայաստան:

Այս անգամ նույնպես Մաշտոցը սուրբ Սահակին ու իր շրջապատին պատմում է վրաց հողում իր կատարած նոր գործերի մա-

<sup>15</sup> Նույն տեղում, էջ 50:

<sup>16</sup> Յ. Աճառյան, նշվ. աշխատ., էջ 210:

սին, որը լսելով՝ նրանք ավելի են փառավորվում ու գոհունակությամբ տալիս Աստծուն<sup>17</sup>:

Ահա այսպես, այն հեռավոր V դարի սկզբին Մեսրոպ Մաշտոցը հայոց գրերի գյուտից անմիջապես հետո ստեղծում է նաև վրաց այբուբենը և դպրության ու լուսավորության հիմքը դնում Վրաց աշխարհում: Սակայն պետք է ենթադրել, որ Մաշտոցը Վրաստանում միայն վրացական դպրոցներ չի ստեղծել, այլ հիմնել է նաև հայկական դպրոցներ, քանի որ հայերը Վրաստանում ապրել են վաղնջական ժամանակներից: Ուստի, Մաշտոցի ծավալած դպրոցաստեղծ գործունեությունը Վրաստանում արժանի է լուրջ ուշադրության: Նրա արարչագործությունը Սցխեթում ու Ցուրտավում նպաստել է հայ և վրաց ժողովուրդների բարեկանության ամրապնդմանը: Սա երկու դրկից ժողովուրդների մշակութային կապերի մասին մեզ հասած առաջին գրավոր վկայությունն է:

Ցուրտավը Մաշտոցի այցից հետո դառնում է ոչ միայն Հյուսիսային Հայաստանի մշակութային ու կրթական հայտնի կենտրոն, այլև այնտեղ զարգանում է նաև վրաց դպրությունը: Վաղ միջնադարում, Ուխտանես եպիսկոպոսի վկայությամբ, ժամասացությունը Ցուրտավում կատարվել է երկու լեզվով՝ հայերեն և վրացերեն:

Հայաբնակ այս նահանգը հնուց անտի եղել է Հյուսիսային Հայաստանի սահմանապահ բղեշխությունը իր Ցուրտավ կենտրոնով: Ըստ ավանդության՝ Ցուրտավում եղել է Ավարայրի ճակատամարտի հերոս Վարդան Մամիկոնյանը, որի դուստրը՝ Շուշանիկը, ամուսնացած էր Աշուշայի որդու՝ Վազգենի (Վարսկեն) հետ: Վերջինս հետագայում, որպես բղեշխտ փոխարինելով հորը, ուրացել է քրիստոնեությունը և ընդունել է զրադաշտականություն, հալածել ու մահվան է հասցրել Աստծու ուխտին հավատարիմ Շուշանիկին: VI-VII դարերում Ցուրտավում հայտնի է եղել ս. Շուշանիկի մատուռը: Հետագայում Շուշանիկի տապանը այդ մատուռից հանվել և փոխադրվել է Տփիսիս (Թբիլիսի) ու ամփոփվել V դարի կառույց ս. Աստվածածին (այժմ՝ Մետեխի) եկեղեցում: Ցուրտավում են հասակ առել, կրթվել և իրենց սկզբնական շրջանի գործունեությունը ծավալել V դարի երկրորդ կեսի հայ ազատագրական պայքարի առաջնորդ, իշխան Վահան Մամիկոնյանը և մատենագիր Ղազար Փարպեցին: Այս քաղաքից է սերել վերը նշված Հակոբ Ցուրտավցին, որը վրաց մատենագրության մեջ հայտնի է իր «Շուշանիկի վկայաբանությունը» նշանավոր երկով: Ցուրտավն ավերվել է VII դարում արաբների կողմից: VIII-IX դարերում այն կրկին վերականգնվել է, բայց արդեն որպես գյուղաքաղաք, և իր տեղը զիջել է

<sup>17</sup> Տե՛ս Կորյուն, Վարք Մեսրոպ Մաշտոցի, էջ 52:

այդ տարածաշրջանում վերելք ապրող Շամշուլտե (վրացերեն՝ Սամշվիլդե) բերդաքաղաքին, որը հետագայում շուրջ հարյուր տարի (972-1065 թթ.) եղել է Հայոց Կյուրիկյան թագավորության մայրաքաղաքը:

Մեզ թվում է՝ միջնադարում հայկական դպրոց է գործել նաև Շամշուլտեում: Դեռ այսօր էլ այնտեղ կանգուն է Կյուրիկյանների պալատական եկեղեցին, ինչպես և այլ վանքեր ու եկեղեցիներ՝ հայերեն արձանագրություններով: Շամշուլտեն, լինելով հայ Բագրատունիների մի ճյուղի թագավորության մայրաքաղաքը և ունենալով 20 հազարից ավելի հայ բնակչություն, չէր կարող չունենալ իր կրթական-հոգևոր հաստատությունը: Դեռ ավելին՝ միջնադարյան հայ և վրաց մատենագիրների երկերում բազմիցս հիշատակվող այդ հռչակավոր բերդաքաղաքը եղել է նաև առևտրատնտեսական նշանավոր կենտրոն: Այնտեղ զարգացած են եղել արհեստները, երկրագործությունը և տնտեսության այլ ճյուղեր:

Այս փաստերից ելնելով՝ կարող ենք ասել, որ հայ դպրոցը Վրաստանում վրաց դպրոցի հետ մեկտեղ ստեղծվել է Մեսրոպ Մաշտոցի կողմից, մի մարդու, որը համաշխարհային գրչության մշակույթի պատմության մեջ միակն է, որ այն հեռավոր ժամանակներում, խավարի ու տգիտության դարաշրջանում, ստեղծել է երեք լեզուների ինքնուրույն, մեկը մյուսին չնմանվող այբուբեններ և հիմք է դրել անդրկովկասյան ժողովուրդների դպրություններին, մշակույթների մերձեցմանն ու զարգացմանը:

Մաշտոցի արարչագործությունը վիթխարի նշանակություն է ունեցել ոչ միայն հայերի, այլև վրաց և աղվան ժողովուրդների համար նրանց ինքնագիտակցության արթնացման ու ինքնության հաստատման, քրիստոնեության ամրապնդման և իրենց ազգային լեզուներով մշակույթների հետագա զարգացման համար:

## Գրականություն

1. Կորյուն, Վարք Մաշտոցի, աշխարհաբար թարգմանությունը ներածական ուսումնասիրությամբ, առաջաբանով և ծանոթագրություններով՝ Մանուկ Աբեղյանի, Եր., Հայպետհրատ, 1962, 172 էջ:
2. Կորյուն, Վարք Մեսրոպ Մաշտոցի, աշխատասիրությամբ ձեռագրագետ Արտաշես Մաթևոսյանի, Եր., «Հայաստան», 1994, 176 էջ (հղումները կատարվել են ըստ այս հրատարակության):
3. Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, աշխարհաբար թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները՝ Ստ. Մալխասյանցի, խմբագրությամբ Գ. Սարգսյանի, Եր., «Հայաստան», 1990, 322 էջ:
4. Ղազար Փարպեցի, Հայոց պատմություն, Թուղթ Վահան Մանիկոնյանին, քննական բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի և Ստ. Մալխասյանցի, աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Բագրատ Ուլուբաբյանի, Եր., ԵՊՀ հրատ. 1982, 530 էջ:
5. «Քարթլի կյանք»-ի հին հայերեն թարգմանությունը վրացերեն բնագրի զուգահղությամբ, աշխատասիրությամբ Ի. Աբուլաձեի, Թբիլիսի, 1953, 247 էջ:
6. Վրաց ժամանակագրություն (1207-1318 թթ.), թարգմանությամբ Պարույր Սուրադյանի, Եր., ՀԽՍՀ ԳԱ հրատ., Եր., 1971, 222 էջ:
7. Խոսրով Թորոսյան, «Թագակիրների պատմությունն ու գովաբանությունը» որպես Ջաքարյան Հայաստանի ու Ջաքարյանների պատմության սկզբնաղբյուր, բնագրի թարգմանությամբ ու մեկնաբանություններով հանդերձ, Եր., ՀԳԱ հրատ., 1992, 612 էջ:
8. Н. Бердзенишвили, И. Джавахишвилие С. Джанашиа, История Грузии, часть I, с древнейших времен до начала XIX века, под ред. С. Джанашиа, Тб., 1946, 460 стр.
9. Н. А. Бердзенишвили, В.Д. Дондуа, М. К. Думбадзе, Г. А. Меликашвили, Ш. А. Месхиа, История Грузии, том I, с древнейших времен до 60-х годов XIX в, Тб., 1962, 510 стр.
10. Очерки истории Грузии, в восьми томах, том II, Грузия в IV-X веках, Тб., изд. АН ГССР “Мецниереба”, 1988, 580 стр.
11. Մեսրոպ Մաշտոց, Հոդվածների ժողովածու, Եր., ՀԽՍՀ ԳԱ հրատ., 1962, 306 էջ:
12. Մեսրոպ Մաշտոց, Հոդվածների ժողովածու, Եր., ԵՊՀ հրատ., 1963, 340 էջ:

## ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԸ\*

### Վահան ՄԱՂԱԼՅԱՆ բանասիրական գիտությունների թեկնածու

Հնագույն ժամանակներից ի վեր, դառը ճակատագրի բերումով, հայերը հոծ զանգվածներով պարբերաբար փոխադրվել են Վրաստան, ուր նրանք հյուրընկալ վրաց ժողովրդի հետ մեկտեղ ապրել են ավելի ապահով ու խաղաղ կյանքով: Վրաց հողում ապաստանած հայերը, որպես այդ երկրի լիիրավ քաղաքացիներ, մասնակցել են նրա տնտեսական, հասարակական-քաղաքական ու մշակութային կյանքին՝ նպաստելով պետականության զարգացմանն ու հզորացմանը:

Հայտնի է, որ միջնադարում ինչպես Հայաստանում, այնպես էլ Վրաստանում դպրոցները գործել են եկեղեցիներին կից: X դարում, երբ հիմնադրվում է Հայոց Կյուրիկյան թագավորությունը, նրա հոգևոր և մշակութային կենտրոնը դառնում է Սանահնի վանքը, ուր երկար ժամանակ գործել է նրա հռչակավոր դպրոցը: Ապա այստեղ դպրոց է բացվել նաև Հաղպատի վանքին կից, որի համբավը նույնպես տարածվել է ամենուր: Դրանցում աշխատել են միջնադարյան հայ անվանի գիտնականներ, ժամանակի ուսումնակրթական գործի հմուտ կազմակերպիչներ, որոնցից են Գրիգոր Մագիստրոսը, Հովհաննես Իմաստասերը և շատ ուրիշներ: Տեղեկություններ կան, որ Սանահնի վանքի դպրանոցի ուսուցիչ Բարսեղին հովանավորել է վրաց Թամար թագուհին: Այդ դպրոցները գործել են ընդհուպ մինչև XIX դարի վերջերը, ուր հիմնավոր կրթություն են ստացել նաև վրաստանաբնակ հայերից շատերը, ինչպես և բազմաթիվ վրացի երիտասարդներ: Նրանք, այնտեղ ուսանելով, վերադարձել են Տփղիս ու ծավալել հոգևոր ու կրթամշակութային գործունեություն: Հաղպատի դպրոցում, օրինակ, XVIII դարում կրթություն է ստացել հանճարեղ գուսան Սայաթ-Նովան, այնտեղ, XIX դարի սկզբներին (1826-1828թթ.) ուսուցչություն է արել մեծ լուսավորիչ

---

\* Հոդվածն արտատպվում է «Կրթությունը և գիտությունը Արցախում» գիտամեթոդական և գիտահանրամատչելի պարբերականից (հրեթյանական թողարկում, N 3-4, 2005, հունիս, էջ՝ 64-68):

Խաչատուր Աբովյանը և շատ ուրիշներ: Սանահնի և Հաղպատի դպրոցները իրենց ժանրակշիռ ավանդն են ներդրել բազմադարյան հայ դպրության և մանկավարժության պատմության մեջ: Նրանց ավանդը մեծ է նաև վրաց կրթամշակութային կյանքում:

Մեզ թվում է X-XV դարերում հայկական դպրոց է գործել նաև Շամշուլտեում, որը շուրջ հարյուր տարի (972-1065թթ.) եղել է Հայոց Կյուրիկյան թագավորության մայրաքաղաքը: Դեռ այսօր էլ այնտեղ կանգուն է Կյուրիկյանների պալատական եկեղեցին, ինչպես և այլ վանքեր ու եկեղեցիներ՝ հայերեն արձանագրություններով: Այստեղ դեռևս կանգուն է նաև վրաց ճարտարապետության նշանավոր կոթողներից մեկը՝ Սիօնը, որի կառուցումը թվագրվում է 759-777-ին: Սակայն այս կառույցը, Կյուրիկյանների պալատական եկեղեցու հետ համեմատած, խիստ վնասված է՝ վերածված փլատակների: Շամշուլտեն, լինելով հայ Բագրատունիների մի ճյուղի թագավորության մայրաքաղաք և ունենալով 20 հազարից ավելի հայ բնակչություն, չէր կարող չունենալ իր դպրոցը: Դեռ ավելին, միջնադարյան հայ և վրաց մատենագիրների երկերում բազմիցս հիշատակվող այդ հռչակավոր բերդաքաղաքը եղել է նաև առևտրատնտեսական նշանավոր կենտրոն, զարգացած են եղել արհեստները, երկրագործությունը և տնտեսության այլ ճյուղեր: Նա գտնվել է նաև առևտրական տարանցիկ ճանապարհների հանգուցակետում: Ուստի, բացառվում է, որ այն չունենար իր կրթական-հոգևոր հաստատությունը:

Վրաստանի հարավարևելյան շրջանները, որ անցյալում պատկանել են Գուգարաց աշխարհին, վաղմջական ժամանակներից բնակեցված են եղել հայերով: Հիմնականում հայ բնակչություն են ունեցել նաև Կախեթի երկրամասը, Թիֆլիսը, Գորի քաղաքը և նրա շրջակա բնակավայրերը: Միջնադարում թաթար-մոնղոլական, թուրք-սելջուկյան ցեղերի ու պարսկաթուրքական արշավանքների հետևանքով այդ տարածքները ժամանակի ընթացքում ամայացել են, բնակիչները սրի են քաշվել, տեղահանվել ու ցրվել աշխարհով մեկ: XVIII դարի վերջերին համաճարակի հետևանքով Արցախից բազմահազար ընտանիքներ են տեղափոխվել և ռուսաց կայսրի միջնորդությամբ ու վրաց Հերակլ թագավորի թույլտվությամբ բնակություն հաստատել Արևելյան Վրաստանի հիշյալ ամայացած տարածքներում, Կախեթում, Բոլնիսում, Թիֆլիսում, Գորիում ու դրանց հարող շրջաններում, ինչպես նաև Հյուսիսային Հայաստանի Լոռու գավառում:

XIX դարի սկզբին Վրաստանի միացումը ռուսական կայսրությանը նոր պայմաններ ու նոր իրավիճակ ստեղծեց երկրամասի բոլոր ժողովուրդների, այդ թվում նաև հայերի համար: Վրաստանի

հետ Ռուսաստանին միացվեց նաև Հյուսիսային Հայաստանի՝ վերը նշված գավառների մի զգալի մասը, որի բնակչությունը հիմնականում հայեր էին, իսկ Վրաստանի մայրաքաղաք Թիֆլիսի բնակչության ճնշող մեծամասնությունը այդ ժամանակ նույնպես հայեր են եղել:

Հայահոծ այդ տարածքները, բնականաբար, պետք է ունենային իրենց դպրոցներն ու հոգևոր-մշակութային կենտրոնները: Նախքան Ռուսաստանի հետ միավորվելը Վրաստանի այդ մասերում, իհարկե, թեկուզ և փոքր թվով, գործել են թե՛ հայկական և թե՛ վրացական դպրոցներ: Այդպիսի դպրոցների գոյության մասին հիշատակվում են ժամանակի եկեղեցական գրագրություններում ու այլ հավաստի աղբյուրներում: Եր. Շահազիզի վկայությամբ, օրինակ, Տփղիսում 1794թ. բացվել է Պոլսից այստեղ վերադարձած Սերովբե Պատկանյանի մասնավոր դպրոցը, որը գոյատևել է 10 տարուց ավելի: Այնտեղ սովորել են Տփղիսի թե՛ հայ և թե՛ վրացի երեխաներ հայտնի ընտանիքներից<sup>1</sup>:

Վրաստանը Ռուսաստանին միանալուց հետո (1801թ.) նրա մայրաքաղաք Թիֆլիսը դառնում է Անդրկովկասի առաջատար կենտրոնը: Այնտեղ շուտով ստեղծվում են վարչական, տնտեսական ու մշակութային հաստատություններ: Նրա բնակչության գերակշռող մեծամասնությունը լինելով հայեր, կարճ ժամանակաընթացքում աշխուժացում է ապրում հայկական կրթամշակութային կյանքը: Այդ ժամանակ ամբողջ Անդրկովկասում, այդ թվում նաև Վրաստանում գործում էին երեք տիպի դպրոցներ: Դրանք էին՝ ա) եկեղեցական սպասավորներ պատրաստող վանական և թեմական դպրոցները, բ) ժողովրդի ամենատարբեր խավերում կրթություն տարածելու նպատակով գավառական քաղաքներում ստեղծված դպրոցները և գ) ցածրաստիճան հոգևորականների նախածեռնությամբ գյուղական բնակավայրերում ստեղծված խալֆայական դպրոցները:

Այս վերջին տիպի դպրոցի վառ օրինակ պիտի համարել Թիֆլիսում 1795-1828թթ. (որոշ աղբյուրներում՝ 1834թ.) գործած Նորաշենի եկեղեցու ժամկոչ Եղիազար Գալստյանի խալֆայական ուսումնարանը, որը, Ա.Երիցյանի պատմելով, տեղավորված էր քաղաքի Խարազխանայի մի դուբանում: Նրա դռները միշտ բաց էին, և փողոցով անցուդարձ անողները կանգ էին առնում ու թամաշա անում, թե Եղիազարը ինչպես է իմաստություն ուսուցանում գետնի վրա չոքած իր 13 աշակերտներին: Ամսական վճարելով 20 կոպեկ

---

<sup>1</sup> Տե՛ս Երվանդ Շահազիզ, Տեր Գաբրիել Պատկանյանց, Թիֆլիս, 1910, էջ 32:

ուսման վարձ՝ նրանք սովորում էին հայերեն գրել-կարդալ և ժամաացուքյուն:

Նույն Ա.Երիցյանի վկայությամբ՝ Ներսես Աշտարակեցին, որպես ապագա Ներսիսյան դպրոցի հիմք, 1815թ. ժամանակավորապես մի փոքրիկ դպրոց է բացել Թիֆլիսի հայկական վանքի եկեղեցուն կիրց, որտեղ հայերեն գրել-կարդալ էին սովորում քահանաների 20-ի չափ որդիներ: Հետաքրքրական է, որ 1817թ. այդ դպրոցի ուսուցիչ է հրավիրվել իր ժամանակի գիտնական-հայկաբանի համբավ ունեցող Պողոս վարդապետ Ղարադաղցին, որն իր աշակերտներին սովորեցնում էր իր ժամանակի բարձր համարված գիտությունները՝ Չամչյանի քերականությունը, Ադոնցի ճարտասանությունը և Թեափոսը: Այս դպրոցը, փաստորեն, դառնում է 1824թ. բացված Ներսիսյան դպրոցի մի տեսակ նախապատրաստական բաժանմունքը<sup>2</sup>: Ի դեպ, Պ.Ղարադաղցուն աշակերտել են, ի թիվս այլոց, նաև Մեսրոպ Թաղիադյանը և Ստեփանոս Նազարյանցը, որոնցից առաջինը նրան ներկայացնում է որպես համեմատաբար առաջադեմ մանկավարժ, մինչդեռ Ստ.Նազարյանցի պատկերմամբ նա եղել է որպես միջնադարյան դպրոցի տիպիկ ուսուցիչ, «որը ավելի ծեծ, քան ուսում է տվել յուր աշակերտներին»<sup>3</sup>: Խ. Աբովյանը ևս սկզբում սովորել է այս դպրոցում, բայց Ներսիսյան դպրոցը բացվելուն պես Ստ.Նազարյանցի, Ա. Արարտյանի հետ տեղափոխվել է այնտեղ:

Թիֆլիսի հայ կաթոլիկների եկեղեցու ժամկոչ Հայկ Մամուլյանի կողմից 1815թ. հիմնվում է ուսումնարան, որտեղ նրա հիմնադիրը և այլ ուսուցիչներ երեխաներին սովորեցնում էին հայերեն, վրացերեն, ռուսերեն և լատիներեն լեզուներ ու ժամասացություն: Այս դպրոցն իր գոյությունը պահպանել է մինչև 1834թ.:

Թիֆլիսում այդ շրջանում գործում էին նաև մի շարք այլ հայկական ու վրացական մասնավոր դպրոցներ: Հայկական դպրոցների մի զգալի մասում սովորում էին վրացի և հակառակը, վրացական դպրոցներում՝ հայ երեխաներ: Նման իրավիճակում երկու տեղում էլ խորացված ուսուցանվում էին հայոց և վրաց լեզուները: Այս ուշագրավ երևույթը արդյունք էր երկու հարևան ժողովուրդների դարավոր բարեկամության: Ֆրանսերենի խորացված ուսուցման նման մի դպրոց էլ 1827թ. իր տանը բացել էր Փարիզից Թիֆլիս տեղափոխված Շահան Ջրպետը, որտեղ սովորում էին հայ և վրացի շուրջ 30 երեխաներ:

Հետագայում՝ 1830-ական թվականների կեսերից մինչև 1860-ականների վերջերը, Թիֆլիսում գործում էին մի շարք այսպես կոչված՝ մասնավոր պանսիոններ: Դրանցից էին՝ Դավիթ և Հակոբ Ար-

<sup>2</sup> Մ.Հ. Սանթրոսյան, Արևելահայ դպրոցը XIX դարի առաջին կեսին, էջ 247:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 248:

զանյան եղբայրների՝ 1837-ից, Խաչատուր Աբովյանի՝ 1837-ից, Գ. Երեցփոխյանի՝ 1842-ից, Յովսեփ քահ. Օրբելու՝ 1844-ից, Գաբրիել Պատկանյանի՝ 1846-ից, Յարություն Շահնազարյանի՝ 1852-ից, Գ. Խատիսյանի՝ 1852-ից, Թ.Սայաթնովյանի՝ 1867-ից, դպրոցները, որոնք նախատեսված էին հիմնականում տղաների համար: Յայտնի է, որ Խ.Աբովյանի պանսիոնում հայերի հետ մեկտեղ սովորել են նաև վրացի ու թաթար երեխաներ, որոնցից մեկն է եղել վրաց մեծանուն բանաստեղծ Նիկոլոզ Բարաթաշվիլին: Նույն պանսիոնն էին ավարտել նաև վրացական հանրահայտ «Ցիսկարի» (Արշալույս, 1857-1875թթ.) հանդեսի գլխավոր խմբագիր Իվանե Կերեսե-լիձեն, զինվորական բժիշկ Բաքրաձեն և ուրիշներ:

Թիֆլիսում նույն շրջանում գործում էին 14 այլ պանսիոններ, արքունի 5 դպրոցներ ու գիմնազիաներ ևս, որոնց մեծ մասում ուսուցումը տարվում էր հայոց, վրաց ու ռուսաց լեզուներով:

Վերոհիշյալ ուսումնական հաստատությունների շարքում, սակայն, ոչ միայն Վրաստանում, այլև ամբողջ Անդրկովկասում առանձնանում էր Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը, որը հիմնադրվել էր Ներսես Աշտարակեցու նախաձեռնությամբ: Բացառիկ է եղել նրա դերը հայ ժողովրդի կրթանշակության կյանքում: Ուղիղ մեկդարյա գոյության ընթացքում (1824-1924թթ.) նա սովել է բազմաթիվ շրջանավարտներ, որոնք դարձել են անվանի հոգևորականներ, ուսուցիչներ, գրողներ, գիտնականներ, արվեստագետներ: Դրանով նա իր մեծ նպաստն է բերել հայագիտության զարգացման գործին<sup>4</sup>:

Այս դպրոցին զուգահեռ՝ XIX դարի վերջին քառորդում Թիֆլիսում գործում էին նաև շուրջ 50 նախակրթարաններ ու ծխական դպրոցներ, որոնք, երեխաներին բավարար գիտելիքներ տալով, նրանց նախապատրաստում էին Ներսիսյան դպրոց ընդունվելու համար: Դրանց մեջ կային այնպիսիք, որ նախատեսված էին միայն աղջիկների համար, և շուտով դառնում են միջնակարգ ուսումնարաններ ու գիմնազիաներ՝ օրիորդների համար կատարելով այն նույն դերը, ինչ Ներսիսյան դպրոցը՝ տղաների: Այդպիսիք էին Սարիամյան (1868-1920թթ.), Գայանյան (1869-1921թթ.), Յովնանյան (հետագայում՝ Սարիամյան-Յովնանյան, 1877-1920թթ.) դպրոցները: Թիֆլիսում սրանց զուգահեռ գործել են նաև կանանց բարձրագույն դասընթացները (1909-1920թթ.), Առաջին հայկական հասա-

---

<sup>4</sup> Նկատի ունենալով, որ Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի մասին հրապարակի վրա կան մի շարք գրքեր, որոնցից են, օրինակ՝ Աղ.Երիցյան, Պատմութիւն 75-ամեա գոյութեան Ներսիսեան հայոց հոգեւոր դպրոցի ի Թիֆլիս (1824-1899), Թիֆլիս, 1899, Ստ.Մալխասեան, Յամառօտ պատմութիւն Ներսիսեան հոգեւոր դպրոցի, Թիֆլիս, 1900, Ամնոռաց դեմքեր, Եր., 1965, Յայ մշակույթի Օրրանը, Եր., 1971, Գ.Յ.Գրիգորյան, Ներսիսյան դպրոց (համառոտ ակնարկ), Եր., 1975, Մ.Յ.Սանթրոսյան, Ներսիսյան դպրոցի պատմություն, Ե., 1981, Ներսիսյանցիներ, արլոն, Ե., 1985 և այլն:

րակական գիմնագիան (1917-1921թթ.) և այլ ուսումնական հաստատություններ: Նոր դարասկզբին Թիֆլիսում գործած մասնավոր դպրոցների թիվը հասնում է 54-ի, որոնցից 23-ը՝ հայկական, 21-ը՝ ռուսական, 6-ը՝ վրացական և 4-ը՝ այլ ազգերի: Դրանց մեջ ամենամեծն ու հեղինակավորը Ստ.Լիսիցյանի գիմնագիան է եղել, որը բացվել էր 1911-ին և 1912-ին արդեն ուներ 134 աշակերտ: Հայերենի ու մի քանի այլ լեզուների հետ մեկտեղ այստեղ ուսուցանվում էր նաև վրաց լեզու:

Այսպիսով՝ XVIII դարի վերջերից մինչև XX դարի առաջին քառորդը՝ շուրջ 130 տարի, միայն Թիֆլիսում գործած հայկական դպրոցների ընդհանուր թիվը անցնում է 80-ից:

Այդ նույն ժամանակաընթացքում խալֆայական և ծխական դպրոցներ են գործել նաև Թիֆլիսի և նրա մերձակա Բորչալուի գավառների հայկական նշանավոր բնակավայրերում, որոնց բնակչությունը համալրվել էր XVIII դարի վերջերին Արցախից գաղթած հազարավոր հայերով: Դրանց թվում են՝ Կոջոր, Ծղնեթ, Թելեթ, Թոնեթ, Դաշբաշ, Էնագեթ, Բոզվի, Տաբախմեյա, Ծիլաղբյուր, Դարաթափա, Կումիս, Կողա, Մեծ Դումնուկ, Մեծ և Փոքր Շուկավերներ, Աղբյուրփի, Խոժոռնի, Դամիա, Ակաուրթ, Ռատևան, Բուլնիս-Խաչեն, Դաղեթ-Խաչեն, Շամշուղե գյուղերը, ինչպես նաև Աղբուլաղ (այժմ՝ Թեթրիժարո) և Մանգլիս ավանները<sup>5</sup>:

Վրաստանի գրեթե բոլոր գավառներում 1821-1921թթ. գործել են բազմաթիվ հայկական կրթօջախներ, որոնցից հատկապես աչքի են ընկել Ախալցխայի, Ախալքալաքի, Սղնախի, Թելավի, Գորիի, Դուշեթի, Քութայիսի, Բաթումի, Սուխումի դպրոցները: Հիշյալ քաղաքներից առաջինը Սղնախն է, ուր դեռևս 1821թ. բացվել է հայկական դպրոց: Այդ ժամանակ Սղնախն ուներ 389 տուն, որից 377-ը հայերինն էին: Տեղեկություններ կան, որ Սղնախում Մակար անուցով մի հայազգի մարդ մասնավոր դպրոց է ունեցել դրանից էլ շատ վաղ: 1844թ. Սղնախն արդեն ուներ շուրջ 700 ծուխ, իսկ 1856-ին՝ 4310 հայ բնակիչ: Շուտով բացվում են Սրբ. Սահակյան արական (1860-ից) և Շուշանյան իգական (1872-ից) դպրոցները, որոնք հետագայում միավորվել և գործել են մինչև Վրաստանի խորհրդայնացումը: Սղնախի գավառում հայկական դպրոցներ են գործել նաև Լազոդեիս, Կակաբեթ, Ցարսկիե Կոլոդցի հայաշատ գյուղերում: Իսկ Վելիսցիխեում դեռևս 1853թ. բացվել էր արական, իսկ 1858-ից՝ նաև իգական դպրոց, որոնք 1912-ին միավորվել ու դարձել են մեկ

---

<sup>5</sup> Այս բնակավայրերի դպրոցների մասին ավելի մանրամասն տե՛ս տողերիս հեղինակի «Դաղեթ-Խաչեն» (Երևան, 1999) աշխատության մեջ և «Պատմական Թեղիքի ներկան» հոդվածում («Հանդես Երևանի համալսարանի», 2000թ., N 2, էջ 61-82):

երկսեռ կրթօջախ: 1916թ. այս գավառում ապրում էին ավելի քան 15000 հայեր, որոնցից 9 հազարը՝ Սղնախ քաղաքում, ուր դեռևս 1880-ական թթ. գործում էին երկու հայկական դպրոց և մեկ տպարան, իսկ ողջ գավառում՝ 14 հայկական ծխական դպրոցներ:

Վրաց Բագրատունիների երբեմնի մայրաքաղաք թելավը ևս եղել է Վրաստանի հայաշատ խոշոր քաղաքներից մեկը, ուր հայերը հաստատվել էին դեռևս XIII դարից: Իսկ XVI դարի վերջերին և XVII դարի սկզբին հայերի թիվն այստեղ ավելի է աճել: 1886թ. մարդահամարի տվյալներով թելավի բնակչության ընդհանուր թվաքանակի 82 տոկոսը կամ 11,2 հազարից 9,2 հազարը հայեր էին, իսկ 1914-ին այդ թիվը հասնում է 9476-ի: Այստեղ հայկական դպրոցի գոյությունը հիշատակվում է դեռևս 1858-ից, իսկ 1860-ին թելավի հայությանը օտարախոսությունից փրկելու նպատակով խաչատուր քահ. Սուքիասյանը այնտեղ հիմնել է Վարդանյան ազգային արական վարժարան՝ արժանանալով Ամենայն Յայոց Կաթողիկոս Սատրեոս Ա-ի օրհնության կոնդակին: Նույն տարում էլ տեղի հայ հասարակության միջոցներով ու գործուն մասնակցությամբ կառուցվել է այդ դպրոցի հարմարավետ շենքը: 1863թ. թելավում բացվել է նաև Գայանյան իգական դպրոցը: 1905-ից այս երկու դպրոցները միավորվել ու դարձել են երկսեռ, որը 1914թ. ունեցել է 168 աշակերտ և 5 ուսուցիչ: Այն գոյատևել է նաև հետագա տարիներին: Թելավի գավառի Չվելգավալ և Ուրիաթուբան հայաբնակ գյուղերում ևս այդ շրջանում գործել են հայկական դպրոցներ:

Վրաստանի մյուս խոշոր քաղաքը, որ անցյալում ունեցել է հայկական դպրոցներ, Գորին է: Այս քաղաքը XI դարում հիմնադրել են Յայ Բագրատունյաց թագավորության անկումից հետո նրա մայրաքաղաք Անիից գաղթած հայերը՝ վրաց Դավիթ II Շինարար թագավորի հովանավորությամբ: Դարերի ընթացքում հայկական Գորի քաղաքը ենթարկվել է բազում փորձությունների: 1845 թ. այստեղ արդեն ապրում էին 2041 հայեր, իսկ նույնաժամ գավառում՝ 16356: 1916-ին Գորիի 14,1 հազար բնակչից հայեր էին 6000-ը: Նույն գավառում այդ ժամանակ ապրում էին 24500 հայեր: Միայն Գորիում 1834 թ. գոյություն են ունեցել 4 հայ-լուսավորչական և 1 կաթոլիկ մասնավոր դպրոցներ: Յետագայում այստեղ գործել են նաև արական ու իգական ծխական դպրոցներ, որոնք 1905թ. միավորվել և դարձել են երկսեռ մեկ դպրոց: Ժամանակին Գորիում գործել է նաև կիրակնօրյա դպրոց:

Յայկական մի շարք դպրոցներ են գործել նաև նույն գավառի Չեզվի, Կասպի, Ջերթ, Խող, Աթեն, Կարաթել, Ալ, Կավտիսխև, Վադա, Կարախաչ գյուղերում, իսկ Ախլքալաք և Սուրամ բնակավայրերում եղել են երկուական՝ արական և իգական դպրոցներ: Դրանք

1905թ. միավորվել և դարձել են երկսեռ դպրոցներ նույն գյուղերում: Ընդհանուր առմամբ, Գորի քաղաքում և ողջ գավառում նախախորհրդային շրջանում գործել են 20-ից ավելի հայկական դպրոցներ:

Հայախոծ մյուս գավառը եղել է Դուշեթը, ուր 1859թ. մարդահամարի տվյալներով բնակվել է 375 ծուխ, որից 230-ը՝ հայկական: Միայն Դուշեթում գործել են արական և իգական դպրոցներ, իսկ գավառի Անանուր, Մուխրան և Սժղեթ գյուղերում 1880-1910-ական թվականներին նույնպես գործել են երկսեռ դպրոցներ:

Բորժոմը ևս 1895թ. ունեցել է ծխական դպրոց, որն ընդհատումներով գործել է երկար տարիներ: 1907-08 ուստարում այն ունեցել է 58 աշակերտ, որից 34-ը՝ աղջիկներ: Իսկ 1912-13 ուստարում աշակերտների թիվը հասել է 65-ի, որից 36-ը՝ աղջիկներ:

Քուրթայիսի նահանգում նույնպես գործել են հայկական դպրոցներ: Առաջին դպրոցն այստեղ բացվել է 1825-ին, ուր հայերի հետ մեկտեղ սովորել են նաև այլազգի քրիստոնյա երեխաներ: Սակայն ուսուցիչ չունենալու պատճառով այն շուտով փակվել է: Մինչև 1850-ական թվականների վերջը այդ դպրոցի անունը ոչ մի տեղ չի հիշատակվում: Իսկ 1862-ից կրկին այն բացվել է տեղի Ս.Գևորգ եկեղեցուն կից՝ որպես արական դպրոց, որին էլ 1873-ից ավելացել է Մարիամյան հայ օրիորդաց դպրոցը: Դրանք քաղաքում զուգահեռաբար գործել են մինչև 1905թ., որից հետո միավորվել և դարձել են երկսեռ դպրոց: Այս դպրոցում ամեն տարի սովորել են ավելի քան 60 տղաներ ու աղջիկներ:

Քուրթայիսի նահանգում հայկական դպրոցներ են ունեցել նաև Շորապանի ու Ռաչինսկի գավառների Սաչխերեթ, Չխար և Օնի հայաշատ գյուղերը, որոնք հիմնադրվել են 1881-84թթ. և գործել են մինչև Վրաստանի խորհրդայնացումը:

Թիֆլիսից հետո Վրաստանի հայկական դպրոցներով հարուստ մյուս գավառները Սամցխեն ու Ջավախքն են՝ Ախալցխա և Ախալքալաք կենտրոններով: Նշենք, որ այս գավառները հնում մասն են կազմել Մեծ Հայքի, ուստի հայերն այստեղ բնակվել են վաղմջական ժամանակներից: Դրանք տարբեր դարերում երկու անգամ Մեծ Հայքից անցել են Վիրքին և հակառակը, ապա 1266-1535 թթ. կազմել են Սամցխե-Սաաթաբազո կիսանկախ իշխանությունը: Նույն գավառները 1535-ին միավորվել են Վրացահմերթեթական թագավորությանը, իսկ 1579թ. ընկել են Թուրքիայի տիրապետության տակ: Այդ բոլոր ժամանակներում հայերը Ջավախք-Մեսխեթում եղել են բնակչության գերակշռող տարրը: 1829թ., երբ այդ երկրամասը անցել է Ռուսաստանին, Արևմտյան Հայաստանի Կարինի նահանգից ու հարակից գավառներից Կարապետ արքեպս. Բագրատունու ա-

ռաջնորդությամբ հազարավոր հայ ընտանիքներ են տեղափոխվել և բնակություն հաստատել Մեսիսեթում, Ջավախքում ու Թեղքում: Այդ շրջանից սկսած Ախալցխայում, Ախալքալաքում ու Ծալկայում բացվում են մի շարք հայկական դպրոցներ:

Ախալցխայում 1830թ. բացվում է առաջին գավառական դպրոցը, որն ուներ ռուսական, հայկական և վրացական բաժիններ: Մեկ տարի անց՝ 1831-ին այստեղ Մխիթարյանների կողմից բացվում է մի նոր՝ զուտ հայկական դպրոց, որը գործում է մինչև 1844-ը: Այն պահվում էր հայ կաթոլիկ վարդապետ Սեթյանի միջոցներով: Նույն տարում նրան փոխարինելու է գալիս Կարապետ Բագրատունու կողմից հիմնադրված հոգևոր արական դպրոցը, որը Թիֆլիսի Ներսիսյան դպրոցից հետո Վրաստանի և Իմերեթի թեմում համարվել է առաջատար: Այս կրթօջախը արքեպիսկոպոս Բագրատունին դիտում էր որպես իր կողմից 1811թ. Կարինում հիմնադրված դպրոցի շարունակությունը: Իր հիմնադրի անունով՝ Կարապետյան կոչված այդ դպրոցը գործել է շուրջ 100 տարի, պահվել է հիմնադրի անձնական միջոցներով և եկեղեցու հասույթներով: 1877-ին դարձել է միջնակարգ, 1888-89 ուստարում ունեցել է 328 աշակերտ ու 18 ուսուցիչ, իսկ 1907-08 ուստարում՝ 382 աշակերտ, 1911-20թթ. գործել է որպես 5-ամյա դպրոց: Այնտեղ որպես տեսուչ և ուսուցիչ են աշխատել Խաչատուր Աբովյանի որդին՝ Վարդան Աբովյանը և հայ մեծ գրող ու մանկավարժ Ղազարոս Աղայանը:

Ախալցխայում Կարապետյան դպրոցին զուգահեռ գործել են նաև մի շարք այլ կրթօջախներ: Այստեղ 1852թ. բացվել է հայ աղջիկների դպրոցը, իսկ հետագայում հիմնադրվել են Գայֆեճյան (1864թ.), Վարդանանց արական (1866թ.), Եղիսաբեթյան օրիորդաց (1869թ.), Գազազյան (1871թ.), Սաղաթելյան «Նոր Արշալույս» վարժարանները: Սրանցից բացի, միայն Ախալցխա քաղաքում մինչև Վրաստանի խորհրդայնացումը գործել են շուրջ 10 այլ դպրոցներ ու վարժարաններ, որոնց թվում՝ արական գիմնազիան և իգական պրոգիմնազիան: Իսկ ամբողջ գավառում եղել են 10-ից ավելի ծխական դպրոցներ ու վարժարաններ: Հետաքրքրական է նաև այն փաստը, որ Ախալցխայում 1885թ. Խորեն Ստեփանեն տպագրել է իր «Մանկավարժանոց» հանդեսը:

Ախալքալաքում առաջին դպրոցը բացվել է 1836թ., դարձյալ Կարապետ արք. Բագրատունու նախաձեռնությամբ և կոչվել է Մեսրոպյան: Այն եղել է երկդասյան, 1843-ին ունեցել է 52 աշակերտ և մեկ ուսուցիչ: Հետագայում բացվել է Սանդիխտյան օրիորդաց (1870թ.) դպրոցը: Սուրբ Խաչ եկեղեցու կառուցումից (1856թ.) հետո հիշյալ դպրոցները տեղավորվել են նրա գավթում: Հետագայում դրանք միավորվել և դրաձել են երկսեռ դպրոց, ուր 1914-ին սովորում էին 445 աշակերտ և դա-

սավանդում 15 ուսուցիչ: Ժամանակին այստեղ ուսուցիչներ են եղել ճանաչված լեզվաբան-գիտնական Գ. Վանցյանը և գրող-բանահավաք Ա. Մաղոյանը (Սեյլան), իսկ նշանավոր հրապարակախոս, գրականագետ ու հասարակական գործիչ, «Մուրճ» հանդեսի հիմնադիր ու խմբագիր Ա. Արախանյանը այստեղ 1911-12 թթ. եղել է հայկական դպրոցների տեսուչ: Ախալքալաքում 1889թ. բացվել է քաղաքային ուսումնարան, որը 1916-18 թթ. գործել է որպես գիմնազիա:

Ախալքալաքի գավառի բազմաթիվ գյուղերում նույնպես XIX դարի կեսերից գործել են մի շարք դպրոցներ: Ընդհանրապես, Ախալքալաքի գավառը, որը 1874 թ., անջատվելով Ախալցխայից, դարձել է ինքնուրույն վարչատարածքային միավոր՝ Ախալքալաք կենտրոնով, ունեցել է 100-ից ավելի բնակավայր: 1930թ. այս գավառը նույնպես բաժանվել է երկու ինքնուրույն՝ Ախալքալաքի և Բոգդանովկայի (1991-ից՝ Նիոթոմիդայի) վարչական շրջանների: Նորաստեղծ շրջանին են անցել հիշյալ գավառի 31 գյուղերը, որոնցից 26-ը՝ հայկական, իսկ Ախալքալաքի շրջանին մնացել է 72-ը, որոնցից 55-ը՝ զուտ հայկական: Այդ բոլոր գյուղերում անցյալ դարի սկզբներին գործում էի նհայկական կրթօջախներ: Ներկայումս Ախալքալաքի շրջանի 55 զուտ հայկական և շուրջ 20 խառը բնակչությամբ գյուղերում գործում են 60-ից ավելի հայկական դպրոցներ, որոնց մեծ մասը՝ միջնակարգ: Իսկ Նիոթոմիդայի շրջանի 26 հայկական գյուղերում և Բոգդանովկա քաղաքում գործում են 32 դպրոցներ, որոնցից՝ 30-ը՝ միջնակարգ:

Պատմական Գուգարաց նահանգի Թռեղք գավառում նույնպես հայերն ապրել են վաղնջական ժամանակներից: Սակայն այստեղ ևս նրանց ավերակված ու օտարների կողմից բնաջնջված բնակավայրերը վերակենդանացրել են 1830 թ. Էրզրումի նահանգի գյուղերից գաղթած հայերը, որոնք Թռեղքի լեռնաշղթայի հարավային փեշերին ու Խրամ գետի լայնարձակ հովտում հույների հետ կողք կողքի հիմնադրում են իրենց նոր բնակավայրերը, դրանց տալով հայրենի Կարնո գյուղերի անունները:

Ահա այս գավառում, որ ներկայումս ընդգրկում է Ծալկայի վարչական շրջանը, հայկական առաջին դպրոցը, ըստ գոյություն ունեցող վավերագրերի, բացվել է 1837-ին Ղուշչի գյուղում: Հետագայում դպրոցներ են բացվել նաև Աշկալայում, Նարդևանում, Ղզլքիլիսայում, Այազմայում, Դարագյուղում և այլուր, որոնք, որոշ ընդհատումներով, գոյատևել են մինչև Վրաստանի խորհրդայնացումը: Ներկայումս Ծալկայի շրջանի թվով 13 հայկական գյուղերում գործում են դպրոցներ, որոնցից 8-ը՝ միջնակարգ:

Սև ծովի կովկասյան ափերին՝ ներկայիս Աջարիայ իև Աբխազիայի Հանրապետությունների տարածքներում, չնայած հայերն

ապրել են վաղ միջնադարից, սակայն հայկական գաղթօջախն այստեղ ստվարացել է հասկապես XVIII դարի սկզբներից սկսած և ավելի ուշ՝ XIX դարի կեսերից, երբ մեծ թվով համաճեմահայեր Տրապիզոնից, Օրդուից, Սուշից, Սամսունից և այլ վայրերից գանգվածաբար տեղափոխվել ու բնակություն են հաստատել ծովափնյա Բաթում, Փոթի, Սուխում, Օջամչիք և այլ քաղաքներում ու դրանց շրջակա ավաններում: Այդ վայրերում հայկական դպրոցներ սկսել են բացվել XIX դարի վերջերից: Օրինակ, Բաթումում դեռ 1880-ականներից հայտնի էր Մեսրոպյան երկսեռ վարժարանը: Դպրոցներ են ունեցել Քոբուլեթը, Չաքվը, Փոթին, Մախինջաուրը և Օջամչիքին: Միայն Սուխում քաղաքում ու նրա շրջակա բնակավայրերում 1900-1921թթ. գործել են 25 տարբեր տիպի դպրոցներ: Ներկայումս Աջարիայում և Աբխազիայում գործում են 45 հայկական դպրոցներ, որից 41-ը՝ Սուխումում ու նրա շրջակայքում:

Հարավային Օսեթիայի կենտրոն Ցխինվալ քաղաքը XIX դարի կեսերին հայաբնակ խոշոր ավան էր և մտնում էր Գորի գավառի վարչական կազմի մեջ: Այնտեղ գործում էին երկու՝ արական և իգական դպրոցներ: Արականը հիմնադրվել էր 1868թ. իսկ իգականը՝ 1861-ին, որը կոչվում էր Մարիամյան: 1896-ին դրանք միավորվել և դարձել են երկսեռ դպրոց, որը 1911-12 ուստարում դարձել է քառամյա, 1914-ին ունեցել է 51 աշակերտ և 3 ուսուցիչ: Այս տարածքում իգական ծխական միդասյա դպրոց է գործել նաև Ախալգորի ավանում, որը բացվել էր 1888-ին: Հայաբնակ Քվախուրելի գյուղում ևս 1907-ին բացվել էր ծխական երկսեռ դպրոց, որը 1908-09 ուստարում ունեցել է 56 աշակերտ:

Այսպիսով, նախախորհրդային շրջանում հայ եկեղեցու Վրաստանի և Իմերեթի թեմում, այլ կերպ՝ ամբողջ Վրաստանում, գործել են 251 տարբեր տիպի հայկական դպրոցներ: Խորհրդային կարգեր հաստատվելուց հետո մի շարք հայաբնակ գյուղերի ու քաղաքների հայ բնակչությունը աստիճանաբար վրացախոս դառնալով՝ մոռացել է իր մայրենի լեզուն: Այդպիսի վայրերում փակվել են հայկական դպրոցները և դրանց տեղը բացվել են վրացական կամ ռուսական դպրոցներ: Ներկայումս Վրաստանի 12 հայաբնակ շրջաններում, Թբիլիսի քաղաքում, Աբխազիայում ու Աջարիայում գործում են 195 հայկական դպրոցներ, որոնցից միջնակարգ են շուրջ 150-ը: Վրաստանի հայկական բոլոր դպրոցներում ուսուցումը մայրենի լեզվով է, իսկ դասագրքեր ու ծրագրեր ստացվում են Հայաստանից:

## «ՋԱՎԱԽՔ» ՊԱՐԲԵՐԱԿԱՆԸ\*

(Վրաստանի հայ պարբերական մամուլի պատմությունից)

### Հրահատ ՍԱՐԳՍՅԱՆ

**Ժամանակաշրջանը և թերթի ծնունդը:** Ջավախքը, հիրավի, հայ ժողովրդի դարավոր մշակույթի փոքրիկ, բայց հինավուրց ու յուրահատուկ կենտրոններից մեկն է եղել: Նրա պատմության յուրաքանչյուր էջը ուշագրավ մի ծանոթություն է անցյալի հետ՝ հագեցած բազմաթիվ հետաքրքրություններով...

Դեռ անցյալ դարի առաջին կեսին արհեստավորական Ախալքալաք քաղաքում գործել են հայկական թատերախմբեր, եկեղեցական ու ծխական երկսեռ դպրոցներ, որոնք հսկայական նշանակություն են ունեցել ինչպես լուսավորության տարածման, այնպես էլ հասարակական ամենատարբեր խմբերի ներկայացուցիչների մեջ գրավոր խոսքի նկատմամբ սեր ու հարգանք դաստիարակելու գործում: Իսկ թե դարասկզբին ինչպիսի տնտեսական ծանր ու անմմխիթար վիճակում էր գտնվում ամբողջ Ախալքալաքի գավառը, համատարած խավարի ու տգիտության որքան ծանր բեռ էր իջել գավառի վարչական կենտրոնի՝ արհեստավորական քաղաք Ախալքալաքի ու գյուղերի վրա խորհրդային կարգերի հաստատումից ընդհամենը մեկ-երկու տասնամյակ առաջ, պարզապես աննկարագրելի է: Սոցիալական դժվարին կացության մեջ էին գտնվում քաղաքի արհեստավորները, որովհետև վաղուց արդեն քայքայվում, լճացում էին ապրում համքարական կազմակերպությունները: Եվ որքան էլ եռանդով բանեին նրանց «ոսկե ձեռքերը», միևնույն է, անկարող էին բավարարել բանվորական (արհեստավորական) ընտանիքի կենսական ամենատարրական պահանջները: Հասկանալի է նաև, թե հնացած միջոցներով որտեղի՞ց կարող էր արդյունավետ լինել արհեստակցական ձեռնարկությունների աշխատանքը: Գավառի ցրտաշունչ կլիմայական պայմանները, հաճախակի կրկնվող երաշտները (1910-1920 թթ.) մի կողմից և կեղքողների

---

\* Ներկայացվող աշխատանքն առանձին գրքուկով լույս է տեսել 1996թ. Երևանում:

օրեցօր աճող «պահանջերը» մյուս կողմից աշխատավոր գյուղացիությանը դրել էին այնպիսի մի վիճակի մեջ, որ թվում էր, թե այլևս փրկության ելք չկար: Գավառի հարստահարիչների, կեղեքողների մի ստվար մասն էր միայն, որ աշխատավորների հոգսերից փորձում էր համառորեն իրեն հեռու պահել, որքան էլ մոտիկից զգար հարյուրավոր ու հազարավոր մարդկանց վտանգավոր վերաբերմունքը աշխատանքի ու դրա եկամուտը յուրացնողի հաղնեպ: Թիֆլիսի նահանգն էլ իր հերթին էր անուշադրության մատնել ծայրամասային այս գավառը՝ Ախալքալաքը: Բնական է, որ դեռևս - պատշաճ բարձրության վրա չէին կարող գտնվել աշխատավոր զանգվածների քաղաքական ակտիվությունը, հետևողական և սկզբունքային պայքարի, կազմակերպվածության ինքնագիտակցությունը՝ հանուն ազատության: Եվ ինչպես ժամանակին գավառի բնակիչներն են հորջորջել, աշխատավորական զանգվածները ոչ կարող էին մարմնական և ոչ էլ հոգևոր սնունդ ստանալ:

Ահա թե ինչու տպագիր պարբերականի ծնունդը (ինչպիսի կշիռ էլ ունենար այն) խոշոր իրադարձություն էր Ախալքալաքում...

... – Ծո, հըլը իստե՛ղ աշե... Ծո, իսիկ տեսե՛լ ես...

Ու կոշկակար Անդոն, չթաքցնելով իր ուրախությունն ու զարմանքը, ձեռքը վերցրեց հայերեն լեզվով լույս տեսած ներկահոտ պարբերականն ու պարզեց գործընկերներին...

Արհեստավորները մի պահ դադարեցրին աշխատանքը՝ իրենց ուշադրությունը սևեռելով դեպի գործընկերը... 1913 թվականի հունվարյան այդ ցրտաշունչ օրը մարդկանց հետաքրքրությունը անչափ մեծ էր թերթի հանդեպ: Չէ որ այն հրատարակվել էր իրենց հայրենիքում՝ Ախալքալաքում, Մ. Գրիգորյանի տպարանում: Դա հայերեն անդրանիկ գրական-հասարակական ութ էջանոց երկշաբաթաթերթն էր «Ջավախք» վերնագրով:

Յսկայական հետաքրքրությամբ է ընդունվել պարբերականի ծնունդը, նրա առաջին համարը ձեռքից ձեռք է անցել թե՛ քաղաքում և թե՛ գյուղերում: Ավագ սերնդի մարդիկ պատմում են, թե գավառում որտեղ մի գրագետ մարդ է գտնվել, բազմաթիվ արհեստավորներ, գյուղացիներ են խմբվել նրա գլխին ու ստիպել, որ վերջինս կարդա բարձրաձայն, ծայրից ծայր:

Յիրավի, խոշորագույն իրադարձություն էր պարբերականի ծնունդը Ախալքալաքի գավառում, որովհետև այն արժարժում էր համատարած խավարի ու տգիտության մեջ խարխափող շինականի ու բանվորի կյանքը: Տպվել էր այն ժամանակ, երբ գավառի գրեթե բոլոր գյուղերում գրաճանաչ մարդիկ քիչ կային:

Գիշտ է, ժամանակի վիրահայ պարբերականները («Մշակ», «Աղբյուր», «Տարագ» և այլն) վաղուց մուտք ունեին Ախալքալաք ու

հաճախ էին գրում գավառի մասին, սակայն այս մեկը իրադարձություն էր տեղի ազգաբնակչության համար:

Թե ինչպիսի պայմանների առկայությամբ (կապված պարբերականի հրատարակության հետ) ծնվեց «Ջավախք» գրական-հասարակական երկշաբաթաթերթը Ախալքալաքում, հայտնի չէ մեզ, ստույգ աղբյուրներ չկան, բացի արխիվային այն նյութերից ու թերթի այն համարներից, որոնք պարբերականի պատմությամբ հետաքրքրվելիս Ախալքալաքի գավառագիտական թանգարանից, Երևանի ԱԼ Մյասնիկյանի անվան հանրային պետական գրադարանից տրամադրվել են մեզ: Այդ բացը գալիս են լրացնելու նաև այն տեղեկությունները, որոնք ստացել ենք թերթի խմբագիր-հրատարակիչ Վարդան Շահպարոնյանի որդուց՝ ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների թեկնածու, դոցենտ, հանգուցյալ Հմայակ Շահպարոնյանից և առանձին մարդկանց անձնական արխիվներում պահվող հազվագյուտ նամակներից ու վավերական արժեք ներկայացնող այլ նյութերից:

Թերթի չորս տարիների «համառ կյանքի» մասին են պատմում հենց «Ջավախքի» տարբեր համարներում զետեղված հրապարակախոսական նյութերը, որոնց հեղինակը հիմնականում թերթի խմբագիր և հրատարակիչ Վարդան Շահպարոնյանն է:

Ամենակարևորն այն է, որ մեզ հաջողվել է թանգարանների, արխիվային և այլ նյութերն ուսումնասիրելիս բավական ստույգ տեղեկություններ հավաքել «Ջավախքի» խմբագիր-հրատարակիչ Վ. Շահպարոնյանի մասին: Հենց Վ. Շահպարոնյանի և նրա մի խումբ համախոհների երկարատև ու համառ ջանքերի շնորհիվ է, որ Կովկասյան գրաքննչական կոմիտեի խստիվ հսկողության պայմաններում ծնվեց «Ջավախքը»:

Թերթը, որը հրատարակվում էր ութ էջով (բոլորն էլ հայերեն) և ոչ մեծ ֆորմատով (ձևաչափով), լույս տեսավ ընդամենը չորս տարի (1913-1916 թթ.): Այն իր առաջ խնդիր էր դրել՝ անդրադառնալ աշխատավոր ժողովրդի հոգսերին, կենցաղին, լուսավորության տարածմանը, կուլտուրական մակարդակի բարձրացմանը:

## **ՎԱՐԴԱՆ ՇԱՀՊԱՐՈՆՅԱՆԸ ՊԱՐԲԵՐԱԿԱՆԻ ԽՄԲԱԳԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱՎԿԻՉ**

### *Ա) ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ*

Վ. Շահպարոնյանը ծնվել է 1872 թվականին Ախալքալաք քաղաքում: Այնուհետև սովորել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում: Տակավին երիտասարդ Վարդանին ոգևորում են ազգային-ազատագրական շարժումները, և նա իր կամքով մտնում է մմանատիպ՝

հնչակյան պատանիների խմբակի մեջ և հետագայում դառնում է այդ կազմակերպության Ախալքալաքի գավառի ղեկավարը: 1894-1917 թթ. Վ. Շահպարոնյանը գտնվել է ոստիկանության գաղտնի հսկողության տակ: Բավական է նշել, որ երբ 1895 թ. գավառում սկսվում է աշխատավոր գյուղացիության շարժումը վաշխառուների և հողատերերի դեմ, Վ. Շահպարոնյանը ակտիվ մասնակցություն է ցույց տալիս այդ շարժմանը, «Աթոս» կեղծանունով մի շարք հողավածներ գրում Թիֆլիսյան «Արձագանք» թերթում՝ ընդդեմ շահագործողների, պաշտպանելով աշխատավոր գյուղացիների շահերը: Իսկ 1903 թ. ամռանը, Գոլիցինյան դաժան ռեժիմի ժամանակ Անդրկովկասում խլվում են հայկական ուսումնարանների, բարեգործական ընկերությունների և գրադարանների գույքերը, փակվում են դրանք ամենուրեք: Վարդան Շահպարոնյանը Ախալքալաքի գավառում գլխավորում է մասսաների դիմադրությունը, կազմակերպում ցույցեր, բողոքներ: Դիմադրությունը ճնշվում է, ակտիվ մասնակիցները (գլխավորապես՝ մտավորականությունը) նետվում են բանտ, աքսորվում հեռավոր վայրեր: Բանտարկվում է նաև Վ. Շահպարոնյանը: 6 ամիս Ախալքալաքի, Ախալցխայի, Թիֆլիսի և Խարկովի բանտերում տառապելուց հետո նա աքսորվում է Կալուզայի նահանգի Ժիզդնա քաղաքը՝ 5 տարի ժամկետով: Աքսորից վերադառնալուց հետո Շահպարոնյանն իր մի խումբ համախոհների հետ 1913 թ. հունվարին սկսում է հրատարակել «Զավախք» երկշաբաթաթերթը:

Վ. Շահպարոնյանը եղել է հոգաբարձու (տեսուչ) Ախալքալաքի ծխական դպրոցում, անդամագրվել Թիֆլիսի հայկական թատերական ընկերությանը:

Վ. Շահպարոնյանի անմիջական ղեկավարությամբ, հասարակական միջոցներով կառուցվել է Ախալքալաքի ծխական երկսեռ դպրոցի շենքը՝ թատերական առանձին դահլիճով և բեմով, քաղաքի սպանդանոցը, մի շարք ճանապարհներ և աղբյուր-հուշարձաններ:

1918 թ. գաղթի ժամանակ, մայիս ամսին, երբ ամեն ոք աշխատում էր փրկել իր ընտանիքը, Շահպարոնյանը Ախալքալաքի որբանոցի 30-35 հոգուց բաղկացած 5-15 տարեկան երեխաների խումբը դժվարին պայմաններում ոտքով անցկացնում է Ցխրա-Ցխարո բարձրադիր լեռնանցքով և հասցնում Բակուրիան, ազատելով նրանց վերահաս վտանգներից...

Վրաստանի խորհրդայնացումից հետո Վ. Շահպարոնյանը նշանակվել է գավառի առաջին հեղկոմի տնտեսագիտության բաժնի վարիչ: Նա եղել է նաև կոմունալ բաժնի, լուսբաժնի վարիչ, զբաղեցրել այլ պատասխանատու պաշտոններ: Այսպիսին է եղել նրա

հասարակական-քաղաքական գործունեությունը: Ուշագրավ է նաև գրականը: Անցյալ դարի վերջերին է սկսել իր գրական գործունեությունը՝ աշխատակցելով «Նոր դար», «Աշակ», «Արձագանք», «Տարագ», «Աղբյուր», «Հասկեր» և այլ պարբերականների: Գրել է ճանապարհորդական (ուղեգրական) նկարագրություններ, մանկական պիեսներ, դրամաներ, պատմվածքներ և հակակղերական-երգիծական նովելներ: Ժամանակին լայն ընդունելություն են գտել առանձնապես նրա դրամատիկական գործերը, որոնք տպագրվել են առանձին գրքույկներով, մասամբ էլ՝ մնացել անտիպ:

Վ. Շահպարոնյանն առաջինն էր, որ դեռ դարասկզբին Ախալքալաքի գավառում կառուցում է ջրի ուժով աշխատող մեխանիկական շարժիչ՝ հիդրոտուրբին, որի ուժով աշխատել են մեխանիկական աղացը, ձիթհանքի ճգմիչը: Հետագայում, 1913 թ. է, որ Ախալքալաքում կառուցվում է առաջին հիդրոէլեկտրակայանը:

Ինչ խոսք, որ Վ. Շահպարոնյանի ներդրած բազմաթիվ ծառայություններ առաջադիմական են եղել ոչ միայն Ախալքալաքի գավառի համար...

Կյանքի վերջին տարիներին Վ. Շահպարոնյանը իրականացած տեսավ 1898 թվին գրած իր «Երագ» սքանչելի գրվածքում արտահայտած իդձերը, տեսավ վերածնվող հայրենիքը՝ երջանիկ կյանք կառուցող Խորհրդային Հայաստանը:

Վ. Շահպարոնյանը մահացել է 1941 թվականին և թաղված է Երևանում:

## **Բ) ԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ**

Բավական հարուստ գրական ժառանգություն է թողել Վ. Շահպարոնյանը: Այս արտահայտությունը, թվում է, անբարեհնչուն է փոքր-ինչ: Շատերը գուցե համոզված չեն դրանում, քանի որ առ այսօր, ցավոք, չկա գրաքննադատների որոշակի զանգված, որ գոնե մասամբ ծանոթ լինի վիրահայ մամուլի գործչի, դրամատուրգի, խմբագիր-հրատարակչի, հրապարակախոսի և հասարակական գործչի, իր հայրենիքի և իր ժողովրդի շնորհալի զավակի գրական ժառանգությանը...

Վ. Շահպարոնյանի գրական գործունեությունը բեղմնավոր է առանձնապես դրամատուրգիայի ասպարեզում: Առաջին դրաման՝ «Վարդ Սալվուն», Վ. Շահպարոնյանը գրել է 1896 թվականին՝ նյութը վերցնելով տաճկահայ ազատագրական շարժումներից: Կովկասյան գրաքննչական կոմիտեի կողմից այն արգելվել է և անմիջապես բռնագրավվել: Դրամատիկական մյուս գործերը՝ «Արմեն Ֆաթմանը», «Անտոն Սինոնիչը», «Աշխենը», «Արցունքի ծովը» և

«Գող, սիրտը՝ դող» մանկական պիեսը հրատարակվել և բեմադրվել են շատ վայրերում՝ Թիֆլիսում, Բաքվում, Նոր Նախիջևանում, Ախալքալաքում և այլուր: Բացի հիշյալ գործերից, Վ. Շահպարոնյանի գրչին են պատկանում նաև գեղարվեստական որոշակի արժեք ներկայացնող շուրջ երեքուկես տասնյակ այլ դրամաներ, մանկական պիեսներ, վոդևիլներ, պատմվածքներ, ֆելիետոններ և այլ ժանրի ստեղծագործություններ:

Վ. Շահպարոնյանի գեղարվեստական ստեղծագործությունների համար իբրև «սկզբնաղբյուր» ծառայել են ոչ միայն օտար բռնակալների դեմ հայ ժողովրդի մղած հերոսական պայքարի նշանավոր դրվագները, այլև աշխատավորական զանգվածների բողոքի ու ատելության արտահայտություններն ընդդեմ ամեն տեսակ կեղեքիչների: Իր այդպիսի գործերի տակ, որոնք տպագրվել են «Ջավախքի» կամ ժամանակի այլ պարբերականների էջերում, հրատարակվել առանձին գրքույկներով, Վ. Շահպարոնյանն ստորագրել է՝ «Աթոս», «Էն-Էն», «Էլի Էն», «Վ. Շ.» և այլն:

Թերթելով «Ջավախք» պարբերականի տարբեր տարիների համարների էջերը, կարելի է հանդիպել նրա խմբագիր-հրատարակչի գրչին պատկանող և հակակղերական, երգիծական բնույթ ունեցող բազմաթիվ պատմվածքների և ֆելիետոնների:

«Արցունքի ծով»․ այսպես է վերնագրված Վ. Շահպարոնյանի չորս գործողությամբ դրաման, որը լույս է տեսել 1912 թվականին Ալեքսանդրապոլի (այժմ՝ Գյումրի) «Շիրակ» տպարանում: Ի դեպ, հեղինակն այս դրաման գրել է աքսորավայրում՝ Կալուգայի նահանգի ժիզդա քաղաքում: Դրաման հագեցած է խոր հայրենասիրությամբ, ժողովրդի մոտալուտ և լուսավոր գալիքի նկատմամբ դրամատուրգ ունեցած անսահման հավատով: Իսկ ինչո՞ւ է այն վերնագրվածի «Արցունքի ծով»: Հեղինակի գրած առաջաբանում, որպես պատասխան, կարդում ենք.

«Այս երկը քննադատողները կարող են ասել, թե պարունակում է միայն արյուն, արցունք, սուգ, մահ... ուրիշ ոչինչ: Իսկ ես կասեմ՝ այո՛, եթե բարեկեցիկ ազգությունների կյանքից լիներ այս քստմեցնող դրաման, շատ ուրիշ կլիներ մեր պ. պ. քննադատների կարծիքը, բայց, ավա՛ղ, սա մեր թյուրքահայ դժբախտ ժողովրդի կյանքից է, սա դեռ հեռավոր պատկերն է, ինչ որ կատարվել է այդ արյունլվա երկրում... մի՞թե Սասնա լեռների նվազը չէիք լսում, մի՞թե թնդանոթների որոտը, հրացանների ճարճատյունը, որոնք մահ էին սփռում խեղճ, թշվառ, անպաշտպան ժողովրդի վրա, չէին հասնում մեր ականջին. մի՞թե մենք լսում էինք բարեկեցիկ մարդկանց անհոգ ծիծաղը, մի՞թե թյուրքահայ օրիորդի երեսին խաղում էր նագիկ ժպիտը... Ոչ, ոչ, արյունն էր հոսում, արցունքի հեղեղներ

էին վագուն, լացի, ողբի, սգի, վայերի, օգնության կանչի ժամերգի ձայնն էր լսվում: Եվ մի՞թե այս բոլորից հետո գրիչը կարող է արտադրել անդորր կյանքի գյուրալի պատկերներ... Ո՛չ, մռայլ էր մեր կյանքը, մռայլ էին մեր հոգին և նրա արտադրությունները...

Թող ներող լինեն կարդացողները կամ հանդիսատեսները, որ չեն խնայել նրանց ջղերը: Ես էլ եմ լացել, երբ գրչիս տակ ճշում էր խելակորույս մայրը. հեկեկում էր այս երկի հերոս Յրայրը... Յրայրը, որը թեև առյուծ, բայց անզոր էր թշվառը պաշտպանելու, չարիքի առաջը առնելու... Այո, սա փունջ է մահի, արցունքի, արյունի. սա համերգ է ողբի, հեկեկանքի, հեծկլտանքի, սա պատկեր է դժոխքի...»:

«Արցունքի ծով» դրաման, «Ջավախք» պարբերականի վկայությամբ, ջերմ ընդունելություն է գտնում ընթերցողների կողմից և բազմիցս ներկայացվում ոչ միայն Ախալքալաքի թատերասերների ուժերով: Յայրենաշունչ այս գործում ներկայացվող դեպքերը կատարվում են Մշո դաշտում և Սասունում: Դրամայի գլխավոր հերոս Յրայրը, որը երեսուն տարեկան «խրոխտ, վառվռուն երիտասարդ» է, թուրք հրոսակների և քուրդ համիդականների կողմից ավերված գյուղի բնակիչ է, իր հայրենիքի հավատարիմ զինվոր, նա իր խմբով Մշո դաշտում դժվարին ու հերոսական հաղթանակ է տանում թուրք հրոսակների դեմ: Դրաման ավարտվում է Յրայրի մահով:

«Արցունքի ծովն», հիրավի, հայ շինականի որդու, հայ դուրսագանի գեղեցիկ մահվան մասին գործ է, գոյատևող մի ժողովրդի պատմության հերոսական էջերից մեկի կենդանի նկարագիրը: Այն գրված է հարուստ ու պատկերավոր լեզվով, հաջողված են հատկապես երկխոսությունները: Դրաման ունի որոշակի գեղարվեստական արժեք:

Վ. Շահպարտյանի գրական գործերի մեջ զգալի տեղ են գրավում գավառական անցուդարձից գրված նրա կատակերգությունները:

Թանգարանային ձեռագիր նյութերն ուսումնասիրելիս մեր ուշադրությունը առանձնապես գրավեց Վ. Շահպարտյանի «Տերտերը փախավ» մեկ գործողությամբ կատակերգությունը: Այն գրվել է 1895 թվականին, Ախալքալաքում և ձեռագիր վիճակում բեմադրվել Անդրկովկասի շատ հայաբնակ վայրերում, չափազանց դժվարին ու վտանգավոր պայմաններում: Մի քանի անգամ կատակերգությունը դրվել է բռնագրավվելու, արգելվելու վտանգի տակ: Այս գործը լայնորեն ծանոթ է ոչ միայն բոլոր հին ախալքալաքցիներին, այլև թբիլիսաբնակ ավագ սերնդի հայ ազգաբնակչությանը: Գրաքննությունը, բնականաբար, չի թուլատրել հրատարակելու այս գործը: Կատակերգությունը մոռացության է մատնվել խորհրդային իշխանության տարիներին, հեղինակի մահվանից հետո էլ, մինչև օրս, մնացել

է անտիպ: Կատակերգության հերոսներն են գավառական քաղաքի հոգևոր դպրոցի ուսուցիչը՝ տերտերը և նրա սաները: Տեսարանը ներկայացնում է հիշյալ դպրոցի դասարանը: Աշակերտները սա ա- սում են իրենց ուսուցչին՝ տերտերին: Դասը վաղուց է սկսվել, իսկ տերտերը համառորեն ուշանում է: Աշակերտներից միայն Յանոն գիտե, որ տերտերը, լսելով եկեղեցական դպրոցի հոգաբարձու Սանթրոս աղայի մատաղ անելու մասին լուրը, մոռացած ամեն ինչ՝ շտապել է այնտեղ... Ու բոլորը միաձայն որոշում են «մի օյին» (խաղ) խաղալ անպարտաճանաչ ու անկուշտ տերտերի գլխին: Սաներից մեկը զրատախտակին գրում է դասարանի հորինած այն երգը, որ միասին երգում են ամեն օր՝ տերտերի դուրս գալուց հե- տո.

*Աման տերտերի դարդին, յաման  
տերտերի դարդին.  
Տերտեր կ'ըսի չ'հասի, թագա  
հարսի հավասի.  
Գեղի բոլոր պտտվի, տերտեր  
փարի (փողի) կարոտի.  
Քելեխ, մատաղ ու գինի  
տերտերը միշտ կ'լլափի,  
Աման տերտերի դարդին, յաման  
տերտերի դարդին.*

Մյուսները մեջքով շրջվում են դեպի դուռը և երգում: Յանկարծ լսվում է տերտերի հագի ձայնը: Բոլորը մի պահ զգաստանում են: Ներս է մտնում ուշացած տերտերը ու նկատում մեջքով դեպի իրեն շրջված սաներին, ապշած նայում աջ ու ձախ և զրատախտակին կարդում.

*... Քելեխ, մատաղ ու գինի  
տերտերը միշտ կ'լլափի.*

Կատաղած տերտերը քանոնի հարվածներով փորձում է «կար- գի բերել» «անկարգ-անպիտաններին», սկսում է անխնա ծեծել ում որ պատահի: Իսկ երբ փորձում է նստել, սաներից մեկը՝ Մկոն, ձգում է տերտերի աթոռին ամրացված ասեղի թելի ծայրը: Տերտե- րը սարսափահար վեր է ցատկում:

Հռիռում են բարձրաձայն բոլորը.

- Տղերք, տերտերը հարբած է...

Շփոթահար տերտերի հետ դեպքը կրկնվում է մի քանի անգամ: Ի վերջո աշակերտները «տեղեկացնում» են իրենց ուսուցչին, որ.

- Տեր հայր, կարկատան անելիս իրիցկինը երևի մոռացմամբ ասեղը շորերիդ մեջ է թողել:

- Այո՛, այո՛, շորերիս մեջ... հավանաբար...- գրեթե անգիտակցաբար կրկնում է տերտերը:

Իսկ երբ գիտակցում է, թե ինչ է կատարվում իր հետ, թողնում է դասարանը և վազում դպրոցի տեսուչ Սանթրոս աղային գանգատվելու: Վարագույրը դրանով փակվում է:

- Տերտերը փախավ, տերտերը փախավ... գոչում է ամբողջ դասարանը հետևից:

Սա, ինչ խոսք, գավառական քաղաքի՝ գրեթե ոչինչ չտվող հոգևոր դպրոցի կենդանի նկարագիրն է՝ առանց որևէ ավելորդ մեկնաբանության, ներծծված Ջավախքի հյուսիսեղ բանահյուսությամբ:

Նախախորհրդային, գավառական քաղաքի կյանքը իր կենդանի արտացոլումն է գտել նաև Վ. Շահպարոնյանի մյուս գործերում («Միամիտ փեսացու», «Փչացած տելեֆոն» և այլն): Ստեղծագործությունների մի մասը տպագրվել է «Ջավախք» երկշաբաթաթերթում, իսկ մյուսը՝ «Հոգևոր գոհարներ» շաբթը (այդպես է անվանել հեղինակը իր գործերը) լույս է տեսել Թիֆլիսում հրատարակվող «Տարագ» և այլ պարբերականների էջերում: Հիշատակության է արժանի նաև Շահ-Պարոնի (Վ. Շահպարոնյան) «Վարդան Մամիկոնյանի մահը» մեկ գործողությամբ երգախառն դրաման՝ գրված Գամառ-Քաթիպայի, Ալիշանի և այլոց բանաստեղծությունների հիման վրա: «Վարդան Մամիկոնյանի մահը» հեղինակը գրել է 1894 թ. Ախալքալաքում: Հայրենասիրության ջերմ զգացումով տոգորված այդ ստեղծագործության հերոսներն են Լուսինը, պատանիները, Վարդան Մամիկոնյանը, զինվորները և ժողովուրդը: Այս գործը նույնպես բազմիցս բեմադրվել է տեղի թատերասերների ուժերով:

Վ. Շահպարոնյանի թե՛ տպագրված («Աշխեն», «Արմեն Ֆաթման», «Արցունքի ծով», «Անտոն Սիմոնիչ») և թե՛ անտիպ գործերի գերակշռող մասը դրամատիկական ստեղծագործություններ են: 1972 թվականին Նիոնոմինդա (Նախկինում՝ Բոզդանովկա) հայաբնակ քաղաքի Վահան Տերյանի անվան շրջանային մշակույթի տան դրամատիկական ինքնագործ խումբը, որն արդեն վերածվել է բարի ավանդույթներ ունեցող մի ժողովրդական թատրոնի, բեմադրել էր Վ. Շահպարոնյանի «Արցունքի ծով» չորս գործողությամբ և թերևս ամենահաջողված դրաման: Բեմադրված գործից էր, անշուշտ, մեծապես կախված խմբի ունեցած այդքան մեծ հաջողությունը՝ ջերմ ու անկեղծ ընդունելությունը ունկնդրի կողմից: Ի դեպ, տասնամյակներ առաջ այս ստեղծագործությունը բազմիցս բե-

մադրվել է նաև Ախալքալաքում, Ախալցխայում, Թիֆլիսում և Շիրակի գյուղերում:

«Ձավախքի» խմբագիր-հրատարակիչ Վ. Շահպարտյանի գրական ժառանգությունը, կարծում ենք, արժանի է առավել լուրջ ուսումնասիրման ու չի սահմանափակվում այս ակնարկով: Ցավոք, տարիների հետ մոռացության են մատնվում հեղինակի՝ որոշակի գեղարվեստական արժեք ներկայացնող և թանգարանային թղթապանակներում խուճացող ուշագրավ գործերը:

## **ԹԵՐԹԻ ԲԱԺԻՆՆԵՐԸ**

«Ձավախք» շաբաթաթերթի էջերը թերթելիս հանդիպում ենք թվով տասը մշտապես գործող խորագրերի՝ «Բանասիրական», «Տեղական կյանք», «Նամակ խմբագրությանը», «Գավառ», «Մամուլ», «Ֆելիետոն», «Վերջին լուրեր» և այլն: Այդ խորագրերի անուններով էլ կոչվել են թերթի բաժինները:

Այսօր, քանի որ խմբագրության կառուցվածքի մասին գրեթե ոչ մի տեղ չի հիշատակված, չկա որևէ վավերաթուղթ դրան վերաբերող, դժվար է, անշուշտ, ստույգ ասել, թե քանի՞ բաժին, քանի՞ աշխատակից է ունեցել պարբերականը: Տվյալ դեպքում գուցե և դա այնքան էլ մեծ կարևորություն չի ներկայացնում:

«Գավառ» բաժնի նյութերը պատմել են Ախալքալաքի գավառի աշխատավորական զանգվածների՝ գյուղացիների և քաղաքի արհեստավորների ամեն տեսակ հոգսերի, տառապանքների ու ցավերի մասին: Թերթը մեկնաբանման լայն ասպեկտներով է լուսաբանել գավառի առօրյան:

«Բանասիրական» բաժնի համանուն խորագրի տակ տպագրվել են գրական-տեսական հոդվածներ, գեղարվեստական չափածո և արձակ ստեղծագործություններ, պատմական զրույցներ, առանձին հեղինակների մասին ուսումնասիրություններ, ֆելիետոններ, ազգագրական արժեք ներկայացնող նյութեր և այլն:

Հարուստ է նաև «Լուրերի բաժնի» նյութերի աշխարհագրությունը: Այդ բաժնի նյութերը տպագրվել են նաև «Վերջին լուրեր», «Խառը լուրեր» և «Վերջին տեղեկություններ» ընդհանուր խորագրերի տակ:

«Նամակների բաժնում» նյութեր են ստացվել թերթի հարյուրավոր ընթերցողներից, հիմնականում՝ արհեստավորներից ու գյուղացիներից: Այս բաժնում հանդիպում ենք բազմաթիվ բանավիճային նյութերի, որոնց զգալի մասը վերաբերում է դաստիարակչական հարցերին:

## ՍՈՑԻԱԼ – ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՅՅԵՐԸ «ՋԱՎԱԽՔԻՄ»

Դարասկզբին՝ 1910-15 թվականներին Ախալքալաքը, որի ազգաբնակչությունը հասնում էր 80.000-ի, Վրաստանի ամենահետամնաց և անուշադրության մատնված գավառներից մեկն էր, համատարած խավարի և անգրագիտության մի երկիր: Պատմական աղբյուրների, փաստերի և ավագ սերնդին պատկանող տեղացիների վկայությամբ սոցիալական աննկարագրելի ու ծանր վիճակի մեջ էին գտնվում գավառի աշխատավորական զանգվածները:

Իր գոյության չորս տարիների ընթացքում «Ջավախք» պարբերականը փաստորեն ծառայում է որպես այդ զանգվածների շահերի հավատարիմ պաշտպան ու յուրատեսակ խորհրդատու: Բազմիցս անդրադառնալով գավառի սոցիալ-տնտեսական-հարցերին, պարբերականը այնպիսի համարձակ պրոբլեմներ է առաջ քաշում՝ ի շահ աշխատավորների, որ արդեն 1915 թվականի սկզբին յոթ-ութ ամսով, ժամանակավորապես փակվում է: Թերթի հրատարակությունը շարունակելու գործին, ի դեպ, ոչ պակաս չափով բացասաբար են անդրադառնում թղթի և տպագրության հետ կապված այլ նյութերի պակասը: «Ջավախքի» խմբագրությունը շատ հաճախ գործում էր աշխատակիցների (հիմնականում՝ խմբագիր-հրատարակչի) «պարտքի տոկոսները մեծացնելով»...

Վերահրատարակված «Ջավախքի» 1915 թվականի դեկտեմբերի 27-ի համարում որպես առաջնորդող տպագրված հոդվածում կարդում ենք.

«Առաջ «Ջավախքի» տարեկան վճարն էր երկու ռուբլի, այժմ դարձրեցինք երեք ռուբլի, որովհետև թե՛ թուղթը և թե՛ տպագրությունը եղել է եռակի, այսինքն 200%-ով ավելացել է, իսկ մենք միայն ավելացրինք 50%, այն հույսով, որ ծախսի մի մասը կծածկվի և միայն մի քանի հարյուր ռուբլի բացով կփակենք տարին»:

«Առհասարակ,- կարդում ենք նույն հոդվածում,- գավառական հասարակական գործիչներս պահանջկոտ չենք, ձրի կաշխատենք և մեր միակ ցանկությունն է, որ քիչ վնաս ունենանք: ... Կնովենք սոցիալական դեմ, կաշխատենք գյուղացոց մեջ տարածել գյուղատնտեսական տարրական գիտելիքներ, քաղաքացոց կծանոթացնենք նոր տեխնիկական կատարելությունների հետ, հասարակության մեջ կարծաթծենք ռամկավարության սկզբունքները և կաշխատենք արմատախիլ անել ամեն մի բացասական սովորություն. այս է մեր կոչումը, այս կլինի մեր ձգտումը»:

Գավառական մամուլի գործչի, նրա ձգտումների, գործերի և հոգսերի մասին եղած յուրատեսակ «խոստովանության» արտահայտություն է սա՝ տևական դադարից հետո իր հրատարակություն-

նը շարունակող և արդեն մի տեսակ «զգուշավոր» պարբերականի համար:

Օրեցօր գնալով ավելի է վատթարանում գավառի աշխատավոր զանգվածների սոցիալական վիճակը: Նրանք մերթընդներթ ճիգեր են գործադրում բռնակալների, իրենց քրտինքով հղփացած վաշխառուների, կեղեքիչների, հողատերերի դեմ: Գավառի զանազան վայրերում 1910-15 թվականներին բռնկվում են բազմաթիվ սոցիալական շարժումներ, որոնք դեռևս անկազմակերպ էին և բավական հեշտ էր ճնշել, դադարեցնել դրանք:

Թերթելով վիրահայ պարբերականների՝ 10-ական թվականների էջերը, բավական հարուստ պատկերացում կարելի է կազմել կրոնա-սոցիալական այն բախումների մասին, որոնք տեղի էին ունենում Ախալքալաքի գավառում: Այդ բախումներին շատ հաճախ հարում էին նաև մանր առևտրականներն ու չքավոր գյուղացիները, շինականները, կյուղական քահանաները: Աշխատավոր զանգվածների կողմից կեղեքողների դեմ ծավալվող շարժման առանձնապես լայն թափ է հաղորդվում գավառի վարչական կենտրոնում՝ արիեստավորական Ախալքալաքում: Սակայն այդ շարժումը նկատելի արծագանք չի գտնում հեռու գյուղական վայրերում: Գավառի ազգաբնակչության հիշողության մեջ դեռ թարմ էր ընդամենը մեկուկես տասնամյակ առաջ (1895 թ.) գավառի կյանքում խոշոր նշանակություն ունեցող աշխատավոր գյուղացիության հայտնի շարժումը՝ ընդդեմ վաշխառուների, որը ճնշվել էր գազանաբար և մարդկային մեծ զոհերի տեղիք տվել: Այդ և հետագա տարերային բոլոր շարժումները աշխատավորությանը համակած նոր գաղափարների ու նոր տրամադրությունների մասին էին վկայում:

Նորի, առաջավորի արմատավորումն ու զարգացման օրինաչափությունը իրենց արտացոլումն են գտնում «Ջավախքում», որը 1914 թվականից սկսած, իր էջերում առավել մեծ տեղ է հատկացնում աշխատավոր գյուղացիությանն ու արիեստավորությանը հետաքրքրող բազմաթիվ հարցերին: Պատկերավոր ասած՝ պարբերականը դառնում է նրանց լավ ու վատ օրերի վկան, նրանց վշտերի և ուրախությունների արտահայտիչը, մասնակիցն ու խորհրդատուն: Եվ պատահական չէ, որ թերթի համարները այդքան հարուստ են աշխատավորների նամակներով և նրանց սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանը նվիրված հրապարակախոսական հոդվածներով: Թերթը հաճախ է փորձում աշխատավորների սոցիալ-տնտեսական վիճակը գործնականում բարելավելու մասին համարձակ հարցեր բարձրացնել, բայց, բնականաբար, հաճախ էլ բավարարվում է միայն «ողբով ու լացով»:

«Եվ դու, հանդու՛զն «Ջավախք», - կարդում ենք պարբերականի 1914 թվականի համարներից մեկում,- շատ դժվարություններ պետք է կրես, լաս, ողբաս, ժամանակ առ ժամանակ էլ խնդաս, բայց և այնպես հույսդ չպետք է կտրես...Մի կողմ բոլոր խոչընդոտները, մի կողմ շրջապատի հեզմանքը, վառի՛ր ճրագդ, թեև՝ թույլ, բայց խավար անդաստանում մի կայծն էլ մեծ բարիք է խեղճ ու կրակ ժողովրդի համար...»:

Հիմնականում ահա այսպիսի պայմաններում, բազմիցս զգուշանալով խստով գրաքննությունից, «Ջավախք» գրական-հասարակական պարբերականը շարունակում է պահպանել իր գոյությունը՝ դեպի իրեն դարձնելով աշխատավոր զանգվածների ուշադրությունը...

### **ՄՇԱԿՈՒՅԹԸ ԵՎ ՊԱՐԲԵՐԱԿԱՆԸ**

Գոյության չորս տարիների ընթացքում «Ջավախքն» իր էջերում հարուստ տեղ է հատկացրել մշակույթի հարցերին, ցուցաբերելով չափազանց ակտիվ վերաբերմունք ժամանակի գրական կյանքի, արվեստի ամենատարբեր բնագավառների նորույթների, դասական հեղինակների ստեղծագործությունների, ժողովուրդների բարեկամության գաղափարների պրոպագանդման և այլ ուշագրավ հարցերի նկատմամբ:

Շատ սերտ են եղել պարբերականի խմբագիր և հրատարակիչ Վ. Շահպարոնյանի կապերը ժամանակի հայ գրողների, մասնավորապես՝ Հովհ. Թումանյանի, Ավետիք Իսահակյանի, Ալեքսանդր Շիրվանզադեի և Ղազարոս Աղայանի հետ: Ախալքալաքի գավառագիտական թանգարանում պահվում են Վ. Շահպարոնյանի՝ Ավ. Իսահակյանի և հովհ. Թումանյանի անձնական մտերմությանը վերաբերող նյութեր: Այստեղ է պահվում Ավ. Իսահակյանի՝ Վ. Շահպարոնյանին ուղղված նամակներից մեկը, որը, դժբախտաբար, անընթեռնելի է. կարդացվում են միայն ստորագրությունը՝ Ավ. Իսահակյան և առանձին բառեր: Նամակը երկարաշունչ է, շատ տողեր ջնջված են: Ենթադրվում է, որ այն զուտ անձնական բնույթ չունի. նամակում կարելի է հանդիպել հուսադրող բառերի:

Թերթում առավել հաճախ հանդիպող մշտական խորագիրը կրում է «Քանասիրական» վերնագիրը, որի տակ տպագրվել են գրական ամենատարբեր ժանրերի պատկանող չափածո և արձակ ստեղծագործություններ, գրականագիտական բավական մեծածավալ հոդվածներ, ուսումնասիրություններ:

Գավառի ազգաբնակչության հետամնացությունը թոթափելու, նրանց կուլտուրան, ընդհանուր կենսամակարդակը բարձրացնելու գործում խոշոր դեր է կատարել թատրոնը: Գավառում բազմաթիվ

հայկական թատերախմբեր են գործել հիմնականում այդ տարիներին: Ջավախքի աշխատավորները միշտ էլ հսկայական հետաքրքրություն են ցուցաբերել թատերական արվեստի հանդեպ, հարգել բեմական խոսքը և այդ հարգանքը փոխանցել սերնդե սերունդ:

Եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ դարասկզբին Վրաստանի ամենահետամնաց գավառներից մեկը, ինչպիսին Ախալքալաքն էր, կտրված էր ժամանակի հայ մշակույթի կենտրոններից, կուլտուրական գրեթե որևէ առնչություն չուներ Թիֆլիսի հետ, ներկայացումների համար չեն եղել շենքեր, թատերարվեստի զարգացմանը խոչընդոտել են ամենատարբեր ու զծուծ տնտեսական հաշիվները, ապա ինքնըստինքյան պարզ կդառնա, թե այստեղ ինչի՞ արժեք ուներ թատրոնի գոյությունը... Այնուհանդերձ, դարասկզբին Ախալքալաքում գործել են թատերախմբեր:

Գավառի մարդկանց կողմից, ինչպես վկայում են «Ջավախքի» առանձին համարներ, առանձնապես ջերմ ընդունելություն են արժանացել «հանգստի համար մատչելի» և պարբերաբար ներկայացվող դրամատիկական գործերը: Արդեն 1915-1916 թթ. «Ջավախքի» համարներում հաճախ ենք հանդիպում նյութերի, որոնք պատմում են թատերական աշխույժ կյանքով ապրող արհեստավորական Ախալքալաքի մասին: Ախալքալաքում դարասկզբին դեպքից դեպք հյուրախաղերի եկած հայկական թատերախմբերը, ինչ խոսք, որքան էլ որ ջերմ ընդունելություն գտնեին, դեռևս չէին կարող ժողովրդական լայն զանգվածների մեջ դաստիարակել այն մեծ եռանդն ու նվիրվածությունը, որ անհրաժեշտ էին կանոնավոր թատրոն ստեղծելու համար:

Հարկավոր էր այդ գործը նախաձեռնել տեղում: Եվ, «Ջավախք» պարբերականը, բազմիցս մատնանշելով թատերական արվեստի կարևորությունը, այդ պարտականությունը դնում է տեղի թատերասերների վրա: 1914 թվականին, Ախալքալաքում թատրոնը պատշաճ բարձրության վրա դնելու նպատակով, ախալքալաքցի մի խումբ անձինք (այդ թվում նաև Վ. Շահպարոնյանը) խնդրում են Թիֆլիսի հայոց դրամատիկական ընկերության խորհրդին՝ Ախալքալաքում այդ ընկերության մասնաճյուղ բաց անելու հարցով: Ընկերության խորհուրդը, խնդրատուների դիմումը հարգելով՝ որոշում է մոտ ապագայում ստեղծել Ախալքալաքի մասնաճյուղը և կատարել դրա պաշտոնական բացումը: «Ջավախք» պարբերականը խանդավառությամբ է ողջունում այդ իրադարձությունը և բոլոր թատերասերներին, իր բոլոր ընթերցողներին կոչ անում ցուցաբերել անաչառություն՝ սկսված գործի հիմքը պինդ հողի վրա պահելու համար: Պարբերականը տարբեր առիթներով անդրադառնալով թատրոնի հարցերին, այն միտքն է հայտնում, որ թատրոնը պետք է

ծառայի ժողովրդական լայն զանգվածների շահերին: «Ջավախքը» կոչ է անում թատերախմբերի մեջ ներգրավել հասարակ արհեստավորներին, կանանց: Թերթը ցավով է արձանագրում, որ գավառի շատ գյուղերում դեռևս շատ քիչ բան է արվել, որ հարկավոր է արմատախիլ անել թատրոնի հետ կապված մութ պատկերացումները թե՛ քաղաքում և թե՛ գավառի գյուղերում...

Իր հրատարակության երկրորդ տարվանից՝ 1914 թվականից սկսած, «Ջավախք» պարբերականը ավելի հաճախ է անդրադառնում թատրոնի հարցերին՝ տպագրելով նյութեր «Թատրոն» և «Տեղական կյանք» ընդհանուր խորագրերի տակ: Թերթի 1914 թ. մարտի 2-ի համարից տեղեկանում ենք, որ Կովկասի Յայոց բարեգործական ընկերության (ԿՅԲԸ) Ախալքալաքի մասնաճյուղի նախաձեռնությամբ և զգալի աջակցությամբ տեղի թատերասերները բեմադրել են «Ջավախքի» խմբագիր-հրատարակիչ Վ. Շահպարոնյանի «Միամիտ փեսացու» մեկ գործողությամբ դրաման, որից հետո կատարվել են երգեր, պարեր և արտասանություններ: 1915 թվականին Ախալքալաքում հյուրընկալվել է հայ բեմի ականավոր գործիչներից մեկը՝ ճանաչված ու տաղանդավոր դերասանուհի Հասմիկը: Պարբերականը հիացմունքի տողեր է գրել դերասանուհու զմայլելի խաղի մասին:

Վ. Շահպարոնյանը, որն արդեն դրամատիկական, գեղարվեստական որոշակի արժեք ներկայացնող մի շարք գործերի հեղինակ էր (ի դեպ, 1915-1916 թթ. նրա դրամաները ներկայացվել են ոչ միայն Ախալքալաքում, այլև հարևան գավառներում, Բաքվում, Նախիջևանում և այլուր), դրամատուրգ-դերասանի ճանաչում էր գտել ժամանակի հայ թատերասերների շրջանում: Նա անձնական ծանոթություն է ունեցել հայ բեմի վարպետների հետ: Այսպես, օրինակ, Վ. Շահպարոնյանի անձնական հրավերով 1909 թ. Ախալքալաքում հյուրընկալվել է հանրահայտ դերասանուհի Սիրանուշը և տեղի սիրողական խմբերի հետ անցել գավառի գյուղերը, մասնակցել մի շարք ներկայացումների:

Շատ քիչ բան է հայտնի նաև Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի շրջանավարտ Վ. Շահպարոնյանի և Հովհ. Թումանյանի անձնական մտերմության մասին, այն էլ՝ առաջինի հարազատների միջոցով: Պատմում են, որ Վ. Շահպարոնյանի՝ անմահ լռեցու հետ ունեցած այդ մտերմությունը, ըստ երևույթին, ծնվել է Թբիլիսիում: Հայտնի է միայն, որ 1901 թվականի ամռանը (մեզ այդպես տեղեկացրեց Վ. Շահպարոնյանի որդին) յոթ օր շարունակ Վ. Շահպարոնյանի հյուրն է եղել Հովհ. Թումանյանը, նրանք միասին շրջագայել են Թմուկ բերդի պատմական ավերակները, այցելել Վարձիա բերդաքաղաքը, դիտել Փարվանա լիճը և այլն: Այդ մասին, ցավոք, պար-

բերականի համարներից և ոչ մեկում (որոնք մեզ հաջողվել է գտնել գրադարաններում ու թանգարաններում) չկա որևէ վկայագրություն: Բայց մի համգամանք, որ պարբերականի 1913-14 թթ. համարներում տպագրվել են հայ անվանի գրողների ստեղծագործություններ, խորհելու առիթ է տալիս... «Ջավախքի»՝ այդ տարիներին լույս տեսած համարներում, ամենից շատ հանդիպում ենք նյութերի, որոնք վերաբերում են գյուղագիր Յովհաննես Մալխասյանի գրական վաստակին:

Երևանի՝ նախկինում Ալ. Մյասնիկյանի անունը կրող հանրային պետական գրադարանի նատենագիտական տեղեկությունների համաձայն, պարբերականի 1913, 1914 և 1916 թվականների համարների ստվար մասը պահպանվում է Վենետիկի Մխիթարյան միաբանության գրադարանում, ԽՍՀՄ Լենինի անվան պետական գրադարանում (Մոսկվա), Սանկտ-Պետերբուրգի Սալտիկով-Շչեդրինի անվան հանրային պետական գրադարանում: Իսկ այն համարները, որոնք պահպանվել են Վ. Շահպարտյանի հարազատների, առանձին անձանց մոտ, հանձնվել են Ախալքալաքի գավառագիտական թանգարանին ու պահպանվում են Երևանի հանրային գրադարանում, զրեթե ամբողջությամբ տրամադրվել են մեզ՝ Երևանի պետհամալսարանի ժուռնալիստիկայի բաժնում դիպլոմային աշխատանք («Ջավախք» պարբերականը) պաշտպանելիս: Ենթադրվում է, որ «Ջավախքի» վերոհիշյալ տարիների այն համարները, որոնցում տպագրվել են Յովհ. Թումանյանի, Ղ. Աղայանի և Ավ. Իսահակյանի ստեղծագործություններից, ինչ-ինչ հանգամանքներում յուրացվել են առանձին անձանց կողմից: Նախապես պետք է շնորհակալություն հայտնել բոլոր նրանց, ովքեր պատրաստ են դրանք վերադարձնել Երևանի Ալ. Մյասնիկյանի անվան հանրային գրադարան կամ Ախալքալաքի գավառագիտական թանգարանին:

...Թիֆլիսում պահվող «Ջավախքի» 1913 թ. ապրիլի 28-ի համարում կան մի շարք ուշագրավ նյութեր, որոնցում մի տեսակ ընդգծվում է թերթի ակտիվ դիրքորոշումը գրական և մշակութային կյանքի նկատմամբ: Թերթի այդ համարի հրատարակության օրը՝ 1913 թ. ապրիլի 28-ին, Բաքվում, տոնվել է հայ անվանի բանաստեղծ Յովհաննես Յովհաննիսյանի գրական և մանկավարժական գործունեության 30-ամյակը: Համարում Յովհ. Յովհաննիսյանին վերաբերող նյութերը տպագրվել են հենց այս՝ բանաստեղծի հոբելյանի, առթիվ:

Պարբերականը շեշտում է, որ «...նման տոներն ու ցույցերը պետք է լինեն համաժողովրդական»:

Պարբերականի՝ գրական և մշակութային կյանքն արտացոլող տասնյակ համարներում, հարյուրավոր էջերում տեղացի հեղինակ-

ներից հիմնականում առանձնանում են Վ. Շահպարտոնյանի գրական գործերը՝ «Շահ-Պարոն», «Աթոս», «Էլի էն», «Վ. Շ.» ստորագրություններով: Մնացած հեղինակներն այսօր գրականության և գրասերների շրջանում հայտնի դեմքեր չեն: Ուշագրավ են հատկապես այդ հեղինակներից մեկի՝ Տիգրան Տերունու շուրջ երկու տասնյակ բանաստեղծությունները, որոնք տպագրվել են թերթում և տողորված են հայրենիքի նկատմամբ անկաշառ սիրո զգացումով: Այսպես, օրինակ, «Ջավախքի» 1916 թ. մարտի 12-ի համարում տպագրված «Հայոց բլբուլին» բանաստեղծությունը մի հայրենասիրական կոչ է, դիմում՝ ուղղված հայ ռազմիկներին, ազատաբաղձ մարդկանց, որոնց համար «լուսավոր ավեր» դուրս գալու մաքառումներին, հեղինակի համոզմամբ, պետք է հաղորդել «նոր ուժ ու ծավալ»: Դիմելով հայոց բլբուլին, բանաստեղծը հարց է տալիս, թե ինչո՞ւ է լռել նրա երգի ձայնը: Մի՞թե բլբուլը էլ չի երգելու:

*Թող վերջին անգամ  
Հրացանը ձեռիս  
Կռվեմ ու մեռնեմ,  
Ավանդեմ հոգիս...*

Ձեռքի ուժին դիմելու հրավերով է ավարտվում բանաստեղծությունը:

### **ՀԱՅ ԵՎ ՎՐԱՅ ԺՈՂՈՎՈՐԴՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՍՈՒԹՅՈՒՆԸ «ՋԱՎԱԽՔԻ» ԷՋԵՐՈՒՄ**

Ամենաընդգծված թեման, թերևս, սա է պարբերականի էջերում: Ըստ երևույթին այդպես էլ պետք է լիներ, քանի որ այս երկու ժողովուրդների բարեկամությունը, հիրավի, գալիս է դարերի խորքից...

...Գավառում միմյանց հետ կողք-կողքի ապրել են երկու բարեկամ ժողովուրդների ներկայացուցիչները՝ հայ ու վրացի աշխատավորները, ապրել միևնույն հոգսերով ու ուրախություններով, միևնույն առօրյայով ու միևնույն ձգտումներով: Այդ բարեկամությունն էլ այժմ Ջավախքում շարունակում է սերնդից սերունդ փոխանցվել՝ որպես նախնիների թողած անեղծ ու նվիրական ժառանգություն:

Թերթի 1914 թ. փետրվարի 2-ի համարը բացվում է Մ. Պեշիկ-բաշյանի «Եղբայր ենք մեք» հայրենասիրական բանաստեղծության վերնագիրն հիշեցնող «Երբայր ենք մենք» առաջնորդող հոդվածով:

Հոդվածի սկզբում ասես պեղման են ենթարկվել հայ և վրացի ժողովուրդների բարեկամության ակունքները, ի մի բերվել «ճիշտն

ու սխալը»: «Իսկ եթե,- կարդում ենք հողվածում,- վրացիներից մեկը ավերել կամ քարուքանդ է արել հայ գյուղերը, մի՞թե մենք պետք է ատենք վրացի ժողովուրդը. ո՛չ, մեր վերաբերմունքը այդպիսի դեպքերից չի փոխվել դեպի մեր եղբայրները և ոչ էլ սրանից հետո կփոխվի»: Համառոտակի բացահայտելով երկու ժողովուրդների միջև ծագած վեճերն ու հակադրությունները, հողվածում կարմիր թելի պես անցնում է ժողովուրդների բարեկամության գաղափարը. «...Մենք միասին ենք լացել, միասին ուրախացել. մեր որդիքը միասին են նահատակվել: Դարեր շարունակ արյունաներկ Քուռն ու Արաքսը իրար գրկելով, իրենց ցավը իրար պատմելով՝ խուլ ու մունջ հոսել են և մեր կսկիծն ու մորմոքը տարել ու ասնհատակ Կասայան ծովն են թափել...» Երկու ժողովուրդներին միմյանց դեմ զրգռելը որակում է որպես եղեռնագործություն ու սրբապղծություն, ապա շարունակում. «Հայ և վրացի ժողովուրդ, մեր ցավերը, մեր վերքերը ընդհանուր են. ոչ վրացին իր ազնվականներով և ոչ էլ հայն իր հարուստներով ոգևորվի, այլ մտածի մեր հայրենիքը, մեր արտն ու արորը կանոնավոր մշակելու և մեր ժողովուրդները իրենց կոչման վրա կանգնեցնելու... Եղբայր ենք մենք, մեր շահերը ընդհանուր են: Իսկ դո՛ւք, սև ասպետներ, ինչքան ուզում եք հարայ կանչեք, ձեր բաժինը մեր արհամարհանքն է»:

Եզակի չեն այն հողվածները, որոնցում թերթը հանդես է գալիս որպես երկու ժողովուրդների բարեկամության գաղափարների պրոպագանդիստ: Կարծում ենք կարիք չկա դրանց անդրադառնալ, քանի որ ժողովուրդների բարեկամության մասին արտահայտվելիս պարբերականը բազմիցս է շեշտում, որ հարկավոր է ամրապնդել այդ բարեկամությունը: Թերթի ու նրա խմբագիր-հրատարակչի համոզմամբ, զավառը կարող է կանգնել կուլտուրական որոշակի մակարդակի վրա, եթե կրթության, արհեստների զարգացմանը և այլնին զուգընթաց զավառում էլ ավելի զարգանա ու ամրապնդվի հայ և վրացի ժողովուրդների բարեկամությունը, հայ և վրացի աշխատավորների միջև վերջնականապես հաստատվի բարեկամության անխախտ դաշինք:

**ՎՈՒՄՆՈՒՐ - ԼՈՒՍԱՎՈՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ**  
**ԵՎ ԹԵՐԹԻ ՄՏԱՀՈԳՈՒԹՅՈՒՆԸ**  
**ԴՊՐՈՑԱԿԱՆ-ԿՐԹԱԿԱՆ ՀՈՐՑԵՐԸ**

Վիճակագրական տվյալների համաձայն, Վրաստանի հայաշատ Ախալքալաքի գավառը 1916 թ. ուներ ավելի քան 80.000 բնակչություն, որի գերակշռող մասը հայեր էին, իսկ 18 տոկոսը վրացիներ, ռուսներ, թուրքեր և այլն: Այն 1915-19 թթ. տնտեսական խոր ճգնաժամ էր ապրում և կամաց-կամաց քայքայվում: Գյուղա-

ցիությունը, որը կազմում էր գավառի ազգաբնակչության 90 տոկոսը, մի հսկա բանակ, սակավահողության, հողերի անբերրիության, սոցիալական ծանր դրության հետևանքով հիմնականում ստիպված էր թողնել հայրենի շենքը, հեռանալ այստեղից՝ Թիֆլիսում և այլուր աշխատանք գտնելու հույսով: «Թշվառ է մեր գյուղացին,- գրում է «Ջավախքը»,- ամուլ է մեր ծննդավայրը, խոպան ու ժայռոտ են մեր լեռն ու դաշտը... Բայց ի՞նչ ենք անում մենք՝ գիտակից կոչվածներս, մենք՝ գիտակից հարուստներս, մենք՝ պոռոտախոս, մեզ փիլիսոփա-գիտնական կարծող փոքրիկ մեծություններս, մեր եսին, մեր կրթին կուլ գնացած սնափառներս: Ոչինչ ու ոչինչ... էլ ի՞նչ համամարդկային գաղափար, բարձր կամ վսեմ մտքեր, սկզբունք, անուրջներ ու իղծեր. այդ բոլորը կեղծ են, միայն խաբելու համար»:

Գյուղացու սոցիալական ծանր վիճակի նկատմամբ քար անտարբերությունն արձանագրելով՝ թերթը գավառական գործչի առջև դնում է օրվա հրատապ խնդիրներ՝ կրթել գյուղացուն, նրա մեջ դաստիարակել համախմբվածություն, անհաշտվողականություն տվյալ վիճակի հետ, ինքնագիտակցության բերելու միջոցով սթափեցնել նրան:

Ահա այսպիսի համարձակ խնդիրներ առաջ քաշելով՝ պարբերականը փաստորեն վտնագի տակ է դնում իր հետագա հրատարակության գործը 1916 թվականի սկզբին: Համախմբվածության գաղափարներ է փորձում տարածել նաև քաղաքի արհեստավորների շրջանում, հաճախ՝ ուղղակի, հաճախ՝ անուղղակի, երկյուղելով Անդրկովկասյան խստիվ գրաքննչությունից: Պարբերականի և նրա խմբագիր-հրատարակիչ Վ. Շահպարոնյանի հաստատ համոզմամբ, գյուղացու ու արհեստավորի սոցիալական դրությունը կարող էր մեծապես փոխվել՝ նրանց կրթելու, նրանց շրջանում գիր ու գրականություն տարածելու շնորհիվ նաև: Այդ համոզումն արտահայտված է պարբերականի էջերում և՛ 1916 թ. սկզբին, և՛ դրանից վաղ: Այսպես, օրինակ, «Ջավախքի» 1914 թ. հունվարի 5-ի համարում տպագրված «Մեր կոչումը» հոդվածում, որի տակ ստորագրված է՝ Վ. Շ., այն միտքն է արտահայտված, որ գավառական գործիչները ունեն որոշակի, անփոխարինելի անելիք՝ արհեստավորին և գյուղացուն սոցիալական ծանր դրությունից դուրս բերելու համար: Իսկ ի՞նչ միջոցով: Հողվածում կարդում ենք. «Որքան մեր ուժը պատե, պիտի կռվել մեր ամենամեծ թշնամու, չարիքի՝ համատարած խավարի, տգիտության դեմ...»:

«Ինչ է եղել մեր կոչումը,- կարդում ենք այդ նույն հոդվածում,- միայն ու միայն ֆրագներով, չհասկացված ու չմարսված բարձր մտքերով փչել տգետ ամբոխի աչքին և վաստակել թոշնած դափնի-

ներ... Նյութապես խեղճ է մեր դպրոցը, խեղճ է բարեգործական ընկերությունը, հազիվհազ շինվում է մեր փառահեղ դպրոցը, խեղճ է մեր ամեն մի հասարակական գործ, իսկ մենք զբաղված ենք միայն ու միայն մեր առօրյա տնտեսական պահանջներով...»:

Պարբերականն իրավամբ պատշաճ տեղ է հատկացնում իր էջերում դպրոցական, կուլտուր-լուսավորական, կրթական հարցերին, տպագիր խոսքի միջոցով նպաստում գավառում լուսավորության տարածմանն ու հաստատմանը:

Ընթերցողներին ծանոթացնելով գավառի դպրոցական կյանքին՝ թերթը պատմում է ծխական դպրոցների հոգաբարձուների, ուսուցիչների անտարբերության ու անպատասխանատվության մասին, եղած դպրոցների չիրականացրած խնդիրների մասին: Ուշագրավ է հատկապես թերթի 1914 թվականի մարտի 23-ի համարում որպես առաջնորդող տպագրված «Թշվառ գավառ» հոդվածը, որը հստակ պատկերացում է տալիս 10-ական թվականների Ախալքալաքի հանրակրթական ցածր մակարդակի և դպրոցի՝ գավառի կյանքում ունեցած դերի ու նշանակության մասին: Այն օրերի մասին, երբ գավառի շատ գյուղերում իշխում էին համատարած խավարն ու տգիտությունը, երբ դպրոցն, հիրավի, պետք է ծառայեր որպես փարոս հազարավոր մարդկանց համար. «Մեզ պետք է դպրոց՝ անպաճույճ, պարզ, տարրական, որ մեր հոգին պայծառացնե, սովորեցնի այբուբենը, որ կարողանանք որոշել չարը բարուց, լույսը խավարից...»

- Դպրոց,- այս է աղաղակում թշվառ ժողովուրդը...

- Ուսո՞ւմ,- այս է ոռնում Ջավախքի դառնաշունչ քամին...

- Լո՞ւյս,- այս է ծվում կեղտի մեջ կորած մեր անմեղ մանկիկը»:

...1915-1916 թթ. Ախալքալաքում ապաստան են գտել շուրջ 130 գաղթական հայ երեխաներ, որոնց համար այստեղ գործող հայոց ծխական դպրոցի հոգաբարձությունը բացել է երեք բաժանմունքներ, հույս ունենալով, որ Թիֆլիսի հայոց Բարեգործական ընկերությունը ընդառաջ կգնա իր նախաձեռնությանը: «Իսկ այդ ընկերությունը,- տեղեկացնում է «Ջավախքը»,- չզլացավ Ախալքալաքում ապաստան գտած հայ երեխաներին իր օգնությունը ցույց տալ: Երեխաներին տրվում են գրեմական պիտույքներ, զխարկ, կոշիկներ և թաշկինակներ...»: Բայց, այնուամենայնիվ, Թիֆլիսի Բարեգործական ընկերությունից սպասվող նվիրատվությունները կարճ ժամանակ անց ուշանում են: «Ո՞վ իրավունք տվեց կենտրոնի ընկերություններին,- ցավով արձանագրում է «Ջավախքը»,- խտրականություն դնել կենտրոնի (Թիֆլիսի) և գավառի որբերի միջև...»:

«Ջավախքի» 1916 թ. դեկտեմբերի 27-ի համարից տեղեկանում ենք (ի դեպ, թերթը հաճախ է իր համարներում զետեղել հանգանակությունների, գանազան նվիրատվությունների ցուցակներ և այլ նյութեր), որ թերթի խմբագիր-հրատարակիչ Վ. Շահպարոնյանը իր բոլոր գրվածքների համար հասանելիք գումարները նվիրել է հայոց գաղթական երեխաներին:

Ախալցխայի ս. Փրկիչ եկեղեցին, որը խոշոր կալվածքներ է ունեցել Ախալքալաքի գյուղերում և ի հաշիվ դրանց Ախալքալաքի հայոց դպրոցին դարասկզբին հատկացրել է տարեկան 10.000 ռուբլու նպաստ, 10-ական թվականներին հրաժարվում է այդ նպաստը վճարելուց: Այս հանգամանքը տեղիք է տալիս երկու հարևան գավառների՝ Ախալքալաքի և Ախալցխայի այսպես կոչված... «վեճին»:

«Ախալքալաքի և Ախալցխայի վեճը» վերտառությամբ ընդարձակ բանավիճային հոդված է տպագրել «Մշակ» թերթը (Թիֆլիս) 1910 թ. մայիսի 14-ի 102-րդ համարում՝ էլի-էն ստորագրությամբ, որն, անտարակույս, «Ջավախքի» խմբագիր-հրատարակիչ Վ. Շահպարոնյանինն է:

Զնայած նման պայմաններին, դպրոցը շարունակում է մի կերպ պահվել: «Ջավախքի» 1915-1916 թթ. շատ համարներում կոչեր հիշեցնող նյութեր են տպագրված՝ հայկական դպրոցներին սպառնացող փակման վտանգը կանխելու և հանգանակությունների միջոցով դրանք պահելու համար:

1916 թվականին լրանում է Ախալքալաքի եկեղեցական-ծխական դպրոցի հիմնադրման 80-ամյակը: Մեծ շուքով նշվում է այդ հոբելյանը: Այդ հիշարժան հոբելյանը շուքով է նշել «Ջավախք» պարբերականը (տես՝ «Ջավախք», 1916 թ., թիվ 4): Հոբելյանական հոդվածներից տեղեկանում ենք, որ 1916 թ. գավառի 60 գյուղերում գործել են 10 խոշոր ծխական դպրոցներ: Իր խոսքն ուղղելով ուսուցիչներին՝ պարբերականը գրում է. «Շարունակեցեք բորբոքել այն հնոցը, ուր պետք է ձուլվեն մեր մատաղ սերունդը, մեր ապագա հասարակության անդամները, պատրաստեցեք ուսման տաճարում այն սիրո կապը, որ պիտի շաղկապի՝ հասարակությանը և ապա մարդկությանը»: Նպատակ ունենալով բարձրացնել ուսուցիչ դերն ու հեղինակությունը դպրոցում՝ պարբերականը մատնանշում է տարբեր առարկաների գծով մասնագետներ պատրաստելու հարցը: Ամենից առաջ Ջավախքի ուսուցիչների պարտքն է համարում աշակերտների մեջ սեր բորբոքել դեպի մայրենի լեզուն ու գրականությունը, դեպի զեղարվեստը, մշակույթը, լեզվի և գրականության կատարյալ իմացությունը համարելով ժողովրդի առաջադիմության կարևոր նախապայման:

Պարբերականը դպրոցական հարցերին մոտենում է համակողմանիորեն, պայքարում աշխարհիկ կրթության ամրապնդման ու գիտության առաջընթացի համար: Իսկ աշխարհիկ կրթության զարգացմանը խոչընդոտում էր, օրինակ, այն հանգամանքը, որ դպրոցում պատրաստվում էին եկեղեցու սպասավորներ:

Պարբերականը հարց է դնում զավառում ստեղծել երկդասյան նոր դպրոցներ, որոնցում մասսայաբար ընդգրկվեն բոլոր երեխաները (տե՛ս «Ջավախք», 1916 թ., 30 հունվարի):

Թերթն առաջնահերթ խնդիր է համարում այն, որ դպրոցը կանգնի իր պատշաճ բարձրության վրա, որ հարկավոր է պայքարել հին դոգմաներին կառչած մնալու, ուսուցումը կյանքից կտրված տանելու և դրան ոչ ստեղծագործաբար մոտենալու միտումների դեմ: Եվ, անշուշտ, պարբերականին հաջողվել է այդ իմաստով ահել որոշակի գործ, որին հարկ չկա այլևս անդրադառնալ:

### **ԲԱԶՄԱԺԱՆՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԼԵԶՎԱ - ՈՃԱԿԱՆ ԱՌԱՆՋՆԱՅԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

«Ջավախք» գրական-հասարակական երկշաբաթաթերթի նյութերը, հիրավի, կարդացվում են բավական հետաքրքրությամբ, բազմաժանր են ու բովանդակալից: Ժուռնալիստական այն հմարանքները, որոնք օգտագործվել են խմբագիր-հրատարակչի և թերթի աշխատակիցների կողմից, յուրահատուկ գրավչություն են հաղորդել պարբերականին: Թերթում տպագրվել են գրական, գրական-երգիծական ստեղծագործություններ, հոդվածներ, թղթակցություններ, ինֆորմացիաներ, խրոնիկաներ և այլն:

Գեղարվեստական որոշակի արժեք են ներկայացնում առանձնապես պարբերականի էջերում զետեղված ֆելիետոնները, որոնք գրված են և՛ գրական լեզվով, և տեղի բարբառով (ընթերցողների համար ասելիքը մատչելի դարձնելու նպատակով):

Ըստ ավանդույթի, «Ջավախքի» խմբագրությունը ամեն տարվա զատկի տոնին բաշխել է այսպես կոչված զատկական «նվերներ»: Ահա, օրինակ, այդ «նվերներից» մի քանիսը, որ «Ջավախքը» բաշխել է տոներից մեկի ժամանակ.

*Ախալքալաքի*՝ Լավ եղանակ, երկաթուղի, ջուր և վարիչների երազածը՝ շինել բաղնիքը:

*Քաղաքային լիագորին*՝ մի օդանավ՝ քաղաքային անբավ-անծայր հողերը դիտելու և 100 փթանոց կաթսա՝ եկամուտից մնացած օգուտները պահելու համար:

*Ծխական դպրոցի հոսքարծրությանը*՝ հեռու վտանգավոր այլաբերություններից և փողոցից բերված հայիոյանքներից:

«Ջավախքին»-ը ցախավելին էլ այնքան ճկունություն, որ մեր հիմնարկությունների, մեզ շրջապատող կեղտն ու զիբիլը, որքան հնարավոր է, ավել ու թափե աղբանոցները...»:

Ժամրային տեսակետից, ինչ խոսք, որ պարբերականը աղքատ է, ավելին, ունի ուսուցողական որոշակի արժեք Ախալքալաքի այժմյան լրագրողների համար:

Հարուստ են նաև «Ջավախք» պարբերականի լեզուն և ոճը: Եվ «Ջավախքի» նյութերի լեզվաոճական առանձնահատկությունների մասին խոսելիս առաջին հերթին արժե մշել Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի շրջանավարտ, թերթի խմբագիր-հրատարակիչ Վ. Շահպարոնյանի լեզվական բարձր կուլտուրայի մասին: Ի դեպ, Վ. Շահպարոնյանի թե լրագրային և թե դրամատիկական գործերը գրված են գրական մաքուր հայերենով և անչափ պատկերավոր լեզվով: Նրա լեզվի պատկերավորության և արտահայտչական միջոցների առատության մասին է վկայում այն, որ հեղինակի թե ձեռագիր և թե տպագիր խոսքը լակոնիկ է, սեղմ, հակիրճ և համեմված թևավոր արտահայտություններով, տեղին օգտագործված մակդիրներով ու համեմատություններով:

Թերթի շատ համարներում կարելի է հանդիպել ժողովրդական պատկերավոր մտածողությամբ հագեցած երգիծական ստեղծագործությունների:

Թող չստացվի այն տպավորությունը, որ «Ջավախքը» փայլուն է իր լեզվի և ոճի կատարելությամբ: Ընդհակառակը. թերթում գետեղված առանձին նյութեր, զգացվում է, որ անհարթ լեզվով են շարադրված: Քիչ չեն նաև բառային ավելորդ ու անտեղի կրկնությունները, վրիպակները և այլն: Երկար չքննելով թերթի լեզուն և ոճը, ավելացնենք միայն, որ «Ջավախքն» իր նյութերի լեզվի հղկվածության տեսակետից շատ քիչ բանով է զիջում ժամանակի վիրահայ մնացած պարբերականներին: Դրանում կարելի է համոզվել՝ թերթի լեզուն և ոճը առանձին, մի այլ առիթով քննելիս:

## ՎԵՐՋԱԲԱՆ

Լինելով նախախորհրդային Վրաստանի Ախալքալաքի գավառի տպագիր անդրանիկ հայերեն թերթը, «Ջավախք» գրական-հասարակական պարբերականը խոշոր ավանդ է ներդրել այդ գավառում լուսավորության տարածման, աշխատավորական լայն զանգվածների մեջ վաշխառուների, կեղեքիչների դեմ պայքարի գիտակցությունն արթնացնելու և դաստիարակելու, նորի, առաջավորի, գալիքի նկատմամբ աշխատավորների հավատն ամրապնդելու գործում: Պարբերականը նպատակ է հետապնդել՝ պայքարել ոչ միայն հնի մնացուկների դեմ, այլև տպագիր խոսքի ներգործությամբ

յամբ դառնալ գավառի աշխատավորական զանգվածների և ազատության գաղափարների մասսայականացնող ու տարածող: Թերթի հիմնական սկզբունքներից են՝ որոշակի բարձր գաղափարայնությունը, ճշմարտացիությունը, ժողովրդայնությունը, մասսայականությունը, քննադատությունը և ինքնաքննադատությունը: Գիշտ է, «Ջավախքի» գոյության ժամանակ չիրականացան Ախալքալաքի աշխատավորների երազանքները ազատության, երջանիկ ապագայի մասին, բայց թերթը փաստորեն հող նախապատրաստեց նրանց ազատության ճանապարհ դուրս բերելու համար:

Հրատարակության իր չորս տարիների ընթացքում՝ 1913 թվականից մինչև 1916 թ. սկիզբը, անընդհատ գտնվելով Կովկասյան գրաքննչական կոմիտեի խստիվ հսկողության տակ, այնուհանդերձ, կարողացավ իր խոսքը հասցնել համատարած խավարի ու անգրագիտության մեջ խարխափող Ախալքալաքի գավառի գյուղացիներին ու արհեստավորներին, դարձավ նրանց խոհերի և առաջավոր գաղափարների դրոշակակիր: Թերթի հրատարակությունը դադարեցվել է տպարանային ծախսերը չփակվելու, պարտքերի մեծացման, և, անշուշտ, իր «հանդուգն» ելույթների հետևանքով, գրաքննության ենթարկվելիս...

Ինչ խոսք, որ «Ջավախք» պարբերականի ուսումնասիրությունը մեր այս ակնարկով չի կարող սահմանափակվել և արժանի է հետազոտության ուսումնասիրության՝ ոչ միայն մամուլի պատմության համար, այլև ազգագրական հետաքրքիր ու թերևս եզակի տվյալներ քաղելու իմաստով: Եվ դա այդպես է, քանի որ «Ջավախք» գրական-հասարակական այս երկշաբաթաթերթն իրավամբ իր պատշաճ տեղն է զբաղեցնում վիրահայ պարբերական մամուլի պատմության մեջ:

## ՋԱՎԱԽՔԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՊԱՐԲԵՐԱԿԱՆԸ\*

*Վահան ՄԱՂԱԼՅԱՆ  
բանասիրական գիտությունների թեկնածու*

Անցյալ դարի վերջերին ու մեր դարասկզբին թե՛ բուն Հայաստանում և թե՛ հարակից գավառներում մեկը մյուսի ետևից սկսում են հիմնադրվել հայերեն պարբերականներ, որոնք դեպի այդ մութ անկյուններն են տանում մտավոր լույսը, դարավոր թմբիրից հանում հայ գյուղացուն ու արհեստավորին, դառնում ճշմարտության և արդարության պատգամաբերներ, բարին ու գեղեցիկը տարածողներ: Դրանք ժողովրդի իմացական ու բարոյական, հոգևոր ու ընկերային, հասարակական ու ազգային կյանքի բնագավառներում լուրջ դեր են կատարել՝ իրենց ուշադրության կենտրոնում պահելով տեղական ազգաբնակչության հոգսերն ու կարիքները, նրա առօրյան: Այդ պարբերականները բարձր լեռների գրկում ծվարած հայաշատ վայրերը կապում են «մեծ աշխարհի» հետ և, նրա հետ հաղորդակցման միջոց լինելուց բացի, առաջադիմական գաղափարներ են տարածում «աշխարհից կտրված» այդ հեռավոր բնակավայրերում:

Դարասկզբին Վրաստանի հայահոծ գավառներում ևս սկսում են հայերեն պարբերականներ հիմնադրվել: 1910-ական թվականներին արդեն թերթեր էին լույս տեսնում Սուխումում, բաթումում, Ախալքալաքում և Ախալցխայում: Այդ պարբերականների հիմնադիրներից ու հրատարակիչներից շատերը ժողովրդին նվիրված, գիտակից ու լայնախոհ մտավորականներ, գրողներ ու լուսավորիչներ են եղել, մարդիկ, ովքեր ջանք ու եռանդ չեն խնայել իրենց տպագրած թերթերը ժամանակի խոսափողը դարձնելու համար: Այդ թերթերի ասպարեզ իջնելու իրողությամբ ոգևորված՝ դրանց հրատարակիչներին ու խմբագիրներին խրախուսելու նպատակով, ահա թե ինչ է գրել հայ առաջադեմ մտավորականության ներկայացուցիչներից մեկը՝ Արշավիր Մելիքյանը. «Մեր գավառական լրագ-

---

\* Հոդվածն արտատպվում է «Հանդես Երևանի համալսարանի» գիտահնչորմացիոն լրատուից (N 1 (87), Երևան, 1997, էջ՝ 81-85):

րերն իրենց պատասխանատու կոչումով մեծ դեր կարող են կատարել մեր գավառական հայ հասարակության մտավոր ու քաղաքական առաջադիմության գործում: Սակայն որքան ծանր է, փշալից լրագրի ուղին, մանավանդ գավառում, ուր ժողովուրդը, դեռևս - խարխափելով մթին խավարում, խորշում է լուսից, որի ճաճանչները սլաքների պես ծակում են նրա տեսողությունը, այնուամենայնիվ, նույնքան հաճելի է, նույնքան գնահատելի թերթի դերը: Ուստի մեր բուռն համակրանքն այն երիտասարդներին, որոնք թև թևի տված ստանձնել են տպագրական խոսքի ժողովրդականացման միսիան՝ որքան հնարավոր է գիտակցություն մտցնել մեր գավառական հայ հասարակության ներքին ու արտաքին կյանքի մեջ» («խոսք» թերթ, Երևան, 1914 թ., թիվ 2):

Նրանցից մեկն էլ առաջադեմ հրապարակախոս, հասարակական-մշակութային գործիչ, գրող ու թատերագիր Վարդան Շահպարոնյանն է, որը, Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում ստանալով հիմնավոր կրթություն, շփվելով ժամանակի մեծանուն գրողների ու մշակութային գործիչների հետ, քաջալերվելով ու խրախուսվելով նրանց կողմից, վերադարձել է հայրենի Ջավախք և լծվել իր տառապյալ հայրենակիցների լուսավորության ու բարօրության գործին: Նրա նախաձեռնությամբ էլ հիմնավորց պատմություն ունեցող Ախալքալաքի գավառում, ուր դեռևս անցյալ դարի վերջերից գոյություն ուներ հայկական տպարան, սկսում է հրատարակվել հայերեն առաջին պարբերականը՝ «Ջավախք» թերթը: Վերջինիս քառամյա գործունեության պատմությանն է նվիրված Հրահատ Սարգսյանի ««Ջավախք» պարբերականը» գիրքը, որը 1996 թ. լույս է ընծայվել Երևանում, «Հայաստան» հրատարակչության կողմից: Հեղինակն իր այդ փոքրածավալ, բայց և բովանդակալից աշխատության մեջ փորձ է անում տալ «Ջավախք» թերթի ստեղծման ու անցած ուղու պատմությունը: Նա հետազոտել է Ախալքալաքի գավառագիտական թանգարանում պահվող «Ջավախքի» եզակի օրինակներն ու խմբագրի անձնական արխիվը: Թերթի առանձին համարներ է հայտնաբերել Երևանի ու Թբիլիսիի պետական գրադարաններում և Վ. Շահպարոնյանի հարազատների մոտ և դրանց ու արխիվային վավերագրերի ուսումնասիրության հիման վրա գրել է իր աշխատանքը:

Գրքի առաջին բաժնում տրված է թերթի հիմնադրման շրջանում Ախալքալաքի գավառի սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական և մշակութային կյանքի ամփոփ պատկերը: Դարասկզբին գավառն ունեցել է 95.000, իսկ նրա կենտրոն Ախալքալաքը՝ շուրջ 5.000 բնակչություն, որի 90 տոկոսը եղել են հայեր: Նրան պատկանող 2739 քառ. կմ. տարածքի վրա եղել է 111 բնա-

կավայր, որոնք կազմել են 10 վիճակ: Գավառը ղեկավարվել է գավառապետի, իսկ վիճակները՝ նրան ենթակա ոստիկանների կողմից: Չնայած գավառի կենտրոն Ախալքալաքում և մի քանի խոշոր բնակավայրերում գործել են եկեղեցական ու ծխական դպրոցներ, թատերական խմբեր և այլն, բայց և այնպես ամենուր տիրել է տգիտությունն ու խավարը: Աշխատավորներն ապրում էին սոցիալ-տնտեսական ծանր պայմաններում: Դժվարին կացության մեջ էին հատկապես արհեստավորները, որովհետև վաղուց արդեն քայքայվել ու լճացել էին համքարային կազմակերպությունները, արհեստավորները չէին կարողանում ապահովել իրենց ընտանիքների ամենատարրական կենսական պահանջները: Գավառի խստաշունչ կլիմայական պայմաններն ու հաճախակի կրկնվող երաշտները մի կողմից, կեղեքիչների կողմից օրեցօր ավելացվող հարկերը մյուս կողմից աշխատավոր գյուղացիությանը դրել էին անել կացության մեջ:

Ահա մի այսպիսի ժամանակաշրջանում է ասպարեզ իջել «Ջավախք» գրական-հասարակական՝ ութ ոչ մեծադիր էջերից բաղկացած շաբաթաթերթը, որի ծնունդը խոշոր իրադարձություն է եղել հետամնաց գավառում: Հսկայական հետաքրքրությամբ է ընդունվել թերթի անդրանիկ համարը, որը լույս է տեսել 1913 թ. հունվարի 12-ին: Այն ձեռքից ձեռք է անցել թե՛ արհեստավորության շրջանում և թե՛ գավառի հեռավոր գյուղերում: «Ջավախքը» մեծ համարում է ունեցել նաև գավառից դուրս. այն տարածվել է Ախալցխայում, Ալեքսանդրապոլում, Թիֆլիսում, Բաքվում, Երևանում և այլուր: Թերթն արծարծել է համատարած խավարի ու տգիտության մեջ խարխափող շինականի ու բանվորի կյանքը, ուղիներ որոնել նրանց այդ վիճակից հանելու համար: Քանի որ դարասկզբին գավառում հազվադեպ էին գրաճանաչ մարդիկ հանդիպում, ուստի որտեղ գտնվել է մի ուսյալ մարդ, արհեստավորներն ու գյուղացիները խմբվել են նրա շուրջը, ստիպել, որ վերջինս թերթն իրենց համար ծայրից ծայր բարձրաձայն կարդա:

Նորաստեղծ պարբեկանը կոչված էր լուրջ վերափոխումներ կատարել գավառի սոցիալ-տնտեսական և հոգևոր ու հասարակական կյանքում: Այդ մասին նրա անդրանիկ համարի առաջնորդողում գրված է. «Ոչ դատարկ սնափառությունը և ոչ թեթևամիտ նմանությունը ուրիշներին ստիպեցին մեզ սկսել այսպիսի մի ծանր և պատասխանատու գործ: Ինքը՝ բարդացած կյանքը ստեղծում է մի պարբերական օրգանի անհրաժեշտությունը, որը մի կողմից ճիշտ կերպով պիտի պարզի մեր գավառի տնտեսական ու կուլտուրական դրությունը, մյուս կողմից ցույց տա այդ դրությունը բարելավե-

լու միջոցները»: Եվ թերթն իր գոյության ողջ ընթացքում ծառայել է այդ նպատակին:

Գրքի երկրորդ բաժինը, որ վերնագրված է «Վարդան Շահպարոնյանը պարբերականի խմբագիր և հրատարակիչ», նվիրված է Ջավախքի նվիրյալ գավակի կյանքի ու գործունեության լուսաբանությանը: Վարդան Գասպարի Շահպարոնյանը ծնվել է 1872 թ. դեկտեմբերի 22-ին, Ախալքալաքում: Նախնական կրթությունն ստացել է տեղի դպրոցում, ապա ուսումը շարունակել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, որն ավարտելուց հետո նվիրվել է մանկավարժությանը: Ախալքալաքի ծխական դպրոցում աշխատել է որպես ուսուցիչ, եղել է նույն դպրոցի հոգաբարձուն: Իր կրթոտ ելույթների համար 1904-ին բանտարկվել է, աքսորվել Ռուսաստանի Կալուգայի մարզի Ժիգորա քաղաքը, ուր երկու տարի մնալուց հետո ազատվել ու կրկին վերադարձել է Ախալքալաք և իրեն ամբողջովին նվիրել գրական-հասարակական գործունեությանը՝ թղթակցելով ժամանակի մի շարք հանրահայտ թերթերի ու հանդեսների: Այդ ամենի հետ մեկտեղ նրա նախածեռնությամբ Ախալքալաքում 1912 թ. կառուցվել է առաջին հիդրոէլեկտրակայանը, որից հետո շարք են մտել նաև ծխական երկսեռ դպրոցի շենքը, մսի կոմբինատը, ալրադաջը, ձեթ-օճառի, կաշվի, փայտամշակման գործարանները և այլ շինություններ: 1915-ին նա Ախալքալաքում հիմնել է առաջին մանկատունը, ուր կազմակերպել է Մեծ եղեռնից փրկված երեխաների խնամքն ու դաստիարակությունը: Վ. Շահպարոնյանը նույն եռանդով շարունակել է աշխատել նաև խորհրդային կարգերի հաղթանակից հետո՝ ստանձնելով Ախալքալաքի շրջգործկոմի կոմունալ բաժնի վարիչի պաշտոնը: 1926 թ. ընտանիքով տեղափոխվել է Երևան, ուր մինչև 1937 թ. վարել է ԶՕԿ-ի շինարարական բաժնի վարիչի պաշտոնը, որից հետո՝ մինչև իր կյանքի վերջը (1941 թ.) որպես հաշվապահ աշխատել է Սո. Շահունյանի անվան միջնակարգ դպրոցում:

Վ. Շահպարոնյանը, սակայն, մեր մշակույթի պատմության մեջ մտել է իր «Ջավախք» պարբերականով, որի էջերում էլ ծավալել է գրական-հրապարակախոսական լայն գործունեություն: Նա, սկսած 1890-ական թվականներից, գրել է կենցաղային և պատմական թեմաներով շուրջ 40 դրամատիկական երկ ու պատմվածք, բազմաթիվ ոտանավորներ, ֆելիետոններ ու հրապարակախոսական հոդվածներ, որոնց մի մասը լույս են տեսել առանձին գրքերով («Աշխեն», «Արմեն և ֆաթիմա», «Արցունքի ծով», «Անտոն Սինոնիչ»), ժամանակի մամուլում («Մշակ», «Տարագ») և հատկապես «Ջավախքի» էջերում: Այստեղ նա հանդես է եկել մի շարք ծածկանուններով՝ «Շահ-Պարոն», «Աթոս», «Էլի էն», «Վ. Շ.» և այլն:

«Ձափախքն» ունեցել է 10-ից ավելի մշտական գործող բաժիններ ու խորագրեր. «Բանասիրական», «Տեղական կյանք», «Գավառ», «Նամակ խմբագրությանը», «Հայկական հարց», «Բալկանյան պատերազմ», «Մամուլ», «Ֆելիետոն», «Վերջին լուրեր», «Խառը լուրեր», «Վերջին տեղեկություններ» և այլն, որոնց քննությանն էլ նվիրված է գրքի երրորդ բաժինը:

Այնուհետև հեղինակը քննում է «Ձափախքի» էջերում տպագրված սոցիալ-տնտեսական բնույթի նյութերը, անդրադառնում թերթի արծարծած մշակութային խնդիրներին: Առանձին վերլուծության նյութ է դարձրել հայ և վրաց ժողովուրդների բարեկամության թեման: Այստեղ հեղինակը, վկայակոչելով թերթում տպագրված նյութերը, մեկ անգամ ևս հավաստում է այն ճշմարտությունը, որ հայն ու վրացին ի ծնե եղբայրներ են: Այդ ամենի խտացումն է «Ձափախքի» 1914 թ. փետրվարի 2-ի համարում տպագրված «Եղբայր ենք մենք» վերտառությանը առաջնորդող հոդվածը, որի մեջ ասված է. «Մենք միասին ենք լացել, միասին ուրախացել, մեր որդիքը միասին են նահատակվել: Դարեր շարունակ արյունաներկ Քուռն ու Արաքսը իրար գրկելով, իրենց ցավը իրար պատմելով՝ խուլ ու մունջ հոսել են և մեր կսկիծն ու մորմոքը տարել ու անհատակ Կասպիական ծովն են թափել...»: Երկու դրկից ժողովուրդներին միմյանց դեմ գրգռելը թերթը որակում է որպես «եղեռնագործություն ու սրբապղծություն» և ապա շարունակում. «Հայ և վրացի ժողովուրդ, մեր ցավերը, մեր վերքերը ընդհանուր են. ոչ վրացին իր ազնվականներով և ոչ էլ հայն իր հարուստներով թող ոգևորվի, այլ մտածի մեր հայրենիքը, մեր արտն ու արոտը կանոնավոր մշակելու և մեր ժողովուրդներին իրենց կոչման վրա կանգնեցնելու... Եղբայր ենք մենք, մեր շահերը ընդհանուր են: Իսկ դուք, սև ասպետներ, ինչքան ուզում եք հարայ կանչեք, ձեր բաժինը մեր արհամարհանքն է»: Թերթն իր գոյության ընթացքում բազմաթիվ հոդվածներ է տպագրել երկու ժողովուրդների բարեկամության վերաբերյալ: Թերթի ու նրա խմբագիր-հրատարակչի համոզմամբ, գավառը կարող է որոշակի կուլտուրական մակարդակի վրա կանգնել, եթե կրթությանը, արհեստների զարգացմանը և այլնին զուգընթաց գավառում էլ ավելի զարգանա ու ամրապնդվի հայ և վրացի աշխատավորների միասնությունը, վերջնականապես հաստատվի բարեկամական անխախտ դաշինք:

Առանձին գլուխ է նվիրված թերթի կատարած կուլտուր-լուսավորական աշխատանքին ու դպրոցական-կրթական գործին: Թերթի խմբագրի «Մեր կոչումը» հոդվածում, որը տպագրվել է 1914 թ. հունվարի 5-ի համարում, ասված է. «Որքան մեր ուժը պատե, պիտի կռվել մեր անենամեծ թշնամու, չարիքի՝ համատարած խավարի ու տգիտության դեմ»: «Ինչ է եղել մեր կոչումը, - կարդում ենք նույն հոդվա-

ծում,- միայն ու միայն ֆրազներով, չհասկացված ու չմարսված բարձր մտքերով թոզ փչել տգետ ամբոխի աչքին և վաստակել թոշնած դափհիներ... Նյութապես խեղճ է մեր դպրոցը, խեղճ է բարեգործական ընկերությունը, հազիվհազ շինվում է մեր փառահեղ դպրոցը, խեղճ է մեր ամեն մի հասարակական գործ, իսկ մենք զբաղված ենք միայն ու միայն մեր առօրյա տնտեսական պահանջներով...»:

Թերթը, ընթերցողներին ծանոթացնելով գավառի դպրոցական կյանքին, պատմում է ժխական դպրոցների հոգաբարձուների, ուսուցիչների անտարբերության ու անպատասխանատվության, եղած դպրոցների, չիրականացված խնդիրների մասին: Ուշագրավ է հատկապես թերթի 1914 թ. մարտի 23-ի համարում տպագրված «Թշվառ գավառ» հոդվածը, որն հստակ պատկերացում է տալիս 1910-ական թվականների Ախալքալաքի հանրակրթական դպրոցի ցածր մակարդակի և նրա՝ գավառի կյանքում ունեցած դերի ու նշանակության մասին, այն օրերի մասին, երբ գավառի շատ գյուղերում իշխում էին համատարած խավարն ու անգրագիտությունը, երբ դպրոցն, հիրավի, պետք է ծառայեր որպես փարոս հազարավոր մարդկանց համար: «Մեզ պետք է դպրոց,- կարդում ենք այնտեղ,- անպաճույճ, պարզ, տարրական, որ մեր հոգին պայծառացնե, սովորեցնի այբուբենը, որ կարողանանք տարբերել չարը բարուց, լույսը՝ խավարից...»:

- Դպրոց,- այս է աղաղակում թշվառ ժողովուրդը... – Ուսում,- այս է ոռնում Ջավախքի դառնաշունչ քամին... – Լույս,- այս է ծվում կեղտի մեջ կորած մեր անմեղ մանկիկը...»:

«Ջավախքը» դպրոցական հարցերին մոտենում է համակողմանիորեն, պայքարում աշխարհիկ կրթության ամրապնդման ու գիտության առաջընթացի համար: Իսկ աշխարհիկ կրթությանն այդ ժամանակ խոչընդոտում էր դպրոցներում եկեղեցու սպասավորներ պատրաստելը: Թերթը հարց է դնում գավառում ստեղծել երկդասյան նոր դպրոցներ, որոնցում մասսայաբար ընդգրկվեն գավառի բոլոր երեխաները: Թերթն առաջնահերթ խնդիր է համարում այն, որ դպրոցը կանգնի իր պատշաճ բարձրության վրա, որ հարկավոր է պայքարել հին ավանդույթներին կառչած մնալու, ուսուցումը կյանքից կտրված տանելու և դրան ոչ ստեղծագործաբար մոտենալու միտումների դեմ: Անշուշտ, պարբերականին հաջողվել է որոշակի փոփոխություններ մտցնել գավառի դպրոցական կյանքում:

Գրքի վերջին գլուխը նվիրված է «Ջավախքի» լեզվաոճական առանձնահատկությունների, նյութերի բազմաժանրության քննությանը, որի մեջ հեղինակը ցույց է տալիս լրագրի լեզվական բարձր կուլտուրան, նյութերի մատուցման եղանակները և լրագրական վարպետության այլ ակնհայտ դրսևորումներ: Այստեղ խոսվում է նաև այն մասին, որ

թերթն առատ նյութեր է տալիս Ձավախքի բառ ու բանի վերաբերյալ, և ցանկացողներն այսօր էլ դրանք կարող են օգտագործել իրենց ազգագրական, բանահյուսական ու լեզվաոճագիտական հետազոտությունների համար: Գիրքն ունի հակիրճ վերջաբան, ուր ամփոփված են հեղինակի վերլուծությունների ու դիտարկումների արդյունքները:

Յր. Սարգսյանի գիրքն ունի նաև թերություններ, որոնցից կարելի էր խուսափել, եթե հեղինակը խստապահանջ լիներ իր և տպագիր խոսքի նկատմամբ: Ամենից առաջ նշենք, որ «Ձավախքը» ծնունդ է առել ոչ թե որպես երկշաբաթաթերթ, ինչպես նշում է գրքի հեղինակը (էջ 4 և այլուր), այլ հրատարակության առաջին տարում եղել է շաբաթաթերթ, իսկ երկշաբաթաթերթ դարձել է երկրորդ տարվանից միայն: Առաջին տարում՝ 1913-ին, լույս է տեսել 40, 1914-ին՝ 21, 1915-ին՝ 3, իսկ 1916-ին՝ 6 համար. թերթն ունեցել է ընդամենը 70 համար: Գրքի հեղինակն այս բոլոր համարներն իր ձեռքի տակ չի ունեցել. նա նույնիսկ չի տեսել թերթի առաջին տարվա ոչ մի համար, որի հետևանքով էլ չի կարողացել լիարժեք կերպով տալ «Ձավախքի» պատմությունը, չի հիշատակել նրան կից հրատարակված Յովի. Մալխասյանի «Ձավախքի երազը» հավելվածը (1913 թ., թիվ 27) և թերթի պատմության համար կարևոր նշանակություն ունեցող այլ տեղեկություններ: Ի դեպ, առիթից օգտվելով, նշենք, որ «Ձավախք» թերթի և նրա խմբագրի մասին վերջին շրջանում «Բանբեր Երևանի համալսարանի» (1992 թ., թիվ 1), «Երևանի համալսարան» (1992 թ., թիվ 2), ՀԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների» (1995 թ., թիվ 2) և այլ պարբերականներում լույս են տեսել բավականին հոդվածներ, որոնց մեջ գիտական վերլուծության են ենթարկվել հիշյալ թերթի հետ առնչվող մի շարք խնդիրներ: Հեղինակը ծանոթ չէ նաև դրանց հետ, որոնք շատ հարցերում կարող էին կողմնորոշել նրան: Գրքում ոչ մի տեղ ակնարկ չկա թերթի թղթակիցների մասին: Այնինչ, «Ձավախքն» ունեցել է մի խումբ մշտական հեղինակներ, որոնք են՝ Արսեն քահ. Բլրցյանը, Վարդան Այվազյանը (Վ. Վազյան, Վ. Այ-Վազ), Արտաշես Բուդաղյանը, Հարություն Խաչատրյանը և ուրիշներ: Նկատելի են նաև այլ բնույթի սխալներ ու վրիպումներ, ինչպես և վրիպակներ, որոնք, սակայն, չեն նսեմացնում նրա արժեքը: Եվ քանի որ, ինչպես հեղինակն է հավաստում, այդ գրքով չի սահմանափակվում «Ձավախքի» ուսումնասիրությունը, ուստի այն, վերոհիշյալ նյութերի հետ մեկտեղ, մի հենարան կարող է լինել վրացահայ գավառական մամուլի հետագա հետազոտության և նրա պատմության ամբողջականացման համար: Ներկա գիրքը, իր թերություններով հանդերձ, մի համեստ նպաստ է 200-ամյա ուղի անցած հայոց պարբերական մամուլի ուսումնասիրության գործին:

## Բովանդակություն

Ինգիլոնները. Վրացական գործունը Արթուրյանները	3
ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴԻ ՓՈՒԼԸ ԵՎ ԱՐԱԾԱՇՐՁԱՆԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՋԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ	17
1992 ԹՎԱԿԱՆ: ՋԱՎԱԽՔՅԱՆ ԸՆԴԿՁՈՒՄՆԵՐԸ ՄԵՐՕՐՅԱ ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԻՑ	23
1998 Թ. ՕԳՈՍՏՈՍԻ 12: ՋԱՎԱԽՔԻ ՎԵՐՋԻՆ ՀԱՄԱՐՁԱԿ ՔԱՅԼԸ	32
ՋԱՎԱԽՔԻ ԳԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՏՆՈՒՐ ԱՆՑՅԱԼՆ ՈՒ ՄՇՈՒՇՈՏ ԱՊԱԳԱՆ	41
ԵՐԿՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ: ՋԱՎԱԽԱՀԱՅՅԵՐԻ ՓՐԿՈՒԹՅՈՒՆԸ, ԹԵ՞ ՀԱՅՐԵՆԱԶՐԿՈՒՄԸ	49
ՀԱՅԱՍՏԱՆԻ, ՎՐԱՍՏԱՆԻ ՈՒ ԱՐԹԵՋԱՆԻ ՇԱՀՅԵՐԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ	65
ԱՇՈՒՂ ԱԼԻՔ ՋԱՎԱԽՔ: ՀԱՅՐԵՆԱՊԱՀՊԱՆ ԳՈՐԾԻՉԸ	72
ՍԱՆԱՍԱՐՅԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ	83
ՍԱՆԱՍԱՐՅԱՆՑԻՆԵՐԸ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԵՋ	116
ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՒ ԻՐ ՀԱՐԵԻԱՆՆԵՐԸ	130
ՎԵՐԱՀԻՇՈՒՄՆԵՐ ԲԱՆԱՍՏԵՂԾ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԿՅԱՆՔԵՆ	140
ԱՐՀԵՍՏՆԵՐԸ ԱԽԱԼՔԱԼԱՔՈՒՄ	145
ԽՈՐԵՆԻԱ ԳՅՈՒՂԻ ՋԱՐԴԻ 80-ԱՄՅԱԿԻՆ	155
ՆԵՐՍԵՍ ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆ	158
ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ԵԿԵՂԵՑԻ	161
ՊԱՏՄԱԿԱՆ ԹՈՒԵՂԻ ԱՆՑՅԱԼԻՑ	168
ՊԱՏՄԱԿԱՆ ԹՈՒԵՂԻ ՆԵՐԿԱՆ	195
ՄԱՇՏՈՑՅԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ	226
ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԸ	240
«ՋԱՎԱԽՔ» ՊԱՐԲԵՐԱԿԱՆԸ	251
ՋԱՎԱԽՔԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՊԱՐԲԵՐԱԿԱՆԸ	275

**Հայոց հյուսիսային դարպասները.  
ՋԱՎԱԽՔ  
ԼՈՌԻ  
(հողվածների ժողովածու)**

**Շապիկին պատկերված քարտեզի հեղինակ՝ Գեղամ Բաղալյան**

Խմբագիր՝ **Էդուարդ Ափրամյան**  
Ձևավորումը՝ **Նելլի Մարգարյանի**

Ստորագրված է տպագրության 14.12.2009 թ.  
Չափսը՝ 60x84 1/16: Թուղթը՝ օֆսեթ:  
Տառատեսակը «Arial Armenian»:  
Տպագրությունը՝ օֆսեթ: 14.75 տպ. մամուլ:  
Տպաքանակը՝ 100 օրինակ:

**«ԳԵՎՈՐԳ - ՀՐԱՅՐ» ՍՊԸ**



Հրատարակչություն  
Երևան, Գրիգոր Լուսավորչի 6:  
Հեռ.՝ 52.79.74, 52.79.47  
Էլ. փոստ [lusakn@rambler.ru](mailto:lusakn@rambler.ru)

## Աշունների համար